

ՄԵՐ ՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ԱՐԵՎԵԼԹԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXIII



NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST**

XXIII

*This publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA*

YEREVAN – 2004

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**СТРАНЫ И НАРОДЫ
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

XXIII

*Спонсор – "Фонд Армен и Берсабе Джереджан",
США*

ЕРЕВАН – 2004

1/A-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՄՏՈՒՄ

ԸՆԹԵՑԱՍՐԱԶ

**ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

XXIII

*Մեկենասությամբ
Արմեն և Բերսաբե ճերեճեան Հիմնադրամի - ԱՄՆ*



ԵՐԵՎԱՆ – 2004

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 950
ԳՄԴ 63.3(5)
Մ 663

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Հովհաննիսյան Ն.Հ. (Մախագահ),
Բայբուրդյան Վ.Ա., Հարությունյան Ն.Վ.,
Չոբանյան Պ.Ա., Սաֆրաստյան Ռ.Ա.

Մ 663 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXIII)-
եր., Ջանգալ-97, 2004, 568 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ծառանցա-
րի XXIII հատորը ներառում է հայ արևելագետների մոտ աշխատություննե-
րը: Աշխարհագրական – տարածքային առումով նրանք ընդգրկում են Արա-
րական Արևելքը, Իրանը, Թուրքիան, Քրիստոնյա Արևելքը, Գին Արևելքը,
Գնդկաստանը և Ճապոնիան: Թեմատիկ առումով ժողովածուի խողվածնե-
րում արժարժիւմ են երկ և երրագույն պատմության, քաղաքականության,
Ֆիզագգային և տարածաշրջանային հարաբերությունների, հին և միջին դա-
րերի պատմության, ազվիստի, լեզվաբանության և հարակից այլ հարցեր:

Լախատեալում է արևելագետների, ֆիզագգայնագետների, պատմա-
բանների, մշակույթի հարցերով զբաղվողների, ինչպես նաև քարոզագույն
ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

Մ 0503010000 2004 թ.
0003(01)-2004

ԳՄԴ 63.3(5)

ISBN 99930-2-947-5

© Հեղինակներ, 2004 թ.

ՆԱԻՐԱ ԲԱԲԱՅԱՆ

**ԱՂԱՆԱՅԻ 1909Թ. ԿՈՏՈՐԱԾԸ ՕՍՍԱՆՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԶՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ.
ՀԱՅ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ**

Աղանայի կոտորածի տատմնափոխության քննազավատում հայ կրթականության մեր և արտասահմանում տալրեր լեզուներով հրատարակվել են չափ մեծագույնություններ, հաղվածներ, հուշագրություններ, վաստաբերեր ու վավերագրեր¹, այնուամենայնիվ խնդրո առարկայի որոշ առանցքներ տակավին լուսարանման կարիք ունեն: Մոյն հողվածում օգտագործելով մամուլում տեղ գտած Մեջլիսի միատերի արձանագրությունները, ինչպես նաև այլ աղբյուրներ, փորձ է արվում հնարավորության սահմաններում անդրադասնալ Օսմանյան խորհրդարանում Աղանայի պետքերի քննարկմանը, ինչպես նաև այս խնդրում հայ երեսփոխանների կատարած դերին:

1908թ. «Իբրիհատ վե թըլաքըի» քաղաքական կուսակցությունը, անցնելով իշխանության գլուխ, սկսեց իրականացնել իր քում ծրագրերը կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, որը ազգայնամոլությունը բարձրագրեց պետական քաղաքականության մակարդակի վրա: Երկտորդերնի՝ մահմեդական տարրի ժողովուրդներին ձուլելու, իսկ քրիստոնյաներին՝ քննազնջելու ծրագրի իրականացման առաջին մախանչանը Կելիկոսյի քաղաքների, մասնավորապես Աղանայի հայ ազգաբնակչության կոտորածն էր: Քանի որ դեպքերը համընկան 1909թ. մալսի 31-ի (ապրիլի 13-ի) հետադիմական շարժման, որտի սրտասահկան չէ, որ խնդրո շուրջ պատասխանատվության հարցում կան տարրեր փարկածներ ու մոտեցումներ, իրարամերձ և հակասական տեսակետներ, զանազան կարծիքներ ու գնահատականներ²:

Աղանայի երկվուլ կոտորածը, որին հող վարչակարգի պայմաններում զոհ գնացին մոտավորապես 30 հազար հայ, կազմակերպվել և կրահանգավորվել էր երկտորդերի կողմից. թեև վերջիններս փորձեցին մաղը բարդել սկզբում Արդուլ Համլեյ II-ի կողմնակիցների վրա, այնու-

հետև հայ քաղաքական կուսակցությունների վրա՝ մտազածին մեղադրանք հարուցելով, թե նրանք ապստամբություն մախապոտրաստելու պատճառով սանձահարվել են տեղական իշխանության զորամասերի և մահմեդական բնակչության կողմից⁷։ Ինչ վերաբերում է դաշնակցականներին, ապա վերջիններս մախապոտրեցին այս աղյուսակի տարածք վերադրել են վարչականության, ուստի և Ադամայի ցարդի օրերին ու ինժեզայում ևս շարժակեցին սերտորեն համագործակցել Իսթիհատ կուսակցության հետ։ Թվում էր Ադամայի դեպքերից հետո Գաշնակցության կուսակցությունը երիտթուրքերի հետ կիսի իր կապերը, սակայն ցավոք, դա տեղի չունեցավ, քննակատակը, 1909թ. սեպտեմբերին Հ.Յ. Գաշնակցության 5-րդ համագումարը որոշում կայացրեց շարունակել համագործակցել իսթիհատականների հետ։ Աղյուսքում երկու կուսակցության ղեկավարների միջև ստորագրվեց մի փաստաթուղթ, որը «Դաշնակ» քերթում լույս տեսավ «Համերաշխություն իսթիհատի և դաշնակցության միջև» խորագրով⁸։

Այս պարագայում այլ դիրքորոշում ունեցավ Հնչակյան կուսակցությունը, որն ի տարբերություն Գաշնակցության, հեղափոխությունից առաջ ևս խուսափեց երիտթուրքերի հետ համագործակցելուց, և ստեղծված իրավիճակում մախապոտրաստար գտավ համդես գալ հակաիսթիհատական, այսինքն՝ «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիք վն իթիլաֆ») կուսակցության դիրքերից⁹։

Ինչ վերաբերում է երիտթուրքերի կողմից հայ քաղաքական կուսակցություններին ու ֆիդայիներին ներկայացրած մեղադրանքներին, հարկ ենք համարում փաստել, որ 1909թ. մարտի 31-ի ապստամբության ճնշման գործում թե ֆիդայիներին, և թե դաշնակցականներին ու ինչակցականների ցուցաբերած օգնությունը փոքր չէր և արժանի էր հիշատակման¹⁰։

Արդի քաղց պատմաբաններն ու ինդիվիդուները խնդարյուրելով պատմական իրողությունը, այդ թվում նաև Ադամայի ցարդը, ցանքեր շեն խնայում արդարացնելու երիտթուրքերի ազգայնամուլ քաղաքականությունը։ Օրինակ, պատմաբան պատմաբան Էսադ Ուրասը որպես Ադամայի ցարդերի գլխավոր մեղավոր մատմանշում է հայերին, դրանք նրա հավաստիացմամբ, «տասնչում էին մահմեդականներին, երիտթուրքերի կառավարությունն այստեղ մեղք չունի», գրում է նա¹¹։ Պատմության կեղծաբանները, համձինս Էսադ Ուրասի¹², Սադի Քուչալի¹³, Զյամուրան Գյուրունի¹⁴ և մյուսների որպես Ադամայի 1909թ. ցարդի գլխավոր պատասխանատու հիշատակում են Ադամայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի անունը, սակայն այդ աղյուսակներ մատմանշում են, որ դա Իսթիհատի կողմից մախապոտրաստ Ժազարավորած ձեռնարկ էր։

Ուշագրավ է Ադամայի ողբերգական դեպքերի ժամանակակից, Հայկում հրատարակվող «Այ Քազատում» օրաթերթի խմբագիր Եսթրի

Քննիչների տեսակետները ցարդի գլխավոր պատճառները վերաբերյալ: Վերջինիս եզրահանգումներով Ադամայի բուրքերի մոտ գոյություն ունեւ աշունահեղություն պատճառելու մախաւորամաղրվածություն և կատարության անտարբեր վերաբերմունքի պարագայում, քաղերը տուացան ավելի համընդհանուր բնույթ¹¹:

Այն հանգամանքը, որ Ադամայի կոտորածը երիտթուրքերի ծրագրային գործունեության մի մասն էր, հաստատում էր դեռևս 1909թ. Մալմիկում գումարված Իրֆիհատի համագումարը, որտեղ Թալեաթի կողմից ընթերցվել էր գաղտնի տեղեկագիր՝ հայության ընաջմբման երանանգների վերաբերյալ: Այս տեղեկագրի բովանդակության մասին տեղեկացված լինելով Լոնդոնի «Դեյլի Կուզ» թերթի Պոլսի թրթակիցը, ծաղկված մտեղ էր ժողովարան և վերոնիշյալի մասին հայտնել իր թերթին¹²:

Թուրք հեղինակները, բնական է, գիտակցաբար շրջանցում են ակնհայտ դարձած իրֆիհատական Իսմայիլ Սեֆայի «Իրֆուլաթ» թերթում ապրիլի 22-ին, այսինքն քաղերի վկայածից ընդամենը երեք օր առաջ հրատարակած հոդվածը, որտեղ քացահայտ կերպով գրված էր «Այն ինչ կատարվեց, դեռ թուրք չէ: Մենք միայն կարճատև դադար տվեցինք: Բայց մենք դեռ կտեսնենք, թե ինչով կավարտվի այս թուրքը»¹³:

Այսպիսով, դատելով վերը շարադրվածից, ակնհայտ է դառնում, որ երկրորդ Մանժանաղլության հռչակումը չիտխեց կայսրության ոչ մանժեղական ժողովուրդների վիճակը, որի ամենամեծ ապացույցն, անավասիկ, Ադամայի ոճիրն էր և Օսմանյան պառլամենտի դիքորոշումը դեպքերի ճշմարտությունն երևան հանելու տողությամբ: Թուրք խորհրդարանականների ճշյուր մեծամասնությունը մեծ ջանքեր գործադրեց ոչ միայն մխտելու բուրքերի մեղսակցության հարցը, այլ նաև ամեն կերպ փորձեց կատարվածի մեղքը բախել հայերի վրա:

Ինչպես փաստում է Մ.Վարանդյանը «Թուրք պառլամենտն էլ քաջություն չունեցավ խարանելու կատարված ոճիրը»¹⁴: Խորհրդարանի հայ պատգամավորները դեպքի հենց առաջին օրերին իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին ընդդեմ անօրինությունների և միաձայն Իրֆիհատից պահանջեցին հայտարարել, որ Ադամայի գործում հայերը բացարձակապես բանձնել են: Մինևույն ժամանակ նրանք հանդես եկան հանցագործներին պատժելու և պատասխանատվության ենթարկելու, տուժածներին նյարթական օգնություն ցուցաբերելու պահանջներով:

1909թ. ապրիլի 11-ին չորս երեսփոխաններ՝ Գրիգոր Չոկրասլի, Թալեաթի, Հակոբ Պապիկյանի և Էրզրումի երեսփոխան Արմեն Գաբրյի կողմից խորհրդարանին ներկայացվեց մի թարթիր (զեկուցագիր)՝ Ադամայի և հարակից շրջանների քաղերը անմիջապես դադարեցնելու և նորանոր աղետները կասեցնելու վերաբերյալ: Համագումար ժողովը միաձայն որոշում կայացրեց նախագահի կողմից դեպքի վայր անմիջապես մի ազդեցիկ հրահանգ հետագրելու վերաբերյալ: Ադամայի խլխանութ-

յաններին ուղղվելից հետագրի բովանդակությունն ու ոճը հայ երեսուխաններ Է Պատվկյանի, Ն.Տաղավարյանի, Պ.Հարսեյանի և Հ.Պոլադյանի գնահատմամբ բավականին մեղմ էր և խորին, այդ իսկ պատճառով հայրի առնելով մաս, որ Սվազը նույնպես այդ իրավիճակում է գտնվում, մյուսը հանդես եկան հեռագիրն ավելի խիստ և հնարավորինս հասկանալի ու միզազ գրական կերպով խմբագրելու պահանջով: Մեղակույտի մախազան Սայխ փաշայի առաջարկությամբ կազմվեց հանձնախումբ՝ նոր և ավելի ազդու հեռագիր խմբագրելու նամար¹⁵: Օսմանյան խորհրդարանը, քննարկելով Աղանայի ցարդի խնդիրը, ինչպես նաև հայրի առնելով հայ պատգամավորների պահանջները, մի ազդու շրջաբերական հեռագիր ուղարկեց Անատոլիայի բոլոր կուսակազմներին և կառավարիչներին՝ ամեն հնարավոր միջոցներով աղետը կանեցնելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու, ցարդի պատասխանատուներին խառտրեն պատժելու ուղղությամբ¹⁶:

1909թ. ապրիլի 19-ին Օսմանյան երեսուխանական ժողովում քննության առնվեց նաև Աղանայի կուսակազմ Ջևաղ բեյի ապրիլի 13-ին խղիղությամբ ուղարկված հեռագիրը, որտեղ կուսակազմը, ազճատելով իրական վատտեղը, տեղեկություններ է հաղորդում Աղանայի դեպքերի մասին, միաժամանակ մատնանշելով հայ ֆիդայիների մեղսակցության իրողությունը: Հարկ ենք համարում փաստել, որ Աղանայի թուրքական շրջանակները, շահագրգռելով հայկական սրբապանական դիրքի չտրուկանցեցված վտանգը, հակված էին տարածելու ստորիչ քաղաքիվ շուրեր հայ ֆիդայիների կազմից կատարված միառամնավոր հարձակումների մասին: Անկասկած, այդ ենթադրյալ հարձակումները ներկայացվում էին որպես հայերի կողմից մախապատրաստված զանգվածային ալյուրանախությունների և տալիսադաշրջանի մահմեդական բնակչության բնաջնջման ծրագրի մի մաս¹⁷:

Կուսակազմի հեռագրի բովանդակությունը, քննվան է, չէր համապատասխանում իրականությանը և դա բողոքի մեծ ալիք քարծրացրեց հայ խորհրդայանականներին, ինչպես նաև թուրք անկողմնակալ ուղչ պատգամավորների շրջանակներում: Կուսակազմի դեմ մեղադրանակնով հանդես եկավ Արիֆ Իսմեր բեյը, ճշելով, որ կուսակազմի տեղեկությունները բնավ չեն համապատասխանում իրողությանը և, Մեջլիսը չի կարող վստահել կուսակազմի ու անտարբեր մնալ մեծանորինակ դեպքերի նկատմամբ: Նա նամղես եկավ պատգամներին կազմից Աղանայում հետաքննություն կատարելու նպատակով հանձնաժողով ուղարկելու, մեղավորներին պատժելու առաջարկությամբ: Բնադրատելով Ջևաղ բեյի հեռագիրը, հայ պատգամավորներից Վարդգեսը ժխտեց Աղանայի դեպքերին հայ ֆիդայիների մասնակցության իրողությունը, առաջ քաշելով այն տեսակետը, որ Աղանայի և Պոլսի դեպքերը նույն ամճի գործն են: Նա նամղես եկավ մեղավորների ունեցվածքը բռնագրավելու և վնասնե-

յը փոխառուցելու նպատակով դեպքի վայր երկու համեմատողով՝ մեկը Մելամիկի քանակի ալամենից, մյուսը՝ խորհրդարանից ուղարկելու, ավարտութեանը մասնակցած անձանց ունեցվածքը ետ վերցնելու, Արդու Համայնի հարստության և ունեցվածքի մի մասը Աղանայի տուժածներին տալու առաջարկուրդուննելով:

Աղանայի կուսակալ Ջեաղ բեյին և ներքին գործերի նախարարի խորհրդական Ատիլ բեյին պատերազմական ատյանի առջև դատելու պահանջով հանդես եկան նաև իայ նրեպախաններ ՀՊոյանյանը և Ն.Տաղավարյանը, լմողծելով, որ եթե այդ մարմինները առաջին ջարդից հետո համապատասխան պատմիչ միջոցներ կիրառեին, ապա երկրորդ, իր չափերով ավելի մեծ ջարդը, տեղի չէր ունենա:

Բուռն ընմարկումներից հետո, ՀՊոյանյանի, Արմեն Գարոյի, ՀՊոսպիկյանի, Արիֆ Իսմայիլ բեյի, Ալի Դեմանի, Վարդգեսի, Գեղամի, Վահան Փափուկյանի կողմից ստորագրվեց մի բարբիթ: Վերտիշչալում մասնավորապես առաջ էր քաշվում Ջեաղ բեյին և Ատիլ բեյին զինվորական ատյանի առջև դատելու, Հախելի նահանգում, Ջեյրանում, Ամրաքիչալում և այլ վայրերում ռազմական դրոշյուն հայտարարելու, իսլամական տարբերի կողմից սլաշայուման մեջ գտնվող Տեորթեօլ քաղաքի ակառման վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու, Պոլսից Աղանա զինվորական ատյան ուղղարկելու, անօգնական այրիներին ու որբերին նպատակներ հատկացնելու, քայանված ունեցվածքները տերերին վերադարձնելու և վնասների քանակը ճշտելու խնդիրները¹⁸:

1909թ. ապրիլի 17-ին Գ. Ջոհրապը մի քանի նրեպախանների հետ վարչապետ Հուսեյն Հիլմի փաշային ժամուցեց խորհրդարանում Աղանայի կատրածի առթիվ հարցապնդում անելու վերաբերյալ: Ապրիլի 19-ին երկուր ունենալով խորհրդարանում Ջոհրապը Աղանայի և մյուս վայրերի ջարդը քննարկեց որպես իշխանության կողմից ծրագրավորված ձեռնարկ և խիստ ընմադատության ենթարկեց Աղանայի կուսակալ Ջեաղ բեյին, ներքին գործուց նախարար Ռեուֆ փաշային և խորհրդական Ատիլ բեյին կատրածի պատասխանատուությունից խուսափելու, նույնիսկ հայերին անհիմն մեղադրելու վործերի համար: Նա զավշտական համարեց, որ խորհրդականը մինչև այժմ չի կարողացել ճշտել, թե այդպիսի ջարդի սկզբնապատճառները հայերն են, թե՞ բուրքերը: Այդ նույն խորհրդականը, որը քաջատեղյակ էր իրապարծուրդունների զարգացմանը, գտնելի քանակի մասին ճշգրիտ տվյալներ չի կարող հայտնել: Ճնշվել Մերսինի ֆրանսիական հյուարատուի տեղեկատուության համաձայն գտնվել էր 20-30 հազար իայ: «Հայերը իբրև ակառամք» ցույց տալու միտումը համարեց քաջարձակ հերյուրանը և հավելեց. «Բուվանդակ երթյունովս կը մերժեմ հայերում վերագրված գրպարտությունը»: Ի հավելումն Ջոհրապը խորհրդարանին ներկայացրեց մի բարբիթ, որով առաջարկում էր.

1. Պետության միջոցներից Ադամայի և Հալեպի մահաճգններից որպես առաջին օգնություն տրամադրել 20 հազար ուկի, 2. Հիշյալ մահաճգններ ողորկել զորք և անդրդրություն վերահաստատել, 3. Պոլսից ուղարկված սպաներից Ադամայում զինվորական առյան կազմել և պատժել մեծ ու փոքր բոլոր պաշտոնյաներին¹⁹։

Հանցագործներին պատժելու և անմիջապես նպատակ հասկացնելու խնդր արևմտաֆրոն հանդես եկավ մահ Վարդգեսը։ Ի վերջո բուն վիճարանություններից նետո խորհրդարանն ընդունեց հուրապա կողմից ներկայացված բաքրիրը։

Հաշվի առնելով դեմոկրատական շրջանակների աշտագանքը, ինչպես մահ բարդի առնչությամբ հայ խորհրդարանականների պահանջները, Օսմանյան երեսփոխանական ժողովի 71-րդ նիստի որոշմամբ բարդի պատճառները ճշտելու նպատակով Ադամա ուղարկվեց Հակոբ Պապիկյանի գլխավորությամբ յոթ հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով։ Ն. Տաղավարյանի և Մուսթաֆա էֆենդիի կողմից առաջ քաշվեց և քննարկման առարկա դարձավ խառը և զուտ խորհրդարանական եղևզ հոգուց բաղկացած հանձնաժողովի ստեղծման հարցը, որի արդյունքում հանձնաժողովի մեջ ընդգրկվեցին երեսփոխան Յուսուֆ Քեմալը²⁰, պետական խորհրդի նախարար առյանի նախագահ Յալիզ բեյն ու Մանաստիլի վիլայեթի դատական քննիչ Հարություն էֆենդի Մուստիլյանը։ Հ. Պապիկյանի կողմից կազմված տեղեկագիրը, որը կարևոր նշանակություն ունեցավ Ադամայի կոտորածի լուսարանման ու կազմակերպիչներին հայտնաբերելու խնդրում, մի շարք փաստերով հաստատում էր Իքթիհատի անդամների անմիջական մասնակցությունը Ադամայի կոտորածներին։ «Ամենախոր ցատով ստիպում եմ անելացնելու, որ Իքթիհատ եւ Թերաքքը կուսակցութեան անդամները, Ատանայի վայրագ նդերեգութեան կազմակերպման և գործադրութեան մասնակցած են։ Այս իրարութիւնը հաստատում է մահանգին զանազան տարբերում կողմէ, հիւսղատաներէ, ամերիկացի միայնարներէ և լատին քանանաներէ»²¹։

Տեղեկագրի այս հատվածը հայերի ձեռքն է անցել Պապիկյանի մահից նետո նրա բնակարան այցելած Օսմանյան պարոլամնտի անդամ Հ. Պոյաճյանի և մի քուրք երեսփոխանի միջոցով։ Վերջինս կնիքը մոտացած լինելով իր նետ վերցնել Պապիկյանի տեղեկագիրը իր հարակից գրություններով կնքում է Պոյաճյանի կնիքով և հանձնում է նրա ընտանիքին։ Պատրիարք Եղիշե Եպ. Դուրյանի համաձայնությամբ տեղեկագիրը բացվում, լուսանկարվում և բերվում է պատրիարքարան։ Պապիկյանի այս տեղեկագիրը հայերն քարգմանություն 1919թ. հրատարակվեց Կ. Պոլսի «Կիլիկիա» զրատան կողմից²²։

Ադամայի կոտորածի առնչությամբ նրխարքների, և մասնավորապես դոկտ. Նուզրեի անմիջական մեղսակցության մասին է գրում մահ քուրք լրագրող Մուսն Հադե Ռիֆարը, փաստելով, որ «Պոլսի տազնա-

սել ընթացքին Իթքիմաստ և Թէրագզը կուսակցութիւնը հայերը չէր մտ-
ցած: Ատանայի մասնաճիւղը Կեղտնէմ, մասնատրուալէս Ատանայի մեջ
ընդհանուր քարոյ մի պատրաստելու սկսած էր»²³: Բազատեղյակ լինելով
հիշրայ կուսակցության գաղտնի ժողովներին, սրդումներին, զործադր-
ման ձևերին և վարած քաղաքականությանը, Սևան Ջաղե Բիֆարը նոր
ույս է ափում երիտօրւորների մերթին քաղաքականության վրա և հնա-
բավորություն է տալիս իննջ բուրքական աղբյուրների օգնությամբ չեզո-
քացնել բուրք պատմագիրների պատմությունը մեկգափոխելու միտում-
ները:

Հիմնվելով կառավարության կողմից պատասխանատուներին ճշտե-
լու նպատակով Ադանա ուղարկված քննիչ հանձնախմբերի պատրաս-
տած տեղեկագրերի և այլ տեղեկատվության վրա 1909թ. Մեջլիսը հրա-
պարակեց մի հայտարարություն, որը պետական պաշտոնաթերթ
«Takvimi Vekay»-ի հուլիսի 31-ի համարում հրատարակվեց որպես նա-
խարարական շքաքերական (Meclisi Vukela Beyanamesesi) և ուղարկվեց
գավառային իշխանություններին: «Արեւիշյալում նշվում էր, որ հայերը
«որոնք բանիցս իրենց դէպք Օսմանեան հայրենիքը տաժած անկեղծ
նուիրածութեան ապացոյցը տուած են, զոն գացին անիմն կասկածնե-
լու և զրգոտիւններու»: Երգարեականն իրն եղբակացություն հաս-
տատեց հայերի անմեղությունը, որոնք «չլեղեցան իրենց անցեալին ալ
պստպանած հաւատարմութեան ուղիւն»²⁴:

Ինչ խոսք, դա քացատիկ երևոյթ էր մահմեդական մի երկրում, երբ
օսմանյան կառավարությունը պաշտոնական խոստովանություն էր ա-
նում, սակայն հարց է ծագում, երե հայերը մեղավոր չլին, ապա ուրե՞ր
լին մեղավոր:

1909թ. հունիսի 29-ին Նախարարների խորհուրդը Ադանա ուղարկ-
ված քննիչ հանձնախմբերի տեղեկատվության հիման վրա որոշեց Ադա-
նայի զինվորական առյանի առջև դատել մախկին կուսակալ Ջևաղ քե-
յին, Ատիլ քեյին, կենտրոնական զինվորական հրամանատար Մուսթա-
ֆա Ռննզի փաշային, «Իթքեյալ» բերքի խմբագիրներ Ինսան Ֆիթրիին²⁵
և Իսմայիլ Սեփային, Ջերեի-Բերեքերի կառավարիչ Ասաֆ Էսառ քեյին և
շատ այլ պետական պաշտոնյաների ու տեղական ազդեցիկ անձանց:
Սակայն քվարկված այս սրդումները մնացին զուտ որպես ձևակերպում
և զրեթ չգործադրվեցին²⁶: Ընդհակառակը, Ադանայի կուտրածի գլխա-
վոր հանցագործներից Ջևաղ քեյին, Ատիլ քեյին և Զարդարար մյուս
«նալրենասերներին», փաստորեն, պաշտոնի քարծրացում էր սպաս-
վում, որովհետև ինչպես երևաց հետագայում, Ադանայից հանված պա-
տասխանատու պաշտոնյաների զգալի մասը քարծր աշխատավարձով
ու պաշտոնով ուղարկվեց Կոնիա, Պրուսյա, Արդիանապոլիս և այլ վայ-
րեր: Իրենց որակմամբ դա մի «օղափոխություն էր»²⁷:

Այս առնչությամբ, անկասածնաբար է նշել, քե Օսմանյան խորհրդարանում ինչպե՞սի բուն քննարկումների ու վիճարանությունների առիթ հանդիսացավ Ինտան Հիջրիլի և տեղական երևելի անձ Արդու Քադիրի ձերբակալման փաստը: Քանզի բուրբ ժայռանիղ ազգայնականները, հանձնին Իսմայիլ Հազզը բնյի, քաթրիլով Նեղբին գործերի նախարարից և վարչապետից բացառություն սրահանջեցին անհիմն, միայն նախարարների խորհրդի որոշմամբ վերջ նշված անձանց ձերբակալման առնչությամբ: Երեսիոյանական ժողովի մեծամասնությունը դեմ էր այդ նարդուսպնմանը, սակայն Իսմայիլ Հազզն և իր համախոհները դա համարեցին ասեմանադարության խախտում, ըստ նրանց, նայելակ Ադամյում պատերազմական վիճակի պարագայում, նախարարների խորհուրդը իրավասու չէ նման վճիռ կայացնելու: Բնականաբար, նման վարդազինը խիստ վրդովեցրեց նայ պատգամավորներին: Քավեշտականն այն է, որ խոսքը գնում էր Ադամայի ջարդերի կրակաղ երկու անձանց ձերբակալման և ոչ քե բանտարկության մասին: Ի վերջո առվար մեծամասնությամբ որոշվեց հարցապնդումը նետածել մինչև Ադամս գնացած երեսիոյանները ներկայացնեն իրենց տեղեկագրերը²⁸:

Ընդգծենք, որ ոչազտով ու միևնույն ժամանակ տազմապնցնող հանգամանքն այն էր, որ ստեմանադարության ազատ և իրր քե աղար պարչակարգի օրոք Ադամայի նման կարևոր նախանգի կուսակալության պաշտոնը հանձնված էր Արդու Համիդի օգնակոն՝ Ջևադ բնյին. նախանգի զննվորական կրամանատարությունը՝ Սեփաշի 1895-1896թթ. ջարդի կազմակերպիչ, Հերիք Մուսթաֆա Ռեմզի վաչային, որը կարծես Ադամս էր ուղարկված Ջեթտոնում իր կրամ պարտության վրեժը լուծելու համար, իսկ ռստիկանության կրամանատարությունը հանձնված էր Անմուլ բնյ անունով մի մուխտարի²⁹: Դատելով վերջարարովածից, դեպքերի աղբյակի ընթացք, այնուամենայնիվ, կարելի էր ազատել:

Այսօր ևս բուրբ պատմագրության մեջ որպես Ադամայի կուտորածի նախածնեմող մատնանշվում են հայերը և այն նոր սերունդին ներկայացվում է որպես անխառնափեղի ձեռնարկ «չփացած հայերին» կարգի կրավիրելու համար³⁰: Նման գործեկակերպով բուրբ ազգայնամոլները փորձում են բացքնել իրենց նախադրմանի ոճրագործության հետքերը:

Մեր կարծիքով ոչազտով է նաև բուրբ պատմաբան, «Միզան» բերրի խմբագրապետ Մուրադ բնյի փաստարկները Ադամայի ջարդի վերաբերյալ: «Կիլիկիոյ ջարդը ձերթիմատ վէ թէրագզը» կուսակցությունը կազմակերպեց», գրում է նա, կարևորելով այն հանգամանքը, որ Ադամայի ջարդերը Իրթիմատի ակումբների հավաքույթներեց նուտ միայն սկսվեցին, իսկ Իրթիմատի «ժերդալ» օրաթերթը բացահայտորեն հող նախապատրաստեց ջարդի համար³¹:

Եվ ի վերջո, եթե Ադամայի առաջին ջարդը վերագրելու լինենք տեղական կատավարության անտարբեխությանն, ապա երկրորդ, ընդ սրում իր

չափերով ավելի մեծ ցարդը, անկասկած, «Միտքայուն և առաջադիմութեամբ» կուսակցությունն զատ ոչ որք չենք կարող վերագրել:

1909թ. հուլիսի 23-ին Օսմանյան պատգամավորական ժողովի 124-րդ նիստի ժամանակ ցավակցություն հայտնվեց Էդիրնեի երեսփոխան Հ. Պասպիկյանի հանկարծամահ լինելու կարակցությամբ: Նախագահը ժողովին ծանուցեց հաջորդ նիստի ժամանակ Արամայի դեպքերի վերաբերյալ Յուսուֆ Բեմալի կողմից ներկայացվելիք տեղեկագրի ընթերցման մասին: Հաշվի առնելով հայ երեսփոխան Վարդգեսի համատեղությունները, ժողովը որոշում կայացրեց շարաք օրը կարդալ ինչպես Յ. Բեմալի, այնպես էլ վաղամեռիկ Հ. Պասպիկյանի տեղեկագրերը¹¹: Թեև կանխարդշված, այնուամենայնիվ Հ. Պասպիկյանի տեղեկագրերը այդպես էլ չընթերցվեց Օսմանյան խորհրդարանում: Պատահական չէ, որ երեսփոխարարի ղեկավարները ոչ մի քանք չխնայեցին խափանելու իրենց կուսակցությանը քննադատող և ցարդերը խոստով դատաազարտող Հ. Պասպիկյանի տեղեկագրի ընթերցումն Օսմանյան խորհրդարանում¹²:

1909թ. հուլիսի 25-ին խորհրդարանում ընթերցվեց մի քանի բուրք երեսփոխանների (Յ. Բեմալ, Արիֆ Իսմեթ քեյ, Ալի Մյունիֆ քեյ) կողմից ներկայացված գրությունը, որտեղ հանգուցյալ երեսփոխան Հ. Պասպիկյանի հայրենասիրական ծառայությունները քվեուց զատ առաջարկվեց հանգուցյալի զավակներին թոշակ հատկացնել և կրթության հնարավորություն ընձեռել: Այս առաջարկը հասկանության արժանացավ շատ երեսփոխանների կողմից, սակայն ելնելով «պետական գանձարանի շահերից», չընդունվեց, այն ավարտվեց թուրք երեսփոխանների միջև ծագած վիճարանությամբ և նույնիսկ դառնիճը լքելու երևույթով¹³:

Սրև Արամայի կատարածը միայն հետադիմական ուժերի կողմից կազմակերպված լինեք, բերևս կարելի էր որոշ մեղմացուցիչ հանգամանքներ գտնել, սակայն իթթիհատականների կազմակերպչական դերը ցարդի մեջ և Հ. Պասպիկյանի խորհրդավոր պայմաններում հանկարծամահ լինելն, ավելի էր ծանրացնում ստեղծված անվստահության մթնոլորտը:

Փաստորեն, Օսմանյան խորհրդարանին հայ երեսփոխանների, Արամայի հոգևոր պետերի կողմից ներկայացրած քարթիրները, դիմումները, բողոքները, զեկուցագրերը կատավարության համար ծանրակշիռ արժեք չունեցան: Հարցի հետ կապված ձեռնարկվելիք միջոցներն ու խորհրդարանական քննարկումների ընթացքն այնքան թույլ էին, որ կարծես մոտ 30 հազար հայերի մահը, մլղիտնավոր ոսկիների արժողությամբ գույքի ռչնչացումը այդքան էլ մեծ նշանակություն չունեցան: Հարկ է նշել, որ եթե չլինեին Արիֆ Իսմեթ քեյի, Ռիզա Թեֆիկ քեյի, Էմբուլահ էֆենդիի և ուրիշ անկողմնակալ անձանց նմանները, հավանաբար, մնացածները կրավարաբանին միայն Բ. Դեան կողմից ձեռնարկված միջոցներով: Թեթևա թուրք կատավարության նոր մտավորականությունն էր, որ

հանձն առավ կոտորածի հեղինակ 40-ից ավելի մտաւորման հանցագործներին կախադան հանել, ինչը և զայրացրեց իտալական տարրերին, և Իրֆիհատը մի գաղտնի խարխուղակցության ժամանակ նույնիսկ Հիլմի փաշային դանդիճից հեռացնելու որոշում կայացրեց³⁴:

Թե՛ կենտրոնի, և թե՛ զավատային իշխանությունների ձեռնարկած միջոցառումները բավականին քայլ էին, այն աստիճան, որ Ադանայում ռազմական դաշտում հայտարարելուց 15 օր հետո հայ երեսփոխաններին հարցապնդումներին ոչ մի հասակ պատասխան չտրվեց վնասների չափերի, գնների թվի, կոդուստտի քանակի մասին: Այն մոյն կատավարությունը, որ 8-10 օրվա ընթացքում Կ.Պոլս քերեց 40 հազար զոց և վերահաստատեց ասումնադրությունը, չկարողացավ մի քանի հազար զինվոր տանել Կիլիկիա՝ խռովարարներին պատժելու և քայքայեց ետ վերադարձնելու համար: Փաստորեն, կատավարությունը թրթի վրա մի քանի կարգադրություններ անելով, իր պարտքը ավարտված համարեց:

Կատավարությունը, ջանալով շեղել հասարակայնության ուշադրությունը, պաշտոնապես հայտարարեց, թե Ադանայի ջարդի հանցագործները 15 տեղագիներ են, որոնցից 9-ը՝ թուրք, 6-ը հայ: Ապա քանտարկեցին 213 հայերի ու 149 թուրքերի՝ նրանց հանձնելով զինվորական դատարանին³⁵: Դատավարությունը տեղի ունեցավ փակ դռների նստում, խիստ գաղտնի: Նման պարագան օրինաչափ է, քանի որ այն հատուկ միտումով էր կազմակերպված: Մեծ վեզիր Հուսեին Հիլմի փաշան օտար տերություններից ներկայացուցիչներին խոստացել էր թուրքատրել ներկա գտնվել դատին, սակայն իր խտստումը, քննական է, չկատարեց:

Ինչ վերավերվում է զինվորական դատարանին, ամիրածնյառ ենք համարում փաստել թուրք պատմաբան Չարքի տեսակետները, ըստ որի զինվորական դատարանը ամենաշատը Հ.Պապիկյանի զնկուցագրի հիման վրա մեղավորներին մահապատժի ենթարկելով՝ մեկ անգամ ևս՝ հաստատեց թուրք ալյաբրադատության ալալիքությունը³⁶:

Կիլիկիայի ջարդին մասնակցած տասնյակ հազարավոր ռճրագործները միայն 200-ը տարբեր աստիճաններով դատապարտվեց և քանտարկվեց, որոնց մեծ մասին էլ մի քանի ամիս անց ներում շնորհվեց, քանտում մնացին 86 հոգի, որոնք էլ 1912թ. դեկտեմբերի 20-ին ընդհանուր ներման արժանանալով, ազատ արձակվեցին: Փաստորեն, դրանով փակվեց Կիլիկիայի հազարավոր անմեղ հայերի հաշիվը:

Հարկ է նշել, որ զինվորական առյանի վճռումները զուրկ էին դատատանական և օրինական արժեքներից, որի վատ ապացույց կարող է հանդիսանալ հետևյալ փաստը: Հիշյալ առյանի կողմից վեց հայեր դատապարտվեցին մահվան՝ իբր թե Օհան օղլու խառնությունում հիսուն խալամականների սպանելու համար: Սակայն այստեղ զարմանալիորեն նկատելի է առնված այն հանգամանքը, որ խնդրո առարկա սպանված մահմեդականները այդ խառնության քնակիչներ չէին, նրանք կասկածելի

մայրիկ էին, որոնք զամազան յաղերից էին հավաքված և քնական է, որ հայերին կոտորելու համար էին եկել և նրանց մահը զուգադիպեց հենց հայերի վրա հարձակվելու պահին⁵⁷։ Սա թերում է այն համոզմունքին, որ նույնչափ հանցավոր տեղական կառավարությունը իրական փաստերը ջղախելելու և հանցանքը հայերի վրա քայտելու նպատակով զինվորական ատյանի կազմումից առաջ ըննիչ հանձնախումբ նշանակվեց. «Եթէ յանցանք գտան՝ աղէկ, իսկ եթէ չգտան, սուտ վկաները պատրաստ էին վկայութեան համար»⁵⁸։

Աղանայի դեպքերի հետ կապված 1909թ. մայիսի 22-ին Կ.Պոլսի հասց սրատրիարք Եղիշե նախկուպու Դուրյանը բողոքագիր ներկայացրեց Ռ.Դուանը՝ պահանջելով պատժել հանցագործներին և հատուցել վնասները։ Ջոհրապի առաջարկով Կ.Պոլսի հայոց պատրիարք Եղ. Եպիսկոպու Դուրյանը ի նշան բողոքի հրաժարական տվեց, որի այդպիսով փրկվեց ամենը հայերի կյանք։

Հետագայում Գ. Ջոհրապը ստանձնեց 1909թ. Աղանայի կոտորածից հետո վեց նայ քնտանիքների դատը։ Իրֆիկատականները Ջոհրապին առաջարկեցին նու կանգնել դատավարությունից։ Համոզված լինելով, որ կատավարությունը ամեն ինչ կանի շխտովանելու այդ մեծ անաչդայությունը և դատի շարունակությունը չպետք է ունենա սպասված ավարտ, նա այդ մասին հայտնեց նույն քնտանիքներին, որոնք թույլ էին շարունակել դատը⁵⁹։

Ջոհրապի համառ ցանքերի շնորհիվ Երեսփոխանական ժողովի 66-րդ նիստի որոշման համաձայն 20 հազար ոսկի նպատակ հատկացվեց Աղանայի տուժածներին։ Հետագայում ըննության առնվեց նաև այլ փոխատություններ ու վարկեր տրամադրելու մի շարք խնդիրներ։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ Կիլիկիայի հայության կրած միայն նյութական վնասը թողք կառավարության տվյալներով հասել էր ընդամենը 96 հազար օսմանյան ոսկու, իսկ Մեզլիսի անդամ Հ.Պապիկյանի կողմից Կ.Պոլսի իշխանություններին ներկայացրած տեղեկագրի հաշվումների համաձայն Կիլիկիայի հայության նյութական վնասը երեք միլիոն օսմանյան ոսկուց պակաս չէր⁶⁰։

Ի հատուցումն Կիլիկիայի միլիոնավոր ոսկու արժողությամբ վնասների՝ Օսմանյան Երեսփոխանական ժողովը ընդհանենը 100 հազար օսմանյան ոսկի ծախսելու որոշում ընդունեց։ Միայն փտահեղի երաշխավոր տնեմայու պարագայում ներկայգործներին ու վաճառականներին տրամադրվեց 50 հազար ոսկի՝ իննգ տարվա ընթացքում մաս-մաս վերադարձնելու պայմանով։ Իսկ որքերի և այրիների համար օսմանյան կառավարությունը որոշեց հինգ տարվա համար տարեկան միայն 25 հազար ոսկի հանձնել Ազգային պատրիարքարանին, իսկ որոշ ժամանակ անց այդ չափը, ինչը և օրինակալի է, 10 հազարի իջեցվեց⁶¹։

Գ. Չոկրասլի բնույղամբ «Ադանայի աղետը մեր ազգի և Օսմանյան հայրենիքի մեծ սազն է, այն մեծ զարկուրանք է և անդաբնամայի. ժայց արդար լինելու համար պետք է ընդունել, որ Օսմ. կառավարությունը աքեց այն, ինչ որ «ներկայ պայմաններու մէջ» քանակոր կերպով կըրնայինք պահանջել իրան»⁴²:

Կատավարությունը զարեց որոշ ժամանակ անց Ադանա ուղարկեց իբթիհատական Ջեմալ փաշային, որը 1910թ. հունվարի 23-ին Ադանայի հայ և բուրք երևելիների խնդրութուն արտասանած իր ճառում այդ կոտորածը գնահատեց որպես քրիստոնյաների կողմից նյութական և մահճեղակամների կողմից քաղցրական վնաս⁴³:

Ամփոփելով վերջ շարաղջվածը գալիս ենք այն եզրահանգման, որ իբթիհատական կատավարությունն, այդուհանդերձ, որոշ քայլեր ձեռնարկեց ոճրագործներին դատական հետապնդման ենթարկելով ու նյութական օգնություններ տալով, որն ինարկե ոչ մի համեմատական չափ չուներ ռնրի ծավալների հետ: Մեր կարծիքով, Ադանան այս իմաստով դարձավ երկրորդների՝ Թուրքիան միատարր ազգի վերածելու արձատական ծրագրի մեկնակետ, մի խթանատայի ազդակ իրենց ցեղասպանական հակամները հետագայում հաջողութամբ իրականացնելու գործում: Քանզի դրանով դրսևորվեց բուրք կատավարող շրջաններին բնույղ՝ մնան հայտարարութուններով իրական փաստերը քողարկելու ցայաօր շարունակվող գործելակերպը: Եվ հայ երեսփոխաններն էլ, որոնք Օսմանյան խորհրդարանում շատ փոքր թիվ էին կազմում, ինչպես մաև ելնելով կայսրությունում տիրող իրավիճակից և հենց բուրքական կուսակցությունների միջև առկա տարածայնություններից, իրենց գործելակերպով հազիվ թե կարողանային բեկումնային փափոխություններ կատարել:

NAIRA BABAYAN

THE 1909 ADANA MASSACRE IN THE DISCUSSIONS OF OTTOMAN PARLIAMENT: THE POSITION OF ARMENIAN DEPUTIES

The present article tries to draw a light on the events of 1909 Adana massacre, in particular it aims to display the position of Armenian deputies in achieving punishment for the criminals, subjecting them to responsibility, providing financial compensation to the suffered people, and, above all, in getting rid of the Turkish blames addressed to them.

Under the pressure of active discussions and demands of the Armenian deputies the Ottoman Parliament undertook certain steps toward balancing the created tense situation; and yet, these casual attempts to punish the criminals could be in no comparison with the scope of the crime itself.

Thus, in conclusion, it becomes obvious that Armenian deputies, very few in numbers, could hardly achieve any crucial results.

ՕԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես Բ.Յ.Թլքլանի, Կիլիկիոյ աղետը, Կ.Պոլիս, 1912, «Աստանայի քարտը և պատասխանատուները», Մուշեղ եղբակույու, Գանձրև և այլն:
2. Տես որ. ՀՀ.Մարտի տոյան, Կիլիկիայի 1909թ. ապրիլի հայկական կոտորածը և եթևասարդ բորրիի պատասխանատվության հարցը- Սերճավոր և Միսիմ Աբեկիի երկններ և ժողովորդներ, հ.Մ. Թարքեհա, Երևան, 1970, էջ 297-318:
3. Ա.Ա.Հանրարյան, Եթևարյորրիի ազգային և հողային քաղաքաշահմոյրյունը և ազատարական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, 1979, էջ 36-37:
4. Հր.Ռ.Սիմոնյան, Թորր- հայկական հարարերորրյունների պատմոյրյունիս, Երևան, 1991, էջ 144:
5. М.Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, Ереван, 1988, стр. 178.
6. V.Davidian, The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust, Armenian Review, vol. 41, No 4/164, 1988, 1-3.
7. Եր.Ղ.Սարգսյան, Ռ.Գ.Սահակյան, Հայ ժողովրդի ներ շրջանի պատմոյրյուն ննկագիտումը բորր պատմագրոյրյուն մեք, Երևան, 1963, էջ 16, East Urus, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, s.575.
8. East Urus, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, s. 456-457.
9. S.Кочар*, Тarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ili* kileri, Ankara, 1967, s. 167-168, Talat por* ar* n huz* ralar*, Istanbul, 1946, s.167-168.
10. Karmira Gürün, Ermeni dosyas*, Ankara 1983, s. 174-175.
11. Ա.Փառնազյան, Հայիի ցեղասպանոյրյունը բորր քաղաքական գործիչների հուշագրոյրյուններում, Երևան, 2001, էջ 90-91:
12. Ա.Փարամազ, Կեանքն ու գործունեոյրյունը, Փրավիստևն, 1954, էջ 83:
13. Հայիի ցեղասպանոյրյունը Օսմանյան կայսրոյրյունում, փաստարդրիի և նիսիիի ժողովամու Ա.Գ.Ներսիսյանի խմբագրոյրյունը, Երևան, 1991, էջ 253:
14. Մ.Կարանջեան, Հ.Յ.Գաշնակցորեան պատմոյրիւն, Բ. հատր, Գանիրև, 1950, էջ 16:
15. «Ժամանակ», Կ.Պոլիս, 1909թ., թիվ 148, 11-24 ապրիլ:
16. Meclisi Umumi zeh* i ceridesi, Devre:1 İctima senesi:1, cilt:1, Üçüncü İnikad, 12 nisan 1325 (1909) sal* .
17. V.Davidian, The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust, Armenian Review, vol. 41, No 4/164, 1988, 7-8.
18. «Ժամանակ», Կ.Պոլիս, 1909թ., թիվ 155, 20 ապրիլ -3 մայիս, նաև Բ.Թլքլանի, նշվ. աշխ. էջ 592-597:
19. Ա.Ա.Շաղոյրյուն, Գրիգոր Չոիրապի կյանքի և գործունեոյրյուն տաքիգրոյրյուն, Ա.Էջմիածին, 1996, էջ 202-203:



20. Սկզբում հանձնաժողովի անդամ Յուսուֆ Քեմալի փեխարեն Շեփիզ բնյն էր ընտրվել, սակայն վերջինիս հրաժարականից հետո աստարտրվեց Յուսուֆ փաշայի թեկնածությունը, ու նույնպես մերժեց և արդյունքում ընտրվեց Կաստամունի երեսփոխան Յուսուֆ Քեմալը: Յ.Քերեման, նշվ. աշխ., էջ 607-611:
21. Առանալի եղեմը, Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան Էտիքնի), Կ.Պոլիս, «Կիլիկիա» գրատուն, 1919, էջ 42:
22. Ա.Կարթնյան, Հայ պատագրական շարժման օրիցն, Փարիզ, 1947, էջ 209-210:
23. Մեկյան Ջադի Ռիֆար, Օսմանյան ենդափոխության մութ ժայռերը և Խոփեառի հայաթինը ժրագրերը, Երևան, 1990, էջ 104:
24. Փրոֆ. Վահագն Տատրեան, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական ընձարկումներով, Պալլաս, 1995, էջ 111-112:
25. «Գրիգոր թեթի խմբագիր Իսհան Ֆիրքին, ենթարկվելով դատական հետապնդման, հեռավորվելով շազմից ստանում է Մեծ եղբայրու Հիլմի փաշային, որ իրեն ազատ շարձակելու պարագայում բացելու է շուր գաղափարները: Վարչապետի հետ անձանք հանդիպելուց հետո Ֆիրքին թեթ աքսորի պատիժ ստացավ, սակայն շատ չանցած Ռիյոտրոս հանկարծամահ եղավ: (Փրոֆ. Վահագն Տատրեան, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական ընձարկումներով, Պալլաս, 1995, էջ 112):
26. Հրանդ Գանգրունի, Հայ յեղափոխությունը Օսմանեան ջոմաթիլությունից դեմ (1890-1910), Պէլլոս, 1973, էջ 309:
27. Մ.Սազակ Գիլեան, Պատասխանատուները, Փրալիտեմ, 1916, էջ 100:
28. «Իրականություն», Կ.Պոլիս, Յուլիս 9-22, թիւ 3.875, Յ. Քերեման, նշված աշխ., էջ 616-621:
29. «Առանալի ցարդ և պատմախամատումներ», Մուշեղ Խալիկեառու, Գանիթ, 1909, էջ 25:
30. Ջ.Կիրակոսյան, Երիտրուքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ - դարի 90-ական թթ. - 1914թ.), հ. առաջին, Երևան, 1982, էջ 270:
31. Հրանդ Գանգրունի, Հայ յեղափոխությունը Օսմանեան ջոմաթիլությունից դեմ (1890-1910), Պէլլոս, 1973, էջ 310:
32. «Ազատամարտ», 1909թ., Յուլիս 23/5 օրառոտ, Կ.Պոլիս, N37:
33. «Իրականություն», Կ.Պոլիս, Յուլիս 27-9, թիւ 3.889:
34. Աղչակ Ա. Արջոյանեան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Ջոհրազ, Կ.Պոլիս, 1919, էջ 205-207:
35. Մ.Աղայան, Հայ մողղղի ազատագրական պալլարի պատմությունից, Երևան, 1976, էջ 273:
36. Y.G.hark, T'erk devleti hizmetinde Ermeniler 1453-1953, Istanbul 1953, s. 237:
37. Առանալի եղեմը, Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան Էտիքնի), Կ.Պոլիս, «Կիլիկիա» գրատուն, 1919, էջ 38-39:
38. Վեր. Հանթ. Ալճնան, Առանալի եղեմը և Գոնիայէ յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 27:
39. Աղչակ Ա. Արջոյանեան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Ջոհրազ, Կ.Պոլիս, 1919, էջ 182:

40. Ալիշան Ա. Պարամևան, Կիլիգա. Հայկական Քիչիս, Երևան 2001, էջ 192-197, նաև Ե.Բ. Յոթույան, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920թթ. Երևան, 1987, էջ 31:
41. Յակոբ Յ.Յերզևան, Կիլիկիայ ազգուց, հ. 5, Կ.Պոլիս, 1912, էջ 811:
42. Գ.Յոծրուզ, Հայ պատգամաւորի մը հաշուետւորիմը, Կ.Պոլիս-Ակիստար, 1910, էջ 20-21:
43. Հ.Մ.Պողոսյան, Տնչրումի պատմութլւմն, Երևան, 1969, էջ 369:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԳՅԱՆ

ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԹՈՒՐԶ - ԱՄԵՐԻԿԱՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ՝ ԿԱՊՎԱՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

1917թ. ապրիլի 6-ին, հաղթանալեզով «անկուսացման» վերաբերյալ Մանրայի րեկտորին քարտույտը, ԱՄՆ-ը մտավ համաշխարհային պատերազմի մեջ: Ծնն Վաշինգտոնի ուշադրությունը գեղասգանցապես կենտրոնացած էր եվրոպական գործերի վրա, սակայն Մերձավոր Արևելքը ևս լրջորեն մտնում էր ԱՄՆ-ի նրկաքաղաքական շահերի սևեռոն ևնտաքրքրությունների շրջանակի մեջ: Նկատի ռնենալով Օսմանյան կայսրության անդամակցությունը Նոյակ դաշինքին, 1917թ. ապրիլին ԱՄՆ-ը խզեց իր դիվանագիտական հարաբերությունները նրա ևետ, ձեռնաքահ մնալով, սակայն, պատերազմ հայտարարելուց: Այնուհանդերձ Վաշինգտոնը որոշել էր իրեն վերապահել գործողությունների կատարյալ ազատության թուրքիայի նկատմամբ, առավել ևս, որ Միացյալ Նահանգները վաղեմի տնտեսական ու քաղաքական նետաքրքրություններ ունեյ այդ վիրիարի կայսրության նկատմամբ¹: «Թուրքիան հանդիսանում էր պատերազմի ամենախարտատ ավարը, ալիքի հարտատ, քան Շանգոյներ», - գրում էր աներիկացի Ռ.Բենկերը²: Ուստի պետական դեպարտամենտին հանձնարարված էր առևտարակ մերձավորարևելյան տարածաշրջանի նկատմամբ մշակել հատուկ հանձնարարականներ: Նրանցում շերտվում էր, որ Օսմանյան կայսրությանը աանյվող խնդիրներից Վաշինգտոնին նետաքրքրում է նաև Հայաստանի հարցը³:

Աշխարհամասրտի տարիներին իր կրած մադոկային և նյուրական գոտորությունների դիմաց Միացյալ Նահանգների կատաճարությունը օարդար փոխնատուցում» էր պատանջում Նոյակ համաձայնության գնով իր դաշնակիցներից: Այդ փոխնատուցման գոտու մեջ ամերիկյան կատաճարությունը մացրել էր նաև Մերձավոր Արևելքը, որտեղ փոխնատուցողի դերում պետք է հանդես գար Օսմանյան կայսրությունը: ԱՄՆ-ի քաղաքական կրանքի աչքի ընկնող դեմքերը այդ աարիվ հանդես լին նկել մի շարք հայտարարություններով: Այսպես, պրեզիդենտ Վուդրո Վիլսո-

նր հաշտարարել էր. «բուրքերը, քրիստոնյաների այդ մարդասպանները, պետք է վանդվեն Եվրոպայից»⁴: Իսկ համրապետական կոնգրեսին, ԱՄՆ-ի նախկին սրբեզվեցիմտ Ռեադոր Ռուզվելտը 1918թ. սեպտեմբերին 6-ին կոնգրեսում հայտարարել էր. «Օսմանյան կայսրությունը պետք է տասարվի, բոլոր սուրյնկա ժողովուրդները պետք է ազատություն ստանան, քարրի պետք է բշվի Եվրոպայից. Հայաստանը պետք է ազատ լինի»⁵:

1918թ. հունվարի 8-ին Վադրո Վիլսոնը ուղերձով դիմեց կոնգրեսին, որը հայտնի է Վիլսոնի «14 կետեր», կամ վիլսոնյան խաղաղության ծրագիր անունով: Այն հետպատերազմյան շրջանում նոր աշխարհակարգի ստեղծման վերաբերյալ մի ծավալուն ծրագիր էր: Ամերիկացի պատմաբան Ռ. Վիլյամսի կարծիքով. «14 կետերը» նպատակ ունին «վերակառուցել միջազգային հարաբերությունների համակարգը աներկյան սկզբունքներին համապատասխան և դրանով իսկ հնարավոր դարձնել Միացյալ Մեղանգների տիրապետող դերը աշխարհի քաղաքական ու տնտեսական կյանքում, չլիմելով մեծ պատերազմների»⁶:

Վիլսոնի ծրագրի 12-րդ կետը վերաբերում էր Թուրքիային. «Օսմանյան կայսրության բոլորական մասերը, իրենց ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և իստատաուն ինքնիշխանություն, սակայն ներկայիս բուրքերի իշխանության ներքո գտնվող մյուս ազգությունները պետք է ստանան իրենց գոյության աներկրա երաշխիք և ինքնուրույն զարգացման բազարձակորեն անխախտելի պայմաններ: Դադարանելը պետք է միջազգային երաշխիքների ներքո մշտապես բաց լինի նախկին ազատ անցման և բոլոր ազգերի առևտրի համար»⁷:

«Համընդհանուր հաշտության մասին» կոնգրեսում արտասանած իր ճառում Վադրո Վիլսոնը հաստիկ անդրադարձավ նաև հայկական հարցին, այն դիտարկելով նոր աշխարհակարգի ստեղծման տեսանկյունից: Այդ հարցի արծարծումով սրբեզվեցիմտը անշուշտ արտահայտում էր Ամերիկայում առկա հասարակական կարծիքը: Սակայն կատարածից վեր է, որ քաղաքականության մեջ իդեալիզմը յրացատող այդ գործիչը դրսևորում էր նաև իր սուրյնկելով, անմնական իսկություններ: Դա անբարեաց էրևում է այդ հարցի վերաբերյալ նրա կատարած բոլոր հայտարարություններում: Այսպես, 1918թ. ապրիլի 22-ին նա ասել էր. «Դ-որ կարող եք հովատացած լինել, որ ես խոր հետաքրքրություն եմ տածում Հայաստանի ճակատագրի նկատմամբ»: Իսկ 1918թ. նոյեմբերի 18-ին սրբեզվեցիմտը գրում էր պետական քարտուղար Ռորերտ Լանսինգին. «Իմ հետաքրքրությունը հայերի նկատմամբ խորն է և իմ համակրանքը նրանց նկատմամբ իրար մեծ է»⁸: Թերևս սրբեզվեցիմտի այդ դիպրոքոշման պատճառով 1918թ. սեպտեմբերի 21-ին Վիլսոնին ներկայացված ծավալուն հուշագրի մեջ չշլափվում էր նաև Հայաստանի ապագա տրատտուտի վերաբերյալ հարցը: Ըստ պետական քարտուղարի ատուպարկի, այն պետք

է անցներ մի սրև երկրի, կամ երկրների խմբի հովանավորության տակ: Սակայն Լանսինգը դեռևս չէր նշում, թե որ պետությունը նկատի ունեն: Այսպիսով, Ֆրանգոսայն ակնհայտ էր, որ ԱՄՆ-ը միախաղաղաբանական աշխատանքներ էր իրականացնում դաշնակիցների առջև Օսմանյան կայսրության ժառանգությունից իր բաժինը ստանալու համար հարց բարձրացնելու աղդությանը: 1918թ. հոկտեմբերի 30-ին ստորագրելով Մուդրոսի զինադադարը, երկտարեական կառավարությունը առիպված էր ընդունել պատերազմում իր պարտությունը: Պատասխանատվությունից խուսափելու համար իթթիհատի պարագլուխները վախոտի դիմեցին արտասահման: Երկրի քաղաքական կյանքի իրական տերը դարձավ 1918թ. ամռանը գահ բարձրացած սուլթան Մեհմեդ VI Վահիդդինը: Օրակարգում դրված էր Օսմանյան կայսրությունը մասնատելու հարցը:

Հենց այդ օրերին թուրք ազգայնականների ապագա պետագլուխ Մուստաֆա Էնալը որոշում է Ստամբուլից մեկնել Արևելյան Ամատոլիս, որտեղ գոյություն ունեին առավել քարեմապատ ուսգմատորտեզիական և քաղաքական պայմաններ կազմակերպելու դիմադրության շարժում Թուրքիայի անդամահատման ծրագրերի դեմ: Նա արագորեն Ամատոլիսյում կազմակերպեց իշխանության այլընտրանքային կենտրոն:

Այդ շարժման նշանակությունը ինչպես մասշտաբների, այնպես էլ քաղաքական նշանակության առումով անհրաժեշտ խորությամբ չգիտակցվեց, կամ գոցե թերազնահատվեց, Ամտանտի անկույտներն էլ կազմեց: Դժբախտաբար Հայաստանում ևս ընդունակ չեղան այդ դեպքերը քավարար խորությամբ վերլուծության ենթարկելու, որի հետևանքով «ժայկական հարցը» այդպիսով ունեցավ ծանր ու անդադունալի կուրսստներ: Թուրքական պետությունից քաղաքական անջատման հայ ժողովրդի խճելու քախվելով թուրքական վերնը ապրող նացիոնալիզմի ալիքին փշուր - փշուր եղան:

Մինդեռ Ամատոլիսյի խորքերում թուրք միլի ազգայնականների նախապես փոքրիկ խմբակը հետզհետե ուժ հավաքելով դառնում էր տարածաշրջանի իրադրությունների վրա ազդեցություն ունեցող լուրջ գործոն:

Կարճ ժամանակամիջոցի ընթացքում համեմատ Թուրքական Ազգային մեծ ժողովի, քեմալական շարժումը ստեղծեց նաև կառավարություն, որի հետևանքով քեմալականները դարձան Ամատոլիսյի, իսկ քիչ ավելի ուշ նաև ողջ փոքր Ասիայի իրական տերը:

Թուրքիայի անդամահատման սպառնալիքը շարունակում էր կախված մնալ երկիշխանության պայմաններում ապրող երեքմիկ հզոր պետության վրա: Նրա ճակատագիրը լուծվելու էր երկուսսայում, Փարիզի խորհրդածաղվում, որտեղ որպես թելադրողներ հանդես էին գալու

Թուրքիայի վաղեմի «բարեկամ», իսկ պատերազմի ժամանակ ռեզին բշնամի դարձած Անգլիան և Ֆրանսիան: Սակայն միջազգային առաջադեմ ուժերն ու ազնի ազդու ճեղք էր ենչում նաև Ամերիկայի ժայռը, որը համձինս իր «նոր առաքյալ» պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի «14 կետերի» ավետում էր միջազգային հարաբերություններում նոր այդպիսի կարգեր հաստատելու դարաշրջան բացվելու մասին: Բնական է, որ դա Թուրքիայում անխոսափելիորեն արթնացնելու էր ոչ միայն նոր հույներ, այլև հարթամակամ պետությունների հակաառաջդիմության վրա խաղաղու թուրքական վարպետ դիվանագիտության համար բացելու էր վիրիսայի ենարկավորություններ սրուշակի քաղաքական խնդիրներ լուծելու համար:

1919թ. հունվարի 18-ին փոխադարձ մրցակցության, բախումների, հակասական ծրագրերի և բացահայտ պայքարի պայմաններում բացվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսը: Նրա բացման պահին Եռյակ համաձայնության յուրք երկրները այսին հատակեցրել էին իրենց դիրքորոշումները «թուրքական ժառանգության» հարցի վերաբերյալ: Սակայն հասկանալի է, որ սպասվում էր համառ և անզիջում դիվանագիտական պայքար, քանի որ կողմերից ոչ մեկը չէր պատրաստվում առանց մարտի հրաժարվել իր հավակնություններից այն տարածքների նկատմամբ, որոնց տիրապետումը նրանց խոստանում էր կարևորագույն տնտեսական և աղբյուրային կարևորագույն օգուտներ:

Չհակամոռն խաղաղության պայմանագիրը կառուցվում էր Վիլսոնի «14 կետերի» եղանակով: ԱՄՆ-ի պրեզիդենտը վստահ էր, որ իրեն ենարկվորություն է տրված անմիջականորեն դիմելու ժողովուրդներին, նրանց կառավարությունների գլխի վրայով⁹¹: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի վարչապետներն ու արտասերին գործերի միջխտրները Վիլսոնի առաքելությանը նայում էին միանգամայն այլ աչքով: «Մեր վագր» ժողովուրդները, օրինակ, «14 կետերը» դիտում էր որպես քարոզական կարգախոսներ, իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտի կողմից գովաբանվող «ժողովուրդների դաշինքը» նա համարում էր գրքային մարդու միամիտ երազանք: Նշելով, որ անձամբ ինքը բարձր է գնահատում Վիլսոնի գաղափարները, Կլեմանտոն անմիջապես ավելացնում էր, որ սակայն արդեն երկու հազար տարի առաջ «միջխտուր և քարոզում էր գաղափարներ, գործնականում ցույց չտալով, թե ինչպես կարելի է դրանք կյանքում իրագործել»:

1919թ. մարտի 20-ի գաղտնի նիստում Վիլսոնը առաջին անգամ տեղեկանում է Թուրքիայի բաժանման վերաբերյալ գաղտնի պայմանագրերի, մասնավորապես 1916թ. Մայքս – Պիկոյի պայմանագրի, գոյության մասին: «Մայքս – Պիկո,- հետազայում ոչ առանց արկագծի նշել է նա,- դա ենչում է որպես թեյի վաճառքի նոր դնկելություն, գաղտնի դիվանագիտության տիպիկ օրինակ»: Դրանորիզով գաղտնի պայմանագ-

րնրի վերաբերյալ իր կտրուկ բացասական վերաբերմանը, այդ ճիշտի ժամանակ Վլադմիր հայտարարեց, որ ինքը չի ճանաչի տարածքային հովանավորությունները, երևի դրանք հիմնված չեն կառավարիչների համայնության վրա:

Կոնֆերանսի սկզբնական շրջանում բուլղարական հարցը ընկախության առանձին քննարկման չէր ենթարկվում: Այն համոզեցում էր մի յուրատեսակ «ծանրադրամ» այլ հարցերի, գլխավորապես եզրույթական խնդիրների հետ առնչվող հարցերի քննարկման ժամանակ: Սակայն թեև թուրքիան պարզավորապես պետության էր, հնարավոր չէր միան հարվից դուրս գցել:

Փարիզի խորհրդածողովում օսմանյան շահերը պաշտպանելու համար Ֆրանսիայի մայրաքաղաք էին մեկնել մեծ վեզիր Դամադ Զեյդոֆաչան և նախկին մեծ վեզիր Յեվֆիկ փաչան: Այդ առիթվ Մուստաֆա Քեմալը գրում էր. «Լորին գերազանցություն մեծ վեզիրը, անկասկած, բոլոր ջանքերը կգործադրի կոնֆերանսում օտտոմանյան շահերը պաշտպանելու համար: Այդ շահերի մեջ, որոնց պաշտպանությունը բացարձակապես անհրաժեշտ է ազգի համար, առկա են երկու հիմնական կետեր. 1. պետության ու ազգի լրիվ անկախությունը, 2. երկրի այն մասերում, որոնք իրենց կազմով գերազանցապես բուլղարական են, մեծամասնությունը չպետք է գոհարելի վերջնականությանը: Անհրաժեշտ է, որ այդ երկու կետերի կապակցությամբ գլխավորում ունենա կատարյալ համաձայնություն Փարիզ մեկնող պատվիրակարչյան ժյուզիի և ազգային գիտակցության ձևական պահանջների միջև: Հակառակ դեպքում ազգը կաղտ է հայտնվել ողբալի վիճակի մեջ և կանգնել մի շարք անուղղելի փաստերի առջև»¹⁷:

Վերջապես 1919թ. հունիսի 17-ին Դամադ Զեյդոֆ փաչային բուլղարական հանդես գալ Փարիզի խորհրդածողովում: Նա փորձում էր օգտագործել Վլադմիրի «14 կետերը» ի շահ կայսրության ամբողջականության պահպանման: Նա երիտթուրքերի կողմից քրիստոնյաների, մասնավորապես հայերի նկատմամբ, իրականացված հանցագործությունները հսկայաբանում էր այն աղետների հետ, որոնք պատերազմի ժամանակ բաժին էին ընկել «երեք միլիոն մահճեղակամների»: Սակայն Զեյդոֆ փաչայի ճարպիկ «փաստարկումները» ոչ մի ազդեցություն չգործեցին խորհրդածողովի մասնակիցների վրա:

Կլեմանտոն Եչեգ, որ մեծ վեզիրը «բուլղարիկն չի որոնում նկատության խառնելու կառավարության (երիտթուրքական Վ.Բ.) գործած ուղիների համար»: Մյաժամամակ նա վճռակամորեն մեթոջ Զեյդոֆ փաչայի այն պնդումը, թե իբր «թուրքիան միշտ լավ վերաբերմունք է ունեցել իր նպատակ ազգերի նկատմամբ, որ Օսմանյան կայսրության պահպանումը անհրաժեշտ է աշխարհի կրոնական հավասարակշռության պահպանման համար, որ քաղաքակրթությունը և աղյալությունը պահանջում են

լիվ սրահաբանի Օսմանյան կայսրության նախապատերազմյան տարածքները և այն: «Ոչ Եվրոպայում և ոչ էլ Ասիայում անհնարին է գտնել մի երկիր, որտեղ բարձրական կայսրության տիրապետության ընթացքում չճվագեր նրա նյութական բարեկեցությունը և ամբողջովին անկման չենթարկվեր նրա նյութական մակարդակը: Ժողովրդային նորագույն պատմությունը չի կարելի ծամարել որսխտության ու նպարտության ակտեր»,- այսպիսի բառերով էր եզրափակում իր խոսքը Կլեմանտոն¹²:

Հունիսի 23-ին բարձրական պատվիրակությունը դաշնակիցներին ներկայացրեց մի հուշագիր, որտեղ կոնկրետացվում էին բարձրական տնտեսկետների Օսմանյան կայսրության առանձին մասերի հետագա ճակատագրի վերաբերյալ: Այդ փաստաթղթում ոչ մի նկատարություն չկար Կ.Պոլսի և Ենոպլեների վերաբերյալ, իսկ Հայաստանի մասին խոսող մ ճշուշապատ կերպով ասվում էր, որ «եթե Երևանում ստեղծված Հայկական հանրապետությունը» ճանաչվի դաշնակիցների կողմից, ապա Օսմանյան պատվիրակությունը կհամաձայնվի քննարկել (ad referendum) նրա հետ սահմանային գիծը»¹³:

Դամադ Ժերիդ փաշայի հուշագիրը ամբողջապես մերժվեց կոնֆերանսի կողմից: «Լուրդո Վիլսոնը հանդես եկավ կարուկ նայտարարությամբ. «Մենք նրանց լսեցինք, սակայն նրանք դրսևորեցին առողջ դատարարական կատարյալ քացալկայություն... Երանք կարծում էին, բն կոնֆերանսը թողնովին անտեղյակ է պատմությանը և պատրաստ է կուլ տալու աներևակայելի սուտը»: «Ավելի լավ է, որ թողքերք մեկնեն Փարիզից»¹⁴:

«Չորսի խորհուրդը» Օսմանյան պատվիրակությանը պատասխանեց մի նուտայով, որտեղ աներկիմաստ ձևով ասվում էր, որ թողքերք չեն կարող հայս դենի պաշնակիցների ներդամտության վրա, որ նրանք «ընդունակ չեն կատավաքելու այլ ռասաների», որ անուսարակ «ծըրքը ընդունակություն չեն դրսևորել խաղաղ ճանապարհով զարգացնելու այն, ինչ ձեռք են բերել ռազմական ճանապարհով»¹⁵:

Քննալականները, որանք ոչի-ուչով հետևում էին Փարիզի խորհրդածուրվի աշխատանքներին, խիտտ դժգոհ էին, որ Դամադ Ժերիդ փաշայի բերանով արձարձվել է Հայաստանի վերաբերյալ հարցը: «Անատոլիայի և Ռումելիայի իրավամքների պաշտարամության» քննկարության ներկայացուցչական կոմիտեի անունից հրապարակված ողերձում, ուղղված Ստամբուլի բնակչությանը, Մուստաֆա Քեմալը գրում էր, որ Ստամբուլի սուլթանական կառավարությունը Փարիզի կոնֆերանսում մեծ վեզիրի բերանով հայտարարել է, որ ինքը դեմ չէ, որ «արևելյան նահանգներում ստեղծվի մավալուն Հայաստան»: «Արևելյան վլայերների բնակչությունը շատ է դառնացած այդ փաստով և իրեն պարտավորված է համարում պահանջել քաղաղություններ», - նշում էր Մ. Քեմալը¹⁶:

1919թ. մայիսի 21-ի «Երեքի» նիստում Լրոյ Ջորջը առաջ քաշեց բուրքակահանքի կարգավորման նոր տարրերակ: Նա նայումնեց իր կատարյալ պարտքատակամտությունը ոչ միայն հաստատելու իր մախկին սրբույունը ԱՄՆ-ին փոխանցելու և Վոլսի, Ֆեդուցմերի և Հայաստանի (Կիլիկիայով հանդերձ) «լրիվ մանդատը», այլև լրացուցիչ կերպով ԱՄՆ-ին տրամադրել Անատոլիայի նկատմամբ, ինչպես նաև Ռուսաստանատանի, Ադրբեջանի և որչ Կովկասի շրջանի «ծամանակազոր մանդատը», մինչև «ուսական պարբննի լուծումը»¹⁷: Այսպիսով, այդ «միասնական մանդատի» տարածքն ընդգրկում էր և Վոլսից ու Ֆեդուցմերի գոտուց մինչև Բաքու ընկած շրջանները, իր մեջ ընդգրկելով նաև ողջ «Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը և Պարսկահայաստանը»:

«Հայաստանի և Վոլսի նկատմամբ մանդատների նետակապը նամայատասխանում էր մախուզան Վլադնի խնայելնրին: Նրան հարկ չկար համազելու», գրում էր Լրոյ Ջորջը¹⁸: Իսկպպես Վլադնր հանույշով նամածայնվեց վեքցնեչ այդ տարածքների նկատմամբ մանդատի իրավունքը, սակայն զգուշորեն վերապախում անելով, որ այդ հարցը պետք է վերջին հաշվով լուծի ամերիկյան ժողովուրդը: Վլադնյան «Կ. Պոլսից մինչև Կովկաս» միասնական մանդատի տեսակետը խարսխված էր այն հիմնարար գաղափարի վրա, որ տարածաշրջանում տարրեր ազգերի ու ժողովուրդների, նետևարար տարրերի շահերի գալուրյունը, պարտաղիր պայման է առաջադրում, որ այդ վլիխարի տարածքը գտնվի մեկ ուժային կենտրոնի հովանավորուրյան տակ, այդպես խողաղուրյունը մշտապես կրացակայի աշխարհի այդ պալլուրյունավտանգ գոտուց: «Թուրքիայում մանդատների գծով միջազգային հանձնածաղուվի» ամերիկացի անդամներ Հների Քինգը և Չարլզ Կրեյնը այդ միտքը ձևակերպում էին նետևյալ կերպ: «Փոքր Ասիայում տարրեր պետուրյունների պարբնները խիստ փոխկապակցված են, որպեսզի նետարազոր լիններ հովանավորուրյունը նամանարարել տարրերի մանդատուրներին, ուրոք անխտասակելուրեն միմյանց նետ կնտմեն րախման մեջ»¹⁹:

Ամերիկացիները նաև այն կարծիքին էին, որ տմտեսական տեսակետից Փոքր Ասիան և Անդրկովկասը իրենցից ներկայացնում են մի անրամանելի ամրոցուրյուն, որը հողատար մանդատուրի տեսակետից անկարելի է րածանել»²⁰: Գննելուալ Հարրուրլի առաքելուրյան կարծիքով²¹ միասնական մանդատի դնացում «նայեղը և րոցքերը կլինեն հարևաններ, երկու կան երեք մանդատի դնացում հակառակուրդներո: Վերջապես Հարրուրլի հանձնածաղուվի կարծիքով, հայկական հարցը կարելի էր լուծել միայն այն դնացում, երբ ողջ Փոքր Ասիան գտնվեր մեկ պետուրյան՝ տվյալ դնացում ԱՄՆ-ի հովանավորուրյան տակ:

Անատոլիայի մանդատը ամերիկացիներին հանձնելու որոշման դն ղժգոտուրյան ձայներ ննչեցին միայն ֆրանսիական պարտվիրակուրյան կողմից: Կենանան ղժգոտում էր, որ ինքը տվեց Մաուրլը, տվեց Պաղես-

տիներ, ոչ մի կերպ չի կարողանում ստանալ Միրիան, իսկ այժմ իրեն գրկում են մահ Անատոլիայից: Եւ նույնիսկ համարձակվեց նկատել, որ «վտանգավոր է ԱՄՆ-ին մտցնել Փոքր Ասիա»: Մադրի ենթարկելով Վիտանի և Լյույ Ջորջի «ճամաբուսակությունները» «մահմեդական աշխարհի նշանակութեան մասին», Կոնստանտնուպոլսի հայտարարեց, որ Կ.Պոլսից ու Հայաստանից բացի եթե Ամերիկային տրվի մահ նրանց միջև ընկած Անատոլիան, ապա դա առաջ կբերի «արատալիտոմ ողջ եմրուպական աշխարհում»²²:

Յրանախայի վարչապետը առիթը չկորցրեց բռնուտ սարկազմով դիմելու Վիլսոնին. «Երբ դուք դադարեք մախազահ լինելուց, մենք ձեզանից կսարքենք Մեծ բուրջ» (Ժամանակին Էվրոպայում այդպես էին անվանում սուլթանին Վ.Ր.)²³:

Հուսեյն-ՄակՄահոն մամակազրույցի հարցը գլխական քննարկման է ենթարկվել մի շարք հեղինակների կողմից, այդպիսիք հարկ է նշել Լատկապես Ն. Հովհաննիսյանին, Վ. Կոստյուկին, Վ. Լադեյկինին, Ռ. Ջոնին, Ս. Հադավիլին, Դ. Փայքսին, Դ. Ֆրոմկինին, Ջ. Կիմչին, Ամին Սալիին, Ալի Սուրուանին և այլն: Մակայն պետք է նշել, որ պատմադրությունը հատուկ ուշադրության չի արժանացրել այդ մամակազրույցի մեջ Պաղեստինի խնդրի արժանազանը: Մինչդեռ դրա անհրաժեշտությունը կա, քանի որ հետագայում՝ 1939թ. Պաղեստինի հարցի համար կարևոր նշանակություն ունեցող Լոնդոնի կոնֆերանսում, այն հատուկ քննարկումների առարկա դարձավ:

Այս ուսումնասիրության համար հիմք են ծառայել 1969թ. Կանիերում լայն տեսած «Պաղեստինի փաստաթղթերի ժողովածու», ինչպես նաև մի շարք հեղինակների՝ հիշյալ քննարկի մվերված աշխատություններ:

Մինչև քրիստոնեական մանրատը Պաղեստինը պատմաաշխարհագրական Միրիայի մաս էր կազմում և հայտնի էր նաև որպես «Հայաստանի Միրիա»²: Միրիան Օսմանյան կայսրության կազմում էր բանի անգամ վարչական բաժանման էր ենթարկվել: 1914թ. այն բաժանված էր կիսնակաձևում հիմք վարչական մասի՝ Հաղայի, Միրիայի (Դամասկոսի),

Բեյլաքի վիլայեթները, Լիբանանի մուրասառիվեթյունը և Երուսաղեմի սանջակը: Վերջին երկուսը որևէ վիլայեթի կազմի մեջ չէին մտնում, այլ անմիջապես ենթարկվում էին Բաքոյ Դռանը¹: Պաղեստինի հյուսիսային մասը մտնում էր Բեյրութի վիլայեթի մեջ, իսկ մյուս մասը կազմում էր Երուսաղեմի սանջակը²:

Այսպիսին էր Պաղեստինի կարգավիճակը, երբ 1914թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան Գերմանիայի կողքին մտավ պատերազմի մեջ Անտանտի կրկրների դեմ: Եզիպտոսում Մեծ Բրիտանիայի Գլխավոր հյուպատոս լորդ Բիչինթերը դեռ մինչև I աշխարհամարտը միջնորդավորված կապեր էր հաստատել Մերքայի շերիխ Հուսեյնի հետ՝ ցանկանալով ապահովել արաբների աջակցությունը Մեծ Բրիտանիային³: 1914թ. հոկտեմբերի 31-ին արդեն Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարար դարձած լորդ Բիչինթերը Մերքայի շերիխ Հուսեյնի որդի Էմիր Արդալահին ուղարկեց նամակում տեղեկացնում էր, որ եթե արաբներն օգնեին Մեծ Բրիտանիային այդ պատերազմում, ապա վերջինս կեդրաշխավորեր արաբների անվտանգությունը և կկամխեր արտաքին ուժերի կողմից նրանց վրա հարձակումները: Մեծ Բրիտանիան, ըստ նամակի, կճանաչեր Շերիխ Հուսեյնին որպես Հիջազի խալիֆա, կապահովեր խալիֆայության անկախությունն ու անվտանգությունը, կպաշտպաներ նրա իրավունքներն ու արտոնությունները⁴:

Միաժամանակ Հուսեյնը Բաքոյ Դռնից հրահանգ ստացավ՝ Ջիհադ հայտարարել «սահափառներին», այսինքն՝ Անտանտի դաշնակիցների դեմ⁵:

Հույսեր չէր բացառում թուրքերի դեմ ապստամբության հնարավորությունը, սակայն՝ նրբ էր այն սկսվելու և զբաղվելու, նա չգիտեր: Նա Բաքոյ Դռնից իր որդուն՝ Էմիր Ֆեյսալին, Ջիհադ հայտարարելու հրահանգի մակրամասները քննարկելու համար Կոստանդնուպոլիս ուղարկելու թույլատվություն խնդրեց: Սակայն իրականում Հուսեյնի նախտակն էր հնարավորություն ընձևել Ֆեյսալին անցնելու Դամասկոսով՝ ծրարձակվող յարաբական ազգայնական շարժման կենտրոնով: 1915 թվականի մարտի 26-ին ժամանելով Դամասկոս՝ Ֆեյսալ արաբ ազգայնական գործիչների հետ քննարկումներ վարեց Մեծ Բրիտանիայի հետ համագործակցելու հարցի շուրջ: Նրանք կազմեցին արձանագրություն, որը հայտնի է «Դամասկոսի արձանագրություն» խորագրով⁶:

Արձանագրության մեջ նշվում էր, որ Մեծ Բրիտանիան պետք է ճանաչեր արաբական երկրների անկախությունն արաբների աջակցության դիմաց: Պետք է վերացվեին օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված արտոնությունները, բացի Մեծ Բրիտանիայի քաղաքացիներից: Դամասկոսում արաբական ազգայնական առաջնորդները ճանաչեցին Հուսեյնին՝ որպես արաբ ազգի պատվիրակ: Ֆեյսալն արձանագրության օրինակը Մերքա նասցրեց 1915թ. հունիսի 20-ին⁷:

Ստանալով արար ազգայնականների աջակցությունը՝ 1915թ. հուլիսի 14-ին Շերիֆ Հուսեյնը նամակ ուղարկեց Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի Գեներալին կամխառը Հենրի ՄակՄահոնին, որում շարադրում էր Սիրիայի արար ազգայնականների կարծիքը Մեծ Բրիտանիայի հետ համագործակցելու հարցի շուրջ՝ չեղտադեղով արար ազգի անկախության հասնելու ճգամը¹⁶։ Նամակում բրիտանացիներին արարների աջակցության դիմաց առաջ էին քաշվում հետևյալ միտաբարամանները.

1. Մեծ Բրիտանիան պետք է ճանաչեր արարական երկրների անկախությունը, որի սահմանները պետք է լինեին հյուսիսում Մեդիթ-Ալեքսանդից մինչև Պարսկաստանի սահմանը, արևելքում՝ պարսկական սահմանով մինչև Բասրայի ծոցը, հարավում՝ Հնդկական օվկիանոսը (րացի Արևմտյան, որը պահպանելու էր իր կարգավիճակը, այսինքն՝ մնալու էր բրիտանական տիրապետության ներքո), արևմուտքում՝ կարծիք ծավալու էր Միջերկրական ծովը՝ մինչև Սինայի թերակղզի:

2. Տնտեսական զորքնակցության հարցում արարական կառավարությունը միտաբարությունը տալու էր Մեծ Բրիտանիային, երև առաջ քաշվող ծրագրերը համահավասար արտոնություններ ապահովեին բրիտանացիների և արարների համար:

3. Երրորդ ուժի կողմից հարձակման դեպքում կողմերը պետք է պարտավորվեին միասնական դիմադրություն ապահովել:

4. Երև կողմերից մեկը հարձակվեր երրորդ կողմի վրա, ապա մյուս կողմը կարող էր չեղարկություն պահպանել: Երև պատերազմի մեջ մտնող կողմը ցանկանում էր, որ մյուս կողմն իր հետ մասնակցի պատերազմին, ապա կողմերը պետք է համոզվեին և քննարկեին պայմանները:

5. Այս կնքվելիք պայմանագրի երրորդ և չորրորդ կետերը ուժի մեջ էին լինելու տասնհինգ տարի: Երև կողմերից մեկը ցանկանալու երկարացնել այդ կետերի ժամկետը, ապա մյուս կողմին պետք է տեղեկացնեք այդ մասին պայմանագրի ժամկետն ավարտելուց մեկ տարի առաջ¹⁷:

Նամակագրությունը Շերիֆ Հուսեյնի և Հենրի ՄակՄահոնի միջև տևեց մինչև 1916թ. մարտի 10-ը: Ընդհանուր առմամբ տալը նամակ փոխանակվեց, որից ուրը կապված էին ստեղծվելիք անկախ արարական պետության սահմանների հարցի հետ:

Նորին մեծության կառավարությունը դեռ 1915թ. հունիսին լիազորել էր Հենրի ՄակՄահոնին երաշխավորել Արարական թերակղզում արարական խաղիֆայության ստեղծումը պատերազմից դաշնակիցների հարթական դուրս գալու դեպքում¹⁸: 1915թ. օգոստոսի 30-ին ՄակՄահոնը Հուսեյնին ուղարկեց պատասխան նամակում հայտնում էր, որ զերադատում էր ստեղծվելիք անկախ արարական պետության սահմանների հարցը քննարկել պատերազմից հետո, քանի որ այդ տարածքներից շատերը դեռ գտնվում էին զուտ բուլղարական տիրապետության տակ¹⁹: Մակայն Հուսեյնը 1915թ. սեպտեմբերի 9-ին իր ուղարկած նամակում

հավանություն չտվեց ՄակՄահոնի՝ սահմանների հարցը հետազայում քննարկելու առաջարկին շեշտելով, որ արար ժողովրդի արակցությունը ճևը բերելու համար բրիտանացիները պետք է ճշգրիտ նշեին տեղեմվելիք արարական պետության սահմանները¹⁴:

Նամակի պարունակության մասին ՄակՄահոնը Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը հայտնեց 1915թ. հոկտեմբերի 18-ին: Բրիտանական կառավարությունն, ի դեմս արտգործնախարար Էդուարդ Գրեյի, ամմիցապես կապ հաստատեց Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Բամբոնի հետ և մյա միջոցով ֆրանսիական կառավարությանը տեղեկացրեց արար ազգայնականների ծրագրերի մասին¹⁵: 1915թ. հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի հետ իր կառավարության վարած բանակցություններից հետո, ՄակՄահոնը մամակ ուղարկեց Շերիֆին, որում գրում էր, որ Մերսինի և Ալեքսանդրեյի շրջանները, ինչպես նաև Միրիայի՝ Դամակոսի, Հոմսի, Համայի, Հալեայի շրջաններից արևմուտք ընկած մասերը¹⁶ չէին կարող տեղեմվելիք արարական խալիֆայության մաս կազմել, քանի որ իր երկրի կառավարությունը չէր ուզում դաշնակից Ֆրանսիայի շահերը ոտնակարել: Այսինքն, Ֆրանսիան որշալեի հետաքրքրություններ ունել այդ տարածքներում: Բացի վերոնշյալից, ՄակՄահոնը նաև գրում էր, որ՝

1. Սահմանների վերոնիշյալ փոփոխություններով Մեծ Բրիտանիան պատրաստ էր ճանաչել արարական անկախ պետությունը և պաշտպանել Մեքքայի շերիֆի աուսգնորդությամբ այդ պետության սահմանները:

2. Մեծ Բրիտանիան կպաշտպանել րոլոր սրբավայրերն արտաքին ուժերի հարձակումներից:

3. Հնարավորության դեպքում Մեծ Բրիտանիան կօգներ և խորհուրդներ կտալ արարներին ներքին կառավարումը կազմակերպելու հարցերում:

4. Հավանալի էր, որ խորհրդակցանները և այլ ծառայողները կառավարող օղակներում, քացի արարներից, լինելու էին միայն անօգիասցիներ:

5. Ինչ վերաբերում է Բաղդադին և Բասրային, ապա արարները պետք է գնտակցեին Մեծ Բրիտանիայի նատուկ շահերն այդ տարածքներում, և պետք է միջոցներ ձեռնարկվեին այդ վայրերում յուրահատուկ կառավարում կազմակերպելու, օտարների հարձակումներից դյասնք պաշտպանելու դյասնք բնակչության քաթթության և բրիտանացիների ու արարների փոխադարձ տնտեսական շահերի պաշտպանության համար¹⁷:

1915թ. նոյեմբերի 5-ի իր մամակում Շերիֆ Հուսեյնը համաձայնեց զիջել միայն Մերսինի և Ադանայի շրջանները: Ինչ վերաբերում է Հալեայի և Բեյրութի վիլայեթներին, ապա Հուսեյնը նշում էր, որ դյասնք գուտ արարական տարածքներ էին և պետք է ամբողջությամբ ընդգրկվեին Արարական խալիֆայության մեջ: Նկատի ունենալով այս տարածքների

քրիստոնյա բնակչությանը՝ նա նշում էր, որ տարբերություն չկա մահմեդական և քրիստոնյա արարքների միջև, քանի որ նրանք մեկ նախապայի ծնունդներ են և պետք է ունենան նույն խրատմանքներն ու պարտականությունները¹⁹։

1915թ. դեկտեմբերի 14-ին ՄակՄահոնը Հոսեյնին ուղարկած պատասխան մամակում նշում էր, որ Հայեպի և Բեյրութի վիլայեթների հարցը ենթակա էր հետագա քննարկումների²⁰։ 1916թ. հունվարի 1-ի իր մամակում Հոսեյնը, չցանկանալով աշխարհամարտի ընթացքում բուլացնել քրիստոնյա բնակչության հաշիվները, փաստորեն, չարահանգեց վերուկիշյալ վիլայեթների հետագա կարգավիճակի խնդրի վերջնական լուծում հույս հայտնելով, որ պատերազմից հետո դրանց հարցը կրուծվեր ի օգուտ արարների²¹։ 1916թ. հունվարի 25-ին Հենրի ՄակՄահոնն իր պատասխան մամակում ողջունեց շերիֆի այդ որոշումը՝ գրելով, «Մենք բարձր ենք գնահատում այն դրդապատճառները, որոնցով Դուք առաջնորդվում եք այս կարևոր գործում, և լավ գլխոնք, որ գործում եք ի շահ արաբ ազգի, որ Չեր նպատակն արարների ազատությունն է... Ինձ ուրախագրեց Անգլիայի ու Ֆրանսիայի դաշինքը չբուլացնելու Չեր ցանկությունը»²²։

Հետագա բանակցությունների ընթացքում շերիֆն այդևս չամրադարձավ սահմանների խնդրին, սակայն դա չէր նշանակում, քե այդ հարցը վերջնականապես լուծված էր։ Հետագայում սահմանների հարցն առաջ էին քաշում Շերիֆի սղիները և արաբ ազգայնականները։ Օրինակ, Հոսեյնի որդի Էմիր Ալին 1916թ. մայիսի 26-ին՝ բուրբերի դեմ արաբական ապստամբության մախորեին, իր հորն ուղարկած մամակում նշում էր «Հուսանք, որ Աստված յի մոտանա Ալեքսանդրիքը, Բեյրութը և մյուս շրջանները»²³։

Մինչ Նորին մեծության կառավարությանը Կահիրեում իր պաշտոնական ներկայացուցչի միջոցով բանակցություններ էր վարում արաբների հետ և փորձում նրանց հետ համաձայնության գալ՝ անկախ պետություն խոստանալով նրանց, որի մեջ պետք է ընդգրկվեր նաև Պաղեստինը, նրա մյուս ներկայացուցիչները գաղտնի բանակցություններ էին վարում Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ²⁴։

Ինչպես արդեն նշել ենք, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյը 1915թ. հոկտեմբերի 21-ին տեղեկացրել էր Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Քամբոնիին Շերիֆ Հոսեյնի և ՄակՄահոնի միջև ընթացող մամակագրության մասին։ Գրեյը նաև առաջարկել էր, որ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունները համաձայնության գան մյուս դաշնակից Ռուսաստանի հետ՝ Օսմանյան կայսրությունում ունեցած հետադրությունների շուրջ։

1916թ. ապրիլից մինչև մայիս Պետրոգրադում տեղի ունեցած գաղտնի քանակցությունների աբյուզներում կնքվեց պայմանագիր, որը պատմության մեջ մտավ «Մայրս – Պիկոյի պայմանագիր» անունով²⁴։

Պայմանագրով Պաղեստինի տարածքում (քաղաքային շրջանում) հաստատվեցին Նեգեֆ, որը հետագայում ընդգրկվեց Մեծ Բրիտանիայի մանդատի նկարագրով Պաղեստինի կազմի մեջ, իրականացվելու էր միջազգային կառավարում։ Միջազգային կառավարման քնույրք սահմանվելու էր Ռուսաստանի հետ խորհրդակցելուց և մյուս դաշնակիցների, մասնավորապես Մեքքայի Շեյխի հետ համաձայնեցնելուց հետո։ Ֆարսեզի վրա Պաղեստինը, փաստորեն, ընդգրկում էր հարավում՝ Ղազախից մինչև Մեդյալ ծովի հյուսիսային մասը, արևելքում՝ Երուսաղեմ, Բեյրութին, Երբիքով քաղաքները և Հորդանան գետով դեպի հյուսիս՝ մինչև Տիբերիասի լիճն քակած տարածքները։

Պայմանագրով Զրամսխան իր անմիջական տիրապետությունն էր հաստատելու ներկայիս Սիրիայի արևմտյան մասում ու Լիբանանում և ազդեցությունն էր ունենալու Սիրիայի կենտրոնական ու արևմտյան մասերում և Մաուրի վիլայեթում։ Մեծ Բրիտանիան անմիջական տիրապետություն էր հաստատելու ներկայիս արևելյան Իրաքում և ազդեցություն էր ունենալու Իրաքի կենտրոնական ու արևմտյան մասերում, Մասնի սանջակում ու Հաուրամի սանջակի մեծ մասում²⁵։

Մայրս-Պիկոյի համաձայնագրի դրույթները, փաստորեն անհամատեղելի էին Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից լիազորված ՄակՄալանի՝ արաբներին տված խոստումների հետ։

Բացի այդ, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Արթուր Ջեյմս Բալֆորը 1917թ. նոյեմբերի 2-ին նամակ ուղարկեց ազգությամբ հրեա յորդ Ռուտշիլդին, որով Նորին ճեմության կառավարությունը պնդումներին խոստանում էր աջակցություն ցույց տալ Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու հարցում²⁶։ Այդ նամակը պատմության մեջ մտավ «Բալֆորի հռչակագիր» անունով։

Նման խոստումներ տալով արաբներին ու հրեաներին՝ բրիտանացիները հետագայում դժվարություններ ունեցան Պաղեստինում Ազգերի Լիգայից ստացած մանդատն իրականացնելիս։ 1920-21, 1929թթ. արաբա-հրեական քախումները Պաղեստինում և վերջապես 1936թ. սկսված պաղեստինցի արաբների եռամյա ապստամբությունը, որն աշդեն համապարական հնչելություն ուներ, ստիպեցին բրիտանացիներին ավելի շատ հաշվի մտնել արաբների հետ։

1938թ. վերջին բրիտանացիները Լոնդոնում կլոր սեղանի շուրջ քննարկումների հրավիրեցին պաղեստինցի արաբներին, Եգիպտոսին, Իրաքին, Մաուրյան Արաբիային, Եմենին և պաղեստինցի հրեաներին²⁷։

1939թ. փետրվարի 7-ին Մոռթ Ջեյմսի պալատում իր աշխատանքներն սկսեց Լոնդոնի կոնֆերանսը, որի մասնակից կողմերն էին բրիտա-

նական կառավարությունը, վերոնկալ արարական երկրների և պաղեստինցի արարների ու հրեաների պատվիրակությունները²⁴։ Եզիպտոսի պատվիրակն էր այբաբայգն Մոհամմադ Աբդ ալ-Մոմինը՝ Մեծ Բրիտանիայում Եզիպտոսի դեսպանը։ Իրաքը ներկայացնում էր վարչապետ Նուրի ա-Մալեքը, իսկ Մաուրյան Արաբիան՝ Էմիր Ֆեյսալը։ Իբն Սաուդը բազմաթիվ որդին։ Պաղեստինցի արարների պատվիրակությունը ղեկավարը Ջամալ ալ-Հուսեյնին էր, իսկ հրեական պատվիրակությունը գլխավորում էր Իսայիմ Վայցմանը²⁵։

Լուդրոնում պաղեստինցի արարները հրաժարվեցին սեմիտների հետ քանակցության սեղանի շուրջ նստել՝ մտավայություն ունենալով, որ այդ փաստը կայող է ընկալվել՝ որպես Պաղեստինում հրեաների նրազած կարգալիճակի de jure ճանաչում²⁶։

Արարական պատվիրակության ղեկավար Ջամալ ալ-Հուսեյնին մի քանի անգամ հանդես եկավ զեկույցներով, որոնցում ներկայացվում էին արարների պահանջները, որոնք, ըստ էության, չէին տարբերվում I աշխարհամարտից ի վեր բրիտանացիներին արարների ներկայացրած պահանջներից, այն է՝

1. Չեղյալ համարել բրիտանական մանդատը Պաղեստինում։
2. Դադարեցնել Պաղեստինում հրեական ազգային օջախ տեղծելու գործընթացը։
3. Դադարեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին²⁷։

Լեռնիքումսում ալ-Հուսեյնին մեկ անգամ ևս նշեց, որ արարներին մտահոգում էր Պաղեստինում հրեաների գերակայությունը, ուստի նրանք պահանջում էին բրիտանացիներից կատարել պատերազմի ժամանակ Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից լրացված Մակ-Մահոնի՝ արարներին տված խստումները²⁸։

Վայցմանն իր ելույթում պահանջեց իրականացնել Բալխոսի հուսկազրով հրեաներին տրված խստումը, որն, ըստ նրա, հույժ կտրևորություն էր ստացել հրեական պատմության այդ շրջանում, երբ հրեաները ճարձամաշքների էին ենթարկվում Եվրոպայում։ Նա, փաստորեն, հրեական հարցի հիմքում դնում էր հրեաների կրած տառուպանքների փաստարկը²⁹։

Փետրվարի 23-ին կայացավ հրեաների և արարական երկրների պատվիրակների առաջին հանդիպումը, որը, սակայն, դրական արդյունք չտվեց։ Նույն օրը Պաղեստինի արարական պատվիրակության քարտուղար Ջորջ Անտոնիսը հրապարակեց մի հաղագիր, որում աքժարձվում էր Հուսեյն-ՄակՄահոն նամակագրության նախը։ Ըստ Անտոնիսի, քանի որ Հուսեյն-ՄակՄահոն նամակագրությունն ընթացել էր աջաբեղմնով, այնուհետև նամակները թարգմանվել էին անգլերեն, դրանց արարներն և անգլերեն տարբերակներում անուսմապատասխանություններ էին առաջացել։ Մասնավորապես, նամակների անգլերեն

տեքստերում խեղաբյուրված էր ներկայացվել արաբերենի «ՀԵՂ վիլայաթ» բառը, որը մախ նշանակում է «չրջբան», այսպ՝ Օսմանյան կայսրության վարչական միավոր: Հուսեյնի և ՄակՄահոնի մամակներում «ՀԵՂ վիլայաթ» բառն օգտագործվել էր «չրջբան» իմաստով, բացի Հուսեյնի՝ 1915թ. նոյեմբերի 5-ի և ՄակՄահոնի՝ 1915թ. դեկտեմբերի 14-ի մամակներից, որոնցում «Հալեպի և Բեյրութի վիլայեթներ» արտահայտության մեջ այդ բառն օգտագործվել էր Օսմանյան կայսրության վարչական միավորի իմաստով: Ըստ Ջորջ Անտոնիտսի, մամակների անգլերեն տեքստերում, որոնք, ինչպես նշեցի՞ք, թարգմանվել էին արաբերենից, «ՀԵՂ վիլայաթ» բառը ոչ մի տեղ չէր թարգմանվել «չրջբան» իմաստով, այլ գրվել էր «vilayet», որը ենթադրում է Օսմանյան կայսրության վարչական միավորը: Այսինքն, Հուսեյնի և ՄակՄահոնի մամակների անգլերեն տարբերակները խիստ աղավաղված էին, քանի որ Օսմանյան կայսրության կազմում Մեքսիկի, Ալեքսանդրիթի, Հոնսի և Համայի վիլայեթներ չկային¹⁴:

Այսպես՛որ պնդեցին, որ ստեղծվե՛ր արաբական պատվիրակության և բրիտանական կառավարության ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով, որի խնդիրն էր լինելու ռուսմասիթի Հուսեյն-ՄակՄահոն մամակագրությունը: Համձնաժողովը կազմվեց և բրիտանական կառավարության ներկայացուցիչ յուր Մոնի անունով կոչվեց Մոնի հանձնաժողով¹⁵: Փետրվարի 24-ին տեղի ունեցած հանձնաժողովի միստում ելույթ ունեցավ Մայքլ Մակդոննելը՝ Պաղեստինի Գեյրազույն դատարանի նախկին նախագահը: Ելույթում նա, փաստորեն, հեղքում էր Անտոնիտսի հրապարակած հուշագրի այն դրույթների ճշմարտացիությանը, որոնք կապված էին Հուսեյն-ՄակՄահոն մամակագրության մանրամասնությունների հետ: Նա շեշտում էր, որ թեև Հուսեյնը պահանջել էր արաբական ողջ տարածքները ներգրավել ստեղծվելիք անկախ արաբական պետության կազմի մեջ, այնուամենայնիվ ՄակՄահոնը նշել էր, որ Սիրիայի՝ Դամասկոսի, Հոնսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերը պետք է լինեին Իջրամսիայի ազդեցության ներքո: Հինք ունենալով Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումը¹⁶ և ՄակՄահոնի վերոհիշյալ նշումը՝ Մայքլ Մակդոննելն իր ելույթում ասում էր, որ նշյալ շրջաններից արևմուտք ընկած Սիրիան նաև Բեյրութի վիլայեթի հարավային մասն էր, որի մեջ ընդգրկված էր Պաղեստինի հյուսիսային մասը՝ Արքայի և Նարլուսի (Բաղրայի) սանջակները, և Երուսաղեմի սանջակը¹⁷:

1939թ. մարտի 16-ին Մոնի հանձնաժողովը Լոնդոնի կոնֆերանսին ներկայացրեց Հուսեյն-ՄակՄահոն մամակագրության ռուսմասիթո-

յամ արդյունքում կազմված զեկույցը, որտեղ ներառված էին արար Շեր-կայացուցիչների փաստարկները և քրիտանացիների հակափաստարկ-ները: Արարները փաստարկում էին, որ մամակազոտության հանգանաձ-րաները Հոսեյնին հնարավորություն չէին տվել ճշգրտել ստեղծվելիք արա-բական պետության սահմանները, շնայած որ արարական պետության մեջ Պաղեստինի ընդգրկված լինելու հարցում մա Ֆիչո համոզված էր և-ղել: Իսկ քրիտանացիները հեշտությամբ բերում էին հակափաստարկ-ներ, քե ՄակՄահոնը, ճշյալ շրջաններից արևմուտք անելով, ճկարտի էր տնեցել մաև Պաղեստինը: Համահամարույթի ուսումնասիրության արա-յունքում Հոսեյնի և ՄակՄահոնի միջև փոխանակված մամակների անգլերեն տեքստերում որոշակի ճշտումներ էին մտցվել, մասնավորա-պես «շրջան» բառի փոխարեն օգտագործված «vilayet» բառը փոխա-րինվել էր «district շրջան» բառով²⁸:

Նման վիճարարությունները և արարների բխած փաստարկները որևէ կերպ ազդեցություն չունեցան: Բանակցություններն արար պատ-վիրակների, քրիտանացիների և սխեմիստների միջև որոշակի արդյունք-ներ չուվեցին: Կոնֆերանսը, որի ընթացքում ոչ մի համաձայնություն ձեռք չբերվեց, ավարտվեց 1939թ. մարտի 27-ին²⁹:

Իրականում քրիտանացիները քաջ գիտակցում էին, քե ինչ էլք էր տ-նեմադր լոնդոնյան կոնֆերանսը, սակայն անհրաժեշտ էին համարում արարների և եղևանների միջև միջնորդի դեր ստանձնել: Մեծ Բրիտա-նիայի զարթոթների մախարար Մակկոլմ Մակկոնմալըրը հայտարարեց, քե Նորին մեծության կատակարարությունը մտաղիլ էր չեղյալ համարել մամ-րատը և ստեղծել Պաղեստինյան պետություն, որը բարեկամության դա-շինք կկնքեր Մեծ Բրիտանիայի հետ: Մակկոնմալի այս հայտարարու-թյունն ընդգրկված էր 1939թ. Մալտոսկ րոթում³⁰:

Այսպիսով, հարկ է փաստել, որ արարների հետ մախմակաև պայմա-նավորվածության մամամակ հետակ շնչելով ստեղծվելիք անկախ արա-բական պետության սահմանները՝ քրիտանացիները հետագայում հմտա-րեն կաշտդացան շահարկել այդ փաստը: Հինք ընդունելով Հոսեյն-ՄակՄահոն մամակազոտության ընթացքը և մամակների քովանդակու-թյունը՝ կարելի է ենթադրել, որ քրիտանացիներն ընդունում էին, որ Պա-ղեստինն ստեղծվելիք անկախ արարական պետության մաև կազմի: ՄակՄահոնի 1915թ. հոկտեմբերի 24-ի մամակի համամայն՝ արարական պետության սահմաններից դուրս էին մմում միայն Մերսինի և Ալեք-սանդրբի շրջանները և Սիբիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալե-պի շրջաններից արևմուտք ընկած մասերը: Պաղեստինն ընկնում էր ՄակՄահոնի նշած տարածքներից հարավ և հարավ-արևմուտք: Այն փաստը, որ հետագայում Պաղեստինը դրվեց քրիտանական, իսկ Լիբա-նանը Դրամսիական վերահսկողության ներքո, արարներին հիմք է տա-

լիս պնդելու, որ քրիստոնեացիները երաշխավորել էին Պաղեստինի լինողը մտքով ստեղծվելից անկախ արաբական պետության մեջ:

Այնուամենայնիվ, Լոնդոնի կոմիտեանում քրիստոնեացիները փաստարկեցին, որ ՄակՄաեռոնը, հաշվի առնելով Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումը, Սիբրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի մեջ նկատի էր ունեցել նաև Պաղեստինը: Նշենք, որ ՄակՄաեռոն չէր կարող Սիբրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի մեջ նկատի ունենալ Դամասկոսի (Սիբրիայի) և Հալեպի վիլայեթներից արևմուտք ընկած տարածքները, ներառյալ Պաղեստինը, քանի որ Հոմս և Համա քաղաքները Դամասկոսի վիլայեթի մաս էին կազմում, և եթե նա Դամասկոս ասելով նկատի ուներ վիլայեթը, ապա կարիք չկար առանձին նշելու Հոմսը և Համան: ՄակՄաեռոնը կարող էր հաշվի առնել միայն Սիբրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի վարչական բաժանումը, այսինքն՝ նկատի ունենալ Բեյրութի վիլայեթն ամբողջությամբ, յնչպես որ վերոնիշյալ շրջաններից արևմուտք ընկած էր Բեյրութի վիլայեթի միայն հյուսիսային մասը: Բեյրութի վիլայեթի հարավային և հյուսիսային մասերն, ընդհանուր առմամբ յունենալով, բաժանվում էին ամմիթապես Բարձր Դուռը ենթարկվող Լիբանանի մուրասառիֆությանը: Այնուամենայնիվ, Բեյրութի վիլայեթը մեկ վարչատարածքային միավոր էր, և եթե ՄակՄաեռոնը հաշվի առնելը Սիբրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերի վարչական բաժանումը, ապա պետք է նկատի ունենար նաև Բեյրութի վիլայեթի հարավային մասը՝ Բեյրութի սանջակը և հյուսիսային Պաղեստինը՝ Աքքայի և Նաբլուսի (Բալթայի) սանջակները: Սակայն եթե նույնիսկ ընդունենք քրիստոնեացիների բերած փաստարկը, թե ՄակՄաեռոնը վերոնիշյալ շրջաններից արևմուտք ասելով հաշվի էր առել Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումը՝ նկատի ունենալով նաև Բեյրութի վիլայեթն ամբողջությամբ, ներառյալ Պաղեստինի հյուսիսային մասը՝ Աքքայի և Նաբլուսի (Բալթայի) սանջակները, ապա ամմիթապես Բարձր Դուռը ենթարկվող Երուսաղեմի սանջակի դեպքում այդ փաստարկն ընդհանրապես ընդունելի չէ, քանի որ այն ո՛չ ընկած էր Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք, ո՛չ էլ այդ շրջաններից արևմուտք ընկած վարչատարածքային միավորի մասն էր:

**THE PALESTINE QUESTION IN THE HUSSEIN-MACMAHON
CORRESPONDENCE AND THE LONDON CONFERENCE**

The article examines the negotiations between the High Commissioner of Great Britain in Egypt and the Sherif of Mecca, especially the Palestine question in those negotiations. During the World war I the British wanted to gain the Arabs' support against the Turks, promising the Sherif of Mecca to proclaim an independent arab state after the War. Sherif Hussein accepted their proposal and, among other problems, discussed the question of territories, which would be included in the above-mentioned state, with Henry MacMahon, the High Commissioner of Great Britain in Egypt. Based on the contents of the letters exchanged between Sherif Hussein and Henry MacMahon from July 1915 to March 1916, one can say that Palestine was intended to be included in the proposed independent arab state, but the British never accepted that fact. In 1939 the Hussein-MacMahon correspondence was discussed in the London conference, where british and arab delegations made reports on the above-mentioned negotiations, the British trying to prove that MacMahon intended to exclude Palestine from the proposed independent arab state and the arabs opposing them.

Our point of view is the following: Based on the administrative division of Palestine in the Ottoman empire, we conclude that Henry MacMahon intended to include Palestine in the promised arab state.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«الرسائل المتبادلة بين الشريف حسين وسير هنري مكماهون من 14 يوليو 1915 الى 10 مارس 1916» - ملف وثائق فلسطين القاهرة 1969. ص 187-169. الدكتور علي سلطان. تاريخ سورية 1908-1918. دمشق 1987. ص 387-383.

Հովհաննիսյան Լ Ն. Սարգսյան, Արշիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 23-24; В.П. Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 52; Амин Саид, Восстания Арабов в XX веке, Москва 1964, стр. 65-66; McMahon-Hussein Correspondence. <http://WWW.mideastweb.org/mcmahon.htm>.

جورج كوت. دراسات فلسطينية بدون مكان. 1971. ص 24.

3 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p.17; М. А. Соловейник, Историко-географический атлас Палестины, Санкт-Петербург 1913, стр.9.

4 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p.17.

5 Амин Саид, Восстания Арабов в XX веке., Москва 1964, стр. 59-60.

6 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut 1970, p. 27.

7 Lorand Gaspar, Histoire de la Palestine, Paris 1968, p. 87.

8 David Fromkin, *The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East*, New York 1989, p.175.

9 Ա.Հովհաննիսյան և Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 23:

10 «من الشريف حسين إلى سير هنري مكماهون- 14 يوليو سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916»- ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 170-169.

11 Նույն տեղում:

12 David Fromkin, *The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East*, New York 1989, p. 178; Jon Kimche, *The Second Arab Awakening*, London 1970, p.51.

13 «من سير هنري مكماهون إلى الشريف حسين 30 أغسطس سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916»- ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 171.

14 «من الشريف حسين إلى سير هنري مكماهون- 9 سبتمبر سنة 1915. الرسائل المتبادلة بين

الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى مارس 1916»- ملف 10

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 172-174.

15 David Fromkin, *The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East*, New York 1989, p. 179.

16 Robert John and Sami Hadawi, *The Palestine Diary*, Beirut 1970, p. 39.

17 «من سير هنري مكماهون إلى الشريف حسين 24 تشرين الأول سنة 1915. الرسائل

المتبادلة بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916»-

ملف وثائق فلسطين. القاهرة 1969. ص 176-175.

18 «من الشريف حسين إلى سير هنري مكماهون- 5 تشرين الثاني سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916»- ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 177-178.

19 «من سير هنري مكماهون إلى الشريف حسين- 14 كانون الأول سنة 1915. الرسائل المتبادلة

بين الشريف حسين و سير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916»- ملف

وثائق فلسطين. القاهرة 1969. ص 180-179.

- 20 «عن الشريف حسين إلى سير هنري مكماهون 1 كانون الثاني سنة 1916. الرسائل المتبادلة بين الشريف حسين وسير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916» - ملف وثائق فلسطين القاهرة 1969. ص 181-182.
- 21 «عن سير هنري مكماهون إلى الشريف حسين 25 كانون الثاني 1916. الرسائل المتبادلة بين الشريف حسين وسير هنري مكماهون من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916» - ملف وثائق فلسطين القاهرة 1969. ص 183.
- 22 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut 1970, p. 40.
- 23 أبو عمار. ثورة أكتوبر والقضية الفلسطينية. بدون مكان وسنة. ص 9.
- 24 Հռոմիսթիանի և Հ. Սարգսիան, Միջին անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 24; В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 25; British Rule by David Mendelson. <http://WWW.jajz-ed.org.il/100/concept/british.html>.
- 24 «معاهدة سايكس بيكو. أبريل-مايو سنة 1916» - ملف وثائق فلسطين... ص 193. الدكتور علي سلطان. تاريخ سورية 1908-1918. دمشق 1987. ص 417-403.
- 25 Հռոմիսթիանի և Հ. Սարգսիան, Միջին անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 24-25; В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 25; В.П.Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 52; The Sykes-Picot Agreement. <http://www.mideastweb.org/mesykespicot.htm>.
- 25 Jon Kimche, The Second Arab Awakening, London 1970, p. 51.
- 26 «تصريح بلغور» - ملف وثائق فلسطين... ص 217.
- В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 26; В.П.Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 55; Г.С.Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 23; Е. Дмитриев, Палестинский узел, Москва 1978, стр. 18; Е.Дмитриев, В.Ладейкин, Путь к миру на Ближнем Востоке, Москва 1978, стр.18; Richard P.Stevens, Zionism and Palestine Before The Mandate, Beirut 1972, p. 31.
- 27 نهاني هلسه دافيد بن جويون بيروت 1968. ص 53.
- 28 Г.С.Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 38.
- 29 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut 1970, p.297.
- 30 Jon Kimche. The Second Arab Awakening, London 1970, p.188.
- 31 صالح مسعود أبو بصير. جهاد شعب فلسطين. بيروت 1968. ص 256.

32. عز الدين فودة، قضية القدس، بيروت 1969، ص 162.
33. نهاني طلسه دافيد بن جوربون بيروت 1968، ص 53.
34. «مذكرة عن عهد بريطانيا للعرب 22 فبراير سنة 1939» - ملف وثائق فلسطين... ص 682-677.
35. «مؤتمر فلسطين تقرير اللجنة المؤلفة لدرس مكاتبات معينة تبودلت في سبتمبر 1915 و 1916 بين السير هنري مكماهون المندوب السامي البريطاني بالقاهرة وشريف مكة» - ملف وثائق فلسطين... ص 705-711.
36. Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p. 17.
37. «حيان أدلى به السير ميثيل ماكدونيل لبعض المسائل القانونية الناشئة عن بيان رئيس القضاة في الجلسة الثانية التي عقدتها اللجنة في يوم 24 فبراير سنة 1939» - ملف وثائق فلسطين... ص 698-691.
38. «مؤتمر فلسطين. تقرير اللجنة المؤلفة لدرس مكاتبات معينة تبودلت في سبتمبر 1915 و 1916 بين الشريف حسين و السير هنري مكماهون المندوب السامي البريطاني بالقاهرة» - ملف وثائق فلسطين... ص 705-711، «الرسائل المتبادلة بين سير هنري مكماهون و الشريف حسين من 14 يوليو 1915 إلى 10 مارس 1916» - ملف وثائق فلسطين... ص 187-169، McMahon-Hussein Correspondence. <http://WWW.mideastweb.org/mcmahon.htm>.
39. Г.С. Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 38.
40. Е. Дмитриев, Палестинский узел, Москва 1978, стр. 27-28.

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԻՐԱՆԸ՝ ՊԱՐՄԻՑ ԾՈՑԻ ԱԶԳԵՑԻԿ ԳՈՐԾՈՆ
(1960-70-ԱԿԱՆ ԹԹ.)

Ներկայացվող խնդիրը դուրս չի մնացել արևելագետների, միջազգայնագետների և պատմաբանների տեսադաշտից, որի շուրջ աշխատանքներ են իրականացրել Ն.Հ.Հովհաննիսյանը, Ա.Չ.Աջաբաջյանը, Մ.Բ.Բաղդասարյանը, Գ.Գ.Ալիբեյլին, Ա.Ա.Ալիևը, Լ.Վ.Վալդովան և այլք: Սակայն առկա նոր նյութերի պարագայում հասցում ենք նոր եզրակացությունների, որանք ստորև կներկայացնենք:

1960-70-ական թվականներին շահակամ Իրանը, դատմաբանական աշխարհում հզոր տերություն, իր ռազմական, տնտեսական, բնական հարստությունների և մարդկային խաչքր ռեսուրսների առկայությամբ, փորձում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վրա տարածել իր ազդեցությունը, ինչպես նաև ստանձնել Պարսից ժողովրդի քրեական դեքը: Դրան մարտում էին մի շարք գործաններ, ամերիկյան լայնամասշտաբ ազակցությունը Իրանին, Իրանի՝ նավթի ազգայնացման շնորհիվ կուտակված ֆինանսական միջոցները, մարտունակ բանակը՝ զինված այդպիսի գնդերով և զինամթերքով:

1960-70-ական թվականներին իրանա-ամերիկյան հարաբերությունները թևակոխել էին որակական նոր վտու: Վաշինգտոնն այդ տարածաշրջանում վարում էր «երկու հենարանների» քաղաքականություն՝ հենվելով Իրանի և Մատուլյան Արաբիայի վրա՝ մեծ հույսեր կապելով հատկապես շահակամ վարչակարգի հետ:

Մատուլյան Արաբիայի և Իրանի գաղափարական ու քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմուտք, ինչպես նաև այդ երկրների տնտեսական փոխադարձ կապը իրանաշխարհային շուկայի և ԱՄՆ-ի տնտեսության հետ, դարձրեց նրանց ամերիկյան պոտենցիալ քաղաքականության գլխավոր հենարանը տարածաշրջանում¹:

Ինչպես քննորդ է գերհզոր տերությանը, ԱՄՆ-ի վարչակազմն էլ ինչպիսի տարածաշրջանում Իրանի գաղափարական նպատակները տեսնելով իր սեփական շահերը: Նա ջանում էր հզորացնել Իրանը, որպեսզի կանխի Խորհրդային Միության հնարավոր ազդեցության, ինչպես նաև փորձում էր

ազատվել իր տեղը իրանական մավթի ներմուծման գործում: Բացի այդ աջակցում էր Իրանի որոշմանը, այն է՝ Սաուդյան Արաբիայի հետ միասին ազատվել Պարսից ծոցի անվտանգությունը և կայունությունը, պահպանում էր Իրանի հետ տնտեսական և առևտրական սերտ հարաբերություններ, նպատուում էր Իրանի քաղաքական կայունությանը, տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային համագործակցությանը Թուրքիայից մինչև Հնդկաստան³:

Իրավիճակը Մերձավոր և Միջին Արևելքում շեկացավ, երբ 1968թ. հունվարի 16-ին Անգլիայի վարչապետ Հարոլդ Վիլսոնը Համայնքների պարատում հայտարարեց, որ մինչև 1971թ. վերջը անգլիական ռազմական հենակետերը կտարհանվեն Հարավարևելյան Ասիայից և Պարսից ծոցի շրջանից⁴: Բնականաբար, առաջացած այդ վակուումը փորձեցին լրացնել ինչպես Իրանը, այնպես էլ Սաուդյան Արաբիան, որն իրեն ի դեպ համարում էր Մեծ Բրիտանիայի «բնական ժառանգորդը»՝ հավակնություններ ունենալով իր ազդեցության տակ վերցնել Պարսից ծոցի իշխանությունները⁵: Մինչդեռ Մոհամմեդ Ռեզա շահն էլ իր հելոփին հայտարարեց, որ Մերձավոր և Միջին Արևելքի խաղաղության պահպանման պատասխանատվությունն այստեղից Իրանը վերցնում է իր վրա⁶: Ի դեպ, նման հավակնություններ ունեւ Իրաքը:

Միացյալ Նահանգների երկու դաշնակիցների՝ Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև նկատվում էր լարված մրցակցություն, միջպետական հարաբերություններում առկա էին մի շարք խնդիրներ, սակայն գոտ առերևույթ երկու կողմերն էլ ցուցադրում էին իրենց ջերմ հարաբերությունները:

Առաջին լարվածությունը նկատվեց Պարսից ծոցի մայրցամաքային ծանծաղուտի տարածքների բաժանման ժամանակ: Այդ խնդիրը առավել ցայտում երևաց 1940-50թթ., երբ գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ, հնարավոր եղավ շահագործել նավթով հարուստ ծովի ընդերքը: 1963թ. ապրիլին Իրանի կառավարությունը որոշեց օտարերկրյա քնկերություններին տալ նավթային կոնցեսիա, Պարսից ծոցի շեկի այն տարածքում, որի սահմանները Իրանն ինքնակամ համարում էր իրենը: 1963թ. մայիսի 1-ին Իրաքը, հունիսի 4-ին Քուվեյթը, հունիսի 15-ին Սաուդյան Արաբիան բողոքեցին և Իրանից պահանջեցին վերանայել սլոշումը: Իրանը հայտնեց իր պատրաստակամությունը բանակցություններ վարել այդ հարցի շուրջ: Վերջնական համաձայնագիրը ստորագրվեց 1968թ. հոկտեմբերի 24-ին, որով կողմերը կարողացան համաձայնության գալ և ազդեցության գոտիները իրար մեջ բաժանել, ըստ որի, ճանաչվեց Իրանի ինքնիշխանությունը Ֆարս կղզու, իսկ Սաուդյան Արաբիայինը՝ Էլ-Արաբիա կղզու նկատմամբ: Լավթախանքերի գոտիները ևս հավասարապես բաժանվեցին⁷:

Երկրորդ միջադեպը կողմերի միջև գրանցվեց 1968թ.-ին, երբ Քահրեյ-մի շեյխը սրաչառման համար ժամանեց Սաուդյան Արաբիա, ինչին Ի-րանի դեկլարացիոն մարմինները խիստ բացասաբար արձագանքեցին. չէ որ դեռևս 1957թ. հոկտեմբերի 10-ին Իրանի կառավարության որոշման համաձայն Քահրեյն կղզիախումբը հայտարարվել էր Իրանի 14-րդ օսթան (մահալ)։ Այցելելով Էր-Ռիպալ շեյխն ակնկալում էր առանալ Սաուդյան Արաբիայի օթակցությունը շահին ընդդիմանալու համար։ Ռուպն քաղցրի նշան Իրանի շահը հետաձգեց մախառնակած այցը Էր-Ռիպալ, ինչը Ֆեյսալ բազավորը որակեց որպես «ոչ քարեկամական քաղ Սաուդյան Արաբիայի նկատմամբ»⁷։

Սակայն ամերիկյան դիվանագիտությունը ճնշում գործադրեց և Ի-րանի, և Սաուդյան Արաբիայի վրա՝ ձգտելով հարթել տարածայնությունները երկու երկրների միջև։ Ռուտի վերջիններիս այլևս ոչինչ չէր մնում, քան քարեկամ կադաշտությունները ամխոտափելի համագործակցության համար։ Իրանի շահի արտաքին քաղաքականության մարտակմերից մեկն էր քաղ շտալ որ առանվեմ, էլ չենք ասում տու-պալվեն տաքածաչքբանի միապետությունները⁸, մամականդ որ արդեն իրողություն էր 1958թ. Իրաքի, 1962թ. Եմենի միակառությունների տասպա-լումը⁹։

Իրանը տաքածաչքբանում իրեն առավել վտանգ զգաց հատկապես 1972թ., երբ ԱՄՆ-ի մախազահ Ռիչարդ Նիքսոնը խոստացավ շահին հնարավորություն ընձեռել գնել Միացյալ Նահանգների արտադրության ցանկացած տեսակի ռազմական տեխնիկա։ Դա հանրնկնում էր Մո-համմեդ Ռեզա շահի նպատակներին, քանի որ վերջինս ցանկանում էր Իրանը դարձնել տաքածաչքբանի ամենամաքոտնակ և եզրը քանակ ու-նեցող երկրներից մեկը։ Այդ մասին խոսել էր նաև Իրանի շահը Նյու-Յորկի-քին տված հարցազրույցի ժամանակ, սրն արտաստել է Քեյնան Ինթեր-նեչնի թերթը. «Իրանը ԱՄՆ-ից սպառնաատվում է գնել 700 ուղղարթո» ո-րից 220-ը ռազմական, ներառյալ «Չինուկո» և սուգանավերի զեն սպա-չաղող 18 «Սիկորսկի» տիպի ուղղարթո, 500 մզն ուղարթ ընդհանուր ար-ժույթբյամբ»¹⁰։ Մինչդեռ շահը նշում էր, որ տաքածաչքբանի մի շարք երկրների այդ բժում էզիլատոր, Սիբիան և Իսրայելը գտնում են, որ ի-րենց անվտանգության սրահպանման համար անկրածելու են ճոտսպո-րապես 500 տղային միջոցներ։ «Բացի Միացյալ Նահանգներից ձեռք բերված ռազմական տեխնիկայի, շարունակում է շահը. Իրանը Անգ-լիայից գնում է «Չիֆրեն» տիպի 800 տանկ, 480 մզն ուղարթ ընդհանուր արժողությամբ, վերանորոգում և արդիականացնում ենք «M-47» տիպի 400 տանկ, որը ձեռք էինք բերել ԱՄՆ-ից, ինչպես նաև «M-60» տիպի 460 տանկ։ Ընդհանուր առմամբ 1700 տանկ։ Նախատղտր ևս կրկնա-սրատկում ենք։ Իրանը Միացյալ Նահանգներից ստացել է նաև լազերի միջոցով կառավարվող «Սմարտ» տիպի ումբ»¹¹։ 1975թ. Իրանը սրտ-

բաստվում էր Միացյալ Նահանգներից գնել 8 հատ 1,200 Mwe (megawatt-electric) եզրուրյաճք ունակտոր, համաարտասխանաբար Նորանոխայից էլ ձևոր էր քերվելու 2 հատ 900 Mwe, Գեորմանիայից 2 հատ 1,200 Mwe եզրուրյաճք ունակտորներ¹¹: Իսկ 1977թ. շահը ԱՄՆ-ից գնեց շարք 6 միլիարդ դոլարի գնեք, և 12 միլիարդի էլ պատվիրել էր¹²: Ընդհանրապես Ռեգա շահը նախատակ ամեր մինչև 1994թ. միջուկային սեակտորների եզրուրյունը հասցնել 23,000 Mwe¹³:

Ըստ էրթվաարի տվյալների, ԱՄՆ-ը շահի հետ գաղտնի համաձայնություն էր ձևոր քերել, ըստ որի Իրանի տարածքում կառուցել էին 7 ռադիոէլեկտրոսային լուսնական կայաններ¹⁴:

Իրանի ռազմականացումն առավել ակնհայտ դարձնելու համար քերնը 1973-1980թթ. Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ռազմական ծախսերի հաշվեկշիռը, ըստ ԽՄՀՄ-ի Անվտանգության մախարարության տվյալների¹⁵:

Երկիր	1973-1976		1977-80	
	ճյուղ դոլար	քերիամոր գումարի մասնաբաժինը %	ճյուղ դոլար	քերիամոր գումարի մասնաբաժինը %
Իրան	29,1	44,0	28,0	27,6
Իրաք	6,1	9,2	10,3	10,1
Սաուդյան Արաբիա	19,8	29,9	41,1	40,5
Քուվեյթ	4,9	7,4	7,3	7,2

Ինականաբար, Խորիջոյային Մյուրյունը քոյոքեց իր հարսվային ստունանների մոտ նման քսնակի ռազմական օժի և, որ ավելի կարևոր էր, ամերիկյան ռազմական մասնագետների թվի աճի կապակցությամբ: Ի՞նչ պատասխան Խորիջոյային Մյուրյան անդալար քոյոքներին, ԱՄՆ-ի նախագահ Նիքսոնը ամերիկացիների ներկայությամբ քացատրում էր նրանով, որ ԱՄՆ-ը չի կարող անտեսել Խորիջոյային ժամանակակից նավատորմի ներկայությամբ Հնդկական օվկիանոսում, Միջերկրական ծովում և Աֆրիկայի ավերի մոտ: Ի՞նչ պաշտպանություն ամերիկացիների՝ իրանական մամուլը մատմանշում էր, որ եզրկառուսում գործում էր ռուս մասնագետների 15 հազարանոց մի խումբ, այն քանից հետո, երբ ԽՄՀՄ-ը եզրկարոսիսն վաճառել էր գնեք և զինամթերք: Այնպես որ նրանք քնական են համարում օտարերկրյա ներկայացուցիչների առկայությունը երկրում, երբ այդ երկիրը գնել է ռազմամթերք մեկ այլ երկ-

րից¹⁶։ Ամերիկյան խորհրդակցականների կողմից կազմվել էր իրանական զորքին ամերիկյան զինքով զինելու ծրագիր, ներառյալ հրթիռներ և մարտական տեխնիկա, ինչպես նաև Իրանի տարածքում ռազմական օդանավակայան, վայրէջքի նրասպասակ, նավահանձնարաններ, նավակայան, ճանապարհներ, շաղիտյի և հեռախոսային կապի ցանց կառուցել։

Այսպիսով, կարգավորելով սեփական ռազմական ուժերը, ունենալով բավական Ֆինանսական միջոցներ ի նաչլի մավթի¹⁷, այսուհետ Պարսից ծոցի հետ կապված հարցերը հայտնվեցին Իրանի քաղաքականության օրակարգում, որն առավել հայտնի է որպես Պարսից ծոցի նկատմամբ «սկոտլի կուրս» քաղաքականություն։ Այս քաղաքականությունը ռազմավարական նշանակություն ուներ Իրանի համար, քանի որ Պարսից ծոցով էր իրականացվում ինչպես իրանական ապասնթքների առևտուրը, այնպես էլ նավթի և նավթամթերքի արտահանումը միջազգային շուկա։ Իրանը իր վրա էր վերցնում տարածաշրջանում յուրաքանչյուր խնդրի լուծման ղեկավարությունը, որի մասին դեռևս 1969 հուլիսին տպագրվեց Իրանի ԱԳՆ-ի հայտարարության մեջ, որտեղ նշվում էր. «Ոչ մի դեպքում չի կարելի հնարավորության տակ մյուս երկրներին միջամտել Պարսից ծոցի գործերին, Իրանի կառավարությունը պատրաստ է համագործակցել Պարսից ծոցի բոլոր երկրներին հետ՝ նսնում տարածաշրջանի խաղաղության և անվտանգության պահպանման։ Բայց եթե Պարսից ծոցի մյուս երկրները չեն կատարում նախնային համատեղ պաշտպանությունը, ապա Իրանն ի վիճակի է միայնակ իր վրա վերցնել այս տարածաշրջանի շահերի պաշտպանության գործը»¹⁸։

Ուշադրության է արժանի Իրանի դիրքորոշումը Պարսից ծոցում առաջացած թազմաթյալ խնդիրների և դրանց լուծման եղանակների վերաբերյալ։

Կարևորելով Իրանի դերը տարածաշրջանում, դեռևս 1971թ. նոյեմբերի 29-ին Իրանի և Շարքայի կառավարությունները պաշտոնապես կնքեցին համաձայնագիր Արու-Մուսա կղզին Իրանի ինքնավարության տակ բողնելու վերաբերյալ։ Օգտվելով այս համաձայնագրից, ևաջուր օդը՝ նոյեմբերի 30-ին, Ռեզա շահի հրամանով իրանական զորքերը կայմակնային արագությամբ (6 ժամվա ընթացքում) տեղակայվեցին Արու-Մուսայում, միևնույն ժամանակ զբաղեցրին նաև Մեծ և Փոքր Թոմբերը¹⁹, որոնց նկատմամբ Իրանը միշտ էլ հավակնություններ է ունեցել։ Դրանով փաստորեն, Իրանը իր վերահսկողության տակ վերցրեց Հորմուզի նեղուցը²⁰։

Իրանի կողմից՝ նշված կղզիների գրավումը ուժեղ հակազդեցություն առաջացրեց Արաբական աշխարհում։ Առաջացած հարցի կառավարությանը առավել զուսպ մոտեցում ցուցաբերեց Սաուդյան Արաբիան։ Այս քաղաքականությունը մի կողմից ձեռնտու չէր Էր-Ռիադին, քանի որ Իրանն այդպիսով առավել ամրապնդում էր իր դիրքերը Պարսից ծոցում,

յակ մյուս կողմից, այս իրադարձություններին, որպես հակակշիռ, Սասնայան Արաքիայի շուրջ համախմբվեցին արաքական փոքր պետություններ: Վերահիշյալ կողմների գրավման հետևանքով խզվեցին դիվանագիտական հարաբերությունները Իրանի և Իրաքի միջև, ինչպես նաև լարվածություն նկատվեց Արաքական աշխարհի և Իրանի փոխհարաբերություններում, որի արդյունքում էլ արաքական մի շարք երկրների պարբերականներում ի հայտ եկան Պարսից ծոցը Արաքական ծոցի վերանվանելու տեսակետներ²¹:

1971թ. սկզբից Բաղդադը ջանք ու եռանդ չէր խնայում կանխելու Իրանի ազդեցության տարածումը Պարսից ծոցում: Լարվածությունն ավելի խորացավ, երբ Իրաքի կառավարության 8 նախարարներից բաղկացած խումբը այցելեց արաքական 13 երկրներ՝ նպատակ ունենալով ստեղծել հակաիրանական միասնական ճակատ²²:

Սակայն Իրաքի իրականացրած գործողությունները սովոր չզցցեցին Իրանի հզորության վրա, որի ապացույցը կարելի է նամարել Դոֆարում առաջացած խնդիրների պատճառով Օմանի սուլթան Դաբուս բեն Սալիսի Իրանին տված նախապատվությունը: Դաբուս բեն Սալիսը պաշտոնական խնդրանքով դիմեց Մոհամմեդ Ռեզա շահին, այն է՝ օգնել երկրի հարավում Դոֆար նահանգում առաջացած հեղափոխական շարժումները ճնշելու համար: Շահը, քննակամարաբ, չմերժեց խնդրանքը, քանի որ գտնում էր, «թե այն սպառնում է Պարսից ծոցի ավազանի խաղաղությանը»²³: 1973թ. դեկտեմբերի 23-ին իրանական 3 հազարանոց բանակը ներխուժեց Դոֆար: Արաքական աշխարհը սա ևս միանշանակ շնորհանք: Սասնայան Արաքիան, լինելով ԱՄՆ-ի դաշնակիցը, հարգին առավել զուսպ մտեցում ցուցաբերեց, որի պատճառը մեր կարծիքով այն փաստն է, որ դեռևս «1953թ. ամերիկացիները կոնցեսիա էին ստացել Դոֆարում մազքային հետազոտություններ կատարելու համար»²⁴: Եվ փաստորեն, բռնկված հեղափոխությունը հարվածում էր նաև ամերիկյան շահերին: Շահը մատնանշում էր, որ Դոֆարում առաջացած շարժման հովանավորները կոմունիստական կողմնորոշում ունեցող Հարավային եմենի և Չինաստանի կառավարություններն են²⁵:

Շահը Քեյհան ինքիբենշըն քեքրին տված հարցազրույցում նշում էր, որ «Երանը բուլ չի տա արաքական որևէ երկրում արձատական ուժի իշխանության գլուխ գալը»: Հիշյալ հարցազրույցում շահն անդրադարձել է նաև Իրաքի և Բուվեյթի հարցին՝ «եթե Իրաքը որոշի գրավել Բուվեյթը, և վերջինս էլ մեզ դիմի օգնության խնդրանքով, մենք անպայման կաջակցենք Բուվեյթին: Իհարկն, շատ քան կախված կլինի նաև Սաուդյան Արաքիայից և Հորդանանից»²⁶:

Սակայն 1973թ. հոկտեմբերի 6-ին բռնկված 4-րդ արաք-խաբայելական պատերազմը ստիպեց տարածաշրջանի երկրներին նորմալացնել հարաբերությունները բոլոր մահմեդական երկրների միջև: Իրանը չէր

կարող քաջամայր հակառակարկան դիքքորչույժը ընդունել և դրա նա-
մար հասկացրեց, որ այս պատերազմում արարական երկրները կարող
են համոզված լինել Իրանի չեզոքության պահպանման վրա²⁷։ Այս նաչ-
տարարությունը լիովին բավարարեց Իրաքին, քանզի վեջինս կարող էր
Իրանի սահմանի մոտ տնդակայած զորքերը տեղավորել պատերազ-
մական օջախի մոտ։

Արարական աշխարհը կոչ էր անում Իրանին ճակը չմտտակարել
Իսրայելին։ Իրաքի ճերկայացուցիչները իրանական կողմի նեո հանդի-
պելիս բազմիցս բարձրացրել են պաղեստինյան խնդիրը և բանում էին
թնդիրանին ևս ճերքաչել հակապաղեստինական ճակատի մեջ։ Սակայն
չահական կատավարությունը նակված չէր բարեկամիկ հարաբերություն-
ները Թադրաչի նեո՝ վտանգելով Իսրայելի նեո ունեցած իր կապերը²⁸։
Շնդիանդապես 70-ական թվականներին Իրանի հարաբերությունները
սերտացան հասկապես ԱՄՆ-ի քաղաքականությունը ճեոնում հեոնով
ընթացող երկրների՝ Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Հոլանդանի և
Իսրայելի նեո²⁹։

Արարա-խրայելական պատերազմի բոնկուրից ի վեր և Իրանը, և Ի-
րաքը քննադատում էին Իսրայելի գործողությունները, պահանջում էին
նեո վերադարձնել 1967թ. գրաված տարածքները և Պաղեստինի ժո-
ղովրդին տալ ինքնավարության իրավունք։ Սակայն ի տարբերություն
Իրաքի, որն ընդգրկվել էր հակապաղեստինական ճակատի մեջ, Իրանը
չարմակում էր Իսրայելի նեո իր ըսյնամասշտաբ ռազմա-քաղաքա-
կան և տնտեսական կապերը³⁰։

Հարկ է նշել, որ այդ նայն ժամանակ նկատվում էր Սաուդյան Արա-
բիայի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների տառեցում, քանի որ 1973թ.
բոնկված 4-րդ արարա-խրայելական պատերազմի ժամանակ սաուդ-
յան կատավարողներն առավել ակտիվ մեքքաչվել էին խոնդի բոնժան
գործընթացին՝ ի պաշտպանություն արարական կողմի, դասնով իսկ չա-
նելով նոր դիվիդենտներ Արարական աշխարհում։

Որպեսզի էլ ավելի մեծացնի Իրանի ազդեցությունը տաղածաչքա-
նում, շահը 70-ականների սկզբին հանդես եկավ մի շարք առաջարկուր-
յուններով՝ այն է՝ ստեղծել Ասիական ընդհանուր շուկա, ստեղծել Պար-
սից ծոցի երկրների ռազմա-քաղաքական ջրկ, կրավիրել կանխեոանս
տարածաչքառնի անվտանգությունը պահպանելու համար աղիներ որ-
անելու նպատակով։ Դրա համար 1974թ. Մեոամժաղ Ռեզա շահ Փահլա-
վին մեծ շքազգայություն կատարեց հարավային Ասիայի երկրներով
կնքելով մի շարք առևտրական համաժայնագրեր և տնտեսական համա-
գործկցության պայմանագրեր։ Այդ այցի նպատակն էր ստեղծել «Ա-
սիական ընդհանուր շուկա»՝ Եվրոպական ընդհանուր շուկայի օրինա-
կով³¹, քնականարաք, Իրանի հովանու ներքո, որը կարող էր համգես գալ
որպես հակակշիռ Եվրոպական շուկային։

1975թ., Սառղյան Արաբիայի արքայազն Ֆադելը այցելեց Իրան: Օգտվելով այդ պատեհի առիթից շահն առաջարկեց կոնֆերանս կազմակերպել «Իսրայիլից ծոցի երկրների դեկալարների մակարդակով «տարածաշրջանի անվտանգության պահպանման ընդհանուր ուղի գտնելու» նպատակով»²⁷: Մակայն այդ առաջարկը չընդունեց, քանի որ հենց այդ տարածաշրջանի երկրների միջև առկա էին չլուծված բազմաթիվ խնդիրներ: Ինչպես տեսնում ենք Իրանի նախածեղամտությունները հիմնականում չիրականացան, քանի որ Արաբական աշխարհը չէր ցանկանում տարածաշրջանում առաջատարի դերում տեսնել Թեհրանին:

1970-ական թվականների կեսերին Իրանը՝ տարածաշրջանում իրական ազդեցություն ձեռք բերելու համար, անհրաժեշտ ուշադրություն դարձրեց զետեղմանի վերականգնման և հատկապես առումային էներգետիկայի զարգացման վրա: Եվ ահա 1974թ., Մահմեդ Ռեզայի նախածեղամտությամբ Իրանում ստեղծվեց Ատոմային էներգետիկայի կազմակերպություն: Հայտարարվեց, որ նպատակ ունեն ստեղծել մի շարք առումային կայաններ²⁸:

Եանի այս նախածեղամտությունը մեծ աջակցություն գտավ հատկապես Արևմուտքի կողմից: Նախատեսվում էր մինչև 2000թ. կառուցել 20 Աէ-Կ 23 հազար մեգավատ ընդհանուր հզորությամբ, ողի շնորհիվ Իրանը կառուար Մերձավոր և Միջին Արևելքում առումային էներգետիկայանների ցանց ունեցող հզոր տերություններից մեկը: Ատոմակայանների կառուցման առաջին փորձը իրականացրեց ԳՖՀ-Ճ Բուշներում: Այդ գործին մեծապես աջակցում էր նաև Ֆրանսիան, ծրագրելով ատոմակայանները կառուցում Արաղամում և Աղվազում: 1978թ. իրանա-ամերիկյան պայմանագրի կնքումայն, Միացյալ Նահանգները նախատեսում էր կառուցել 8 Աէ-Կ: Սակայն 1979թ. Իրանի Իսլամական հեղեփոխությունից հետո, նրա թեոկրատիկ կառավարությունը հրաժարվեց միջուկային ծրագրերի իրականացումից, և Ատոմային էներգետիկայի կազմակերպությունը չեղյալ հայտարարեց նախկինում կնքած պայմանագրերը ԳՖՀ-Խ, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ: Բիշ ժամանակ անց, ԻՖՀ-Ն եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է ավալտին հասցնել Բուշներում Աէ-Կ-ի կառուցման աշխատանքները: Արդյունքում շարունակվեց ծրագրավորված երկու Աէ-Կ-ների կառուցումը, որոնք առավել հայտնի էին որպես Իրան 1 և Իրան 2 ծրագրեր: Մինչև Իսլամական հեղափոխությունը դրանցից առաջինը կառուցվել էր 95%-ով, երկրորդը 75%-ով²⁹:

Այսպիսով, Միացյալ Նահանգների գործում աջակցությամբ, ինչպես նաև 1973թ. Իրանի նախի de facto ազգայնացման շնորհիվ առաջացած ֆինանսական զգալի կուտակումների միջոցով, Իրանն արագ տեմպերով համարեց բանակր ժամանակակից զենքով և զինամթերքով, որն էլ հնարավորություն տվեց նրան դառնալ տարածաշրջանում ռազմական ազդեցիկ ուժ և քաղաքական կարևոր գործոն: Ինչպես տեսանք վերը շա-

քաղաքացիական պատերազմից, Իրանը հարմար առիթը բաց չէր քայքայում տարածաշրջանում առաջացած խնդիրների կարգավորմանը մասնակից դառնալու համար, ակնկալելով էլ ավելի մեծացնել իր ազդեցությունը: Իրանի կարողացածն անխաղաղակցության մեկն էլ այն էր, որ մեծ աշխարհային դարձվեց գլոբալ տնտեսական և քաղաքական ուժերի զարգացման վրա, որի համար չէր խնայվում ոչ մի միջոց:

Վերջ մշակվածի շնորհիվ էր, որ մինչև Իսլամական հեղափոխությունը, մի շարք ամերիկյան քաղաքագետներ Իրանը դիտում էին որպես ՆԱՏՕ-ի հարավային բևեռի բնական շարունակություն:

GOHAR ISKANDARYAN

IRAN AS INFLUENTIAL FACTOR OF THE PERSIAN GULF (1960-1970s)

The Shah of Iran placed a very high priority to building up the Iranian armed forces and improving Iran's defensive capabilities. He also sought to expand Iran's role in regional and world affairs, involving Iran in various regional conflicts (for example Dhofar, or islands of Persian Gulf-Abu Musa, the Great and Small Tunbs) and establishing visible presence for Iran in World forums such as the international oil market.

However, Iran's growing oil revenue and military power, the emergence of detente between the superpowers, and departure of British forces from the Persian Gulf in the early 1970s, enabled Iran to play a much more active role in regional affairs at that period.

ՃԱՆՈՒԹՎՈՒԹՅՈՒՆ

1. США и развивающиеся страны в 70-е годы, М. 1981, с. 202
2. Кокорина В.А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60-70гг.", Развивающиеся страны. Политика и идеология, Москва, 1985, с. 138.
3. Pahlavi Mohammad Reza, The Shah of Iran, Answer to History, New York, 1980, p. 141.
4. Драмбянц Г.Г., Персидский залив без романтики, М., 1968, с. 38.
5. Велькова Л.В., Саудовская Аравия в международных отношениях, М.1979, с. 190.
6. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока 1946-1978, Москва, 1989, с. 49.
7. Алибейли Г.Д., Ирак и сопредельные страны Востока, с. 47.
8. Հովհաննիսյան Ն., Իրանը Արևմտադարձական տարածաշրջանի անվտանգություն (1979-1992թթ.) Իրան Նամե, Երևան, 1993, N 2, էջ 3:
9. Эттелаат 1978.10.01, 1978.13.11.
10. Ньюсвик, Кейхан интернационал 16.05.73,

11. Cottrell Alvin J., A General Survey, The Persian Gulf States, Baltimore & London, 1980, p. 159.
12. Ramazani R.K., Iran's Revolution. The Search for Consensus, Washington, 1990, p. 49.
13. www.armschecksum.com/other/2003/3039-iran-nuc.-Iran's Nuclear Energy: A Cheney Casus Belli?
14. Эптелеат 25.05.73.
15. Военная экономика стран Востока, научный сборник N 6, для служебного пользования, 000079, М.1986, с. 11-12.
16. Эптелеат 25.05.73
17. Երև 1970թ. մալթից ստացած Իրանի եկամտաց կազմում էր 791 մլն դոլար, այս 1973թ. այն հասավ 2,6 մլրդ դոլարի, 1974-ին 4,6 մլրդ, իսկ 1975թ. այն անց մինչև 17,8 մլրդ դոլարի: The Iranian Journal of International Affairs, vol V, N2, Tehran 1993, p. 461. Նավթից ստացվող եկամուտների մեծացումը ստացին հերթին կազմած էր մալթի գնի բարձրացման հետ: 1973թ. Սաուդյան Արաբիան ստացարկեց մալթի գինը բարձրացնել, մեկ բարեկ մալթի համար ստացարկելով 7,5 դոլար, մինչդեռ Իրանը մեկ բարեկ մալթի համար պահանջում էր 14 դոլար: Ի վերջո եկան համաձայնության, որի համաձայն մեկ բարեկ մալթը արժեցավ 11,65դոլար: Կառավարության մասնարածինը ևս մեծացավ 7 դոլար մախլին 3,5-ի փոխարեն: Примаков А.Е., Персидский залив: Нефть и монополии, Москва 1983, с. 47, Андрусян Р.Н., Казюкова А.Д., ОПЕК в мире нефти, М.1978, с. 99-121.
18. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока, с. 83.
19. Алиев Ариф, Иран vs Ирак: история и современность, М.2002, с. 629-630.
20. Հրժմուսի նեղուցն ունի ռազմափառական նշանակություն ոչ միայն Մոզի երկրների հարաբերություններում, այլև համաշխարհային տնտեսության համար: Հրժմուսի նեղուցով յուրաքանչյուր 10 րոպեմ մեկ անցնում է մեկ տանկեր, որը կազմում է մալթի տարանցիկ համաշխարհային տեղափոխման 62%-ը: Հրժմուսի նեղուցը Պարսից ծոցից դուրս գալու միակ ուղին է քոլոր սահմանակից երկրների Իրանի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Կատարի, Բահրեյնի, Օմանի, Արաբական Միացյալ Եմիրությունների համար: Алиев Ариф, Иран vs Ирак, с. 626. Եվ փաստորեն 1971թ. այս ամենը նայունից Իրանի վերահսկողության տակ:
21. Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М. 1987, с. 163.
22. Алиев Ариф, Иран vs Ирак, с 582.
23. Кейхан интернационал 16.05.73.
24. Мелихов И.А., Оман между прошлым и настоящим, с. 13, 54-55.
25. Pahlavi Mohammad Reza, Answer to History, p. 134.
1997թ. սկսած Գապոնիայի ռազմական հաշիգակարգում հայտնվեցին նոր միտումներ: Այսպես, նույն թվականին Գապոնիայի սբաշտականության նախադասության կողմից կրասպրակված «Սպլիտակ րյուսե» ամրազովեզին Գապոնիայի Ինքնապաշտպանական Ուժերը (ԳՌՈՒ) տարածաշրջանային ռազմական ուժի վերածելու մտադրությունները: Արդյունքում, 1999թ. Գապոնիան II աշխարհամարտից հետո առաջին անգամ մասնակցեց ԱՄՆ կողմից Գուամում կրակամացված գորավարժություններին՝ տեղակայելով այնտեղ իր ռազմական օդանավերից մեկը: Նույն 1999թ. ԳՌՈՒ-ն օդային ուժերի ենթարվորությունները բարելավելու նպատակով ձեռք բերեց չորս «Bocing 767» վերանակողական օդանավ: 2000թ. Տոկիոյն սրբանազկի ստրագեգից Սյնգասգորի հետ վերջինիս ռազմական բազաների հնարավոր ճգնաժամի ժամանակ օգտագործելու վերաբերյալ: Ռազմական բարաքակամության ակտիվացումը շարունակվեց նաև 2001թ.: Տոկիոյն սգաորաստվում է գնել «Bocing 767» տիպի օդանավեր րեկչի ընթացքում օդանավերի լլգրավորումն իրականացնելու նպատակով օգտագործելու համար: Դա հնարավորություն կտա մեծացնել ռազմակայաններում տեղակայված F-15 օդանավերի գործադրությունների տարածքը մինչև 3000 մղոնի: Վերջին «Acgic» տիպի կործանիչների ձեռքբերումը չեղանակարեն բարելավեց Գապոնիայի ժովային հետախուզության հնարավորությունները: ԱՄՆ ռազմական զեկույցների համաժայն, Գապոնիայի գինված ուժերը ի վիճակի են բարձր մակարդակով վտխգործակցության ԱՄՆ-ի տեխնոլոգիայապա առաջատար ուժերի հետ: Պետք է արժանացնել, որ այդեն իսկ 2001թվականին՝ երբ իշխանության եկավ Ջոնիչիդ Կոնժոմիի գլխավորած կառավարությունը, սազա նրկկան ուներ աշխարհի ամենագարգացած ռազմաալորյունաբերական համալիրներից մեկը: 2001թ. սեպտեմբերի 11-ին Նյու-Յոքոմ տեղի ունեցած դեպքերն ու այնուհետև ԱՄՆ-ի գլխավորությամբ միջազգային ախաբեկության դեմ ժովազված պալքայր ստեղծեցին պաշտոնական Տոկիայի համար այն բարենպաստ միջազգային մթնոլորտը, երբ Գապոնիան մի կողմից չէր կարող իր գործնական օժանդակարչությունը չգուցարերեր իր ռազմավարական դաշնակցին՝ ԱՄՆ-ին, իսկ մյուս կողմից էր փորձեց աղկթր օգտագործել նաև միջազգային անվտանգության համակարգում իր դիրքերն ամրազնդելու համար: Նամենավանել, որ այդ նույն պատճառաբանությամբ, չնայած իր «խաղաղ սանձանալորչաներ», Գապոնիան տարիների ընթացքում այդեն իսկ Ինքնապաշտպանական Ուժերը համեառ անվանման տակ ստեղծել էր եզրը և ժամանակակից բանակ: ԳՌՈՒ-ի վրա ժայսվում է երկրի բյուջեի շուրջ 6.1 տոկոսը (շուրջ 50 մլրդ. ամ. դոլար), որը կազմում է Գապոնիայի ՀՆԱ-ի 0.995%-ը: ԳՌՈՒ-ն իր տրամալորչության տակ ունի իսաղաթովկիանության տարածաշրջանում ամենամեծ նավատորմը ԱՄՆ-ից հետո, իսկ նրա ցամաքային ուժերը գերազանցում են Բրիտանական բազավորական բանակն ու նավատորմը իրար հետ գումարամ: Վերոնկչյալ տղամարամությանը դեկավարվելով, 2001թ.

յնտրոսթրուկցիայի անմիջապես հետո խորհրդարանում իր առաջին խաչ ելույթում, Մապոնիայի վարչապետ Ջոնիյիրո Կոլիժոմին նշեց, որ «քաղաքական դեկլարացիայի պայտակամություն է՝ ճշտել թե ինչպիսի համակարգ պետք է առկա՞վի, եթե ժողովուրդն ու պետությունը հայտնվեն ճգնաժամային վիճակում»: Ջ. Կոլիժոմին վստահեցրեց, որ ինքը կներկայացնի «արտակարգ օրենսդրություն» (emergency legislation) փոփոխվող անվտանգության կարիքները հոգալու համար⁴:

Հարկ է նշել, որ Մապոնիայի բնակչության վերաբերմունքը սահմանադրության նշված հոդվածի նկատմամբ շարունակում է մնալ բաժանված: Երկրի 50%-ը դեմ է արտահայտվում սահմանադրության այդ հոդվածի վերանայմանը, իսկ մյուս կեսը՝ կողմ: Վերջին սոցիոլոգիական հարցումների համաձայն, երիտասարդության և միջին տարիքի ճապոնացիների մեծամասնությունը պատրաստ է, որպեսզի իրենց երկիրը ավելի մեծ դեկլարատորություն ունենա Ասիայի անվտանգության համակարգում⁵: Եթե ճապոնական հասարակությունը բաժանված է այդ հարցի վերաբերյալ, ապա թե կատակաբոլ լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը՝ ի դեմս երկրի վարչապետ Ջ.Կոլիժոմիի, և թե երկրի գլխավոր ընդլիմադիր ուժը՝ դեմոկրատական կուսակցությունը, միակարծիք են սահմանադրական փոփոխություններն իրականացնելու անկասժիշտության հարցում: Մապոնիայի վարչապետը վերջերս կատակարորության մամուլի ակումբում տված հարցազրույցի ընթացքում նշել է. «Սահմանադրական բարեփոխումներն այն աղբյուրն են, ինչպես Մապոնիայի համար: Լիբերալ-դեմոկրատական և դեմոկրատական կուսակցությունների խորհրդարանական ընտրվածները պետք է ավարտվեն այդ մպատակին ուղղված օրենքների ընդունմամբ: Մեր կատակարորության դիրքորոշումն այդ հարցում կայանում է սահմանադրական մեկնարանություններն անփոփոխ թողնելու մեջ: Դեմարկոմները կենտրոնանալու են սահմանադրական վերանայումների իրականացնելու մեջ»⁶: Սակայն այս նաքը խորհրդարանական երկարատև քննարկումների սյունաքարն էր ընդունված: Փոփոխությունների նախագիծը վարչապետի խոսքերով լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը պատրաստ է ավարտել մինչև 2005թ. վերջը, իսկ դեմոկրատական կուսակցության դեկավար Դատտ Կանի խոսքերով իր կուսակցությունն այդ գործընթացը կավարտի մինչև 2006թ. վերջը: Տարածաշրջանի այլ պետություններ, ի հակադրություն Չինաստանի աստիճանաբար ծախսվող ազդեցությանը, նույնպես շահագրգռված են Մապոնիայի զինված ուժերի ակտիվացման հարցում: Այսպես, Ավստրալիան և Միացյալ Մեծ Բրիտանիան կոչվել են արել Տեկիային մեծացնել իր դեռակատարությունը տարածաշրջանային անվտանգության համակարգում: Սակայն ամենակիմնական ուժը, որը մղում է Մապոնիային նոր դեր տալն իր ուղղությամբ դա՝ Վաշինգտոնն է: Մեծացնելով Տեկիայի կշիռը Չինաստանի ծախսումը գույնը գործում, հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ից հե-

տա, Գապոնիայի աջակցությամբ ԱՄՆ-ին՝ վերօինյա կողմից ծավալված հակառակարկական համընդհանուր պայքարում, ձեռք է բերում ծայրահեղ կենսական նշանակություն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ 2001թ. նոյեմբերին Գապոնիան մասնակցեց իր սահմաններից դուրս իրականացվող ռազմական գործողություններին, գործում աջակցություն ցուցաբերելով Գուանում և Սան-Գիեզոյում տեղակայված ԱՄՆ-ի նավատորմին:

Եթե Աֆղանստանում Գապոնիան մասնակցեց վերակառուցման տնտեսական ծրագրերի ֆինանսավորման տեսքով, ապա Գապոնիայի կողմից Իրաքում անմիջական զինվորական ներկայությունը ավելոց օրակապես նոր դարաշրջանի սկիզբ պաշտոնական Տոկիոյի համար:

Այսպես, 2003թ. հուլիսին Գապոնիայի խորհրդարանում վարչապետ Ջ. Կոիժոմիի կողմից ներկայացված հակառակարկական օրենքի նախագծի ընդունմամբ՝ Իրաքում վերակառուցողական աշխատանքների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու նպատակով, կառավարությանը իրավունք տրվեց 1000-ին հասնող «ինքնապաշտպանական» ուժեր ուղարկել Իրաք: 2004թ. փետրվարին հունանիտար և խաղաղապահ գործողությունների իրականացման նպատակներով Իրաք մեկնեց ճապոնական ցամաքային փորձագիտա-հետազոտական զինվորական խումբը: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Գապոնիայի զինված ուժերն առաջին անգամ իրենց սահմաններից դուրս ձեռնարկեցին նման ընդարձակ ու վտանգավոր՝ առաքելություն: Ուժերի մեկնումից առաջ, 2004թ. փետրվարի 1-ին, Հոկայոյի Ասահիկավա քաղաքում կազմակերպվեց պաշտոնական այրարություն՝ վարչապետ Ջ. Կոիժոմիի և Գապոնիայի Պաշտպանության Գործակալության ղեկավար Շիգեբոու Իշիբայի մասնակցությամբ: Վարչապետի, ինչպես նաև Պաշտպանության Գործակալության ղեկավարի ելույթներն ուղղված զինվորներին և նրանց հարազատներին, հաստատում էին նախապես հնյա յշխանության դիպրոտություններն այդ հարցում, այն է՝ Իրաքում «միմիայն հունանիտար և խաղաղապահ գործողություններ իրականացում»⁶: Երկրի վարչապետի խոսքերով, այս առաքելությունն այնքանով է կարևոր Գապոնիայի համար, որ այն կպաշտպանի երկրի պաշտպանությունները միջազգային հանրության առջև: «Գապոնիայի կառավարության ինքնապաշտպանական ուժերը կարող են գրանցվել ՄԱԿ-ի կողմից խաղաղապահ գործողություններ իրականացնող մասնակիցների թվում: Միևնույն ժամանակ այն կանրապնդի չորս տասնամյակ գոյություն ունեցող ԱՄՆ- Գապոնիա դաշինքը»,- նշեց Ջ. Կոիժոմին՝ Իրաքում ճապոնացի զինվորներին ներկայությունը վկայում է միջազգային անվտանգության համակարգում Գապոնիայի դերի ակնհայտ ակտիվացման մասին: Հատկապես հաշվի առնելով Տոկիոյի հավակնությունները ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում մշտական անդամ դառնալու

ողողությամբ: Կախում ենք այսուհետ ևս մենք ակամատես կլինենք Մապոնիայի ռազմաքաղաքական դերի ակտիվացմանը թե՛ ասիական-խաղաղովկիանոսյան տարածածրջանում և թե՛ միջազգային հանգուցային կիմնախնդիրների կարգավորման գործընթացներում:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև Մապոնիայի արտաքին քաղաքականության հայեցակարգի հմաքավոր փոփոխությունները՝ անհրաժեշտություն է նկատվում նորովի մտածելու որդեգրել նաև հայ-ճապոնական հարաբերությունների ողջ խանակարգի նկատմամբ:

ROUBEN KARAPETIAN

JAPANESE MILITARY PRESENCE IN IRAQ

The article provides short background on Japanese Self Defence Forces and what lies behind the decision of the Japanese government for sending its small military contingent to Iraq in February 2004. By sending the troops to Iraq Tokyo is trying to rejoin the ranks of the great powers and play a full-fledged security role not only in the region but on the wider world stage. Taking into consideration the substantial changes in the Japanese foreign political agenda, a new approach to the whole system of Armenian-Japanese bilateral relations is required.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. <http://www.stratfor.com>. Will Japan Rearm. February 2001.
2. Մապոնիայի բանակի բնագրանակը կազմում է 236.600 զինվոր (46.000 պահուստային): *Ճապոնացիներն առաջադաշտական մասնաբաժնի կազմված են 13 դիվիզիայից, 950 սրահատեխնիկայից, 463 ուղղաթիռից, 800 միավոր հրետանային տեխնիկայից: Մոզայի մասնաբաժնի թվաքանակը են՝ 16 սուզանավից, 58 վերջրյա նավերից, 35 ակամազերծող նավերից, 110 օդանավերից, 99 ուղղաթիռից: Օդային մասնաբաժնի կազմում է 182 այլ օդանավերից:*
3. Japan Almanac 2003, Defence Spending, p.47, Asahi Shimbun, Tokyo.
4. Cato Institute, "Japan takes a Modest Step Toward Global Security", by Ted Galen Carpenter, January 8, 2002
5. "Japan Times", 22.11.2003
6. "Japan Echo", Vol.32, N2, April 2004
7. Իրաքցիների կողմից 3 ճապոնացիների պատանջ վերցնելը լուրջ փորձություն եղավ Կոնդոմիի կառավարության համար: Սակայն արաբական որոշ երկրների միջնորդությամբ (հիմնականում Միդիայի) շնորհիվ ենթազվոր եղավ պատանջների ազատ արձակումը: www.imrz.org.il Syrian FM blames US for kidnappings in Iraq. 10.04.2004
8. "Asahi Shimbun", February 2, 2004
9. "Yomiuri Shimbun", February 1, 2004

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻՐԱՆԱՆՅԱՆ «ՀԻԶԲԱԼԼԱՀԸ» ՈՐՊԵՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Իսլամի պատմության նորագույն շրջանի համար առավել հատկանշական է դարձել կրոնաքաղաքական շարժումների ակտիվացումը, որոնց հիմքում քնն ընկած է աստվածաբանական ենթատեքստը, այնուամենայնիվ, առավել համակողմանի ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ իսլամի դյուշի տակ հանդես եկող հասարակական-քաղաքական հոսանքները նվազագույն չափով են կապված կրոնական ու հազար ռդրությունի հետ՝ հիմնավորապես առաջնորդվելով սոցիալ-տնտեսական և քաղաքական նկատառումներով: Այնուհաստ է, որ իսլամիստների գործունեության ակտիվացմանը նպաստեց մեթոսավորաբնյամ հակամարտության կարգավորման գործընթացում ստեղծված փակուղային իրավիճակը՝ զգալիորեն ընդլայնելով տարածաշրջանի հակամարտությունների շրջանակը, որոնց ուժային դաշտը համարվում էր արարա-խորայելական հակամարտությունն ու համաշխարհային երկու հակամարտող համակարգերի առնակատումը: Իսկ արարա-խորայելական պատերազմներում սեփական իշխանությունների կողմից «վաղը» Իսրայելին հարթելու անկարողությունը, ԱՄՆ-ի վարած իսրայելամետ քաղաքականությունը և «չափավոր» արարական վարչախմբերի հետ ԱՄՆ-ի համագործակցությունը, մուսուլմանական միջափայտում Միացյալ Նահանգների և Տյան սաստարող երկրների ու քաղաքական ուժերի նկատմամբ ծայրահեղ հակակրանը և անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծեցին:

Վերահիշյալ գործընթացների համատեքստում ստանճնահատուկ աշարտության է արժանի ինչպես զորքալ ու տարածաշրջանային, այնպես էլ կրանային ու ներհամայնքային հակամարտությունների մարտադաշտի վերածված Լիբանանը, որտեղ 70-ականներին ամուր պետականության քացակայության, միջհամայնքային հակամարտությունների սրման հետևանքով մրանց միջև հաստատված դաշինքի՝ բուլացման ալոյունքում սկիզբ առած ճգնաժամը, զուգակցվելով պաղեստինյան գործոնի հետ, արտահայտվեց կրոնա-դավանական համակարգի ղեմ սրայարի

չարժումնելով և ճախարհյան կազմակերպությունների վերելքով: Վերջիններս, հիասթափված աշխարհիկ կուսակցությունների կողմից ներքաղաքական իրավիճակի կարգավորման անզուտությունից, առկա խնդիրների լուծման ճանապարհը տեսնում էին «ճշմարիտ խլամիմ» վերադառնալու մեջ:

Երկրում տեղ գտած ժողովրդագրական փոփոխություննելով էր պայմանավորված մաս գերակշռություն կազմող ժուտականների կողմից ստատուս քվեյի մերժումը², որոնց դժգոհությունն արտահայտվում էր տարբեր քաղաքական հոսանքների ձևով բևեռացնելով հասարակությունը՝ ի վերջո թուլացնելով երկրի քաղաքական համակարգը:

Ուստի պատահական չէ, որ այդ գայթրմթացներում մեծ դերակատարություն ունեցավ երկրի խոշորագույն, սակայն տնտեսապես ամենաանապահով և քաղաքականապես վատ կազմակերպված շիա համայնքը³, որին ներկայացնող կրոնա-քաղաքական կազմակերպությունները համդեա եկան իրենց մկրտումներին այլևս չհամապատասխանող պետական կրոնադավանական համակարգի վերացման օգտին:

Շիա համայնքի գաղթողը մեծապես պայմանավորվեց մաս Մուսա Սադրի խարիզմատիկ անձով, որը 1974 թ. գլխավորեց շիա նշանավոր կրոնական առաջնորդներին միավորող Գերագույն խլամական խալիփոլը՝ սկիզբ դնելով քաղաքական հավասարության և սոցիալական արդարության համար պայքարող «Չրկվածների Շարժմանը», իսկ 1975 թ. հիմնադրելով շարժման զինված բեր՝ «ԱՄԱ» կազմակերպությունը⁴:

«ԱՄԱ»-ի եզրացմամբ ու Լիբանանում շիա շարժման արժատականացմանը մպատեղին մի ամբողջ շարք իրադարձություններ՝ 1975 թ. ից սկիզբ առած Լիբանանի քաղաքացիական պատերազմը, 1978 թ. Մուսա Սադրի անհետացման հանգամանքը, 1979 թ. Իրանի խղամական եղափոխությունը, 1978 և 1982 թթ. Իսրայելի ներխուժումները Լիբանան և այլն: Մուսա Սադրի անհետացումից հետո՝ Լիբանանի շիա համայնքը այսպ ազգայնականներից ու ճախարհայններից իրենց հայացքներն ողղեցին դեպի «ԱՄԱ»-ի կողմը, որի ղեկավարությունը, Նաբիի Բերիի գլխավորությամբ, կոերականից վերածվեց աշխարհիկի: Վերջինս, չնայած Իրանի հետ ունեցած կապերին, «ԱՄԱ»-ը տարավ ազգայնական ճանապարհով, որի մպատակը մյուս համայնքների հետ քաղաքական և տնտեսական հավասար պայմանների տեղդման ուղղությամբ բարեփոխումների իրականացումն էր⁵:

Այնուհետև, Իրանի եղափոխությունից հետո, Թեղրանը ձգտում էր «խլամական եղափոխությունն արտահանել» Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ՝ խլամը որպես ազդեցության տարածման լծակ օգտագործելով վերջիններիս նկատմամբ: Ուստի, օգտվելով 1982 թ. հունիսին Իսրայելի կողմից Լիբանան ներխուժելու հանգամանքից, Իրանը, Սիդախի բուղտվությամբ, Բեքաայի եղիխտ (որն այդ ժամանակ Սիդա-

յի վերահսկողության տակ էր գտնվում) ուղարկեց «Իրանի հեղափոխական պահակազորի» 1000 վաստարանների⁷ Լիբանանի իրանամետ շիա շարժմանն օգնության տրամադրելու նպատակով: Երե 80-ականներից շիա համայնքում իր դիրքերն ամրապնդած Նաբիև Բեքին չէր ցանկանում ազդեցությունը կորցնել դեպի Իրանը կողմնորաշփոխ իր համայնքի նկատմամբ, ապա Սիրիան չէր ցանկանում Թեհրանի կերական վաչախմբին Լիբանանի ներքին գործերում ուղղակի միջամտության հնարավորություն ընձեռել⁸: Իրանն իր հերթին, հզոր քարոզարչավ կազմակերպեց Նաբիև Բեքիի նկատմամբ՝ միտժամանակ մեծ գաղափարական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով նրա տեղակալ Հուսեյն Մուսավիին, որն իր կողմնակիցների հետ հեռանալով «ԱՄԱ»-ի շարքերից, նոր կազմակերպություն հիմնադրեց՝ դառնալով Լիբանանում իրանական արտաքին քաղաքականության իրականացման գլխավոր գործիչներից մեկը⁹: Միևնույն ժամանակ, Նաբիև Բեքիի հետ իր քաղաքական հայացքները չկիսող «ԱՄԱ»-ի անդամ Իբրահիմ ալ-Ամինը, Մուհամմեդ Հուսեյն Զադրալահի¹⁰ ակտիվ մասնակցությամբ, Բաալբեկում ձեռնամուխ եղավ լիբանանյան «Հիզբալլահ» կազմակերպության¹¹ («Աստու կուսակցության») ստեղծման գործին¹²: «Հիզբալլահի» հետևորդների հոգևոր ու ֆինանսական կենտրոնը դարձավ այսօրվա Խոնեյնին, որի կողմից կազմակերպությամբ տրամադրվող ֆինանսական և ռազմական օգնությունը խորապես գաղափարականացված էր և խարխալվում էր պատմական խոր արմատներ ունեցող շիական դոկտրինայի ու գաղափարական դրոյթների վրա՝ բացառելով Իսրայելի պետության գոյության փաստի ճանաչումը:

Կազմակերպչական առումով «Հիզբալլահը» շատ ավելի եղջեցնում էր ազատ կառույց ունեցող գաղափարական շարժում, քան կուսակցություն¹³: Այն գաղափարապես մոտ կանգնած խմբերի և զինյալ ցուպտների դաշինք էր, որոնք գործում էին Բեյրութում, Բեքաայի հովտում ու Հաբալային Լիբանանում:

1985 թ. իրանամետ ծայրահեղական կազմակերպությունների մասնակցությամբ Իրանում կայացած խոցիդրաժողովի ժամանակ «Հիզբալլահի», «ԱՄԱ Իսլամիի» և վրանամյան այլ խմբավորումների առաջնորդներն իրենց երկարաժամկետ ծրագրային նպատակներ հայտարարեցին ալ-Քուդա սուրբ քաղաքի և Լիբանանի հարավի գրավյալ տարածքների ազատագրումը, Իսրայելի՝ մասնավորապես սիոնիզմի, ԱՄՆ-ի, Զրամսիայի և արևմտամետ արարական վաղախմբերի¹⁴ դեմ պայքարի ծավալումը, նահատակության և ինքագոնաբերման գնով «Աստու բշմամիներին» ոչնչացումը, Լիբանանում իրանական տիպի իսլամական հանրապետության ստեղծումը¹⁵:

Կազմակերպությունը մշտապես հետապնդել է համախոսմանակա ու միջազգային նպատակներ, որի ամունն իսկ խոսում է պայքարի վերազ-

գային քննության մասին՝ որպես համամատուցմանակալ շարժում, և իրեն գիտում է իբրև համաշխարհային իսլամական հեղափոխության մարտիկ: Կազմակերպության ռազմական թևի արագ աճը՝ զուգակցվելով ինքնազոհության ու մահատանջության շնաբերականության կիրառման հետ, ավելի քան 20-ամյա գործունեության ընթացքում դրսևորվել է արևմտյան¹⁶ ու խորայնական բիրախնների դեմ «զոքալ քննադատ» մաս կազմող անարեկական գործողություններում ու սբատանդների առևանգումներում:

Երև 1983-84 թթ. Բեյրութում «Հիզբալահի» կողմից ամերիկյան ու Ֆրանսիական բիրախնների նկատմամբ անարեկական գործողությունները նախատեսվեց 1984 թ. երկրից ամերիկյան ու Բազմազգ Ուժերի (MNF) հետաքննելու, ապա 1983-85 թթ. իսրայելական օկուպացիոն ուժերի դեմ ուժեղացող հանգեցրին 1985 թ. կենտրոնական Լիբանանից իսրայելական ուժերի դուրս բերմանը¹⁷: Վերոհիշյալ իրադարձությունները նախատեսվեց շնա համայնքի դերի բարձրացմանը ինչպես միջազգային, այնպես էլ լիբանանյան քաղաքական քառերաբեմում¹⁸:

80-ականների երկրորդ կեսին «Հիզբալահի» ռազմական և սոցիալ-տնտեսական դիրքերի ամրապնդումը, հատկապես «ԱՄԱ»-ի ավանդական ազդեցության շրջաններում, հանգեցրին երկու կազմակերպությունների միջև մրցակցության աճին, որը 1988 թ., ընդունելով ռազմական սուբ քայլաձևերի տեսք, հնարավոր եղավ կասեցնել միայն Դամասկոսի միջամտությամբ: Հարկ է նշել, որ վերջինս «Հիզբալահին» մշտապես դիտել է թե՛ որպես չափավոր պայմաններով Գոլանի բարձունքների վերադարձման ուղղությամբ Իսրայելի վրա ազդելու աշտյունավետ լծակ, և թե՛ որպես տարածաշրջանում իսրայելական ուժերի ներկայության երկարաձգման պայմաններում սիրիական ռազմական գորակազմի պահպանման անհրաժեշտությունն արտաբացման միջոց: Թերևս դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Սիրիան՝ «Հիզբալահին» տրամադրվող ռազմաքաղաքական և քաղաքական աջակցությանը զուգահեռ, մշտապես ձգտել է սահմանափակել կազմակերպության գործողությունների ազատությունը՝ հատկապես պաղեստինյան ինքիֆադային (ապստամբությանը) սատարելու հարցում: Ուստի Լիբանանում և ընդհանրապես տարածաշրջանում «Հիզբալահի» ու Դամասկոսի հետապնդած չափերի երթմնի անհամատեղելիության հանգամանքով է պայմանավորված Իսրայելի դեմ գործողություններում «խաղի սահմանված կանոնների» հետամուտ լինելու ուղղությամբ Սիլվիայի կողմից «Հիզբալահին» ուղի ուղղվ հսկելու անհրաժեշտությունը:

Այնուհանդերձ, 1989 թ. փետրվարին ԱՄՆ-ի, Սաուդյան Արաբիայի և Սիրիայի հովանավորությամբ կնքված Տաիֆի համաձայնագրով¹⁹ Սիրիային հաջողվեց կասեցնել «Հիզբալահի» զինաբառնումը՝ նրան պահելով որպես զինվորական կառույց ունեցող միակ լիբանանյան կազմա-

կերպարյուն, որը 1991 թ. վերածվեց երկրի հարավում խորայնական գործերի դեմ գործող լիբանանյան դիմադրության ուսգմական առաջատար ուժի:

Հետագայում, 1989 թ. այսպիսի հոմեյնու մահվան²⁰, 1991 թ. Շոգի պատերազմից հետո ԱՄՆ-ի միջազգային դերի քաղաքական, 1991 թ. կոմունիստական դաշինքի փլուզման, արաբ-խորայնական խաղաղության գործընթացի քվադրա կարգավորման, Սիրիայի՝ անարեկտրյանը սատարող երկրների պիտակից ազատվելու և Արևմուտքի հետ իր հարաբերությունների քարելավման ցանկությամբ էլ պայմանավորված 1990-ականներին Արևմուտքի դեմ «Հիզբալլահի» միջազգային անարեկտրական գործունեության ակտիվության բուլացման հանգամանքը, որը 1990-ականների սկզբներին գուտ կիսատագմական ծայրահեղ տիպի խմբավորումից սկսեց աստիճանաբար վերածվել լիբանանյան հասարակական-քաղաքական ակտիվ ուժի: Կազմակերպություններում «Կափազորներ» (Հասան Նասրալլահի) ու «արմատականների» (Մուքիթ Յոֆեյի) միջև փոխզիջում ապահովելուց և «ԱՄԱԼ»-ի հետ հաշտություն կնքելուց հետո (այս հարցում չի բացառվում Սիրիայի միջամտությունը), 1992 թ. աշմանը կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ «Հիզբալլահը»՝ «ԱՄԱԼ»-ի հետ դաշինքի կայացման շնորհիվ, երկրի օրենսդիր մարմնում պատգամավորական ուր տեղ գրադեցրեց՝ 2000 թ. խորհրդարանական ընտրություններին դրանք ավելացնելով ևս երկուսով²¹:

«Հիզբալլահի» հակախորայնական ակտիվ պայքարի արդյունքում 2000 թ. մայիսի 24-ին Լիբանանի հարավից խորայնական գործերի դուրս բերման (այս հարցում քեթև Սիրիայի կողմից Իսրայելի նկատմամբ հեռահար քաղաքական նկատառումները ևս դեր տնեցան), իսկ սեպտեմբերի 28-ից Իսրայելի դեմ այսպես կոչված պաղեստինյան երկուրդ ինքիֆաային²² աջակցության շնորհիվ «Հիզբալլահը» վերածվեց տարածաշրջանային ուսգմաքաղաքական լուրջ գործունի, որը նրան ակտիվ դերակատարության հնարավորություն ընձեռեց ինչպես Լիբանանի, այնպես էլ ողջ տարածաշրջանի ներքաղաքական գարգացումներում: Այդ է անողրակիորեն վկայում 2000 թ. հունիսին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Թոֆի Անանի մերձավորարևելյան շրջագայության քննաքնում Լիբանանում «Հիզբալլահի» առաջնորդ Հասան Նասրալահի հետ հանդիպման հանգամանքը, որը որտ ՁԼՄ-նրի գնահատեցին որպես միջազգային հանրության կողմից կազմակերպության գործունեության օրինակահամրության, կամ առնվազն՝ որպես քաղաքական կազմակերպության ճանայման փաստ²³:

Միևնույն ժամանակ, «Հիզբալլահին» իր գործունեությամբ ցույց տվեց, որ որտ պայմաններում է գորտ է մաև բանակեցել Իսրայելի հետ՝ համաձայնության գալով «խորայնական անվտանգության գուտու» շուրջ՝ բնա-

կավայրերի վրա փոխադարձ շտաբակման վերաբերյալ պայմանավորվածության ձեռք բերման ուղղությամբ²⁴։

Սակայն 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները և ԱՄՆ-ի հայտարարած «սահարեկության դեմ պատերազմը» սկսեցին ապստամալ «Հիզբալլահի» ռազմավարական վերտիկալ ձեռքբերումներին, քանզի ԱՄՆ-ի որդեգրած հետսեպտեմբերյան քաղաքականությունը (ալ-Ղաիդայի դեմ պայքարը, Իրաքի պատերազմը) մեծապես նաև «Հիզբալլահի» և նրա հովանավոր պետությունների՝ որպես «չարիքի առանցքի» դեմ շարունակվող ռազմալուծման քիրախ դատմալու հավանականությունը²⁵։

Հարկ եմ համարում նշել, որ ԱՄՆ-ի վարած «պատերազմն սահարեկության դեմ», լստ իս, ցանկալի արդյունքի չի հասնի այնքան ժամանակ, քանի ղև Միացյալ Նահանգները պայքարում է ոչ թե սահարեկության պատճառների, այլ և նրա ինտեսանցների դեմ։

AGHAVNI HARUTYUNIAN

LEBANON HIZBALLAH AS MILITARY AND POLITICAL FACTOR IN THE REGION

Hizballah is religious and political movement, which was born of terrorism in the 1980s, developed guerrilla warfare capabilities in the 1990s, and by the beginning of the new millennium, had matured into an important Middle East strategic player, capable of influencing the course of peace and war in the region. At the organizational level, Hizballah has evolved significantly from a loose, mysterious umbrella group under the guidance of Ayatollah Ruhollah Khomeini of Iran, to a movement collectively led by various shaykhs and warlords, to a well-knit, disciplined organization under the guidance of its own charismatic leader, Hassan Nasrallah.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն.Հ.Հովհաննիսյան., Լիբանանի ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982 թ., էջ 7-10։
2. 1932 թ. մարդահամարի տվյալների համաձայն, շիաները կազմում էին երկրի ընդհանուր բնակչության ընդամենը 18 %-ը, 1968 թ.՝ 30%-ը, իսկ 1990-ականներին բնակչության 1/3-ից ավելին (շիաները 1 մլն. էին, մինչդեռ երկրի ողջ բնակչությունը՝ 2,5-3 մլն.)։ Ըիաները բնակվում էին երկրի հարավում, Բեյրութի հարավային արվարձաններում և Բեքաայի եռլստում։ Նրանք դարձ շարունակ կրոնական ու մշակութային սեբո կապեր են պահպանել Իրանի ու Իրաքի շիաների հետ։
3. Ձոն Էսպոզիտո, Իսլամական ապստամալիք. Առատզե՞, թե իրականություն։ Երևան, «Նաիրի», 2003, էջ 178։

4. «ԱՄՆԱ»-ը հասկալիմ է՝ «Դիմադրության լիբանանյան գոմարտակներ» («Ավելի աչ-մուրալիմա աչ-լուրնանիյա»), որը նաև «հուշ» է նշանակում: Մինչ «ԱՄՆԱ»-ի ստեղծումը, շիաները Լիբանանի զինված խմբավորում չունեցող միակ համայնքն էին:
5. 1978 թ. Մուամար Բաթրաիի հետ հանդիպման նպատակով Լիբիա կատարած այցի ընթացքում Մուսա Սադրի խորհրդակցոր անհետացումը շրջադարձային իրադարձություն հանդիսացավ «ԱՄՆԱ»-ի պատմության մեջ, քանի որ սեփական մահատակի ու իմամի առկայության համգամանրը պատենցիալ հնարավորություն էր ընձեռում շիա համայնքի ներքին տարածայնությունների հարստարման համար (նրա անհետացումը կապվում էր 9-րդ դարում անհետացած վերջին շիա իմամի մահատակության շիա դեկորիմայի և «ծպարալ իմամի» պաշտամունքի հետ, որի վերադարձը սպասվում էր):
6. Ջոն Էսպոլիտո, Իսլամական սպատակիք. Առասպել, թի իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 178:
7. Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, (Middle East Intelligence Bulletin), Vol. 4 No. 2, February 2002, p. 1. «Իրանի ներափոխական պատակազորի» փաստաբանները (մարտիկները), ուսումնազարմանքներ են անկկացրել «Հիզբալլահի» թազվական թեղ ներկայացնող մարտիկների հետ:
8. Пигер Кальвокорессни, Мировая политика после 1945 года, Книга 1, Москва "Международные отношения", 2000, стр. 515
9. В.Махмедов, Ливанская "Хезболла" как "Центр силы" на Ближнем Востоке.- Информационный Центр Северная Африка, Ближний и Средний Восток, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей). М., 2001, стр. 3. Ինտերնետային հասցեն (www.middleeast.narod.ru/research/livan.htm).
10. Այդ ժամանակ Ճազարաից դեկավարում էր կրկու միություններ՝ «Երաշյրական գերդաստանը» և «Լիբանանի իդրանական ուսանողների միությունը», իսկ նեաապայում դարձավ «Հիզբալլահի» իոզեր առաջնորդը՝ մուքթաիդը:
11. Մանրամասն տե՛ս Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, (Middle East Intelligence Bulletin), vol. 4, No 2, February 2002, p. 1. Ինտերնետային հասցեն (www.meib.org/articles/0202_01.htm).
12. Լիբանանյան «Հիզբալլահի» պատմության արմատները գնում են դեպի Իրաք, որը 1950-70-ականներին վրամվել էր լիբանանյան շիաների քաղաքական կենտրոնի (Իրաքի Լաքաի քաղաքը իրամական հայտնի կենտրոն էր, որտեղ հաստատվել էին շիա նշանակչոր պարաշլահներից ու գիտնկաններից շատերը): Այստեղ էր դասավանդել նաև այսրոլլահ Խոմենիին իր 13-ամյա արտքի՝ 1965-78 թթ. ընթացքում: 1960-ականների վերջերին այն ժանանակ միակ շիա իրաքյան արմատական ֆունդամենտալիստական «Կոլի կուսակցությանը» («Աղ-Ղասակա») զոզահետ ճևազրուից լիբանանյան թեղ, որի մեջ նուսան «Հիզբալլահի» ներկայիս առաջնորդներ Մ.Ճազարաից, Ս.Թուխիյին, Խ.Կուրանին, Մ.Շամաուշին, Մ.Սադրը: «Կոստանտին-

- քի» թվին, որը տվյալների համաձայն, պատկանում էին նաև «Հիզբալլահի» ներկայիս գլխավոր քարտուղար Հասան Նասրաբադը, նրա տեղակալ Նահի մասիճը, Մոհամեդ Ճաբրիլը, Հուսեյն Հաուրան և այլք: Վերջիններիս գործունեության սկիզբը կապված էր «քաղաքական ատոմաժայթակարան դրոշմի» հետ, որտեղ ակտիվորեն առաջանվում էր Ա.Սադրի ուսմունքը: 1985 թ. ժամկետառում «Հիզբալլահի» ղեկավարությունն իր ծավալումը արտահայտեց այսպիսի կոմունիստական և ծայրահեղ Լիբանանում իսլամական պետության հաստատման իրենց մտադրության մասին:
13. Կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմիններն են Հոգևոր ատեմորդը, Համագումարը, Խորհրդակցական մարմինը, Քաղաքորոն, Կենտրոնական գործադիր մարմինը: Նրա «Խաղաղական ղեկավարություն» անվամբ խմբակցությունը լավ կազմակերպված, գաղտնի գործող և բարձր սրահավորմամբ 300-500 անհետապարձ մարտիկների կազմված ռազմական կառույց է, որը թափականաչափ անկասխտ է իր գործողություններում, և որի կապը կազմակերպության քաղաքական ղեկավարության հետ պայմանական ու առեմամափակ բնույթ է կրում: 1990-ականներին «Հիզբալլահի» անդամների թիվը կազմում էր 8-10.000 մարդ: Կազմակերպությունը ահաբեկությունն ու պատանդների առևանգումներն օգտագործում է որպես սրացարի ռազմավարական արդյունավետ միջոց:
 14. Սաուդյան Ալաբիա, Բահրեյն, Հորդանան, Քուվեյթ, ԱՄՆ:
 15. Ջոն Էսպլիտո, Իսրայելյան սպանույթ, Առաջին, թե իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 182:
 16. Ըստ «Հիզբալլահի», ԱՄՆ-ը, Ֆրանսիան և Բրիտանիան իրենց սկզբումբային ռշմամներն են կապված Մերձավոր Արևելքում վերջիններիս վարած գաղտնաքային ու նեոհմադեմոկրատական քաղաքականության հետ: «Հիզբալլահի» ահաբեկական գործունեությունը տարածվում է նաև Հարավային Ամերիկայում, Ասիական երկրներում, Կանադայում, Բելիզայում և այլ երկրներում արևմտյան հատկապես ամերիկյան և իսրայելական շահերը ներկայացնող անձանց ու հաստատությունների նկատմամբ: Մանրածախ տեսնելու Ely Karmon, "Fight on all Fronts" Hizballah, the War on Terror, and the War in Iraq, - Policy Focus, The Washington Institute, (Research Memorandum), No. 46, December 2003, p. 6-8.
 17. Մանրածախ տեսնելու Polk William "The Arab World Today", Harvard University Press, 1991, p. 355.
 18. Itamar Rabinovich, The War For Lebanon 1970-1985, Cornell University Press, 1985, p. 179.
 19. Ա.Ա. Հաջրությունյան, Միջուկ-իրանական Թայլնդի համաձայնագրերը-Համոզու երևանի համալսարանի (գիտահետազոտային ցրտոտ), N 1(96), Երևան-2000, էջ 111-117: «Հիզբալլահի» սկզբում չբնորոշեց համաձայնագրի պայմանները, որոնց համաձայն խորհրդարանի պատգամավորական տեղերը համաձայնությունն քաժանվում էին ցրիառոժյա և ճուաղճան ներկայացուցչների միջև՝ քայառեղով երկրի նախագահի ու վարչապետի պաշտոնի տեսնմնեղ միջոցով կառավարության նկատմամբ վերանսկողության իրականացման նմարավորությունը:

20. Նովնյու ժախանից հետո մեր մախազահ Հաշմի Ռաֆտանյանին երաժարվեց Լիբանանում իսլամական պետության ստեղծման նպատակով «Հիզբալլահին» ցուցարեղծող օժանդակությունից՝ առավել մեծ ուշադրություն հատկացնելով Իրանի մերթիմ գործերին և այտարին առևտրի վարձացմանը: Նա դատապարտում էր ճակ կազմակերպության կողմից բյնաֆնիերի նեո սակարկման նպատակով պատանդներ վերցնելու ռազմավարությունը: Այնուամենայնիվ, որոշ տվյալների համաձայն, «Հիզբալլահին» տրամադրվող Իրանի ամենամյա ֆինանսական օգնությունը կազմում է 65-100 մլն. դոլլար:
21. Մանրամասն տե՛ս Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, (Middle East Intelligence Bulletin), vol. 4, No 2, February 2002, p. 5-7.
22. «Հիզբալլահը» համազորակցում էր պաղեստինյան ապստամբների հետ՝ նրանց ցուցարեղծելով ուղեհաճան աջակցություն ինչպես ուսումնական ժամանակների և զինամերթի տրամադրման, այնպես էլ Շերաա ֆերմայի շրջանում Իսրայելի Պաշտպանության Ուժերի դեմ սանձանային ուղեհաճան գործողությունների իրականացման ճևղ:
23. В.Махмедов, Ливанская "Хезболла" как "Центр силы" на Ближнем Востоке,- Информационный Центр Северная Африка, Ближний и Средний Восток, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей), М., 2001, с.15.
24. Gary C. Gambill, Hassan Nasrallah Secretary-General of Hezbollah, (Middle East Intelligence Bulletin), Vol. 6, No.2/3, February-March 2004, p. 4-5. Ինտերմենտային հասցեն՝ (www.meib.org/articles/0402_id.htm). Իսրայելի և Հարավային Լիբանանի Բանակի (SLA) զինքրերի ուղղությամբ «Հիզբալլահի» զրոհների արդյունավետության հանգամանքը պայմանավորված էր պարտիզանների կողմից «ամփոսանգրության գոտու» մերձակայքի գյուղերը որպես ապաստարան օգտագործելու մարտավարության կիրառմամբ, որոնց նկատմամբ 1993 թ. հուլիսին Իսրայելի կողմից օդային ու հրետանային 7-օրյա ուժերի ընդհանրություններից հետո «Հիզբալլահը» 142 կառայության ինքնուրույն արձակեց հակառակ ուղղությամբ: Արդյունքում, Իսրայելն ու «Հիզբալլահը» Լիբանանի ու Իսրայելի բնակավայրերի վրա փոխադարձ լիարձակման ուղղությամբ ոչ պաշտոնական համաձայնություն ձևեր թելեգրֆ:
25. Ely Karmon, "Fight on all Fronts" Hizballah, the War on Terror, and the War in Iraq,- Policy Focus, The Washington Institute, (Research Memorandum), No.46, December 2003, p. 22.

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԵՒ ԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՁ (1970-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Լիբանանյան կրոնական համայնքերի շարքում իր յուրահատուկ տեղն ունի շիա համայնքը¹։ 1970-ականների սկզբին, քեև, շիաները կազմում էին Լիբանանի ողջ բնակչության 28%-ը (մոտ 1 մլն. մարդ)² և, փաստորեն, արդեն ամենախոշոր կրոնական համայնքն էին, նրանք, այնուամենայնիվ, շարունակում էին մնալ համեմատաբար ամենաշրջանցվածը։ Եիսաների մոտ 60%-ը բնակվում էր հարավային Լիբանանում, 25%-ը՝ Բեքաայի հովտում և 10%-ը՝ լեռնային Լիբանանում³։

1970-ականների սկզբին մեծ թվով շիաներ հարավային Լիբանանում Իսրայելի իրականացրած բազմաթիվ հարձակումների արդյունքում⁴, զրկվելով իրենց բնակարաններից, առիպված էին հաստատվել Բեյրութում։ Եիսաները Բեյրութում էժան աշխատուժ էին և զբաղված էին կիմ-նակամուն շինարարական աշխատանքներում։ Եիսական ետնախոչընդոտ Բեյրութի մի քանի բաղամասերում «չբավոլության գոտիներ» էին։

Մինչև 1970-ական թվականները, շիաները ղեկավարվում էին մի քանի ավանդական ընտանիքների կողմից, սակայն 1960-ականների վերջին երիտասարդ շիա քաղաքիչ խմամ Մուսա աւ-Սադրը սկսեց իր շուրջը համախմբել շիա երիտասարդությանն ու մի շարք առաջնորդները։ Նա համոզեա էր գալիս սոցիալական բարեփոխումների իրականացման ծրագրով, ինչը պետք է նպաստել շիա բնակչության սոցիալական իրավիճակի բարելավմանը։

1970-ականների սկզբից շիաները միանգամայն արյաբացիորեն պահանջում էին առավել լայն քաղաքական ներկայացուցչություն Լիբանանի կառավարման մարմիններում։ Պատմականորեն Լիբանանում շիաներով բնակեցված շրջանները տնտեսապես ամենաբարյլ զարգացածն էին։ Եիսաների առաջնային նպատակներից էր բոլոր միջոցներով նպաստել շիական գյուղական համայնքներին կառավարության կողմից ստրամադրվող դրամական ետակացումների զգալի ավելացմանը⁵։

Մուսա աւ-Սադրը զգալի աջակցություն էր առանում 1974թ. շիական համայնքում կազմավորված «Կեղեցվածների շարժում» («Հարաքաք ալ-

ժանդուհին») կազմակերպությունից⁸, որի կենդի վրա 1975թ. զարմանը ձևավորվեցին կիսաազգական ջոկատներ՝ «Լիբանանյան դիմադրության գոմարտականեր» («Աֆուաթ ալ-մուկաուամա ալ-լուքնանիյա»), սրճեր, հետագայում ընդլայնվելով, անվանվեցին «Ամալ»⁹ («Հույս»)։ Անբջինս շատ կարճ ժամանակաշրջանում դարձավ շիա համայնքի նոր քաղաքականության ձևավորողն ու իրականացնողը։ «Ամալում» ընդգրկվեցին Բեյրութի արվարձաններում ապստոլ մեծ թվով կրթված, երիտասարդ շիաներ, որոնք պայքարում էին Լիբանանում շիաների ընդհանուր վիճակի բարելավման համար։ «Ամալի» նախածնունդյալը Լիբանանի հարսավային շրջաններում ձևավորվեցին նաև մի քանի շիական ուսանողական ճամբարներ⁸։

«Ամալը» դրամական զգալի միջոցներ էր ստանում Սիրիայից և լիբանանյան շիաների մեծաքանակ ափյուրքից, որը հաստատվել էր Աֆրիկայի ֆրանսալեզու արաբական երկրներում։ Արտերկրի շիաների զգալի դրամական փոխանցումները նպաստում էին արևմտյան Բեյրութում շիաների կողմից իրականացվող մեծ թափի հասնող շինարարության իրագործմանը, ինչպես նաև մի շարք քաջատապես շիական կապիտալ ունեցող քանկերի կազմավորմանը⁹։

Լիբանանյան շիաների քաղաքական կազմակերպվածությունը դրսևորվեց դեռևս 1969թ. Եիսկան բարձրագույն խորհրդի ձևավորմամբ, որի նախագահ ընտրվեց ինձամ Մուսա ա-Սադդը¹⁰։ Լիբանանի սուննի¹¹ ղեկավարները սկզբնական շրջանում վրդովված էին վերանշյալ հանգամանքով։ Նորաստեղծ Եիսկան խորհուրդը գործում էր անջատ և ինքնուրույն էր արդեն իսկ գոյություն ունեցող Սահմնայական բարձրագույն խորհրդից, որում գերիշխող դիրքեր ունեին լիբանանյան սուննիները։ Եիսկան խորհրդում ներկայացված էին ինչպես շիաներ, այնպես էլ սուննիներ ու դրուզներ¹²։

Ստանձնելով Եիսկան բարձրագույն խորհրդի նախագահի պաշտոնը՝ ա-Սադդը ցուցաբերեց լիբանանյան սուննիների և դրուզների հետ համագործակցելու այնպիսի պատրաստակամություն, որ շատ շուտով վեթիմներին դժգոհությունը՝ կապված խորհրդի ձևավորման հետ, մոտացության տրվեց։

Եիսկան բարձրագույն խորհրդի ձևավորումից որոշ ժամանակ անց լիբանանյան կառավարության որոշմամբ ձևավորվեց նաև Լիբանանի Հարավի խորհուրդը (Մաջլիս ալ-ամուր), որը գլխավորեց ազդեցիկ շիա ղեկավար Քամիլ ալ-Մաադը¹³։ Խորհրդին տրամադրվեց 30 մլն լիր լիքա, որը պետք է ներդրվեր հարավային Լիբանանի հետամնաց շրջանների զարգացման ծրագրերում¹⁴։ Սակայն վերանշյալ խորհուրդը կարճ ժամանակ անց փրամովեց կոռուպացված մի մարմնի, որի գործունեությունը որևէ կերպ չէր նպաստում երկրի հարավի զարգացման ծրագրերի իրականացմանը։

1970-ականների սկզբին Մոսա աս-Սադրը Բեյրությում շիաների մասնակցությամբ կազմակերպեց մի քանի գործադուլներ: Աս-Սադրը լիբանանյան իշխանություններից պահանջում էր պաշտպանել հարավային Լիբանանի շիական բնակավայրերը, որոնք խորայելյան հարձակումների հիմնական տուժողներն էին և դիմել պատասխան ռազմական գործադուլումների¹⁵: Մակայն Մոսա աս-Սադրի պահանջներին լիբանանյան իշխանությունները որևէ կերպ չարձագանքեցին: Լիբանանն այդ փուլում իրոք պատրաստ չէր Իսրայելի հետ լայնածավալ իսկամարտությանը: Սկսվել էր լիբանանյան բանակի կազմալուծման գործընթացը:

1974թ. մարտի 17-ին իմամ Մոսա աս-Սադրը Բաաբեքում կազմակերպեց գույց, որին մասնակցեցին մոտ 75.000 շիաներ: Այստեղ աս-Սադրը կոչ արեց բոլոր շիաներին համախմբվել և անհրաժեշտության դեպքում մույնիսկ զինված պայքար մղել շիաների իրավունքների և նրանց սոցիալական պայմանների բարելավման համար: Իր ելույթում շիաների առաջնությունը նշեց. «Լիբանանի հարավում բնակվող շիաները պետք է համախմբվեն և պաշտպանեն իրենց գյուղերն ու տներն իսրայելյան պարբերական հարձակումներից: Եթե լիբանանյան իշխանություններն անկարող են պաշտպանել հարավային Լիբանանն ու նրա բնակչությանը, ապա այդ գործը կտանձնեն շիաները»¹⁶: Այդ նպատակով Բեյրությում և Տիրում (Սուր) աս-Սադրի օժանդակությամբ կազմավորվեցին շիական զինված ջոկատներ, որոնք պետք է մասնակցեին հարավային Լիբանանի պաշտպանությանը: Իմամ աս-Սադրը երկվեց նաև պայքարել Լիբանանում բոլոր սոցիալական անհավասարությունների դեմ և աջակցել լիբանանյան մահճեղակամների իրավունքների պաշտպանությանը: Նա կոչ արեց իր համախոհներին բոլոր միջոցներով պայքարել և նպաստել երկրում տիրող կաշառակերության, կոռուպցիայի և մենաշնորհների վերացմանը, ինչպես նաև մեղադրեց լիբանանյան իշխանություններին երկրում տիրող ճգնաժամային իրավիճակի հանդիպ անտարբերության մեջ¹⁷:

Ստեղծված իրավիճակում շիական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու գործում Մոսա աս-Սադրին իրենց աջակցությունը հայտնեցին Իսրայելի հարձակումներին դիմակայող լիբանանյան ծախ տժերն¹⁸ ու պաղեստինյան զինվորական խմբավորումները: Սա արդեն նշանակում էր համագործակցության հաստատում լիբանանյան ծախերի, պաղեստինցիների և շիաների միջև:

1970-ականների առաջին կեսին Լիբանանն ապրում էր ներքաղաքական լուրջ ճգնաժամ, որի արդյունքում 1975թ. ապրիլին երկրում բռնկվեց քաղաքացիական պատերազմ: Այն տևեց մոտ 15 տարի՝ պատճառելով մարդկային և նյութական զգալի վնասներ: Արդեն 1976թ. Լիբանանում զինված իսկամարտության արդյունքում տալլեր տվյալներով զոհվել

էին 44.000-46.000, իսկ վերավորվել՝ շուրջ 180.000 մաքր՝ այդ բվում զգալի բվով շխանելը²⁰։

1975-1976թթ. ընթացքում լիբանանյան աֆերը²¹ մի քանի անգամ հարձակվեցին արևելյան Բեյրութի շխական քաղաքացիների վրա։ Մասնավորապես, 1975թ. վերջին լիբանանյան աֆ ուժերի զինված խմբավորումները հարձակում իրականացրեցին Հարաբ ալ-Ջաուարինա շխական քաղաքատեղում, 1976թ. հունվարին նմանատիպ հարձակում տեղի ունեցավ Մասլուխ և Կարամտինա շխական չքավոր քաղաքատեղում, իսկ 1976թ. օգոստոսին աֆերի զինված ուժերը մտան շխական Նաբաա արվարձանը²²։ Արդյունքում հազարավոր շխա քնակիչներ ստիպված եղան լքել իրենց բնակարանները։

1978թ. մարտի 15-ին «Լիտանի» գործողության շրջանակներում Իսրայելի ներխուժեց հարավային Լիբանան և զբաղեց միջև Լիտանի գետն ընկած շրջանը՝ երկրի ողջ տարածքի 10%-ը²³։ Արդյունքում տարբեր տվյալներով կաշին 1.500-2.000 սպանվածներ²⁴։ Իսրայելին հաջողվեց նպատակ հարավային Լիբանանի շխաների և պաղեստինյան զինված խմբավորումների միջև որոշակի հակասությունների առաջացնելը։ Պատահական չէր, որ շխաները, սրունք այդ ներխուժման հետևանքով ստիպված էին լքել հարավային Լիբանանը²⁵, ստեղծված իրավիճակի համար մեղադրում էին պաղեստինցիներին, սրունք իրենց գործողություններով Իսրայելին դրոժում էին պատասխան քայլեր ձեռնարկել հարավային Լիբանանի դեմ։ Այս պայմաններում նույնիսկ համագործակցության որոշակի եզրեր ի հայտ եկան լիբանանյան քանակի նախկին մայրը Մասալ Հադզադի դեկավարած «Հարավային Լիբանանի քանակի»²⁶ և լիբանանյան շխաների միջև։ Եիաների և Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) միջև հարաբերություններն էլ ավելի սրվեցին 1980թ. սեպտեմբերին իրաք-իսրայելյան պատերազմի ընկածից հետո, երբ ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթը հրաժարվեց այդ պատերազմում աջակցություն ցույց տալ իրանցիներին և զբաղեց չեզոք դիրք²⁷։ Հակասությունները ՊԱԿ-ի և շխաների միջև այնքան սրվեցին, որ 1980-1981թթ. ընթացքում Բեյրութի արվարձաններում և հարավային Լիբանանում մի քանի զինված բախումներ տեղի ունեցան պաղեստինյան զինված խմբավորումների և շխական ցուկառուների միջև²⁸։

1982թ. հունիսի 6-ին Իսրայելը կրկին ներխուժեց Լիբանան այս անգամ «Ժադադություն Գալիլեային» ռազմական գործողության շրջանակներում։ Հակառակ գույություն ունեցող որոշ հակասությունների՝ լիբանանյան շխաները, ծախս ուժերը և ՊԱԿ-ը կրկին համախմբվեցին Իսրայելի դեմ պայքարում²⁹։

1982թ. հոկտեմբերին Լիբանանի նորանշանակ նախագահ Ամին Ժմալիլի³⁰ հրահանով լիբանանյան քանակի մի քանի զորամիավորումներ մտան արևմտյան Բեյրութի Վազախի շխական արվարձանը և սկսե-

զին քանդել շիաների խրճիթները: Արշալուսնու մ շուրջ 5.000 շիաներ մնա-
զին անօրևան³⁰:

1983թ. հուլիսին արևմտյան Բեյրութի շիա փախստականներով քնա-
կեցված քաղամասերից մեկում առաջին լուրջ զինված բախումները տե-
ղի ունեցան «Ամալի» զինված ջոկատների և լիբանանյան քանակի զո-
րամիավորումների միջև: Բանակային զորամիավորումները փորձում
էին տեղի դաշտի տարածքը «մաքրել» շիա փախստականներից, որոնք
երկու օր «Ամալի» զինված ջոկատների աջակցությամբ դիմադրություն
էին ցույց տալիս: Բախումներն «Ամալի» և քանակային զորամիավո-
րումների միջև վերսկսվեցին օգոստոսի վերջին և որոշ ընդհատումներով
տևեցին մինչև սեպտեմբերի 25-ը³¹, երբ լիբանանյան հակամարտության
մեջ ներքաշված բոլոր կողմերը համաձայնեցին զինադադար կնքել: Այս
ընթացքում շիական համայնքի ներսում ավելանում էին ճնշումներն ու
դժգոհություններն «Ամալի» ղեկավարության հանդեպ, որը համաձայնել
էր համագործակցել լիբանանյան իշխանությունների հետ և կնքել զինա-
դադար:

1978թ. Մուսա ա-Սադրի խորհրդավոր անհետացումից հետո³² «Ա-
մալի» ղեկավարությունը ժամանակավորապես ստանձնեց Հուսեյն ալ-
Հուսեյնին, իսկ 1980թ. «Ամալի» ղեկավար ընտրվեց Նաբիհ Բեքրիին՝ երի-
տասարդ, աշխարհիկ հայացքներով այդի ընկնող իրավաբան: Բեքրին,
սակայն, չունի այնպիսի խաբիզմատիկ ազդեցություն, ինչպես ա-
Սադրը, իսկ նրա «չափավոր» քաղաքադական ուղեգիծը քննադատու-
թյան էին ենթարկում ինչպես «Ամալը», այնպես էլ ողջ շիա համայնքի
ծաղրահեղական շրջանակները³³: Այս նշանակումը շրջադարձային էր
կազմակերպության քաղաքական գործունեության փոփոխության տե-
սանկյունից: Կազմավորվելով որպես ընդդիմություն գործող իշխանու-
թյանը՝ «Ամալը», որոշ ժամանակ անց վերածվեց քաղաքական ուժի, օր
պատյաստ էր համագործակցել իշխանության հետ:

«Ամալի» այս քաղաքականությունը նպաստեց շարժման հեղինա-
կության անկմանը շիա բնակչության այն շրջանում, որը պահանջում էր
ծաղրահեղ միջոցառումների իրականացում Լիբանանից իսրայելյան
գործերի դուքս բերման ուղղությամբ:

Շիա համայնքում տարածայնությունների առկայության պայմաննե-
րում 1982թ. ամռանն «Ամալի» հրամանատարական խորհրդի անդամ
Հուսեյն Մուսաուին լքեց շարժումը՝ ձևավորելով իր զինված խմբավորու-
մը, որ անվանվեց «Խալանական Ամալ»³⁴: Մուսաուիի համախոհների քի-
փը սահմանափակ էր, սակայն այն աջակցություն էր ստանում Իրա-
նից³⁵, սրտեղից «Բալանական հեղափոխության պաշտպանության էլի-
տաք ստորաբաժանումների» 3.000 մարտիկներ Միդիայի տարածքով
անցել էին Լիբանան և ակտիվ օժանդակություն էին ցույց տալիս Մու-
սաուին³⁶:

1982թ. ամռանը Բեքրայի հովտում կազմավորվեց մեկ այլ ծայրահեղական շխական շարժում ևս, որ նույնպես խիստ քննադատության էր ենթարկում «Ամալի» ղեկավարի «չափավոր» քաղաքականությունը: Այս շարժումն անվանվեց «Հիզարայահ» («Ալլահի կուսակցություն»), որ գլխավորեց խարիզմատիկ շիա ղեկավար շեյխ Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահը³⁷: «Հիզարայահի» մեջ ներգրավվեցին ինչպես «Ամալի» առավել ծայրահեղական քեզ՝ Հուսեյն Մուսաուայի գլխավորությամբ, այնպես էլ տարբեր շխական կրոնական և ռազմական միավորումների օրոշ անդամներ, որոնք սերտ կապեր ունեին Իրանի ղեկավարության հետ³⁸:

1983թ. ապրիլին շխական ծայրահեղականները Լիբանանում պայքարում կազմակերպեցին ԱՄՆ դեսպանատան մոտ, իսկ 1983թ. հոկտեմբերի 23-ին միաժամանակ պայքարումներ տեղի ունեցան նաև Լիբանանում տեղակայված միջազգային խաղաղապահ ուժերի³⁹ ամերիկյան և ֆրանսիական զորամիավորումների զորամոցներում⁴⁰: Պայքարումի հետևանքով գոհվեց տարբեր տվյալներով 50-56 ֆրանսիացի և 239-241 ամերիկացի զինձառայող⁴¹: Պայքարումների կազմակերպման պատասխանատվությունն իր վրա վերցրեց մինչ այդ անհայտ «Խղամական Ջիհադ» խմբավորումը, սակայն որոշ ժամանակ անց մամուլից հայտնի դարձավ, որ պայքարումները կազմակերպել էին Հուսեյն Մուսաուան և Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահը⁴²:

1983թ. հոկտեմբերի 10-ին Իսրայելի զինված ուժերը Նաբաթիայում հարձակման ենթարկեցին Աշուրայի⁴³ հիշատակության սգո արարողությանը մասնակցող շիաների քազմամարդ քափորը, որին հաջողությամբ զարգացումների և շխական համայնքում անհանդուրժողական տրամադրությունների մեծացման աղյուսքում 1985թ. մարտին շիա ազդեցիկ ղեկավարներից մուֆթի Մուհամմադ Մահդի Եամս աղ-Դինը «պաշտպանական ջիհադ» (աղ-Ջիհադ աղ-դիֆաի) հայտարարեց Իսրայելի դեմ⁴⁴:

Մինչ այդ, 1984թ. փետրվարի սկզբին, Լիբանանում կրկին քախումներ քոնկվեցին շխական ջոկատների և լիբանանյան քանակային զորամիավորումների միջև: Բանակային զորամիավորումները հրետանային հարձակման ենթարկեցին արևմտյան Բեյրութի շխական քաղամասերը: Փետրվարի 4-ին «Ամալի» ղեկավար Նաքիհ Բեքրին կուղղ դիմեց քանակի մահմեդական շաղրային զինվորներին, որոնք հիմնականում շիաներ էին և խնդրեց ձեռնպահ մնալ զինված քախումներից մասնակցությունից⁴⁵: Բեքրիի կոչից մի քանի ժամ անց շիա և ընդհանրապես մահմեդական զինվորները լքեցին քանակի շաղրերը: Աղյուսքում փետրվարի 6-ի առավտոյան քանակային զորամիավորումները պարտություն կրեցին⁴⁶:

Ստեղծված դժվարին իրավիճակում, երբ Ամին Ժմայելի վարչախումբը կանգնած էր փլուզման եզրին, 1984թ. փետրվարին ԱՄՆ-ը հայտարարեց, որ սքատրաստվում է միջազգային խաղաղապահ ուժերի մեջ

ներգրավված իր գործերը դուրս բերել Լիբանանի տարածքից: Լիբանանի նախագահի փետրվարի 28-ին ժամանեց Դամասկոս և Սիրիայի օգնությամբ փորձեց պահպանել իր իշխանությունը⁴⁷: Դամասկոսի ամփոջական միջամտությամբ, բանակցությունների արդյունքում, 1984թ. մայիսի 7-ին կազմավորվեց «ազգային միասնության» կառավարություն՝ ազդեցիկ սուննի դեկավար Ռաշիդ Քարամեի գլխավորությամբ⁴⁸: Լարիի Բիրրին նոր կառավարության կազմում ստանձնեց Լիբանանի հստակի գործերի և վերակառուցման նախարարի նորաստեղծ պաշտոնը և պարտավորվեց օգնել նախագահին երկրում կարգուկանոն հաստատելու գործում⁴⁹: Այս նշանակումից հետո «Ամալ» շարժումն իր գործունեությունը տեղափոխեց հիմնականում քաղաքական դաշտ, իսկ հարավային Լիբանանում իսրայելյան ներկայության դեմ զինված պայքարը գլխավորեց «Հիզբալլահ» շարժումը, որի ակտիվ գործողությունների արդյունքում 1985թ. հունիսին Իսրայելն իր գործերը դուրս բերեց հարավային Լիբանանի տարածքի մեծ մասից՝ բացառությամբ «անվտանգության գոտուց»⁵⁰:

Լիբանանյան շիաների երկու հիմնական կազմակերպությունների՝ «Ամալ» և «Հիզբալլահի» միջև գոյություն ունեց նաև ներքին պայքար, որը ներհամայնքային հակասությունների վառ օրինակ էր⁵¹: Այս պայքարի արդյունքում 1984թ. մի շարք զինված բախումներ տեղի ունեցան «Ամալ» և «Հիզբալլահի» միջև, ինչը բացատրվում էր այն հանգամանքով, որ և՛ «Ամալը» և՛ «Հիզբալլահը» ցանկանում էին հնարավոր ամբողջական ազդեցություն ունենալ լիբանանյան շիաների շրջանում: Այս հարցում խիստ ակտիվություն էր ցուցաբերում նաև Սիրիան, որը, տակայն, ելնելով իր շահերից, փորձում էր հնարավորինս նպաստել շիական երկու շարժումների միջև հավասարակշռության պահպմանը: «Հիզբալլահի» նկատմամբ իր ազդեցությունը ցույց տալու նպատակով 1987թ. սիրիական գործերը ներխուժեցին Բեյրութի հարավային արվարձաններում տեղակայված «Հիզբալլահի» ռազմական ճամբարներ, որի արդյունքում զոհվեց 22 մարդ⁵²: «Հիզբալլահ» և «Ամալ» շիական շարժումների նկատմամբ իր ազդեցության ցուցադրումն այն գլխավոր «խաղաքարտերից» մեկն էր, որ հնարավորություն էր տալիս Սիրիային մեկ անգամ ևս ընդգծել իր կարևոր դերը լիբանանյան հակասությունների բարդ խաղում:

Փաստենք, որ միջշիական լարվածությունը շարունակվեց նաև 1988-1990թթ. ընթացքում, երբ Բեյրութի արվարձաններում և հարավային Լիբանանում կրկին զինված բախումներ տեղի ունեցան «Ամալ» և «Հիզբալլահ» շարժումների միջև: 1990թ. նոյեմբերի 6-ին Սիրիայի ակտիվ միջամտությամբ հաջողվեց կնքել զինադադար, ինչը նպաստեց Լիբանանում ներշիական բախումների դադարեցմանը⁵³:

1985թ. նոյեմբերին հարաբերությունները սրվեցին մաս շրակամ զինված ջոկատների և պաղեստինյան մարտիկների միջև: Նրանց միջև առկա հակասությունները վերաճեցին զինված բախումների, որը ստացավ «ճամբարների պատերազմ» անվանումը: Եիսկան զինված ջոկատները ձգտում էին թույլ չտալ տարբեր տվյալներով 2000-2500 պաղեստինյան մարտիկների ենարավոր վերադարձը Լիբանան⁵⁴ և նրանց վերահաստատումը շիակամ վերահսկողության շրջաններ՝ հատկապես Բեյրութի արվարձաններում և հարավային Լիբանանում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարներ, որտեղ բնակվում էին տարբեր տվյալներով 350.000-400.000 պաղեստինցի փախստականներ: Այդ «պատերազմը» ողջ ընթացքում պաղեստինցիների և շիակների միջև տուրքավեցին մի շարք համաձայնագրեր, որոնք սակայն անընդհատ խախտվում էին հակամարտող ուժերի կողմից: 1987թ. սեպտեմբերի 11-ին տուրքավեց վերջնական համաձայնագիրը, որով հաշտություն կնքվեց հակամարտող կողմերի միջև և հայտարարվեց «ճամբարների պատերազմը» ավարտը, որի ընթացքում պայմանվեց 2000-3000 մարդ⁵⁵:

Վերադառնալով շիակամ ծայրահեղական «Հիզբալլան» շարժման գործունեությանը՝ նշենք, որ 1985թ. փետրվարի 16-ին կոստաբարակվեց շարժման «Բազ նամակը՝ ուղղված Լիբանանի և ողջ աշխարհի կեղեքվածներին»⁵⁶: Այս փաստաթղթում շարադրված էին շարժման ծրագիրն ու հիմնական նպատակները.

1. Վերջ դնել իսրայելյան և ընդհանրապես օտարերկրյա զավթիչների ցանկացած ներկայությանը Լիբանանում;

2. Պատասխանատվության ենթարկել Լիբանանյան փաղանգներ կոսակցության ղեկավարներին՝ Լիբանանում ժահնեղականների և քրիստոնյաների դեմ իրականացված հանցագործությունների համար;

3. Բնակչությանը կոչ անել Լիբանանում բնտրել «խղամական սկզբունքների վրա խաբսխված իշխանություն», որը առեծված իրավիճակում միակ իրական հնարավորությունն էր՝ երախտավորելու երկրում անկախության և արդարության վերահաստատումը⁵⁷:

Ծրագրում հիմնական թշնամիներ համարվում էին Իսրայելը, նրան հովանավորող ԱՄՆ-ը և արևմտյան տերությունները⁵⁸: Ինչ վերաբերում է Իսրայելի հետ հնարավոր որևէ հարաբերություններին, ապա սկզբնական շրջանում շարժումը ոչ միայն մերժում էր Իսրայելի գոյության փաստն, այլև Լիբանանի շահերին դավաճանելու մեջ մեղադրում էր ցանկացած ուժի, որ պատրաստ էր միջնորդ լինել իսրայելյան կողմի հետ բանակցություններում:

Անդրադառնալով Լիբանանի կառավարման հիմքում դրված կոնահամայնքային համակարգին՝ «Հիզբալլան», ի տարբերություն «Ամալի», գտնում էր, որ այդ համակարգը վաղուց ապառել է իրեն և այդ ուղղությամբ ցանկացած բարեփոխում համարում էր ոչ արդյունավետ⁵⁹:

1980-ականներին «սատր պատերազմի» վերջին փուլում «Հիզարալահը» խլայան «առաջարկում էր» որպես աղքատությանը Արևմտափ կապիտալիզմին և Արևելքի սոցիալիզմին: Շարժումը փորձում էր իր քաղաքականության հիմնական ուղղություններն քննարկմանը Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական ուղեգծից և պատահական չէ, որ «Հիզարալահն» իր «Բաց մամակում» Իրանն անվանում էր պետություն, որին կարելի է նմանվել⁶⁰:

Փաստենք, որ խորայելյան պաշտոնական կայքերում «Հիզարալահին» տրվում է հետևյալ դասակարգումը. ««Հիզարալահը» շիական ահաբեկչական կազմակերպություն է, որը գտնվում է Սիրիայի և Իրանի վերահսկողության ներքո»⁶¹: Ինչ վերաբերում է շարժման ահաբեկչական բնույթին, ապա նշենք, որ թեև «Հիզարալահի» կայացման փուլում մրաքայերն այս առումով բավական խտուն էին. Բնյուբում միջազգային խաղաղապահ ուժերի գործնականի պայթյուններ, Բաաբեքում լիբանանյան քանակի ռազմական ճամբարի վրա հարձակում, ինքնաթիռների առևանգում և պատանդների վերցնում, սակայն այդ գործողություններն ուղղված էին այն ժամանակ լիբանանյան գլխավոր խնդրի՝ 1982թ. Իսրայելի ինքնավային Լիբանան ներխուժման հանդեպ համաշխարհային ուշադրության սևեռմանն ու հարավային Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերմանը և պայմանավորված էին Իսրայելի Լիբանանի հանդեպ վարվող քաղաքականությանը:

Ինչ վերաբերում է «Հիզարալահը» հովանավորող պետություններին՝ Իրանին և Սիրիային, ապա Իրանը «Հիզարալահին» ֆինանսական օժանդակություն է ցույց տալիս իր սեփական գաղափարական ազդեցության տալիս ժամանակ մաքատակով՝ մահ լիբանանյան սուննի ժամեղականներին չրջանում, իսկ Սիրիան այս շարժումը համարում է «կայտը լծակ և ճնշման յուրանատուկ միջոց» Իսրայելի հետ քանակություններում, որոնք վերաբերում են 1967թ. արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում Իսրայելի գրաված Գոլանի քարձույնները վերադարձնելուն:

1989թ. եօկտեմբերի 22-ին Տաիֆի համաձայնագրի ստորագրմամբ Լիբանանում վերջ դրվեց քաղաքացիական երկարատև պատերազմին⁶²: Այս համաձայնագրի ստորագրումից հետո, ելք գիտված հակամարտության բոլոր կողմերը համաձայնեցին զինաբախվել, «Հիզարալահը» միակ շարժումն էր, որ, օգտվելով Տաիֆի համաձայնագրով հաստատված սիրիա-լիբանանյան հարաբերությունների հատուկ բնույթից, Սիրիայի ակտիվ միջամտությամբ կարողացավ պահպանել իր ռազմական խմբավորումները և շարունակել Իսրայելի դեմ իր զինված պայքարը Լիբանանի հարավից: Այս համաձայնագրի ստորագրումը հնարավորություն տվեց «Հիզարալահին» մուտք գործել մահ Լիբանանի քաղաքական դաշտ: 1992թ. մասնակցելով խաղաղության հաստատումից հետո երկրում տեղի ունեցող առաջին խոքիդալայանական ընտրություններին՝ «Հիզարալա-

լը» ստացավ 8 տեղ 128-ից (կրոնահամայնքային համակարգով շիա համայնքին հատկացված էր 19 տեղ 128-ից)⁸³:

42. Аль-Харри Мухаммад, Налоговое законодательство и практика уклонения от налогов в Египте и Сирии, в сб. Страны Ближнего и Среднего Востока (актуальные проблемы современности и истории), М., 1998, с. 184.

ԲԵՆԻԱՄՆ ԽԱՒՅԱՆ

ԱՐԽԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (1921 – 1931թթ.)

Այսրկովկասում խորհրդային կարգերի հաստատման մախօրեին արխազ հասարակությունը ազգային քաղաքական կարգերի լուծումը տեսնում էր Արխազխայի կարգավիճակի բարձրացման մեջ: Չմայած քաղաքային փորձերին 1918-1920թթ. ինքնիշխանության գաղափարն իրականացնել չէր հաջողվել, որը Արխազխայի կարգավիճակի շուրջը 1920-ական թվականներին հարուցեց նոր հակամարտություն:

Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով 1921թ. փետրվար-մարտին տեղի ունեցավ Վրաստանի խորհրդայնացումը: Ինչպես գրում է վրաց պատմաբան Դևի Ստուրուան, «1921թ. փետրվարին Վրաստանի պետականությունը ձևակառուցելն չէր վերացել, այլ տեղի էր ունեցել հասարակական-քաղաքական կարգերի ուժային փոփոխում, Վրաստանի... բուշխիզացում: Այս գործընթացների լրջախոս վերլուծումից ծնվեց «իդական զավթում» տերմինը»¹:

Կարմիր բանակը, արխազական «հիւսազ»² պարտիզանական ջոկատների հետ համատեղ, 1921թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 8-ը գրավեց ամբողջ Արխազիան: Վրաստանում խորհրդային իշխանության հաստատման մախօրեին, վրաց և արխազ կոմունիստ առաջնորդները Մոսկվայում մախապես պայմանավորվեցին, որ «Մոխումի կուսակցական կազմակերպությունը պետք է մտնի վրացականի մեջ, իսկ Արխազիան՝ ինքնավարության սկզբունքով մտնի Վրացական ԽՍՀ կազմ»³: Մարտի 6-ին ձևավորվեց Արխազիայի Հեղկոմի հետևյալ կազմը. Ն.Լալոբա, Ն.Ակիրտավա, Պ.Ազնիայվիլի: Հեղկոմի մախազան ընտրվեց Երիեմ Էշրան, որը 1918թ. զարմանը արդեն գլխավորում էր Մոխումի Հեղկոմը: Բնորոշ է, որ խորհրդայնացման առաջին իսկ օրերից մինչև 1921թ. մարտի վերջերը Հեղկոմի պաշտոնական փաստաթղթերում ոչլիմ չի ասված Վրաստանի և Արխազիայի հարաբերությունների վերաբերյալ: Բավարարվում էին ընդհանուր կարգախոսներով, ինչպես՝ «Կեցցե եղբայրական միությունը Վրաստանի և Արխազիայի աշխատավորների

միջև»⁴։ Մոսկվայում ունենալով նախնական պայմանավորվածություններ, Վրացիեղկոմի անդամները համոզված էին, որ Վրաստանի ամբողջականությունը սպառնալիք չկա և կոչ հրապարակեցին, թե «Աջախալի, Արխազխալի և Հարավային Օսիայի երբայր ժողովուրդները ինքնուրույն են որոշում իրենց ճակատագիրը»⁵։ Կարգախոսաչին բնույթ է կրում Վրացիեղկոմի գլխավոր Արխազխալի Հեղկոմին, որտեղ մասնավորապես ասված է, «որ բոլոր փոքր ժողովուրդները հնարավորություն են ստանում ապրելու լիարժեք իրենց բնորոշ առանձնահատկություններին»⁶։ Դիմումի մեջ Արխազխալի և Վրաստանի հարաբերություններին վերաբերյալ որևէ առաջարկությունների բացակայությունը վկայում է բանակցությունների անդրկտիլիայան բնույթի մասին։ Մրաժամանակ Վրացիեղկոմի մարտի 8-ի «Վրաստանի ԽՍՀ կառավարման համակարգի մասին» որոշման մեջ ասված է, որ «Նախանգային հեղկոմները պետք է լինեն երեքը՝ Զիվլիսի, Բուրսայի, Բարումի և մեկ չորսանային՝ Մոխումի կամ Արխազխալի»⁷։ Սակայն հետագա իրադարձությունները զարգացան ոչ նախնական ծրագրի համաձայն։

1921 թ. մարտի ցուպին կեսին տեղի ունեցավ Արխազխալի պատասխանատու աշխատողների երկու խորհրդակցություն, որտեղ որոշվեց հռչակել Արխազխալի ինքնուրույն հանրապետություն, իսկ կուսակցական կազմակերպությունը կոչել Արխազխալի Կոմունիստական կուսակցություն⁸։ Մարտի 26-ին Արխազխալի Հեղկոմի անդամները Լեմինին և Ստալինին հեռագիր ուղեցին, որտեղ դնում էին Արխազխալի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակման և այն ՌՍԽՍՀ-ի կազմում ընգրկելու հարցը։ Որոշումը հիմնավորված էր «իդ ճակատագիրը անմիջականորեն հորինողային Ռուսաստանի հետ կապելու» արխազ ժողովրդի զանգվածային ցանկությամբ և «Արխազխալի ինքնուրույնության հռչակումով՝ Կարմիր բանակի սրբաբարի ազատագրական բնույթն ամրապնդելու ձգտումով՝ ինչպես Արխազխալի աշխատավոր զանգվածների գիտակցության, այնպես էլ արտասահմանի հասարակական կարծիքի մեջ»⁹։ Այս դիմումը դարձավ արխազ բուլձիկների նախորդ հակամեղհիկյան քարոզչության տրամաբանական հետևանք, որի հիմնական դրույթներից էր Խորհրդային Ռուսաստանին միավորվելու անկասկածաբարությունը, ինչը նշանակում էր մեկ խորհրդային կարգերի հաստատում։

Խորհրդայինացումից հետո վերադառնալով վտարանդիությունից, Է.Էշյան ստիպված էր այս տրամադրությունները նկատի առնել։ «...Կարծում էինք, - գրում էր նա, - որ Արխազիան գոյություն կունենա որպես Խորհրդային Վրաստանի անբաժանելի մասը, սակայն երբ մենք այստեղ եկանք և սրբազնցինք, թե ինչպիսի մթնոլորտ ենք ընկել, մենք ստիպված էինք ընդունել Արխազխալի անկախության տարբերակը և «...մենք միաձայն կանգ առանք այն բանի վրա, որ ազգային պատակությունների վերացման համար անհրաժեշտ է, թեպետ և ժամանակավոր՝

մինչև Խորհուրդների համագումարը, Խոչակել Արխագիայի անկախություն»¹⁰։ Արխագ բոլշևիկների 1921թ. ռազմավարությունը Խոչակի էր առնում 1918թ. խրենց կողմից բուլղ տված լուրջ վիթխումները, երբ Արխագիայում ժամանակավոր հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց նրա պետականության վերականգնման, որին և ձգտում էին արխագական ժողովրդի լայն շրջանակները։ Կուտի ունեմալով քաղաքական ինքնուրույնության համար 1918-1920 թթ. արխագների պայքարը, Արխագիայի բոլշևիկները խորհրդային կարգերի հաստատումից հետո առաջ քաշեցին ինքնուրույն պետականության գաղափարը։

Վրաց և արխագ բոլշևիկների միջև ծագած տարակարծությունները վերացնելու մարտակով միջոցառվի դերը ստանձնեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի քարտուղար Գ.Օրջոնիկիձեն։ 1921թ. մարտի 27-ին Ե.Էշրանի նրա հետ ունեցած զրույցի ընթացքում Հեղկոմի անունից առաջարկեց վավերացնել Արխագիայի Խոչակումը որպես ինքնուրույն իսկապետություն ՌՍՖՍՀ անմիջական կազմում¹¹։ Ե.Էշրան Հեղկոմի դիրքորոշումը հիմնավորում էր այն բանով, որ արխագների մտտ ձգտումը դեպի ազգային ինքնորոշում հարուցեց մեծշեխների քաղաքականությունը։ Մեկ այլ առիթով այս գնահատականը հաստատում է Օրջոնիկիձեն, չրաքցնելով, որ. «Մեծշեխների ազգայնական քաղաքականությունը ծնեց կտրուկ նակավրացական տրամադրություններ Արխագիայի, Աբարխայի և Հարավային Օսիայի բնակչության մեջ»¹²։ Օրջոնիկիձեն, զարմանք նայտնելով, որ «աբխազ ընկերների» կողմից Խոչակը առաջին անգամ նման մեկնաբանման էր արժանանում, այնուամենայնիվ համաձայնվեց Խոչակել Արխագիան ինքնուրույն իսկապետություն։ Միասնամանակ նա խորհուրդ տվեց շրջանցել Արխագիայի դաշնության Խարցըր թե՛ Ռուսաստանի, թե՛ Վրաստանի հետ, մինչև այդ Խարցի վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի վճիռը¹³։ Զրույցի վերջում նրանք համաձայնության եկան իսկապետության Բարսեմում մարտի 28-ին։ Ելված օրը տեղի ունեցավ Կովկասյան բյուրոյի, Վրաստանի կոմկուսի կենտկոմի և Արխագիայի հեղկոմի ներկայացուցիչների համատեղ խորհրդակցությունը, որը վարում էր Գ.Օրջոնիկիձեն։ Օրակարգում մեկ Խարց էր. «Խորհրդային իշխանության և Արխագիայում Կոմկուսի կառուցվածքի մասին»։ Նրկար վիճարանությունից հետո չնսջողվեց ստանալ Վրաստանի կազմ ընդգրկվելու համար Արխագիայի ներկայացուցիչներից որևէ համաձայնություն։ Մարտի 29-ին խորհրդակցությունը վճիռ կայացրեց. «Մինչև Արխագիայի Խորհուրդների համագումարը ՌՍՖՍՀ կամ ՎՍՍՀ հետ Խորհրդային Արխագիայի դաշնության հարցը մնում է բաց և Արխագիան նայտարարվում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն»¹⁴։ Արխագական կուսկազմակերպությունը ժամանակավոր ստացավ կարգավիճակ՝ ՌԿ(բ)Կ Կազմըչուր և ներարկվեց անմիջականորեն Կովքուրոյին։ Ինչպես կարծում են վրաց հետազոտողներից ո-

մանք (Մ.Գ. Գափրիճյանի, Գ.Գ.Գեորգյանի և այլք), «Մարտի 29-ի Բարսեղի խորհրդակցությունը փաստացի տնիսված էր ճանաչել Խորհրդային Արխագիայի անկախությունը հանգամանքների ճնշման ներքո»¹⁵։ Այս առիթով կարևոր վկայություն է բողի Նեստոր Լակոբյան, Վրաստանի կոմկուսի 4-րդ համագումարի անթիոնից վերհիշելով այդ դեպքերը. «Արխագիայի անկախության հարցը ծագում է 1921թ. և խորհրդայնացումից անմիջապես հետո առաջ է քաշվում իմ և ընկ. Էշթայի կողմից։ Բարսեղում մենք, ընկ. ընկ. Մերզան (Գ.Կ.Օրջոնիկիձեի կուսակցական կեղծանունը – հեղ.) և Էլիավան ասպետուցում էինք, որ նման անկախությունը ներկա պահին անհրաժեշտ է Արխագիայում քրական Խորհրդային իշխանություն տեղի տալու նպատակով, սակայն անհրաժեշտ է որպես ցուցանակ»¹⁶։ Ուրեմն Արխագիայի ներկայացուցիչների նիսնական փաստարկն այն էր, որ Վրաստանից անկախության ճանաչումը համարվ կրեթի նոր իշխանություններին արխագ ժողովրդի շրջանակներում։ 1921թ. կոմունիստական առաջնորդները հմուտ կերպով օգտագործեցին «արխագական խաղաքաբաղը»։ Ստալինը, որպես կովկասյան գործերի պատասխանատու և ազգությունների ժողկոմ, բայթարեց Արխագիայի «անկախության» հռչակումը՝ դրանով շահելով արխագների համակրանքը։ Եթե 1918թ. արխագները մերժում էին Խորհրդային իշխանությունը, ապա 1921թ. բոլշևիկների ձեռքից ստանալով «անկախություն»՝ արխագների մեծամասնության համար նոր իշխանության և անկախության պաշտպանումը ընկալվեց հավասարազոր։ Համապատասխանորեն խորհրդային կարգերի հակառակորդները ընկալվում էին որպես արխագ ժողովրդի թշնամիներ, ինչը արտահայտվեց նաև Վրաստանում 1924թ. հակաբոլշևիկյան ապստամբության ճնշմանը արխագների գործուն մասնակցությամբ։ Ոչ լիարժեք անկախության հռչակումով բոլշևիկները ցանկություն ունեին ստեղծել ավելի լայն իրավունքների տրամադրման պատրաստք, քան Արխագիան ուներ ժողովրդավարական Վրաստանի կազմում 1918-1921թթ. սկիզբին։ Այսպիսով Խորհրդային Ռուսաստանը արխագների պատկերացմամբ դարձավ ազատություն և անկախություն արտոնող երկիր, իսկ Վրաստանը ընկալվում էր որպես Արխագիայի անկախության հակառակորդ։

«Անկախության» հռչակումը քաղաքաբաղում էր նաև խորհրդային իշխանության արտաքին քաղաքական նպատակներով։ Պարտություն կրելով պատերազմում Լեհաստանի դեմ, ինչը նշանակում էր «ժամաչ-խարնային պրոլետարական հեղափոխության» ծրագրերի ծախսում Արևմուտքում, Խորհրդային Ռուսաստանի առաջնորդները հայացքն ուղղեցին դեպի Արևելք, միաժամանակ նշատակ ունենալով տեղի ժողովուրդներին համոզել, թե ինչպես է խորհրդային իշխանությունը հոգում փորձաքննվ ժողովուրդների կարիքները։ Այդ փորձում Լեհիանը պարտերաքար հիշեցնում էր, որ «...լավ է ազգային փոքրամասնությունների

նկատմամբ չափազանցել գիշտականությունում և փափկությունում, քան չչափազանցել»¹⁷: Լենինը ոչ պակաս նախազգուշական էր Վրաստանի նկատմամբ: «...Վրաց ազգի նկատմամբ մենք ունենք տիպիկ օրինակ, երբ անհրաժեշտ է կրկնակի զգուշավորություն, կամխտրականություն և գիշտականություն մեր կողմից»¹⁸, - հիշեցնում է նա:

Արխագիայի Հեղկոնը հիմնվելով Բաբունի որոշման վրա, հռչակեց Արխագիայի ԽՍՀ և այդ մասին 1921թ. մարտի 31-ին ռադիկալիստ դարակեց Լենինին, Ստալինին, Չիչերինին և Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Լեռնային ինքնավարության հեղկոնների նախագահներին¹⁹: Վրացի հեղկոնը դրան արձագանքեց տևական դադարից հետո, ինչը կարելի է գնահատել որպես Բաբունի որոշումների կողմնակիցների և նույնպես կոլյուբների միջև Վրաստանի Կ(ր)Կ Կենտկոմում ներքին պայքարի ծավալման արդյունք: Վերջիններս, որոնք կուսարտոմության մեջ հիշատակվում են որպես «ազգային ուղեմիտներ», դեմ էին արտամայրվում Արխագիայի, Աջարիայի և Հ.Օսիային ինքնավարություն տրամադրելուն²⁰: Այդ հարցում նրանց պաշտպանում էին Վրաստանում դեռևս գոյություն ունեցող քաղաքական այլ կուսակցությունները: Այդ առիթով ծախս ազգիայիստ-ֆեդերալիստների «Տրիբունա» քերթը գրում էր. «Վրաստանում որևէ Հարավ-Օսյա գոյություն չունի, կան միայն վրացիների միջև ապող օտեր: Վրացական օտերի ինքնավարությունն անհեթեթություն է...»²¹: Ժամանակակից վրացական պատմագրությունը փաստաբանում է «ուղեմիտներին», նրանց կոչելով. «...իսկական վրաց հայրենասերներ, որոնք պայքարում էին Վրաստանի իրական անկախության համար, չէին զիջում ոչ մեծապետականներին, ոչ էլ՝ արխագ և օս անջատողականներին»²²:

Միայն 1921թ. մայիսի 14-ին Կ(ր)Կ Վրաստանի Կենտկոմը հատուկ որոշումով հաստատեց Բաբունի պայմանավորվածությունները, միաժամանակ նշելով, որ Արխագիան մնում է ինքնուրույն, մինչև Խորհուրդների իր համագործարք, ուր պետք է վերջնական վճռվեր նրա ապագա դյուրյան հարցը²³: Ի կատարումն կուսակցական մարմնի քաղաքական որոշման Վրացի հեղկոնը, դարձյալ երկար դադարից հետո (ինչը վկայում է քանակների շարունակումը), Արխագիայի աշխատավորները 1-ին համագործարքի ճակաչեմին՝ մայիսի 21-ին կրակադրակում է «Արխագիայի ԽՍՀ-ի անկախության մասին» հռչակագիրը: Հռչակագիրը հրատարակելիս «արխագ ընկերներին» Վրացի հեղկոնի անդամները հավանաբար ստացել էին որոշակի երաշխիքներ: «Երբ մարտին մենք ստանք Սոխուն՝ ասացինք, պետք է կարճ ժամանակահատված, Արխագիայի և Վրաստանի աշխատավորների միջև ազգային հարամանքը վերացնելու համար և պետք է, որ մենք հայտարարենք անկախ ինքնավարություն»²⁴, - նշում է Ն. Լակոբան: Նույն ոգով է արտահայտվում Ե.Էշբան, «... նպատակ ունենալով վերացնել ազգային հարամանքը, որոշվեց գոնե

ժամանակավոր հայտարարել խորհրդային Արխագլխայի անկախությունը»²⁷:

Վրացեիդոմի հռչակագիրը ընթերցվեց Ս. Հավաքումնի կողմից մայիսի 28-ին Արխագլխայի աշխատավորների 1-ն համագումարում, որը և ընդունվեց մեծ ոգևորությամբ: Պատասխան ելույթում Ն.Էշբան քոլոր երիտերն ունեյր մօր իշխանության փաստաբանման համար ասելով. «Ամխանելով լախանմում էին միջիխում շինծու ինքնավարության մասին, սակայն և մոյնիսկ սնամեց ինքնավարության նյունք (խոսքը ներկայացրոցական մարմնի) Արխագլխայի ժողովրդական խորհուրդի մասին է. հեղ.) չէին կարող հասնել (մենչևիկների կառավարությունից-հեղ.)... Եկան քոլչևիկները և պատել Արխագլխան տնի իրական անկախություն»²⁸: Այս առիթով 1921թ. օգոստոսի 12-ին կայացած Կովկասյան երկրամասային կոմսոխորդակցության ժամանակ Գ.Օրցունիկիժեն մշեց. «Երբ Արխագլխան պահանջեց անկախություն, մենք մատնանշեցինք Արխագլխայի կոմունիստներին, որ մնան վուքր պետության անկախությունն անհնար է, սակայն յի վերջո մենք համաձայնվեցինք: Մենք ատացինք, երևե արխագ ժողովուրդը վրացիների նկատմամբ անվտանգությունն է տաժում... քող Արխագլխան լինի անկախ, քող նա քոժի մենչևիկների հասցրած վերջելը, սակայն հետագայում արխագներն իրենք կհամոզվին խորհրդային հարևան Վրաստանի հետ սերտ միավորման անհրաժեշտության մեջ»²⁹:

Արխագլխայի նոր իշխանավորները համոծեցին իշխանության «հաճույքը», որը Ն.Լակորան այսպես է նկարագրում. «Մենք սկզբից քաշվում էինք կոչել մեզ հանրապետության «նախագահներ», ժողկոմներ և այլն, սակայն անցում է մեկ, երկու, երեք օր և ամաչկուտությունը վերանում է...»³⁰: Այս միջերևմզը նկատել էին ժամանակակիցները և այն արտահայտել վրացական «Ասցիախտ-Ֆեդերալիստ» թերթի էջերում տեղ գտած «Արխագլխայի հարցը» հոդվածում. «Այժմ ստեղծվել է հարմար պահ արվարձաններում արտոնյալ մարդկանց համար: Մինչ խորհրդային Վրաստանը գրավված է ներքին կառուցապատմամբ, իրենք... ստեղծում են այնտեղ հանրապետություններ, քանի որ այժմ իշխանիկությունները մոդայիկ չեն...»³¹: Կարճ ժամանակ հետո՝ 1921թ. հուլիսի 5-ին Մտալինի մասնակցությամբ գումարված Ռ-Կ(ք)Կ Կովքյուրդյի պեճնում կայացվեց «ինքնավար հանրապետության ձևով Արխագլխայի և Վրաստանի միավորման ուղղությամբ կուսակցական աշխատանք ծավալելու մասին»³² որոշում: Կովքյուրդյի ճնշման ներքո, հուլիսի 22-ին, Արխագլխայի ղեկավարությունը Բաթումում հրավիրեց Հեղկոմի և Արխագլխայի Ռ-Կ(ք)Կ Կազմքյուրդյի միացյալ նիստ, որին ներկա էր Կովքյուրդյի քարտուղար Հ.Նազարեթյանը: Բացատրական ելույթում նա պարզաբանեց, որ անկախության և ինքնավարության հարցերը կլրատական լուծման պայանգայում օրևե սկզբունքային հակասություններ չունեն³³:

Եվ իրոք՝ երբ իշխանությունը խառնագույնս կենտրոնացվել էր կուսակցության ձեռքում՝ ինքնավարություն, քե խորհրդային «անկախություն» հասկացություններն այլևս կրում էին պայմանական բնույթ: Գտնվեց նաև մեծ ոգևորությամբ հռչակված «անկախությունն» ի շնորհիվ դարձնելու «տնտեսական կենտրոնում», որը և ներկայացվեց Արխագիայի պատասխանատու աշխատակիցների՝ հուլիսի 23-ին նրավիշոված խորհրդակցությանը: Ընդգծվեց, որ «խորհրդակցությունը Վրացիեղկոմի հռչակագիրը այստեղևս համարում է աշխատ Ժողովրդին առավելագույն ինքնավար իրավունքներ լիովին երաշխավորող», որի «լիակատար անկախությունը... անխրակամամալի է, քանի որ ոչ մի փոքրիկ խորհրդային համրապետություն չի կարող գոյատևել անկախ»³²: Հույս հայտնվեց, որ Արխագիայի խորհուրդների առաջիկա համագումարը իր համրաշխությունը կհայտնի Վրացիեղկոմի հռչակագրի սկզբունքներին՝ Վրաստանի հետ դաշնության և տնտեսական մրասնականության կիմքերի վրա:

Վերադաս կուսակցական մարմիններն իրականում հաշվի չէին նստում Արխագիայի անկախ կարգավիճակի հետ: 1921թ. հուլիսին կարգած Կոմկուրոյի պիներումը անհրաժեշտ գտավ. «...ճանաչել կովկասյան համրապետությունների (Վրաստան, Ադրբեջան, Հայաստան) անկախության իրականացումը, պահպանելով գոյություն ունեցող լիակատար կուսակցական հարաբերություններն աշղ երկրների կոմկուսի կենտկոմների և ՌԿԿ ԿԿ-ի միջև...»³³: Այս առյամի նիտներին, Արխագիայի, Գաղստանի և Լեռնային համրապետության ներկայացուցիչները, ի տարբերություն երեք Այսրկովկասյան համրապետությունների, մասնակցում էին խորհրդակցական ժայնի իրավունքով³⁴: 1921թ. օգոստոսի 16-ին ստեղծված «Անդրկովկասի տնտեսական բյուրոյում» Արխագիան, որպես առանձին միավոր, նույնպես չէր ներկայացված³⁵: Այս դրվածքը հաստատում է Ստալինը 1921թ. սեպտեմբերի 1-ին ՀԿԳԿ քարտուղար Ա. Եմեկիձին գրած նամակում, «Արխագիան հանդիտում է անկախ Վրաստանի ինքնավար մաս, որի համար էլ ՌԱՅՍՀ-ում ինքնուրոյն ներկայացուցիչներ չունի և պարտադիր չէ ունենա»³⁶:

1921թ. հոկտեմբերի 15-ի Արխագիայի Կազմբյուրոյի պիներումի և Հեղկոմի ըմդլայնված համատեղ նիտում որոշվեց ձևակերպել Վրաստանի և Արխագիայի կապը պաշտոնական պայմանագրով, որպես երկու միութենական հավասար համրապետությունների³⁷: Այսպիսով Արխագիայի կոմունիստներն ինքնուրոյն փոխեցին վերադաս Կոմբյուրոյի որոշումը «ինքնավարացման» մասին: Այս անհնազանդության դրոյապատճառները պարզ են դարձնում Արխագիայի ղեկավար գործիչների գաղափարը՝ անդամակցել Կովդաշնությանը, չբանցելով Վրաստանը³⁸: 1921թ. նոյեմբերի 14-ով բվագրված նամակում Ե.Էշրան դիմում է Կովկասյան բյուրո, խնդրելով հավանություն տալ Արխագիայի անդամակցությանը

Կովկազնույթյանը որպես յորրորդ համրասպետության³⁷: Այդ գաղափարին կողմնակից էր նաև Ն.Լ.Կելդան, ինչը նա խոստովանեց 1925թ. դեկտեմբերի 25-ին Վրաստանի կոմկուսի 4-րդ համագումարի ամփոփելից³⁸: 1921թ. նոյեմբերի 1-ին վրաց-արխազական հարաբերությունները քննարկվեցին Կովկասյան բյուրոյի նախագահության նիստում և որոշվեց 10 օրվա ժամկետում կազմել երկկողմ սրայնամագրի նախագիծ: Այդ նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ Բ.Լ.Կելդանի նախագահությամբ: Քանի որ արխազական ղեկավարությունը պնդում էր Կովկազնույթյանն առանձին անդամակցելու հարցը, հանձնաժողովի գործունեությանը անարդյունք եղավ և նոյեմբերի 16-ին Կովկասյան բյուրոն կայացրեց պարտադրող որոշում. 1. Անկախ Արխազիայի գոյությունը համարել աննպատակահարմար: 2. Առաջարկել ընկ. Էշրային ներկայացնել իր վերջնական եզրակացությունը Վրաստանի դաշնության կազմում՝ պայմանագրային հիմունքներով Արխազիայի ընդգրկման մասին, կամ ՌԱՅՍՀ-ում՝ ինքնավար մարզի սկզբունքներով³⁹: Առաջին հայացքից այս որոշումն նկատի էր առնում Խորեյսյային Ռուսաստանին անդամակցելու արխազ կոմունիստների սկզբնական ցանկությունը: Սակայն, երբ Արխազիան արդեն հռչակվել էր անկախ, այդ առաջարկը նախատեսում էր իր կարգավիճակի էական խթնում և այստեղ առկա էր նրբամիտ հոգեբանական հաշվարկ: ՌԱՅՍՀ-ի կազմում Արխազիան ստանում էր երկու աստիճան ցածր կարգավիճակ, քան Վրաստանի դաշնությունում: Իրական ընտրության քաջակայության մասին է վկայում Արխազիայի Կազմբյուրոն Վրաստանի Կ(բ)Կ Էնետկոմին կազմակերպչական առումով ենթարկելու մասին Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 24-ի որոշման փաստը⁴⁰:

1918-1921թթ. վրաց հասարակական կարծիքը ընտելացավ Արխազիան Վրաստանի անբաժանելի մասը համարելու մտքին: «Անկախ Արխազիան, որի բնակչության մեծ մասը կազմում են վրացիները՝ անընդունելի է և տեղիված է լիովին այլ նպատակներով, որին տեղաբնիկ վրացիները երբեք չեն ընտելանա: Սակայն մինչև այս հարցի վերջնական լուծումը անհրաժեշտ է, որ Վրաստանի Հեղկոմը... նշանակի Արխազիայում Ներկայացուցիչ, որը կպահպանի... վրացիների շահերը»⁴¹, - գրում էր վրացական մամուլը: Վրաց կոմունիստները չէին կարող հաշվի չառնել այս տեսակետները, առավել ևս իրենցից ոճանք տողորված էին այդ տրամադրություններով: Քանի որ Արխազիան այդպես հայտարարված էր անկախ համրասպետություն, Վրաստանի «տաքածքային ամբողջականությունը» պահպանելու նպատակով, վրաց ղեկավարների սթափ մտածող մասը չսակարկեց ինքնավարության պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ և համաձայնություն տվեց «պայմանագրային հանրապետությանը», որպես փոխզիջումային տարրերակի:

1921թ. դեկտեմբերի 16-ին Արխագիայի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչները (Ն.Ակիրտալա, Ս.Կառտազիա, Ս.Քավթարաձե) կնքեցին մյուսեմակամ դաշնագիր, որի առաջին հոդվածն ամրագրում էր, որ վերոնշյալ համրապետությունների կազմում են միմյանց հետ ռազմական, քաղաքական և տնտեսաֆինանսական դաշինք⁴⁴։ Տեղի անցնելով Արխագիայի դեկադայության շրջադարձից դեպի Վրաստանի հետ մշտությունը։ Այդ է վկայում 1922թ. հունվարին Վրաստանի կառավարիչ առաջին համագումարում Ե.Էշրայի կոչոթը։ «Մենք ոչ մի թույլ չէինք դադարում քաղաքի ընդդեմ աշտակաի անկախությանը և քաղաքական արյունըրը ակնհայտ է»⁴⁵, - հայտադարեց նա։

Արխագիայի հորհուրդների առաջին համագումարը, որի անհրաժեշտության մասին խոսում էին խորհրդայնացման առաջին իսկ օրից, գումարվեց 1922թ. փետրվարի 12-17-ը։ «Անդրկովկասի համրապետությունների դաշնության մասին» զեկույցով հանդես եկավ Ն.Լակոբան. «...հորհրդային իշխանության գարսիադի պահպանման նպատակով մանր ազգությունների շրջանակներում՝ ինչպես օրինակ արխագիականի, անհրաժեշտ էր մեկ թույլով Արխագիան հայտադարել անկախ հանրապետություն...»⁴⁶, - նշեց նա։ Երբ համագումարում հրապարակվեցին Վրաստանի հետ մյուսեմակամ դաշնագրի դրույթները պատվիրակների որոշ մասը քաթրամայն բողոքեց։ Ն.Լակոբան ստիպված էր արդարանալ և հակաճառել. «Արխագիայի անկախությունը Վրաստանը չի խլում...»⁴⁷։ Ինչ անկախության մասին էր խոսքը, եթե, իր իսկ րառերով, այն ինչակված էր մեկ թույլով։ Պատվիրակներին զատախություն մերչնչեղո նպատակով նա երաշխիքներ տվեց. «Եթե Վրաստանը սկսելու է խել, մենք բողոքարկելու ենք հեղափոխության շտարին» ԳԿԿ, ՀԿԿ, ընկ. Լ.Ենինին։ Արխագիայի աշխատավորների անկախությունը ոչ ոք չի կարողանա խել, քանի դեռ գոյություն մնի խորհրդային իշխանությունը»⁴⁸։ Համագումարը ընդունեց որոշում՝ «Անդրկովկասի համրապետությունների դաշնության և ԽՍՀ Արխագիայի և ԽՍՀ Վրաստանի դաշնության մասին», որի երրույ կետով առաքարկվեց Արխագիայի ԿԿԿ-ին մշակել նոր դաշնագիր այն կիմունքներով, ինչպիսին է Անդրկովկասի համրապետությունների մյուսեմակամ դաշնագիրը⁴⁹։ Չնայած համագումարը չհաստատեց 1921թ. դեկտեմբերի 16-ի դաշնագիրը, Վրաստանի Կ(ր)Կ Կենտկոմի նախագահությունը 1922թ. փետրվարի 27-ին որոշեց Արխագիային տրամադրել 3 տեղ համրապետական ԿԿԿ-ում, միաժամանակ այն որակելով «ինքնավար համրապետություն»⁵⁰։ Կուսեկափադությունը հավանություն տվեց 1922թ. մարտի 2-ին ընդունված Վրաստանի ԽՍՀ սահմանադրության առաջին հոդվածի հավելվածին, որտեղ Արխագիան հայտադարվում էր «միավորված» Վրաստանի հետ, ի տարբերություն Աբախայի և Հ. Օսիայի, որոնք մտնում են նրա կազմի մեջ⁵¹։ Սակայն այդ տարբերությունը ոմեք ձևական քնույր։ Դեռևս 1921թ.

սեպտեմբերի 10-ին Արխագլոսյի Կազմբյուրոյի քարտուղար Ն.Ավանի-
ձե՛ն գրած էր Կոմբյուրո. «Խորհրդային Արխագլոսն իր տարածքով հա-
վասար է Ռուսաստանի գավառին... Այնինչ ձևական նկատառումներով
Արխագլոսն հանդիսանում է ինքնուրույն հանրապետություն»⁵²:

Արխագլոսյի կարգավիճակը վերջնականորեն պետք է որոշվեր նրա
սահմանադրությամբ, որի ստեղծման աշխատանքները ակավեցին 1922թ.
Նրա տեքստի ձևավորումը ձգձգվեց սուր հակամարտության պատճա-
ռով, որն առաջացավ Վրաստանի Կ(ր)Կ Կենտկոմի և ՌԿԿ Անդրերկր-
կանի միջև՝ Անդրկովկասի հանրապետությունների դաշնության հարցի
շուրջը: Վրաց «ուկրոնիստները», որոնք Կենտկոմում մեծամասնություն
էին կազմում, տնտեսական զարգացման մակարդակների տարբերու-
թյան պատճառով գտնում էին այդ դաշինքը ոչ մարտականաբար: Դեկ-
տեմբերի 10-ին Բարձրում կայացած Անդրկովկասի Խորհուրդների առա-
ջին համագումարը իրականացրեց ԱՍՖՍՀ, իսկ դեկտեմբերի 30-ին Մոսկվա-
յում ստեղծվեց ԽՍՀՄ-ը, որի կիմնադիր անդամներն էին խորհրդային
ազգային պետականության քարձրագույն աստիճան կրողները՝ միութե-
նական հանրապետությունները, և որանց հետևում էին նրանց կազմում
գտնվողները՝ ինքնավար ԽՍՀ, ինքնավար մարզ և աշխատանքային կո-
մունա: Այդ համապատասխանի հակասում էր Արխագլոսյի կարգավիճա-
կը: Ռինենալով ԽՍՀ կարգավիճակ, նա հանդիսանում էր միաժամանակ
և «միութենական», և՛ քե «միավորված» Վրաստանի հետ: Այսպիսի յու-
րանառակ իրավիճակը չէր շփոթեցնում Արխագլոսյի դեկավարներին:
Եղույք ունենալով 1922թ. մայիսին կայացած 2-րդ մարզային կուսկոնֆե-
րանսում, Ն.Լակոբան ասաց. «...Մենք պետք է ասենք, որ այդ քաղաքա-
կան տեսակները՝ անկախության իրականացումը և այլն, քաղաքացիք է,
նրանով որապարով պետք չէր... մեզ պետք էր ցուցանակ, և մենք կախե-
ցինք, սակայն խոնարհվել նրա առջև պետք չէ»⁵³: ԽՍՀՄ-ի ստեղծումից
հետո խառնաչափորը վերջնականորեն չուղղահարվեց: 1923թ. եղույք ու-
նենալով Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների 2-րդ -
Խոսնագումարում, Շ.Էլիաովան չկարողացավ ճշշտ գնահատել Արխա-
գլոսյի, Աջարխայի և Հարավային Օսիայի իրավական կարգավիճակը,
վերջինս անվանելով հանրապետություն, այն դեպքում երբ այն ինքնա-
վար մարզ էր⁵⁴: Իսկ 2-րդ մարզային կուսկոնֆերանսում Արխագլոսյի
կարգավիճակի վերաբերյալ Ն.Լակոբան ասում էր. «Մենք ինքնիշխան
պետություն ենք, ճիշտ է խարնդային, քայց՝ անկախ»⁵⁵: Ինչպես երևում
է՝ նասկացությունների կատարյալ խառնաչափոր: 1924թ. ԽՍՀՄ-ի առա-
ջին սահմանադրության 15-րդ հոդվածում Արխագլոսն հիշատակվում է
որպես ինքնավար հանրապետություն⁵⁶: Այս իրավիճակում Արխագլոսյի
սահմանադրության նախագիծ կազմողները չէին կարող կողմնորոշվել
նրա կարգավիճակի ճիշտ գնահատման գործում: Բացասական ազդե-

ցություն ունեցալ մաւ, Վրաստանում ազգային կարգի շտրթը ծավալված բանավեճը:

1923թ. մարտին կայացած Վրաստանի կոմկուսի 2-րդ համագումարի ամբիոսինքն ենչեցին Արխազիայի տնտեսական շրջադիակման կոչեր: Գրգռվածության պատճառը այն էր, որ Արխազիայի պաշտոնական մարմինները չէին ընդունել որևէ վաստաբառ, որը իրավականորեն վավերացներ կապը Վրաստանի հետ⁵⁷: Վրաստանում ստեղծված իրավիճակով խիստ դժգոհ էին Մոսկվայում: Այս կապակցությամբ, 1923թ. ապրիլին կայացած ՌԿԿ 12-րդ համագումարում տնեցած կոյրյուն Ստալինն ասաց. «Վերցնենք Վրաստանը: Այստեղ առկա է 30 % ոչ վրացական բնակչություն... Վրաց կոմունիստների որոշ մասում ծնվել է գաղափար՝ այնքան էլ հաշվի չնստել այդ մասը ազգություններէ հետ... Դա շովինիզմ է, վնասակար և վտանգավոր շովինիզմ, որովհետև մա կայտղ է փոքր վրացական հանրապետությունը վերածել զգվտոցի ասպարեզի: Այնուամենայնիվ մա այդին վերածել է իրեն զգվտոցի ասպարեզի...»⁵⁸: Այս կտրուկ գնահատականը բնորոշում է Վրաստանում ստեղծված իրավիճակը: Այդ պայմաններում հասկանալի է դառնում Արխազիայի դեկալբարության զգուշավորությունը Վրաստանի հետ որևէ իրավական կապերի ստեղծման գործում: Գ.Օրջոնիկիժն 1923թ. դեկտեմբերի 21-ին Անդրկովկասի Խորհուրդների 2-րդ համագումարում ստիպված էր հանգատացնել. «Արխազիան հիմա ինքնուրույն հանրապետություն է... ով ոգում է դարձյալ վերածել նրան որևէ մեկի գաղութի, կտտա մա ձեռքերին»⁵⁹:

1923թ. նոյեմբի 26-ին Արխազիայի ԿԳԿ-ի նախագահությունը որոշեց որպես հիմք ընդունել Վրաստանի գործող սահմանադրությունը⁶⁰. Եսկ 1925թ. ապրիլի 1-ին Արխազիայի Խորհուրդների համագումարին ներկայացվեց առաջին սահմանադրության մայտագիծը: 5-րդ հոդվածը հռչակում էր Արխազիայի ԽՍՀ ինքնիշխան պետություն և դուրս գալու ազատ իրավունք էր վերապահում ԱՄՖԱՀ և ԽՍՀՄ-ից: Այս դրույրը խիստ հակառում էր վերը նշված կառույցների սահմանադրություններին: Հետազոտողների միջև կան տարածայնություններ ԽՍՀ Արխազիայի 1925թ. Սահմանադրության օրինական լինելու մասին: Հիմք ընդունելով «3-րդ Համաարխազական Խորհուրդների համագումարի տեղեկագիրը», ուր հայտնվում է Վրաստանի ԽՍՀ և ԱՄՖԱՀ-ի սահմանադրությունների հետ համաձայնեցման մպատակով համագումարին ներկայացված մախագծի վերաշակման որոշման մասին⁶¹, մի շարք վրաց պատմաբաններ (Մ.Լոյրքիվանիժն, Ա.Սորգոլյաժն, Է.Խոշտաբիա-Բրոսսն, Լ.Յոնիժն, Գ.Գոգասժն և այլք) պնդում են, որ այսպես կոչված «1925թ. Սահմանադրությունը» մնաց որպես նախագիծ⁶²: Արխազ պատմաբան Բ.Սազարիան և վրաց գիտնականներ Գ.Գամախարիան, Բ.Գոգիան հաստատում են Սահմանադրության ընդունման վաստը 3-

յոյ համագումարում⁶¹։ Սակայն դրա տեքստը չէր հրատարակվել և իրավական կարգավիճակ չի ստացել⁶²։ 1925թ. սեպտեմբերի 6-ին ՀԼ(Կ)Կ Անդրերկրկոմը անհրաժեշտ համարեց սահմանադրոքին ձևակերպել հարաբերությունները Վրաստանի և Արխագիայի միջև, միաժամանակ վերանայելով ԽՍՀ Արխագիայի Սահմանադրությունը⁶³։ Արդեն սեպտեմբերի 11-ին այս որոշումը քննարկեց Արխագիայի մարզկոմի նախագահությունը և որոշեց ստեղծել հանձնաժողով Ե.Լակոբայի գլխավորությամբ։ Հոկտեմբերի 27-ին ուղղումներով նախագիծը հաստատվեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմի Քարտուղատրության կողմից, որը հանձնարարեց Արխագիայի ԿԳԿ-ն ընդունել այն սահմանված կարգով։ 1925թ. դեկտեմբերի 2-ին ելույթ ունենալով Վրաստանի կոմկուսի 4-դ համագումարում, Ե.Լակոբան խոստովանեց սահմանադրության ընդունման հարցում 1925թ. ապրիլին բռյլ տված «վրիպումը», անվանակոչելով այն «հիմարություն»⁶⁴։ Թե ինչու նա ընտրեց ինքնաքննադատության ճանապարհը գուցե բազատում են Վրաստանի Կենտկոմի քարտուղար Մ.Կախիսանո խոսքերը, որոնք մեջբերում է Ե.Լակոբան, «Արխագիան իրենից մերկայացնում է բազմազգ հանրապետություն, ընդդրում այս հանրապետության առանձին մասերը լավ չեն ընտելացել միմյանց։ Արխագիայի իրական անկախության և Վրաստանից հեռանալու մասին հարցադրումը կրելի Արխագիայի փլուզմանը ինչպես խաղաքարտերից կառուցած տնակի»⁶⁵։ Եւրյն համագումարում Օրթոնիկիձնն Արխագիան անվանելով ինքնավար, միաժամանակ և ակնարկեց նրա նպատակահարմարությունը արխագների փոքրաթիվ լինելու պատճառաբանությամբ⁶⁶։ Այդ հարցին անդրադառնում է Ֆ.Մախարաձեն՝ «Սոխումում ՎրացԿԳԿ-ի նստաշրջանի կենտրոնական հարցը» հոդվածում («Սովետական Արխագիա», 1926թ. 16 հունիսի), որտեղ նա գրում է. «... Հիմնական արխագ ազգությունը ներկա պարագայում կազմում է փոքրամասնություն երկրում։ Մեզ կարող են հարցնել, ինչու՞ է պետք Արխագական հանրապետությունը։ Լավ չի՞ լինի այն վերացնել միանգամայն»⁶⁷։ Սահմանադրական փոխհարաբերությունների վերջնական հստակեցման նպատակով 1926թ. հունիսի 11-ն Սոխումում գումարվեց Վրաստանի ԿԳԿ-ի նստաշրջանը, որը հաստատեց Վրաստանի ԽՍՀ նոր Սահմանադրությունը։ Երա 5-րդ գլուխը նվիրված էր Արխագիային, որը ինչպես ինքնավար Աջարիան, այդուհետև մտնում էր Վրաստանի կազմի մեջ։ Վրաստանի ԿԳԿ-ի նստաշրջանի հանձնաքարտությամբ Արխագիայի ԿԳԿ վերանշակեց 1925թ. Սահմանադրության նախագիծը և իր նստաշրջանին՝ 1926 թ. հոկտեմբերի 27-ին, հաստատեց նոր տեքստը, որը հրատարակվեց։ Սահմանադրության վերջնական հաստատումը տեղի ունեցավ 1927թ. մարտի 7-ին Արխագիայի Խորհուրդների 4-րդ համագումարում⁶⁸։

1920-ական թթ. վերջերին ԽՍՀՄ-ում ապրեն ձևավորվել էր ազգային պետական կառույցների հիերարխիա, որտեղ «սոցիալականության համարապետություն» հասկացությունը առանձնացված էր: Գաղափարական պահի հարկադրական պահանջ դարձավ ինի բերելու Վրաստանի և Արխագլայի իրավական հայրասիրությունները, այն համաձայնեցնելով ձևավորված իրականությանը և ԽՍՀՄ-ում իրականացվող պետական շինարարության քաղաքականությանը: Դեռևս Վրաստանի կոմկուսի 6-րդ համագումարում 1929թ. նոյեմի 4-ին Ն. Լակոբան հայտարարեց. «Արխագլայի և Վրաստանի փոխհարաբերությունների հարցը ձևակերպված է այնպես, որ Արխագլայն առիպված կլինի որպես փոփոխություն կատարել իր Մանձանաղությունում...»⁷¹: Նույն ժամանակ Արխագլայի Ժողկոմխորհրդում կազմված տեղեկանքում նշված է «որ 1921թ. դեկտեմբերի 16-ի դաշմագիրը ...կարգել է իրական նշանակությունը...կարող է դիտվել միայն որպես սոցիալականացվող ԽՍՀ Վրաստանին ԽՍՀ Արխագլայի միավորման, որ սոցիալականությանին ԽՍՀ Արխագլայ անվանումը չունի իրական բովանդակություն»⁷²: 1930թ. ապրիլին Արխագլայի ԿԳԿ-ի նստաշրջանը որոշում կայացրեց վնասեցնել «սոցիալականության համարապետություն» հասկացությունը մանձանաղությունից, փոխարինելով այն «ինքնավար հանրապետություն» անվանակոչումով: 1931թ. փետրվարի 11-ին Արխագլայի Խորհուրդների 6-րդ համագումարը, իսկ մույն ամսվա 19-ին՝ Վրաստանի Խորհուրդների 6-րդ համագումարը նաստատեցին այդ որոշումը⁷³:

Եթե ընդունենք միայն ձևական իրավական կոյճը, անշուշտ Արխագլայի կարգավիճակի փոփոխումը կարելի է դիտել որպես նվազեցում: Մակայն նա «ինքնավար» դիտվում էր դեռևս 1921թ.-ից, մյուս կողմից, սակայն, հանրապետության կարգավիճակությունը չիտխեց նրա իշխանավարների իրական դերն ու լիազորությունները: Արխագլայի ինքնավար հանրապետությունը, շնորհիվ նրա ԿԳԿ-ի նախագահ Ն.Խատր Լակոբայի հեղինակաբայանը և մտերմությանը Մտալինին, իրականում օգտվում էր միտրենական հանրապետության կարգավիճակին քննույթ «բարիքներից»⁷⁴: Մյուսամասնակ Արխագլայն չէր համապատասխանում նաև մի շարք այլ պահանջների (տարածքը, քնակության քիվը և այլն) միտրենական հանրապետության իրական կարգավիճակ ստանալու համար: Այսպիսով 1931թ. տևական քաշքշուկից հետո, Արխագլայի համար զանվեց կարգավիճակի մի տարբերակ, որը կարծես պետք է գերակետ դնեք այդ նաքում:

DEFINITION OF THE ABKHAZIA'S STATUS BY THE SOVIET STATEHOOD (1921-1931)

The study of the condition of Abkhazia in soviet state period have an importance in the context of the modern relationships between georgians and abkhazians. After sovietization of Georgia, before the formation of the USSR, communist leaders of Soviet Abkhazia seek for the status of independence, which formally was given from central communist bodies. During the formation the federation of south Caucasus republics, Abkhazia was included Soviet Republic of Georgia based on an alliance agreement. Higher state and party bodies of the USSR regarded Abkhazia as autonomy region, but it was called agreement republic, such concessions were made, because the great part of abkhaz nationality didn't want to be under the administrative patronage of Georgia. The status of agreement republic of Abkhazia in 1922-1930 had the same formal character, as the independence in 1921. In 1931 Abkhazia was transformed into an autonomy republic in Georgia SSR as the USSR hadn't the analogy of agreement republic.

BIBLIOGRAPHY

1. Д.Стура, Сепаратистское движение в Абхазии в 60-е и 70-е годы нашего столетия, Тб., 1995, с. 59, იაშ' იაშ' А.Ментешашвили, Окупация и фактическая аннексия Грузии, Тб., 1990.
2. Шу' Г.Дандария, "Кнараз" (Об Абхазской революционной крестьянской дружине 1917-1921 гг.), Сух., 1981; იაქიძე Роль Советов и "Кнараза" в истории революционной борьбы в Абхазии 1917-1921 гг., Сух., 1971.
3. А.Ментешашвили, Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии (1917-1921) Тб., 1987, с. 189.
4. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925). Сборник док. и мат. Составитель А.О.Тулумджян, Сух., 1957, с. 14-15.
5. Образование СССР, сборник док., М., 1972, с.172.
6. Революционные комитеты Абхазии в борьбе за установление и упрочение Советской власти (февраль 1921-февраль 1922), сб. док., Сух., 1961, с. 27.
7. Революционные комитеты Грузии, сб. док. и мат., Сух., 1963, с. 78.
8. Б.Сагария, Национально-государственное строительство в Абхазии (1921-1931 гг.), Сух., 1979, с. 25.
9. Б.Сагария, Образование и укрепление советской национальной государственности в Абхазии (1921-1938 гг.), Сух. 1981, с. 41-42.
10. Б.Сагария, Образование и укрепление..., с.44.
11. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 189.
12. Г.К.Орджоникидзе, Статьи и речи, М., 1956, т.1, с.199-200.
13. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 189.
14. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925), с. 27.

15. По поводу искажения грузино-абхазских взаимоотношений, Тб., 1991, с. 85.
16. Н.А.Лакоба, Статьи и речи, сост. А.О.Тулумджян, Сух., 1987, с.176.
17. В.И.Ленин, Полное собрание сочинений, т. 45, с. 360.
18. Там же, т. 45, с. 359-360.
19. История Абхазской АССР 1917-1937, Сух., 1983, с. 101.
20. Очерки истории Коммунистической партии Грузии, Тб., 1971, с. 428.
21. "Трибуна"(27.09.1921), մար. լսլ Ա.Մենտեշավիլի, Октябрьская революция..., с.198.
22. Д.Стурук, նշ. աշխ, էջ 58.
23. Քաղաքական կուսակցությունների արխիվ (Թրիվիտի). ֆ. 14, ց. 1, գ. 11, ք. 22.
24. Н.А.Лакоба, նշ. աշխ, էջ 34.
25. Съезды Советов Абхазии (1922-1923 гг.), сборник док. и мат., Сух., 1959, с. 92, док. N 29.
26. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925), с. 44-45.
27. Г.К.Орджоникидзе, նշ. աշխ, էջ 200-201.
28. Н.А.Лакоба, նշ. աշխ, էջ 176.
29. Д.Гамсахария, Б.Гогна, Абхазия-историческая область Грузии с древнейших времен до 30-х годов 20 века, Тб., 1997, с. 477, док. N 267.
30. А.Ментешавили, Октябрьская революция..., с. 192.
31. Б.Сагария, Образование и укрепление..., с. 47-48; Г.П.Лекава, Между Грузией и Россией: исторические корни и современные факторы абхазо-грузинского конфликта XIX — XX веках, М., 1997, с. 101.
32. Б.Сагария, Образование и укрепление..., с. 48-49.
33. Քաղաքական կուսակցությունների արխիվ (Թ. Թրիվիտի). ֆ. 14, ց. 1, գ. 37, ք. 180, մար. լսլ ԲԻՐԻ "Свободная Грузия", N 115(28.06.1991).
34. "Свободная Грузия", N 115(28.06.1991).
35. Там же.
36. История Абхазии, Гуддута 1993, с. 329; А.Ментешавили, Октябрьская революция..., с.192; В.А.Шнирельман, Война памяти: мифы, идентичность и политика в Закавказье, М., 2003, с. 267.
37. Б.Сагария, Образование и укрепление..., с.50
38. История Абхазской АССР..., с.105, նաև նուս' Б.Сагария, Образование и укрепление..., с. 51.
39. Դ.Գամսխիարիա, Վրաց-արխագական իարարությունների ցանկություն-նից, Թր., 1991, (վրաց. լիգ.), էջ 125, նաև նուս' "Свободная Грузия", N 115(28.06.1991), նաև История Абхазии..., с.330.
40. Н.А.Лакоба, նշ. աշխ, էջ 177.
41. Б.Сагария, Образование и укрепление..., с.51, նաև նուս' История Абхазии..., с.330.
42. Б.Сагария, Образование и укрепление..., с.51.
43. "Социалист-Федералисти", (23.07.1921), մար. լսլ Д.Гамсахария, Б.Гогна, Абхазия-историческая..., с. 476, док. N 265.
44. По поводу искажения..., с. 90.
45. Б.Сагария, Образование и укрепление..., с.56.

46. Там же, с. 54.
47. Там же, с. 58-59.
48. Sbu "Международное право", N 4, 1999, с. 253-266.
49. Съезды Советов Советских Социалистических Республик (1917-1922 гг.), сборник док., М., 1960, т. 2, с. 461.
50. *Բնութիւնը և զարգացումը արխիվ (ը. Թրքիսի)*, ֆ. 14, ց. 1, գ. 192, թ. 215.
51. По поводу искажения..., с. 92.
52. *Ղ.Ղանխարիա, Վրաց-արխիվական...*, էջ 118, նաև տես՝ "Свободная Грузия", N 115 (28.06.1991).
53. *Ղ.Ղանխարիա, Վրաց-արխիվական...*, էջ 118.
54. Б.Сагария, Образование и укрепление..., с. 131.
55. *Ղ.Ղանխարիա, Վրաց-արխիվական...*, էջ 113.
56. История советской Конституции (1917-1956), М., 1957, с. 463.
57. Б.Сагария, Образование и укрепление..., с. 56.
58. И.В.Сталин, Сочинения, т. 5, с. 249-250.
59. Б.Сагария, Образование и укрепление..., с.59.
60. Там же, с. 121.
61. Съезды Советов союзных и автономных советских социалистических республик Закавказья, сборник док. (1923-1937), т. 6, М., 1964, с. 673.
62. По поводу искажения..., с. 93, նաև տես՝ Исторические и политико-правовые аспекты конфликта в Абхазии, Тб., 1995, с. 54, նաև Этнополитические конфликты в Закавказье, США, Мериленд, 1997, с. 133.
63. Б.Сагария, Образование и укрепление... с. 121-123, նաև տես՝ Д.Гамахария, Б.Гогна, նշվ. աշխ. էջ 122, նաև История Абхазской АССР ... с. 196-197.
64. По поводу искажения..., с. 93 նաև Д.Гамахария, Б.Гогна, նշվ. աշխ. էջ 123.
65. История Абхазской АССР..., с. 197, նաև Д.Гамахария, Б.Гогна, նշվ. աշխ. էջ 123.
66. Н.А.Лакоба, նշվ. աշխ. էջ 177-178.
67. Там же.
68. Б.Сагария, Образование и укрепление..., с. 10.
69. Там же.
70. История Абхазской АССР., с. 199-200.
71. Н.А.Лакоба, նշվ. աշխ. էջ 277.
72. История Абхазской АССР..., с. 250.
73. Там же, с. 338.
74. С.З.Лакоба, Очерки политической истории Абхазии, Сух., 1990, с. 118; В.А.Шнирельман, նշվ. աշխ. էջ 267: Վերջինս, հղելով Ստալինյան Լավոտայի աշխատությունը, համոզված գրում է թե. «Желая закрепить это положение, в последние годы жизни [Нестор] Лакоба неоднократно ставил перед Сталиным вопрос о включении Абхазской АССР в состав РСФСР» (նույն տեղում, էջ 267). Այդ պնդումը, սակայն, չի հիմնավորված վավերագրորեն և Ս. Լավոտայի աշխատության մեջ ներկայացված է հետագայում գրատված նույնի հիմն վրա (տես С.З.Лакоба, Очерки ..., էջ 123):

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՇՄՐ ԱԼ-ԱՍԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՄԱՍԻՆ (2000- 2004 թթ.)

2000թ. հուլիսի 12-ին նախնականորև համընթացի ժամանակ առանալով քվեարկության մասնակիցների ձայների 97,29 %-ը, Սիրիայի Արաքական Հանրապետության /ՄԱՀ/ նախագահ ընտրվեց Բաշար ալ-Ասադը՝

Սիրիան, որի ներքաղաքական կյանքը 1971 թ.-ից անփոփոխ լինում էր գրեթե նույն տրամաբանությամբ և առանց սրևե զգալի ցնցումների /քաղաքությամբ 1979-82 թթ. «Մանհեղական եղբայրներ» կազմակերպության հակակառավարական գործադուլությունների/ կամ նորամուտությունների, հայտնվեց կտրուկ փոփոխությունների մի շրջանում:

Բաշար ալ-Ասադի իշխանության գալն ինքնին մեծ սպասելիքներ առաջացրեց: Այնպես չէր, որ արևմտյան կրթություն առացած երիտասարդ նախագահը կձեռնարկի սիրիական հասարակությունը վերափոխելու մի շարք քայլեր²: Այս հայտերի առկապության դարձավ Բաշար ալ-Ասադի նախագահի պաշտոնում առաջին ելույթը, որում նա Սիրիայի դերի, Իսրայելի, Լիբանանի և արաբական աշխարհի հետ հարաբերությունների հետ ժեկտեղ առանձնահատուկ շեշտեց ներքաղաքական և վաղաչկան արձատրական բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչպես նաև մատնանշեց ներքին քաղաքական զարգացման երկու հիմնական ուղղությունները՝ տնտեսական ազատականացումը և պետության արդյունավետացումը: Կոչ անելով իրականացնել ներքին բարեփոխումներ՝ նոր նախագահն ընդգծեց գոյություն ունեցող հասարակական ինստիտուտների բարելավման, քաջ և կատարողական քննադատության անհրաժեշտությունը³:

Այս ապառամներն ինչ-որ չափով արդարացան, սակայն ոչ ամբողջովին: Նրանք ովքեր ակնկալում էին կտրուկ փոփոխություններ, նույնիսկ նյասրափոխություն ապրեցին: Իրականում արագ էր, որ սկզբնական շրջանում, մինչև իր դիրքերի ամրապնդելը, Բաշար ալ-Ասադը խոսա-

փելու էր արագ հաջողության նասնելու մտքից: Բարեփոխումների քայլ առ քայլ իրականացումը հնարավորինս թույլ կտար խոստովել հակառակորդների հակաքայքերից⁴: Պատահական չէ, որ նախածեռնվող փոփոխությունները կրում էին երկարաժամկետ քնույր և իրականացվում էին մեծ զգուշավորությամբ: Հետաքրքիր է, որ շատերը նրա այս քայլերը նմանեցնում են իր հոր իշխանության գալու առաջին շրջանի քաղաքականության հետ:

Աստիճանական փոփոխություններն ինչ-որ չափով համահունչ էին հասարակական տրամադրություններին: Մի կողմից հասարակությունը բարենորոգումների սլահանց ուներ, սակայն մյուս կողմից՝ գլխակցում էր կայունության սլահանցնան կարևորությունը, ինչը թույլ կտար խոստովել մի իրավիճակից, որ ստեղծվել էր ՍՍՀ անկախության ձեռք բերումից հետո, երբ հեղափոխություններն ու հեղաշրջումները ավտոակամ երևույթ էին դարձել նրկրի քաղաքական կյանքում:

Նախագահ քննդվելուց հետո Բաշար ալ-Ասադի առաջին որոշմամբ արգելվեց իր և հոր սլատկերներով սլաստառնել փակցնելը⁵: Սա յուրատեսակ «ճլակուրային հեղափոխություն» էր սիրիական հասարակության համար, երև հաշվի առննք այն փաստը, որ նախկինում այդ սլատկերները սիրիական քաղաքների և քնակավայրերի անքածանելի և սվտրական մասն էին կազմում⁶: Սրանով, քվում էր քե ակնարկվում էր սվտորիտարից դնալի ժողովրդավարական համակարգ անցում կատարելու նրա վճռակամությունը:

Բաշար ալ-Ասադը շարունակեց նաև դեռևս իր հոր կողմից սկսած համաներժամ քաղաքականությունը: Տարրեր սվալաներով՝ 2000 թ. սեպտեմբերին Միրիայի քանտերում կային մոտ 1300 քաղրամտարկյալներ⁷: Նույն քվականի նոյեմբերին Բաշար ալ-Ասադի հայտարարած համաներժամ շնորհիվ քանտերից ազատ արժակվեցին 600 քաղրամտարկյալներ, հիմնականում իսլամականներ և կոմունիստներ, ինչը հասարակության և միջազգային կազմակերպությունների կողմից դիտվեց իրրև առաջին քայլ քաղաքացիական հասարակության ձևավորման և երկրի ժողովրդակամացման ուղղությամբ:

Կարևոր բարեփոխումներ նախածեռնվեցին հենց իշխանական համակարգի ներսում, Բաաս կուսակցության և Ազգային Առաջադիմական Դնալատի⁸ /ԱԱԴ/ շրջանակներում:

Ձգալիորեն երիտասարդացվեց Բաասի դեկավարությունը: 2000 թ. մայիսին Բաասի Տարածաշրջանային համագումարի սլատզամավորների նախնական ընտրությունների արդյունքում, համագումարի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն ստացան 200 նոր երիտասարդ քասականներ, որոնց մեծամասնությունը Բաշար ալ-Ասադի կողմնակիցներն էին⁹: Հունիսի 17-19-ի համագումարում Բաասի կենտրոնի կազմը նույնացվեց 70 %-ով (90 անդամից 62-ը առաջին անգամ էին

ընդգրկվում նրա կազմում), ավելի քան կեսով նորագվեց Տարածաշրջանային ղեկավարության կազմը (21-ից 12-ը նոր անդամներ էին)¹⁰:

Ղեկավարության շրջանում կատարած փոփոխությունները մարտակ ունեին նաև աշխուժացնել Քառս կուսակցության ամենօրյա գործունեությունը, փոխելով աշխատանքի մեթոդները, որոնց կիրառման արդյունքում վերջին տարիներին խիստ բուլացել էր կուսակցության կապը հասարակության հետ:

Այսպես, 2000 թ. կայացած Քառս Տարածաշրջանային ղեկավարության նիստում որոշվեց հրաժարվել կուսակցությունում պաշտոնների նշանակումների համակարգից և 2001 թ. հունվարի 20-ին անցկացնել կուսակցական ընտրություններ: Նիստի ժամանակ Քաչար ալ-Ասադը նույնիսկ ակնարկեց, որ կցանկանար հաջորդ 2007 թ. ընտրություններն անցկացնել այլընտրանքային սկզբունքներով:

Մի շարք փոփոխություններ կատարվեցին նաև Ազգային Առաջադիմական ճակատում /ԱԱԾ/:

Ստեղծման առաջին տարիներից, ԱԱԾ-ի ելմանադիր փաստաթղթում Ազգային խարսխայում հատուկ նշվում էր Դեակատում Քառսի ատանձմանատուկ ղեքը: Այն միակն էր ԱԱԾ անդամ կուսակցություններից, որն իրավունք ուներ սեփական բերքը հրատարակել և հատարակական ինստիտուտներում քաղաքական աշխատանք իրականացնել: Քաչար ալ-Ասադի իշխանության գալուց հետո այս մեծաշնորհը, որոշակիորեն մեղմացվեց: ԱԱԾ անդամ 6 կուսակցություններից երեքին թույլատրվեց հրատարակել սեփական բերքեր և 2001 թ. հունվարին լույս տեսավ ՄԿԿ-ի կողմից հրատարակվող «Նիշալ ալ-Շասար» բերքը¹¹: 2002 թ. փետրվարից ԱԱԾ-ի Կոնոնաղդության 9 հոդվածի փոփոխության արդյունքում¹² ԱԱԾ-ի անդամ բոլոր կուսակցություններն իրավունք ստացան գործել երիտասարդության շրջանում և համալսարաններում¹³: Այս ամենը վկայում էր սիրիական քաղաքական կյանքում իննց քաղաքական միավորների դերն ու նշանակությունը մեծացնելու Քաչար ալ-Ասադը ձգտման մասին ի հակալիտ ոչ քաղաքական միավորների՝ քանակի և հատուկ ծառայությունների, որանք Հաֆիզ ալ-Ասադի կառավարման հատկապես վերջին տարիներին ավելի մեծ կարևորություն էին ձևոր բերել սիրիական հասարակության մեջ՝ հետին սղան մղելով ԱԱԾ- կուսակցություններին /խոսքը կեննականում Քառսի մասին է/: Այս մասին է վկայում նաև կառավարության ձևավորման կուսակցական սկզբունքի պահպանումը, երբ ԱԱԾ-ի անդամ ցանկացած կուսակցություն անկախ նրա դերից և հնարավորություններից ստանում է նախնաարական պաշտոններ¹⁴:

Հասարակության ժողովրդավարացմանն էր միտված նաև նախկինում արգելված քաղաքական ուժերի վերադարձը քաղաքական քառն-

րաբեմ, ինչպես նաև նոր կազմակերպությունների և նույնիսկ կուսակցությունների առեղծոքը:

Այսպես, Սյրիական ազգային սոցիալական կուսակցությունը /ԱԱԿ/, որը արգելվել էր 1955 թ. սկսեց ազատ գործունեություն ծավալել երկրում²⁵, իսկ 2003 թ. մարտի ընտրությունների արդյունքում այս կուսակցության ներկայացուցչությունը խորհրդարանում հասավ 3-ի /երկուսը ԱԱԿ-ի ցուցակներով, մեկը «անկախների»/²⁶: Այս ամենը լուրջ հիմքեր է տալիս ենթադրելու, որ կուսակցությունը կարող է ապագայում համարել ԱԱԿ-ի շարքերը²⁷՝ ստանալով երկրի քաղաքական կյանքին մասնակցելու հնարավորություն, առավել ևս, որ նրա առաջնությունը չեն ժխտում նման հնարավորություն:

Այսպիսով, Բաշար ալ-Ասադը փորձեց շարունակել իր հոր քաղաքականությունը, երբ երկրում գոյություն ունեցող քիչ թի շատ ազդեցիկ բուլք քաղաքական ուժերը, վարչակարգի նկատմամբ լոյալություն դրսևորելու պայմաններում ներառվում էին քաղաքական պաշտոնական համակարգի՝ ԱԱԿ-ի մեջ: Սյամավ Բաշար ալ-Ասադը ծգտում էր հնարավորինս ընդլայնել սեփական քաղաքական հենարանը և փորձում կառուցել «վերահսկելի ժողովրդավարության» համակարգ:

2002 թ. հունիսի երկրորդ կեսին «մարդասիրական նկատառումներով» Բաշար ալ-Ասադի հրամանով ազատ արձակվեց կոմունիստական կուսակցություններից²⁸ մեկի առաջնորդ Ռիսալ Քուլեջին²⁹, որը բանտարկվել էր հակակառավարական ելույթների համար դեռևս 1980 թ.: Եվ նույնիսկ նա խտրազույն քննադատության ենթարկելով իշխանություններին, կոչ անելով լուծարել ԱԱԿ-ը, ընդունել նոր օրենք կուսակցությունների մասին և չեղյալ հայտարարել Սահմանադրության 8-րդ հոդվածը, որով «Վաաս»-ը ինչպեսվում էր «պետության, հասարակության ղեկավար ուժ», միաժամանակ հայտարարեց, որ «զավատեսություն է ներշնչում այն, որ երկրում այսօր բաց են դեպի հաշտություն, երկխոսություն և բարեփոխումների գործընթաց տանող դռները»³⁰:

2000 թ. մոտ 280 մտավորականներ հիմնեցին նոր կուսակցություն՝ Շարժում հանուն սոցիալական խաղաղության: Ազատությունների մրնությունն այնքան էր ազդել հասարակության վրա, որ նոր կուսակցության հիմնադիրները նույնիսկ պահանջեցին վերացնել երկրում գործող արտակարգ իրավիճակը և լուծարել Բաաս կուսակցությունը³¹:

Քաղաքական դաշտում իրականացված փոփոխությունները վստահություն ներշնչեց նաև հասարակական տարբեր շրջանակների մոտ:

Բաշար ալ-Ասադը փորձում էր հրավիրել հասարակական քաջ երկխոսություն, թեև շատ զգույշ և պետության խտրազույն հսկողության ներքո³²: Հարցազրույց տալով եգիպտական «ալ-Ռիսարա» շաբաթաթերթին՝ նա հայտարարեց, «Ես ծավալում եմ ժողովրդավարությանը և հարգում ուրիշների կարծիքը: Ես չեմ պատրաստվում ղեկավարել

միանձնյա կերպով: Ես պատրաստ եմ լսել տարբեր կարծիքներ և տարբեր տեսանկյուններ, անկախ այն համզամանքից համաձայն եմ դրանց հետ քե՛զի»²¹:

Հասարակությունն արձագանքեց այս կրակներին և կատարման առաջին 4 ամիսների ընթացքում մախագահ Բաշար ալ-Ասադին ուղղվեցին 4 բաց մամակներ, որոնք տպագրվեցին մալ լիբանանյան մամուլում և մեծ արձագանք ստացան սիրիական հասարակությունում: Նրանք պահանջում էին բարենորոգումներ իրականացնել՝ մատնանշելով երկրում առկա թերությունները: Վարչակարգը բավականին քայքայական ընդունեց այդ մամակները: Իշխանությունների կաշտ արձագանքի քացակալության պայմաններում 2000 թ. սեպտեմբերին լիբանանյան մամուլում տպագրվեց «99-ի ուղեքնդ», որը կոչ էր անում վերականգնել խոսքի ազատությունը, վերացնել ռազմական դատարանը, որ հաստատված էր երկրում դեռ 1963 թ.-ից, ներմուծել քաղաքական բազմակարծությունը և քաղաքանտարկյալներին հաճընդեսնոր համաներում հայտարարել: «Բաց մամակը» ստորագրողների թվում էին սիրիացի հայտնի մտավորականներ՝ բանաստեղծ Ալունիսը, փիլիսոփա Մադեկ Ջալլալ ալ-Ազընը, վիպասան Հայդար Հայդարը, պատմաբան Արդուլահ Հանման, ռեժիսոր Մոհամմեդ Մալլաթը և դերասան Նուրեդ Թալան և այլք²²:

2001 թ. հունվարին հարեցվեց «1000-ի ուղեքնդ»: Այս ուղեքնդի հեղինակները մոլյմպես ազատական հայացքներով բարեփոխումների կղզմակեց մտավորականներ էին: Ուղեքնդում նրանք կոչ էին անում Բաշար ալ-Ասադին ապահովել դատարանների ազատությունը, իրականացնել ԱԱՀ-ի արմատական վերափոխումը, ազատ արձակել քաղաքանտարկյալներին, վերացնել արտակարգ դրությունը, ապահովել խոսքի ազատությունը²³:

Այս երկու ուղեքնդներում էլ, վաստորեն, սիրիական տարբեր մտավորական շրջանակներ կոչ էին անում Բաշար ալ-Ասադին՝ շարունակել բարեփոխումները և իրենց աջակցությունն էին հայտնում մախագահին:

Օրինակ, Միլիալում քաղաքացիական հասարակության վերականգնման կոմիտեի²⁴ անդամ Միշել Կիլոն Լոնդոնում լույս տեսնող «ալ-Շարի ալ-Աուսատ»-ին տված հարցազրույցում նշում է, որ նրանք ուղարկել են այս մամակը մախագահին, և չէին ակնկալում, որ այն կհրապարակվի մամուլում: Սակայն դա տեղի ունեցավ, ինչը վկայությունն է այն բանի, որ երկրում վերականգնվում է ժողովրդավարությունը: Իսկ մամակը հեղինակած մտավորականները չեն հավակնում իշխանության և չեն ներկայացնում քննադական պահանջներ: «Մենք ուղղակի ուզում ենք օգնել իշխանություններին, հասնելու լավագույն արդյունքի»: Ընդ որում նշվում է, որ արված առաջարկությունները չեն վնասելու ներքին վիճակին, և մտավորականներն աշխատել են հենց ժողովրդի միասնության,

հայրենիքի պաշտպանության և գրաված տարածքների վերադարձման սկզբունքների չքայնակում²⁷։ Ուշագրավ է նաև 2002 թ. հունվարի 5-ին սիրիական մամուլում հրատարակված Ազգային դեմոկրատական ժողով կազմակերպության անդամ 10 ակտիվիստ ծախս աշխատիների հայտարարությունը, որով վերջիններս համաձայնվում էին մասնակցել քաղաքական բանավեճերի, որոնք նախաձեռնվել էին Բաշար ալ-Ասադի իշխանության գալուց հետո։ Խմբի գործազիր քարտուղար Հասան Արդ ալ-Ազիմի խոսքերով 10 տարուց հետո ընդհատակյե դուրս գալու որոշումը կապված է Բաշարի ալ-Ասադի իշխանության գալուց հետո տեղ գտած որոշակի ազատական փոփոխությունների հետ²⁸։

Այս ամենը վկայում էր երկրում հայտարարված «կառուցողական քննադատության» քոլլեկտիվության իրական վիճելու մասին։ «Դամասկոսյան գարնան» հետևանքներից էր նաև խոսքի ազատության որոշակի վերականգնումը և մի շարք կազմակերպությունների և լինստիտուտների ստեղծումը, որոնց գործունեությունը նախկին նախագահի օրոք ողորակի անհնար էր։

Դամասկոսում սկսեց գործել «մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեն»՝ սիրիացի լրագրող Ահլամ Նախասյի գլխավորությամբ։ 2000 թ. երկրորդ կեսին ԱԼԷ-ում սկսեցին ի հայտ գալ «քաղաքական ակտիվներ»²⁹, որտեղ բավականին քաղք քննարկումներ էին ընթանում Սիրիայի ապագա զարգացման ուղիների շուրջ, նպատակ ունենալով երկրում քաղաքացիական հասարակության զարգացման խրախուսումը։

Խոսքի ազատության ոլորտում որոշակի տեղաշարժերն արտահայտվեցին ՋԱՄ-ներում կատարված փոփոխություններով։ Թեև չընդունվեցին օրենքներ, որոնք կապահովեին խոսքի, մամուլի ազատությունը, քաղաքական բազմակարծությունը և հանրահավաքների ազատությունը, սակայն այդքան որոշակիորեն իրականացվեց զրաքննությունից ՋԱՄ-ների ձևաբազառումը։

Գրքի թողոյ պետական քերթերը սկսեցին հրատարակել բավականին «սուր» հոդվածներ՝ կառավարության տնտեսական քաղաքականության քննադատությամբ։ Բաշար ալ-Ասադն անձամբ հանդիպեց ՋԱՄ-ների խմբագրերի հետ և քաջալերեց նրանց այդ պահվածքը³⁰։ Վերացվեց Բաասի մեծաշուրիչ քերթերի հրատարակելու ոլորտում, ինչի հետևանքով 2001 թ. հունվարին քացվեց վերջին 40 տարում առաջին մասնավոր քերթը³¹։

Լորջ ցուցանիչ էր նաև պետական «Միջրին» և «Ան-Սաուրա» քերթերի, հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նոր դեկավաքների և գլխավոր խմբագրերի նշանակումը և մի շարք այլ փոփոխություններ։ Այսպես, «Միջրին» խմբագրություն վերադարձավ Արեժ Դալլան, որն արտաքսվել էր երկրից։ Նա վերադարձավ Բաշարի ալ-Ասադի խնդրանքով և առաջին իսկ հոդվածում նշեց, որ միակուսակցա-

կան համակարգը Սիբիայի տնտեսական անաջողությունների պատճառ է. և քարեփոխումները հաջողություն չեն ունենա առանց իշխանական համակարգից շատ դեմքերի հեռացնելու²²։ Մրաժամանակ բերրի նոր գլխավոր խմբագիրը հայտարարեց «Մենք համեղաչի ենք ղեկավար Բաշարի կողմից վարվող քաղաքականության հետ, որն ուղղված է Սիբիայում ժողովրդավարության խորացման ու երկրի արդիականացմանը»²³։

Այդուհանդերձ նույնիսկ այս սահմանափակ քարեփոխումները միանշանակ շրջումվեցին հասարակության տարբեր հատվածների կողմից։ Իշխանական վերնախավում շարունակում էր բավականին ազդեցիկ դիրքեր պահպանել «եին գվարդիան»՝ Բաշար ալ-Ասադի նոր գործընկերները և կողմնակիցները, որոնք չէին բացցնում բավականին անբարյացակամ վերաբերվումը քարեփոխումների նկատմամբ։ Նրանց նախաձեռնությամբ արդեն 2001 թ. փետրվարին Բաաա Տարածաշրջանային ղեկավարության 17 անդամներն ուղարկվեցին տարբեր կամայապահման «երկրում իրավիճակի բացատրության» նպատակով գեկույցներ կարդալու համար։ Ընդ որում, այս գործընթացն անձամբ ղեկավարվում էր ՄԱՀ փոխնախագահ Արդ ալ-Հալիմ Խադդադը, որը հետագայում քաղաքական արդիականացման կողմնակիցներին մեղադրեց «պետության անվտանգության և կայունության կարմիր գիծը» անցնելու մեջ²⁴։ Երկիրը վերափոխելու կոչով համոզես հեկամ մտավորականները մեղադրվեցին պրոտասահմանյան կապերի և երկիրը բուլացնելու և քայքայելու մեջ։ Այսպես, պաշտպանության նախկին նախարար Մուստաֆա Տյաադ 2001 թ. ապրիլի 12-ին, ելույթ ունենալով «Արո-Դարի» արքանյակային հեռուստատիլթրով, համոզես եկավ «1000-ի ուղերձի» հեղինակներին «ԿՀՎ-ի և Սիբիայի թշնամիների հետ» կապեր ունենալու մեղադրանքով²⁵։

Պահպանողականներին հաջողվեց որոշակիորեն կանգնեցնել հասարակական քարեփոխումների ընթացքը։ Բաղաքացիական ակտիվիստներից մի քանիսը նույնիսկ ձեռքակալվեցին։ 2001 թ. օգոստոսին ձեռքակալվեցին սիրիական խորհրդարանի անդամ Հոմսին, հայտնի գործարար և պատգամավոր Սեյիֆը, Դալիլին և շուրջ մեկ տասնյակ այլ գործիչներ։ Փակվեցին 14 «քաղաքացիական ընկերություններ» և քաղաքական ակումբներ։ Իսկ մյուսների գործունեությունը խիստ սահմանափակվեց²⁶։

Զեռակալվեցին նաև 2004 թ. մարտի 8-ին Դամասկոսում Բաաա կուսակցության իշխանության գալու 41-ամյակին նվիրված տոնակատարությունների ժամանակ «Ազատություն խղճի քանտարկյալներին» պատատոներով փոքրաքանակ իրավապաշտպանական ակցիայի կազմակերպիչներն ու մասնակիցները։ Մխալմամբ ձեռքակալվեց եւ մեկ ժամ անց ազատ արձակվեց նաև այս գործողությունների ակամատես

ԱՄՆ, դեպքում աշխատակիցը³⁷ Դեպքը խտրազույցն դատապարտեց Սիբիայում ԱՄՆ, դեպքում: Ինտո ման ԱՄՆ, Պետդեպարտամենտի կողմից, որի պաշտոնական ներկայացուցիչ Ռիչարդ Ռաուլերը, նշեց դիվանագիտական ներկայացուցիչների նաժնումխելոթյան խախտման անբողատրկության մասին³⁸:

Ընդ որում պետք է նշել, որ քարեփոխումների դեմ ուղղված այս գործողությունները զարմանալի միակարծությամբ պաշտոնավեցին Բասս կուսակցության անդամների կողմից: Պարզվեց, որ սիրիական քաղաքական վերնախավն ընդհանրապես պատրաստ չգտնվեց ժողովրդավարական քարեփոխումների անցկացմանը: Եվ որքան էլ մեծ լինեք նախագահ Բաշար ալ-Ասադի վերափոխումներ կատարելու ցանկությունը, հնարավոր չէ որքանք իրականացնել առանց իշխանական վերնախավի համաձայնության:

Այսպիսով, առաջին 4 տարիները լուրջ փորձությունների շրջան էին երիտասարդ նախագահ Բաշար ալ-Ասադի համար: Կռոտավարման այս փուլում նա զգալի փոփոխություններ իրականացրեց Սիբիայի ներքին կյանքում: Թեև դրանցից շատերը վերջնական լուծում չստացան, սակայն դրանց իրականացման փաստն ինքնին շատ խոստում է: Սիբիայի նման ավտորիտար երկրում տեղի ունեցան ժողովրդավարական որոշակի տեղաշարժեր, որոնք հետագայում կանգ առան:

Պետունումները տարբեր են՝ Լ՛ ներքին քաղաքական և՛ արտաքին:

Ներքաղաքական ասպարեզում Բաշար ալ-Ասադը ուղղակի չէր կարող հաշվի չառնել քաղաքացիական քարեփոխումների անցկացման դեմ ցուցադրված դիմադրությունը, քանի որ, ինչպես նշում էին հոտտեսները, նրա իշխանության երկու հիմնարանները շարունակում էին մնալ հենց Բասս կուսակցությունը և բանակը³⁹ որոնք այդքան էլ չէին ցանկանում փոխել ստեղծված իրավիճակը: Միաժամանակ իշխանության այս առաջին տարիներին նա փորձեք կատարեք ընդարձակել սեփական սոցիալ-քաղաքական բազան: Մրան էին միտված Լ՛ ԱՄՆ-ի ընդարձակմանն ուղղված քայլերը, Լ՛ նոր կազմակերպությունների գործունեության արտոնումը Լ՛ հասարակական ընմաքկման խրախուսումը:

Բացի այդ նույնիսկ զգալիոր քարեփոխումներն իրականացնելիս նոր նախագահը պետք է հաշվի առներ այն, որ ներքաղաքական կարևոր հիմնախնդիրներին էր մակ երկրի կայունության պահպանումը: Հաֆեզ ալ-Ասադից հետո իշխանության անցումը նրա որդուն կարող էր լուրջ հակասությունների առիթ դառնալ սուննի-ալավի⁴⁰ համայնքների փոխադարձություններում: Լինելով երկրում կրոնական փոքրամասնություն կազմող ալավիական համայնքի ներկայացուցիչ՝ նա մշտապես զգում էր այս վտանգը: Թեև նրա իշխանության առաջին շրջանում ի հայտ չեկան առաջնորդներ, որոնք սուննիական կմախսձեռնեին ելույթ ալավիական գերիշխանության դեմ⁴¹ և երկրի մեծամասնությունը կազ-

մոլ սուննիները պատրաստակամորթուն հայտնեցին ընդամեկ Բաշար ալ-Ասադի կառավարումը, սակայն դա չի նշանակում, որ երկրի ճնշող մեծամասնությունը կազմող սուննիները պատրաստ են «մավերժ» համաձայնել ազավիսական ղեկավարության վառտի հետ⁴²: Եվ եթե Հաֆեզ ալ-Ասադի տեղեժամ հակակշիտների և սուննիական վերմահալի հետ դաշինքի համակարգը քավակահին այսլոմավետ էր ևս քացատում էր չարք ցնցումների հնարանորթոմը, այդուհանդերժ, դա չի նշանակում, որ կարելի էր անտեսել այս վտանգը:

Բարեփոխումներին խոչընդոտող հանգամանք էր նաև միջազգային լարված իրավիճակը: Տարածաշրջանի քարչ իրադրոթոմը ստիպում էին Բաշար ալ-Ասադին ավելի մեծ ուղադրոթոմ դարժնել երկրի արտաքին հարթերոթոմներին: ԱՄՆ-ի ներխոմումն Իրաք մեծ խնդիրներ հարուցեց նաև Գամակոսի համար, կապված Սիրիայի մկատմանք ԱՄՆ-ի շարոմակական ճնշման հետ:

Այս ամենը հիժք է տալիս, այնուամենայնիվ, ակնկալելո, որ ՍԱՀ նախագահը կշարոմակի երկրի ժողովրդավարացմանն ուղղված քարեփոխումները, որոնք, սակայն, կոմենան սեփական առանժնահատկոթոմները: Հատկանշանական է, նախագահի երջման արալողոթոմն առաջին կոլլոմ Բաշար ալ-Ասադի կողմից արտահայտած ժողովրդավարոթոմն իր ընկալումը: «Ինչ առիժանի ենք մենք ժողովրդավա՛ր: Որո՛նք են ժողովրդավարոթոմն քնորոլումները: Ընդդրոթոմները, ազատ մամուլը, խոսքի ազատոթոմնը, թե՛ այլ իրավոմքներն ու պարտակամոթոմները... Մենք չենք կարող կիրառել ուրիշների ժողովրդավարոթոմը մեզանում: Արևմտյան ժողովրդավարոթոմը, օրինակ, քազմադարչա պատմոթոմն արլոմը է, որն արտահայտված է սովորոթներով և ավանդոթներով, որ քնորագրում է արևմտյան հասարակոթոմների ժամանակակից մշակոլլը... Որպեսզի մենք էլ կիրառենք այն, մենք պետք է վերաադենք նրանց կյանքը... Պարզ է, որ դա անհնար է մեր ժողովրդի վորժք պետք է լինի յորօրինակ, խնքնատլոլ, պետք է քիսի մեր պատմոթոմնից, մշակոլլից և քաղաքակրոթոլլոմնից իրրև պատասխան մեր հասարակոթոմն կարիքների և մեր իրակամոթոմն պահանջներին»⁴³:

SUREN MANUKYAN

ON SOME SOCIAL AND DOMESTIC CHANGES IN SYRIA UNDER
PRESIDENT BASHAR AL-ASSAD IN HIS FIRST FOUR YEARS. (2000-2004)

The new president of Syria Bashar al-Assad who had succeeded his father as head of state in 2000 implemented some social and political reforms in Syria.

The new president expanded free speech policy, countenanced a relatively open debate on Syria's domestic needs. Many intellectuals sent him "open letters" ('99's

letter", "1000's appeal") asking for political, economic, and social reform. Claiming that Syria was in terrible condition, the letter-writers, very politely, demanded change. Papers published these letters and they were circulated inside Syria.

Surprisingly, they were tolerated by the regime, signaling that the era of regulation of thought and speech was over.

But along with the presidency, Bashar inherited a set of pressing and severe problems.

Realizing reforms he had to maintain a balance between his own identity and the various forces defining the country. Bashar has chosen to concentrate first on broadening his own social and political base and consolidating his position.

So, he handled some reforms in political system of Syria. He allowed activities of some underground and banned parties and made attempts to democratize and enlarge of broad shape of ruling alliance of parties - National Progressive Front. Supposedly, he tried to create "Controlled democracy" in Syria.

The Old guard achieved to stop some of reforms by closing the number of "discussion clubs" and arresting some democratic activists. Being concentrated in foreign affairs Bashar al-Assad couldn't prevent this process.

Setting aside the need for quick successes allows him to advance slowly and deal with rear-guard pressure from the still-powerful older generation.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 2000 թ. հունիսի 10-ին վախճանվեց Հաֆեզ ալ-Ասադը, որը ՍԱՀ նախագահի պաշտոնը զբաղեցնում էր 1971 -ից, և երկրում իշխամության դեպք մտա 40 տարի իր ձեռքում պահող «Բաաս» կուսակցությունը նախագահի պաշտոնին առաջադրեց նրա որդուն՝ Բաշար ալ-Ասադին: Ընդ որում դրա համար խորհրդարանը փոփոխության ենթարկեց երկրի Սահմանադրության 83 հոդվածը՝ նվազեցնելով նախագահական պաշտոնի համար անհրաժեշտ տարիքը 40-ից 34 - ի. ինչը բույլ տվեց 34-ամյա Բաշարին նշանակել նախագահի պաշտոնակատար:

2 Ավելակիրքները հասնում էին այնպիսի չափերի, որ խոսվում էր նույնիսկ 1964 թ. ազգայնացված հողերը հին տեղերին վերադարձնելու, աշխատավարձը 100 տոկոսով բարձրացնելու և նույնիսկ «Բաաս» կուսակցությանն իշխանության մեծաշնորհից զրկելու մասին:

3 Բաշար ալ-Ասադի նախագահի ելույթի արձանագրությունը ըստ <http://www.basharassad.org>

4 Buidatz Yossi, *Bashar's First Year: From Ophthalmology to a National Vision // Policy Focus Research Reports on Palestinian Issues*, #41, (July 2001), www.washingtoninstitute.org/pubs/pfis/pfis

5 Համաձայն այս որոշման նկարների կարող էին լինել միայն կառավարական շենքերում: Թեև հետագայում դրանք հայտնվեցին մահ փողոցում, սակայն նմանօրինակ հրամանի ի հայտ գալն ինքնին շատ խառն էր:

6 Moubayed Sami *Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Atatürk // Washington Report on Middle East Affairs*, Dec2000, Vol. 19 Issue 9, p31.

7 Համաձայն «Միջազգային համայնքում» կազմակերպության տվյալների նրանց թիվը 1989 թ. հասնում էր 10 հազարի:

8 Ազգային Առաջադիմական Մականց հիմնիկ է 1972 թ.: Ներկայումս նրա կազմի մեջ են մտնում «Բաաս»-ը, Սիրիական կոմկուր, Արաբական սոցիալիստական միությունը, Արաբական սոցիալիստների շարժումը, Սոցիալ-յունիտ-միսունների կուսակցությունը, Յունիոնիստական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը /1988 թ-ից/, ինչպես նաև 1980 թ-ից Բանվորների արհմիությունների համընդհանուր ֆեդերացիան, Վյուզահիների համընդհանուր ֆեդերացիան և Բասսական հեղափոխական երիտասարդության միությունը:

9 Ахмадия В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перестройка взаимоотношений в переходный период развития», с.349 // Ближний Восток и современность, вып.18, М., 2003

10 «Հին գվարդիայի» մերկայացուցիչները, որը բազմաթիվ անգամ Տաքսիազըրբանային ղեկավարության կազմում:

11 2001 թ. սեպտեմբերի 22-ի համար 50 երամամյակի տեղացի տե՛ս www.sana.org/arabic/decree/publications%20and%20press,

12 Ахмадия В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перестройка взаимоотношений в переходный период развития», с.350 // Ближний Восток и современность, вып.18, М., 2003

13 Բանակում շարժական գործունեություն ծավալելու բախտը, ալ-Ֆուստանիայնիլ, արևելանեջ միայն Բասազ:

14 Կոմունիստները, օրինակ, ստացան 3 տեղ 2001 թ. ղեկոններին կազմված «բազմակուսակցական» կառավարության մեջ /Երկու մախարաբ մերկայացնում էին Յուսեֆ Ֆեյսալի ՍԿԿ-ն և մեկ մախարաբ Վ.Մակդաշի ՍԿԿ-ն կուսակցությունը/:

15 Ոչ պաշտոնապես ՍԱՍԿ վերականգնել էր իր գործունեությունը դեռ 1990-ական թվականներին, երբ նրա մերկայացուցիչներին մեկը ճշտապես ընտրվում է Ազգային խորհրդի անդամ՝ «անկախ» պատգամավորների շարքում:

16 www.elaph.com, 5 March 2003 ըստ Լեռն Դ. «Комунисты и баасисты: взаимоотношения: проект Сирии» // Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.312

17 www.asharqalwasat.com/view/news/2003/03/127157385 ըստ Կոռն Դ. «Комунисты и баасисты: взаимоотношения: проект Сирии» // Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.277

18 Սիրիայում այսօր գործում են 3 կոմկուս /Յուսեֆ Ֆեյսալի, Վիսալ Ֆահրա Բազդաշի ղեկավարությամբ երկու ՍԿԿ-ները և ոչ չնչալ պաշտաններում գործող ՍԿԿ-Ֆաթրյուրոն Ռ.Թուրքի ղեկավարությամբ/:

19 Ռիյադ Թուրքի խմբակցությունը հետագայ ՍԿԿ-ից 1972 թ. և հիմնիկ Սիրիայի կոմունիստական կուսակցություն՝ Ֆաթրյուր կուսակցությունը, որը 1979 թ. դարձավ ընդդիմադիր Ազգային-ժողովրդական միավորման անդամ:

20 alhiwaddimocraty.free.fr/leml5 ըստ Կոռն Դ.Մ. «Комунисты и баасисты: взаимоотношения: проект Сирии» // Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.280

21 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p. 88.

22 Կոռն Դ.Մ., «Сирия при новом пределе: тенденции политического развития», с.38 // Востокмизрпый еборини (вып.3), М., 2002.

- 23 Lancaster Pat, Syria looks forward// Middle East, Jul/Aug2000 Issue 301, p4.
- 24 Moubayed Sami, Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Atatürk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p.31
- 25 Ахмедян В.М., «Сирия на рубеже столетий. Власть и политика», М., 2003, с. 92
- 26 Այն իր մեջ է միախառնել տարրեր կողմնորոշումներ ունեցող մարդկանց՝ մարքոսիստներ, փրեզայներ, խրամականներ, ազգայնական և շեղոր մտավորականները
- 27 «On the civil socity and reform discussions in Syria»// Arabic News.com, 1/17/2001
- 28 Сирия: демократия неодолима на подходе //MIGnews 5.01.2002 www.mignews.com
- 29 «Ալ-Հայար», 19, 14.01.2001.
- 30 Ахмедян В., «Сирия на рубеже столетий. Власть и политика», М., 2003, с. 92
- 31 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p.88.
- 32 Moubayed Sami Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Atatürk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p.31
- 33 The Middle East, N 306, November 2000, с. 39.
- 34 Agence France Press (AFP), 15.02.2001.
- 35 Ахмедян В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и стратегические изменения в переходный период развития», с.350 // Ближний Восток и современность, вып.18, М., 2003
- 36 Ахмедян В.М., «Сирия на рубеже столетий. Власть и политика», М., 2003, с. 95
- 37 Шейхман В. Ф., «О сирии и Сирии» // <http://www.imes.ru/rus/stat/2004/27-05-04.htm>
- 38 « Исламскент », 10.03.04
- 39 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p88
- 40 Արամիականությունն իսլամական շիական կրոնական հոսանքներից մեկն է: 1953 թ.-ից սկսում է նկատվել արամիական ծագում ունեցող գործիչների դերի բարձրացումը ՍԱՀ իշխանական վերնախավում, որը նախագահ Հաֆեզ ալ-Ասադի օրոք դարձավ որոշիչ:
- 41 Pryce-Jones David, The Middle East: Death of a Tyrant - Assad and the world he left //National Review, July 3, 2000
- 42 Չեքուրու օ Քաիբե: Ազադ, օտ սուր և Ելմե Սիրու// "Вести " <http://vesti.ru/daynews/2000/06/13/40assad/experts>
- 43 Բաշար ալ-Ասադի նախագահի կրթման կուլթը ըստ <http://www.basharassad.org>

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԸՐԴԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԶԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ (1920-30թթ.)

Քրդական խնդիրը Թուրքիայում երբեք դուրս չի մնացել թե խորհրդային, թե արևմտանվորպական արևելագետների ուշադրությունից: Գլխիկ են քաղմաքիվ աշխատություններ, մնազարություններ, որանց անդրադարձել են քրդերի ծագման, պատմության ընթացքի, ազնիւ-քաղաքական վիճակի խնդիրներին: Սույն հոդվածում մենք փորձ ենք արել անդրադառնալ հանրապետական Թուրքիայում քրդերի ազնիւ-քաղաքական վիճակին անցյալ դարի 20-30-ական թվականներին:

Հանրապետական Թուրքիայի ազգային պետական քաղաքականության էլիմքում ի սկզբանէն դրվեց ազգայնականությունը: Մերձելով երկրում առկա ազգային փոքրամասնություններին, այդ թվում քուրդ ազգաբնակչության գոյությունը՝ քեմալականները ուղեգրեցին պանթուրքիստական հայտնի կարգախոսը. «վերափոխել քուրդ մահմեդականներին քուրդերի»¹:

Այդ քաղաքականությունը փաստացի վավերացվեց 1920թ. հունվարի 28-ին կազմված «Ազգային ուխտամ», հրամայան որի (կետ 1-ին) «...Օսմանյան կայսության այն հատվածը, որ մեծամասամբ բնակեցված է օսման-մահմեդականներով՝ միավորված կրոնական և տասալական իմքով՝ մեկ ամբողջություն է, և նրա մասնատումը որևէ սրտորվակով անհանդուրժելի է»²:

1920թ. Մերի դաշնագրի կնքումից հետո, երբ ուղևագծվեց անկախ Հնդկստան ստեղծելու հեռանկարը, Քեմալ Արաքուրքը այն որակեց որպէս «խմպերիալատական» սաղտանք. «Անգլիան ցամկանում է իր տիրապետության տակ ստեղծել քրդական պետություն և դրանով իսկ հանդես գալ երամայողի դերում Թուրքիայի, Իրանի և Անդրկովկասի նկատմամբ...»³:

Ինչպէս հայտնի է Մերի դաշնագիրն առաջին պատմաիրավական փաստաբանութիւն է, որտեղ միջազգային դիվանագիտական մակարդակով քննախնդրում է քրդական հարցը: Դաշնագրի երկրորդ բաժինն ամբողջությամբ «Քրդստան» ստեղծելու վերաբերյալ է: Այստեղ մասնավորապէս

նշվում է, որ «երեք պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից պետք է նշանակվի խորհուրդ, որը վեց ամսվա ընթացքում պետք է տեղական ինքնավարության պատրաստի այն վիլայեթները, որոնք ճգվում են Լեիբաուսից արևելք և որտեղ գերակշռում է քրդական տարրը: Միաժամանակ պետք մշակվեն հստակ երաշխիքներ՝ վերջ նշված վիլայեթներում մյուս ազգային և կրոնական փոքրամասնությունների անվտանգության համար:

Երե մեկ տարի նշված վիլայեթների քուրդ ազգաբնակչությունը դիմի Ազգերի Լիգա և ներկայացնի, որ քնակչության մեծամասնությունը ցանկանում է լինել Թուրքիայից անկախ, իսկ Ազգերի Լիգան կհաստատի, որ վերջիններս չի փնտրում անկախ, ապա Թուրքիան պարտավոր է հրաժարվել վերահիշյալ վիլայեթներից: Երե Մոսուլի վիլայեթի քրդերը ցանկանան լինել քրդական անկախ պետության կազմում, ապա՝ Դաշնակիցները դեռ չեն լինի»⁴:

Այսպիսին է Սևրի դաշնագրի՝ քրդական ինքնավարությանը վերաբերող մասը, որն արդեն իսկ շատ կարևոր երևույթ էր որպես քուրդ ժողովրդի պետական ինքնավարության ընկալման գաղափար: Կարևոր է նաև այն փաստը, որ առաջին անգամ համընկնում էին քուրդ ժողովրդի և Դաշնակիցների շահերը:

Ինչպես հայտնի է Սևրի դաշնագիրը նաև նախատեսում էր անկախ Հայաստանի ստեղծումը և «թվում էր, թե հայ-քրդական դարավոր կնճճոր վերջապես հասնում էր իր ավարտին»⁵:

Ինչպես և սպասվում էր բուրք ազգայնականները լայնածավալ պայքար ակնցից Սևրի դաշնագրի իրականացման դեմ: Դա արտահայտվեց յուրքական լրատվամիջոցներում, պաշտոնական հրատարակումներում.

«Այն կնքվել է արդեն հոգնվաքք ապրող Օսմանյան կայսրության կողմից, սակայն դեռևս մի քանի օր առաջ՝ 1920թ. հուլիսի 18-ին Անկարայում գումարված Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը (ԹԱԿԺ) հայտատարել էր, որ չի ընդունելու իրենց առաջարկված դաշնագրի պայմանները և հավատարիմ «Ազգային ախտին»՝ չի համադրժի քուրդական հողերի մասնատումը»⁶:

Մուստաֆա Քեմալի և նրա ձևավորած ազգայնական շարժման հիմնական խնդիրներից մեկը Սևրի դաշնագրի պահանջների իրագործումից հրաժարվելն էր: Դա դյուրին խնդիր չէր. չնայած Ռուսաստանի դիքքորաշման կտրուկ փոփոխությանը չի օգուտ Թուրքիայի և ընդդեմ այդ դաշնագրի, քեմալականները գիտակցում էին իրենց առջև ծառայած խնդրի ողջ լրջությունը:

Դաշնագրի ստորագրումից հետո նրանք ետևադրված եղան տակտիկական նկատառումներից ելնելով քրդերի նկատմամբ իրենց քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնել՝ փորձելով նրանց իրենց

կողմը գրավել: Առավելագույն շահարկելով քրդերի կրոնական զգացմունքները, բուրքերին և քրդերին անվանելով «միասնական կրօնի գրավակները», քեծարականները ամեն կերպ աշխատեցին հավատ մեղչնել քրդերին «նոր Թուրքիայի» սահմաններում նրանց իրավունքների հարգման և ազգային քաղաքական վիճակի լիարժեքության մասին:

Քաղաքական այս իրավիճակի ամենահետաքրքիր երևույթն այն էր, որ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովն ընդունեց ամենաաղքատ, ինչպես նաև հետագայում նմանը չունեող մախազիմ՝ Թուրքայում քրդերի ինքնավարության վերաբերյալ:

1922թ. փետրվարի 11-ին ԹԱՄԺ-ը վավերացրեց նետույալ 10 կետից բաղկացած այդ փաստաթուղթը.

1. Բուրյ ժողովրդի մշակութային զարգացմանը սատարելու համար Թուրքիայի Մեջլիսը քրդերին ինքնավարության իրավունք կտա, որը պետք է ներառի նրանց բոլոր իրավունքները և սովորույթները:

2. Որպես Գլխավոր նախարար (ինքնավար մարզի նախնգապետ) Մեջլիսը կցնտրի այն անձին, որը նեղիմակություն է վայելում քրդերի մոտ և նրաշիտակոթված է նրանց կողմից:

3. Գլխավոր նախարար (ԳՆ) ընտրվում է երեք տարով: Սակայն քուրդ ազգաբնակչության մեծամասնության ցանկությամբ նրա իրավունքները կարող են դադարեցվել և Քրդական ազգային խորհրդարանի կողմից նոր ԳՆ-ը ընտրել:

4. ԳՆ-ին, ինչպես նաև նրա տեղակալին հաստատում է Անկարան:

5. Քրդական ազգային խորհրդարանը ընտրվում է Արևելյան վիլայեթների բնակչության կողմից՝ երեք տարի ժամկետով:

6. ԳՆ և Քրդական ազգային խորհրդարանի միջև վիճելի հարցերի առկայության դեպքում վճռական խոսքը պատկանում է ԹԱՄԺ-ին, և երկու կողմն էլ պարտավոր են ենթարկվել վերջինս որոշմանը:

7. Արևելյան վիլայեթների պաշտպանության համար կազմվում է օստիկանություն՝ Քրդական ազգային խորհրդարանի որոշմամբ: Սակայն այդ մարմնի ղեկավարումն ա վերահսկումը սրտը ժամանակ լինելու է բուրքերի ձեռքում:

8. Քրդական ազգային խորհրդարանի, ինչպես նաև կառավարության գործավարությունը պետք է վարել բուրքերենով: Միաժամանակ իրավունք է տրվում դարձնելուս դասավանդել քրդերին: ԹՆև այն պետական լեզու չէ, բայց և այնպես, կարելի է հաղորդակցվել:

9. Քրդական ազգային խորհրդարանը վերահսկում է Արևելյան վիլայեթների կարգուկանոնը:

10. Առանց ԳՆ-ի բույլատրության և հաստատման Քրդական ազգային խորհրդարանը իրավասու չէ տարաբնույթ գործողություններ իրականացնել:

Ինականաբար այս մախազիծը այդպես էլ մնաց յոթի վրա և անմիջապես չեզոքացվեց բուրքական հասուկ ծառայությունների կողմից: Այդուհանդերձ այն ունի կարևոր նշանակություն. մախ հաստատում է քրդական էինմահարզի գոյությունը Թուրքիայում և երկրորդ՝ հմարավորություն է տալիս մեկ անգամ ևս ընդգծել ձեռնալ Աբաբուրքի կողմից իրականացվող «երկակի ստանդարտի» քաղաքականության արդյունավետությունը:

Պետք է նշել, որ քեմալականների քաղաքականությունը՝ քաղաքացիությունը և խոստումները քրդերին, հաստկապես Ազգային ժողովի որոշ քոթը պատգամավորներին, անարդյունք չմնացին:

Ընժերի նոր դասավորության պայմաններում, միջազգային մի շարք գործոնների ազդեցության տակ 1923թ. հուլիսի 23-ին ստորագրվեց Լոզանի պայմանագիրը, որը ի չիք դարձրեց քրդերի՝ անկախություն ստանալու յոթը հույսերը: Եվ ահա, երբ Լոզանից հեռագիր ուղարկվում Թուրքիա՝ քրդերի ինքնավարության՝ Սևրի դաշնագրով մախատեմաված պայմանները ճշտելու համար, ԹԱՄԺ-ի արտահերթ Ֆիառում էրգրումի քուրդ պատգամավորը հայտարարում է. «Այս երկիրը պատկանում միայն բուրքերին և քրդերին, ու այս ամբխանից միայն երկու ժողովուրդի ներկայացուցիչ իրավունք ունի խոսելու՝ բուրքերը և քրդերը»:⁸

Այս աննիկ հետևանքով Լոզանում Իսմեթ Ինենյուի գլխավորած պատվիրակությանը հսջողվում է «ազատվել» Սևրի դաշնագրի պահանջներից և տահմանափակվել միայն ազգային փոքրամասնությունների որոշ իրավունքներին՝ վերաբերող պարտավորություններով, որոնց շարքին քրդերը այպես մահմեդական չէին դասվում⁹:

Լոզանի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո բուրքական իշխանությունները կտրուկ փոխում են քրդերի հանդեպ իրականացվող քաղաքականությունը: Ի տարբերություն առաջինի՝ երկրորդ գոմարման ԹԱՄԺ ոչ մի քուրդ պատգամավոր չի ընտրվում, իսկ մախկինները ձերբակալվում և հանձնվում են զինվորական դատարանին¹⁰. Թուրքիայի կողմից իրականացվող ազգայնական քաղաքականությունը և ազգային փոքրամասնությունների իրավունքների անտեսումը արձանագրվում է մաև Թուրքիայի Հանրապետության 1924թ. առաջին սահմանադրության մեջ:

«Թուրքիայի Հանրապետության բոլոր քաղաքացիները՝ անկախ կրոնական և ռասայական պատկանելիությունից՝ բուրքեր են»:

«Անձի անձեռնմխելիությունը, խղճի, մտքի, խոսքի, սպազություն ազատությունն ու իրավունքը պատկանում են միայն բուրքերին»¹¹:

Այդպիսի անհանդուրժողականությունն ազգային փոքրամասնությունների նկատմամբ վերածնց ազգային պետական գաղափարախոսության, որը և օգնեց Թուրքիային տարածաշրջանում ինքնահաստատվել և հետագայում հսջողությանը խաղաղով համաշխարհային երկու

համակարգերի առնակատման վրա՝ ապահովել իր առաջնատարածուը: Չնայած քրդերը կազմում էին արևելյան վիլայեթների բնակչության մեծամասնությունը, այնուամենայնիվ, քրդական մշակույթն իր բոլոր դասերումնեղով արգելվեց: Քրդերը տեսակետորեն համարվելով «բուրք» զրկվում էին ազգային, իսկ գործնականում ընդունվելով որպես «քուրդ»՝ քաղաքացիական իրավունքներից: Այդ քաղաքականության իրականացման համակարգում մեծ թափ է տալիս բուրքական քաղաքական ապարատի գործունեությունը, պատմագրությունը, գյուղականությունը, զանգվածային լրատվամիջոցները, չձվում են քրդերի՝ բուրք-օղուգական արմատները «հայտնագործելու» առաքելությանը:

«Թուրքիայի արևելյան և հարավարևելյան Անատոլիայի շրջանում տեղ-տեղ կենտրոնացած, մեծամասամբ ցրված բնակվող քրդերը ծագումով պատկանում են բուրք օղուգներին»¹¹:

«Թուրքիայի համրապետության քրդերի մեծամասնությունը խոսում է բուրքերեն և ապրում ինչպես բուրքերը: Մենք՝ բուրքերս, մրանց չենք համարում այլ ազգության ներկայացուցիչներ: Քրդերը Առաջավոր Ասիայի տարածքում ապրող բուրքական ծագումով մի ժողովուրդ են»¹²:

1920-ական թթ. Թուրքիայում ձևավորվում են քրդական մի քանի կազմակերպություններ՝ Զորատանի անկախության կոմիտեն, Զոլատանի վերածննդի միությունը, Զոլական ազգային կուսակցությունը, Սոցիալական ազակցության քրդակույն միությունը¹³ և ուրիշներ, որոնց անդամները հիմնականում քրդական մտավորականության և ավագանու ներկայացուցիչներ էին: Նրանցից ոմանք համագործակցում էին բուրքական իշխանությունների հետ՝ հավատալով «նոր Թուրքիայի» ստեղծման գործում քրդերի կարևոր դերակատարության մասին Արաբուրդի տված խոստումներին: Միայն որոշ ժամանակ անց քրդերը սկսեցին զիտակցել, որ հայերին և հույներին կատարելուց հետո բուրքական իշխանությունները հաշվեհարյար կռիվներն մալ իրենց հետ՝ առանց հաշվի առնելու մրանց մահնեղականությունը և նախկին օժանդակությունները բուրքական պետությանը¹⁴:

Ջեմալական Թուրքիայի՝ մեծամասնապես քաղաքականությունը չէր կարող քուրդ ազգաբնակչության շրջանում չառաջացնել խռովություններ, որոնցից ամենազանգվածայինը 1925թ. Շեյխ Սայիդի ապստամբությունն էր: Այն բավականին ուսումնասիրված և վերլուծված է, ուսովի նշենք միայն, որ բուրքական իշխանություններն ու մամուլը ազավազեցին ապստամբության պատճառներն ու նպատակները՝ վարկաբեկելով շարժման ղեկավարներին. «Սայիդը Շեյխի տեսքով, ժողովրդի կրոնական զգացմունքները օգտագործելու միջոցով հարատություն դիպած, նախիրների և հոտերի տեր մի անձնավորություն էր, որ ոչխար էր քաղմացում և Միլիտայում վաճառում... Նյու կողմից գլխավորած ապստամբությունը (1925թ. փետրվարի 1-ից ապրիլի 15-ը) ծավալվել է Թուրքիայի

արևելյան շրջանի մի հատվածում... Ենյա Սաֆյույ և էլի 47 մասնակիցներ արևելյան անկախ դատարանի կողմից դատապարտվեցին մահվան: Այն իրականացվեց «Պաքսեթիլում 1925թ. հունիսի 29-ին»¹⁵:

Ժամանակի հայ մտավորականությունը ևս մեծ չափով արծագանքել է ինչպես 1925թ. այնպես էլ հետագա քրդական ապստամբություններին՝ արտահայտելով իր օժանդակությունն ու համակրանքը քրդերի հակաբուրջական ազատագրական շարժումների նկատմամբ. «Քրտական այս մեծ ապստամբությունը, իր կազմակերպորժան ձեռնարկով, ղեկավարներու ընդգրկած նպատակներով և շարժման ընդհանուր քափով «Բնորոտխտանի ազգային ազատագրական յեղափոխություն մըն էր, վեր բոլոր առարկություններն»¹⁶:

Թուրքական պատմագիտությունը խեղաբյուրում է նաև քրդական ապստամբության այս էջը՝ քուրդ ժողովրդի ազգային հերոսին վարկաբեկելով և քրդական ազգային ազատագրական շարժման ամենակարևոր երևույթներից մեկը որպես «հետադիմական, զուտ կրոնական և արտաքին ուժերի կողմից հրահրված»¹⁷ որակելով: Այդուհանդերձ կցանկանալինք ընդգծել, որ ապստամբության անհաջողության մատմվելու պատճառներից մեկն էլ բնույթ քրդերի ազգային ինքնագիտակցության ցածր մակարդակն էր և քրդական ցեղերի ու աշխրհների՝ մյուսանց նկատմամբ թշնամանքի դրսևորումը¹⁸:

Ապստամբության ճնշումից հետո բուրջական իշխանությունները գանգվածային անողոր զործողություններ ծավալեցին քրդերի դեմ. «դատարանների ոլորմամբ քրդերին կախաղան էին բարձրագնում, քանտ նստեցնում, արսողում...»¹⁹: 1925-1926 թվականներին ավիրվում է շուրջ 206 գյուղ, այլվում 8758 տուն, սպանվում 150 հազարից ավել խաղաղ բնակիչներ՝ կամայք, ծեղեր և երեխաներ²⁰:

1927թ. հունիսի 10-ին ԹԱՄԺ-ը օրենք է ընդունում քրդերի՝ արևելյան վիլայեթներից արևմտյան շրջաններ տեղափոխելու վերաբերյալ. «վարչատարածքային, ուզմական և հասարակական նպատակներով կատավարությանը իրավունք է վերապահվում անհնազանդ ընտանիքներին տեղափոխել արևմտյան վիլայեթներ»²¹: Այդ քաղաքականության հետևանքով 1927-1928թթ. արևմտամբ է տեղահանվում մոտ մեկ միլիոն քուրդ, սակայն, բնականաբար, քուրդը չէ, որ անհնազանդ և խռովաբարներ էին:

1925-1938թթ. քրդական ընդվզումներն ու խռովությունները Թուրքիայում շարունակական բնույթ էին կրում: Հիշատակության է արժանի Արարատի ապստամբությանը: Այն 1927թ. կազմակերպվել և գլխավորվել է «Խոյրում»²² կոմիտեի կողմից: Գաղափարախոսական և կազմակերպչական մի շարք քերականներով հանդերձ «Խոյրումը» քաղաքական կուսակցություն էր՝ իր ծյազրով և կանոնակարգով, որի գլխավոր նպա-

տակը «քուրդ ժողովրդի ազատագրումն էր բուրջական լծից և անկախ Բրիտանի ստեղծումը»²⁵։

«Խոյբումի» գործունեությանը սատարում էր նաև այդին սփյուռքում գործող Հայ Յեղսպետական Դպրանկցությունը, որը ջանում էր համախմբել քրդական ցեղերն ու աշխրհները՝ նրանց մեջ զարգացնելով ազգային ինքնագիտակցության գաղափարը։ «Խոյբում-Դպրանկցություն» համագործակցության արդյունքում «Խոյբումի» կամոնաղյուսության մեջ մտցվում է հայերի հետ համագործակցության վերաբերյալ առանձին կետ²⁶։ Այդուհանդերձ, այս համագործակցությունը երկուստեք վախճանակետ էր Դպրանկցությունը ուներ հետևադ նպատակներ և դեռևս ուղիներ էր որոնում Հայաստանում իշխանությունը վերականգնելու համար։ Քրդերի դեպքում խնդիրը փոքր-ինչ այլ էր. «Պար ոչ մի կազմակերպություն ոչ մի երկրից, որը օգնություն ցույց տար Խոյբումին, նրա նկատմամբ բարեկամություն դրսևորել։ Հաշվի առնելով այդ, քրդերը նպատակահարմար գտան բարեկամանալ հայերի հետ»²⁷։

Կողմերը համաձայնության էին եկել, որ Բրիտանի և Հայաստանի սահմանների հարցը կրճծեն քրդական և հայկական առաջագ կատարությունները։ Նշվում էր նաև, որ կապը Խոյբումի և Արարատի ապստամբների միջև ևս իրականացրել են դաշնակցականները։ 1928-1930թթ. փաստորեն բոլոր հյուսիս-արևելյան վիլայեթները գտնվում էին ապստամբների վերահսկողության տակ։ Թուրքական իշխանությունները ստիպված էին կենտրոնացնել ռազմական մեծ ուժեր՝ այն ճնշելու համար²⁸։

1930թ. հուլիսին ռազմական գործողություններն ավարտվեցին կատարության լիակատար ծաղրանակով։ Ապստամբությանը ծաղրողեցին քրդերի զանգվածային բնաջնջումներ, այրվեցին գյուղեր, մահվան դատապարտվեցին հազարավոր քրդեր²⁹։

Ամփոփելով ասեք, որ Արարատի ապստամբությունը, քեև վերջնական ծաղրանակի չհասավ, այնուամենայնիվ տվելի կազմակերպված բնույթ ուներ և ապացուցում էր, որ քրդական շարժումները զուտ ազատագրական էին և «ոչ մեկ օտար պետության հովանավորությունը կր վայելէն»³⁰։ Այդ ապստամբությունը նաև հայ-քրդական համագործակցության ամենահետադիրը դրսևորումներից մեկ է։

Անդրադասնալով քրդերի տնտեսական վիճակին՝ նաքլ է նշել ակնհայտ այն իրողությունը, որ թուրքական իշխանությունները այսուհայտված խտրական քաղաքականություն էին վարում քրդաբնակ շրջանների նկատմամբ։ Չմայած այս վիլայեթների յուր զարգացած վիճակին՝ կատարարությունը, որպես կանոն, այստեղ ֆինանսական ներդրումներ չէր կատարում, մինչդեռ առավելապես թուրքաբնակ շրջանները հատուկ ուշադրության էին արժանանում, և՛ ճանապարհաշինության, և՛ կրթության, և՛ պետական զարգացման ծրագրերի միջև առկա էր տարբե-

բարձրագույն քրդաբնակ և քուրդաբնակ վիլայեթների միջև²⁹։ Մա, ինչ խոսք հաստիկ մշակված տնտեսական քաղաքականության հետևանք էր։

1920-30-ական թվականները քուրդական կառավարության դեմ քրդական ազատագրական շարժումների տարիներ էին։ Ուր բնական կան իշխանությունները դաժանորեն ճնշեցին այդ շարժումները, նրանց չհաջողվեց ազատվել քրդական հիմնահարցից։ Այն շարժումակամ է գոյատևել և այսօր էլ համոզյալանում է Թուրքիայի ներքաղաքական անկայունության կարևոր գործոններից մեկը։

TATEVIK MANUKYAN

THE SOCIAL-POLITICAL CONDITIONS OF KURDS IN TURKEY (1920-1930s)

The events of 1920-1930's are the most remarkable in Kurd's history. For the first time during the history of Kurds after the seal of Severe's convention it became touchable for the Kurds the perspective of the creation of independent Kurdistan. However because of Kurds own mistakes and with the influence of external factors the Kurdish question in Lozano's (Lasagn's) conference stayed out of the day program of International Diplomacy. We would like to accent also that due to Turkey's carried out double standard effective policy Turkey succeeded in even though temporarily solving the Kurdish problem.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Аванесов С.С. "Положение национальных меньшинств в Турции", Ереван, 1963, с. 49.
2. Beşikçi İ., Kürdistan İzzetinde emperyalist bñlñşüm mizadelişi, 1915-1925, cilt 1, Ankara, 1992, s. 396.
3. Аралов С.И. "Воспоминания советского дипломата", М. 1960, с. 107.
4. Ключников Ю.В. "Мирные договоры империалистической войны", отдел III, "Курдистан", М. 1925, с. 122.
5. Բայրության Վ., Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիների, Մեծավոր և Միջին Արևելքի երկրներ և մոդուլորդի, հ. XX, Երևան 2001, էջ 36.
6. Büyük lağık ve azıklıođlu, S. Kılıçođlu, N. Araz, H. Devrim, cilt XI, İstanbul, 1985.
7. Ш.Х. Мган, Севр-Лозанна и проблемы национального самоопределения курдов, "Курдский альманах", М. 2001, с. 20-21.
8. Курдское движение в новое и новейшее время, М. 1987, с. 99.
9. Ключников Ю.В. "Мирные договоры империалистической войны", отдел VI, М. 1925, с. 151-152.
10. Гасратян М.А. Курды Турции в новейшее время, Ереван 1990, с. 55.

11. Türkiye ansiklopedisi, M.E. Özmeri, S.Dinçer, S. Kazancı, cilt- III., Ankara 1956, s. 512
12. Büyük lahat ve ansiklopedi, S. Kılıçoğlu, N. Aruz, H. Devrim, cilt VIII, İstanbul, 1985, s.735.
13. McDowall D., A Modern history of the kurds, London- NewYork, 2000
14. Ռաշտրոլոյան Վ., XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամբությունները և բուրժուարական հարաբերությունները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXI, երևան 2002, էջ 9.
15. Büyük lahat ve ansiklopedi, S. Kılıçoğlu, N. Aruz, H. Devrim, cilt XI, İstanbul, 1985, s.772.
16. Սասունի Կ. Քիչրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Պէլլոտ, 1969, էջ 251
17. Büyük lahat ve ansiklopedi, S. Kılıçoğlu, N. Aruz, H. Devrim, cilt XI, İstanbul, 1985, s.772
18. Ապստամբությանը, չնայած իր ընդգրկած ճաշատարներին, չէին մասնակցում մի շարք ազդեցիկ քուրդ ցեղապետներ՝ Իսմայիլ Արա Սյնվոն, շեյխ Մահմուդը և ուրիշներ, չէին մասնակցում նաև որոշ ցեղեր, մասնավորապես՝ տլան, խորմեկ և Կեռսիմի քրդերը, որոնք չէին հավատում ապստամբության հայրանակին և օժանդակում էին բուրժուական իշխանություններին: Կարևոր դեր էր խաղում և քրդական ցեղերի կրոնական տարբերությունները:
19. Armutong H.C., Gezy Wolf, Mustafa Kemal, London, 1934, p.26
20. Гасратян М.А., Курдская проблема в Турции (1925-1939гг.), Специальный бюллетень №. 6, М., 1975, с.52, տե՛ս նաև Rambout L., Les Kurds et le droit, Paris, 1947, p.28.
21. Гасратян М.А. Курды Турции в новейшее время., Ереван 1990, с. 128
22. 1927թ. վարձանը Միթիայում և Լիբանանում գտնարված քրդական կազմակերպությունների համապատասխան ստեղծվում է «Խոյրում» («անկախություն» կամ, այլ տեսակետի համաձայն՝ «իմնել ինչպես կաս») անվամբ Քրդական ազգային կոմիտեն: Աշակվում է վերջինիս գործունեության ծրագիրը և կանոնադրությունը: «Խոյրում» մասիակներով ապստամբությունը կազմակերպվում է Ասորեստի ստորոտում: Այն գլխավորում էին Իրրահիմ Հագե Թելի փաշան, Իհսան Նուրի փաշան և Ջիլան բեյը, որն ըստ Կ.Սասունու խնուսի Արտաշես Մորաղզանն էր, որ ներկայացնում էր հայկական թեղ:
23. Никитин В., Курды, М., 1964, с. 294.
24. Ռաշտրոլոյան Վ., նշվ. աշխ., էջ 14.
25. Гасратян М.А. Курды Турции в новейшее время., Ереван 1990, с. 154, տե՛ս նաև Silori Z., Doza Kurdistan, 1969
26. История Курдистана, М., 1999, с. 283-284
27. Jwêdeh W., Kürt Milliyetçiliğinin tarihi, İstanbul, 1999, s. 412

28. Սատանի Կ. Միջոտ ազգային շարժումները և նաչ-քրտական յարաբերությունները, Պլյուս, 1969, էջ 295:
29. Արևելյան վիսյերների տնտեսական վիճակի մասին առավել ճանրամասն տես Գալուտոյան Հ., Հանրապետական Թարգիսյի կառավարության րադարականությունը Արևելյան վիսյերներում (1920-1960-ական րվականներ), Երևան, 1999:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԵԳՅԱՆ

ԷԶԵՐ ՀՏԵՐ-ԱՄՏՎԱԾԱՏՐՅԱՆՑԻ «ԱՂԷՏՆԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ» ՆՈՐԱՀԱՅՏ ՕՐԱԳՐԻՑ (1918թ.)

Ակադ. Մկրտիչ Ներսիսյանի (1909-1999թթ.) արխիվը նախնական մշակման ենթարկելիս երևան է եկել «Աղետների յուշագիրը. 1918թ.» խոսրագիրը կյտո ձեռագիր մի ծավալուն օրագրություն (243 մեծադիր էջ), որի հեղինակն է Հ.Տեր-Աստվածատրյանցը: Կազմի վրա տպագրի նմանեցվող խոշոր տառերով գրված է. «Որդի՛ք Հայկա՛յ, մենք կենաքի քաղցրությիւնը յտեսանք, զո՞նէ դաք տեսք, որ մեր ոսկորները հանգատանան գերեզմաններում: Հասերևա: 1/1 1918թ. ՅԻՖԼԻՍ»:

Հեղինակի այս ձեռագիր աշխատությունը կատարելապես անժամոք է հայագիտությանը: Օրագրության առաջին էջի վերին լուսանցի աջ եզրին կա այլ քանաթով ու գրչությանք կատարված համարակալում՝ 273, և էջերի թիվ՝ 1-243: Ի հաստատումն հիշյալ թվերի ստուգության դրված է հատակորեն կարդացվող կնիք՝ «Վ.Ս.Հ.Մ. գիտությունների ակադեմիայի Հայկական [Ֆիլիալ]: Армянский филиал Академии Наук [СССР]. Պատմության յեվ նյութական Կուլտ. ինստիտուտ. Институт истории и материальной культ.»:

Հետևաբար՝ ձեռագիրն իբրև արխիվային միավոր պատկանել է ԱրմՖԱՆ-ի (Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի) Պատմության և նյութական մշակույթի ինստիտուտին: Ակադ. Մ.Գ.Ներսիսյանը 1937-41 թվականներին եղել է այդ ինստիտուտի գիտաշխատող, ապա և տնօրին: Պիտի ենթադրել, թե նա մտադրություն է ունեցել երբ ոչ ամբողջապես հրատարակել նոր ժամանակների պատմության այս կարևոր աղբյուրը, ապա զոնն նրանից քաղումներ կատարել 1918թ. իրադարձություններին անդրադառնալիս: Կարծում ենք, սակայն խորհրդային տարիներին ամբողջական հրատարակություն կատարելը գործնականորեն անկարելի էր, քանի որ օրագրական գրատուժներում պաշտոնական պատմագրությանը հակասող, հաճախ նույնիսկ քուչիկների վարած քաղաքականությունը ուղղամտորեն քննադատող էջեր կան, զաղափարական ակնառու հակադրումներ: Այս խտրությունը բոլոր է տալիս վարված առաջադրել, թե զուցն ինստիտուտի տնօրին Մ.Գ.Ներսիսյանը պարզապես արխիվի հերթական «գտումից» փրկելու

համար «Աղետների յուշագիրը» վերցրել է և «ճոռացության տվել»: Այստեղ նկատատելի է երկու պարագա ևս. խնչպես տեղեկանում ենք գիտնականի մի հարցազրույցից, 1930-40-ական թվականներին նա քանիցս գաղափարական քննադատության և նույնիսկ ամբաստանության է ենթարկվել, հետևաբար այս բնագրի նրատարակությունը վստահաբար կծանոթացնի նրա վիճակը, և ապա՝ 30-ական թվականների վերջերից նա դարձրեց զբաղվել «Նաչնակցություն կոտակցության պատմության հետ կապված հարցերով»: «Ինձ համար պարզ դարձավ, որ հնարավոր չէր ճշմարիտ խոսք ասել այդ կոտակցության մասին: Մկսեցի զբաղվել հայ ժողովրդի XVIII և XIX դարերի պատմության հարցերով» (տես «Ակադեմիկոս Մկրտիչ Նեյտխյան», Երևան, 2004, էջ 10-11):

Հ.Տեր-Աստվածատյանցի օրագրությունները վերաբերում են 1918 հունվարի 1-ից մինչև հունիսի 20 կատարված իրողություններին, հավասարապես առնչվելով այդ շրջանում հայոց միջավայրում գործող բոլոր կուսակցություններին, և առաջին հերթին, բնականաբար, դաշնակցությանը: Ինչևէ, փաստն այն է, որ աշխատությունը սլանդանվել է և նրանում գրատված տեղեկությունները կարևոր լրացումներ են կատարում 1918թ. առաջին կեսի բարդ ու բազմաշերտ իրադարձությունների գնահատության խնդրում: Հեղինակը գրառումներ կատարելիս և անցուդարձը վերլուծելիս չի գոհանում սլանդանակաճ շրջանների (Անդրկովկասի Սեյմի և նրանում ներկայացված կուսակցությունների) տված տեղեկություններով ու գնահատություններով: Նա կայտաբանում է տեղեկանալ ստացվող հետազոտական նյութերին, ճանաչել Միյմում ներկայացված էրմիկական ու կուսակցական խմբավորումների շահագրգռությունները, դիտարկել դրանք հայոց ազգային խնդիրների տեսանկյունից: Օր-օրի կատարվող դիսքուսիան հետևելիս, բնականաբար, գրատողը գերմ չէր կարող մնալ քաղաքում (Թիֆլիսում) շրջանառող լուրերի ազդեցությունից, իբրև անհատ արձագանքում էր դրանց՝ ներկայացնելով կենդանի առօրյա իրողությունը: Նա հնարավորություն չունի լրացուցիչ առուգումների ենթարկելու արձանագրվող անցքը, ուստի նրա ոչ բոլոր գրառումներն են հավասարապես փաստական, բայց որ գործ տնենք լայն խմացությունների ու ազգային ազնիվ մղումներ ունեցող հծարտ մի հեղինակի հետ՝ անվերապահ է:

«Աղետների յուշագիր» հեղինակի մասին մեր ունեցած տեղեկությունները խիստ սահմանափակ են, բացառապես քաղված նրա օրագրության էջերում եղած ոչ ուղղակի վկայություններից: Հայս ունենք, թե Երևանի և Թիֆլիսի արխիվներում կարելի պիտի լինի ի հայտ բերել նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող նոր նյութեր:

Այստեղ ի ծանոթություն դնքեցողին է առաջարկվում մեր կողմից տարգրության պատրաստվող բնագրից մի քանի էջ՝ մարտի 1-6 եղած օրագրությունները, որ ներկայացվում են էլզգրումը բարբերին հանձնե-

լու պարագաները, ինչպես նաև դրվագներ Սիյմի ներկայացուցիչների և թուրք պատվիրակների միջև սկզբած բանակցությունների մաշմակալան բնթացքից:

Հաննի պարտք ենք համարում շնորհակալություն հայտնել տիկին Նունե Դեղրյանին՝ Մ.Գ.Ներսիսյանի արխիվում պահպանված այս բնագիրը մեզ ի կրատարակություն տրամադրելու համար:

«Ա՛ՆՏՆԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ. 1918»

1 մարտի

Սարկուամիլից գնմ. Օղիջեիծեն հեռագրում է, որ փետրուարի 27-ին, ցերեկուայ ժամը 12-ին տաճիկները գրառել են Էրզրոմը: Եղել է թեթև կոխ, վիրաւորուած է գնդապետ Ֆարգոմը, մեր կողմից կորուստ եղել է 200 վնասուածներ (*):

- Թիֆլիսի Սօցիալիստ-յեղափոխականների Կեդրոնական կոմիտեն յայտարարել էր յնթարկուել Ազգային խորհրդի կողմից յայտարարուած զօրակոչին, սակայն դրա դէմ բողոքել են Ախալցխայի հայ սօցիալիստ յեղափոխականները: Ասում են, որ Սօցիալ-յեղափոխականների շրջանային կոմիտեն ուղղել է արդեն իր այդ սխալ քայլը:

Հայտարար պատուիրակութիւնը. - Տաճկական պատուիրակութիւնը Շելկետ մասով 27-ին փետրուարի հասել է Տրապիզոն, քաղկացած 5 հոգուց, նախագահութեամբ ծովային գնդապետ Ռաշիխ քէլի: Մեր պատուիրակութեան քարտուղարը ողջունել է նրանց մատի վրայ, որից յետոյ տաճկական մի պատուիրակ եկել է մերոնց մօտ՝ պայմանաւորուելու տեսակցութեան տեղի և ժամի մասին: Նախնական մի քանի հարցեր պարզելու համար Ռաշիխ քէլը և Չիւենկելիմ տեսուել են մի տան մէջ, որը ուրշուած էր ժողովի համար: Որովհետև մերոնց յայտնի չէ տաճկական կառավարութեան պատասխանը վերջին հեռագրին՝ մեր շրջանների մէջ էվակուացիայի մասին, ուստի Չիւենկելիմ պատուիրակութեան նախագահին հարց է տուել, թէ յայտնի՞ է արդեօք նրան տաճկական գնեթալիստի մասին առաջարկը և ընդուն՞ւմ է նախագահը այդ առաջարկութիւնը, իրրև ոչ ցանկութիւն Օտտոմանեան կառավարութեան շարունակելու հաշտութեան բանակցութիւնները, նախագահը պատասխանել է, որ ինքն այդ առաջարկի մասին ոչինչ չը գիտէ և խնդրում է Չիւենկելու հարցը գրատր կերպով ներկայացնել: Տաճիկներն իրենց պատասխանի համար ժամանակ են խնդրել և յայտնել են, որ իրենց նպատակն է հաստատուն հաշտութիւն կնքել: 28 փետր. մեր պատուիրակութիւնը ափ է պոլս գալիս հաշտութեան բանակցութիւնների համար:

- *Գնդամուտցիք* գրառել են Պետրագրաղը, քոչեիկները Մուկուս են տեղափոխուել:

- *Անգլիացիք*. - Այսօր քաղաքումս լուրեր են պտտում, որ անգլիացի-
ները զինուած ընդհարումներ են ունեցել Թեհրանում և Թարսիզում
պարսկական զորքերի հետ և իբր թէ գրասել են այդ քաղաքները: Ինձ
այդ լուրը հաղոյսդո՞ւմ է Թիֆլիսի հետազոտաւան ծառայողներէց մի հայ
ծառայող:

- Լոյս տեսաւ «Կարմիր օրեր» քերքի N 2-ը:

- Այսօր, Թիֆլիսի ժողովարանի տարեկան ժողովին եւ ընտրուեցայ
առաջ: Ժողովն ընկումնեց միասայն իմ առաջարկը՝ զամբարն մտակա-
լում առածին ժողով և ընճել Թիֆլիսի ժողովարանը «Հայկական Ա-
կումբ» անուանելու հարցը: Իր 28000ռ. գումարդիւնքից 15000ռ. յառ-
կացրեց Ազգային խորհրդին:

Էրզրումի առման մանրամասները. - Սէյմի նախագահը 28 փետր.
տուացել է հետևեալ հետազոյիր՝ «Հաղորդում են զենեքալ Վրիշինկա 27
փետրուարի տուած N 498 հետազոյի պատճենը, յի տեղեկութիւն զնդա-
պետ Ձինկեկիչը Հասան-Ղալայից հաղոյրդում է, որ այսօր փետրուարի
27-ին ըյս ծագելիս Էրզրումի քերպագնդի (ԳՐՈՒՅՈՒՆ) մասերը, իրենց
զրոյս ունենալով Առաջին հայկական գումող, սկսեցին բողնել քաղաքը և
հեռամալ: Թխրքերը առատութեանից սկսեցին յարձակուել հարբերդի,
Տրապիզոնի և Օրբու կողմի արտարքին ամբոյթիւններից (ՐՈՅԵԼՈՒՅ) և 7
ժամին առատութեան Տրապիզոնեան ամբոյթիւնը զբառում էր նրանց
կողմից, չը մայած կապիտան Ստոյակիւնի գլխաւորութեամբ անձնուեր
կերպով մի բուն զինուորների կողմից եզած պաշտարանման և բերդի
արտիկերիայի ալայի: Աղլանից յետոյ սկսուեց ամբողջ քերպալահ գոր-
քի տարերային մահանջը, որոնք հաւաքուեցան Հասան-Ղալեում: Կօ-
մանդիլը Հասան-Ղալա և Խնուս տունէ է հետևեալ հրաման. «Հասան-
Ղալա. զեն. Անդրանիկին, Խնուս՝ զնդապետ Օսիպովին. Հրամայում են
զեն. Անդրանիկին Էրզրումի գորամալը (ՕՐԲԱ) ժողովել Հասան-Ղալէ և
ձեռք առնել բոլոր միջոցները հանգստացնել և կարգի բերել: Էրզրումի գօ-
րամալին՝ որքան կայելի է երկար դիտմանալ Հասան-Ղալէի շքբանում,
որպեսզի ապահովեն Խնուսի գորամալի մահանջը դէպի Քէֆիքեօյ:
Գնդապետ Օսիպովին հրամայում են իր գորամալով հիմիկութեանից
սկսել հետզենտէ մահանջել դէպի Քէֆիքեօյ: Հէնց որ Խնուսի գորամա-
լը կը գայ այդտեղ, ամբողջովին մտնել զեն. Անդրանիկի հրամանատա-
րութեան ներքոյ: Կարճումցի գորամալին հրամայում են հետզենտէ նա-
խանջել դէպի Ղարաբիլիսա: 27 փետրուարի, 16 ժամ. 30 ը. (Երկույեան
4ժ. 30ր.): Օղիչելի՛ճէ:

Որպիհետև ոչ մի յարաբերութիւն չունեն Վանի հետ, խնդրում են, գօր-
քի հրամանատարի հրամանով, ձեռ կարգադրութիւնը Վանի գորամալի
վերաբերեալ կարգադրութիւններ անելու և նրան յայտնել համապա-
տասխան դիտարութիւններ: 27 փետր. Վրիշինակիյ:

- 25 և 26 (փետրուարի) Էրզրումի շրջանում մեր առաջագնաց գնդերը Ըղիջայի և Քանիա-Ղարասու ուղղությամբ ծանրախելով քիտրական կազմակերպ գործասերին, քնդանօթնելով, գնդացիքներով և հեծնալ գնդով կռուով ետ քաշուեցան դեպի Էրզրումի ամրոթիմները, կարգնելով 10 սպանուած և 180 վիրատըր և անյայտ կորած 50 մարդ, կանտոզկայի է ենթարկուած ենթգնդապետ Քորզումը և ծանր վիրատորուած է Տէր Դանիէլեան: Խնուսի կողմեր, Խնուսից դեպի հիւսիս Մանջիլի գիտի ժոտ քշել են քրդերին: Քելիի շրջանում (Խնուսից հարաւ) նոյնպէս քրդեր են երևան հանուած: Գարրոթի կողմեր քրդերին քշել են, իսկ Ալսլարի ժոտերը ունեցել են ընդհարումներ մեր առաջխաղաց գնդերը:

- Պաշտոնական յայտարարութիւնից երևում է, որ մերոնք Էրզրումում շատ քան չեն կարողացել ոյնչացնել և քողել են թէ ռազմամքերը և թէ պարենատորում: Մեր կորուտոններն են 200-ից աւելի սպանուած և վիրատոր, և ժոտ քսան սպայ, որոնք անհետք կորել են:

- Վրացիք զինուում են և ճանապարհուում Բաքումը պաշտպանելու և ամբողջ Գուրիան օտի է կանգնել:

Խորհրդատրոթիմներ 1. Անդրկովկասեան կառավարութիւնը շարունակ խանգարում էր մեր Ազգային խորհրդին իր ժամանակին զօրահաար անել. Ազգային խորհուրդը յայտարարեց զօրահաար 19-32 տարեկանների, իսկ Անդրկովկ. կառավարութիւնը՝ մինչև 25 տարեկանները: Այսպիսով, ի հարկէ ենար չեղաւ ժամանակին ամրացնել ռազմաքնը: Սրա պատճառն այն է, որ տեղական կառավարութեան վրացի անդամները միասնաարար ասեմ թէ յիմարաքար (ըստ վրացական սովորութեան) լսեցին բոլրը-բարբար անդամներին և գործը փչացրին: Դէ սիրելիք, մասնեղականը մասնեղական է, և մա պարզ աշխատում է իր հաստակցի համար ... 2. Խանգարիչների դեքումն էին մաև մենչեկները, որոնք սպառնում էին դուրս գալ Ազգային խորհրդի կազմից, և քաղեցին գործը: 3. Հայ սօցիալ-յեղափոխականները հօ պոռնիկի դերի մէջ մտան և ափաշկարայ կոչ արեցին չը հնազանդուել Հայոց Ազգային խորհրդի զօրակոչին և դասալիք զինուորների պաշտպան կանգնեցին: 4. Գեներալ Օրիշելիճէն, որ Էրզրումի շրջանի հրամանատրն է, անժամանակ, *ինչ-ինչ դիտումներով* քաղեց Էրզրումը և իր կայանը փոխադրեց Սարիդամիլ: Մա էլ պօլխոկկա՞ է թէ ոչ: 5. Անդրամիկը շարունակ զօրք էր խնդրում, սակայն մրան լսող չեղաւ, և մրա խնդիրը չը կատարեց: Այսպէս, ահա, դները միաքանուեցան, որ միասանուտ ուժերով կործանեն հայկական գործը:

Մէջ. Նյատ 26 փետրուարի նուիրուած էր Վեհիք - փաշայի առաջարկին՝ դարդարկել Բաքում, Ղարս և Արդանան: *Գեզչիօթիմ* և զլսատը հրամանատար զեն. *Լեքնդիմակիմ* հաղոդեցին մանրամասնութիւնները, որ մեր պատուիրակութիւնը հասել է Տրասպիզոն, իսկ թիւրքիոյ պատուիրակութիւնը չի եկել, իսկ վերջինս էլ, որ թիւրքիան ամրացնում է Տրասպի-

զոնի չբաճառելու և արտադրողի անհատականության հարցի ընտանիքում, առաջին ճանաչողական մեթոդիկ *Ժողովրդական* առաջարկեց, որ պետք է կենտրոնանալ պատճառաբանության և հայրենիքի պաշտպանության համար պետք է ամբողջ դիմակրատիան գնքի դիմի և որ գլխավորն է պահել այն, ինչ որ տուել է յեղափոխությունը: «Մուսաաթի» կողմից *Խան-Քոջեթի* մասնակցական սովորական խորամանկություններ առաջարկում է այդ հարցը քննել այն ժամանակ, երբ դա կարևոր կը լինի հայրենիքը չը գլուխ գալու պատճառով: Ուրեմն՝ սա ուզում է կովկասեան ազգերին քննեցնել, որ թխրքերը ներս գան ազատ կերպով: *Շահ-խորամանկ* դաշնակցության կողմից յայտնում է հայրենի պատճառաբանության մասին տալ զանեղ հայրենիքի պաշտպանության համար: Սօցիալ-յեղափոխական *Լոյզկիսկանի* և կաղեր *Ի. Սեմեով* կամզում են *Ժողովրդական* տեսակետի վրայ, և Մլժը ընդունում է քանակ, որով կատարության արած քայլերին տալիս է իր հասանելիությունը:

27-ին փետրուարի եղան պատմական միտք՝ նույնպես յեղափոխության տարեթիվին, որը շատ կարճ էր, և ճան խօսեց միայն Մլժի մատակարար Լ. Ս. Չիլիճին: Նյութից յետոյ պարտի առջև տեղի ունեցաւ միտից, որտեղ խօսեցին Չիլիճին, Գեգեկոյին, Մեսիսին, Իս. Բանիշվիլին, Արզումանեանը, ժողովրդական Կոյիսկանի և որիչները:

2 մարտի

Մլժ, 28/II դաշնակց. Համապիտ ժողովը է հարց Գանձակի մասին, որ հայերը և քուրքերը կզգոցել են վերջնականապես և կարող է սարսափելի վախճան առաջանալ, որի համար ընտրում է առանձին պատգամադրություն:

Առայժմ Մլժում կան 24 վրացի, 28 հայ, 37 մահմեդական, 4 ռուս, 1 գերմանացի, 1 օս, 1 լեզգին, 1 քուրդ և 2 քաթար պատգամադրներ, որոնցից 16 փաստաբան, 17 ժողովրդական, 8 ինժեներ, 16 մանկավարժ, 6 բժիշկ, 3 գիտնորական, 1 կոնտրոլի, 1 առևտրական, 3 քանտոր, 9 մոնիցիարական գործիչներ, 9 ուսանող, 1 գրականագետ, 1 ազգագետ, 1 երկրաչափ, 1 հայտաբան, 1 քիմիկոս և 2 կրթականախօս: Սորանցից 62 քարոզազոյն կրթութեամբ, 28՝ միջնակարգ (որոնց յոյւմ և ուսանողները 9 հ.), 8 ստորին և 1 ընտանեկան կրթութեամբ, իսկ 1-ը անգրագետ:

Էրզրումի տան մասին գն. Օրիչիլիճից ստացում է գրություն՝ ողորկում 27 փետր. և ստացում մարտի 1-ին. «Գնմ. Անդրանիկի շտաբի կատարիչի գեղապետ Ջիլկիչը 27 փետր. 22 ժամին Քեֆրի-քեռից ապարդարաւով զեկուցեց հետևեալ մանրամասնությունները մեր գործերի էրզրումը բողոքելու մասին. նախ ռազմական նրամանները չը կատարելու պատճառով (քաց է թողած) ... և երկրորդ, էրզրումից հեռանալը տեղի ունեցաւ այն պատճառով, որ հայկական զորամասերում, ո-

յոնք կազմուած էին ուսանալերից, մկատելի էր ցանկութիւն տուն վերադառնալու, իսկ քուրքահայերի գորամասերում գլխավին դեզօրգանիզացիա, որովհետև պակասում էին սպաներ և ենթասպասեր և ճանապարհով որ այդ մասերը ռազմական պատրաստութիւն չունէին: Ամբողջ հետևակ զօրքը, որ Էրզրումում քաղկացած էր 3000 հոգոց, մի ամբողջ փոխուեց: Զինուորները մատուց են գնացքների մէջ, քաց պատճառներով վրայ և ճանապարհում դէպի Մարիլամիշ: Սպաները մեծ ճասաճք մնացին Հասան-կալէում: Զօրամասի վստահելի մասն են կազմում միայն Մուրադի և Մեսալուի ձխառ գօրամասերը, որոնց հրամայուած է պաշտպանել մահանջը և որը կը շարժուի դէպի ետ ռազմական կարգով: Այդ գօրամասն ունի 6 լեռնաքնդանօր: Հասան-կալէն քալանուած է և այլուած է: Այդ բոլորն այնքան արագ է կատարուել, որ մօտ 20 արտիլերիա սպաներ մնացել են Էրզրումում, և Զենկէիլը համոզուած է, որ չեն փյաջցում այն քոյր արտիլերիան, որոնց համար հրաման էր տուած ոչնչացնելու: Դուրս է քերուած 4 լեռնաքնդանօրի կողպէքներն ու պանօլանները, արտիլերիական պահեստում մի պայթուցիչ սկան է դրուած, որը պետք է պայթէր 27-ի 11 1/2 ժամին Ախալիկ կոչուած ամրութեան վրայ: Տրասպիզոնեան դրան մօտ եղած պալեմատորման մեծ պահեստը մնաց անվնաս: Տիտաղելի գլխավոր արտիլերիական պահեստը պայթուցոնց Էրզրում մնացած սպաների խնդրով: Էրզրումի վրայ յարձակուող զօրքերի քանակը Զենկէիլը որոշում է՝ կանոնաւոր հետևակ զօրք 3000 մարդ 4 քնդանօրով և 4 գնդացիքով, 1 հեծելազօր գունդ, 3 էսկադրոն խառն գօրամաս և 1 օդանաւ: Մեր կողմստները մօտուող հաշուով աւելի քան 200 մաշը սպանուած և վիրատու: Գեմ. Անդրամիլը իր շտաբով անցաւ Քէֆրի-քեօյ՝ հասաւ չունենալով Հասան-Ղալայի պաշտպանութեան համար կազմել գտնէ պաշտպան փոքրիկ գօրամաս և որպէսզի կազմակերպէ Քէֆրի-քեօյի համար որևէ պաշտպանութիւն: Այսօր 28 փետր. զեմ Անդրամիլը զեկուցեց, որ այսօր առաւօտուանից Քէֆրի-քեօյն դատարկուած է, և Հասան-Ղալայից առաջագնաց գօրամասը հետանում է, թէպէտ քշմամին ո՛չ մի տեղ չի երևում: Գեմ. Անդրամիլը խնդրահ գօրամասին հրամայել է ետ գալ Կարատրգան և այնտեղ կանց առնել՝ պահապան մասեր կանգնեցնելով: Զինուորների տարեբային շարժումը դէպի Մարիլամիշ շարունակուած է, և զեմ. Անդրամիլը ենթադրում է, որ յոյս դեմը մինչև անգամ ժամանակաւորապէս Մարիլամիշում անկարելի է: Որովհետև միանգամայն անյուսալի է պաշտպանել Թիւրքահայաստանը: Ես այսօր եղարկում են Վեհիր - փաշային հետևեալ ուղիօհետազիլը. «Որովհետև հաշտութեան քանակցութիւններն սկսուած են Տրասպիզոնում մեր կատարութիւնների միջև, ես հրամայել եմ Թիւրքահայաստանում գտնուած բոլոր գօրամասերին քաշուել դէպի պետական սահմանը: Ես համոզուած եմ, որ ձեր կատարութիւնը, համաձայն ձեր նախկին հաղորդակցութեան, նոյնպէս իր զօրքերը կը կանգնացնէ

պետական աստիճանների վրայ, մինչև որ կը վերջանան հաշտության քանակցությունները: 28 փետր. 12 ժ. N 493. Օղիչելիձե՛ք:

Օղեսան գրաւել են գերմանացիները:

Ե. Գեղէկօզին կարգադրել է, որ Քոթրայիսում քնդիանութ զօրանաւար լինի և պատրաստութիւններ տեսնեն պաշտպանելու Բաբունը: Տաճիկները զայիս են Բաբունի վրայ, Գուրիան ոտի է կանգնել, իսկ ինչ վերջերս է աճալներին (մտաւորման-վրացիներ) նրանք դաւաճանութեամբ են զբաղում և պարզ կերպով տաճկաց կողմնակիցներ են:

3 մարտի

1879թ. Նոստր էչ դին շահի ցանկությամբ, ռուսական գլխավոր շտաբի գնդապետ Դոմանտովիչի գլխավորած սպայական խորժի աջակցությամբ, սակայն, իրանական կառավարության ֆինանսավորմամբ Իրանի հյուսիսում ստեղծվել էր Պարսկական կոզակական բրիգադ, որը սկզբում ծառայում էր որպես շահի պահսակախոմք³: Կարճ ժամանակահատվածում այն դարձավ ամենաարդյունավետ ուսզմական միավորն Իրանում⁴: Գտնվելով ռուսական վերահսկողության ներքո՝ Կոզակական բրիգադը նաև դեռ էր գալիս որպես ցարական Ռուսաստանի քաղաքականության գործիչ: 1917թ. Ռուսական հեղափոխությունից հետո, որի արդյունքում Իրանում զգալիորեն թուլացավ ռուսական ազդեցությունը, Կոզակական բրիգադի ղեկավարությունն անցավ իրանցիներին: Շուտով այն վերակազմավորվեց՝ դառնալով դիվիզիա, որի կառավարմանը նշանակվեց Ռեզա խանը: Բրիտանիան օգտվելով ստեղծված իրավիճակից՝ փորձեց լրացնել ռուս սպաների հեռանալուց հետո առաջացած վակուումը և զգալի ֆինանսական միջոցներ հատկացնելու շնորհիվ, կառուցեցավ Կոզակական բրիգադը վերցնել իր վերահսկողության ներքո⁵:

20-րդ դարի սկզբին չվել սպաների աջակցությամբ և հրամանատարությամբ ստեղծվել էր Ժամհարմերիա կամ Գյոլդական ստեղծանություն՝ նահանգներում կարգուկանոն հաստեղծելու և նարկելը հավաքելու նպատակով⁶:

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին բրիտանացիները Իրանում կեննել էին Հարավ-արևելական հրաձգային գործնաս, որը բրիտանական ռազմական ղեկավարության ներքո ապահովում էր Իրանի հարավային շրջանների անվտանգությունը: Այդ գործնախադրումը, որը ստեղծվել էր որպես հսկակշիտ գերմանամետ Ժամհարմերիային, Բրիտանիայի քաղաքականության գործիքն ու ազդեցության լծակներից մեկն էր Իրանում⁷:

Այսպիսով, 20-րդ դարի սկզբին կառավարական ուժերը վերահսկում էին միայն մայրաքաղաքը և հարակից շրջակայքը, իսկ երկրի մյուս տարածքները ցեղերի և այլ անկառավարելի տարրերի ձեռքում էին: Բնակամարաք, նամզում ենք այն եզրակացության, որ Իրանի զինված ուժերը ոչ այլ ինչ էին, քան տարանջատված և միմյանց հակադրվող խմբերի ամբողջություն:

Չնայած քանակն արդիականացնելու շողությանը՝ Ղազարների տիրապետության շրջանում կատարվել էին որոշ քայլեր, սակայն, դրանք կրում էին ընդամենը մակերեսային բնույթ, քանի որ չկար որոշակի ծրագիր՝ ստեղծելու Ազգային միասնական կանոնավոր քանակ: Դրա պատճառներից կարելի է համարել մակ այն, որ Ղազար տիրակալներն իրենց ավելի ապահով էին զգում զինված ուժերի տարանջատվածության պայ-

մաններում, որը թույլ էր տալիս հրահեղել դյանք միմյանց դեմ և կանխարգելում էր ուժերի ցանկացած միավորում:

1921թ. հեղաշրջումից հետո ստեղծված նոր կառավարության ծրագրի մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում բանակի զարգացման խնդիրը: Ռեզա խանը, որը կառավարության մեջ ընդգրկվել էր որպես Ռազմական նախարար, քաջ գիտակցում էր, որ միավորված Ազգային պետության կայացումը հնարավոր է միայն կայուն Ազգային բանակի առկայության պարագայում: Ուստի նա ձեռնամուխ եղավ օտարերկրացիների կողմից ղեկավարվող՝ ցրված և անհուսալի ուժերը հավառարիմ կանոնավոր բանակով փոխարինելու գործընթացին⁸:

1921թ. դեկտեմբերի 5-ին Ռեզա խանի ռազմական թիվ 1 հրամանով լուծարվեցին Վաջարների տիրապետության շրջանում առկա բոլոր անկախ զինված միավորները, և ստեղծվեց Իրանի Ազգային միասնական կանոնավոր բանակը⁹: Այդ գործընթացը հիմնականում իրագործվում էր 1919թ. Բրիտանիայի հետ կնքված, սակայն չվավերացված պայմանագրով ստեղծված՝ Անգլո-պարսկական համատեղ խանձնաժողովի նախագծին¹⁰ համապատասխան¹¹: Համաձայն այդ նախագծի՝ առկա բոլոր ռազմական միավորները պետք է ընդգրկվեին նոր ստեղծվող բանակի մեջ՝ որի կորիզը կազմելու էր անգլիացիների կողմից ստեղծված Հարավ-պարսկական հրաձգային զորամասը, իսկ ղեկավար դիրքերը զբաղեցնելու էին անգլիացի սպաները: Ռեզա խանը օգտագործեց այդ նախագիծը՝ անտեսելով Իրանին ոչ ձեռնտու կետերը:

Բանակի վերակազմավորմանը զուգընթաց՝ Իրանի տարածքը բաժանվեց 6 ռազմա-վարչական շրջանների, որոնց գլխավոր քաղաքներում տեղակայվեցին 5 դիվիզիաները.

Կենտրոնական դիվիզիա՝ Թեհրան,	
Հյուսիս-արևմտյան՝ Թավրիզ,	
Արևմտյան՝ Համադան,	
Հարավային՝ Սպահան,	
Արևելյան՝ Մաշհեդ ¹² .	

Այդ դիվիզիաների հետ մեկտեղ կար նաև մեկ անկախ քրիզադ, որը տեղակայված էր Ռեշտում: Հետագայում Ռեզա խանը մպատակ ունեցր ստեղծել մեկ դիվիզիա ևս՝ երկրի հարավը կենտրոնական կառավարության վերահսկողությանն ենթարկելու նպատակով:

Հիմնվեց հուսալի ուսովականական կորպուս, ինչպես նաև զադտնի քաղաքական ուսովականություն, որը հետագայում դարձավ Ռեզա Փահլավի իշխանության ամենագործող հեմարաններից մեկը: 1922թ. ստեղծվեց զինված ուժերի ևս մեկ ստորաբաժանում՝ Անվտանգության զվարդիա (ԱմՖիյե), որի պարտականություններից էր ճանապարհների անվտանգության ապահովումը և հեռավոր շրջաններում կարգուկանոնի նստատեղ¹³:

Բանակի կայացման գործընթացում առավել անհրաժեշտ խնդիր էր բարձրորակ սպայական անձնակազմի ձևավորումը: Ռեզա խանի ճնշման ներքո Մեջլիսը 1922թ. հունիսի 10-ին ընդունեց որոշում, որի համաձայն միջոցներ տրամադրվեցին՝ (671.600 ֆրանսիական ֆրանկ՝ գամարած 180.000 դիալ ճանապարհածախսերի համար) իրանցի սպաներին Եկրուպայի ռազմական ակադեմիաներ կրթության ուղարկելու համար¹⁴: Եվ շնայած՝ այդ շրջանում բավականին ակտիվացավ սպայական կազմի կրթության գործընթացը արտասահմանում, սակայն քանակի կարևոր պաշտոնները դեռևս զբաղեցնում էին փորձված, սակայն երբեմն առանց հատուկ ռազմական կրթության սպաները: Ռեզա խանի նման քաղաքականության պատճառներից կարելի է համարել այն, որ լիովին չվստահելով արևմտյան ռազմական կրթություն ստացած երիտասարդ սպաներին՝ նա խոստովանում էր քանակի ղեկավար դիրքերում նրանց նշանակելուց:

Ժառանգական սպաները և Ղազարական ընտանիքի այլաբարբախները զբկվեցին իրենց կուլումներից¹⁵: Նորաստեղծ բանակի կորիզը կազմեցին Ժանդարմերիայի և Կոզակական բրիգադի իրանցի սպաները և ենթասպաները: Հատկանշական է, որ ղեկավար դիրքերը զբաղեցրեց Կոզակական բրիգադի սպայակույտը, որը հաճախ դժգոհությունների առիթ էր հանդիսանում: Ժանդարմերիայի սպաները, բարձր գնահատելով իրենց որակավորումը և հավակնություններ ունենալով քանակում ղեկավար դիրքեր զբաղելու նկատմամբ, չէին ցանկանում զործել Կոզակական բրիգադի սպաների ենթակայության տակ: Բանակում կարգուկանոն հաստատելու նպատակով Ժանդարմերիայի սպաներից շատերը հեռացվեցին քանակից, որի արդյունքում այն զրկվեց մի շարք արհեստավարժ մասնագետներից:

Արախովելով քանակում սպաների և ենթասպաների քանակը՝ Ռեզա խանը ձեռնամուխ եղավ ռազմական ուսումնական համընդհանուր ծրագրի իրագործմանը, որն անկասկած նպաստում էր հասարակության միավորմանը, գրագիտության մակարդակի բարձրացմանը և նախնական մեկուսացման քայքայմանը: Մինչև 1930թ. թնիսահամոն հիմնվել էր 2 ռազմական դպրոց, որտեղ դասավանդում էին ինչպես ֆրանսիացի սպաներ, այնպես էլ Եվրոպայի ռազմական ակադեմիաների իրանցի շրջանավարտները: Ռեզա խանը կանխատեսված էր համալրում իրանական քանակը սպայական մեծաքանակ անձնակազմով՝ ետևի եղած դեպքում սրահետադան ծառայության մեջ գտնվող զինվորներին մոբիլիզացնելու նպատակով¹⁶:

1925թ. փետրվարին Մեջլիսը ճանաչեց Ռեզա խանին որպես երկրի զինված ուժերի զեքսգույն հրամանատար՝ տալով նրան շահին հարկը արտոնություններ¹⁷: Նույն թվականի հոկտեմբերի 31-ին Ռեզա խանի ճնշման ներքո Մեջլիսը որոշում ընդունեց Ղազարական դիմաստիայի

տապալման և երկրի իշխանությունը Ռեզա խամին փոխանցելու վերաբերյալ:

1925 թվականի հունիսի 6-ին Մեջլիսն ընդունեց Պարտադիր զինվորական ծառայության մասին օրենք՝ 21 տարեկանը լրացած իրանահարառակ բոլոր տղամարդկանց համար: Նոր օրենքը տարածվում էր ինչպես կրոնական փոքրամասնությունների, այնպես էլ քաղաքային քնակչության և ցեղերի վրա: Ի լրումն երկամյա ակտիվ ծառայության՝ զինակոչիկները 23 տարվա ընթացքում գտնվում էին պահեստային ծառայության մեջ¹⁸:

Այդ օրենքն առաջացնում էր զգալի սոցիալական փոփոխություններ, որոնցից յուրաքանչյուրը կազմում էր արդիականացման և զարգացման համընդհանուր ծրագրի կարևոր մաս: Նոր օրենքի համաձայն՝ միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները մինչև իրենց ուսման ավարտը ազատվում էին զինվորական ծառայությունից, ինչպես նաև որոշ զիջումներ էին կատարվում ընտանեկան պարտավորվածություն ունեցողների հանդեպ¹⁹: Ռեզա շահի կրամանով ազնվականների, ցեղերի առաջնորդների և հասարակ գյուղացիների զավակները պետք է ծառայեին մույն զորամասերում²⁰: Ի լրումն զինվորական ծառայության՝ առաջին երկու տարիների ընթացքում կազմակերպվում էին զբաղիտության դասընթացներ, ինչպես նաև քայլեր էին ձեռնարկվում զինվորներին որևէ արհեստ սովորեցնելու ուղղությամբ: Քաղաքային կյանքի ազդեցությունը գյուղական և ցեղերի գոթակոչիկների վրա այնքան մեծ էր, որ ակտիվ ծառայությունն ավարտելուց հետո նրանք կաճախ ժնուր էին քաղաքում, իսկ իրենց գյուղերը վերադառնալուց՝ տանում էին արևմտյան քաղաքակրթության նշույլները, որն արտահայտվում էր ոչ միայն արևմտյան տիպի հագուստ կրելով, այլև նրանց մտածելակերպի վրա ունեցած ազդեցությամբ:

1936թ. փետրվարի 15-ին ընդունվեց Ջինված ուժերի վերակազմավորման մասին նոր օրենք, որը սահմանում էր նոր և բացառապես պարսկերեն լեզվով կոչումներ²¹, վերանայում էր մարտակարգը, կանոնավորում առաջխաղացման հիմքերը, սահմանում թոշակավորման համակարգը և զինվորական անձնակազմի ապահովագրումը:

1925թ. Համընդհանուր զինվորական պատրաստման մասին օրենքը փոխարինվեց 1938թ. հունիսի 19-ին վերանայված օրենքով, որն ապահովում էր ծառայության ավելի սեղմ ժամկետներ և առաջխաղացման ավելի կարճ սանդղակ միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների համար: Այն սահմանափակում էր զինվորական ծառայությունից խուսափելու նմարավորությունները, քանի որ համաձայն դրա՝ աշխատունակ ցանկացած տղամարդու համար անհնար էր դարձել գտնել աշխատանք առանց զինծառայությունն ավարտելու կամ դրանից ազատվելու վկայագրի:

Նոր օրենքը մեծ ազդեցություն ունեցավ մաև կրոնավորների կյանքի վրա: Համաձայն էին օրենքի 16-րդ հոդվածի՝ Շարիաթի դատարանների դատավորները, աստվածաբանական դպրոցների ուսանողները, զրադաշտական, քրիստոնյա և հուդայական կրոնների կրոնավորները ազատվում էին զինվորական ծառայությունից: Նոր օրենքի 62-րդ հոդվածով բոլոր հոգևորականները ենթարկվում էին երկամյա սրբոտաղիտ ակտիվ ծառայության, սակայն ազատվում էին հետագա սրահեստային ծառայությունից²²:

1938թ. հունիսի 26-ին կանոնավոր քանակի առաջխաղացման սանդղակը վերամայվեց հոգևոր համալսարանական կրթությամբ սպաների, որը խթանում էր մաև բարձրագույն կրթության տարածումը²³:

Դարասկզբին քանակի սպառազինումը բազմաբովանդակ էր, քանի որ դրա համալրման գործընթացը համակարգված չէր, որը կարելի է քաջատրեկ նրանով, որ չունենալով սեփական ռազմական արտադրություն, Իրանը ստիպված էր դրսից գնել զենք և զինամթերք, որին համապատասխան գումարներ երկիրը չունեք: Միայն 1920-1930-ական թվականներին իրանական կառավարությունը ձեռնամուխ եղավ այդ խնդրի լուծմանը՝ քանակի արտադրությունը համարելով Չիխուսլովակիայի, Շվեդիայի, Գերմանիայի ռազմական գործարաններից²⁴:

Համաձայն պաշտոնական տվյալների՝ բյուջեով մախատեսված էր ռազմական ծախսերին հատկացնել²⁵:

Բյուջետային տարի	Ընդհանուր պետական ծախսեր, (թմանով)	Ռազմական մախարարության ծախսեր (թմանով)	Ռազմական ծախսերի հարաբերակցությունը ընդհանուր ծախսերին, %
1922-1923թթ.	20, 438 896	9, 000 000	44,4
1923-1924թթ.	22, 937 856	9, 400 000	40,9

Այսպիսով Ռեզա շահի կառավարման առաջին տարիներին ռազմական ծախսերը կազմում էին բյուջեի մոտավորապես 40%, 10 տարի անց այդ թիվը նվազել էր մինչև 25%, քանի որ աճել էին տնտեսության զարգացմանն ուղղված ծախսերը: Դրան գումարած կար մաև մավթի, թեյի, շաքարի ճակնդեղի մեծաշմոքիներից ստացված եկամուտների հատուկ բյուջե, որի 30-35% տրամադրվում էր ռազմական ծախսերին²⁶: Այդ եկամուտների մեծ քաժինը մախատեսված էր հիմնականում ռազմական տեխնիկա՝ մասնավորապես նավեր, ինքնաթիռներ, տանկեր և ծանր քեռնատար մեքենաներ գնելու համար: Բացի այդ, երկրի արդյունաբերության զարգացման, տրանսպորտային շինարարության և հաղորդակ-

գորչան մախագծերը ձեռնարկվում էին մեծ մասամբ ռազմական կա-
րիքները եաշվի առնելով: 1930-ական քվականներին արդյունաբերու-
թյան զարգացման աճը խթանեց մեծ զենքի արտադրությունը. Թեև իս-
նում կատարվեց զնդագիրքների, իսկ մայրաքաղաքի մատույցներում՝
«Ըսեիրագ» ավիացիոն գործարանները²⁷:

Բանակի ձևավորման գործընթացում կարևոր քայլ էր մեծ երկրում
ռազմական օդուժի ստեղծումը: Համաձայն ԽՍՀՄ-ի ռազմավարական
ինտախուզության տվյալների՝ Իրանը մինչև 1923թ. չուներ ինքնաթի-
ռներ: Այդ բացը լրացվեց նույն թվականին՝ Իրանի Ռազմական Մախա-
բարության և երկրում Ֆրանսիական առաքելության միջև կնքված՝ ինք-
նաթիռներ գնելու վերաբերյալ համաձայնագրով²⁸: Հետագայում օդուժն
այսին ուներ 4 ավիացիոն, որոնք բաղկացած էին շուրջ 200 ինքնաթի-
ռից: Այդ ինքնաթիռները ռուսական, քրիտանական արտադրության էին,
կամ արտադրված էին Իրանում քրիտանական մախագծով²⁹:

Հիմնվեց մի քանի ավիացիոն դպրոց, մասնավորապես Մեհրաբադի
դպրոցը, որտեղ ուսուցումը իրականացնելու նպատակով վարձվեցին օ-
տարեկրացի օդաչուներ, ինչպես մեծ 1928թ. սկսվեց իրանցիներին
ԽՍՀՄ և այլ երկրների ավիացիոն դպրոցներ ուղարկելու գործընթացը:
Այսպիսով, ուսուցումը դեռևս հիմնականում օտարերկրացիների ձեռքում
էր, որտեղ զգալի էր հասկապես գերմանացիների մասնակցությունը:
Սակայն չի կարելի ասել, թե որևիցե երկիր ուներ առավել ազդեցություն
Իրանում, քանի որև նրանցից ոչ մեկը չէր ստացել այլ արտոնություն-
ներ³⁰: Իրանական փոքրաքանակ օդուժը քիչ ուշադրություն էր գրավում,
քանի որ այն հիմնականում մասնակցում էր շահի պատվին կատարվող
ռազմական շրթերներին:

Հարկ է նշել նաև, որ Ռեզա շահի ցանքելով Պարսից ծոցում հիմնվեց
մեծ ռազմական նավատորմ, որը սկզբում բաղկացած էր ընդամենը 2
երետանավից և 4 հետախուզական ռազմանավից, որոնք 1932թ. գնվեց
էին Իտալիայից³¹:

Ի տարբերություն օդուժի, իրանական նավատորմի հայտնվելը Պար-
սից ծոցում անհամաձայնություն առաջացրեց, քանի որ իրանական հե-
տախուզական ռազմանավերը կանգնեցնում էին արաբական նավերը ի-
րանական տարածքային ջրերից դուրս, որն էլ դժվարություններ էր
ստեղծում քրիտանացիների համար՝ արաբների հետ իրենց հարաբե-
րություններում: Հարկ է նշել, որ իրանական նավերը խնդիրներ առա-
ջացրին հատկապես Շաբր-էլ-Արաբում՝ չեմբարկվելով նավահանգստա-
յին օբեկներին³²:

Իր կատավարման առաջին տարիներին Ռեզա շահը, քանակի վիճա-
կը որոշ չափով բարելավելուց և այն մարտունակ դարձնելուց հետո, ձեռ-
նամուխ եղավ կենտրոնախույս ցեղերի խնդրի լուծմանը, որը ևս նրա՝
երկրի կենտրոնացման քաղաքականության կարևոր տարրերից էր: Այդ

ուղղությամբ նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնցից էին ճանապարհաշինությունը, ցեղերի բռնի «քնակեցման» քաղաքականությունը, նրանց զինաքափումը, ցեղապետերի չեզոքացումը խոշտանգումների, ձերբակալությունների, տնային կալանքի միջոցով: Որտեղ ցեղապետերի կալվածքները փոխարինվեցին իրենց ցեղերից հեռու՝ այլ մահացներում գտնվող կալվածքներով՝ դավադրությունները կամխելու նպատակով³²: Ռեզա շահը նպատակ հետապնդելով քայքայել ցեղերի միասնությունը՝ քուլագրեց հասարակ անդամներին կախումը ցեղապետերից: Ցեղերի հանդեպ կիրառվող քաղաքականությունն ուներ նրկու նպատակ. խափանել կենտրոնական կառավարության դեմ քաղաքական կամ ուսման կան ջնդրիմության ցանկացած հնարավորություն և կարգուկանոն հաստատել նահանգներում: Չնայած, որ իր կատարման ընթացքում Ռեզա շահը կարողացավ բուլացնել կենտրոնախույս ցեղերին և հաստատել համեմատաբար կենտրոնացված իշխանություն³⁴, սակայն ժամանակ առ ժամանակ՝ հատկապես 1930-ական թվականներին, տեղի էին ունենում ցեղերի խռովություններ և ավազակային հարձակումներ, որոնց դեմ նա ստիպված էր պայքարել:

Ռեզա շահը նպատակ ուներ հասնել ազգային ինքնիշխանության երկրում և Իրանի անկախության ճանաչմանը դրանով, որը հնարավոր էր միայն հզոր կենտրոնական իշխանության պայմաններում: Որպես այդ նպատակներին հասնելու վճռորոշ գործիք նա դիտարկում էր հզոր բանակը: Ռեզա շահն աշխատում էր այդիականացնել երկիրը՝ նվազագույնի հասցնելով կախումը Եվրոպայից:

Չնայած, որ իրանական հեղաշրջումը կատարվել էր զինվորականների և քաղաքացիական առաջնորդների համագործակցությամբ, սակայն Ռեզա շահը իշխանության գլուխ էր եկել և որտեղից կայունություն էր հաստատել բանակի աջակցությամբ: Բանակին համապատասխան ֆինանսական միջոցներ տրամադրելու և ժամդարձերիան ու Ոստիկանությունը իր տրամադրության մերքո մտցնելու շնորհիվ էր, որ գալով իշխանության գլուխ՝ նա կարողացավ ասպարեզից հեռացնել բոլոր լնդդիմադիր քաղաքական գործիչներին և իր կառավարման ընթացքում բուլլ չտվեց քաղաքական լնդդիմության գոյություն³⁵:

Հարկ է նշել, որ Ռեզա շահ Փակավին, ըստ արժանվույն գնահատելով բանակի դերը, քազմիցս արտահայտել է իր կարծիքը այդ կարակցությամբ, որը հատակ ձևավորվել էր դեռևս 1921թ. հեղաշրջումից հետո տեղիված կառավարության ծրագրում հետևյալ կերպ. «Բանակն ամեն ինչից առաջնայինն ու վեր է: Ամեն ինչ առաջին ենթին պետք է արվի բանակի համար, և կրկին բանակի համար... մինչև որ մեր զինված ուժերը հասնեն զարգացման բարձրագույն աստիճանի»: Այդ խոսքերը հնչում էին վարչապետ Մեյիդ Չիա էր-Դին Ցաքաբարայիի ձայնով, սա-

կայն բանակին վերաբերող քառերը, ինարկն, Ռեզա խանին էին պատկանում³⁶։

Ռեզա շահի վարած քաղաքականության հետևանքով քանակը մեծ հեղինակություն էր վայելում՝ քանի որ դրա միջոցով անգամ հասարակ բնակիչները հնարավորություն էին ձեռք բերում կրթություն ստանալ և հասնել որոշակի ազդեցության։ Բանակի հավատարմությունը թագավորական իշխանության հանդեպ ապահովելու նպատակով Ռեզա շահը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ. սպանելից շատերին շնորհվեցին կոչումներ և հողային տարածքներ, որի հետևանքով նրանք ձեռք բերեցին մի շարք արտոնություններ³⁷։ Անգամ ցածրաստիճան սպաները, կամավոր զինվորները և ժամդարմները ձեռք բերեցին ավելի մեծ արտոնություններ՝ համեմատած իրենց նախկին դասային դիրքի հետ։ Այսպիսով, արվեց ամեն ինչ՝ քանակի հավատարմությունը նրաշխավորելու նպատակով։ Այդ քաղաքականության շնորհիվ ստեղծվեց որոշակի արտոնյալ սոցիալական դաս, որը հավատարիմ էր Ռեզա շահին, և իր գահ քարծրամալուց առաջ և հետո հանդես էր գալիս որպես նրա քաղաքականության հենարան։

Իրանի ժամանակակից ռազմական ուժի զարգացումը լուրջ հետևանքներ ունեցավ ցեղերի և գյուղական կյանքի համար։ Ավանդաբար ցեղերն իրենց կովոլ ուժերի գերադասության շնորհիվ մեծ հեղինակություն էին վայելում և ինչ-որ տեղ կախման մեջ էին պահում կառավարությանը։ Սակայն այժմ դրանք փոխարինվել էին ավելի լավ սպառազինված կովոլ ուժով, որը և ստիպեց նրանց ենթարկվել կառավարության պահանջներին։ Այսպիսով, նորաստեղծ Ազգային կամոնավոր բանակն էր, որ կարողացավ թուլացնել ցեղապետերի ուժը և նրանց ազդեցությունը մտահանգեցնում ու հաստատել կենտրոնական կառավարության ազդեցությունը ողջ երկրով մեկ։

Ռեզա շահի փամբերով մինչև 1941թ. Իրանում ստեղծվել էր կամոնավոր բանակ, որի արարտականությունների մեջ ինարկն մտնում էր նրկիլն արտաքին վտանգից պաշտպանելը, սակայն այն առավելապես ընդունակ էր պահելու կենտրոնական կառավարության իշխանությունը³⁸՝ հանգամանք, որը չի եղել երկրում երկար ժամանակ։ Ռեզա շահը օգտագործում էր հզոր բանակի գաղափարը որպես Իրանի վերակենդանացման խորհրդանիշ՝ միաժամանակ ճնշելով կենտրոնախոյս ցեղերի ըմբոստությունները։ Նա ոչ միայն կարողացավ որոշ չափով միավորել երկիրն իր իշխանության օրոք և օգտագործել բանակը որպես նվաճումների վրա հիմնված սոցիալական առաջընթացի ճանապարհ, այլև օգտագործեց այն՝ որպես իր անձնական ազդեցության գործիք³⁹։

Այդուհանդերձ, ինչպես Ստաֆին Համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Ղաջարական պետությունը գտնվում էր ճգնաժամային վիճակում՝ օտար տերությունների ազդեցության տակ, այնպես էլ, Երկ-

բորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ երկիրը Ռեզա շահի կառավարման ներքո գտնվել էր անկախ պետություն, որն ուներ կենտրոնական կառավարություն և Ազգային միասնական բանակ, Իրանը հայտարարեց իր շեզոքության մասին: Սակայն երկու դեպքում էլ Իրանի կամքն ամոտնվեց, և երկիրը վերածվեց պատերազմական գործողությունների քառերաբնիլ:

Այսպիսով, բանակն ի վիճակի չեղավ դիմադրելու Դաշնակիցների կողմից Իրանի գրավմանը 1941թ. օգոստոսին և Ռեզա շահի՝ գահից պարտադրված հրաժարվելու հոգոտ իր որդու, ռուսի մեծ զորմարտների, ժամանակի, մադդկային կազմի և ռեսուրսների ներդրումը կյանքի այլ կարիքների հաշվին չաղաբացրեց Ռեզա շահի սպասումները եզոք բանակ տևողվելու վերաբերյալ:

Սակայն նորաստեղծ բանակին հաջողվեց երկրի բոլոր անկյուններում հաստատել կենտրոնական կառավարության իշխանությունը: Եվ չնայած այդ գործընթացները կյանք էին հարկադրական քնույր և ունեցան հարաբերական հաջողություն, անուսմենայնիվ, միայն երկրում կայունություն հաստատելուց հետո էր հնարավոր իրականացնել այդպիսի անցումներն ու զարգացմանն ուղղված քարեփոխումներ:

LUSINE STEPANYAN

IRANIAN ARMY AS MAIN FACTOR OF CENTRALIZATION POLICY OF THE COUNTRY (THE FIRST HALF OF XX CENTURY)

Reza Shah Pahlavi from the first days of his rulership sought to centralize Iran and make it a modernized and developed country with self-sufficient and educated nation. But reforms couldn't be made in the atmosphere of disunity that reigned in Iran, so the first task was the unification of the nation. The most important step on this way was re-establishment of law and order and concentration of power in the hands of the central government.

Realizing that the emergence of a unified national state coincides with the development of a standing national army, Reza Khan pledged himself to that problem. After becoming Minister of War in 1921, he dissolved all independent military units that existed at the end of Qajar period and created the first unified and uniformed standing national army in Iran of that period. And the power of newly created army elevated Reza Khan to the throne.

Reza Shah not only created an adequate and competent officer corps, which was made partly by sending cadets to the military academies of France and later other European countries, but also proposed the enactment of a universal military training program, which contributed considerably to the amalgamation of society, the rise of literacy, the urbanization of the young rural and tribal population and the breakdown of provincial isolation. In 1925 the Majlis passed the Law of compulsory military conscription, which brought considerable social changes, one of which is that the

representatives of all social classes had to have military service in the same conditions.

Reza Shah not only created a unified army, he provided it with relatively modern munition, founded a small Navy on the Persian Gulf and an airforce. According to the official budget figures from 1921 to 1941 an annual average of 33.5 per cent of the total revenue was allocated for military purposes. As a result of Reza Shah's efforts, a Westernized army could be mobilized by 1941. And though the army of Reza Shah Pahlavi could not withstand the forcible entry of Allies into Iran in 1941, it was capable of maintaining the authority of the central government throughout Iran, a condition that had not existed in the country for hundreds of years. Although all these processes carried forcible character and had relative success, it was after the unification and centralization of Iran, that Reza Shah could make reforms on the way of modernization of the country, which was an important step forward, especially in comparison with Iran during the reign of last Qajars.

СЫЛЛАМАЧЫН ТЭВНИЛЛЕР

1. Marvin Zonis, *The Political Elite of Iran*, Princeton University Press, 1971, p. 102.
2. Персия: Обзор вооруженных сил с приложением очерка экономического и политического положения по данным к 1 июля 1923г., *Материалы стратегической разведки*, Москва, 1923, стр. 46, Sh'u ilsh' Donald N. Wilber, *Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran*, New York, 1975, p. 30, Banani Amin, *The Modernization of Iran: 1921-1941*, Stanford, California, 1961, p. 52, William S. Haas, *Iran*, Columbia University Press, New York, 1946, p.221.
3. Н.Р. Рухсиева, К истории иранских казачьих частей (по архивным материалам), *Востоковедение, Сборник научных трудов* № 564, Ташкент, 1979, стр. 130, Sh'u ilsh' М. Выборнов, *Персия и ее вооруженные силы*, Отдел Военной литературы, Москва, Ленинград, 1928, стр. 54, *Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Society*, London, 1980, p. 219, E. Burke Inlow, *Shahanshah. A study of the monarchy of Iran*, Delhi, 1979, p. 141.
4. Banani Amin, *The Modernization of Iran*, p. 53, Sh'u ilsh' Tulsiram, *Persia to Iran (One Step Forward Two Step Back)*, New Delhi, 1985, p. 22.
5. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 3, Sh'u ilsh' William H. Forbis, *Fall of the Peacock Throne, The Story of Iran*, New York, 1980, p. 143.
6. Выборнов, *Персия и ее вооруженные силы*, стр. 56, Sh'u ilsh' Marvin Zonis, *The Political Elite of Iran*, p. 103, *Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Society*, p. 219.
7. *Ibid.*, p. 219, Sh'u ilsh' Выборнов, *Персия и ее вооруженные силы*, стр. 56.
8. Bruce Hopper, *The Persian Regensis (Key to politics in the Middle East)*, *Foreign Affairs*, January, 1935, vol.-13, No-2, p. 298.

9. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 4, Ирвндуст, Персия, 2-ое издание книги Персия вчера и сегодня, Москва Ленинград, 1928г., стр. 158, Sh'u faul' Ариф Алиев, Иран vs Ирак: История и современность, Москва, 2002, стр. 506, Реза Годс М., Иран в XX веке: Политическая история, Москва, 1994, стр. 133, Arthur Millsburgh, Americans in Persia, Washington, 1946, p. 27, General Hassan Arfa, Under Five Shahs, New York, 1965, p. 126.
10. 1919թ. օգոստոսին Իրանի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների միջև կնքվեց պայմանագիր, որի կետերից մեկի իրազեկումը նախատեսվում էր անդրել Գարսիա-րիխտանական համառոտ համձնագրով, որը պետք է իրականացներ իրանական քանակի վերականգնվածը և արդիականացնան գործընթացը՝ առկա բոլոր զինված ուժերի միավորմամբ: Փոխարենը Բրիտանիան Իրանում ստանալու էր տնտեսական առավելություններ և իրավունք՝ Թեհրանից Գարսից ծոց երկաթուղի կառուցելու համար: Այսպեսով, Իրանը ոչ միայն վճարում էր իրեն պայծառ կոզուտի՞ համար, այլև զբաղվում ընդհանրապես էր Մեծ Բրիտանիայի ազդեցության տարածումը Իրանում: (Richard W. Cottam, Nationalism in Iran, University of Pittsburgh Press, 1964, p.18, Sh'u faul' Tuisiram, Persia to Iran: One Step Forward Two Step Back, New Delhi, 1985, p.22.)
11. Agreement between His Britannic Majesty's Government and the Persian Government. Signed at Tehran, August 9, 1919, Article 1, point 2, Collection of Treaties, Engagements and Sanads, relating to India and neighbouring countries, vol. XIII, 138, Calcutta: Government of India, 1933, p. 138, Sh'u faul' J.C. Hurewitz, Middle East Politics: The Military Dimension, New York, Washington, London, 1969, p. 271, Brigadier-General Sir Percy Sykes, A History of Persia, London, 1951, p.524.
12. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 4, Sh'u faul' Выборнов, Персия и ее вооруженные силы, стр. 60, William H. Forbis, Fall of the Peacock Throne, p. 43, General Hassan Arfa, Under Five Shahs, p. 127.
13. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 28, Sh'u faul' Elwell-Sutton, Modern Iran, London, 1941, p. 76, E. Burke Inlow, Shahanshah, p. 153.
14. Basani Amin, The Modernization of Iran, p. 55, Sh'u faul' J.C. Hurewitz, Middle East Politics, p. 271.
15. Ариф Алиев, Иран vs Ирак, стр. 506.
16. Ibid., p. 271.
17. General Hassan Arfa, Under Five Shahs, p. 170.
18. Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Society, p. 220, p. 75, Sh'u faul' J.C. Hurewitz, Middle East Politics, p. 271.
19. Basani Amin, The Modernization of Iran, p. 55, Sh'u faul' Выборнов, Персия и ее вооруженные силы, стр. 69.
20. General Hassan Arfa, Under Five Shahs, p. 189.
21. Реза Годс М., Иран в XX веке, стр. 144.
22. Basani Amin, The Modernization of Iran, p. 56.

23. *Ibid.*, p. 56.
24. D. Bourke-Burrows, *Changes and Development in Persia during the Pahlavi Regime*, *Journal of the Central Asian Society*, vol. XVIII, January, 1931, part I, p. 39.
25. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 94.
26. Marvin Zonis, *The Political Elite of Iran*, p. 105, *Sb'u ĩwul' Twentieth-Century Iran*, ed. By Hossein Amirsadeghi, London, 1977, p. 34.
27. Реза Годс М., *Иран в XX веке*, стр. 146, *Sb'u ĩwul' Journal of the Central Asian Society*, vol. XVIII, p. 39.
28. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 34.
29. *Twentieth-Century Iran*, p. 34.
30. Elwell-Sutton, *Modern Iran*, p. 74.
31. *Ibid.*, p. 76, *Journal of the Central Asian Society*, vol. XVIII, p. 39, *Sb'u ĩwul' Arthur Millspaugh, Americans in Persia*, p. 27.
32. *Twentieth-Century Iran*, p. 34.
33. *Journal of the Central Asian Society*, vol. XVIII, p. 40, *Sb'u ĩwul' General Hassan Arfa, Under Five Shahs*, p. 286.
34. E. Burke Inlow, *Shahanshab*, p. 142, *Sb'u ĩwul' William S. Haas, Iran*, p. 151, Elwell-Sutton, *Modern Iran*, p. 74.
35. J.C. Hurewitz, *Middle East Politics*, p. 275, *Sb'u ĩwul' A. Reza Arasteh, Man and Society in Iran*, Leiden, Netherlands, 1964, p.104.
36. Donald N. Wilber, *Riza Shah Pahlavi*, p. 49.
37. George M. Haddad, *Revolutions and Military Rule in the Middle East: The Northern Tier*, New York, 1965, p. 226, *Sb'u ĩwul' Nikki Keddie, Iran: Religion, Politics and Society*, London, 1980, p. 154.
38. Banani Amin, *The Modernization of Iran*, p. 57, *Sb'u ĩwul' Leonard Binder, Iran, Political Development in a Changing Society*, Berkeley and Los Angeles, 1962, p. 144.
39. *Ibid.*, p. 144, *Sb'u ĩwul' Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Society*, p. 220, William H. Forbis, *Fall of the Peacock Throne*, p. 145.

ԱՐԱՔՍ ՓՆՇԱՅԻՆ

ՎԱՀԱՐԱԿԻՆ ԶԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՉ

Վահարականությունը, որպես կրոնաքաղաքական հոսանք, սկզբնավորվեց 18-րդ դարի առաջին կեսին Արարական բերակղզու կենտրոնական շրջանում՝ Նեջդում, կրոնական քարոզիչ աստվածաբան Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի (1703-1787) կողմից¹, որը ժայռահեղություն հասնող մաքրակրոնության կողմնակից էր: Նոր ուսմունքը կոչ արեց վերադառնալ վաղ իսլամի ակունքներին, խստորեն հետևել միաստվածության սկզբունքներին, հրաժարվել ամեն տեսակ նորաքաղաքությունից (բիդա): Վահարականությունը, ձևավորվելով սուննիականության հիմքում, հայտն էր հանրալիզմին²՝ Երկրպագի և արաբ որոշ նեղիմակներին աշխատանքներում վահարականները բնութագրվել են որպես պորիսաններ կամ իսլամի թողոքականներ³: Վահարականությունը հատուկ է անհանդուրժողականությունը այն մահմեդականների նկատմամբ, որոնք վահարականության տեսանկյունից խախտել են իսլամի սկզբունքները (քաբիիր): Պատահական չէ, որ մեր օրերում «վահարականություն» ստեղծվեց հաճախ նկատի են առնվում իսլամական արմատական գաղափարախոսությունները:

Պատմականորեն վահարականությունը դրական դերակատարություն ունեցավ սաուդական պետության ձևավորման հարցում: 1745թ. սաուդյան դինաստիայի հիմնադիր էմիր Մուհամմադ իբն Սաուդի դաշինքը ալ-Վահհաբի հետ հիմք դարձավ XIX դարում սաուդական պետության տեղեման համար: Սաուդյաններին աստիճանաբար հաջողվեց միավորել Արարական բերակղզու զգալի մասը: Ալեյի ուշ, 1932-ին, հռչակվեց Սաուդյան Արաբիայի թագավորությունը⁴:

Որպես դավանանք Սաուդյան Արաբիայում հռչակված է իսլամը: Սաուդական դինաստիայի ներկայացուցիչները մեկ անգամ չէ, որ նշել են, թե վահարականությունը չպետք է դիտարկվել որպես իսլամի հատուկ տեսակ: Դրա մասին խոսվում է միայն պատմական և դավանաբանական համատեքստում, չնայած որ վահարականությունը ծառայում է սաուդական պետական գաղափարախոսությանը:

Սատոյան Արսիսյան, որը թե՛ արաքական և թե՛ իսլամական ինքնության կրող է, իսլամն ավելի մեծ դերակատարություն ունի քաղաքական և սոցիալական կյանքում, քան որևէ այլ արաքական երկրում: Այն քաղաքական արժեքների վրա ազդեցություն է գործում որպես կրոն, գաղափարախոսություն և մշակութային ինքնագլխատակցության խորհրդանշ: Սատոյան Արսիսյան միակ պետությունն է ողջ մահմեդական աշխարհում, որտեղ Վարանը ծառայում է որպես էիմմական օրենք, իսկ հասարակության բարոյական, սոցիալական և իրավական կողմերը կարգավորում է շարիաթը:

Միջազգային հարաբերություններում սատոյական քաղաքական դերի մեծացումը ակնհայտ դարձավ 1960-ականների երկրորդ կեսին և 1970-ականների սկզբին, որ պայմանավորված էր մի շարք կարևոր պատմական դեպքերով: 1940-50-ականներից արաքական մահմեդական երկրներում ազգայնական գաղափարախոսությունների ու քաղաքական աշխարհիկ տեսությունների ամրապնդման պայմաններում Սատոյան Արսիսյան մտահոգում էր իր ոչ առաջնային դերը: Նավթային հսկայական պաշարների շնորհիվ՝ քազավորությունը հայտնվեց ԱՄՆ-ի կենսական հետաքրքրությունների և քաղաքական գործընկերության ոլորտում: Այն դիտվեց որպես կարևոր հենակետ՝ տարածաշրջանում համախառմական ուժերը արաքական միասնության և ազգայնականության դեմ ռդդոդելու, ինչպես նաև համայնավարության քափանցումը կանխելու համար: Որպես իսլամի հայրենիք Սատոյան Արսիսյան աստիճանաբար սկսեց հանդես գալ իսլամական արժեքների պահպանման, իսլամական աստվածաբանական և տեսական հարցերը ժամանակակից աշխարհում հիմնավորելու և իսլամական աշխարհին հուզող խնդիրները համակարգելու հավակնությամբ: Այս նպատակով 1960-ականների սկզբին սատոյական քազավորության հավանավորությամբ ստեղծվեցին միջազգային իսլամական մի շարք կազմակերպություններ:

1967թ. արաք-իսրայելական պատերազմի արդյունքում արաքները կորցրեցին զգալի տարածքներ, Իսրայելը զրավեց Արևելյան Երուսաղեմը, որտեղ իսլամական սրբատեղիներ կան: Այս շրջանում իսրայելական քաղաքականությանը դիմագրավելու հարցում արաքական աշխարհում իսլամական կարգախոսները հնչեցին, նոր թափ տաացան իսլամական վերածննդի շարժումները: Նավթաառլյունաբերող արաքական երկրները, այդ թվում՝ Սատոյան Արսիսյան, զգալի ֆինանսական օգնություն ցույց տվեցին պատերազմից առժամ արաքական երկրներին: 1969թ. օգոստոսին Երուսաղեմում գտնվող իսլամական երրորդ գլխավոր սրբավայրի՝ ալ-Ակսա մզկիթի մի հատվածի հրկիզումից հետո Արևելյան Երուսաղեմի ազատագրման հարցում հետևողականություն ցուցաբերող Սատոյան Արսիսյան նպատակահարմար գտավ իսլամական արաքա-

կան շահերի պաշտպանության համար ստեղծել համախառնական ձեռնարկ: Այ-Ակսան առիթ դարձավ, որպեսզի 1969թ. սեպտեմբերին Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալի ջանքերով հրավիրվի Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) հիմնադիր համագումարը: 1972թ. Ջիդդայում ընդունվեց կազմակերպության կանոնադրությունը, որում հիմնական նպատակները նշակվեցին մահմեդական երկրների և ժողովուրդների սերտ համագործակցությունն ամենատարբեր ոլորտներում, իսլամական համայնքի՝ ումմայի շահերի պաշտպանությունը, աջակցությունը Պաղեստինի ժողովրդի պայքարին և այլն⁷:

Արտաքին քաղաքականության մեջ Սաուդյան Արաբիան զգալի տեղ է հասկացրել մերձավորարևելյան հակամարտությանը: Թագավորությունը, ընդհանուր առմամբ, համղես է եկել հակամարտության համապարփակ կարգավորման, ինչպես նաև պաղեստինցիների իրավունքները պաշտպանությամբ՝ չհշտադեղելով Երուսաղեմի հարցում մահմեդականների իրավունքների առաջնայնությունը⁸: Սաուդական պետությունը Իսլամական կոնֆերանս կազմակերպության միջոցով փորձել է ի գույք դնել իր աջակցությունը մահմեդականներին առնչվող գրեթե բոլոր հիմնահարցերին:

ԻԿԿ քաղաքական և ֆինանսական վերնախավը Մոգի միապետություններն են, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիան: Կազմակերպության գլխավոր քարտուղարությունը և մի շարք մասնազիտացված ու օժանդակ կառույցներ գործում են թագավորության տարածքում: Երև կազմավորման շրջանում կրոնաքաղաքական քնույր տենցող այս կազմակերպությանն անդամակցում էին ոչ ավել քան երեք տասնյակ պետություն, ապա դրանց թիվն այսօր չուրջ վեց տասնյակ է:

Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքական ձգտումներին մեծապես նպաստեց 1970-ականների սկզբին նավթային գների աճը, որ հանգեցրեց համաշխարհային շուկայում նավթաարդյունահանող մահմեդական երկրների կապիտալի դերի մեծացմանը: Սաուդյան Արաբիան 1973թ. հոկտեմբերին արար-խորայելական պատերազմի ժամանակ կտրողացավ օգտագործել նավթային գործոնը՝ որպես պայքարի միջոց՝ նավթային թոկոս կիրառելով Իսրայելյան աջակցող մի քանի պետությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի դեմ⁹:

Նավթային գների աճի պայմաններում, 1973-ին, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը վավերացրեց Իսլամական զարգացման բանկի (ԻԶԲ) ստեղծման մասին որոշումը: Սաուդյան Արաբիան դարձավ բանկի հիմնական քաժնետերերից մեկը: ԻԶԲ-ի հիմնական նպատակը մահմեդական ժողովուրդների և համայնքների տնտեսական և սոցիալական աջակցությունն է՝ համաձայն իսլամական օրենքների՝ շարիաթի¹⁰: Բանկի նստավայրը Ջիդդայում է:

Հանդես գալով որպես օգնության միջազգային վարկային ինստիտուտ՝ 1975-ից ի վեր ԻՉԲ-ն սկսեց ֆինանսական միջոցներ տրամադրել շրա կարիքն ունեցող ԻԿԷ անդամ պետություններին, մահմեդական համայնքներին, ֆինանսավորել տարաբնույթ ծրագրերն ու մահմեդական երկրների միջև այտարքին առևտուրը: Բնակն ունի ողորմածության՝ գաքարի հավաքման գանձարան, որից զոյացած միջոցների մի զգալի մաս տրամադրվում է կրոնաքարոզչական գործունեությանը, իսլամական կրթական հաստատությունների հիմնմանը, քարեգործությանը, մզկիթների շինարարությանը:

Առհասարակ, Մատուլյան Արաբիան մեծ դերակատարությունն է ունեցել իսլամական բանկային համակարգի տեղեղծման հարցում, որի գործունեության հիմքում ընկած են ֆինանսական և տնտեսական ոլորտին վերաբերող իսլամական սկզբունքներ¹¹:

Ֆինանսական արագընթաց և անմախաղեպ հաջողությունները նպատեցին, որպեսզի Մատուլյան Արաբիան գործնականում իրականացնի վահաբականության արտահանումը, որի խնդիրը դարձավ աշխարհի տարբեր մասերում ուղղափառ իսլամի տեղական, ազգային և վանդուլյային տարրերից մաքրելու ձգտումը: Վահաբական քարոզչության սահմաններից, ընդհանուր առմամբ, դուրս մնացին շիական շրջանակները, որ կասկած է շիականության նկատմամբ վահաբականության մերժողական դիրքորոշման հետ: Մատուլյան Արաբիան նպատակադրվեց իսլամը դարձնել գլխավոր գործող ուժ՝ իսլամական աշխարհում իր առաջնայնությունը հիմնավորելու համար: Այդ նպատակին հասնելու համար նա ձեռնամուխ եղավ նաև ասիական և աֆրիկյան մահմեդական աղքատ երկրներին ցույց տրվող ֆինանսական և տեխնիկական օգնությանը, վարկերի տրամադրմանը: 1970-ականներից Մատուլյան Արաբիայում նկատվեց նաև մահմեդական տարբեր երկրներից օտարերկրյա աշխատողների զգալի հոսք, որոնց թիվը 1985թ. թագավորությունում հասավ 5,15 միլիոնի¹²: Այս համզամանը մի շարք խնդիրներ լուծեց Մերձավոր Արևելքի առանձին երկրների՝ մասնավորապես Եգիպտոսի, Եմենի Արաբական Հանրապետության, Սիրիայի և Լիբանանի համար: Տարագմա աշխատողների փոխանցումների շնորհիվ՝ այդ երկրներում որոշ չափով թուլացավ սոցիալական լարվածությունը, նվազեց գործազրկության չափը:

Նավթային հարստությունները հնարավորություն տվեցին Մատուլյան Արաբիային՝ աղյուսակներ կերպով օգտագործել իսլամական գործունը: Թագավորությունը զգալի միջոցներ հատկացրեց ողջ մահմեդական աշխարհում մզկիթների շինարարությանը: Կես դարի ընթացքում միայն սատուլական պետական հիմնադրամների միջոցով թագավորության սահմաններից դուրս կառուցվել է մոտ հինգ հարյուր մզկիթ¹³: 1970-ականներին նաև վահաբական կողմնորոշման մզկիթների միջոցով փորձ

արվեց ընդլայնել վահարական ազդեցությունը՝ դիմագրավելու 1979թ. Իրանի իսլամական հեղափոխության արդյունքում բազավորական վարչակարգին սպառնացող քաղաքական և զարգափարախոսական վտանգները, ինչպես նաև սահմանափակել ազգայնականության ընթացքը՝ հզուտ իսլամականի:

Սաուդական իշխանությունները ծգտում են վահարական ազդեցությունը ընդարձակել նաև դեպի Հիջազի սրբավայրեր մահմեդական ամենամեծ ուխտագնացությանը, որն անցկացվում է վահարական ծխակարգով¹⁴: Ուխտագնացության ընթացում, որպես կանոն, կազմակերպվում են սինագոգիստներ, սեմինարներ, դասախոսություններ ամենախայտնի մահմեդական ասուլածարանների մասնակցությամբ: Անվճար քաժանվում են Ղուրանի օրինակներ:

Ուխտագնացությունը Սաուդյան Արաբիայի համար քաղաքական ճեծ նշանակություն ունի, որ նաև խիստ եկամտաբեր է: Սաուդական դիմաստիան համարվում է մահմեդական սրբավայրի պահապանը: Սակայն այս փաստը միանշանակ չի քնդրոնվում իսլամական աշխարհում: Իսլամական առանձին, ներառյալ շիական շրջանակներ, դեռ են այս հարցում Սաուդյան Արաբիայի մեծաշնորհին: Իրանի իսլամական հեղափոխությունը հետո երկրի իշխանությունները հայտարարեցին, որ սաուդյան դիմաստիան մահանջել է իսլամի սկզբունքներից և չի կայսղ համարվել սրբազան վայրերի պահապանը: Այսօրյա հոմնյին կոչ արեց տապալել սաուդական քացարժակ միապետությունը¹⁵: Նման դիրքորոշումը պայմանավորված էր նաև սաուդականերիկյան ռազմաքաղաքական դաշնակցությամբ, ինչպես նաև բազավորությունում շխաների նկատմամբ գոյություն ունեցող ճշտմներով:

Ուխտագնացության օրերին բազավորությունում հասուկ ուշադրություն է դարձվում անվտանգության խնդիրներին: Անվտանգության մարմինները հիմնականում զգուշանում են ուխտավորների շրջանում քաղաքական հուզումներից, ինչպես դա եղավ 1981թ. և 1987թ., երբ անվտանգության մարմինների և իրանցի ուխտավորների միջև քայտմներ տեղի ունեցան¹⁶: 1990-1991թթ. Մոցի պատերազմից հետո ուխտագնացության հարցում սաուդական մեծաշնորհի դեռ հանդես եկավ Իրաբի մախսազներ¹⁷:

Վահարական քարոզության դրակորումներից է նաև սաուդական կրթական հաստատություններում երխտասարղ մահմեդականների ուսումնատության կազմակերպումը: Այս պղոսկտիկան Սաուդյան Արաբիան օգտագործեց նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: ԱՊԿ մահմեդական հանրապետություններից և Ռուսաստանից շատերը կրոնական կրթություն ստանալու նպատակով մեկնեցին Սաուդյան Արաբիա¹⁸: Հոգեբանական և զարգափարական մշակման աղյուներում բազավորությունում

ուսանածների մեջ ի հարտ են գալիս ավելի արժատական տրամադրություններ:

Վանաքահանությունը նոր լիցքեր հաղորդեց իսլամական արժատական կրոնաքաղաքական շարժումներին՝ ձգտելով կենտոնակ պահել ռազմական ցինալի²⁹ հայեցակարգը: Սառույան Արաբիան հովանավորել է իսլամական մի շարք կրոնաքաղաքական շարժումներ³⁰: 1970-ականների վերջին ԽՍՀՄ-ի ներխուժումը Աֆղանստան լրացուցիչ ազդակ դարձավ Սառույան Արաբիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի համար՝ աջակցելու իսլամական շարժումներին: Աֆղանստանը դարձավ «անհավատների» դեմ ցինալի և իսլամական համերաշխության խորհրդանշիլ: Թագավորությունը ֆինանսական զգալի միջոցներ տրամադրեց աֆղան մոջահիդներին: 1980-ականներին Փեշավարում բացվեց Իսլամական աշխարհի լիգայի մասնաճյուղը (այն ղեկավարում էր Սառույան Արաբիայում ուսանած Աբդալլահ Ազզամը), որ դարձավ զինված պայքարի հենակետ: Այս կառույցին միացավ նաև քեմ Լադինը, որը աֆղանական պատերազմի ընթացքում համակարգեց ցինալի շարժումը: 1980-ականների երկրորդ կեսին քեմ Լադինը հիմնեց ալ-Կախիդա կազմակերպությունը, որն աստիճանաբար ձևափոխվեց հակահամերիկյան կառույցի: 1988թ. Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրս գալուց հետո երկրում սկիզբ առավ քաղաքացիական պատերազմ: Իսկ 1994թ. վերջերից Աֆղանստանի քաղաքական դաշտում աղդեմ մեծ դերակատարություն ունեցր նաև Սառույան Արաբիայից հովանավորվող տալիբան շարժումը, որի աշյուքնքում ռազմական քախումները մոջահիդիների միջև ավելի սուր քնույք կրեցին: Հանդես գալով վանաքահանության դիրքերից և հատուկ նշանակություն տալով հանուն իսլամի մղվող պատերազմին՝ ցինալին, տալիբները մահմեդական համայնքում սկսեցին գործնականում իրականացնել «հերմետիկաությունից մաքրվելու» միջոցառումներ³¹:

Այն, որ սառույական պետությանը քնորոշ են արժատական շեշտադրումներ, ապացուցում է նաև բազավորության իսլամի, վակիբերի, կոյի և կողմնորոշման մախարախության Իմամների և քարոզիչների ինստիտուտի գիտական համձնախմբի նյատարակած «Շարիաթական և ալաբական գիտությունների հետազոտման ծրագրերը», որտեղ իսլամական մի շարք սկզբունքներ ներկայացված են ծայրահեղ տեսանկյունից: Ասենք՝ ցինալի հայեցակարգը քնուրազրված է բացառապես որպես զինված պայքարի ձև, որը մահմեդականների համար պարտալիք է: Ըստ աղդ՝ ցինալի պայքարն ուղղված է «անհավատների» և հեթանոսների դեմ³²:

Սառույան Արաբիայի ազդեցության ընդլայնմանն էր ուղղված քարեզորական, մալդախիսկան և քարոզական քնույք ունեցող հաստատությունների գործունեությունը կամ վանաքահան դատան³³: Քարոզչության նպատակով թագավորության իսլամի հարցերով մախարախությունը 1970-ականներից ձեռնամուխ եղավ Դուրանի միլիտանվոր օ-

րինակների, ինչպես նաև անտելի քանակությամբ վահեռարական դավա-
նաբանական տեքստերի հրատարակմանն ու տարածմանը մահմեդա-
կան աշխարհի տարբեր անկյուններում տեղական մզկիթների միջոցով:
Առաջին անգամ ումմայի տասնչորս դար տևած պատմության մեջ ի
հայտ եկան միատեսակ տեսանկյուններ, ձայներիզներ և գրականու-
թյուն²⁴:

Քարոզչական աշխատանքները համակարգելու հարցում քաջատիկ
դեղակատարություն ունեցավ 1962-ին ելմեկամ Իսլամական աշխարհի
լիգան, որը 1970-ականներին սկսեց իր մասնաճյուղերը բացել մահմե-
դական աշխարհի տարբեր անկյուններում: Այդ ճանապարհով միաժա-
մանակ վարձ արվեց ուսումնասիրել մահմեդական երկրներում տեղա-
կան իսլամի վիճակը, հաշվարկել կրոնական հաստատությունների քա-
նակը: Լիգայի կանոնադրության մեջ մասնավորապես նշված է, որ նա
որևէ ջանք չի խնայի մահմեդականների միավորման համար՝ այդ նպա-
տակի համար օգտագործելով քարոչական, մշակութային և մյուսական
ինարավոր միջոցները²⁵:

Լիգայի գործունեության մեջ առանձնանում են երկու ուղղություններ՝
գաղափարական-քարոզչական և հասարակական-քաղաքական: Լիգա-
յի գործիչների հավատածամբ՝ սխալ կլինի Լիգան քաղաքական կազմա-
կերպություն չհամարելը, քանի որ իսլամում կրոնը և քաղաքականությու-
նը տարանջատված չեն²⁶:

«Սառը» պատերազմի տարիներին Լիգան համարվում էր «իսլամա-
կան համերաշխության» ռազմավարության մշակման և դրա կենսա-
գործման համար միախմբական կադրերի պատրաստման ամենաա-
ռաջատար կենտրոններից մեկը: Միախմբների պատրաստման հար-
ցում Լիգան համագործակցում է Ջերդայում Արդ ալ-Ազիզ քազավորի
անվան համալսարանի, ալ-Ազհարի, Իսլամի հարցերով քարձխազայն
խորհրդի (Կահիրե) և իսլամական այլ կենտրոնների հետ²⁷:

Լիգայի ծրագրերի կենտրոնական տարրը մզկիթն է, որտեղ կարևոր
դերակատարություն ունեն հոգևոր սպասավորները: 1975թ. Մեքքայում
Իսլամական աշխարհի լիգայի մախաձեռնությամբ մահմեդական երկր-
ների պատմության մեջ առաջին անգամ կրավիթվեց միջազգային կոն-
ֆերանս «Մզկիթի առաքելության վերածնունդը» թեմայով²⁸: Ենչտարր-
վեց այն միտքը, որ անհրաժեշտ է մզկիթը դիտարկել որպես ումմայի սո-
ցիալական, կրոնական և քաղաքական գործունեության կենտրոն, ինչ-
պես իսլամի առաջին դարում էր՝ այս ոլորտում ներգրավվելով երկտա-
սադյանների: Պատահական չէ, որ իսլամի միախմբներն ընտրվում են
եյմանականում տեղական վահադի իմամներից և սովորական հոգևոր
սպասավորներից: Միախմբներ կարող են դառնալ նաև ոչ սառողիմե-
րը, որոնք պետք է ուսանեն քազավորության կամ դրա սահմաններից
դուրս գտնվող սառողական կրթական կենտրոններում և վահաքական

կողմնորոշման մզկիթներում: Միսիոներները, երկար ժամանակով տվյալ համայնքում հաստատվելով, որպես կանոն, ստեղծում են իսլամական կենտրոն, որի շրջանակներում պետք է գործի դպրոց, մզկիթ և գրադարան: Բարեգործական և կրթական նպատակներ հետապնդող միսիոներների գործունեությունը որոշ դեպքերում քաղաքական նպատակներ ունի²⁹:

Լիզան համագործակցում է քաղաքացիության արտաքին գերատեսչության, իսլամի գործերով գերատեսչության, հատուկ ծառայությունների և այլ պետական մարմինների հետ: Լիզայի աշխատակիցները պաշտոնավարում են աշխարհի տարրեր անկյուններում քաղաքացիության դեսպանությունների իսլամի հարցերով գրադար քառիներում³⁰:

Վահաբական քաղաքացիության մասշտաբներն ու ծավալն ամնախաղեպ չափեր է ընդունել: Ամերիկյան «U.S. News and World Report» ամսագրի համաձայն՝ վերջին քառույ դարի ընթացքում Սաուդյան Արաբիան իր բարեգործական հիմնադրամների միջոցով 70 մլրդ դոլար է ծախսել աշխարհի շուրջ քսան երկրներում վահաբական մզկիթներ, մեդրեսեներ և կյունական կենտրոններ հիմնելու, վահաբական գրականություն տարածելու, ինչպես նաև՝ մարզական ճամփարներ ստեղծելու, զենք գնելու ու վարձկանների հավաքագրելու համար³¹: Վահաբական գրականությունը բարգձմանվել է տարրեր լեզուներով և տարածվել նաև ոչ մահմեդականների շրջանում: 1991թ. Իրաքի դեմ «Փոթորիկ անապատում» գործողության ժամանակ Սաուդյան քաղաքացիության տարածքում գտնվող ամերիկացի զինժառանգների շրջանում քաղաքացիամբ են գրավել վահաբի շեյխերը: Որոշ ամերիկացիներ ընդունել են իսլամի վահաբական ուղղությունը³²: Ամերիկացի ուսումնասիրողների կարծիքով՝ քառույ դարի ընթացքում Սաուդյան Արաբիան վահաբական քաղաքացիության համար ծախսել է ավելի շատ գումար, քան Խորհրդային Միությունը համայնավարության քաղաքացիության համար իր ողջ գոյության ընթացքում³³:

2001թ. սեպտեմբերից հետո միջազգային ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում պարզ դարձավ, որ ահաբեկչության տարածմանը և ֆինանսավորմանը նեծապես նպաստել են նաև աշխարհով մեկ տեղաված իսլամական բարեգործական և քաղաքական առանձին հաստատություններ, առավել հաճախ՝ դրանց մասնաճյուղերը: Ահաբեկչության հետ կապ ունենալու մեղադրանքով ԱՄՆ-ի «սև ցուցակում» հայտնվեցին Իսլամական աշխարհի լիզային ենթակա մի շարք հաստատություններ, այդ թվում՝ Մահմեդական երիտասարդների միջազգային ասամբլեան (ՄԵՄԱ), Իսլամական օգնության միջազգային կազմակերպությունը (ԻՕՄԷ), Երկու սրբավայրերի իսլամական հիմնադրամը (ալ-Հարամեյն) և այլն: Փակվեցին ալ-Կախայային և ահաբեկչական այլ կազմակերպությունների ֆինանսավորած մահմեդական բարեգործական

հաստատությունների և հիմնադրամների մասնաճյուղերը, ստեղծվեցին դրանց բանկային հաշիվները³⁴։

Իսլամական քաղաքական և քարեզորական հաստատությունները ստորաբար համաընդուն են ոչ-կատարական կամ մասնավոր։ Մակայն դրանցից շատերը ղեկավարում են սաուդյի քարծրատիճամ պաշտոնյանները։ Սաուդյան Արաբիայի մեծ մուֆթի շեյխ Աբդ ալ-Ազիզ բեն Աբդալլահ Ալ ալ-Շեյխը, որ մահ կատարություն անդամ է, գլխավորում է Իսլամական աշխարհի լիգան։ Իսլամի եսրեբուլ մախարաբը՝ շեյխ Մալիկ բեն Աբդ ալ-Ազիզ ալ-Շեյխը, ՄԵՄԱ-ի գլխավոր քարտուղարն է, ինչպես նաև ալ-Հարամեյնի փարպական պատասխանատուն։ Այս երեք կազմակերպություններն էլ քարեզորական նպատակով մեծ քանակի նվիրատվություններ են ստացել բազավոյական ընտանիքից, որի մասին պաշտոնապես հայտարարվել է³⁵։

Մեյլետներին 11-ից հետո ամերիկյան մի շարք ազդեցիկ կենտրոններ, քաղաքական գործիչներ, հեղինակավոր ամսագրեր և թերթեր իսլամական ծայրահեղական խմբավորումներին հովանավորելու և անարեկչությունը խրախուսելու մեջ Սաուդյան Արաբիային մեղադրող հոդվածներ և գեկույցներ հրատարակեցին։ 2003թ. փետրվարին «Washington Post» թերթում մի քանի սեմատորների հրատարակման մեջ մշվեց, որ Սաուդյան Արաբիայի իշխող ընտանիքը տասնամյակներ շարունակ երկակի խաղ է վարել Միացյալ Նահանգների հետ՝ իրականում վաճառականության դիքերից ֆինանսավորելով և օժանդակելով ալ-Կաիդային և նման այլ կազմակերպությունների։ Սեմատորներն այն եզրահանգմանն էին եկել, որ վաճառականությունն իսլամի ծայրահեղական տարատեսակ է, որը ոչ միայն վատարամում է այլ կրոնդավանական համայնքների, այլ ձգտում է կրոնական ոլորտից դուրս ճղել իսլամի խաղաղ հետևորդներին։ Վաճառականությունն օգտագործում է ճգնվածները և մեղեխները, որպեսզի նրխատարյներին մեջ սերմանի ատելություն ոչ իսլամադավանների նկատմամբ։ Նրա նպատակը համաշխարհային իշխանությունն է և իր թշնամիների ոչնչացումը³⁶։

Հարկ է մշել, որ այսօրինակ փաստարկումները, որոնք առանձին դեպքերում որպակի նպատակներ են հետապնդում, որևէ կերպ չեն առվելու սուրբամեծիկյան Գերմ հարաբերությունների ընթացքը։

Ռուսական լրատվամիջոցներում, ինչպես նաև քաղաքագիտական ուսումնասիրություններում նույնպես հաճախ են տեղ գտել Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների տարածքում սաուդական դատայի կազմակերպությունների գործունեության մասին տեղեկություններ, դրանց ներկայացուցիչները Ռուսաստանի Դաշնության տարածքում ստեղծել են վաճառական կենտրոններ, գրադվել քաղաքական, կազմակերպական և քաղաքական գործունեությանը³⁷։ Ծնայած սաուդական իշխանությունները միշտ հայտարարել են, որ Չեչենայի խնդիրը Ռուսաստանի

մերքին գործն է, ռուսական մամուլը քազմիցս չեչն գինյալներին սատարական ֆինանսական և այլ օժանդակությունների մասին վկայող փաստեր է հրատարակել: Ռուսաստանյան տվյալներով՝ նման կազմակերպություններից են ԻՕՄԷ-ը, ալ-Հարամնեյնը, Իբրահիմ բեն Իբրահիմը և այլն²⁸:

Մատուղի սրաչտոնատարները քազմիցս հերքել են ահաբեկչության հետ կապ ունենալու մեղադրանքները: Իր հերքին՝ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, դատասպարտել է ահաբեկչությունը՝ մտահոգություն հայտնելով ահաբեկչական այն գործողությունների համար, որոնց մասնակից են մահճերակասները²⁹:

Գայության մի քանի տասնամյակի ընթացքում փառաբանությունը մի ծայրով հանգեցրել է աքմատական իսլամի, ինչպես նաև ահաբեկչության տարածմանը: Այսօր ԱՄՆ-ը հենց Մատուղյան Արաբիայի օգնությամբ է փորձում լուծարել այդ հզոր արտաքին քաղաքականության գործիքը, որի հետևանքները հաղթանարելու համար մեծ միջոցներ են ներդրվում:

Պետք է արձանագրել, որ «սառը» պատերազմի ավալտից հետո Ռիադի նվաճմավորած տաքաբնույթ կառույցները՝ մասամբ կան աճող-ջուլին, դառն եկան պետական վերահսկողությունից՝ առանձին դեպքերում վերածելով սատրապեան ու Մոցի այլ վարչակարգերին սպառնացող ընդդիմադիր ուժի: Աքմատական տրամադրություններ ունեցող այդ ուժերից շատերի գաղափարախոսության հիմքում ընկած է փառաբանությունը:

Վառաբանական քառույթությունը պետք չէ միանշանակորեն մշտապես վերազրել սրաչտոնական Ռիադին: Մի կողմից՝ վառաբանական քառույթությունը իսլամական աշխարհում գերակայության հասնելու, սուննի իսլամի վառաբանական ուղղությունը տարածելու Մատուղյան Արաբիայի քաղաքականության դրսևորումներից մեկն է: Երբեմն, սակայն, վառաբանությունը, որպես կրոնաքաղաքական գաղափարախոսություն, քաղաքական իսլամի ծայրահեղ դրսևորում է, որը չի առնչվում Մատուղյան Արաբիայի արտաքին քաղաքականությանը:

ARAKS PASHAYAN

ON SOME EXPRESSIONS OF THE WAHHABI PROPAGANDA

The Wahhabism emerged in 1940's of eighteenth century in Central Arabia (Nejd) from the teaching of Muhammad Ibn Abd al-Wahhab. Coming of Hanbalism it is considered to be one of the fundamental directions of Sunni Islam. Historically Wahhabism played a positive role in formation of

Saudi state becoming the governmental ideology of the state. Especially in the beginning of 1970's (connected with the increase of petrol prices) Saudi Arabia (SA) tried to strengthen its political role and importance in the world of Islam. In 1960's SA initiated formation of some Islamic international organizations, such as the Islamic Conference Organization, the Muslim World League, etc. SA purposed to make the Islam a main functional power arguing its leadership in the Islamic world. During quarter century SA made all efforts to establish Wahhabi oriented mosques, educational and religious centers, benevolent and humanitarian foundations, spreading Wahhabi literature all over the world via Wahhabi missionaries. Saudi Arabia rejuvenated the concept of militant Jihad promoting Islamic militant and political several movements. After the end of "cold" war some of Saudi inspired structures coming out of Saudi control transformed into a serious threat for Saudi regime. The ideology of some radical Islamic movements is Wahhabism. After September 11 in the frame of "war against terrorism" it became apparent that many Wahhabi oriented missionary structures and charities had sponsored the international terrorism. In our days it is alright to refer the Wahhabi propaganda entirely to official Riyadh.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տե՛ս՝ Васильев А., Пуританне ислама?. Вакхабизм и первое государство Саудитов в Аравии (1744/45-1818), М., 1967.
2. Հանրալիզմը իսլամական շրջ կրոնափրավական մագիստրոնրի/ դպրոցնրից, մկն է, որի հիմնադիրն է իմամ Ահմադ Իրն Հանրալլ: Այս ուղղությունն ի սկզբանն մերթմ էր Ղուրանի և խոսքանիցի ցանկացած ազատ մկնություն և միայն ավելի ուշ թույլ տվեց խիստ ասհմամաճակ ձևով կիրառել կիյաս (դատադրություն ըստ անալոգիայի) և հրժե՛ս՝ (ժախարական կարծիք): Հանրալիզմը ծայրահեղ անհանդուրժող է ամեն տեսակ նորամտության իարքուն, նակված է անշեղորեն կատարել շարիաի նորմերն ու մահմեդական ծիսակատարությունները: Հանրալիզմի հետևորդներն ամենամոլորեանդ մահմեդականներն են:
3. Васильев А., Пуританне ислама?, с. 105.
4. Մանրամասն տե՛ս՝ Васильев А., История Саудовской Аравии (1745-1973), М., 1982.
5. Farouk A. Sankari, Islam and Politics in Saudi Arabia, Islamic Resurgence in the Arab World. Edited by Ali E. Hillal Dessouki, N.-Y, 1982, p. 178.
6. Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը դարարադյան իսկամարտության նկատմամբ, Եր., 2003, էջ 37-38:
7. Устав Организации Исламская Конференция. В кн.: Александров И., Монархии Персидского Залива этап модернизации, М., 2000, с. 456-457.
8. Валькова Л., Место Саудовской Аравии в мусульманском мире. В кн.: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987, с. 102-114.
9. Валькова Л., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987, с. 10.

10. Իսլամական փարզացման բանկը, Ջեռքա, 1997, էջ 8 (արարերից):
11. Անմրամասն տե՛ս՝ Максимов А., Милославская Т., Исламские банки в странах Ближнего и Среднего Востока. В кн.: Ислам в странах Ближнего и Среднего Востока, М., 1982.
12. Кепель Ж., Джихад, М., 2004, с. 75.
13. Նույն տեղում, էջ 77:
14. Նույն տեղում, էջ 79:
15. Валькова Л., Место Саудовской Аравии в мусульманском мире, с. 108.
16. Кепель Ж., Джихад, с. 133-134.
17. Նույն տեղում, էջ 77:
18. Ярыкалов А., Ваххабизм на Кавказе, Угроза ислама или угроза исламу?, М., 2001, с. 140.
19. Ջինաց բառն արարելիքնում նշանակում է զանալ, ճիգեր բափել, պայքարել: Իրավական-կրոնական տեսանկյունից՝ ջինացը աստուծու հավատքի միլիոնների կողմից գործադրվող բազմաթիվ միջոցների համախորհ է: Անմրամասն տե՛ս՝ Փաշայան Ա., Ջինաց հասկացության և դրա մեկնաբանության հարյի շարք, Անթուրաք և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հտ. XXII, եր., 2003, էջ 157-172:
20. Իսրայիլական տվայլմերով՝ Սաուդյան Արաբիայից հովանավորվող կազմակերպություններից մեկն էլ Համասն է, որի բյուջեի զգալի մասը ներդնում է բազավորությունը: Առհասարակ, սլադեառիսմյան ինքնավարության տարածքում սաուդական բազավորությունն իրականացրել է վահհարական քարոզչություն, խրախուսել ինքնանախատակությունը: Իր բարեկործական հաստատությունների միջոցով Սաուդյան Արաբիան օգնել է մահապարտ-շահիդների ընտանիքներին: Անմրամասն տե՛ս՝ Dore Gold, Saudi Arabia's Dubious Denials of Involvement in International Terrorism, Jerusalem Public Affairs, Jerusalem Viewpoints, No. 504, October 2003 www.jepa.org
21. Москалецко В., Афганистан и Пакистан. В кн.: Афганистан: проблемы войны и мира, М., 2000, с. 136.
22. «Անհավատների» և հերմետների բժին են դասվում մահ քրիստոնյաներն ու հրեաները: Այս մասին տես՝ Игнатенко А., Экстремизм-исламский или ваххабитский?. В кн.: Угрозу ислама или угроза исламу?, М., 2001, с. 85-86.
23. Իսլամում *դաուա* (արարելիք՝ կոչ, հրավեր) ասելով նկատի է առնվում նշմարիտ կրոնից՝ խրամին հետևելու աստուծու կոչը: Այս մասին տե՛ս՝ The Encyclopaedia of Islam, New Edition, vol. 2, C-G, Leiden, E.J. Brill, 1983, p. 168-170. Պատմական տարրեր ժամանակներում մահմեդականացմանը կոչվել են համախորհելու կրոնական քաղաքական որևէ գաղափարի շուրջ կամ զինազրույցի ունենալի սպառնացող վտանգը: Իսլամական կրոնաքաղաքական և ռազմաքաղաքական առանձին կազմակերպությունների անվանումներում շատ հաճախ տեղ է գտել *դաուա* բառը: Շրաների իրավունքների համար մղված շարժումները երբեմն որակվել են որպես *դաուայթ* շարժումներ: Այս մասին տե՛ս՝ Hanna Seven, Shi'ism Organizations in Iraq: al-Da'wah al-Islamiyah and al-Mujahidin, Shi'ism and Social Protest, London, 1986.

24. Кепель Ж., Джихад, с. 76.
25. Шарипова Р., Панисламизм сегодня. Идеология и практика Лиги исламского мира, М., 1986, с. 24.
26. Նսոյն տեղում, էջ 17:
27. Игнатенко А., Вашингтон и Эр-Рияд: союз против ваххабизма, "Независимая газета", 13.02. 2004.
28. Шарипова Р., Наджил Э., Движение исламской солидарности. Основные теоретические концепции. В кн: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987, с. 72.
29. Шарипова Р., Панисламизм сегодня, с. 39-40.
30. Игнатенко А., Вашингтон и Эр-Рияд: союз против ваххабизма, "Независимая газета", 13.02. 2004.
31. Նսոյն տեղում:
32. Նսոյն տեղում:
33. Игнатенко А., Вашингтон и Эр-Рияд: союз против ваххабизма, "Независимая газета", 13.02. 2004.
34. www.jera.org
35. www.jera.org
36. Տեղեկությունը ըստ Հովհաննիսյան Դ., ՄԴԼ դիվանագիտական նոր մոտեցումները տասնամյակյալ նախաբերությունները, Հանրագիտական, քիմ 6, 2003, էջ 4:
37. Цви шишին տե՛ս՝ Поляков К., Арабо-мусульманское влияние на ислам в России: Проблемы и противоречия (90-е гг. XX в.), Угроза ислама или угроза исламу?, М., 2001 с. 146-779; Добавев И., Концепция и практика Джихада в исламском мире и на Северном Кавказе, Центральная Азия и Кавказ, No. 1 (31), 2004, с. 87-88.
38. Чуйков А., Партия Аллаха. Саудовская Аравия забрасывает исламских миссионеров, "Известия", 5.06.2002.
39. Փաշայան Ա., Բարեկալիկի կոնֆերանսի կազմակերպությունը, էջ 171-177:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԺԲ ԴԱՐԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ

Կոմեննոսների հարստությունը իշխանության գլուխ եկավ ԺԱ դարի 80-ական թթ., Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո, ճակատագրական այն իրադարձությունների պահին, երբ Սելջուկ բյուրքերը մվաճեցին Բյուզանդական կայսրության արևելյան մահանգները և մտնեցան Կոստանդնուպոլսին¹: Սելջուկները տեր դարձան Հայաստանին և մխրճվելով կայսրության ներքին գավառները, իրենց իշխանությունը տարածեցին Փոքր Ասիայի մեծագույն մասի վրա, մտնելով անգամ քեյսակղզու ծայր արևմուտքում գտնվող Նիկիա քաղաք: Հարստության առաջին գահակալը՝ Ալեքս Ա Կոմեննոսը (1081-1118) վերջ կատարեց համախոհել Բյուզանդական կայսրության քոյր ներքին և արտաքին ուժերը, հակահարված տալու համար արևելքից ներխուժած սելջուկներին, Սիցիլիայից կայսրության տարածքներ քափանցած նորմաններին և Բալկանների կյուսիսից կայսրության սահմանները մուտք գործած և քեյսակղզին ասպատակող պեչենեգներին: Կոմեննոսները Բյուզանդական կայսրության գահին բազմեցին չուրջ մեկ հարյուրամյակ:

Այդտաքին թշնամիներից, ետակապես Փոքր Ասիա ներխուժած սելջուկներին հակահարված տալու համար, Ալեքս Ա Կոմեննոսը օգնություն խնդրեց Եվրոպայից²: Հռոմի պապ Ուրբան Բ-ը Կլեմենի ժողովում Խաչակրաց ռազմարշավ հայտարարեց ընդդեմ արևելքի մուսուլմանների և Երուսաղեմը գրավելու կոչով դիմեց Արևմտյան Եվրոպայի բնակչությանն ու պետություններին³: Կոմեննոս հարստության կայսրերը վերծեցին օգուվել սուաջին խաչակրաց արշավանքի ժամանակ Մերձավոր Արևելքում ստեղծված քարենաբաստ իրադրությունից, իրենց վերսահկողության տակ առնելու համար սելջուկյան ռազմարշավների ընթացքում կորցրած տարածքները, սակայն այդ մտահաղացումը նրանց հաջողվեց իրականացնել մասամբ: Փոքր Ասիայում և Հյուսիսային Աստ-

ընդամենը ստեղծված իրավիճակը ամհանգստացնում էր Կոմսենոսներին, որոնք այդ տարածքներն համարում էին կայսրության սեփականություն, իսկ դրանց վրա ստեղծված իշխանություններն ստիպում էին վասալական երդում տալ Բյուզանդական կայսրությանը: Այդ էր պատճառը, որ կայսրությունը ԺԲ դարի ընթացքում սկսեց ուղիներ փնտրել վերադարձնելու փոքրասիական և հյուսիսաստրիքյան տարածքները: 1097/8 թ. Ալեքս Ա-ը Բյուզանդական կայսրության իշխանությունը վերստաստատեց Փոքր Ասիայի արևմտյան հատվածում (Եփեսոս, Ջմյուռնիա, Եփեսոս, Սաբոլիկե, Ֆիլադելֆիա և այլուր): Պետության առաջնակարգ նպատակներից էր տեղի դառնալ Փոքր Ասիայի մերձավերջ շրջաններին և յուրյ յուր սելջուկներին իրենց տիրապետությունը հաստատել ծովում: Այս խնդրում կայսրությանը անգնահատելի օգնություն կարող էր ցույց տալ հայկական ազգաբնակչությունը Մերձավոր Արևելքի և Բալկաններին մի նշանակալի հատվածում ստեղծած իր քաղաքական և եկեղեցական կառույցներով, սակայն բյուզանդական գաղափարախոսության տվյալ դաջաշրջանի արտաքին քաղաքականության հիմնադրույթներից մեկն էլ այն էր, որ հայերը քյուրքերի հետ դաջնակցած Բյուզանդիային դուրս են վճռել իր սեփական տարածքներից⁴: Այդ հիմնադրույթից ելնելով Բյուզանդական կայսրությունը Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասիայի հայկական իշխանությունների նկատմամբ ամհաշտ դիրք էր գրավել: ԺԲ դարի ընթացքում Կոմսենոսների արևելյան քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը դարձավ փոխհարաբերությունների ճշգրտումը և բարելավումը տարածաշրջանի հայկական իշխանությունների և Հայոց եկեղեցական կազմակերպության հետ:

Ինչ վերաբերում է Սելջուկյան ռազմաըլավներից հետո Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական իշխանություններին, ապա նրանց հիմնական մասը (Փիլարոսոս, Խաչատուր, Գող Վասիլ, Ռուբինյաններ և ուրիշներ) իրենց համայում էին Բյուզանդական կայսրության ստորականեր, քանի որ իրենք եղել էին բյուզանդական բանակի կրամանատարներ: Պարզապես նրանց օգտագործել էին առիթը անկախություն ձեռք բերելու և տարածաշրջանում իրենց իշխանությունը հզորացնելու, քաղաքական պայքարում հաճախակի շփվելով Սելջուկ սուլթանությանը ենթակա պետական միավորների հետ: Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությունը պայմանավորող գործոններից էր դառնում հետզհետե ԺԲ դարի սկզբում Քեսոսի Կարմիր վանքում հաստատված, և նույն դարի 40-ական թթ. Հոռեկա տեղափոխված Հայոց կաթողիկոսարանը: Կոմսենոս կայսրերի իշխանության տարիներին Հայոց կաթողիկոսական գահին մեկը մյուսին հաջորդելով բազմում էին Պառլավանի իշխանական տնից սելջուկ գահակալներ, որոնք հսկայակա քանքեր էին բաժնում նորմալացնելու համար Հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունները Բյուզանդական կայսրու-

յան և մերձավոր Արևելքի մյուս քոչր եկեղեցիների հետ: Հայտնի է Գրիգոր Բ և Խաչոյ, մանավանդ Գրիգոր Գ և Ներսես Դ կաթողիկոսների գործունեությունը ի նպաստ հունական ժառանգաբազմի հուշարձանների հայերեն քարգնամության: Նրանք առիթը բաց չէին բռնում շփվելու կայսրության ուսումնական կենտրոնների և վանական հաստատությունների հետ: Այս առումով, ինչպես հատկանշական է Գրիգոր Բ Ալախասիրի գործունեությանը, որը կաթողիկոսական իշխանությունը ստանձնելուց առաջ պաշտոններ էր վարել կայսրության արևելյան սահմանների աշխարհիկ կառույցներում: Այցելելով Կոստանդնուպոլիս, նա փորձել է հավանաբար մեղմացնել ահագնացող հակակցումը հայոց և հունաց եկեղեցիների միջև⁵:

Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունները հետո էլն քարեկամական համարվելուց: Այդ է վկայում Ալեքս Ա Կոմնենոսի դավանաբանական ճանդ, որ հեղինակն անդրադառնում է Հայոց եկեղեցու մոլորությունների⁶: Բյուզանդական կայսրությունը, նախադ կայսրերի օրոք, ԺԱ դարի ընթացքում, օգտագործել էր իր բոլոր հնարավորությունները Հայոց կաթողիկոսական արժող մայրաքաղաք Ամիից դուրս բերելու համար: Անլացնելով Բագրատունիների Հայոց քաղաքությունը, Բյուզանդիան բռնի թծով ստիպել էր Ամիի կաթողիկոսարանը լքել Պետրոս Գետադարձ և Խաչիկ Բ Ամեցի հայրապետներին, իսկ վերջինիս մահից հետո, աճեն կերպ խոչնդուտել էր Լուսավորչի արժողի նոր գահակալի ընտրությունը և ձեռնադրությունը: Բյուզանդական եկեղեցին Ժ դարից պետական քաղաքականություն դարձրած կրկնամկրտությունների միջոցով փաստորեն իրենից վանում էր Հայոց եկեղեցական կազմակերպությանը: Այս իրադարձությունները իրենց հետքն են բաղել ԺԲ դարի հայ պատմագրության վրա և բուն Հայաստանի հոգևոր եկեղեցական շրջաններում, կասկածի ենթարկելու համար բյուզանդական կողմի յուրաքանչյուր միութենական մախաձեռնություն:

Բյուզանդական հոգևորականությունը շարունակելով մախոթող դարերի ավանդները, ԺԱ դարում անհասնելիության դիրք էր գրավել Հայոց եկեղեցու նկատմամբ: Այդ մասին է վկայում 1087 թ. Նեղոս Կարաբլազի վանականի դեմ սկսված դավանաբանական դատավարությունը, որի կապակցությամբ հիշատակվում են նրա համախառններ Տիգրանի և Արշակի անունները⁸:

Բյուզանդական աստվածաբանները Հայոց եկեղեցու հետևողներից պահանջում էին ընդունել Քալկեդոնի և նրան հետևող բոլոր եկեղեցական ժողովների դավանաբանական և կարգապահական որոշումները, ծխական խորհրդում հետևել Կոստանդնուպոլսի եկեղեցուն և ենթարկվել բյուզանդական եկեղեցական կազմակերպությանը: Հնչտ է նշմարել բյուզանդական քաղաքական շահերի առկայությունը այդ պահանջնե-

րում: Դարերի ընթացքում իր պատմությունը մաքառումով կերտած Հայոց եկեղեցուց արտահանգված էր հյուսիսարևի դարավոր եկեղեցական ավանդույթներից և դառնալ Բյուզանդական կայսրության և նրա եկեղեցու կամակատարը: Այս մտածումը երբեք ընդունելի չէր կայտը լինել Հայոց եկեղեցու համար, որը դարերի ընթացքում կերտել էր սեփական ինքնույույնությունը:

Այդ պայքարի ընթացքում, սկսած Զ դարից, Հայաստանում մյուսանց դեմ էին պայքարում քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հոսանքները: Բյուզանդական տիրապետության տակ գտնվող հայաբնակ տարածքներում քաղկեդոնական բնակչությունը բավական ժանդակչիտ դիրք ուներ, քանի որ վայելում էր կայսրության հովանավորությունը: Քաղկեդոնականների եկեղեցական կազմակերպությունը շարունակում էր մասը կազմել բյուզանդական կայսերական եկեղեցու և մասնակցում էր նրա բոլոր ժողովներին, անհայտ պայքար մղելով Հայոց ինքնույույն կարողելուության հետ: Գավառաբնակական հողի վրա տեղի էին տնեմում մաս, ազգային հակամարտություններ: Տայրի և Գուգարքի քաղկեդոնական բնակչության մի նշանակալի հատված, իր դավանական ինքնատիպությունը պահպանելու և Հայոց եկեղեցուց առանձնանալու շնորհիվ սկսած է դարից փոխում էր ազգային դեմքը: Հայոց եկեղեցու և քաղկեդոնականների միջև պայքարն ավելի էր սրվում ԺԲ դարի ընթացքում, Վրաստանի հզորացմամբ: Պաշտոնական եկեղեցին թշնամաբար էր վերաբերում հայ հոգևորականությանը, խլում էր եկեղեցական շինությունները (Պղնձահանք, Անիի տաճար և այլն): Այդ պատճառով էլ, Վրաց քազավության տարածքներում գործող Հյուսիսային Հայաստանի հոգևորականության դիրքադառնումը հակադարձ էր ԺԲ դարի Կղիկյան հոգևորականության միտքեմական ձգտումներին:

Հայոց եկեղեցու առաջնորդները մերժում էին Հայոց եկեղեցու ինքնույույնության վերացման ամեն մի փորձ և սկսած Ը դարից որդեգրեցին հակաքաղկեդոնական ավանդույթների ամբապնդման անխտոր կայս: Այդ պատճառով էլ, Բյուզանդական կայսրության ստեղծմանը Հայոց եկեղեցին շարունակում էր մնալ հալածյալ դավանանքների շարքում: Կայսրության տարածքներում բյուզանդական եկեղեցին առավելազույն անհամդարձող էր այլ դավանական խմբերի, Հայոց ինքնույույն եկեղեցու նկատմամբ: Բյուզանդական բանակում արգելված էր այդպիսի անհամդարձող զինվորական ծառայությունը: Կենսագործունեության այդ բնագավառն ընտրողները ստիպված էին վերանկերտվել կամ փոխել դավանությունը: ԺԲ դարի Կոմենենոսների դարաշրջանի պատմագրությունը, որը շարունակում էր բյուզանդական մատենագրության լավագույն ավանդույթները, գաղափարախոսական միտումներից դրսևած չէր ուզում էական տարբերություն տեսնել պավլիկյանների, հակոբիկյանների և հայոց եկեղեցուն պատկանող հավատացյալ ներկայացուցիչների

միջև: Այդ դիրքորոշման բացահայտման լավագույն վկայությունը Ալեքս Ա-ի դատար՝ Աննա Կոմնենեի երկն է, ուր նկարագրվում է 1114/1115թթ. Փրիլպուպոսի ներժամողների դեմ Ալեքս Ա Կոմնենոսի ակամ դատավարությունը⁹: Բյուզանդական եկեղեցին շարունակում էր վաղուց ի վեր ուղեկցում, Հայոց եկեղեցու իսկաբանությանը վերամկրտելու քաղաքականությունը¹⁰: Այս առումով, Աննա Կոմնենեի պատմության հետ միասին բացառիկ վկայություններ է հատույում Թեոֆիլակտ Օխրիդացին իր քրթերում¹¹: Գավառաբանական խնդիրների արժարժմամբ ևս բյուզանդական եկեղեցու ներսում գրված աշխատությունները շարունակում էին նույն ուղղությունը, ինչ դրանց ունեին մի քանի դար առաջ¹²: Գրանց մեջ կարևոր նշանակություն ունեն ԺԱ դարի վերջում գրված եկրիմիտս Զիգաբենոսի «Πανοπλία δογματικη» աշխատությունը և նրա հիմնական դրույթները պաշտպանող, ԺԳ դարի սկզբին գրված Նիկեոտաս Խռնիատեսի «Θεραπευτικὸς Τῆς ὀρθοδοξίας» դավանաբանական երկը¹³: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ԺԲ դարի ընթացքում Հայոց եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը Բյուզանդական կայսրության ներսում փոփոխության չէր ենթարկվել, չնայած գրեթե 20 տարի (1165-1178թթ.) շարունակ բանակցություններ էին տեղի ունեցել կողմերի միջև: Գրա ամենավաղ ապացույցն էր Իսահակ Անգելոս կայսեր իշխանության տարիներին (1185-1195) Հայոց եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ Բյուզանդիայում, հատկապես Փրիլպուպոսի շրջանում իրականացվող իսլամադավանները և վերամկրտության փաստերը, որոնց մասին նախորդում են թե՛ հունական, թե՛ իտալական սկզբնաղբյուրները¹⁴:

Հայոց եկեղեցու և կարողելուսական արողի նկատմամբ նման վերաբերմունքն ուներ իր քաղաքական դրոյապատճառները: Վերագրված Հայոց բազալիոնության պայմաններում կայսրությունը փորձում էր կտարել Հայոց եկեղեցական կառույցի դիմադրությունը, որի շնորհիվ ավելի հեշտ կլիներ իր իշխանությունը տարածել կայսրության ներսի և նրա սահմանների շուրջ հաստատված իսլամական շրջանների վրա:

Բյուզանդական կայսրությունը սելջուկյան ռազմարշավների պատճառով ետ էր մղվել Հայաստանից, Հյուսիսային Ասորիքից և Փոքր Ասիայի մեծագույն մասից: Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին Բյուզանդական կայսրության տարածքում, հատկապես Բալկաններում հայ ազգաբնակչության նկատմամբ իսլամադավանների մի քանի եզոք ալիք էր անցել: Աննա Կոմնենեն բավական մանրամասն անդրադառնում է այդ իրադարձություններին: Միաժամանակ կասկած Ա իսլամական ռազմաքաղաքի հետ, Բյուզանդական կայսրությունը նրկարատես ընդմիջումից հետո, ԺԲ դարի սկզբին, բավական աշխուժացրեց իր քաղաքականությունը Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում: Բյուզանդական բանակները խաչակիրներին ուղեկցելով հասան մինչև Անտիոք, փորձելով իրենց վերստանալության տակ առնել տարածաշրջանը: Խա-

յակրաց առաջին ռազմաբարձվին հաջորդած առաջին տարիները ևս - Մատթեոս Ռոռհայեցու կողմից բնաբազրվում են իբրև մի կողմից հայերի և ասորիների, մյուս կողմից եռլիկների և լատինների միջև բարբոթված տոմարական վեճի ժամանակաշրջան: Առաջին անգամ Հայոց ՇՄԱ բվականի(-1102) կողմերի միջև վեճի ամառվա դարձավ Մտազատկի խնդիրը, որը մի քանի հարյուրամյակ շարունակ միմեանց դեմ էր ծանոմ հակադիր կողմերում դիքրավորված տոմարազետ փարդապետներին¹⁵: Խաչակիրները, հատկապես Միգիլիայի նորմանների դեմ մղված պայքարն ավարտվեց Դեաբոլի հաշտության պայմանագրով (1108), որով ծովափնյա Կիլիկիայի տարածքները կրկին մտնում էին բյուզանդական ազդեցության գոտու մեջ: Հայոց կեղեցու նկատմամբ Ալեքս Ա Կոմնենոսի քաղաքականության սպառնչ ընտրազվերը գտնում ենք ժԲ դարի 30-ական թթ. պատմագիր Մատթեոս Ռոռհայեցու երկում. «...ի վերայ ազգյա Հայոց յոյժ առեցադ երեւեալ: Սա գործեաց գործ, որ ոչ էր ըստ կամացն Աստուծոյ. երամայեաց երկրորդ մկրտութիւն առնել...»¹⁶: Ալեքս Ա Կոմնենոսի մահից (1118) մինչև ժԲ դարի 30-ական թթ. Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության տեսադաշտից շարունակում էր հեռու մնալ Հյուսիսային Ասորիքում գտնվող Հայոց կաթողիկոսարանը:

Այս քաղաքական գծին հակառակ, Մելքոնները ավելի ու ավելի նպաստավոր պայմաններ էին փորձում ստեղծել Հայոց կեղեցու գործունեության նամար, հնարավորություն տալով Բարսեղ Անեցուն վերադառնել Հոնիի հակաբող կաթողիկոսարանը, ամրապնդել եկեղեցական նվիրապետական կառույցը սելջուկ սուլթանության տարածքներում¹⁷:

ժԲ դարի 30-ական թթ. բյուզանդական նվաճողական քաղաքականության հիմնական բիրայաներից մեկը դարձավ Կիլիկիայի հայկական իշխանությունը: Հովհաննես Կոմնենոսը երկու անգամ իր բանակներով մերխուժեց Կիլիկիայի հայկական իշխանության տարածք և Հյուսիսային Ասորիք (1136-1138, 1142-1143): Բյուզանդական կայսրը իր բանակի ռազմական հաջողությունները ամրապնդում էր Իսապիլիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի գլխավոր քաղաքներից հեռացնելով լատին քրիստոնեական առաջնորդներին և այդ արժույթների վրա վերահաստատելով հայնօրրորդըս կեղեցու նախկնականներին: Մատթեոս Ռոռհայեցու վկայությամբ Հովհաննես Բ Կոմնենոսի (1118-1143) իշխանության տարիներին Բյուզանդական կայսրությունը նկատելիորեն երամարվում է Հայոց կեղեցու և ազգաբնակչության նկատմամբ բռնի ուժի քաղաքականությունից: Երա մասին պատմիչը գրում է. «...սա եղեալ ընդունող ազգին Հայոց՝ և վերացոյց զգաստմն անարժան մկրտութեանն...»¹⁸: Այս շրջանում Բյուզանդական կայսրությունն ամմիջական հարաբերությունների մեջ մտավ մաև Հայոց կեղեցու առաջնորդների հետ, որոնց տարածաշրջանում ձեռք էին բերել բավական մեծ նեղիմակություն: Ըստ լատին և հայ-

կական սկզբնաղբյուրների, նրանք բավական ինտենսիվ փոխաբար-
 րորյուններ էին հաստատել կաթոլիկ եկեղեցու Մերձավոր Արևելքում
 հաստատված կառույցների նետ¹⁶: Հովհաննես Բ Կոմնենոսի գահակալ-
 ման այս շրջանին է վերաբերում Ֆրանսիացի բյուզանդագետ Ք.Ղալու-
 ցեզի կողմից հայտնաբերված և Revue des Etudes Byzantin-ում (1990)
 հրատարակված Հայոց կաթոլիկոս Գրիգոր Գ Պաղատանու բողոք
 ուղղված Հովհաննես Բ Կոմնենոս Կայսրին: Ամենայն հավանականու-
 թյանը այս վավերագիրը գրվել է Հովհաննես Բ-ի առաջին կամ երկրորդ
 Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ռազմարշավներից մեկի ընթացքում և կա-
 թոլիկոսի կողմից անձամբ ծանձնվել է կայսրին: Չնայած որ, ոչ այդ նա-
 մակի վերնագրում, ոչ էլ ընթացքում չի հիշատակվում այդ պահին Հայոց
 կաթոլիկոսական գահը զբաղեցնող Գրիգոր Գ կաթոլիկոսի անունը, այ-
 նուամենայնիվ նամակի սկզբից պարզ է դառնում, որ կայսրը խնդրել է
 Հայոց եկեղեցու առաջնորդին բացատրություններ տալ Հավատո հան-
 գամակի շուրջ և իույներին հուզող մի շարք ծխադախանական խնդր-
 ների մասին¹⁷:

Այդ խնդիրներից առաջինը Հայոց եկեղեցու Հավատո ծանգամակն
 էր, դավանաբանության խստտվանությունը: Կաթոլիկոսն իր նամակի
 սկզբում մանրամասնորեն անդրադառնում է Ս.Նիղոլայության անձերին
 (Հայր, Որդի, Ս.Հոգի), բնութագրում է նրանց ընկալումը Հայոց եկեղեցու
 ուղղափառության տեսանկյունից: Հավատո այս ծանգամակը գրեթե չի
 տարբերվում օրթոդոքս եկեղեցու մոտեցումներից և հակադրվում է լա-
 տին աստվածաբանությանը՝ Filioque-ի մերժումով: Անդրադառնալով
 Բանի մայրնագմանը, կաթոլիկոսը հավասարապես նշում է և՛ Սվտի-
 քսին, և՛ Նեստորին: Նամակում խոսվում է նաև պատարագի զինու և
 Ս.Մտոնի մասին, բերվում է հայոց եկեղեցուն բնորոշ դավանաբանա-
 կան բանաձևը. «*τρεῖς ὑποστάσεις καὶ μὴν φύσας*»: Այս վավերագիրը
 իր ընթացված հայացքով մախրոյում է 1165թ. սկսված հայ-բյուզանդա-
 կան եկեղեցական բանակցություններին (1165-1178), որը բարձրակետն
 է հայ-բյուզանդական եկեղեցական փոխաբարբնությունների:

1143թ. հետո մեծ տեղաշարժեր տեղի ունեցան Կիլիկիայում և Հյուսի-
 սային Ասորիքում: Եղեսիայի կոմսության կործանումից հետո, 1150-ա-
 կան թթ. հետո Հայոց կաթոլիկոսարանը հաստատվեց Եփրատի ափին
 գտնվող Հոմվկա ամրոցում, որը մտել էր Հայկաի աթաբեկության տա-
 րածքների մեջ:

Հայոց կաթոլիկոսարանը մեզ հետաքրքրող պատմաշրջանում հայե-
 յին միավորող համազգային միակ կազմակերպությունն էր, այն փաս-
 տորեն պետություն էր պետականությունը կորցրած ժողովրդի նամար:
 Նրա իշխանության մյուս առանձնահատուկ կողմն էլ այն էր, որ այն
 տարածվում էր հայազգի բոլոր հավատացյալների վրա, որոնք ընակ-
 վում էին Մերձավոր Արևելքի ռազմաթիվ պետություններում: Այդ է

պատճառը, որ Հովհաննես Բ-ի հետևորդը, Մամուկ Ա Կոմնենոսը (1143-1180) սկսեց իրականացնել Հայոց եկեղեցու հետ միաբան տեսական քանակցություններ: Կաթողիկոսաբանի հիմնական խնդիրն էր եկեղեցական քանակցություններում ճշտել Հայոց եկեղեցու մեկուսացումը, իսկ Բյուզանդականինն էր՝ կայսրության տարածքներում և Կիլիկիայում ապստոլ հայերի աջակցության ձեռք բեխումը այսուսին և ներքին քաղաքական հարցերում:

Քանակցությունների սկիզբը թվադրված էր Բյուզանդական կայսրության նկրտումներով: Այդ մասին հետաքրքիր վկայություններ է պահպանել Ներսես Լամբրոմացու կազմած «Պատճառ խնդրյա միաբանության» (ՊԽՄ) ժողովածուն, ուր հավաքված են Մամուկ Ա Կոմնենոսի իշխանության դարաշրջանում Հայոց կաթողիկոսաբանի և Բյուզանդական կայսրության միջև փոխանակված եկեղեցական քանակցությունների վավերագրերը: ՊԽՄ-ի առաջաբանում պատմվող իրադարձությունների ծավալման վայրը Կիլիկյան Հայաստանն էր, ուր երկպառակույտական պատերազմ էին վարում երկու հայազգի իշխաններ՝ Օշին Հերոմյանը և Թեոդորոս Բ Ռուբինյանը: Այս դրվագում ակնհայտ է եկեղեցու պատմաբան Ներսես Լամբրոմացու աչառու վերաբերմունքը Ռուբինյան իշխանական ընտանիքի նկատմամբ: Երակետ ընդունելով Բյուզանդական կայսրությանը Օշինի Հերոմյանի և Թեոդոս Բ Ռուբինյանի ստորակա դիտվելու հանգամանքը, Տարսուհի արքեպիսկոպոսը մեղադրում է երկրորդին, որ նա «թեկն ամէր ընդդէմ քազատրիմ Հոռոմոց պէսպէս պատճառաւ, մտացեալ զեղմնակտու դաշինսն՝ որ ի միջի և հնազանդութիսն նորա» (ԹԸ, 1871, էջ 86), հակադրելով Թորոսի վարքագիծը Օշինի հավատարմությանը դեպի բյուզանդական կայսրությունը: Ըստ Ներսես Լամբրոմացու, երկու հայ իշխանների միջև ծագած պատերազմի հիմնական պատճառն Օշինի հավատարմությունն էր Բյուզանդական կայսրությանը:

Այդ հոմասեր քաղաքականության գաղափարախոսական դիլեմերի վրա է կանգնած նաև ՊԽՄ ժողովածոյի կազմող Ներսես Լամբրոմացին և նրան մտ կանգնած հայ հոգևորականության այն շերտը, որը բյուզանդական եկեղեցու հետ միության կողմնակից էր:

Ըստ Ներսես Լամբրոմացու Մամուկ Ա Կոմնենոսը և Բյուզանդական կայսրությունը, ԺԲ դարի 70-80-ական թթ. իսմաշխարհային քաղաքակրթության պահպանման հենասյունն ու ապավինն էր: ՊԽՄ ժողովածոյի վերջում Ներսես Լամբրոմացին ակնարկելով 1180-1183 թթ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին. Ալեքս Բ Կոմնենոսի (1180-1183) զանակալմանը, Մամուկ Ա-ի դստեր և փեսայի խռովությանը, Անդրոնիկոս Ա Կոմնենոսի (1183-1185) խաբարվամբներին, Տարսուհի արքեպիսկոպոսը դրանք մատուցում է որպես աշխարհի կոթմանման բացահայտ նշան: Նա Բյուզանդական կայսրու-

յան քաղաքական կյանքի վայրիվերումների հետ է կապում ողջ աշխարհի կացությունը. «Այդ ընդ սեռն տառանկ՝ շարժի և աշխարհի ընդ ամենայն կողմանս սովով եւ սրածութեամբ եւ սասանութեամբ, որպէս ասաց Քրիստոս յաստուածապատում անտարամութեանն յաղագս կատարածին» (ԹԸ, 1871, էջ 86): Այդ միտումը ընթերցալի մեջ սերմանելու և գաղափարը ՊեՄ-ի վերջնական ակոխող դարձնելու համար հեղինակի գրչի տակ քիչ դեր չի խաղում Մյուխլեխալեի ճակատամարտում Բյուզանդական բանակի պարտության ծանուցում դիտելով 1176 թ. ապրիլի 11-ի արեգակի խավալումը:

Ուրեմն՝ Ներսես Լամբրոնացու քաղաքական հավատաճշի համաձայն պետք էր ամեն կերպ աջակցել Բյուզանդական կայսրության հզորության ամրապնդմանը և դատապարտել ու խանգարել հակաբյուզանդական աժերի գործունեությանը: Չի կարելի ամոհսել մահ այն համաձայնությունը, որ ՊեՄ ժողովածուի կազմողը, որը դեռ 1182-1183 թթ. եկեղեցական միության հայ-բյուզանդական բանակցությունների հետևողական կողմնակից էր, 1196 թ. Կ.Պոլիս այցելելուց հետո, խոր հիասթափություն է ապրում, տեսնելով Բյուզանդական կայսերական եկեղեցու և արքունիքի ինքնուր վերաբերմունքը հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների շարունակման վերաբերմամբ:

Մյուս կողմից, Հայ-բյուզանդական փոխհարաբերությունների նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքորոշման մասին մեր տեսակետներն ամբողջական չեն լինի, եթե ամոհանք Հյուսիսային Հայաստանի վարդապետների դիրքորոշումը: Նրանք հայ-բյուզանդական բանակցությունների ողջ ընթացքում ընտրել էին երկխոսությունը ընդհատելու և բոյկոտելու քաղաքականություն: Այդ քաղաքականությունը ուղիղ համեմատական կապի մեջ պետք է տեսնել Վրաց պետության վարած կռուական քաղաքականության նկատմամբ, որի հետևանքով վերամկրտվում էին Հայոց եկեղեցու ներկայացուցիչները, քաղկեդոնականների ձեռքն էին անցնում Հայոց եկեղեցիներն ու վանքերը: Այդ է պատճառը, որ բյուզանդական եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը տարբեր էր Կիլիկիայում և ամբողջովին հակառակ Հյուսիս-արևելյան Հայաստանում: Գրիգոր Տուտեղորդին և մյուս ժամանակակից հյուսիս-արևելյան մյուս վարդապետները փորձում էին ամեն կերպ խոչնդոտել հայ-բյուզանդական եկեղեցիների միության կիլիկյան վարդապետների ծրագրին: Նրանք իրենց նամակներով ժամանակ առ ժամանակ սրափության կոչեր էին անում Հռոմկլայի կաթողիկոսներին և Կիլիկիայի Ռուրիմյան իշխանության ղեկավարներին:

Կամեննուների հարստության վերջին տարիներին քաղաքական անկայունության հետևանքով Բյուզանդական կայսրությունում կրկին հալածանքներ սկսվեցին Հայոց եկեղեցու ներկայացուցիչների դեմ: Այդ հալածանքների բիրտախ դարձան Փիլիպոսպոլսի շրջանի: հայկական հա-

մայրքները: Հակահայկական պրոպագանդայի արտահայտություններից մեկն էլ Անդրանիկոս Կոմնենոսի (1183-1185) կողմից Քիոսյանա Բուրադիտոնս (1179-1183) պատրիարքի գահընկեցությունն էր, որին ներկայացված մեղադրանքներից մեկն էլ ըստ բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատոսի՝ պատրիարքի հայկական ծագումն էր: Ինարկն այս դարաշրջանում Հայոց եկեղեցին բավական ամուր կարգավիճակ էր ձեռք բերել Բաղկաններում: Ըստ Վախրան Արևելցու այստեղ գործում էր Հայոց եկեղեցուն ենթակա երեք եպիսկոպոսական աթոռ²¹: Այս եկեղեցական կազմակերպությունը լուծարելու միտում ուներ Իսահակ Անգելոսի (1185-1195) կրթական քաղաքականությունը, որի էիմնական դրույքները շարադրված են Գրիգոր Գ Տղա կաթողիկոսին ուղարկված նամակում²²: Այստեղ կայսրն արդարացնում է Բյուզանդական եկեղեցու որդեգրած կրկնամկրտությունների պրակտիկան: Հենց այս քաղաքականության նկատմամբ դժգոհությունն էր, որ Գ խաչակրաց բազմաընթաց ժամանակ Փիլիպուարդի հայկական քնակչությունը ապստամբից Բյուզանդական կայսրության դեմ և քաղաքն համձնեց գերմանական խաչակրաց քամակին²³: Միս Կոմնենոսների կայսրության այս վերջին իրադարձությունների լույսի ներքո էլ ԺԳ դարի սկզբի բյուզանդական մատենագիրները և նատկապնս Նիկետաս Խոնիատոսը, որը այդ տարիներին Փիլիպուարդի քաղաքապետն էր, անդրադարձնում են Հայոց եկեղեցու և հայ ազգաբնակչության նկատմամբ կայսրության վարած քաղաքականությանը:

AZAT BOZOYAN

ARMENIAN CHURCH AND BYZANTINE EMPIRE IN THE 11-12 CENTURES

The article include some questions on Armenian-Byzantine relations in the epoch of the Comnenoi temps and discussed some Byzantine document.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. G.Ostrogorsky, *History of the Byzantine State*, Oxford, 1956, p. 303-309.
2. G.Ostrogorsky, *History...*, p. 315-324; Ф.Успенский, *История Византийской империи*. Отдел VI. Комнины, т.4, М. 2002, с. 112-113.
3. G.Ostrogorsky, *History...*, p. 320; Ф.Успенский, *Указ. соч.*, с. 146.
4. Տե՛ս այդ մասին G.Dodeyan, *Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises*, vol. 2, p. 733-735.
5. Այդ մասին տե՛ս G.Dodeyan, *Les Armeniens...*, t. 1, p. 249-252.
6. Տե՛ս Papadopoulos-Kerameus, *Ανάλεκτα ἱεροσολιμαϊκῆς σταχυολογίας*, I, SPb. 1891, p. 116-123; H.-G. Beck, *Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich*, München, 1959, p. 610.

7. ժԱ դարի Բ կեսի եկեղեցա-դասվանական զեմի տարյանը անդրադարձել են Նիկիա Գարսոյանը (N.G.Garsosan, *The Problem of Armenian Integration into the Byzantine Empire*.- in: *Studies of the Internal Diaspora of the Byzantine Empire*, Washington, 1998, p. 112-122) և ժամի Գույարը (J.Gouillard, *Gagik II défenseur de la foi Arménienne*. MT, 7, 399-418):
8. Տիւ Gouillard J., *Le synodikon de l'orthodoxie*.- TM, 2, 1967, p. 204-205; Garsosan N., *L'abjuration du moine Nil de Calabre*.- BS, XXV/1, 1974, 12-27; Mullett M., *Theophylakt of Ochrid, reading the letters of a byzantine archbishop*, Birmingham Byzantine and Ottoman Monograph, 2, Aldershot, 1997, p. 88-89, 187, 240-241; Dedeyan G., *Les armeniens...*, t. 2, p. 735-736. ժԱ-ԺԲ դդ. քրոնիկամբանքի սկզբնադրյուններից հիշատակելի են. Theophylakt d'Achrida, *Lettres*, introd., texte, traduct. et notes par P.Gautier, CFHB, vol. XV/2, Thessalonique, 1986, p. 129; Anne Comnene, *Alexiade*, édit. et trad. B. Leib, t.II, p. 188-189.
9. Տիւ Mullett, *Theophylact*, pp. 88-89; Ducellier A., Kaplan M., Fertuga J., Arrignon J.-P., Carile A., Balard M., *Byzance et monde orthodoxe*, A.Colin, Paris, 1986, p. 248-249; Vryonis S., *Byzantine Images of the Armenians*.- in: R.Hovannisian (dir.), *The Armenian Image in History and Literature*, University of California, Los Angeles, 1981, p. 65-81; Zekyan L., *The Armenian Community of Philippopolis and the Bishop Iouannes Athmanos, Imperial Legate to Cilicia*.- in: G.Kara (dir.), *Between the Danube and Caucasus*, p.367-368; Dugron G., *Minorités ethniques et religieuses dans l'Orient byzantin à la fin du Xe et au XIe siècle: L'immigration syrienne*.- in: TM, 6, 1976, p. 200-204; ԱՔոզոյան, *Քրոնիկոնիսի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը*, եր., 1988, էջ 20-21; Ազրնադրյունների մեր առանձնաձևով է. Anne Comnene, *Alexiade*, t. II, p. 179-181, Հմմտ. Анна Комнина, *Алексиада*, с. 396-398.
10. Այլ քաղաքականությունը նրկատեղ անազնուցող շափերի էր հասել ժ դարում, Անանիոս Մեղակի կաթողիկոսի (941-965 ՝) իշխանության տարիներին (տե՛ս Գ.Տեր-Աղրտչյան, *Հայագիտական Ուսումնասիրություններ*, զիրք Բ, աշխատ. պրոէ. Պ.Հ.Հակոբյանի, 1998, էջ 77 եւ.):
11. Տիւ Anne Comnene, t. II, p. 181-185; 218-223; Theophylacte, *Lettres*. pp. 178-179, 336-337, 338-339; հմմտ. Chalandon F., *Les Comenes*, t. I, pp. 317-319; Mullett, *Theophylact*, p. 241; Dedeyan G., *Les Armeniens...*, t. 2, p. 739-740:
12. Augé, *Politique religieuse...*; Garsosan N., *The problem of Armenian Integration into the Byzantine Empire*.- in: H.Ahrweiler and A.E.Laïou (dir.), *Studies of the Internal Diaspora of the Byzantine Empire*, Washington, D.C., 1998, pp. 76-77.
13. Տիւ PG, t. 139, 140; հմմտ. H.-G. Beck, *Kirche*, S. 665-664.
14. 'Ο εν Κωνσταντινουπόλει Έλληνικός Φιλολογικός Σύλλογος. 'Ανεκδοτα Έλληνικά συγγραμμάτια Έγγραφέ τε και άλλα κείμενα κατ' έκταξη συλλεγέντα εκ των εν τη „Μαιναγορδατέω Βιβλιοθηκης,, αναγραφόμενων χειρογράφων και ιών πρώτων εκδοόμενα υπό Παπαδοπούλου του Κεραμειος, Έν Κωνσταντινουπόλει, 1884, σελ. 59-63; Հայերն քաղաքականութիւն տե՛ս Հ.Քարրիկյան, *Բուսակ Անգղոս կայսր արտասխան ծածակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային*.- *Էջմիածին*, 1967, 4, էջ 54, հմմտ. հայ պատմագրութեան հետ. Հասարակ Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 133:

14. Այս խնդրին առաջին անգամ անդադարաբեկ է Գրիգոր Բ Վկայաները «Վասն Ձատկին մուղտութեանն» հատում: Այս փափեղապրի բնագրական զուգահեռների մասին տե՛ս Օղյուզեան Ա., Մատենադարանական հետազոտություններ Մոզես վարդապետ երզնկացու զրական առեղծուածի շուրջ, Էջմիածին 2001, էջ 105-109:
15. Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 345:
16. Այս ճառին ավելի մանրամասն տե՛ս Բուզդյան Ա., «Կարողիկոս Հայոց» տիտղոսի նրբալի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո.- Հայաստանը և Զրիստոնիա Արևելքը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., երևան, 2000, էջ 80-86:
17. Մատթեոս, էջ 346:
18. Տե՛ս Dédéyan G., Le rôle complémentaire des frères Pahlawuni Grigor III, Catholicoi, et Saint Nerses Snochali, coadjuteur, dans rapprochement avec les Latins, à l'époque de la chute d'Édesse (v.1139 – v.1150).- in REArm, NS, t. XXIII, 1992, p. 237-252.
19. Darrouzès J., Trois documents de la controverse gréco-arménienne.- Revue des Études Byzantines, 48, 1990, p. 94-97; 101-102; 131-145.
20. Տե՛ս Հասարմուն պատմութեան Վաղդանայ վարդապետի, Վննուիկ 1862, էջ 133-134:
21. Տե՛ս Հ.Բարթիկյան, Իստիակ Անգիղոս կայսեր պատասխան ուժնակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տզալին.- Էջմիածին, 1967, ք. 4, էջ 50-55 (վերահրատ տե՛ս Հ.Բարթիկյան, Հայ-քրյուզանդական հետազոտություններ, հտ. Ա, էջ 181-186):
22. Տե՛ս Ա.Բուզդյան, Հայ-քրյուզանդական եկեղեցական թանակցությունների վավերագրերը (1165-1178), եր. 1995, էջ 216-220:

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՈՒՐՁ. ՈՒՐԱՐՏՈՒԻ «ԱՐՔԱՆԵՐԸ»^{*} (նախնական դիտարկումներ)

Պատմագիտության մեջ առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են ուրարտական տեղության գլխավոր աստծուն՝ Խալդիին: Գրանցում փորձ է արվել վեր հանել նրա էությունը, նրա տեղն ու դերը դիցաբանում և դիցաբանից դուրս: Այս ուղղությամբ արձանագրվել են էական ձեռքբերումներ. բացահայտվել են գործառույթներ, արվել համադրություններ, մեր գիտելիքները խորստացել են նոր փաստերով, չորսամատուցյալ մեջ են դրվել բազմաթիվ վարկածներ¹: Այս ամենով համոզված թեման չի կարելի համարել պատված. այն կարիք ունի հետագա ուսումնասիրությունների:

Ներկայացվող հոդվածում ամփոփված են դիտարկումներ, որոնք հանգում են մեկ եփմնական եզրակացության. Խալդին, ըստ իշխող պատկերացումների, ոչ միայն աստված էր, առաջինը՝ աստվածների մեջ, այլև արքա, արքա՝ երկրում, դիտվելով ուրարտական տեղության՝ մաս աշխարհիկ առաջնորդ:

Խալդի՝ մարդ և աստված. հոգևոր ընկալումներ

Տեղության մարդկանց համար, որոնք կրողն էին այդ նույն կառույցի, Խալդին ամենակալ էր և ամենուրեք. նա արև էր, թեև կար արևի աստված, ռազմիկ (աղեղնավոր թե տեգավոր), միմյուցե՝ կար և ռազմի աստված, նա պատճառ էր բարոս և յարի, ընդունակ էր կործանելու, միաժամանակ՝ արաքյագործ էր, նա պատանի էր, հասուն տղամարդ և կամ ծեղունի. նա հավերժ էր: Նա կենսախիճ էր, աղբյուր՝ երջանկության: Մասնագետները հանգամանորեն ներկայացրել են այս ամենը: Կարելի

^{*} Հոդվածը մաս է կազմում «Ուրարտուն և իր նախնաները» ծրագրի, որը հեղինակն իրականացրել է Գերմանիայի Վյուրցբուրգի համալսարանի Հիմ արևելյան բանասիրության ինստիտուտում՝ «Գերմանական ակադեմիական փոխամակման ծառայության» (Deutsche Akademische Austauschdienst) ինվանսպորտյան (նոյեմբեր 2003 – նոյնվայր 2004):

է սահմանափակվել մշեով, որ Խաղչին, մի գնացում, քակական հետո էր, ինչ-որ տեղ անհասկանալի կամ անմեկնելի, իրոք աստվածային և առողջվածային (կոչենք նրան «ամուտն Խաղչի»)²: Իսկ մյուս կողմից՝ աղքատներն ու պատկերազարդումը մեզ են ներկայացնում միանգամայն շաշափելի, աղքեն իսկ ձևավորված և ընկալելի՝ «տեսանելի Խաղչի»:

Հայաստ է կիմարեւելյան գրականությունը: Նրանում տեսնում ենք պատկերացումներ քնության մասին, պատկերացումներ կյանքի, պատկերացումներ մահվան և անմահության, աստվածների ու մարդկանց մասին: Հարուստ է «աստվածների գիրքը», եզրագրային սեպագիր էջեր պահպանել են նրանց կյանքի մկարագրություններ, կյանք՝ որը տեսանելի չէր մարդկանց՝ մահկանացուներին: Միջագեղարքյան հոգևոր ընկալումներում առանձնացնում էր աստվածային աշխարհն իր նայք-աստվածներով: Նրանք էին վճռում մարդկանց քախտը, հովանավորում կամ պատժում նրանց, առաջնորդում նրանց զորքերին, քայց չէին իջնում երկիր, նրանց գոթմունքությունը սահմանափակված էր երկնային դաշտի սահմաններով: Իսկ երկրում կար արքա, աստվածների ծառա, ըստ ընկալումների, քայց փաստացի աստվածացված իրականում: Մի իրարություն, որ բացակայում էր Ուրարտում. այստեղ Խաղչին ամենուր էր՝ առաջնորդելով և աստվածներին, և՛ մարդկանց, և՛ չկար *այքսա*:

Խաղչին գուտ երևայք չէր, ինչպես կարող է թվալ, ավելին էր քան հոգևոր ընկալումը, սոսկ պատկերացում չէր, որին կարող էր մարմնավորել այս կամ այն կորողը, Խաղչին հզոր էր, քայց ոչ անտեսանելի: Խաղչի-աղքայի մասին ուրարտական պատկերացումները չէին կարող կյանքի կոչվել առանց մեկ կիմնական պայմանի՝ մարտուն ընկալելի լինելու համար անհրաժեշտ էր մարդկային կերպար ու կերպարանք, կյանք և բովանդակություն, այլ կերպ առած՝ նա ունենալու էր մեա և արյուն, լինելու էր տեսանելի, ներկայամաղու էր, պարզապես, որպես մարդ:

Ահա այս պատճառով է, որ Խաղչին ուներ իր՝ իրապես առարկայական հագուստները, այլուզարչի առարկաներ, իր մահիճը, որը պահվում էր Մուծածիլում՝ «Խաղչիի տանը»³: Ուրարտական պատկերազարդության մեջ նա ներկայանում էր նաև աշխարհիկ տեսարաններում՝ գահին բազմած՝ Վարդրամի աստվածունու հետ ճաշելիս, որս անելիս՝ արքայական զբաղմունք, ոսգմի դաշտում և աղբուր՝ Ուրարտացիները: համար Խաղչին նրանց մեջ էր, նրանց կողքին, նրանք զգում էին Խաղչիի ներկայությունը և ռազմական արշավանքներում, և չիմարարություն իրականացնելիս, և զոհեր մատուցելիս, այսինքն ամենուր, ուր կարող էր լինել երկրի արքան:

Մարդ - աստված մերձեցմանն ու անգամ միասնությանը շատ ավելի լավ կարող ենք հետևել հունական դիցաբանության մեջ, ուր աստվածները կարող էին լինել մարդկանց մեջ, զբուցել նրանց հետ, խորհուրդներ

տալ, մարդկանց համար կառուցել շենքեր կամ մասնակից լինել պատերազմների ատազնորդելով այդ մույն մարդկանց, կովել նրանց կողքին (մի պատկերացում, որ գեղեցիկ կերպով ներկայացնում էր Հոմերոսը Տրոյական պատերազմի իր նկարագրությունում), վճռել նրանց բախտը՝ կամենալով յարը կամ բարին: Հունական դիցարանության մեջ արտահայտված այս միասնությունը, այնուամենայնիվ, դիտվում է որոշակի աստիճանաբար կամ շրջանակի մեջ: Ամեն մասկամացուի վիճակված չէր շփվել աստվածների հետ: Նժան բախտի, ամբարբար, արժանանում էին ատազնորդները, արքաները, հերոսները, ընտրյալները, և մի դրսևորում, որի արձատները, հունական դիցարանության շատ էջերով հանդերձ, տեսանելի է Արևելքում: Հավատամք դարձած այս դրսևորման ոչ աստիճանաբար, «գանգվածային» օրինակը կարող ենք դիտել Ուրարտում:

Աղբա հարի

ա) *Իմ Վնդարելում է այդ քաղաքի քնակիչներին, նրանց տեղահանությունը ևս ծրագրեցի (և) նույնպես հաղթիին, հալած Ուրարտու (երկրի), ևս հրամայեցի նրան դուրս բերել, իր դարպասի առջև ևս նրան հաղթակաճորեն ցած իջեցրի ...:*

բ) *Ի՞մ վատակեղիներին, ի՞մ ատազնորդներին ևս ուղարկեցի տաճարը հաղթի, հաղթիին՝ նրա աստծան, և Բագմաշքոին՝ նրա աստվածուհուն, ի բիվս նրա տաճարի քազմազան և անհամար հարստության, (ևս գեղեցի) և բերեցի ի՞մ ճամբարի պատերից ներս:*

Ինչպես նշվել է մասնագիտական գրականության մեջ, աստիճանային հաղթանակներին մասն է կազմել թշնամու սքարաված և գերված արքաների ցուցադրումը ժողովրդին Նինվի դարպասների մոտ, հաղթանակի և հաղթողի գերազանցության մի յուրատեսակ ցույց, որ հետո որպեղբելու էին հոտնեցիները⁷: Այստեղ ևս տեսնում ենք մույն մոտեցումը, ժողովրդի առջև ցուցադրվել է հաղթին՝ որպես Սարգոնի գերի, որպես հաղթված, որպես *արքա*: Հաղթանակված (աստիճանային) արքան, անզան աստիճանացիների պատկերացումներում, չէր կարող հաղթել աստծուն, աստվածային ուժին, բայց կարող էր հաղթել *արքային*: Նրանք կարող էին գերի տանել թշնամու աստվածներին, բայց ոչ երբեք կործանել նրանց: Աստիճանային գրագիտը քաջ գիտակցել է տարբերությունը հաղթի-աստծո և հաղթի-արքայի: Այս հնարավորությանը միայն կարող է քաջատրվել այն փաստը, որ հաղթին գերեվարվել է երկից⁸: Նախ, որպես արքա՝ ցուցադրվելով ի տես ժողովրդի (հատված ա)⁹, իսկ այնուհետ՝ որպես աստված. «հաղթահանելից» հետո հաղթին ետ է տարվել տաճար և մորից «գերեվարվել», այս անգամ արդեն իր կնոջ՝ Վարդուանի (Բագարթու/Բագմաշքու) աստվածուհու հետ միասին (հատված թ)¹⁰:

Եթե ասորեստանյան աղբյուրն հեղինակած գրագրի՝ «արքունի մեծ դպիր» Նարու-շալլի-շունուի կողմից փաստն այնուամենայնիվ չի ասվել ուղղակի, ապա միայն այն պատճառով, որ Ասորեստանում արքան, իրականում, շատ ավելի մոտ էր աստվածային իշխանությանն ու իրենց՝ աստվածներին, ինչ-որ տեղ դիտվելով նրանց հավասար, նույն շարքում՝ զգայական ոգորում, և փաստացի՝ իրականում: Այս առումով Ասորեստանում, կամ, առնվազն, պարստական քրահներում, ինչպես երևում է, ավելի շատ տեղ էր տրվում աստվածների և նրանց իշխանության «բանավանդի» պաշտամունքին» քան իրական, գուցե և երբեմն նկատելի բացառություններով՝ առանձին տիրակալների պարսագայում: Այս երևույթը դիտվում է ամենուր՝ և պատկերագրության մեջ, որ գլխավոր դերում արքան էր, մինչև աստվածները ներկայացված էին իրենց խորհրդանիշերի տեսքով, եթե չասենք սուկ իբրև խորհրդանիշ կամ որպես խորհրդանշական, գեղեցիկ մի մախշազարդ՝ շխախտելու համար պատկերագրության ձևավորված կարգապարհները, և արքայական արձանագրություններում, որանցում գլխավոր հերոսը վերտոին արքան էր, գուցե և աստվածներից եետա, նրանց բավական մոտ, բայց արքան, արքան անձամբ կամ նրա ներկայության ինչ-որ արտահայտություն՝ արքայի խոսքը, հրամանը կամ պարզապես արքայի գործը¹¹:

Այլ էր պատկերն Ուրարտում: Շատերին է հայտնի, թե ուրարտական աղբյուրներում ինչպիսի տեղ են զբաղեցնում Խաղդիսի հիշատակումները: Նրա անունը, եզակի բացառություններով, առկա է յուրաքանչյուր տեքստում՝ երբեմն կրկնվելով բազմիցս, կարելի է ասել ինչ-որ տեղ նրա «ճնշող» ներկայության մասին: Այդ պատճառով է Գրիգոր Ղափանցյանն օգտագործել *խաղդանություն* տերմինը¹² կամ Չասոյզ Բրրնին ուրարտական պետությունը կոչել Խաղդիստան¹³: Երկար ժամանակ պատմագիտության մեջ արձատացել էին նաև «խաղդեր», «խաղդական» անվանումները¹⁴: Ուրարտական բոլոր հանդիսավոր արձանագրություններում և մասխատաջ *այքրամերի* տարեգրություններում առաջնությունը պատկանում էր Խաղդին. նա էր դուրս գալիս արչավանքի, նա էր հպատակեցնում երկրները կամ դա արվում էր նրա հրամանով, նրա կամքը աներկրա էր, հաղթական էր նրա զինքը և ակնհայտ՝ գործող *այքրամ* մղված էր ետին պլան: Այս մույնը կարելի է ասել ուրարտական պատկերագրության համար: Նրանում զոքթե բացակայում է *այքրամ*, արքայի *ամձը*, մեկը եզակի երևույթներից՝ իր ժամանակաշրջանի համար¹⁵:

Կարելի է ենթադրել, որ ասորեստանցիներին քաջ հայտնի էին իշխանության մասին ուրարտական պատկերացումները: Նրանց հայտնի էր, թե ով էր, այնուամենայնիվ, երկրի տիրակալը նաև աշխարհիկ դաշտում:

«Շխախտական» պատկերացումներ

Ուրարտական արձանագրություններում Խաղի աստվածը համընդ է գալիս որպես տեղության միակ տիրակալ՝ (graf.) ušḫanume uēšelašē tušī alaka uēšijašili PAP (տոր. bursaloni) KUR.KUR^{MIŠ} (տոր. KUR šurili) – *պարզեց-ինն իշխանություն՝ Շմարիտ նա-որդ՝ իշխամ է՝ ողջ տեղությունը* (երև ճիշտ է տրված մեկնությունը)¹⁶։ Նրա կամքով և ձեռքից *արքաները* կարող էին ստանձնել իշխանությունը սոսկ իբրև տեղապահներ, այսինքն՝ կոչվելով ի ծառայություն։ Դա էր նպատակը նրանց գործունեության՝ ինչպես վկայում են տարեգրությունները *հանուն Խաղիի այս մեծագործությունների մեկ տարում կատարեցի* կաշապարային արտահայտությամբ (graf. 𐎶𐎠𐎺𐎠𐎠𐎺𐎠 𐎠𐎠𐎠𐎠 𐎠𐎠𐎠𐎠𐎠 𐎠 I MU (տոր. šasini ššli) zadubi)¹⁷։

Ասորեստանյան տեքստերից «Լուվրի աշյուսակում», կարող է թվալ, պահպանվել են ուրարտական *արքաների* թագադրության արարողության որոշ դրվագներ¹⁸։ Ասորեստանցիների ընկալմամբ գուցե և դա թագադրություն էր, թագադրություն այրայի, մինչդեռ ուրարտացիների մոտ այն եղել է պարտականությունների սոսկ ստանձնում, ծառայության քարձրագույն աստիճան, ծառայություն՝ այրայի մոտ, նրա մշտական, իրականում աներևոյթ, բայց պատկերացվող, «զգայական» ներկայությամբ։ Ինչնրև պատահական չէ, որ ուրարտական տեքստերի գերակշիռ մեծամասնությունում այս փաստը նշվում է ընդամենը *«խայսական տեղը քարձրանալու (զրազեցնելու, բազմելու)»* մասին արտահայտությամբ՝ չեփչելով այրայական իշխանության որևէ խորհրդանիշ¹⁹։

Նշված արտահայտության հետ երբեմն օգտագործվել է նաև *արքայական* բարձրամակտ LUGÁL(ertu)-uši(ni) բառը²⁰։ Այստեղ միայն նշենք, որ տեղմինն արտահայտել է այսօրվա մեր ընկալմամբ, *պետության* իմաստը, վերաբերելով ցանկացած երկրի - պետական կազմավորման, ցանկացած (պետական) կառուցվածքով։ Հետաքրքիր է, որ «Լուվրի աշյուսակ»-ի՝ Խաղիին վերաբերող ամրադարձներից մեկում ուրարտական պետությունը համարվում է *հովվություն*։

[.....š]a ul-la-ni-uš-šu²¹ PA ú a-gu-ú la in-na-šš-šu-ú si-mat re-e-[š-ti] *տաանց նրա (համաձայնություն) չեն կարող կովել գայիսանն ու խայրը՝ խորհրդանիշները հովվություն...*²¹։

Այստեղ առկա է դյույթ, որը ոչ միայն վերաբերում է իշխանության օրինակաբանության մասին եղած պատկերացումներին (տաանց Խաղիի համաձայնության ոչ ոք չէր կարող իշխել), այլև պարունակում է ակնհայտ ուրարտական տեղության պետական կառուցվածքի մասին։ Աքքադերեն re'uti՝ *հովվություն* տեղմինը կարող էր և արտահայտել այն կառույցները, որոնցում առաջնային դերը պատկանում էր քրմական դասի ներկայացուցիչներին, այսինքն՝ ուրարտական պետությունը նրանց համարել են քրմապետություն կամ հովվապետություն։ Կարիք չկա մեկ

անգամ ևս ընդգծել, որ այս դեպքում տեղության վաստացի տիպակալները պետք է միաժամանակ համդիտանային նաև հոգևոր առաջնորդներ, մի մտտեցում, որի հնարավորությունը վաղուց է արտահայտվել մասնագիտական գրականության մեջ²⁷:

Ի դեպ, այսպես ասած «իրավական» պատկերացումները վերադասարդ այլ արձանագրություններում ուրարտական տիպակալները անվանվում են «ծողովուրդների ճշմարիտ խալիվ» (¹² sic musī ¹¹ ԿՄՄ²⁸)²⁹, «առաջնորդ» (¹² րմսե), միաժամանակ նաև՝ Խալդի աստծո պալատավորներ կամ, գուցե ավելի տեղին կլինի՝ Խալդի աստծո հետևորդներ, աստծո մարտիկներ (¹² Haldiei ¹¹ ERUM), սեպագիր տառերը դասարարություններում ERUM (IR/ARAD)՝ *պալատավոր, ծառայ, տիրույթ* նշանակող գաղափարագիտիկ արտահայտել է նաև *աստծո հետևորդ, աստծո մարտիկ* իմաստները³⁰: Իսկ եթե այս վերջինների մեջ փնտրենք Գրեգոր Գևափանցյանի ակնարկած «իտաղլամությունը»³¹: Արդյո՞ք Խալդին գաղափարախոսություն չէր, քաղաքականություն, որ կրում էին ուրարտացիները, առաջնորդվում դրանով և իրականացնում այն³²: Գուցե այստեղ տեսնենք այն հետևորդականությունը, որով ուրարտական նվաճողները պարտադրում էին Խալդիի պաշտամունքը՝ որպես իրենց աստծո, և Խալդիի իշխանությունը՝ որպես իրենց արքայի: «Թաղլամություն» ասվածը հավատարմություն էր, հավատարմություն արքայի հանդեպ, նրա կամքի ամերկբա իրականացում, որը փոխհատուցվում էր նրա քայնկամնեղությանը իր հետևորդների հանդեպ: Խալդին, որպես աստված, արքայուն էր «կյանքի», «պայծառ օրերի», «տրախտրյան», արջորը՝ մարդկային նրբանկություն³³, հովանավորն իր հետևորդ(ներ)ի ու նրա(նց) (քաղաքական) իշխանության, նրաշխիքը՝ ոսպնակամ հագողությունների³⁴, ու նաև արքայուր՝ բարեկեցության, նա էր պարզևս հարստություն՝ այս անգամ արդեն որպես արքա (տես ստորև):

«Իրավական» քնույրի պատկերացումների մաս են կազմում Արզիշտի Ռուսայորդու և Ռուսա Էրիննայորդու այն երեք արձանագրությունները, որոնց կաղապարային բանաձևերում հիշվում են իշխանության խորհրդանիշներ³⁵: Դրանք տալիս էր Խալդին՝ տեղության առաջնորդ(ներ)ին օժտելով «երկրային ճշմարիտ իշխանությանը» (slmnc kaini esini musī ucēlase ucēgi/ucēisjali ?)³⁶:

Բանաձևերի ծայրամասերը ուրարտական՝ բացատրապես ոչ շրջանի տեքստերում չի կարող հարցեր չառաջադրել: Դժվար է ասել, արդյո՞ք - դա գուցե նորամտություն էր, ինչպես շատ այլ բանաձևեր (ի դեպ, սրանց համար ևս կարելի է գտնել գուգահեռներ միջագետքյան արքայուրներում³⁷), վկայություն՝ արքայական իշխանության ինչ-որ տարանջատման³⁸ (աշխարհիկ և հոգևոր ոլորտների), դրանից ենթադրվող քրժապետարքայի դերի բարձրացում³⁹՝ պետական իշխանության կայացմանը գու-

զրմբաց, թե՞ դա կարող էր խորհրդանշել իշխանության անցում *արքայից* ոչ անմիջական գահաժառանգին, ինչի համար կարիք էր զգացվել շեշտելու իրադրյի արքայի կամքը (հմտ. քանաձևերի (*նա*) որդի-ինձ բազմ(ք)՝ կամեցալ՝ արտահայտությունը)։ չե՞ որ միայն մա կարող էր մարդան օժտել օրինական իշխանությամբ³¹։ Իսկ Արգիշտին, Ռոտայի որդին, գահաժառանգը չէր³²։ Փարատված չեն մաև Էրիժննայի՝ Ռոտայի հոր, իշխանության հետ կապված կասկածները³³։

LUGAL - արքա՞, թե ...

Ուրարտական սեպագիր արձանագրությունների մեզ հետաքրքրող շարքում, որոնց հիմնական մասը ընծայագրեր են՝ վերաբերելով և սլաշտամունքային շինությունների, և առանձին առարկաների, իրադրին հանդես է գալիս շումերագիր EN տիտղոսով։ Մասնագիտական հրատարակություններում այն աներկբա թարգմանվել է «տեր»՝ իմը ընդունելով մաև արդեն աքքադական դպրության մեջ EN գաղափարագրին հաճախ տրվող *bel(xm)*՝ «տեր» գոգահեռը³⁴։ Միւշդիտ, հայտնի են օրինակներ, երբ հինարևելյան սեպագիր դպրության տարբեր տեքստերում այդ մույն գաղափարագիրը, որի սկզբնական նշանակությունը, ի դեպ, ամենևին էլ «տեր»-ը չէ³⁵, կիրառվել է «արքա» նշանակությամբ³⁶։ Նույնը կարելի է ասել անգամ աքքադական դպրության համար. շատ տեքստերում այն սլաշագրված նշանակել է «արքա»³⁷։ EN գաղափարագրի ուրարտերեն հնչյունագրի՝ *eyri* բառի խաղրիկերեն գոգահեռն է *eyro-ն*³⁸, որը ևս ունի «արքա» նշանակությունը (*eyreno, eyerno*)³⁹։

Երե իրադրին, մեր կարծիքով, ընկալվել է որպես արքա և կոչվել «արքա», ապա ինչ է նշանակել ուրարտական տիրակալների տիտղոսաշարներում նշտգրված հանդես եկող LUGAL՝ «արքա» ընկալվող գաղափարագիրը։

Նախ հարկ է նշել, որ միջագետքյան դպրության մեջ «արքա» իմաստն արտահայտել է LUGAL շումերագիրը, որը, ի տարբերություն ուրարտական տիտղոսաշարերի LUGÁL-ի (վերջինս աքքադագիր է), ունի միանգամայն այլ գրություն⁴⁰։ Այս գաղափարագրին են հիմնականում դիմել միջագետքյան գրիչները «արքա» բառն արտահայտելիս։ Չմայած դուռն, սեպագիր տարբեր դպրություններում, առավել ևս՝ նորաարեստանյան, երկու գրեւածևելող փոխարինել են միմյանց ատանց որևէ օրինաչափության և հավասարագուր են։

Ի տարբերություն, օրինակ, ասորեստանցիների, որոնց տեքստերի քանաձևային կառուցվածքը տեսնում ենք ուրարտական արձանագրություններում⁴¹, վերջիններիս մոտ նկատվում է ինչ-որ օրինաչափություն։ Վիճագրերում և մասնավորապես՝ տիրակալների տիտղոսաշարերում, գրիչները կիրառել են բացառապես LUGAL գաղափարագիրը, սեպագիր ալյուսակներում՝ LUGAL-ը⁴²։

Միանգամայն հիմնազուրկ էլյնի ենթադրել, թե այս տարբերությունն ունի սոսկ գրաֆիկ (կամ պրակտիկ) նշանակություն. LUGÁL-ը գրադեցնում է շատ ավելի կարճ տարածություն և ունի պարզ գրեածն⁴⁷: Այդ դեպքում ինչ քաջատրություն տալ այն փաստին, որ, օրինակ, Քելչլինի երկկեզու կոթող-վիճագրի ասորեստանյան տարբերակում մշտապես կիրառվել է LUGAL գաղափարագիրը, որարտականում՝ քաջատապես LUGÁL-ը⁴⁸:

Արդյո՞ք դրանցում գրիչները դրել են ինչ-որ տարբերություն՝ կիրառելով մեկ ըստ այդմ: Գտնել որարտական պետության փաստացի առաջնորդը «արքա» էր ասորեստանյան տարբերակում՝ օտար ընկալման համար, և LUGÁL՝ ըստ իրենց պատկերացումների՝:

Իրոք, ինչու՞ տեքստերում օտար տեղակայվածքը կարող էին աշտա-հայտվել երկու գաղափարագրերով էլ (վաղագույն տեքստերում՝ քաջատապես LUGAL-ով)⁴⁹, մինչև որարտական արքաները, շատ հաճախ միևնույն տեքստում՝ միմխայն LUGÁL-ն⁴⁶: Այստեղ տեղին է մեջբերել Յ. Ֆրեդրիխի և Գ. Բալիանցյանի մտածեցումը: Անկախ ժամանակի հետվից երևացող խոցելի կողմերի, այն ինքնին հետաքրքիր է գլտմուկանները միանշանակ տարբերակում էին այդ գաղափարագրերը⁴⁷: Հիշենք մեկ հետազոտողներից Ի. Գյակոնովին, որը քննարկվող գաղափարագիրը, հակառակ իր սկզբնական մտածեցման, հետագայում մշտապես տատաղարձել է BUZÚR: Միզուցի մա ևս զգացել է ինչ-որ տարբերություն, չնայած դա չի նկատվում հրատարակություններում. մրա համար գաղափարագիրը ևս «արքա» է⁴⁸: Իսկ BUZÚR-ը, այնուամենայնիվ, բժում է ավելի տեղին. սկզբնապես նշանակելով «պահպանություն» (արք. քաշու), այն հետագայում է նույնացվել «արքա» գաղափարին, որպես «պահնապան» (քաշու = MAN)⁴⁹: Ըստ էության գործ ունենք գաղափարագրի հենց այս ընկալման հետ, ինչը միաժամանակ տեսնում ենք որարտական տեքստերում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Ռուսա Սարգուրոյալ Մովանայի երկկեզու կոթող-վիճագրին, որի ասորեստանյան տարբերակում կարդում ենք.

[x] ana-ku DÚG.GA šá ana UGU-ia i-[re?-š] [x] x ki-li-š na-šir e-q[u-ti]

*Ես սրանչեի հավիմն են ինձ վտտահվածի, պահսարանը ժառանգարյան*⁵⁰:

Որարտական այլ տեքստերում երբևէ չհանդիպող այս միտքը բավական խոսում է՝ կարծես մատնանշելով «հովվի» զորժառույթը՝ մա տեքստի փաստացի առաջնորդն էր, մրան էր աստված-արքան վտտահի պետությունը, որի համար և պատասխանատու էր:

Հետևաբար, որքանով է նպատակահարմար գաղափարագրի «արքա» ընկալումը, եթե որարտացիներն իրենք որպես այդպիսին կարծես թե չեն դիտել այն: Որարտական *արքաների* տիտղոսաշարերի LUGÁL.

գաղափարագիրը (քայքայող է նաև հայերեն LUGÁL-ը) ըստ էության նշանակել է ոչ թե «արքա»՝ իր դասական իմաստով, այլ «(գերագույն) քուրմ», «քրմապետ-արքա» կամ պարզապես «մովվապետ»:

Ուրարտուի հովվապետները

Մասնագիտական գրականության մեջ ուշադրության է արժանացել այն փաստը, որ ըստ արքայաբանների *արքամ* էր հաստատում ծիսական կարգադրագրերը: Դրանցում նշվում էր աստվածություններին մատուցվելիք պաշտոնի կարգը՝ զոհաբերվող կենդանիների կոնկրետ թվաքանակներով, մի գործառույթ, որը, թվում է, պետք է իրականացներ գլխավոր քուրմը⁵¹: Նման տեքստեր ունեն ուրարտական գրեթե բոլոր *արքամնոր*՝ սկսած Իչալուինի Սաբուրբարդուց մինչև Ռուսա էրինեմայորդի⁵²:

Ռացի այդ, առկա են տեքստեր, որոնք ևս վկայում են հոգևոր կյանքում *արքամների* ունեցած էական դերակատարման մասին. նրանք անմիջական մասնակիցն էին աստվածներին մատուցվող պաշտոնի՝ մասնավորապես կատարելով զոհաբերություններ: Դրա համար զոհաբերված կենդանու որոշ օրգաններ տրվում էր նրանց⁵³:

Ի դեպ, ուրարտական մի քանի արձանագրություններում (մասնավորապես՝ Ռուսա Արգիշտոսյու տեքստերում) խոսվում է զոհաբերության կարգի մասին, որի դրույթներից մեկն էլ վերաբերում է զոհաբերված կենդանիների մեղիքը (barzani) և լյարդը (կամ, ընդհանրապես, փորտին՝ հմմտ. zieldi⁵⁴)՝ արքային մատուցելուն, երբ վերջինս ժամանի տվյալ քաղաք:

(graf.) a-li ur-bu-a-si 4Hal-di-na-ni KÁ ša-i-ni-ni zi-el-di ŠA 5Ru-sa-a ar-
du-li-ni a-še LUGÁL-ni 6IM-ni URU ma-zu-li kam-ni-ni TAG-ši-ni-ni bar-
za-ni zi-el-di LUGÁL-e ar-du-li-ni a-li-e a-šá-ni 7Hal-di-ni É

(ինչ վերաբերում է) այն զոհաբերությանը (որը տուցվում է) իսրայելյան դարպասից, ամբողջից լյարդն ու սիրտը Ռուսային բող-տրվի, (իսկ) երբ արքան Թեյեբայի(նի) քաղաքը ժամանի, նշված⁵⁵ զոհաբերության մեղիքն ու լյարդը արքային բող տրվի, մնացյալը (քատացի)՝ այն, ինչ կմնա՝ իսրայելյան տանը...

Մասնագիտական երաստարակություններում արտահայտված կարծիքների համաձայն խոսքը միանշանակ վերաբերում է ուրարտական *արքայի* այցելության հետ կապված արարողություններին: Այստեղ, սակայն, հստակ գծագրվում են դրույթի երկու կողմ: Դրանցից մեկը վերաբերում է իրեն՝ Ռուսային հասանելիք մասնաբաժնին, իսկ երկրորդը՝ արքային և իսրայելի տանը, որին վերաբերում էր արդեն ողջ զոհաբերությունը: Եթե Ռուսային նույնացնենք տեքստի հիշատակած արքայի հետ, ապա այս դեպքում ստիպված ենք լինելու բացատրել որոշ անհարթություններ, ներառյալ նաև մասնաճանաչների տարբերությունը. մի դեպքում տրվում էր կենդանու լյարդը և սիրտը (zieldi, ŠA¹²⁰¹ ušni/s), մյուս

դեպքում՝ մտղիցն ու Կարդը (barzani zieldi): Բացի այդ, Ուրարտուն
երբևէ չէր կարող *այդպիսի* նասնել ավելին, քան իրազի աստծուն կամ
նրա տանը, եթե անգամ առաջինին դիտենք որպես գերագույն քար:
Հակասություն, որն ինքնընդունելի վերանում է իրազիին որպես այդս
ընկալելիս: Ի դեպ, այս միտքն է նույնում մահ «արքա» գաղտնաբանության
հաջորդյալ «իրազիի տուն» հասկացությունը, այսինքն, կարծում ենք՝
երկրորդ դրույթն ամբողջությամբ վերաբերել է իրազիին և նրա «տանը»,
այն դեպքի համար, երբ մա քաղաք այցելի:

Այստեղ, ինչպես երևում է, պարզապես գործ ունենք հիմարեկյան
պատկերացումներից ևս մեկի հետ, երբ երկրում ճանապարհորդում էին
աստվածները: Այսինքն, աստծո արձանը (կամ նրա խորհրդանիշը, աս-
սենք՝ որևէ գինատեսակ) նախապես թափոխի ուղեկցությանը (որը հա-
ճախ գլխավորում էին երկրի առաջնորդները), տարվում էր քաղաքից
քաղաք, յուրաքանչյուր քննակալաբար կատարելով որոշակի ծխակա-
տարություններ՝ ի մշամավորումն աստծո այցելության: Պաշտոնի այս
ձևը հայտնի էր և միջագետքյան, և փոքրասիական աշխարհներում
(մասնավորապես՝ խեթական)⁶⁶, հետագա դրսևորում առանալով մահ
քրիստոնեության մեջ (ընդունվում է, առավելապես, արևմտյան տիեզե-
րական եկեղեցա կողմից):

Այս առումով հետաքրքրական է Թուրքաք-քաղեից գտնված ալյու-
սակներից մեկի տեղեկությանը, որը մեկնաբանվել է կապված իրազի
աստծուն Ռուսախիմիլի Քիլբանիկայի փոխադրելու հետ (եթե ընդու-
մենք տրված մեկնությունը)⁶⁷: Տեքստից, բնև դժվար է միանշանակ եզ-
րակացնել՝ արդյոք խաբը վերաբերում է կրոնական աղարարության՝
աստծո ուղեկցությանը դեպի Ռուսախիմիլի⁶⁸, ինչի հնարավորության
մասին արտահայտվեց վերը, բե ընդհանրապես՝ Ռուսախիմիլի Քիլբա-
նիկային՝ Ուրարտուի նոր մայրաքաղաքը, մահ իրազի աստծո պաշտա-
մունքի գլխավոր կենտրոն հաստատելուն, ինչը կարող էր կապ ունենալ
Մուծածիլի կոթողյան հետ:

Տեքստային վկայություններ

Ուրարտական արձանագրություններում ևս կարելի է գտնել հե-
տաքրքիլ վկայություններ: Դրանք գերազանցապես շինարարա-
կան/կաշտամունքային բնույթի տեքստեր են՝ չորս հիմնական վկայու-
թյուններով:

ա) Ժամանակագրորեն հնագույն վկայությունը, որը կարող ենք մշի
վստահությանը, պատկանում է Մեմուայի միամեծյա կատակաբան
տալիմներին: Կողբանցից գտնված այդ տեքստում, մասնավորապես,
ասվում է.

(graf.) ⁴hal-di-i ku-r[u-ni] ⁴DINGIR^{MS}-na ku-ru-ni ma-ni-ni iš-ti-n[
"me]-nu-u-a ar-di-še šu-i-ni-ni bar-za-ni zi-cl-[di "me]-nu-a ⁴hal-di-
še ó-šu-ni

*Խաղի (աստծո) կողմից⁷, աստվածների կողմից⁷ բոլ լիմի Մենուա-
յին հրաման, ամբողջից մտելիցն (ու) լյարդը Մենուային Խաղին
հատկացրեց⁸⁸:*

Տեքստն ինքնին առանձնանում է նյանով, որ այստեղ Խաղին հան-
դես է գալիս որպես գործող անձ, ընդ որում՝ որպես գերագույն իշխանա-
վոր, որը կարող էր Մենուային (իսկ նա տեղության փաստացի առաջ-
նորյն էր) տալ հրաման, ինչպես նաև նրա համար սահմանել մասնաբա-
ժին: Մի քանաձև, որով, գուցե, իրավական հենք էր ստանում նաև տե-
ղության հովվապետներին ըստ պատկերացումների արքայի կողմից
տրվող մասնամուժ, իերևո՝ մասնաբաժին կանոնավոր զոհաբերու-
թյուններից (տարբերից⁷), մի դրույթ, որը գործելու էր *սայաունեսա*⁸¹:

p) (graf.) i-š LUGÁL-nu-a-di [a?-l]-e-me ⁴[hal]-di-še a-ru-ni ó-i(-)al-di-
ni-e VII LIM [V₁] [ME] LX VI ^{MS}[p]a-hi-mi^{MS} L LIM L LIM VIII ME LXX
VIII UDU^{MS} ⁴ar-gi-[iš]-[l]-še a-li-e i-na-ni MU.MU ó-i-ja-bi

*կյր ես սարքաս դարձա⁷, (սես այն) ողբ-ինձ Խաղին տվեց այ-
լալձե - 7566 (զլուխ) խաչար եղբերավոր անասուն, 51878 (զլուխ) մանր
եղբերավոր անասուն: Արգիշտին ասում է - սա տարեկան (նա) սլեծ⁸:*

Տեքստի քարզմանությունը վերջնական չէ. կարելի է շարունակել
քննարկումը կամ միանալ արդեն իսկ առաջարկված այս կամ այն քն-
նիչներին: Չխորանալով մանրամասների մեջ, այստեղ միայն սահմա-
նափակվենք նշելով, որ հատվածն ամբողջության մեջ շատ է հիշեցնում
Մենուայի վերոնշյալ տեքստը. սա ևս կարելի է մեկնաբանել կապված
Խաղիի՝ այս անգամ Արգիշտինն տված հարստության հետ՝ մեծաբա-
նակ քնտանի կենդանիներ, որպես անհնամյա մասնամուժ կամ պարզև
լյուրատեսակ «ծառայության վարձ»⁷): Տեքստի մասին կարելի է ասել
նույնը, ինչ Մենուայի վրձագրի՝ քննարկված հատվածի մասին:

զ) Կարևոր վկայություններից են նաև ուրարտական մի քանի արձա-
նագրությունների այն դրվագները, որոնցում նշվում է «Սաղյան դոան»
կողմից տրված հրամանի մասին: Ահա դրանցից մեկը.

(graf.) ⁴ru-sa-a-še a-li ⁴hal-di-na-ni KÁ bi-di-ni gu-ni ar-di-še gu-ni ar-qa-
ó-še ma-nu-li qu-du-la-ni šu-hi-na-ši-e MÁŠ.TUR ⁴hal-di-e ni-ip-si-du-li-ni
GUD 2 UDU ⁴hal-di-e TAG...

*Ոստան ասում է - Խաղյան դոան կողմից իրապեմ⁷ հրաման, իրա-
պեմ⁷ արզաճե (որը) լիմի, (տաճարային) մտրակատույց համայնից (կա-
պակցությանը) (մեկ) ու Խաղինն բոլ-աղջակեղզվի, (մեկ) ցուլ (և) երկու
նշխար Խաղի (աստծուն) բոլ-մատուցվի... (հաջորդում է այլ աստվա-
ծությունների քվարկումը)⁸²:*

Տեքստից է պարզ դառնում, որ ձևակերպումներում հրաման(ներ)ը գալիս էր խաղչյան դռնից, այսինքն՝ «արքունիքից», այբաբան՝ Ռոտային, փաստորեն վերաբերված էր միայն հրամանի փոխանցումն ու իրագործումը:

Այս դրույքը կարող ենք ենթադրել Ռոտա II-ի հեղինակած առնվազն երեք այլ տեքստերում: Դրանց պահպանված հատվածներն Այսանի *susi-տաճարի* արձանագրության հետ, որից արվել է մեջբերումը, ունեն բազում ընդհանրություններ, ինչը մղում է ենթադրելու, որ դրանք կրկնազգեստ են⁶⁷:

դ) Այս շարքը եզրափակենք Թաիրաք-քաղից գտնված և մեր կողմից արդեն իսկ հիշված տեքստով.

(graf.) a-še LUGAL-ni Կhal-di-ni a-tu-me Դu-sa-a-ji-na ^{KL}qi-il-be-ni-ka ... երբ արքա Խաղչին բողոքեց-մեզ՝ Ռոտայինիցի Զիրամիկայի (քաղաքում)⁶⁸:

Տեքստն ինքնին խոսում է նրանով, որ խաղչին սողակի անվանվել է «արքա»՝ արքա Խաղչի (LUGAL-ni Կhal-di-ni): Այստեղ, ամեն դեպքում, չենք կարող չիլչիլ մասնագիտական գրականության մեջ առկա տարակարծությունները և տեքստի ընկալման, և տողաբաժանման հետ կապված⁶⁹:

Գուշակություն

Կարիք չկա մանրամասնել այն հսկայական նշանակությունն ու դերը, որ ունեք գուշակությունը հինարևելյան իտալականություններում՝ և մաթրիկանց կյանքում, և պետության համար⁶⁶: Բացառություն չէր նաև Ուրարտուն: Այստեղ, ընդհանրապես, մենք չատ ավելի վստահությանը կարող ենք խոսել առնվազն արքունիքում, ինչպես և երկրի քաղաքական/ուզեղ կենտրոններում գործող պատգամախոսաբանների կամ պատգամախոսի ինստիտուտի գոյության մասին: Ուրարտական իշխանության աստվածապետական կառուցվածքը ինքնին ենթադրում էր նման ինստիտուտի գոյություն. անհրաժեշտ էր ունենալ միջնորդ մի օղակ՝ աստված-արքայի (և մնացյալ աստվածների) ու մարդկանց միջև: Այս ինտրավերության մասին է ակնարկվում նաև «Լուվրի աղյուսակում, Մուծածիքից տարված արժեքները թվարկելիս.

I tim-bo-ut-te GUSKIN Ֆa a-na šul-lu-am par-ši Ֆa ԿBa-ag-bar-ti al-ti ԿHal-di-a šu-tam-lu-ú ni-siq-ti NA₄MES⁵...

*կնիքով ոսկե մեկ մատանի՝ հաստատելու համար որդյունները Բագարբուի (Բագմաշբուի)՝ Խաղչիի կնոջ...*⁶⁷:

Ասորեստանյան արքյուրի այս տեղեկությունը համարվել է վկայությունը զոհն Մուծածիքում, Խաղչի աստծու տաճարում կատարվող գուշակության մասին. աստվածների կամքը, ինչպես ենթադրվում է, հայտնել է Վարսթանի աստվածուհին⁶⁸:

¹⁶A.NIN-ի՝ քուրմ-պատգամախոս (՝)

Նոսելով պատգամախոսի ինստիտուտի մասին, որի գոյությունը Ռուսաստանում հազիվ թե մեծ կանկաձեճեր առաջացնի, ինքնընտանեկան հարց կատարման ուրարտական տեքստերում այս կարևոր գործառույթն արտահայտող որևէ տեքստին կամ գաղափարագիր համագործի առկայության հնարավորության վերաբերյալ, հարց, որին կարող է տրվել դրական պատասխան: Նոսքը վերաբերում է ուրարտական արխիվի մի քանի տեքստերում և կնքադրոշմներում հիշվող գաղափարագրերի ¹⁶A.NIN(-li/LI ?) կոմբինացիային:

Կարմիր-բլուրի սևագիրը աղյուսակների հրատարակությանը շրջանառության մեջ դրված այս կոմբինացիան, որն անհայտ էր սեպագիր այլ դպրություններին, բազմամակն է «տիրուհու/թագուհու որդի», «օրինական թագաժառանգ» իմաստներով¹⁶: Հետազոտողներն էլ առաջնորդվել են լատ այդմ¹⁷: Մրայն Փ. Ջիմանսկին է հնարավոր համարել նրանում տեսնել այլ իմաստ և բովանդակություն¹⁷: Տարիներ անց Ռ. Հելվազն առաջարկեց կոմբինացիան ընթերցել ¹⁶A.ZUM-ի տառերակով, որպես մի պաշտոն, որի իրավասության մեքք էր ենթադրվում զբաղաչման գործը: Այսպեսով, կոմբինացիան մա ընկալում էր որպես «զրաչին տնտեսության մախարաթ»¹⁷: Մ. Սալվինին, ելնելով Ռուսսինի-Նիկի Լուդոլուկայի (Այանիս) կնքադրոշմների պահպանված տեքստերից, ընդհանրապես հրաժարվեց սեպախմբերին վերագրվող գաղափարագիր նշանակություններից, նրանցում տեսնելով վանկագրեր և, լատ այդմ, ինչ-որ մի պաշտոն՝ ¹⁶ս-սա-նի¹⁸: Այստեղ հարկ է նշել, որ որպես հիմք ընդունված եզակի կնքադրոշմն իրոք պատկերում է NIN գաղափարագրին նմանվող -սա- սեպախմբը¹⁸, սակայն դա, զոնե մեզ համար, չի կարող հիմք հանդիսանալ հրաժարվելու մախսկին ընթերցումներից: Կարմիր-բլուրի և Ռասսամի կնքադրոշմները չեն ենթադրում նման հնարավորություն: Նրանցում գաղափարագիրը շատ դնպերում ընթերցվում է փտախությանը¹⁹: Ըստ այդմ, Այանիսի վերոհիշյալ օրինակի պաշագայում երե գործ յունենք տեխնիկական խտտաձի նետ, ապա չպետք է բացատնեք երկու հասկացությունների զուգահեռ գոյության հնարավորությունը: Ի դեպ, Այանիսի և ոչ մի կնքադրոշմում, մերտայա և քմնարկված օրինակը, չի հիշվում նման տեքստերում ակնկալվող որևէ արքայաանուն:

Ուրարտական սեպագիր նյութը բույլ է տալիս NIN գաղափարագրին վերագրելու «աստվածուհի» իմաստը¹⁹, իսկ աստվածների կամքը կարող էր նայտնել, ինչպես նշվեց վերը, Վարուբանին՝ գերագույնը աստվածուհիների մեջ: Ըստ այդմ, կոմբինացիան, որի բառացի նշանակությունը կլինի «զրաչին աստվածուհու» իմաստը, կարելի է ընկալել որպես «անձ, որը մոտ է կանգնած աստվածուհուն», այսինքն՝ նրա ներկայացուցիչ,

ապասավոր, քոքո՞՞: Այստեղ տեղին է ինչեւ Այանիսից գտնված մասնա-
րեկորներից մեկի II BU LIŠ (?) LÚ ⁴a-ru-ba. նրկտ Հայտնա(մի)
(աստվածուհու) մարդ(ուն կանց) արտահայտությամբ, որը կարող էր վե-
րաբերել կամ աստվածուհուն ապաստելու քրմությանը, կամ նրա տա-
ճարի տնտեսական անձնակազմին⁷⁷:

Այսու կողմից, միջագետքյան դպրության մեջ այս գաղափարագիրն
ունեցել է նաև (քարձրաստիճան) քրմուհի նշանակությամբ՝ NIN,
NIN.DINGIR = Յո(e)ս(տ)⁷⁸: Այս դեպքում, գոցն և յրացտոննր քրմուհու
(ոպդ) քնթեքումը, դրա տակ ենթադրելով նույն տիրուհուն, ավելի ճիշտ՝
(ճայր) բազմուհու⁷⁹: Հայտնի է, որ նա ունեւ կարևոր դերակատարում
հիմարելեյան որոշ հասարակություններում, առավել ևս՝ խեթական⁸¹:

Այսպիսով, ենարավոր ենք համարում այս գաղափարագրով իսնդես
եկող անձանց, որանց պատկանելությունը արքայական ընտանիքին են-
թադրվում է նրանց անուններից, համարելու քարձրաստիճան քրմեր, ո-
րանք իրավասու էին հաստատել հրամանները՝ աստվածների կամքն ի-
մանալուց հետո: Ավելի շուտ պետք է ենթադրել այս իրավասության հա-
մատեղում իշխանական հիմնական գործառույթների հետ⁸². այսինքն,
տեքության առաջնորդը իսնդես էր գալիս միաժամանակ որպես գլխա-
վոր պատգամախոս, իրականացնելով, միգուցն, արքայի՝ Խաղի ասո-
ծո խորհրդականի դերը. նա էր կազմում իարքումների տեքստերը, դրա-
նով իսկ, փաստորեն, տալով հրամաններ⁸³:

Կարծում ենք, այս կրևույթն է պետագուլիկ ուրարտական արխիվի
պահպանված ճամակներում: Ընդ որում, դրանցում խոսակ տարբերակ-
վում են կրևու բանաձևեր⁸⁴, որի բացատրությունը, կարծում ենք,
հետևյալն է: Երբ քրմապետն էր կատարում գուշակությունը (նման բո-
փանդակությամբ տեքստեր, ցավոք, մեզ չեն հասել), գուշակության արդ-
յունքն արտահայտվում էր *տարքան ասամ է - հայտնիք PN-ին կրմանը*
(հետևում է բովանդակությունը)՝ բանաձևով (LUGAL-Յե: ali: tie PN,
PN₁(-di) haše)⁸⁵, փաստորեն, արքայի՝ Խաղի ասոծո խոսքն ուղղված
էր գուշակություն կատարողին, որը հայտնելու էր այն հասցեստիտուցը,
իսնդես գալով որպես միջնորդ: Այլ դեպքերում (լե՞նը կազմում է մեծա-
ճանություն), երբ գուշակությունն իրականացնում էին այլ անձինք՝
PN₁-ը խոսք ուղարկեց, - հայտնիք PN₂ PN₁-ին բանաձևով (PN₁-Յե haše
šiani ti(e) PN₂ PN₁)⁸⁶: Այս դեպքում հիշվում էր կոնկրետ պատգամախոսի
անունը (⁸⁷Zua, ⁸⁸Šeini, ⁸⁹Մաճն/րի-ա ևն), որի գուշակությունը հաստատ-
վում էր գլխավոր քրմի կողմից կամ պարզապես նրա կնիքով՝ այսպիսով,
փաստելով հրամանի օրինականությունը, արքան էր այդպես կամենում:

Այս նկարավորությամբ ենք բացատրում այն անձնանունների առ-
կայությունը, որոնք հաստատապես չեն պատկանել տիրող ընտանիքին
(քայց կարող էին տալ/փոխանցել «խոսք(եր)», քառացի՝ «ծրաման(ներ)»

հասե) և ոչ էլ անգամ հիշվում են որևէ մասնագիտության կամ պաշտոնի հետ կապված: Մյուս կողմից, իրավական դաշտում լրիվ վերանում են այլ մեկնարանությունների դեպքում առաջանալիք հակասությունները⁸⁷:

Այս կառուցվածքը, որը ենթադրում է մաս պատգամախոսների (քրոնի) որոշակի աստիճանակարգ, հետագայում, կարծես, մաս կազմելով որարտական պաշտոնեությունը⁸⁸, միգրաց և ոչ նորամուծություն է, եթե նկատի ունենանք, որ վաղագույն դրոշմները, որոնցում առկա է գաղափարագրերի քննարկվող կոմբինացիան, վերաբերում են ոչ ոչ քան Ռուսա Մարտիրոսի (Ռուսա Ռ) ժամանակներին⁸⁹: Այս հարցի շուրջ, սակայն, դեռ վաղ է անել եզրակացություններ⁹⁰:

Վերջաբան

Այսպիսով, ի մի բերելով ասվածը, կախող ենք նշել, որարտական տեղության իշխանական համակարգը էապես տարբերվել է ժամանակաշրջանի իր գուգահեռներից: Նրանում տեսանելի են բազում առանձնահատկություններ, որոնք հիշեցնում են արխաիզմ կամ կարելի է բնութագրել որպես «պահպանողական»: Համակարգում առանձնանում է որարտական դիցարանի գերագույն աստվածը: Ըստ ընկալումների, տեղության միակ առաջնորդը, մաս աշխարհիկ դաշտում, համարվել է Նուրիին՝ արքան, և աստվածը. ինչպես «Լուսիկի ալյուսակն» է փաստում՝ *...աղ Ուրարտում ավելի մեծը չկար քան նա՝ Նրկնքում և Նրկյում...*⁹¹:

YERVAND GREKYAN

ON THE FEATURES OF THE URARTIAN THEOCRACY: THE "KINGS" OF URARTU (PRELIMINARY STUDY)

In the scientific literature it was long since noticed the possible theocratic character of the Urartian State. The offered paper is a preliminary promulgation of the author's reflections, a discussion about one of the individual points of the Urartian theocracy. In this system, the supreme God of the state pantheon - the God Haldi was perceived also as Leader of the Secular life, as a King. The "kings" of Urartu known from the cuneiform sources were, first of all, worshippers of Haldi, supreme priests, king's servants and keepers of Haldi's State. Their "Royal" power was a service, they came on the "paternal place" (throne) to serve the King. The fidelity to the King Haldi is seen everywhere both in the cuneiform texts, and in the iconography or, in general, in their activities. Urartians obliged the local population the cult of Haldi - as their God, and the Power of Haldi - as their King. From this point the "Gate(s) of Haldi", besides its cultic significance, could also show the existence of Haldi's (Urartians') political power in different "lands" or in newly founded cities thus marking the borders of Urartu proper. It is also suggested to consider the bulk of the Urartian clay tablets as final documents of the omen texts - in the form of "royal orders". In this

case the combination of logograms ¹⁰A.NIN(LI?) of the seal inscriptions, which appear also in the abovementioned tablets, could have belonged to supreme priests – “Kings” of Urartu.

ՕՍԿՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս աստված կարելի է ասանձնագրել րազմարիկ հնաագրողների (И. Мещанинов, *Древнеармянский бог Халд-Халдуя*, “Восточные записки”, 1, Ленинград, 1927: 173-181; M. Riemschneider, *Die urartäischen Gottheiten*, “Orientalia”, vol. 32, fasc. 2, 1963: 148-169; idem., *Das Reich am Ararat*, Leipzig-Heidelberg, 1966; L. Bizrov, *Über die Natur des Gottes Haldi und der Göttin Arubani-Bagbarni*, *Oikumene*, 2, 1978: 149-152; A.O. Tazyürek, *Darstellungen des urartäischen Gottes Haldi*, in: “Studien zur Religion und Kultur Kleinasien: Festschrift für Friedrich Karl Dörner”, Leiden, 1978: 940-955; И.М. Дьяконов, *К вопросу о символе Халду*, “Древний Восток”, 4, 1983: 190-194; P. Calmeyer, *Zu den Eisen-Lanzenspitzen und der Lanze des Haldi*, in W. Kleiss (Hrsg.), “Bastam I. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1972-1975”, Berlin, 1979: 183-193; M. Salvini, *Le panthéon de l'Urartu et le fondement de l'état*, *Studi epigrafici e linguistici sul Vicino Oriente antico*, 6, 1989: 79-89; Ա. Համալեյան, *Ուրարտական Ասորի և Արարտան աստվածությունների մասին*, ՊԵՀ, քիվ 2, 1982: 127-139; Մույնի՝ *Հանրապետության Գեղարվեստի կոմիտեի հրատարակած*, Երևան, 1990: 33-38; Ch. Burney, *The God Haldi and the Urartian State*, in Mellink M.J., Porada E., *Özgeç T* (eds.), “Aspects of Art and Iconography: Anzolia and its Neighbors, Studies in Honor of Nimet Özgeç”, Ankara, 1993: 107-110; A.M. Dinçol, T. Kutlu, *Kurze notiz über die Bedeutung des Götternamens Haldi*, “Anadolu Araştırmaları”, XIV, 1996: 213-216; Ա. Մովսիսյան, *Ասորի դիցանկան պոռթրայան, նշանաբանայան և խորհրդայան ծրարիկի շարք*, «Հայկական քաղաքակրթությունից հնագույն մասնաճյուղից մինչև քրիստոնեության ընդունումը», Երևան, 2000: 33-35; А. Петросян, *Армянский эпос и мифология. Истоки, миф и история*, Ерewan, 2002: 98сл.; Մույնի՝ *Армянский Мзур, западный Митро и восточный Халду*, «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը», Երևան, 2004: 42-60; և այլը՝ այմսիրելիք նրանց աշխատանքը:
2. Այս կողմի ջատագովն էր Մարգրեր Բիժնայիերը՝ մեծապես հիմնելով իրանական դիցարանական պատկերացումների վրա (M. Riemschneider, *Die urartäischen Gottheiten*, 148ff.; idem., *Urartäische Bauten in den Königsinschriften*, “Orientalia”, vol. 34, fasc. 3, 1965, 325f.; ևճ):
3. W. Mayer, *Sargans Feldzug gegen Urartu-714 v.Chr.: Text and Übersetzung*, MDOG, Heft 115, 1983: 65-132 (այսինքն՝ ԼԱ), սող 386-391:
4. Ştu O.A. Tazyürek, *Adana bölge mitresindeki Urartu kazıları*, Adana, 1975: Fig. 4 (Res. 21); H.-J. Kellner, *Gürtelbleche aus Urartu*, PBF, XII/3, Stuttgart, 1991: Taf. 60-61 (Nu. 237); ևճ:
5. Այս մասին կարելի է դասել Էրերունիի որմնակարգներից, որոնց շարքում ասանձնամում է արքայի որսի տեսարանը (Վ. Հովհաննիսյան, *Էրերունիի որմնակարգները*, Երևան, 1973: 20-23): Միայն այն փաստը, որ

մարտակառք վարող անձն իրոք արքան է, ընդ որում՝ ոչ մահկանացու, կարելի է եզրակացնել նրա և նույն դրվագում պատկերված նետածիզ որսորդի ֆիգուրներից: Վերջինս իր շափերով քառակի զփշում է արքային: Համադրելով այս փաստը ուրարտական պատկերագրության այլ նմուշների հետ, որոնք պատկերում են աստվածների և մարդկանց (դրանցում նույնպես նկատել է նման նախաձևություն, տես С.А. Есаих, *Искусство парфянского искусства Урарту*, МЛС, рիվ 3, 1982: 185), միանշանակ կարելի է այստեղ նշել աստծո՝ Խաղդի ներկայության մասին:

6. O. Belli, *The Anzof Fortresses and the Gods of Urartu*, Istanbul, 1999: 37ff. Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Անզաֆից գտնված վանանի րեկորին՝ մի կողմից տերության աստվածների և ուրարտական քանակի, մյուս կողմից՝ ասորեստանյան զորքերի ճակատամարտի դրվագով: Այստեղ հետաքրքիր է, որ, ի տարբերություն մյուս աստվածների, Խաղդին պատկերված է հետծոտն, թեև՝ միանգամայն աստվածային (նրա մարմնից ճառագայթում են քոջի լիզվակներ): Այս տաքսոնությունը կարող է միանշանակ վկայել, որ ուրարտացիների պատկերացումներում նա իրապես կռվել է երկրում: Կա նաև մեկ այլ հետաքրքրական վկայություն: Գլխավոր պատկերված են ասորեստանցիներին հետապնդող և հոշատող կենդանիներ (առյուծ և աքծիվ), որոնք առնչվում են Խաղդին, իսկ երբեմն՝ նաև խորհրդանշում, առաջինը իմաստավորում էր Խաղդի իշխանությունը երկրի վրա, իսկ երկրորդը՝ երկնքում (Ս. Հմայակյան, *Հանր յոսպպոտրյան պետական կրոնը*, էջ 107, ծմբ. 29): Հետևաբար, Խաղդին միաժամանակ պատերազմում էր և երկրում, և երկնքում: Այս մասին են նշում նաև անպազիր տեքստերը, ուրարտական քանակում նրա «ներկայության» վկայություններ կարելի է գտնել հնագիտական նմուշներում:

7. K.F. Kravtitz, *A Last-Minute Revision to Sargon's Letter to the God*, JNES, vol. 62, No. 2, 2003: 87 and nt. 28.

8. Այս մասին առաջինը նշել է Քրավիցը: Տես K.F. Kravtitz, նշվ. աշխ., էջ 87-88:

9. ԼԱ, տողեր 347b-348a.

10. ԼԱ, տող 368f.

11. Առավել մանրամասն տես P. Gerelli, *L'état et la légitimité royale sous l'empire assyrien*, in: A. Invernizzi, G. Pettinato (eds.), "Power and Propaganda", Mesopotamia 7, Copenhagen, 1979: 319-328; J. Pečirková, *The Development of the Assyrian State*, in: H. Klengel (Hrsg.), "Gesellschaft und Kultur im alten Vorderasien", Berlin, 1982: 208f.; idem., *The Character of Political Power in Assyria*, in: "Sulmu 3", Prague, 1986: 243-255; A.K. Grayson, *Assyrian Civilization*: 1. The Monarchy, in: "Cambridge Ancient History", 3/2, 1991: 194-199; idem. *The Struggle for Power in Assyria: Challenge to Absolute Monarchy in the Ninth and Eighth Centuries B.C.*, in: K. Watanabe, "Priests and Officials in the Ancient Near East", Heidelberg, 1999: 253-270; և այլուր:

12. Գ. Ղափանցյան, *Ուրարտուցի պատմությունը*, Յերիվան, 1940: 114:

13. Ch. Burney, նշվ. աշխ., էջ 107.

14. C.F. Lehmann-Haupt, *Chaldische Forschungen, I. Der Name "Chalder"*, VBGÄ, 1885: 578 (ըստ Б.Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959: 117, прим. 30), *ibid.*, *Corpus Inscriptionum Chaldaicarum*, I-II, Berlin und Leipzig,

- 1928, 1935; И.И. Мещанинов, *Халдоведение*, Баку, 1927; F.W. König, *Handbuch der chaldäischen Inschriften I-II* (AfO, Beiheft 8.1/2, 1955-1957, Graz); Ռեալիզմն՝ «Նաշի՞ր զազակներ» (A. Sayce, *The Cuneiform Inscriptions of Van*, JRS, 14, 1882: 434, 505 lü; M. Chahin, *The Kingdom of Armenia*, London – New York – Sydney, 1987: 33); Քեմարիանների համար տես J. Friedrich, *Chalder oder Urartier?*, ZDMG, Bd. 90, Heft 1, Leipzig, 1936: 60-82; Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 16-17; Ե.Ե. Пигоровский, նշվ. աշխ., էջ 117-121; И.М. Дьяконов, *Заметки по урартской эпиграфике II*, ЗВ, № 6, 1952: 111-112; A. Geotze, *Kulturgeschichte des Alten Orients. Kleinasien*, München, 1957: 191, Anm. 6; M. Chahin, *Some Legendary Kings of Armenia*, J. Soc. For Armenian Studies, 1, 1984: 53f.; А. Петросян, *Армянский эпос и мифология*, с. 196; Լույսի՝ *Армянский Мзэр, западный Митра и урартский Халду*, с. 49, 52-53:
15. Փ. Тер-Мартirosos, *Изобразительное искусство и письменность Урарту как источник по государственному устройству*, «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հիմնադրյունները», Զննարկումների թագիր, Երևան, 2003: 225-226.
16. Ե.Հ. Գրեկյան, *Գայմերի քարտեզի արձանագրությունը*, ՊՌՀ, թիվ 1, 2004, էջ 231:
17. Г.А. Меликшвили, *Урартские клинообразные надписи* (այսինքն՝ УКН), Москва, 1960: 127, столбец II: 3; հմտ. Н.В. Арутюнян, *Корпус урартских клинообразных надписей* (այսինքն՝ КУКН), Ереван, 2001: 173, столбец II: 3; և այլուր:
18. ԼԱ, սող 339-342: Այս մասին մանրամասն տես Է.Ն. Ռիչարդ, *Ուրարտական պարաների քաղաքում պարտություն մասին*, Աշխատություններ ՀՊՆԹ, թիվ 7, Երևան, 1981: 24-30; Ս.Գ. Հմայսկյան, *Վանի քաղաքության պետական կրոնը*, էջ 75-76:
19. Բուշատություն են կազմում, առայժմ հայտնի տվյալներով, Արգիշտի Ռեսայրթը (ուրերես մակ այս Ռեսայի՝ Ռուսա Սարգուրթը, ըստ ասորեստանյան արձույթների) և Ռուսա Էրիմնայրթը երեք արձանագրությունների (КУКН 406: 17-30, 407: 14-23; M. Salvini, SMEA, 44/1, 2002: 117, 4-12), որոնց մասին տես տեքստը:
20. Հղումների համար տես Н.В. Арутюнян, КУКН, с. 420, 449; M. Salvini, *Ayanis I*, p. 254 (Ay-sai, Section I: 4-5).
21. ԼԱ, սող 338:
22. A. Geotze, նշվ. աշխ., էջ 195; M. Taner Turhan, *The Structure of the Urartian State*, "Anadolu Araştırmaları", IX, 1983: 300; Ս.Գ. Հմայսկյան, *Վանի քաղաքության պետական կրոնը*, էջ 73 (նշված գրականությամբ); P.E. Zimatsky, *Ancient Ararat: A Handbook of Urartian Studies*, Delmar, New York, 1998: 71; A. Taffel, *A Tentative Reconstruction of the Urartian Calendar of Festivals*, "Anadolu Araştırmaları", 15, 1999: 372.
23. Ի դեպ, այս նույն բնութագրումն են տալիս որարտական առաջնորդներին մակ ասորեստանցիները, ինչպես, օրինակ, ԼԱ, սող 339-ում ([...] mai-ku SIPA UN.MEŠ^{K19} U[r-ar-i...]):
24. Հմմտ. The Assyrian Dictionary (այսինքն՝ CAD), "A" (vol. 1, part II), Chicago, 1968: 250, (w)ardu(m) – d):

25. Shu Գր. Ղափնակյան, նշվ. աշխ., էջ 113; И.М. Дьяконова, *К вопросу о символе Ханду*, с. 190 сл.; M. Salvini, *La formation de l'état urartéen*, in: "Acta Anatolica E. Laroche oblata. Colloque anatolien, Paris, 1-5 juillet 1985", Louvain-Paris, *Hebdomada*, 8, 1987: 405; *idem*. *Le panthéon de l'Urartu et le fondement de l'état*, p. 86; ինչպես նաև A. Taffet, J. Yakar, *Politics and Religion in Urartu* (in: "Essay on Ancient Anatolia in the Second Millennium B.C.", Bulletin of the Culture Center in Japan (ed. Prince Takahito Mikasa), 10, Wiesbaden, 1998: 133-152) աշխատանքը, որը մնաց մեզ անմատչելի:
26. Հմտ. *bidini* ... *munini ulguše alsuše eja(-)ardiše arni ulmaše riyuše uanile* ... UD^{MEMEŠ} SIG^{MEŠ} riyuiminili siprugini (նարգմանությունը տես КУКН, 277, с.к. 1-8; և այլուր, որ կարելի է տեսնել նաև Թրուսե, Բուսե, Եկուե շատերը՝ *Կորանդուրյան* և մոտ իմաստներով):
27. Հմտ. *ušhanuše* ... *hututuhi guuše ege* ^{ԱՉ}րուսե (նարգմանությունը տես КУКН, 406, с.к. 31 сл. և այլուր):
28. Տես նաև մՈՒ. 19:
29. Ե.Հ. Գրեկյան, նշվ. աշխ., էջ 231-232:
30. Տես օրինակ, H.W.F. Suggs, *Historical Texts and Fragments of Sargon II of Assyria*, "Iraq", vol. 37/1, 1975: 11-20.
31. L.A. Oppenheim, *The City of Assur in 714 B.C.*, JNES, vol. 19, 1960: 140-141.
32. Ռասայի ազգաց որդին Մելարտտան էր, որին էլ անցել էր տեղորջան դանդ մի կարճ ժամանակով: Մանրամասները տես Lanfranchi G.B., *Some New Texts About a Revolt Against the Urartian King Rusa I*, "Oriens Antiquus", 22, 1983: 123-136.; А.И. Иванюк, *Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II*, ВДИ, № 3, 1990: 3-19:
33. Ա.Ե. Մովսիսյան, *Կարևոր մի ուղղում (Կարմիր ջրույի տնայակից սպիկներինք սեփի տակերյառը)*, ՄԱՍԵՄ, XIX, 2000: 133-139:
34. Н.В. Арутюнян, КУКН, с. 415. Գաղափարագրի նշանակությունների մասին տես R. Berger, *Assyrisch-babylonische Zeichenliste* (այստեղծակ' ABZ), AOAT, Bd. 33, Neukirchen-Vluyn, 1978: 84-85 (No. 99):
35. Այս շտմերագրի նշանակությունն է «զերագույն բարձր», տես R. Berger, ABZ, 318 (en = enu – Fürst, hoher Priester).
36. Տես օրինակ, Pitted W.T., *The Meaning of EN at Ebla*, in: Young G.D., Chavalas M.V., Averbeck E.R., "Crossing Boundaries and Linking Horizons, Studies in Honor of M.C. Astour on his 80th Birthday", Maryland, 1997: 399-416.
37. Առավել մանրամասն տես CAD, "B" (vol. 2), 1965: 191ff. (b* lu).
38. E. Laroche, *Glossaire de la langue hourrite* (première partie), RHA, 34, 1976: 85-87.
39. Հատկանշական է, որ վաղ խտրրիական տեքստերում հիշվո՞ւմ է ետոն տիտղոսը՝ «արքա» նշանակությամբ, ինչի հավաստումն է նաև զոգահեռ տեքստերում սրան փոխարինած LUGAL շտմերագիրը (V.V. Ivanov, *Hurrian etoan "King" and the Origin of Hurrian –nd– (Nasal + Dental Stop)*, in B.A. Лившиц (гл. ред.), "История и языки древнего Востока: памяти И.М. Дьяконова", Санкт-Петербург, 2002: 92-101, որ և տես խտր. etoan(n)-ի հետ կապված քննարկումները): Այսինքն, «արքա» զաղափարը խտրիկներին ճանաչ

- էր վաղուց և գտնի փոխառված չէր արքայադիցաներից, ինչպես ենթադրվել է (E. Laroche, *Pantheon national et pantheons locaux chez les Hourrites*, "Orientalia", vol. 45, fasc. 1-2, 1976: 98): Իսկ տիրուհուց ըստ ժողովրդագրության մեկի, արտահայտված Գ. Վիլհելմի կողմից, կարող էր նաև ծագել EN շումերագրամիջ՝ խորթ. ըստ անանյով (ըստ V.V. Ivanov, նշվ. աշխ., էջ 94): Ի դեպ, տիրուհուց գուցե և չարմանակել է պարսեմակել «գլխավոր» բուրձն՝ իմաստը՝ նշանակելով պարզապես բարձր-արքա (տես նաև M.Л. Хачикян, *Хурритский и урартский языки*, Ереван, 1985: 6, 132 и прим. 4):
40. Sbu R. Borger, ABZ, 100-101 (No. 151).
41. G. Wilhelm, *Urartu als Region der Keilschrift-Kultur*, in: W. Haas (Hrsg.), "Das Reich Urartu: Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v.Chr.", Xenia 17, Konstanz, 1986: 95-113.
42. Н.В. Арутюнян, КУКН 412, прим. 6.
43. Sbu R. Borger, ABZ, 179-180 (No. 471): Սրա աստօղին նշանակությունը «րասն» (XX) բվանշանն է, այնուհետ՝ արևի ու Արևի աստծո զաղափարագիրը բվային համարժեքով (⁶⁹XX) և ապա միայն «արքա»-ն (MAN/SARRU):
44. Քնիչիմի կերտուց միակ երկրեզմ տարյուրն է, ուր պահպանվել են (կամ պարունակում է) արքայական տիրութայարիք: Sbu Н.В. Арутюнян, КУКН 30, урарт. текст: 3, 18-19; ассир. текст: 2-3, 16.
45. Sbu, օրինակ, Իշվաթիմի և Մննուայի ձեռնարկում արչավարձերի Բլաղազտությունները, որոնցում հստակ նկատվում է նշված տարբերությունը (Н.В. Арутюнян, КУКН 31):
46. Sbu, օրինակ, Н.В. Арутюнян, КУКН 39: 2 և 4:
47. Յոնանմես Ֆրիդրիխը դրանց մեջ տեսել է երկու տարբեր բաներ, Գրիգոր Ղափանցյանը նշում է իմաստային տարբերությունների մասին (Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 84-86): Այս նույն հարցը ծագել է նաև Փոլ Չիմանսկոյ մոտ (P.E. Zimonsky, *Ecology and Empire: The Structure of the Urartian State*, SAOC, 41, 1985: 124, nt. 73): Նա հարց է բարձրացրել՝ աբլյոյն նմարվոր է զաղափարագրերում տեսնել իմաստային տարբերություն, ենթադրելով, օրինակ, «գերագահ արքա» LUGAL-ի, և «ենթակա արքա» LUGAL-ի դեպում: Ի դեպ, մնան նույնպիսի դիտվում է նաև խերա-յուսիական արդյունքներում (սրա վրա մեր ուշադրությունը եղավիցից դր. Արամ Քոչարյան): Sbu, օրինակ, N.V. Khazaradze, *Royal Power in Late Hittite Political Entities*, in: H. Klengel (Hrsg.), "Gesellschaft und Kultur im alten Vorderasien", Berlin, 1982: 121-126; J.D. Hawkins, "Great Kings" and "Country-Lords" at Malatya and Karkamış, in: Th.P.J. Van den Hout, J. De Roos, "Studia Historiae Ardens, Ancient Near Eastern Studies Presented to Philo H.J. Houwink ten Cate", Istanbul, 1996: 73-85.
48. Sbu И.М. Дьяконов, ЭВ, № 6, 1952: 108: Հմմտ., И.М. Дьяконов, *Жертвоприношения в Тейшебцини (УКН 448)*, КБС, VIII, 1988: 66, прим., 37; և այլուր:
49. R. Borger, ABZ, 179 (No. 471), 348.
50. Ըստ Միրյոն Սարգիսիի աստարական բարձրագույնության: Sbu B. André-Salvini, M. Salvini, *The Bilingual Stele of Rusa I from Movana (West-Azerbaijan, Iran)*, SMEA, XLIV/1, 2002: 21 (lins. 35-36), 23 and nt. 104.
51. Ա. Հմայակյան, *Վանի բարձրագույն պետական կրթության կրթություն*, էջ 73:

52. Համապատասխանաբար КУКН 36 (Դշգոյիին); 38, 38b, 39a (Դշգոյիին) և Սննա); 82, 122-124 (Սննա); 193 (Արգիշթի I); 270 (Սարգոյի II); 392 (Ռուսա I), 407 (Արգիշթի II); 415^Դ, 418^Դ, 421, 424, 425^Դ, 427^Դ; ինչպես նաև M. Salvini, *The Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduru-kai): Cuneiform and Hieroglyphic (Inscription of the Susi Temple)*, in: Altan Çilingiroğlu, Mirjo Salvini (eds.), "Ayanis I. Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998", Roma, 2001: 253ff. (Ռուսա II); idem., *Una Stele di Rusa III Erimenahi dalla zona di Vav*, SMEA, 44/1, 2002: 115-143 (Ռուսա III) և:
53. Միգուցե, այս է վկայում ինչպիսի տեքստերում հունախ հանդիպող «մեկ» գոյ խաղի (աստծուն) բող-զոհարերի, մանրիքը (և) լյարդը *արքամեթ* բող-տրվի» արտահայտությունը (graf. GUD⁹Haldie SUM barzani zieldi LUGÁL-e (PN) ardalini): Տես Н.В. Арутюнян, КУКН 193: 3-4 (7); 425: x+1 (7); M. Salvini, *Ayanis I. (Ay-susi. Section III: 9-10)*:
54. Н.В. Арутюнян, КУКН, с. 476:
55. Н.В. Арутюнян, КУКН 424: 19-20; И.М. Дьяконов, КЭС, VIII, 1988:
57. Հմմտ. նաև M. Salvini *Ayanis I: Ay-susi, Section III: 3-5*.
56. Տես օգինակ, A. Salonen, *Prozessionswagen der babylonischen Götter*, St.Or., 13/2, 1964: 3; H. Swarc, *Besuchsfahrten des Götter in Sumer*, "Orientalis" NS, 38/2, 1969: 214-236. Անվտի տես նաև *Götterreisen A. Nach sumerischen Texten* (A. Sjöberg.), *Götterreisen B. Nach hethitischen Texten* (H. Otten), in: W. von Soden (Hrsg.), RLA, III, 6/7, 1969: 480-483.
57. И.М. Дьяконов, *Урартские письма и документы* (այստեխուն՝ УПД), М.-Л., 1963 (текст № 12). Հմմտ. Г.А. Меликишвили, УКН II (ВДИ, № 3, 1971), 286; Н.В. Арутюнян, КУКН 412; M. Salvini, *Ayanis I*, p. 17.
58. Ս. Հնայակյան, *Հանի բարգավորության պետական կրոնը*, էջ 36, 106, ծմբ. 13:
59. Г.А. Меликишвили, УКН 89: 5-10; И.М. Дьяконов, КЭС, VIII, 1988:
- 67, прим. 41; Н.В. Арутюнян, КУКН 115: 5-10.
60. Հմմտ. նույն տեքստի DINGIR^{mes}-ը zieldi ičinini LUGÁL^{mes} ušidilutini արտահայտությունը «աստվածները լյարդն այստեխուն՝ *արքամեթի* բող-խառկացնեմ^Դ» մոտավոր բարգմանությամբ (КУКН 105:10-11):
61. И.М. Дьяконов, УПД, с. 70. Հմմտ. Г.А. Меликишвили, УКН 127, VI: 13-15; Н.В. Арутюнян, КУКН 173, VI: 13-15.
62. M. Salvini, *Ayanis I (Ay-susi, Section I: 8-10)*:
63. Տես Н.В. Арутюнян, КУКН 270, 414-416, 424-425, 427, 489: Այս արձանագրությունների համադրությունը Այանիսի նույնական տեքստի հետ տես M. Salvini, *Ayanis I*, p. 256 (Fig. 5).
64. Н.В. Арутюнян, КУКН 412, лиц. стор., 4-6.
65. Առկա ընթերցումը՝ *Նաղլեմ բողեյ(նաստատեյ)-ինեմ (որպես) արքա տարբերակով* (Н.В. Арутюнян, КУКН 412; M. Salvini, *Ayanis I*, p. 17), որդակիրոբն հակասում է ուրարտական սեպագրի քերականական կանոններին. LUGAL=ու⁹Հալեմ=ու արտահայտությունը դրված է բացարձակ հոլովով: Երև խոսքը վերաբերել Նաղլիի կատարած գործողությանը, ապա դիցանունը պետք է դրվեր էրգատիվ հոլովով (⁹Հալեմ=ե). այդ է պահանջում անցողիկ ակ(ս) բայը: Այստեղ, մի գուցե, զորո ունենց ուրարտական սեպագրում

- կրավորական սեռի ինչ-որ շնորհման նման: Shu և համեմատիր И.М. Дьяконов, УПД, текст № 12; P.E. Zimansky, նշվ. աշխ., էջ 79:
66. Shu, օրինակ, I. Stapp, *Queries to the Sargod. Divination and Politics in Sargodid Assyria*, SAA, IV, Helsinki, 1990, ուր ակյա է փաստաբանաբանական գործընթացը լուսարևոտ ցնարձակ ակնարկ (էջ XVI-LV):
67. ԼՍ, տաղ 385 (ըստ И.М. Дьяконов, *Ассирио-вавилонские источники по истории Урарту*, ВДИ, № 2, 1951, текст № 49 [367]: Հնժռ., ասիական, W. Meyer, MDOG, 115, 1983: 106-107):
68. Б.Б. Пиотровский, *Урартская мифология*, в кн. "Мифы народов Мира", Москва, 1982: 550.
69. И.М. Дьяконов, УПД, с. 62.
70. Г.А. Меликишивили, УКН II, с. 280; M. Salvini, *Zu den beschrifteten Tonbullen*, in: W. Kleiss (Hrsg.), "Bastam I. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1972-1975", Berlin, 1979: 133-136; idem, *Geschichte und Kultur der Urartier*, Darmstadt, 1995: 113f.; Н.В. Арутюнян, КУКН, с. 412. Այս մասին տես նաև U. Hellwig, *Der Untergang Urartus: eine historisch-archologische "Fall"-Studie (Magisterarbeit)*, München, 1998: 55-78.
71. P.E. Zimansky, նշվ. աշխ., էջ 85: Եւ, ի դեպ, աստիճան հալանական է գտնում թոյր սեպականքն ընթերցել գաղափարագիր արժեքներով, այսինքն՝ ¹⁰A.NIN.II, ինչը միանգամայն հնարավոր է (նշվ. աշխ., էջ 125, ծնր. 76): Այստեղ նշենք նաև Մ. Սալվինիին, որի կարծիքով իրված գաղափարագիրը վերաբերել է ոչ միայն բազաժտանկին, այլ՝ արքայազներից յուրաքանչյուրին: Shu M. Salvini, *Bemerkungen über die Thronfolge in Urartu*, in: H. Klengel (Hrsg.), "Gesellschaft und Kultur im alten Vorderasien", Berlin, 1982: 225.
72. U. Hellwig, *Sohn der Königin* ¹⁰A.NIN-II oder "Wasserwirtschaftsminister" ¹⁰A.ZUM-II ?; *Überlegungen zu einem "fragwürdigen" Amt am urartäischen Königshof*, "Akkadica", 117, 2000: 21-43.
73. M. Salvini, *Ayasıs I*, p. 23-24.
74. M. Salvini, *Ayasıs I. Inscriptions on Clay: Inscriptions on Seal Impressions*, 316f. (Seal Ay-3, and Fig. 8c).
75. И.М. Дьяконов, УПД, с. 34, 138 (текст № 4); M. Salvini, *Die urartäischen Tonsteine aus Bastam*, in: W. Kleiss (Hrsg.), "Bastam I. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1972-1975", Berlin, 1979: 130 (Abb. 9); U. Seidl, *Die Siegelbilder*, in: W. Kleiss (Hrsg.), "Bastam I. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1972-1975", Berlin, 1979: 137; idem, *Die Siegelbilder*, in: W. Kleiss (Hrsg.), "Bastam II. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1977-1978", Berlin, 1988: 145; նե:
76. Եւ Վ Հարությունյան, *Լոթ ընթերցումներ և մեկնադրություններ Այանիի նոտառայտ ուղարտական սեպագրում*, ՄՍԱԵԺ, XXI, 2002: 230:
77. «Որդի» հասկացությունը Հին Արևելքում ռեմեյն է լայն նշանակություն՝ վերաբերելով ընդհանրապես այս կամ այն քննազավառի հետ կապված մարդկանց (հմժռ., օրինակ, *damu 6-dub-ba-(a)՝ արժանազուրույան ասան զոցի* – «աշակերտ», ¹²DUMU(-še) ¹³խաբու(niše) զոցի(Յ) Տալլազ (քաղաքի) – «քաղաքացի», «տուշարայեցի» նե): Մասնագիտական

գրականության մեջ շքանշանակալ տեսակետին բավական կասկածազուրկ է մտնում նաև ուրարտական պնտության կառուցվածքին վերաբերող արժեքավոր աշխատության հեղինակ Փոլ Ջիմանսկին: Նա չի բացառում քննարկվող Ա, ինչպես նաև NIN գաղափարազրեքում տեսնել այլ ինտատային արտահայտություններ՝ ի տարբերություն դրանց հայտնի նշանակությունների (P. Zimansky, նշվ. աշխ., էջ 85): Այս միտքը, թվում է, նաստատվում է գոն NIN գաղափարազրի պարագայում: Վերջինս ուրարտական սեպագրում կարծես թե կիրառվել է (բացառապես) «աստվածուհի» նշանակությամբ:

78. M. Salvini, *Ayans I*, p. 291 (CB Ay-39).

79. CAD, "E" (vol. 4), Chicago, 1958: 172f. (Շուս).

80. Հետաքրքրական է, որ ուրարտական պատկերազրեքային տարրեր նմուշներ վկայում են տեղաբնիկ հոգևոր կյանքում քրմուհիների կատարած կարևոր դերի մասին: Բրոնզե պաշտամունքային թիֆուներում պատկերված ծիսական արարողությունը (հացի մատուցում, վիճառ հեղուկ են) իրականացնում են կանայք (Տնս, օրինակ, H.-J. Kellner, նշվ. աշխ., Taf. 70-71, Nu. 282; idem., *Groping and dating of Bronze Belts*, in: E. Metchow (ed.), "Urartu. A Metalworking Center in the First Millennium B.C.E", Jerusalem, 1991: 60-61, No. 17): Թեթև կարելի է որսրուական պատկերազրեքային այլ օրինակներում խաղողի առջև կանգնած կանանց, որոնք պատկերված են և խնդրարկուի դիրքով, և գոհարերության կենդանու՝ այծի հետ միասին, ընկալել որպես քրմուհիներ (տես, օրինակ, H.-J. Kellner, *Personal Adornments: Medallions and Pectorals*, in: E. Metchow (ed.), նշվ. մոդ., էջ 175, տախ. 11-12, 15, 17; նույնի՝ *Votive Plaques*, նշվ. մոդ., տախ. 1, 3; և այլուր): Նրանք սովորաբար նույնացվում են Վարուբանի աստվածուհուն (Ա.Գ. Հեմայելյան, *Վանի թագավորության պետական կրոնը*, էջ 38-39):

81. Խերական տերության բազմաթիվ աղբյուրներ հիշատակում են Խարթրի թագուհուն՝ կրճնական այս կամ այն արարողությունը կատարելիս կամ գլխավորելիս: Խերական տերության հոգևոր կյանքում շատ մեծ էր մայր թագուհու դերը, որը փաստորեն նամդես էր գալիս որպես գլխավոր քրմուհի:

82. Թեթև այս փաստով պետք է բացատրել այն հնթթագայությունը, երբ մի դրոշմում նշվում էր տերության առաջնորդի անուն-նայրանունը, երբեմն՝ տիտղոսով, կամ պարզապես տիտղոսը: Բացի այդ, հետաքրքրական է այն փաստը, որ երկու տիպի կնիքներն էլ (այսպես կոչված՝ «արքայականը» և «արքայակնիքը») ունեն մոտ պատկերազրեքային, իսկ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել է դրանց՝ մեկ անձի պատկանելու հնարավորությունը:

83. Այս երևույթը կարելի է դիտել, հետաքրքիր է, արք. maliku(m) բառում: Այն, արևելասեմականում ունենալով «(արքայի) խորհրդական» նշանակությունը, արևմտասեմական աշխարհում ձեռք է բերել «արքա» նշանակությունը (mik), սկզբանապես օգտագործվելով երկու իմաստներով էլ (Pitard W.T., նշվ. աշխ., էջ 405):

84. Այս տարբերակումն առաջինը նկատել է Փ. Ջիմանսկին: Այստեղ թեթև ամիրամիշտ է տարբերել նաև երբորը քանաձևը, որն ուղղակի հրաման է (¹⁰Sardurite "Rusahinise aruni banse PN), որտեղ հրաման տվող անձը հիշվում է

աման-նալիաներով, նույնը նաև կնիքում: Այսինքն, այստեղ քաղաքայում է միջինը օրակը: Sht H.V. Arutunyan, KYKH 428: 1-3:

85. H.V. Arutunyan, KYKH 393, 394, 433.

86. H.V. Arutunyan, KYKH 429, 432, 443, 446, 520, 522.

87. Հմմտ. P. Zimansky, նշվ. աշխ., էջ 84; H.V. Arutunyan, KYKH, c. 307, քրմ. 25: Իրոք, եթե գաղափարագրերի քննարկվող կոմբինացիան ընդունենք աղբյուրված նշանակությանը, ապա կատարվի, որ նա իրավունք ունի նաև նաև նույն գտնվող աղբյուրի տեղիքային փաստացի առաջնորդի հրամանները: Հազիվ թե պետության կառավարման համակարգը եզրևե ենթադրել «աղբյուրված» վերապահված նման լայն լիազորություններ:

88. Դրա վկայությունն է LU (քառասնի՝ մայր) գաղափարագրի ակալությունը, որն որպեսական տեղափոխում հիմնականում կիրառվել է մասնագիտություն/կալիտոն արտահայտության (KYKH, c. 419), որպես որոշիչ (determinative): Ի դեպ, գիտական հրատարակություններում ցայսօր օգտագործվող աղբյուրված բառի հետ մասնագիտություն արտահայտող որոշիչ ակալությունն իրավագիտորեն առաջացրել է շրջանի գաղմանը և կապված (P. Zimansky, նշվ. աշխ., էջ 85), առավել ևս, սնվածի և ոչ մի դպրություն չի գրագրել դրա անհրաժեշտությունը (հմմտ., օրինակ, LUGAL/LUGÁL՝ այսօր գաղափարագրի, որը գրվել է առանց շրջի, այդ բովանակման որպեսական սնվածում):

89. KYKH 393, обор. стор., печ. 2; 394, обор. стор., печ. 2.

90. Մեզ հետաքրքրող կնիքների և կնքադրոշմների ամբողջ զանգվածը ծագում է մ.թ.ա. 7-րդ դարում կառուցված քաղաքներից, ինչպեսից են Կարմիր-բլուրը (*Թեյեթաթենի*), Բաստամը (*Ռասայի փոքր քաղաք*), Թուրքա-քալին (*Ռասաթենից Թեյեթաթենի*) և Այանիսը (*Ռասաթենից Էստրոտիս*): Մյուս կողմից, սնվածի աղյուսակների քննարկներ հայտնի են նաև Սարդուրիսինի քաղաքից (Հայկաթից - Գալուսթենի), որոնցում, սակայն, չեն պահպանվել դրոշմաձևերը (A.M. Dinçol, B. Dinçol und M. Salvini, *Zwei aramäische Tonabfete aus Çavuştepe*, SMEA, 43/2: 195-202): Գրականության մեջ առկա է տեղեկություն նաև Վերին Անգաթից (նայ. *Անգաթ*, քաղաքի որպեսական անունը հայտնի չէ) հայտնաբերված սնվածից սպիկի մասին, երկկողմանի արձանագրված, լավ վիճակում: Այն, սակայն, դեռ չի հրատարակվել: Այս մասին տես A.M. Greaves, B. Helwing, *Archaeology in Turkey: The Stone, Bronze & Iron Ages 2001*, TÜBA-AR, VI, 2003: 147.

91. LU, տող 337:

ՄԱՐԻԱՍ ԽԱՆՁԱԳՅԱՆ

ԻՍՈՒՎԱՅԻ ԱՐՔԱՆ ԵՎ ԹՈՒԴԻՍԱԼԻՅԱՍ IV-Ը (KBo XXXI 68)

Հուլիանի բեման Զ.ա. 13-րդ դարի խեթական դատական մի արձանագայություն է (KBo XXXI 68 = CTH 297.8), որ քննարկված են այդքա մտողյալիդաս IV-ի դեմ կազմակերպված դավադրության մանրամասները: Այս աղբյուրն առաջին անգամ հրատարակվել է գիտական շրջանառության մեջ է դրվել Ռ.Ստեֆանինի¹ կողմից 1965 թվականին: Տարբեր տարիներին դրան անդրադարձել են Ն.Տանյին և Թ.Վան դեմ Հուստը, հայ մասնագետներից՝ Վ.Խաչատրյանը: Նշենք սակայն, որ Ռ.Ստեֆանինի աշխատանքը որոշ անճշտություններ է պարունակում՝ կապված սեպագրագիտության մեջ ժամանակի ընթացքում ի հայտ եկած նորաժողովությունների և վերափոխված ընթերցումների հետ: Հայագիտության համար այս արձանագայությունը մեծ նեղացրություն է ներկայացնում, քանի որ պարունակում է տեղեկություններ Հայկական (նոմախսարի) նմագայն պետական կազմավորումներից մեկի՝ Իսուվայի (Շուփքի) վերաբերյալ:

Ստորև ներկայացնում ենք արձանագրության գիտական տատաղարձումն ու թարգմանությունը.

1. ...
2. [GIM-an-m]a-wa¹ He-es-ni-iš² am-mu-uq-qa³ I-NA [...]
3. [e]-er-u-en nu-wa-mu-kán² UTU-si A-NA¹ Ma-la [...]
4. i-it-wa-ra-as ar-nu-ut nu-wa-ra-as ar-nu-nu-un nu-wa-ra-as I-NA [...]
5. pé-hu-te-nu-un⁴ nu GIM-an I-NA^{URU} Ta-hur-pa ar-hu-un
6. nu-mu^{GIS} HUR ŠA^{GIS} He-es-ni⁵ ú-te-er⁶ MA-HAR² UTU-si-wa le-e⁷ pa-a-[it-ti]
7. ^{LI.MES} GAL^{HLA} -wa am-mu-uk kat-ta ú-wa-ti A-NA¹ Li-la-u-wa-an-ta-y[u]
8. GIŠ.HUR ú-te-er nu-wa a-pe-e-da-ni-ya⁸ QA-TAM-MA ha-at-ra-es
9. ¹Ta-at-ta-an-wa^{LI.MES} GAL^{HLA} -ya MA-HAR² UTU-si le-e pé-hu-te-si
10. ma-a-an-ma-wa-ra-as pé -hu-te-si-ma nu-wa i-da-la-u-wa-ah-ti

11. *UM-MA A-NA-KU-MA A-NA* ¹Li-la-u-wa-an-ta nu-wa *MA-HAR*
^DUTU-si
12. ku-wa-pi *Ú-UL* pa-a-i-mi ¹He-eš-ni-is-<ni-is>-wa-mu⁸ ku-it i-ya-zi
13. *Ú-UL* -wa-mu za-a-hi ^DUTU-si-ma-wa-mu-kán *Ú-UL* SAG.DU-an-
 pit¹⁰ ku-iz-zi
14. ma-a-an-wa *Ú-UL* pa-a-i-mi nu-wa ¹Li-la-u-wa-an-da-as am-mu-uk
15. ^{LU}MES GAL^{HLA}-ya *I-NA* ^{URU}Ha-at-ti-na *MA-HAR* ^DUTU-si pa-a-u-e-en
16. nu-wa *A-NA* ¹He-eš-ni kat-ta-an pa-a-u-un nu-wa-mu-za-kán *A-NA*
^{GIŠ}GIGIR
17. kat-ta hal-za-a-is *UM-MA* ¹He-eš-ni-*MA* ki-nu-na-ya-wa-za *Ú-UL* ha-
 a-si
18. ^{LÚ}MES GAL^{HLA}-wa hu-u-ma-an-du-uš *I-NA* ^{URU}Ka-r[a-h]a-na li-in-[...]
19. [...l]-as-[w]a-kán *Ú-UL* ar-ha ki-it-ta-ri DUMU^{MES}, LUGA[L-m]a-
 wa-[kán]
20. [sa-ku-w]a-sar-ra-as ka-ru-ú am-me-da-az ne-an-[ta-at]
21. [ki-nu-na-ya-wa-za *Ú-UL*] ha-a-si nu-wa GIM-an ha-mi-is-ha-a[n-za
 ki-sa-ri]
22. [ERIN^{MES} ANŠU.KUR.RA^{ME}]¹ ni-ni-ik nu-wa-za an-da [...]
23. [u]k-wa-mi nu-wa-at-ta me-mi [...]
24. ...[k]u-i-e-es an-da nu-wa-a[...]
25. [...]x-ta-[...] ... -al-an EGIR-pa x[...]
26. [...]zi-[...]x nu-wa zi-ig-qa us-kán[...]¹¹
27. [zi-la]-tu-wa ku-in <u>¹² e-ek-ta-an ha-ma-[an-du]¹³
28. ...Š]I-PU-PU ¹Ta-as-ku-i-le-es-sa kis-an me-mi-[ir?]¹⁴
29. ...Š]I-PU-PU *A-NA* ^{LU}E.KAS₄ ^{UT-77}13 x-x[...]¹⁶
30. [...]x ^{LU}MES UKU.UŠ am-mu-uk nam-ma e-es-[zi]
31. [...]x-ki-nu-wa a-pé-ef ANŠU.KUR.RA^{MES} GIŠ.HUR/MA-HAR ¹He-
 eš-ni-[...]
32. *UM-MA* ¹He-eš-ni-i in-na-ra-wa-kán lu-u-ri-in [...]
33. ...
34. xxx ^DUTU-si-wa-kán *A-NA* ^{GIŠ}GIGIR za-am-[mu-ra-...]
35. zi-ik-ku-wa-za¹⁷ *IS-TU* KARAS ANŠU.KUR.R[A^{MES} ...]
36. GIM-an-wa ^{GIŠ}GIGIR.LUGAL a-pé-ya ar-nu-u[m-mi-...]
37. a-pé-ya LÚ-e-es-[d]u⁷
38. *UM-MA* ¹He-eš-ni-i *A-BU-BI-TI*-wa-za hal-zi-ih-hi nu-[...]x i-ya-mi
39. ¹Lu-pa-ak-ki-is-⁷ ma⁷-wa-kán ^{LU}QAR-TAP-PU UGULA LÚ [^{MES}...]
 ku-en-zi
40. ¹Hal-pa-LÚ-in-wa E-IN-NU-DA sa-an-na-pi-li-i[n...]-u-e-ni
41. LUGAL KUR ^{URU}I-šu-wa-ma-an-wa ¹A-la-li-mi-is¹⁸ ¹Ta-aš-ku-i-li-is
 [¹Hu-uz-zi]-ya-as-sa¹⁹

42. ma-an-wa-ra-an a-pu-us an-da e-ip-pir ¹Na-ni-zi-in-m[a...] pa-is-sa-an-ta
43. GUD.MAH-an-ni³⁹ pi-ya-ir a-pa-a-at-wa a-pa-a-at ú-ki-lá [...m]i
44. zi-ik-ma-wa-kán in-na-ra-a lu-u-ri an-da ti-ya-si ⁰UTU-si-wa-{z}a-kán
45. a-pó-e-da-ni-pát A-NA GAL.KÛ.BABBAR se-er ú-wa-it-ta-ri²¹
46. [ma-u]-an UL nu-wa-mu an-da ú-e-ri-ya-hu-ul
47. ¹Ho-eš-ni-i-in-wa ku-wa-pí ^{URU}KU.BABBAR-si IGI-zi BAL-si INIM-ni e-cp-te[n]
48. nu-wa-nš-si I-NA ZA-RA-TI²² pa-a-un nu-wa-za ar-re-es k[i]-iz-[zi]
49. nu-wa-kán an-da hal-z[i]-i-e-er nu-wa-kán ⁰¹⁵a-xx[...]²³
50. an-da ar-ha-ha-r[i]

հրաբզմանո թյուրք.

1. ...
2. [Հենց որ] իրենիմ²⁴ ինձ դեպի [...²⁵]
3. հասանք, և ինձ, Բալա[ց]տիլիս Արևն [ասաց],
4. «զմա՛, քե՛ք, և նրանց բերեցինք, և նրանց դեպի (հրաբնա՛)
5. հասցրեցինք; և նրք որ Տախարպա²⁶ հասա,
6. և ինձ բերեցին իրենի իրամանք. «Արևի առջև չգնա՛ս [...],
7. և իշխանները ինձ ցած բերեցին, Լիլաովանդային
8. իրամանք բերեցին, և նրան էլ մայն ձևով փոխանցեցիր/զրեցիր,
9. «Տատտային և իշխաններին Արևի առջև չտանես,
10. ապա քե տանես, շարագործութուն աքած կլինես»,
11. այսպես եմ ասում ես Լիլաովանդային. «էլ Արևի առջև
12. երբեք չեմ գնա, իրենիմ ինձ կանի:
13. Աթևը թող իմ գլուխը չկտրի
14. [...] չեմ գնա: Եվ Լիլաովանդասն ու ես,
15. և իշխանները հրաբնա քաղաք Արևի մոտ գնացինք,
16. և ես ցած իջա իրենի մոտ, և կառքի վրայից
17. մտ ինձ ձայն տվեց: Այսպես (ասաց) իրենիմ. «Այժմ [...]
18. Բոլոր իշխանները Կարախանայում²⁷ եղլ[վեցին]
19. Ոչ որ նրանցից չժնագ, իսկ արքայազմը
20. իմ (հանդեպ) ուղիղ մն[աց]
21. և այժմ մի վստահիր: Եվ հենց որ զարոն[ը գա]
22. զորքերն ու կառքերը պատրաստիր, և
23. և քեզ կասեմ: [...]
24. ... տվերի մեքսում և քեզ]
25. ... ետևում...
26. ... և դու հետևիր՝...
27. Հետո՞՞ ցանցով [թող] կապեն
28. ...Տապկուիլին այսպես է ասում,

29. ...ստրիանդակի պաշտոնին/տեղին...
30. ...ծանր հետևակայինները ինձ կրկյն դառն(ուժ են)
31. .. (և) նրա զորքերը խենթի մոտ...
32. ..Այսպես (ասաց) խենթին «Ուղղակի վերավորանք...
33. ...
34. ...Արևը կտաքի վրա կվիթա(վորվի)
35. և դու բանակի բազմության միջև
36. երբ արքայի կառքը այդ ժամանակ²⁹ հեռաց(նեմ)
37. այդ ժամանակ
38. Այսպես (ասաց) խենթին. «Տանտտիրաջը ես կկանչեմ և [...] կանեմ
39. Իսկ Լուսակկին, Կատապանը հազարապետին կտպանի³⁰
40. Խալաբաղիտիին դատարկ ամբարտե՛մ [...]
41. Նրե Իսուվայի արքային Ալալմին³¹, Տասկուլին³² և [Նրոցցի]րան³³
42. Նրե նրանք նրան (=Իսուվայի արքային) կրոնեն, Լանինցին ինձ[...]
43. անասնազո՛ւմ բող նրան ուղարկեն, նրան ես ինքս [...]
44. բայց դու ինձ ուղղակի վերավորում ես միացար⁷, բայց Արևը
45. կանխանգատանա այդ արժաքե գավաթի համար,
46. ապա քե ոչ, նրանք ինձ [...]»
47. մինչդեռ Խաբրուսատե՛մ խենթիին [...]
48. նրա մոտ, դեպի վրանը զնացի, և մա լվացվում էր,
49. և ներսում կանչեց, և [...]
50. ներսում [...]

Աձենայն հավանականությամբ արքայազն խենթիի այս դավադրությունը պետք է որ տեղի ունեցած լիներ Թուղխալիյասի գանակադրյան առաջին շրջանում, երբ նրա իշխանությունը դեռևս կայուն չէր³⁴: Դավադրության պատճառների և մասնակիցների ինքնության առավել մանրամասն քննարկումը բողնելով մեկ այլ, առավել համապատասխան ուսումնասիրման, փորձենք վերլուծել Իսուվային առնչվող հատվածները:

Ըստ էության, Իսուվային վերաբերում է տեքստի երկու տողը միայն ("41-42), ուր Իսուվայի արքան հիշատակվում է դավադիրների շարքում: Մակայն այս աղբյուրի համադրությունն այլ աղբյուրների հետ և տվյալ շրջանի քաղաքական անցքերի վերլուծությունն ի հայտ են բերում քավականին սերտ խեթա-իսուվական առնչություններ: Նշենք, որ Իսուվան խեթական տերության առաջխաղացման պահից ի վեր մշտապես եղել է խեթական արտաքին քաղաքական հարաբերությունների առանցքային կետերից մեկը: Սկզբնապես բշնամական երկրների շարքում գտնվելով, 13-րդ դարում արդեն խեթական տերության վստահելի դաշնակիցների շարքում էր, և դեռ ավելին, Իսուվայի արքայական տան ներկայացուցիչները կարևոր պաշտոններ էին զբաղում խեթական արքունիքում, իսկ Խաբթիի պաշտամունքային կյանքում Իսուվայի արքաները առանձնա-

հասուկ դեր ունեին համախեթական աստվածություններին տրվող երկրապագության կազմակերպման գործում³⁵:

Իսուվայի արքայի անունը տեքստը չի պահպանել, սակայն դեռևս Հ.Քիենզելը, հենվելով այդ աղբյուրների վերլուծության վրա, եզրակացրել է, որ ամենայն հավանականությամբ խոսքը Արիշարլուծայի մասին է, որն ամուսնացած էր Խարոսիլիա III-ի դստեր՝ Քիլուշխեպայի³⁶ հետ, և ամենայն հավանականությամբ Իսուվայի հետագա արքա Էխիշարլուծայի հայրն էր³⁷: Արձանագրությունը հիշատակում է նաև Լուսակկին: Կարծիք է հայտնվել, որ սա նույն Լուսակկինն է, որին Իսուվայի արքան՝ Արիշարլուծան իր նամակում (KBo XVIII 4) դիմում է որպես իր «սիրելի կոր»³⁸ և որը միաժամանակ «բազուկու (Պուրտխեպայի)՝ ժառանգ էր»³⁹:

Ինչևէ, ինչպիսի անկելով այն փաստը, որ դավադրության մեջ ներգրավված ամենից թե այքայական ընտանիքի, թե փաստ երկրների դիմապատկանների հետ քաղղ և տարաբնույթ կապերի մեջ էին, առավել ևս որ Լուսակկին և Արիշարլուծան միաժամանակ անուղղակիորեն պատկանում էին կառավարող արքայի արքայատոհմին, կարող ենք ենթադրել, որ Արիշարլուծան զանրակերպ է ալվել, և Իսուվայի զանր փոխանցվել է նույն այքայատոհմի ներկայացուցիչ և խեթական արքունիքի հետ ուղղակի արքունակեցական կապ ունեցող Էխիշարլուծային: Նշենք, որ խեթական արքունիքը միշտ էլ կիրառել է տարբեր պետությունների և իշխանությունների հետ խնամփութական կապերի հաստատման պրակտիկական որպես արտաքին քաղաքական շահերի առաջխաղացման հարմար միջոց: Կահայալ արքաների պարագայում դա նաև ապառնվում էր տվյալ պետության արտաքին կողմնորոշման խեթամետ ուղղվածությունը. ամուսնական. պայմանագրերը սովորաբար ենթադրում էին մրանց պարտավորվածությունը հետագայում զանր փոխանցել խեթական արքայազուտեր ժառանգին⁴⁰, ինչն էլ բնականաբար ավելի էր նպաստում տվյալ երկրում խեթական ազդեցության ուժեղացմանը: Տվյալ օրինակը միանգամայն համապատասխանում է այս պատմական անցքերին. քացի Իսուվայի արքայի հետ ամուսնացած Քիլուշխեպայից, արքայազն Ներիկկալլին ամուսնացած էր Անուրլուի, իսկ Խաթթուսիլիա մյուս որդին՝ Բարիլունի արքայազուտեր հետ, երկու արքայադուտար ուղարկված էին Ռամզես II-ի կամանողը և այլն⁴¹: Նման պայմաններում Էխիշարլուծան, լինելով ուղղակիորեն Խաթթուսիլիա III-ի բոլոր և Քուդիտալիասի հարազատ քրոջ որդին, միզուցն ավելի լույս կլիներ խեթական արքունիքի, կամ ավելի ճիշտ գահակալող արքայի նկատմամբ, քան իր հայրը՝ Արիշարլուծան:

Իսուվայի արքաներից մինչ այժմ մեզ հայտնի են միայն Արիշարլուծայի և Էխիշարլուծայի⁴² անունները: Երկու անուններն էլ դիցանվանակերտ են՝ իրենց կազմի մեջ պայտնակելով šarruma խորրիական բառը: Այն šarruma աստուտ անունն է, որը խորրիական դիցաբանությունում

հանդես է գալիս որպես Թեշուբի և Հեբաբի որդի, քարգձամարար՝ «Թեշուբ աստծու ցլիկ/որդի»⁴³: Այս, ինչպես մահ Խաթթիի կրոնական կյանքում խորրիական աստվածների պաշտամունքում Իսուվայի աքցանների ունեցած զգալի դերը⁴⁴, ինչպես մահ այն փաստը, որ մինչև խեթական արտաքին քաղաքական ոլորտում ներգրավված լինելը, Իսուվան այսպես քե այնպես գտնվում էր հարևան Խաթթի-Միտաննի պետության ամենիջական ազդեցության տակ⁴⁵ քայլ են տալիս միանշանակորեն պնդել այս արքայական դիմաստիայի խորրիական արմատների մասին, մասնավաճ որ համաժամանակյա խեթական արքայատոհմը նույնպես խորրիական ծագում ունի: Միաժամանակ դա տվյալ տառածրում մահ խորրիական էքնիկ տարրի սովակայության ապացույց կարելի է համարել⁴⁶: Բնականաբար, հնարավոր չէ ճշգրիտ դատողություններ անել ոչ այս, և ոչ էլ մնացած էքնիկ խմբերի տառածվածության կամ գերակայության մասին, առավել ևս, որ գտնվելով քաղաքակրթությունների և ստեղծական ճանապարհների խայժերակում, Իսուվան չէր կարող քնակեցված լինել մեկ էքնիկ խմբի ներկայացուցիչներով:

MARIAM KHANZADYAN

THE KING OF ISUWA AND TUDHALIYAS IV

The article deals with the Hittite cuneiform text belonging to the 13-th century B.C., which contain information regarding Isuwa, one of the ancient states on the Armenian Highland. Specifically, it tells about the role of the kings of Isuwa in the inner life of the Hittite empire in the 13-th century B.C.

ՃԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. R.Stefanini, *La congiura di Hesi*, "Athenaeum", 40,1965
2. Տեքստի գիտական տառադարձման մեջ կիրառված են նորագույն սկզբունքները (Chr.Ruster – E.Neu, *Hethitisches Zeichenlexikon*, Wiesbaden, 1989): Նոր տառադարձման համաձայն՝ He-es-ni-is
3. Ստիխամինին այս արտահայտությունը քարգձամել է որպես "Խեսնին և ես... զնացիմք" Սակայն քննարկ առ-առ-զգ մեջ uk/am-mo-uk անճանական դերանվան հաչական հոլովն է, և չի կարող քարգձամելն որպես "ես": Ենթադրվելիք [GIM-an-m]e-wa արտահայտությունը պարունակում է wa-էնկլիտիկը՝ ուղիղ խոսքի ցուցիչը: Կարող ենք միայն ենթադրել, որ Մարացիտին Խեսնիի հրամանով ուղևորվել է ինչ-որ մի քաղաք, հավանաբար՝ Խաթինա, ինչի մասին էլ մահ պատմում է: Վերականգնվելիք տեքստը կարող էր ունենալ հետևյալ տեսքը. GIM-an-mo-wa ʽHe-es-ni am-mo-uz-qa ʽI-NA [ʽ⁴⁶⁰He-at-ti-za su-war-] es-en ʽ[Երբ] Խեսնին ինձ [Խաթինա ուղարկեց], և նրա որ մեք հասանք....

4. Այստեղ և այնուհետ քֆ-հս-տե տառադարձումն ըստ նոր ընթերցման փոխարինված է քֆ-հս-տե տառադարձումամբ:
5. Բմազքի ⁰⁸ դետերմինատիվը վրիպակ է, պետք է լինի անձնանունների ⁰⁹ դետերմինատիվը:
6. Նոր տառադարձման համաձայն՝ ս-տե-եր:
7. Նոր տառադարձման համաձայն՝ և-ե-:
8. Նոր տառադարձման համաձայն՝ ա-քֆ-ե-ձ-ն-ի-յա:
9. He-es-ni-is<-ni-is<-wa-ma-kán անվան >-ni-is< վանկերի ատկայությունը գրչի սխալն է, մախորդ երկու վանկի կրկնորոշում:
10. Ստեֆանիինի մոտ՝ ր-:
11. Խժուստին համապատասխան պետք է լինի usk- քայի usk/uski՝ “հետևիր, հետամուտ եղիր” ձևը:
12. Ակնհայտորեն ս-ն ավելորդ նշան է, պետք է լինի ku-in e-ek-ta-ec:
13. Հնարավոր է e-ek-ta-an ha-ma-an-du՝ “բող կազմն ցանցով” տարբերակը:
14. Ճերակամակնան Ծիշտ ձևը պետք է լինի me-ma-l կամ me-ma-as՝ “ասում է” կամ “ասաց”:
15. Առավել հայտնի է ¹⁴KA¹E՝ “ստրիանդակ” տարբերակը:
16. Ստեֆանիինի մոտ կա մահ ME-K[A]?, շարունակությունը:
17. Ստեֆանիինի մոտ՝ zi-ik-ma-wa-za:
18. ՎԽԿապտոյանը սխալմամբ A-la-ni-ec անձնանունը վերագրել է Իսուվայի արքային: В.Хачатурян, стр. 51:
19. Ենթադրվում է, որ այս լակոնայում խոսքը Խոսիյայի մասին է, տես N.Tani, “Mecc about “Hebäi Conspiracy”” Altorientalische Forschungen 28, 2001, J, p.158:
20. Ուղիղ ձևը՝ GUDGU₄MAH-atar՝ “անասնազոմ, փարսխ”:
21. սապա- “անհանգստանալ” քայի միջին կրավորական ձև:
22. Արրազերեն տարբերակը՝ zaräta:
23. Հնարավոր է, խոսքը ¹⁶ziyal(a)-ի՝ “զամբյուղ” մասին է:
24. Արրայազն Խեխնին Թուղխալիյաս IV-ի հարազատ եղբայրն էր:
25. Խոսքն, հավանաբար, Խարենա քաղաքի կամ երկրի մասին է. որն ամենայն հավանականությամբ գտնվում էր Եփրատի ավազանում՝ ժամանակակից Արժուղան քնակավայրից մինչև Երզնկայի հովիտ ընկած տարածքում (В.Хачатурян, стр.51): Խարենա քաղաքի տեղադրության մասին անկա կարծիքները տես J.F.del Monte und J.Tischler, Die Orts- und Gewässernamen der hehätischen Texte, Wiesbaden, 1978, s.61:
26. Տախորայա քաղաքի տեղադրության մասին անկա կարծիքները տես J.F.del Monte und J.Tischler, նշվ. աշխ.:
27. ՎԽԿապտոյանն իր “Восточные провинции Хеттской империи” աշխատության մեջ առաջարկում է Ka-ma-ha-na ընթերցումը, ելրակացնելով, որ խոսքը Կամախոսայի, կամ Կոմախոսայի մասին տեղադրելով այն Խարենա երկրում, Իսուվայի անմիջական հարևանությամբ և նույնացնելով այն հետագայիս Կամախի/ Կոմազեննի հետ: Սակայն առավել վերջված է Ka-ra-ha-na ընթերցումը: Նույն մոտեցումն ունի Ռ.Ստեֆանիինը: Տես մահ Ա.Քոսյան, “ԱՄԻ-Կամախը խեթական դարաշրջանում”, Պատմա-Բանասիրական Հանդես, 2002, 3:

28. Հնարավոր է նաև “ապագայում” թարգմանությունը:
29. Հնարավոր է նաև “այնտեղ” թարգմանությունը:
30. Ընկ այլ կարծիքի համաձայն, UGULA LU^{read} - “նազարապետ” քաղց նույնպես վերաբերում է Լուսակկիին (N.Tani, p.158):
31. Խեթական արքունիքում հավանաբար գրադեցում էր GAL UGULA LJM^{read} - նազարապետի պաշտոնը:
32. Ն.Տանին ենթադրում է, որ Տասկոիլին նույնպես դավադիրների շարքում էր, թայց արտաքենապես արքայի կողմնակից էր, ավելին, աջակցում էր Խեանիին, որին էլ վերջինս հնարավոր է, որ խոստացել էր ծանր հետևակալիների հրամանատարի պաշտոնը՝ GAL.UKU.US; հնարավոր է, որ Տասկոիլին այս թայլը թելադրված էր Խեանիայի արքայի ձերբակալության զեպրում ճշմարտության բացահայտման վտանգով (N.Tani, p.159):
33. Հնարավոր է, որ խոսքը գնում է արքայազն (DUMU.LUGAL) Խուլպիլայի մասին, որը միաժամանակ արքայազորի պետն էր՝ GAL.MEŠEDI/
34. N.Tani, p.155; T.Bryce, *The Kingdom of the Hittites*, p.326-336
35. H.Klengel, *Die Hethiter und Bawa*, *Oriens Antiquus*, 7, 1968, s.74-76
36. Բիբլոլիսիական ամենամայն անվանականությունը Խարտալիլա III-ի կնոջ՝ Պուրուլիսիայի դուստրն էր, այլ ոչ թե քույրը: Հօգուտ այս ենթադրության է արտահայտվել Թ.վան դեմ Հոուսը, փաստարկելով, որ Էլիլիարումայի և Թուդիալիայի IV-ի միջև առկա ընկերակցությունը, և ավելի ճիշտ կլինի Բիբլոլիսիային դիտել որպես Պուրուլիսիայի դուստր, այլ ոչ թե քույր: (Th.van den Hout, *Der Ulmitesub-Vertrag Eine prosopographische Untersuchung*, Wiesbaden, 1995, p.126)
37. H.Klengel, s.71
38. N.Tani, p.158
39. J.de Roos, *Who was Kilušepa?*, *Jaarbericht van het Vooraziatisch-Egyptisch Geselschap*, “*Ex Oriente Lux*”, 29, p.75
40. T.Bryce, p.51
41. T.Bryce, p.294
42. Arisarruma անվան մեջ առանձնացվում է միայն Խարտա քաղց, իսկ Ehlisarruma-ն կազմված է eh(e)li՝ փրկել; փրկություն, ազատագրում, և Isarruma բառերից (E.Laroche, *Glossaire de la langue hittite*, *Revue hittite et assiriologique*, tome XXXIV, 1976, p.75)
43. М.Л.Ханжоган, *Хебат*, МНМ, том II, М, 1992стр. 586; E.Laroche, tome XXXV, 1977, p.218
44. H.Klengel, p.74-76
45. Г.М. Аветисян, *Государство Митанни*, стр.42-43
46. H.Klengel, p.71

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

CTH – E.Laroche, *Catologue des textes hittites*, Paris, 1971
 KBo – Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig and Berlin
 МНМ – Мифы Народов Мира, М, 1992

ՎԱՆԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐԻ ԵՎՎՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայերը Հայկական լեռնաշխարհում բնակվելիս են եղել վաղնջական ժամանակներից:

Մ.թ.ա. 1410թ. սկսած խեթական տեքստերի տվյալներով Արևմտյան Հայաստանում կազմավորվել է Հայասա պետությունը, որը գոյատևել է մինչև մ.թ.ա. 1165թ. Այն ընդգրկել է Հայկական Տավրոսի, Եփրատ գետի և Մև ծովի մինչև ընկած տարածքները:

Վաղ միջնադարի հայ պատմիչներին հասած ենագույն տեղեկությունները քաղցրատեղով խեթական տեքստերի հաղորդումների հետ՝ պարզվել է, որ դա Հայք պետական կազմավորումն է: Հայասա անունը պարունակում է հայ- արմատը, որի վրա խեթերը ավելացրել են իրենց լեզվի -ասա արատկանություն ցույց տվող ածանցը: Հայասայի անձնանունների և տեղանունների լեզվական ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանք կազմված են հայերենի աջնատներից ու ածանցներից:

Հայասա պետության (հայ. Հայք) կործանվելուց հետո բավական ժամանակ անց, ըստ Մովսես Խորենացու հասած տեղեկությունների, Արմենակը, որ Հայքի բազավորական տոհմի շատավյալն էր, մոտ մ.թ.ա. 1080թ. հայոց գահը տեղափոխում է Արարատյան դաշտ: Այնտեղ նրա հաջորդները մոտ երկու հարյուր տարվա ընթացքում աստիճանաբար հայոց պետականությունը ընդլայնում են՝ լեռնաշխարհի արևելյան հատվածի հայկական գավառները ընդգրկելով մեկ միասնական բազավորության կազմի մեջ:

Մ.թ.ա. 891թ. Արմավիրում Արամը գահ է բարձրանում: Այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի գավառները կամովին միանում են այդ բազավորությանը: Հայոց արքան, ուժեղացնելով բանակը, հարևան Մարաստանից ետ է գրավում այն գավառները, որոնք մարիքը, Տախթան նրա արքա դառնալը, խել էին Հայաստանից: Այնուհետև Արամը զենքն ուղղում է դեպի հարավ, Կորդուքի միջով հասնում Աարեստանի դաշտերը:

Այդ ժամանակ աստրական սեպագիր արձանագրություններով Հայկական լեռնաշխարհը, ի տարբերություն մախոբադ ժամանակահատվածի, հիշատակված է եզակի բով՝ «Ղահիրի երկիր» անունով: Դա Արամի տեղիժած Հայկական թագավորությունն էր, որն ընդգրկում էր այդ լեռնաշխարհը¹:

Այժմ անդադարառնանք որարտացիների հետ Արամի ժամանակ հայերի ամելությունն հարցին:

Որարտացիների բնիկ երկիրը՝ Ուրուատրին (տարբ. Ուրատրի, Ուրատրու) աստրական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է մ.թ.ա. 13-րդ դարից: Այն գտնվել է Վանա լճից շատ հարավ՝ Ատրեստանի սահմանների մոտ՝ արևմուտքից սահմանակցելով Կադմուխի (հայկ. Կադմես տուն), հյուսիսից Բոհոտան գետի հարավային ավազանի Խարխի, իսկ արևմուտքից Կոմանի և այլ երկրների հետ²:

Սկսած մ.թ.ա. 890թ. ոչ աստրական վավերագրերը և ոչ էլ այլ գրավոր աղբյուրներ չեն հիշատակում Ուրուատրին: Մ.թ.ա. 859թ. Ատրեստանի թագավոր Սալմանասար 3-րդը Վանի մահանգում իր գործով բախվում է Ուրալտու պետության քանակի հետ: Դա նշանակում է, որ աստրական արչավանքների պատճառով որարտացիներն իրենց բնիկ երկիր Ուրուատրին լքել էին և տեղափոխվել Վանի մահանգ³:

Մովսես Խորենացին հայոց Արամ թագավորի հարավային արչավանքի կապակցությամբ Կորդուքի առիթով նշում է, որ Ատրեստանն ամայի էր դարձրել այդ տարածքները⁴: Դա ևս հաստատում է այն իրողությունը, որ որարտացիները լքել էին Ուրուատրին (հայկ. Կորդուք) և տեղափոխվել Վանի մահանգ:

Հայ պատմիչն Ուրուատրիի տարածքը հիշատակում է Կորդուք անունով: Սակայն նույն հեղինակը Հայկ մահապետի Բաբելոնից կարծեցյալ գալու կապակցությամբ նույն տարածաշրջանն անվանում է Արարադի երկիր, որը սահմանակից էր Կադմես տուն (աստր. Կադմուխի) գավառին⁵:

Ի դեպ, «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության մեջ Նոյ մահապետի ամելությամբ հիշատակված է Արարադ լեռը: Նույնը կրկնվում է այդ նույն գրավոր հուշարձանի հունարեն օրինակում: Սակայն աստրական թարգմանության մեջ Արարադ լեռն անունը փոխարինված է Քարդու տերմինով: Մովսես Խորենացին այդ տարածաշրջանը մեր կոչում է Արարադ, մերք՝ Քարդու անունով Կորդուք, իսկ ատրեստանցիները՝ Ուրուատրի: Վերջինս Արարադ անունն է, որը նրանց հարմարեցրել են իրենց լեզվին ու գրությանը: Ըստ երևույթին Արարադ անվան մեջ առաջին երկու ա ծայնավորները ենչել են օ-ին մոտ տարբերակով: Իսկ սեպագրերում քանի որ այնտեղ օ գրելու հնարավորություն չկա և այն վերարտադրել կարող է միայն ու կամ այն պարունակող նշաններով, այդ անունը ր և դ բաղաձայնների դրափոխությամբ դարձել է Ուրուատ-

րի (հմմտ. Կաղմոխի և Կուղմոխի, Արմն և Ուրմն, Քարդու, որից՝ Կորդաք և այլն):

Կարծում ենք, Քսենոֆոնի «Անաքսախ» աշխատության մեջ հիշատակված կարդոխաների երկիրը մույն Կորդոքն է Խաքիսի, Կումանի, Կաղմոխի և այլ խառնական գավառները հետ, որի անունը քաղկսցած է կարդու- (սմմտ. Կարդու և Կորդոք) այնատից և ուրարտերենի -խի անջանցից:

Այն Հեյտդոտսի «Պատմության» մեջ հանդես է գալիս Մատիենա ձևով, որն, ինչպես հայտնի է, Միտաննի (Խուրբի) անունն է: Հույն պատմիչն այդ տարածաշրջանի քնակիչներին կոչել է մատիեններ (այսինքն՝ խարբիներ):

Անդրադատնուով Արամ բազավորի վերջ նշված հարավային ալշավանքին, պետք է ենթադրել, որ դրա պատճառներից մեկն էլ, գուցե, ուրարտացիների Ուրուատրիից Վանի մահանգ տեղափոխվելն էր, որը քնականաբար պետք է անհանգստացնելու հայոց արքային:

Ուրարտացիները, քնակություն հաստատելով Վանի մահանգում, մ.թ.ա. 860թ. տեղիում են պետություն, որը հասկանալի պատճառներով Հայաստանի և Ատրեստանի համար ձեռնտու չէր: Դրա համար էլ վերջիններս հենց այդ ժամանակվանից դաշնակցում են իրար հետ՝ զենքն ուղղելով Ուրարտուի դեմ:

Մ.թ.ա. 810թ. Ատրեստանում Ըամշի-Աղաղ 5-րդ արքայի մահից հետո երկրի գահը ժառանգում է նրա դեռահաս որդի Աղաղներարի 3-րդը, որի փոխարեն մ.թ.ա. 810-806թ. երկիրը ղեկավարում է նրա մայր Ըամմուրամարը (Ըամիբում):

Նշված թվականներին, ի տարբերություն դրանց մայախյոզ և հաջորդող ժամանակաշրջանների, Ատրեստանի և Ուրարտուի միջև ոչ մի ռազմական ընդհարման կամ թշնամական հարաբերությունների մասին սեպագիր աղբյուրներում որևէ փաստ չի հիշատակվում:

Մովսես Խորենացուն հասած հաղորդումների համաձայն Ըամիբում բազուկին որպես ամառանոց ընտրել էր Վանը և այնտեղ մի շարք կառույցներ էր կյանքի կոչել, ինչպես մաև այն հայտնի ջրանցքը, որը հայ պատմիչը նրա անունով է հիշատակում:

Մինչդեռ ուրարտական սեպագիր աղբյուրների հաղորդումներից և դրանց հիման վրա մասնագետների կատարած ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ մ.թ.ա. 810թ. Վանում Իշպուինի բազավորից հետո գահը ժառանգած նրա որդի Մեհուան կառուցել է մի շարք շինություններ, որոնց թվում՝ Վանի ջրանցքը, որը մա կոչել է իր անունով:

Այդուհանդերձ, կարծում ենք, հայ պատմիչին հասած նշված հաղորդումները չեն հակասում ուրարտական սեպագիր աղբյուրների վկայություններին, այլ դրանք լրացնում են միմյանց: Այդ ժամանակ աստուրա-ուրարտական փոխհարաբերությունները շատ լավ էին: Ըամմուրամար

թագուհին հյարքնկալվել է Վանում: Եւ թագմակալմանի օգնությոն է ցոյց տվել Մեմուային, ինչպես այլ շինությունների, այնպես էլ ջրանցքի կառուցման զործերում: Ուրարտուի թագավորի համար դա շատ ձեռնառու համագործակցություն պետք է լինել, քանի որ նա դրանցով Վանի թագավորության եզրերոյան երկրներն է դրել:

Դրա համար էլ Վանի ջրանցքը տարբեր վավերագրերում կարող էր հանդես գալ մերք Եամիդանի, մերք էի Մեմուայի անունով:

Եամիդան թագուհու նշված վարչագիծը քնակամարայ պետք է շատ վատ քնդունվեր Ասորեստանի արքունիքում: Այդ պատճառով էլ Ալյադներարի 3-րդը, որն արդեն մ.թ.ա. 806թ. հաստնացած էր երկիրը դեկավարելու համար, Մոպսես Խորենացու տվյալների համաձայն, որին նա գլխուր Եիմվառ անունով, իր զորախմբով գալիս է Վան և սպանում իր մորը՝ Եամիդանին⁸:

Մինչև մ.թ.ա. 810թ. ուրարտական թագավորներն արդեն նվաճել էին Արամի ստեղծած Հայկական թագավորության արևմտյան գավառներն ու մահանգները: Այն մնացել էր ամփոփված լեռնաշխարհի արևելյան շրջանների սահմաններում, որի մայրաքաղաքն է Արմավիրը⁹:

Այժմ անդրադառնամք մեկ այլ հարցի: Ինչպես պարզվել է, նշված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը քնակեցված էր հայերով, որը հաստատվում է ոչ միայն մ.թ.ա. 9-7-րդ դդ իրադարձությունների մասին Մոպսես Խորենացուն հասած տվյալների բյուրոյառությամբ ուրարտական սեպագիր աղբյուրների հատորումների հետ, այլ նաև տարածաշրջանի տեղանունների ուսումնասիրությամբ, որոնք կազմված են հայերենի նմանությամբ արձատներին ու անանցներին:

Այդ բոլորը, կարծում ենք, հիմնավորվում է նաև ուրարտական թագավորների Հայաստանում բոլորած սեպագիր արձանագրությունների այլ կարգի տվյալներով: Դրանց ճնշող մասի վերջում նրանք գետեղել են անների բանաձև, որով սպասում են կորոզող ցարդղներին այլ կարգի տվյալներով: Դրանց ճնշող մասի վերջում նրանք գետեղել են անների բանաձև, որով սպասում են կորոզող ցարդղներին աստվածների պատիժներով:

Ըստի որ տեղի քնակությունը ուրարտական արքաների համար օտար էր, նրանք միշտ վախեցել են, որ իրենց բոլոր զբաղի իւշարձանները կարող են վերացվել: Ի տարբերություն ուրարտացիների, Ասորեստանի և Խեթական պետության տիրակալները իրենց ներկրներում բոլոր արձանագրությունների վերջում չեն գետեղել անների բանաձև, որովհետև սեփական ժողովուրդը դրանք չէր կարող ոչնչացնել:

Ի դեպ, ուրարտական սեպագիր իւշարձանների փոքր մասն է, որտեղ այդպիսի բանաձև չկա: Օրինակ՝ Վանի կորոզները, որտեղ ուրարտացիներ էին քնակվում, կամ Արին-քերդի և այլ ամրոցների քարե կորոզները, որտեղ գետեղված մշտական էին կայագրերը:

Այժմ անդրադառնամք Վանի ջրանցքի վերջ նշված երկու անունների անշվող մեկ հարցի:

Մովսես Խորենացուն հասած հնագույն խաղորդումների համաձայն այդ ջրանցքը կառուցել է Ասորեստանի քաղաքի Շամիրամը, և պատմիչը դա կոչում է նրա անունով:

Իսկ որպարտական սեպագիր արձանագրություններից հայտնի է, որ այն կյանքի է կոչել Մեմուան: Այսպես, Կառեպանց քնակալայրում ջրանցքի հունին մտտ նշված տիրակալը թողել է մի վավերագիր, որտեղ գրված է. «Նաղի աստու գոյությունը Մեմուան՝ Իչպախնիի որդին, այս ջրանցքը անց կացրեց: Անունը Մեմուայի ջրանցք է»: Մի քանի տող հետո կարդում ենք. «Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով քարոյի, ով որևէ մեկին այս (գործերը) վերագրի, ով որիչ քան ասի՝ նս այս ջրանցքը անց կացրի, թող (նրան) ոչնչացնեն Նաղիին, Թեչքեբան, Շիվինին, քոյոր աստվածները»³⁴:

Կարելի է ենթադրել, որ տեղի իայ քնակչությունը դեռևս այդ ժամանակ գերադասել է կոչել դրա կառուցման գործում Վանի քաղապոխին մեծ օգնություն ցուցաբերած իրեն թշնամի Շամիրամի և ոչ Հայաստանը նվաճած օտար բռնակալ Մեմուայի անունով, ի հեճուկս վերջինի: Դրա համար էլ Մեմուան ասխալված է եղել հատուկ նշելու, որ ով ուրիշին վերագրի այդ գործը, թող աստվածները նրան ոչնչացնեն:

Ավելին, Վանի արքաները սովորաբար ամեն մի անբոց կամ շինություն կառուցելիս թողել են մեկ արձանագրություն: Բացառություն է կազմում Էրեբունին, որի մասին մի քանի գրավոր կոթող է հասել մեզ: Մակայն Մեմուան Վանի ջրանցքի անց կացման մասին գրել է տվել 11 արձանագրություն՝ դրանցում նշելով, որ այն իր անունով է կոչվում³⁵:

Թերկրիի վավերագրում մա նորից նշում է, թե ով այս գործը որիշին վերագրի, թող աստվածները նրան ոչնչացնեն: Ետյնը կրկնվում է Մարմախի գրավոր աղբյուրի մեջ³⁶:

Այս բոլորը հաստատում են, որ տեղի իայ քնակչությունը ջրանցքի կառուցումից հետո այն նախապատվություն է համարել կոչել իր համար ոչ քարեկան Շամիրամի և ոչ երկիրը նվաճած օտար բռնակալ Մեմուայի անունով:

Այժմ համառոտակի անդրադառնամք որպարտերեն լեզվի վրա հայերենի թողած ազդեցության մի քանի հաջեքի քննությանը:

Ռուսա 1-ինի (մ.թ.ա. 735-713թթ.) Մևանի ավագանի Շովինարի սեպագիր արձանագրության մեջ կարդում ենք.

«Նաղի աստու՝ տիղաջ գոյությունը Ռուսան՝ Մաբալոքի որդին՝ նս այս երկրները մեկ աղչալանքի ղմբացքում գրավեցի, դարձրի ստալակ՝ Աղախունի երկիրը, Ռեյլկուխի երկիրը, Լուրախի երկիրը, Արքուքինի երկիրը՝ չորս քաղապոխների ծովի այս կողմից (4 LUGAL³⁷ inani aptini

zainiani), Գուրբումելի երկիրը..., 19 բազավորների ծովի այն կողմի բարձր լեռներում (19 LUGAL^{11b} ilani aptini zainiani)»¹¹:

Ինչպես մասնագետները պարզել են, ծովից-ն հայ, ծով բառն է, ապ-տինի-ն նույն լեզվի ափ արմատն է՝ ուրարտերենի տինի «անուն» բա-ղադրիչով: Ի-Տանի-ն բարգձմանվում է «այս» իսկ իշանի-ն՝ «այն» (կողմ)» իմաստներով¹²:

Կարծում ենք, որ դրանք Մուշի բարբառի ինա «այն» և խա «այս» ցուցական դերանուններն են, որոնք ուրարտացի գրիչն օգտագործել է հսկասակ ընկալումով:

Այսպիսով, արարվում է, որ վերը նշված բառակապակցություններում արմատները հայերեն են, իսկ վերջավորությունները՝ ուրարտերենի քե-րականական մասնիկներ:

Կամ, Կանի զրանցքի կառուցման կապակցությամբ Մեմուայի Կա-տեպանց գյուղի արձանագրության մեջ առկա է հետևյալ արտահայ-տությունը՝ icse im pili agabi «ես այս զրանցքը կառուցեցի»¹³: Այն կրկնվում է Արտամնուի, Մճնկեղուի, Բերկլիի նյա բողած վավերագրե-րում¹⁴:

Կարծում ենք, ինչ-ն «ես» Մուշի բարբառի ինա «ես» անձնական դե-յանունն է, իսկ ինի-ն նույն բարբառի ինա «այն» ցուցականը: Պիլի և ա-գա-րի արմատները հետազոտողները նույնացնում են հայերենի համա-պատասխան պեղ-իլ «խորել» և ագ-ուցել «հազցնել» բառերի հետ¹⁵:

Չնայած մեզն բառակապակցությունները շատ չեն ուրարտերենում, սակայն քերված օրինակները վկայում են ուրարտերենի վրա հայերենի բողած խիստ ազդեցության մասին: Ավելին, հայերենից անձնական և ցուցական դերանունների ուրարտական լեզվում ճեքթափանցելը, որը հազվադեպ է պատահում, ցույց են տալիս, որ տեղի հայերի լեզուն շատ մեծ հետևանքներ է բերել եկվորների խոսակցական և գրավոր բառա-պաշարում:

Վերջ քերված որոշ փաստեր մաև վկայում են, որ դեռևս ուրարտացի-ների ժամանակ հայերենում բարբառային տարբերակումներ են եղել:

Ուրարտացիների եկվոր լինելու մասին է վկայում ևս մեկ այլ փաստ: Արգիշտի 1-ինը (մ.թ.ա. 786-764թթ.) մ.թ.ա. 782թ. հայոց Անուշավան տի-րակալի օրոք նվաճում է Էտլումին՝ Այրարատը և վերջ դնում հայկական բազավորությանը: Ավերելով Արմավիր մայրաքաղաքը՝ դրա տեղում կառուցում է նոր քերք և իր անունով կոչում Արգիշտիխինիլը:

Երևան քնակավայրի մոտ մա կյանքի է կոչում մի ամբողջ և անվանում էրեքունի (այժմ Արինքեր): Տեղում հայտնաբերված այդ աղքատի վավե-րագրում կարդում ենք.

«Խաչի աստու մեծությամբ Արզիշտին՝ Մանուայի որդին, այս փառավոր ամբողջ կառուցեց, ամուրը դրեց Էր(ն)բունինի: Բիսայնիի երկրին (քող լինի) հզորություն, բշնամի (երկրներին)՝ հնազանդություն»¹⁸:

Այս տեքստը կրկնվում է նշված թագավորի քողած մի քանի այլ գրավոր հուշարձաններում:

Նախ, ակնառու է, որ ուրարտական թագավորը նվաճել է բշնամի երկիր: Նա Լտխունին է՝ Այրարատը: Բերդը կառուցելով՝ նա ձգտել է այդ օտար երկիրը հնազանդ սրահել:

Ինչպես ժամանակին նկատել են մի շարք մասնագետներ, հայկական տեղանունների վ թաղածայնը ուրարտերենում ծածախ հնչել է ք: Իսկ Երևան տեղանվան ա ձայնավորը, կարծում ենք, օ-ին մտա արտասանություն է ունեցել, դրա համար էլ սեպագիր տեքստերում այն դարձել է ո, քանի որ, ինչպես վերը նշվեց, այդ գրության մեջ օ արտահայտելու հնարավորություն չկա: Ավելին, սեպագրերը ե և է ձայնավորներ տարբերակելու հնարավորություն չունեն: Արդյունքում Երևանը դարձել է Էրնյունի, քայց ոչ հակատակը:

Ի դեպ, Երևան ամուրը կազմված է հայ. երեվ-ալ քայանիմքից և -ան ածանցից, որ առկա է միջնադարի շատ այլ տեղանունների մեջ (հմմտ. Երևան՝ մենաստան Այրակիլի գավառում, Երևանս՝ գյուղ Էրզրումում, Երևան՝ դաշտ Վանանդում, նաև Երևի ձևով և այլն):

Լտխունին՝ Այրարատը նվաճելուց մի քանի տարի անց Արզիշտին իր տարեգրության մեջ նշում է. «Արզիշտին ասում է՝ լսեցի, (որ) Լտխունիականը Արդինի քաղաքի աշտխոժի-ն Իրիան: Նույն տարում նորից (՝) զնվորմելու հավաքեցի...: Արշավանքի գնացի դեպի Լտխունի երկիր, նվաճեցի Էրիախի երկիրը, Կատարգա երկիրը, հասա մինչև Իշկիզուրու երկիրը ...»¹⁹:

Գ.Ա. Մելիքիչվիլին աշտխոժի-ն համարում է հայ, աստված քառի մախատիսյ (հմմտ. քարք. աստուժ)²⁰:

Նա իրքիլանի քառաձևը կապում է ուրարտ. Իր(ս)-«առևանգել» քայարձառի հետ: Նյանում -նի մասնիկը ուրարտ. քայի անցյալ ժամանակի եյուսդ դեմքի ցուցիչ է: Այդ դեմքին է վերաբերում նաև -լ(ի)- թաղադրիլը: Այդուհանդերձ այդ քայաձևը մնում է որոշ չափով անընկալելի: Սակայն երե մեքը հետևենք վերը քննված տեքստի բովանդակությանը և վերը նշված մեկնաբանություններին, այն, կարծում ենք, հնարավոր է մեկնաբանել հետևյալ ձևով:

Արզիշտին, լսելով, որ ոմն Լտխունի Արդինի քաղաքի աստխոժիի արձանը հափշտակել է, դրա համար նա նույն տարում ձեռնարկում է արշավանք դեպի Լտխունի երկիրը այն նու խելու նպատակով: Սակայն, ինչպես տեքստն է վկայում, դա նրան չի հաջողվում:

Կարելի է ենթադրել, որ Արզիշտին մախքան այդ իրողությունը, նվաճելով Լտխունի երկիրը, այնտեղից հայերի գլխավոր աստուժ արձանը,

որին մա հիշատակում է աշտիածի ձևով, առևանգել է և տարել ուրարտական կրոնական կենտրոն Արդինի քաղաք: Սակայն մի քանի տարի անց ոմն էտիուցի՝ այրաբառցի, գնում, զորանում է այդ արձանն ու տանում էտիունի:

Ի դեպ, հնադարում բշմամի երկրի գլխավոր աստծու արձանը առևանգելով նվաճողը աշխատում է գրկել դրանով դիմացիններին նրանց իսկ աստծու օժանդակությունից:

Վերը բերված քոյոր փաստերը նույնպես հաստատում են, որ ուրարտացիները դրսից էին ներթափանցել Հայաստան ու Վանի մահամզում ստեղծել պետություն:

VALERY KHACHATRYAN

NEW FACTS ABOUT THE UNTRUSIVE CHARACTER OF THE URARTIANS

In the article several facts about the untrusive character of the Urartians are given. These are –the existence of Armenian words in the Urartian language, the name of Van Canal – Shamiram, given by the Armenians still in the time of the reign of Menua, the fact of the abduction of the Armenians' supreme god's statue by the Urartian King Argishti I and its re-abduction from the city of Ardini by the Etiunians etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ.Ն. Խաչատրյան, «Հայաստանը մ.թ.ա. 15-7-րդ դդ», Երևան, 1998, էջ 22-26, 34-46: Տես նաև «Արձանավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Խ. XXI, Երևան, 2003թ., էջ 173-183:
2. Н.В. Арутюнян, "Бивальники", Ереван, 1970, стр. 12-21.
3. Վ.Ն. Խաչատրյան, նույնի, էջ 119:
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, Ժդ:
5. Նույնի I, Ժ:
6. Վ.Ն. Խաչատրյան, նույնի, էջ 110-111:
7. Մովսես Խորենացի, նույնի, I, Ժգ:
8. Մովսես Խորենացի, նույնի, I, Ժե:
9. Н.В. Арутюнян, "Бивальники", стр. 119-279.
10. Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (= КУКН), Ереван, 2001, 60, стк. 1-3 и стк. 7-11.
11. Н.В. Арутюнян, КУКН, 63, 64, 74.
12. Н.В. Арутюнян, КУКН, 78.
13. Н.В. Арутюнян, КУКН, 389, стк. 1-13.
14. Н.В. Арутюнян, КУКН, стр. 448 и 450.
15. Н.В. Арутюнян, КУКН, 60, стк. 10.
16. Н.В. Арутюнян, КУКН, 61, 62, 64.

17. Н.В. Арутюнян, КУКН, стр. 458.
18. Н.В. Арутюнян, КУКН, 197, 198.
19. Н.В. Арутюнян, КУКН, 17,3, V, стк. 41-49.
20. Г.А. Меликшвили, "Переднеазиатский сборник", III, Москва, 1979, стр. 171-176.

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԹԱՀՄԱՍՊ II-Ի ՀԱՅԵՐԻՆ ՌԻՂՂՎԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ ԵՒ 1730-31ԹԹ. ՆՐԱ ԱՐԸԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԵՐԵՒԱՆ

XVIII դարի 20-ական թվականներին Արևելյան Հայաստանի շրջանները անջատվում են անկում ապրող ու աֆղանների ապստամբության հետևանքով փրկված Իրանի Սեֆյան պետությունից, և չնայած Սյունիքում ու Արցախում տեղական ուժերի համատեղ մաղթությանը, հետզհետե ամբողջովին անցնում Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Այդ շրջանները թուրքական իշխանության տակ են մնում մինչև 1733 - 35թթ. Նաղիր խանի գործերի կողմից նրանց վերագրվում են ոչ անց ընդգրկումը նրա տեղիում իրանական պետության կազմում: Ուստի պատահական չէ, որ խիստ սակավաթիվ են վերոհիշյալ ժամանակահատվածում հրապարակված պարսկալեզու հրովարտակները և գերակշռում են բյուրքալեզու հրամանագրերը: Այնուամենայնիվ այդ սակավաթիվ հրովարտակները, որոնցից շուրջ 7-ը հրապարակվել են Սեֆյան վերջին գահակալներից Թահմասպ II-ի կողմից և պահվում են Երևանի Մատենադարանում, որպես պատմական սկզբնաղբյուրներ հետաքրքրության արժանի վավերագրեր են:

Թահմասպ Միրզային, որը Սեֆյան շահ Մուլթան Հուսեյնի երրորդ որդին էր, Սալահանի պաշարման ընթացքում հաջողվում է աֆղանական զորքերի օղակը ճեղքելով հեռանալ Ղազվին, որտեղ իր հոր գահընկեց լինելուց հետո, 1722թ. նոյեմբերի 10-ին իրեն շահ է հռչակում, նաև իր ամուսնով խուսրա է հնչեցնում, դրամներ հատում և հրամանագրեր հրապարակում: Թեև նրա իշխանությունը ավելի շատ ճակատ էր, այն տևում է շուրջ 10 տարի¹: Աֆղանները նրան Ղազվինից քշում են Թավրիզ, այնտեղից էլ թուրքերը նրան ստիպում են հեռանալ դեպի Արդեբիլ, այնուհետև՝ Ռեյի ճանապարհով՝ դեպի Մազանդարան: 1724թ. Ռուսաստանի ու Օսմանյան Թուրքիայի հետ պայմանագրեր կնքելուց հետո շահ Թահմասպ II-ի իշխանության տակ է մնում Արդեբիլը, Մուլթանիեն ու Ղազվինը ընդգրկող մի փոքր շրջան²:

Հահ Թահմասայ II-ին ժամանակակիցները բնութագրում են որպես բույր, վախկոտ և զինեմով անձնավորություն: Նրա բնութագրի համար խիստ բնորոշիչ է այն փաստը, որ 1722թ. աֆղանների կողմից Սպահանի պաշարման ընթացքում իր հայր շահ Մուլթան Հուսեյնի կողմից տղարկված լինելով Քաշանի ու Ղազվինի կողմերը օգնական ուժեր հավաքագրելու՝ նա զինաբրտքի ու զվարճանքների է տրվում:

Թահմասայ II-ի վերջ նշված 7 նրավարտակներից ժամանակային առումով առաջինը հրապարակվել է դեռևս նախքան նրա շահ նշանակումը 1720թ. և տրված է Հավուց Թառի Ս. Ամենափրկիչ (Ղրզրլվանքի) իրադատոր քանանայի խնդրանքով ի պաշտպանություն այդ վանքի Ղրզրլվանք, Մանկուս և Կոխք գյուղերում ունեցած կալվածքների, որանց նկատմամբ ոտնձգություններ էլ կատարյուն ոճն Աղյի Բեկ: Անբահիշյալ գյուղերը Ս. Երևանցին նիշատակում է Հավուց Թառի մյքատու գյուղերի քվում⁶: Հրավարտակում նշվող գյուղերում գտնվող կալվածքների ժառանգական պատկանելությունը Հավուց Թառի վարդապետներին կատարված են եղել դեռևս 1489թ. շարի արձանագրությամբ⁷, որոնց ավելացվել են նաև 1526թ. կազմված կալվածագրով նրան փակֆ արված նոր կալվածքներ⁸: Ամենայն հավանականությամբ այդ կալվածքների նկատմամբ Հավուց Թառի վանքի վարդապետների իրավունքները հաստատելու նպատակով է կազմված եղել նաև մեկ այլ պարսկալեզու վավերագիր, որն իրենից ներկայացնում է մի անբավակիր համախոտական հաստատված 50 անձանց վկայություններով, ըստ որի՝ Կոխք, Ազաթակ, Ղրզրլվանք (Հավուց Թառ) գյուղերը պատկանում են Հավուց Թառի Ս. Ամենափրկիչ վանքին⁹:

1724թ. Աստվածատուր կարողիկոսը Թահմասայ II-ի հրավերով գնում է նրա մոտ¹⁰: Նրանց միջև տեղի ունեցած հանդիպման արդյունքում կարողիկոսը ձեռք է բերում հայության համար մեծ նշանակություն ունեցող մի հրամանագիր՝ ուղղված ընդդեմ հայերի մահմեդականացման: Շիաների մոտ Սեֆյան ժամանակաշրջանում լայն կիրառություն ունեւր այսպես կոչված Իմամ Ջաֆարի օրենքը, ըստ որի քրիստոնյա հայ հպատակների մահմեդականացած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքը ամբողջովին գրավելու և նրանց զրկելու ժառանգությունից: Այս առթիվ բազմաթիվ բողոքագրերի և դատական պայքանների ստվար գործեր կան պահպանված: Այդ գործերի ուսումնասիրությունից պարզվում է, որ մասնակի րացատություններով, ժառանգության խնդրում միշտ էլ առաջնությունը տրվում էր մահմեդականություն ընդունած ժառանգներին¹¹: Անբահիշյալ հրամանագրով¹² արգելվում է նոր մահմեդականացած հայերին աչաքիմի հավակնություններ ունենալ այլ հայերի ունեցվածքի նկատմամբ և կարգադրում մի շարք դատական ու վարչական առյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն հավակնել իրենց ազգականների ունեցված-

քին: Այս հրովարտակր զորմադրվելու դեպքում փաստորեն որոշ չափով պետք է դժվարացներ մահմեդականացած հայերի համար իրենց հետևյալը և մտն ազգականների ունեցվածքին տեք դատնալը: Այն իր ուղղվածությամբ հակադրվում է նախորդ դարերում հայերի մահմեդականացումը Իմամ Ջաֆարի օրենքի կիրառության շնորհիվ խրախուսող հրամանագրերին ու ֆարվաներին, վկայում է այն մասին, որ Իրանի քչմամլինների դեմ իր պայքարում Մեֆյան գահակալը ջանում էր ախրաչահել հայերին ու ստանալ նրանց օժանդակությունը:

Պատմական սկզբնաղբյուրներում տեղեկություններ են պահպանվել շահ Քահմասալ II-ի և Դավիթ Բեկի միջև դաշնակցային հարաբերությունների ու համագործակցության մասին: Դավաճումը բուրքական զորքերի դեմ պայքարում 1726 - 1727թթ. ժողովրդական շարժման կրամ հաջողություններից և Մեղրիի ետ գրավումից հետո շահ Քահմասալ II-ը ճանաչում է հայոց ազատագրական պայքարի ղեկավար Դավիթ Բեկին Դավաճնի ինքնալույսն իշխան ու նրան է հանձնում Ատրպատականի իրանական զինված ուժերի ղեկավարությունը¹³: Նաև ողբարկում է Դավիթ Բեկին մի դրոշ, մի արտավական մտոյգ և քազավորական հրովարտակով հաստատում նրա իշխանական ու դրամ հատելու իրավունքները¹⁴:

Դարաբաղի պատմության հետ կապված որոշակի հետաքրքրություն է ներկայացնում կաթողիկոսական դիվանի 2ր բոթապահակի վավ. 173-ը, սրը որոշ ուղղագրական սխալներով XIX դարի վերջում կազմված մի պատճեն է: Ըստ նրա, շահ Քահմասալ II-ը Դարաբաղի Վարանդա մահալի մեկլուքությունը 1730թ.¹⁵ շնորհում է Մելիք Մուհամմադ Հուսեյնին: Ամենայն հավանականությամբ այս հրովարտակր տրված է եղել Գեղարքունիքից Վարանդա ներգաղթած Մելիք Շահնազարի որդի Մելիք Հուսեյնին, ուր իր հոր մահից հետո վարել է այնտեղի մելիքի պաշտոնը մինչև իր մահը (1736թ.)¹⁶: Իսկ Մուհամմադ ամունը կամ ավելագույն է բնագրի պատճեն կազմելու ընթացքում¹⁷ տեքստի սխալ ընթերցման արդյունքում կամ մահմեդական միջավայրում նա այդ անունը ևս կրել է:

Միայն իր մեծ զորավար ու երկրի փաստացի ղեկավար Նադիր խանի ջանքերի շնորհիվ է Շահ Քահմասալ II-ին հաջողվում հաղթել ու Իրանի կենտրոնական շրջանները ազատագրել աֆղաններից: Նադիր խանը աֆղանների դեմ հաղթանակներ տանելով մտնում է Սպահան և 1729թ. նոյեմբերի 16-ին Քահմասալ II-ին վերահաստատում Մեֆյանների գահին:

Իր զորավար Նադիրի ռազմական հաջողությունները բուրքերի ու աֆղանների դեմ մարտերում Քահմասալ II-ին դրոշում են ձեռնամուխ լինել Օսմանյան Թուրքիայի գերիշխանության տակ մնացած Ատրպատականի հյուսիսային շրջանների, Արևելյան Հայաստանի ու Վրաստա-


նի գրավման գործին այն ժամանակ, երբ Նադիրը զբաղված էր Խորասանում ծագած ապստամբության ճնշմամբ:

Հայոթյան նկատմամբ պարսից զանակալի սիրաչափող քաղաքակաճությունը էլ ավելի հստակ երևում է նրա հաջորդ 5 հրովարտակնիքում, որոնք հրապարակվել են նրա 1731թ. դեպի Երևան կատարած անհաջող արշավանքի ընթացքում: Այս արշավանքի նկարագրությունը բերևս իր ասարոյուն լինելու պատճառով կամ քաղաքական ինչ-ինչ նկատառումներով քացակայում է հայ պատմագիրներ Արրահամ Երևանցու, Հակոբ Շամախեցու և այլոց աշխատություններում ու ինչատակարաններում: Հատկանշական է, որ այդ արշավանքի ընթացքում շահի եևտ համդիպում ունեցած (այս ակնհայտ է դառնում շահի ստորև նշվող հրովարտակնիքի քովամղակությունից) Արրահամ Երևանցին, այդ ժամանակաշրջանի պատմությունը շարադրելիս որևէ կերպ չի հիշատակում այդ ուսգմական ձեռնարկման մասին, այլ ընդամենը արձանագրում է Սարահանի մոտ բուրքերի կողմից շահի զորքերի կրած պարտության փաստը,¹⁸ որը հաջորդել է վերոհիշյալ արշավանքին: Չնայած այդ ժամանակաշրջանի ընդգրկմանը վերոհիշյալ իրողության նկարագրությունը քացակայում է նաև Հակոբ Շամախեցու աշխատության մեջ¹⁹:

Այդ դեպքերի շարադրանքը սակայն քավակամին ընդարձակ տեղ է զբաղեցնում պարսից պատմագիրներ Մուհամմադ Բյազիմի ու Միրզա Մեհդի Խան Աստարաբադիի պատմական գործերում²⁰:

Ըստ Միրզա Մեհդի Խան Աստարաբադիի պատմական աշխատությունների, այդ արշավանքը սկսվում է 1730թ. դեկտեմբերին, երբ շահական զորքերը Թահմասպ II-ի գլխավորությամբ Սպահանից շարժվում են դեպի Թավրիզ, որտեղ նրան դիմավորում են տեղի իշխանավորները, այնտեխուն զորք համալրվում է Ատրպատականի զորագնդերով և անցնում Արասք գետը: Ըահ Թահմասպ II-ի զորքը, որը ըստ Միրզա Մեհդի Խանի ունի 18000 մարտիկներ, շարժվում է դեպի Երևան, որն այդ ժամանակ բուրքական իշխանության ներկայացուցիչ Ալի Փաշայի կայսզորի պաշտպանության տակ էր²¹: Ալի Փաշան իր զորքով ընդատաջ է նկնում իրանական զորքին՝ նրա առաջխաղացումը կանգնեցնելու: Առաջին ընդհարումը իրանական ու բուրքական զորքերի միջև տեղի է ունենում Երևանից 3 փարսախ (-18կմ) հեռու՝ Գառնի գետի ափին²² և ավարտվում շահի հաղթանակով, որը տեղ է դառնում Երևանի քեղդում ապաստանած բուրքական զորքի զինամթերքին: Ըահական զորքերը կանգ են առնում Երևանի մոտակայքում՝ Բանաքեռում, սրաշարում քերդը և գրոհներ ձեռնարկում, որոնք սակայն ասպարդում են լինում: Պաշարումը տևում է 18 օր, որից հետո իրանական զորքերը պարենի ճանապարհը փակված տեսնելով, նաև լսելով բուրքական նոր զորքերի դեպի Երևան ու Իրանի կենտրոնական մահանգներ շարժվելու մասին հեռանում են:





Վաթ. 333

Նույն դեպքերի ընթացքը քիչ ձևափոխված կերպով շարադրված է Մուհամմադ Զյազիվի «Ժարդիխ-ե պլամ-սաու-ե Նադեթի» աշխատությունում: Ըստ այդ երկի, Թահմասպ II-ի գործի Զախուր Սա'դի (Երևանի) նահանգը մտնելու ժամանակ Երևանի քեյրը գտնվում էր Մուսրուփի փաշայի կայսագործի պաշտպանության ներքո: Իսկ կողմերի առաջին ընդհարման ժամանակ բարձրական զորքը գլխավորում էր Թեյմուր Փաշան, որը Ալի Փաշայի համձնարարությամբ Կարսից դեպի Երևան էր

շարժվում: Պատմագիրը նշում է, որ մարտը տեղի է ունենում գետի ափին, առանց հիշատակելու այդ գետի անունը: Մակայն ինչպես և նախորդ հեղինակը, Մուհամմադ Ջյազինը վկայում է իրանական զորքի տարած հաղթանակի մասին: Ըստ նրա, Թահմասպ II-ը կազմակերպում է նաև գլխերային գրոհ Կարսի մոտակայքում գտնվող Ալի Փաշայի զորքի վրա, որից հետո լուրեր ստացած լինելով Ահմեդ Փաշայի գլխավորած բողոքական մեկ այլ զորամիավորման Բաղդադից դեպի Քերմանշահ ու Համադան շարժվելու մասին, իրանական կողմը հարկադրված է լինում առանց Երևանի թերթը զրավելու նա նահանջել²¹:

Երևանի նահանգից հեռամաղով՝ շահը պարտություն է կրում Ահմեդ վաչայի զորքերից և հարկադրված է լինում հաշտություն կնքել, որի պայմանքում նորից Թուրքիային են անցնում Համադանը, Քերմանշահն ու Թավրիզը և Անդրկովկասի բոլոր այն տարածքները, որոնք Սեֆյան շրջանում Իրանի տիրապետության տակ էին գտնվում²²: Այսինքն, նա ոչ միայն չի կարողանում նվաճել Թուրքիայի տիրապետության տակ անցած Անդրկովկասյան տարածքները, այլև կորցնում է նաև որոշ տարածքներ (Թավրիզը, Քերմանշահն ու Համադանը), որոնք նախքան այդ ձեռնարկումը Նադիր Խանը նա էր զրավել Օսմանյան Թուրքիայից: Ըստ Թահմասպ II-ի պարտությունները բողոքական զորքերից և նրա դեմ ծագած դժգոհությունները հարմար առիթ են ընձեռնում Նադիր խանին, նրան զահրեկեց ամելու համար, որից հետո Նադիրը զահ է քարծրացնում Թահմասպի 8-ամսյա որդուն՝ Աբաս III-ին (1732-1736թթ.) վերջինիս առնելով իր խնամակալության տակ: Մակայն խնամակալի դերը ևս չի զոհացնում Նադիր խանին և նա ինքն է զահ քարծրացնում 1736թ. մարտի 8-ին²³: Որից հետո Թահմասպ II-ն ու նրա որդի Աբաս III-ը Նադիր շահի կողմից բանտարկվում են, իսկ 1740թ. Թահմասպի մեկ այլ որդու՝ Իսմայիլի հետ մահապատժի են ենթարկվում²⁴:

Երևանի պաշարման ընթացքում շահ Թահմասպ II-ը անկասկած խանդիպում է ունեցել Աբրահամ Երևանցի կաթողիկոսի հետ, որը նրանից ստացել է իր կաթողիկոսությունը հաստատող և մի քանի այլ հրովարտակներ, որոնք հրապարակված են հիջրայի 1143թ. չափալ ամսին, որը համապատասխանում է 1731թ. ապրիլի 9-ից մայիսի 7-ը ընկած ժամանակահատվածին: Աբրահամ Երևանցու կաթողիկոսական իրավունքները հաստատող հրովարտակում տեղ են գտել հետևյալ խոսքերը.

«Երբ օրերս Նօրին քարերախտ [աղբայական] Մեծության շքախումբը աշխարհականների օրհնյալ Ալլահի ու սուրբ իմամների առաջնորդի²⁵ ուղորձածությամբ, բոլ Ալլահը նրանց օրհնի, հաղթանակով ու հաջողությամբ մտալ Չուխուր Սա՛ադի օլթան²⁶, քրիստոնյա մեծանուն ու փառաբանյալ անձանց մեջ գավելի, Ուշիլիխայի Աբրահամ կաթողիկոսը այնտեղի բոլոր քահանաների, այլ միաբանների ու հայ բնակչության հետ հնուց ի վեր մարգարեի հիմնած շնքի հանդեպ իրենց ունեցած

նվիրվածությանն, գաղափարական միասնությանն ու հնազանդությանը համապատասխան, իրենց կարգով մեծ քաղաքավարությանը եկան արքայական նմուշին ընդառաջ՝ արժանանալով շահական ռոտանտոլին համբուրելու պատվին»²⁹։

Նույն ժամանակ են ձևոք բերվել նաև 3 այլ հրովարտակները, որոնցից մեկը³⁰ վերահաստատում է նախկին շահերի կողմից Էջմիածնին տրված բոլոր հրամանագրերը։ Սա իր բովանդակությամբ նման չէ ոչ նախորդ ոչ էլ հետագա շրջանների շահական հրամանագրերին, քանի որ վերահաստատում է ինչպես նրանում նշվում է Էջմիածնի «վանքի ու նրա համայնքի գործերին վերաբերող և նրանց մոտ իդան դրսխտարմակ շահերի բոլոր *ռայամները, հարճերն ու ֆեյմանները*, այնպես ինչպես որ նրանք հրապարակվել են»։ Երևանի Մատենադարանում կան բազում հրովարտակներ, որոնք վերահաստատում են նախկին շահերի հրապարակած մեկ կամ մի քանի հրամանագրերը, սակայն նրանցում անհրաժեշտաբար ամբողջովին կամ հակիրճ կերպով վերաշարադրված են դրանց բովանդակությունները։ Իսկ տվյալ հրովարտակը փաստորեն ավելի շուտ քաղաքական քայլ էր՝ արված շահի կողմից հայերին գլխավորող կաթողիկոսին սիրաշահելու նպատակով։

Նույն շարքի հաջորդ հրովարտակը³¹ նրանհանգում է Չուխուր Սա'ադի կառավարչին արգելել նոր մահմեդականացած հայերին ժառանգության վեճ սկսել իրենց հարազատների հետ։ Սա իր բովանդակությամբ մոտ լինելով վերջ նշված 1724թ. հրովարտակին՝ բոլորովին արգելում է Իմամ Ջաֆարի օրենքի կիրառությունը հայերի ժառանգական խնդիրներում։ Սա նախադեպը չունեցող մի հրամանագիր է, որին համանման բովանդակությամբ հրովարտակներ հրապարակվել են իրանահայ համայնքների առնչությամբ միայն շատ ավելի ուշ՝ Ղաչար շահերի օրոք, երբ Արևելյան Հայաստանի մինչև Արաքսը ընկած շրջանները արդեն անցել էին Ռուսաստանի տիրապետության տակ³²։

Հետաքրքրության է արժանի նույն ամսաթվով հրապարակված հաջորդ հրովարտակը³³, որով հայտնվում է Էջմիածնի Սայր Աթոռը այբուսանի հովանավորության տակ առնելու մասին ու հրահանգում նրա միաբաններին աղոթել պարսից գործերի հարթման և համար։

Այսպիսով, Մեֆյան վերջին գահակալներից շահ Ֆահեմաալ II-ին վերաբերող վերոհիշյալ վավերագրերն ու պատմական հիշատակությունները սերտորեն առնչվում են հայ ժողովրդի պատմության հարցերի հետ, պատմական բարձրարժեք սկզբնաղբյուրներ են, որոնք նոր մանրամասներով լրացնում են նրա գահակալման շրջանում տեղի ունեցած դեպքերի ընթացքը։ Ստորև բարձրամասբար ներկայացնում ենք վերոհիշյալ վավերագրերից երեքը։

Մեխյան շահ Թահմասպ II-ի կնիքը. [Հանուն ամենաբարեգութ Ալլահ-ի, վիլայեթի շահի³⁴ ժառա Թահմասպ II 1138]

Աշխաբահասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Քրիստոնյա մեծահոգևների առաջնորդ Ուլքիխասյի Աստվածատուր կարողվեալը Նորին սրբազնագույն Մեծաբյանը տեղեկացրեց, որ հայերից որոշ անձիք արժամանալով մահմեդականությունն ընդունելու պատվին, իրենց հայրերի մյուս զավակների ու ազգականների հետ, ս-յունք հայ են, վեճ են սկսում ու ամօրինականություններ գործելով՝ նեղություն պատճառում նրանց: Երե նրանցից որևէ մեկը մահանում է, նրա ունեցվածքն ու մուրքերը³⁵ խլում, տամում են: Այդ պատճառով հայ վաճառականների մեծ մասը Ռումի և Խարանգի վիլայեթներում³⁶ մնալով, իր հայրենիք չի վերադառնում: Խնդրեց որպեսզի արքայական ոսդամով կարգադրվի որպեսզի այսուհետև զադյո-օլ-խալամներից³⁷ ոչ ոք այդ խնդիրների շուրջ հայերի հետ վեճ չսկսի ու ամօրինականություններ չգործի: Ուստի կարգադրեցինք որպեսզի այն զադյո-օլ-խալամները, ս-յունք հայերի հետ վեճ ու կռիվ կունենան, մինչև որ իրենց պահանջը բարձրագույն պալատում՝ յուրաքանչյուր մանալի³⁸ քեկլարքեկերի³⁹, հաքիմների⁴⁰ կամ ամիրի⁴¹ ներկայությամբ շարձվ չհաստատեն, հայերին չնեղեն: Մինչև որ տվյալ մահալի քյադխուդաների⁴², հաքիմի ու հեղինակավոր անձանց կնիքներով հաստատված գրություն ու հավաստի վկայական քարձրագույն պալատ յողարվեն, որի հիման վրա արքայական ոսդամ⁴³ կերպարակվի, չպետք է ինքնազուխ կերպով իրենց պահանջած գումարը ստանան: Երե վիլայեթների⁴⁴ քեկլարքեկերը, հաքիմներն ու ամիրները վերոհիշյալ հրամանին հակառակ վարվեն, վերոհիշյալ կաթողիկոսը պետք է տեղեկացնի և նրանք պատասխանատվության կկանչվեն: Այս բոլ ընդունեն որպես խիստ կարգադրություն, այս ուղղությամբ ջանք չխնայեն և հրամանին չհակառակվեն: Բարձրագույն դիվանի⁴⁵ մեծահոգի մեծ մասքովիները⁴⁶ բոլ վերոհիշյալ պարտավոր *ոսդամը* հարստուղ մատյաններում գրանցեն ու ամեն տարի նոր *ոսդամ* չպահանջեն:

Գրվեց 1136թ. ջումադի առաջին ամսին⁴⁷:

Հակատակ կողմում

Նորին Մեծաբյան անմիջական հրամանով, կնիք. [Չկա աստված քացի Ալլահից Հաքիմ Քերիմ]:

գրեց, կնիք. [Հանուն ամենաբարեգութ Ալլահի]; ճիշտ է, կնիք. [Չկա աստված քացի ամենագոր Ալլահից, աստու՞ ժառա Մտհամմադ]; բող գործադրեն, կնիք. [Ով ամենագոր Ալլահ, իմամ Հուսեյն]:

Շահ (քննված է) ռադամն է, գոր ընդ արգայի Աստվածատուր կաթողիկոսին տուեալ է, զի տաճկացեալն յազգականաց իրեանց գրան ինչ մի՞ պահանջեցէն: օճկ:՝⁴⁸

ՄՄ, Կաթողիկոսական դիվան, քրթ. 1գ, վավ. 334, քնագիր, գիր՝ նասրա՛վիդ

Շահ Թահմասպ II-ի կնիքը [Վիլայեթի շահի ծառա Թահմասպ II, 1139]

Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Քրիստոնյա հոգևորականների մեջ լավագույն և Հիսուսի ծառաների առաջնորդ Ուշթիխայի Աբրահամ կաթողիկոսի ու վերահիշյալ վանքի քահանաների, միաբանների ու մյուս սպասավորների հանդեպ ունեցած շահական ողորմածությանը վանքի ու նրա համայնքի գործերին վերաբերող և նրանց մոտ եղած դրոշմատարակ շահերի, թող Բարձրյալը նրանց հոգիները լուսավորի, կողմից հրապարակված քոլտր ռադամները,⁴⁹ հոգեներն⁵⁰ ու ֆերմանները⁵¹, այնպես ինչպես որ նրանք հրապարակվել են Մեր արքայական ստորագրությանը հաստատեցինք և կարգադրեցինք՝ որպեսզի որևէ մեկը նրանց իմաստից ու բովանդակությունից չշեղվի: Բարձրագույն դիվանի մեծառոգի մտաբովիները թող այս ռադամ - շնորհագիրը հարատևող մատյաններում գրանցեն, վստփոխություններից զերծ պահեն, ամեն տարի նոր *ռադամ* չպահանջեն և այն իրենց պարտականությունը համարեն:

[Գրվեց] 1143թ. շավալ ամսին:

Հակառակ կողմում

Նորին մեծության ամենիջական մերկայությանը. կնիք. [Հանուն ամենարարեգութ Ալլահի, 1142]:

ինչ ռադամ որ ունիմք շահթահմազի տված ռադամնէ՛⁵¹:

ՄՄ, կաթողիկոսական դիվան, քրթ. 1գ, վավ. 333, քնագիր մեծ. 14.5 x 25սմ, գիր՝ շիքասաթ

Շահ Թահմասպ II-ի կնիքը [Վիլայեթի շահի ծառա Թահմասպ II, 1139]

Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Ուշթիխայի հայության հանդեպ ունեցած արքայական մեծ ողորմածությանը կարգադրվում է, որ վերահիշյալ ժողովրդից ով, որ արժանանում է իսլամն ընդունելու պատվին, թող դրա հիման վրա իր ազգական քրիստոնյա մահացած ամժանց ժառանգների հետ ժառանգության վեճ

չակսի ու իր քրիստոնյա ազգականներին չմեղի: Չուխուր Սա'ադի բարձրաստիճան մեծ ամիր ալ-ուժարա⁵² բնկարբեկն ու ամիլները թող գրվածը կարգադրության համարելով, թալլ շտան, որ որևէ մեկը վերոնկիշյալ ժառանգության պատճառով հիշյալ ժողովրդին նեղություն պատճառի: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1143թ. շափալ ամսին:

Հակառակ կողմում

Նորին Մեծության ամմիլական կարգադրությամբ, կնիք. [Հանուն ամնարարեզուր Ալլահի, 1139]:

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 330

مهر شاه ظهاسب ثانی [بسم الله الرحمن الرحيم بنده شاه ولایت ظهاسب

ثانی ۱۱۴۵]

حکم جهانستطاع شد آنکه عمده الامیان المسيحيه اسواتانور خلیفه
اویچ کلیسیا بعضی ادمس رسانید که جمعی از جماعت ارمنی که بشرف
اسلام مشرف میشوند یا پدر و اولاد و اقوام خود که ارمنی اند دعای و
شلتاقات نموده مزاحمت میرسانند و هر یک از ایشان که فوت میشوند
اموال و املاک، اورا کشیده میبرند و بدانعلت اکثر تجار ارامنه در ولایت روم
و فرنگ، مانده بوطن خود نمی آیند و استعدا- نموده که حسابالرقم اشرف
مقرر گردد که من بعد احدی از جدیدالاسلامان در باب مراتب مزبور با ارامنه
اندعای ننموده شلتاق ننمایند. بنابراین مقرر فرمودیم که جدیدالاسلامانی
که با ارامنه دعوی و گفتگویی داشته باشند مادام که دعوی خود را در درگاه
معلی ثابت نباید در حضور بیگلربیگی و حکام یا عامل هر محل مثبت
شرعی نرسانند متعرض احوال ارامنه نشوند و بعد از آنکه اندعای خود را
مثبت و لزوم شرعی برسانند مادام که نوشته و وثیقه که در آن باب نوشته
شده و بمهر کدخداهان و حاکم و معتبرین هر محل رسیده باشد تا بدرگاه
معلی نفرستند و رقم اشرف برطبق آن صادر نشود خودسر مرتکب بیازیافت
وجه دعوی خود نگردند و هر گاه بیگلربیگیان و حکام و عمال ولایات
بخلاف امر مزبور معمول دارند و تخلف نمایند خلیفه مشارالیه عرض نماید
که بیازخواستی که لازم باشد بعمل آید و درینباب قدغن و اهتمام تمام لازم
دانسته از فرموده تخلف نورزند. مستوفیان عظام کرام دیوان اعلی رقم
سطح مزبور را در دفاتر خلوه ثبت نمایند و هر ساله رقم مجدد طلب
ندارند.

تحریراً فی شهر جمادی الاول سنة ۱۱۴۶.

ظهر

بالمشافه العلیه العالیه مهر: (لا اله الا الله الحکیم الکریم)

نوشته شد مهر [بسم الله الرحمن الرحيم]
صح مهر [لا اله الا الله الملك عبد محمد]
تقدید نمایند مهر [به تعالی یا امام حسین]

۱۱۳۳، کاپرته [کاپرته] ۳۳۳

مهر شاه طهماسب ثانی [بنده شاه ولایت طهماسب ثانی ۱۱۳۳]

حکم جهانمطاع شد آنکه بنا بر وفور اشتیاق خسروانی در باره آرامنه
اوج کلیسیا مقرر فرمودیم که هر یک از جماعت مذکوره که بشرف اسلام
مشرف گردد دعوی ارث از متوفیان مسیحی اقوام خود نموده بدان علت
متعرض و مزاحم خویشان مسیحی خود نگردد. عالیجناب امیرالامراء العظام
بیگنریگی و عمال لشکری چخورسعد حسب المسطور مقرر دانسته نگذارند
که احدی بعلمت ارث مذکور مزاحمت باحوال طایفه مذکوره نرساند و در
عهده شناسد.

تحریر آ فی شهر شوال سنه ۱۱۳۳.

ظهور

بالمشافهه العلیه العالیه مهر [بسم الله الرحمن الرحيم ۱۱۳۳]

۱۱۳۳، کاپرته [کاپرته] ۳۳۴

مهر شاه طهماسب ثانی [بنده شاه ولایت طهماسب ثانی ۱۱۳۳]

حکم جهانمطاع شد آنکه بنا بر شفقت شاهانه در باره زبده الرهبانین
المسیحیه عمده القسوسین العیسویه ابراهیم خلیفه اوج کلیسیا و کشیشان و
رهبانان و نصاری معبد مزبور کس ارقام و احکام و فرامین لازمه سلاطین
جنت مکین انارده تعالی براهینهم را که در باب امور اوج کلیسیا و جماعت
مزبوره بطریق که شرف صدور یافته در دست دارند بامضای همایون
ممضی و متنقذ و مقرر فرمودیم که احدی از مضمون و مدلول آن عدول و
انحراف نورزد مستوفیان عظام کرام دیوان اعلی رقم این عطیه در رفتار
خلود ثبت نموده از شایبه تغییر و تبدیل مسون محروس شناسند و هر ساله
رقم مجدد طلب نکلند و در عهده شناسند.

شوال المعکم سنه ۱۱۳۳.

ظهور

بالمشافهه العلیه العالیه مهر [بسم الله الرحمن الرحيم ۱۱۳۳]

THE DECREES OF TAHMASB II ADDRESSED TO ARMENIANS
AND HIS CAMPAIGN IN THE PROVINCE OF YEREVAN
IN 1730-1731

Seven decrees issued by Shah Tahmasb II Safavid are kept in the Archive of Catholicosate of Yerevan Matenadaran. Those decrees, dated by the years 1720, 1724 and 1731, are important historical sources of the history of Armenian people, Iran and their political relations in that period. Author discusses the information contained in those decrees in comparison with the reports of other (Persian and Armenian) sources. Through a comprehensive study of the data survived in those sources author represents new details referring to the military campaign organized by Shah Tahmasb II against Turkish troops in the territory of the province of Yerevan in 1730-1731, the relations between the shah and the catholicos and other outstanding representatives of Armenian people. The abovementioned decrees witness of shah's special benevolence towards Armenian population and promise them of a better state under the rule of shah, especially as regards their religion, because they stop the encouragement of adoption of Islam. Those decrees on the whole were issued with the intention to gain the favour of local Armenian population in Persia's struggle against the Turkish predominance in the territory of Eastern Armenia and particularly during the military campaign organized by Shah Tahmasb II in the Yerevan Province. The article represents three of those decrees with their Armenian translations.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Երևանի պետական համալսարանի պատմության և հայագիտության ֆակուլտետի թանգարանի հավաքածու, 1977, հ. 134-135:
2. Երևանի պետական համալսարանի պատմության և հայագիտության ֆակուլտետի թանգարանի հավաքածու, 1977, հ. 134-135:
3. Ա. Տեր-Ավետիսյան, Նաղիթ շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեյցու, Երևան, 1940, էջ 36):
4. Երևանի պետական համալսարանի պատմության և հայագիտության ֆակուլտետի թանգարանի հավաքածու, 1977, հ. 134-135:
5. Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի պատմությունը ՄԱ, կաթողիկոսական դիվան, քոչ. 1գ, վավ. 328:
6. Սիմեոն Երևանցի, Պատմություն Կաթարապատ, 1873, էջ 276:
7. ՄԱ, կաթողիկոսական դիվան, քոչ. 1գ, վավ. 927 (տե՛ս Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. կալվածագրեր, պրակ I, էջ 82):
8. ՄԱ, կաթողիկոսական դիվան, քոչ. 1գ, վավ. 880, պատճեն, (տե՛ս տե՛ս Հ. Փափազյան, կալվածագրեր, էջ 105):
9. ՄԱ, կաթողիկոսական դիվան, քոչ. 1գ, վավ. 919:
10. Արշակունի Երևանցի, Պատմություն պատերազմացն 1721-1736, հրատ. Հ. Մահալ Գեղեցիկ, 1977, էջ 31, 98:
11. Հ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Երևան 1956, N 3, էջ 87-88:

12. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քրթ. 1գ, վավ. 330:
13. Л. Х. Тер-Мкртчян, Армения под властью Надир Шаха, Москва, 1963, с. 43.
14. Ընտիր պատմություն Դաիր Բեգին և պատերազմաց հայրեն իւրախանո, որք նդեն ընդդէն բուրբաց ի մերում ժամանակի, այն է յամի տնանն 1722, Վարդաբշտատ, 1871, էջ 58-59:
15. Կամ 1731թ. (արտոճեննի գրութեան ոչ հատակ լինելը բուլ յի տալիս վաստահարար պնդել):
16. Բաճիկի, Խամասայի մելիքությունները, Երկնրի ժողովածու, հ. X, Երևան, 1964, էջ 187: Նաև Դիվանի հայ վիճակագրության, պրակ V, Արցախ, Երևան, 1982, էջ 149:
17. Վավերագրի հակառակ կողմում արված է հետևյալ ոտսերնն մակագրությունը. "копия от грамоты Тахмасп Шаха":
18. Արցախի Երևանցի, նշվ. այն, էջ 140:
19. Ա. Տեր-Ավետիսյան, Նաղիթ շահի արշավանքները (ըստ Հակոբ Ըամախեցու, Երևան, 1940, էջ 36):
20. محمد كاظم، نامه عالم آرای نادری، دفتر اول، مسکو-۱۷۶۰، ص ۳۱۷-۳۱۸، جهانگشای نادری، تالیف میرزا مهدی خان آسترآبادی، تهران، ۱۳۷۷، ص ۱۷۶-۱۷۹
21. میرزا مهدی خان آسترآبادی، جهانگشای نادری، ص ۱۷۰
22. میرزا مهدی خان آسترآبادی، ذرة نادری، ۱۲۶۶، ص ۱۱۸
23. محمد كاظم، نامه عالم آرای نادری، دفتر اول، مسکو-۱۷۶۰، ص ۳۱۷-۳۱۸
24. Л. Х. Тер-Мкртчян, ук. соч., с. 46-47.
25. راجر سپهری، ایران عصر صفوی، تهران، ۱۳۸۰، ص ۲۵۴
26. تاریخ ایران، دوره صفویان [پژوهش از دانشگاه کمبریج]، تهران، ۱۳۸۰، ص ۱۷۴
27. Խոսքը Ալիի մասին է:
28. Огюта - Բասագի նշանակում է «երկնք»: Հեղաշնն այնպիսի տիրությունը, որանց որպես անպատ տրվում էին քուվոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան զինվորականությանը՝ ամիրներին: Огюта ստացող ամիրները պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ քանակությամբ զորք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Огюտայի ամիրները իրավունք ունեին առանձին դրոշակ ունենալ և հանդեսավոր կրթելի ու զբաղաչանքի ժամանակ հատուկ խմբուկներով թմրկահարել:
29. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քրթ. 1գ, վավ. 331:
30. ՄՄ, կաթողիկոսական դիվանի, քրթ. 1գ, վավ. 334:
31. ՄՄ, կաթողիկոսական դիվանի, քրթ. 1գ, վավ. 333
32. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քրթ. 4, վավ. 144,
33. ՄՄ, կաթողիկոսական դիվան, քրթ. 1գ, վավ. 87Ի:
34. Վիլյախի շահ անվանում էին Ալիին:
35. Մուր - անվականություն, տիրույթ, ժառանգարար ստացած կամ զրամով գնած ու անվականություն դարձրած հող կամ այլ անշարժ կազված:
36. Նկատի ունի Օսմանյան Թուրքիայի ու Եվրոպայի երկրները:
37. Ջաղիղ օլ-խյամ - Նոր մանձնդականություն ընդունած: Այսպես էին կոչվում այն քրիստոնյաներն ու այլադավանները, որոնք հաստի տարիքում հավատավորն էին լինում և մանձնդականություն ընդունում:

38. Մահալ - Շրթան, գավառ:
39. Բնկչաքրեկ - Սեֆյան Իրանի սահմանամերձ մահաճգնեքում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին օրեկչաքրեկեր:
40. Հաքիմ - Գավառապետ, քաղաքացիական դատավոր
41. Ամիլ - Դրանք այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցանքերն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի:
42. Աշաղխոդա - Այսպես էին կոչվում գյուղական ավազները: Մակայն չպետք է հասկանալ միայն գյուղի «պեղջավազ»-ի, «տանուտերի» կամ «տեսի» իմաստով. մի գյուղում կարող էին լինել մի քանի քաղխոդաներ, դրանք փաստորեն գյուղի ավազների կամ «աղսախկալների» (պարսկ. - «ոչխնձիղ») խտրողի անգամներն էին, որոնք այդ ամումը ստացել էին երբևէ գյուղի տանուտեք երսժ ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ մրանք շարունակում էին կոչվել քաղխոդաներ ու ժամանակցում էին ավազների խորհրդին:
43. Ռադամ - Պաշտոնական գրություն, քազավորական երովարտակ:
44. Վիլայեթ - երկիր, երկրամաս, մահաճգ
45. Դիվան - Պետական գործերի ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ մրա քարծրագույն օրգանի իմաստով:
46. Մուսթովֆի - Այսպես էին կոչվում պետության, արքունիքի, ինչպես նաև կրոնական հաստատությունների ֆինանսական, հաշվապահական գործերի գլխավոր կառավարիչները: Մուսթովֆիներ կային խոշոր մահաճգային վարչական կենտրոններում, որոնք վերահսկում ու կառավարում էին տվյալ մահաճգի կամ երկրամասի հաշվապահական գործերը:
47. 1724թ. հունվարի 27-ից փետրվարի 26-ը:
48. Հրովարտակի հակառակ կողմում արված հայերեն մակագրություն է:
49. Ռադամ - Պաշտոնական գրություն, քազավորական հրովարտակ:
50. Հաքմ - Հրամանագիր, հրաման, քարծր կարգադրություն:
51. Ֆերման - Հրաման, քազավորական հրովարտակ:
52. Հրովարտակի հակառակ կողմում երկու պարբերություն գրված, ջնջված է, որից հետո այս մակագրությունն է արվել:
53. Ամիր ալ-ումարա - Այսպես էին կոչվում քարծրագույն գորահրամանատարները, մահաճգապետներն ու կուսակալները:

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ

1. eia ardiše, pē' eiardiše

Ուրարտեիեն *eia* բառը Մ. Սալվինին նախկինում ընթերցել է որպես մի անբողոքություն.

manini ⁴Haldi bedini ⁴Haldinani KĀ bedini ⁴İspuinie ⁴Menua ulguše manini ⁴İspuini ⁴Menua alsuiše eia ardiši²

Իսկ հետագայում, հաշվի առնելով Ի.Մ. Դյակոնովի այդ առթիվ արված առարկությունը², *eia*-ն մա ղխտարկել է որպես *ardiše* բառի բաղկացուցիչ մաս՝ *eiardiše*.

⁴Haldi bedini ⁴Haldinani KĀ bidini manini ulguše pišuše alsuiše eiardiše arni ušmaše³

Ի դեպ հատկանշական է, որ *eiardiše* ընթերցման հավաստիության վերաբերյալ Ի.Մ. Դյակոնովը կողմից ստորև քերված մեկնաբանությունը, կարծում եմք, հարկ եղած չափով արդարացում չի գտնում ուրարտական խցնտիկ տեքստերում: Տվյալ դեպքում մա նկատի ունի կարմիրբլուրի KYKH, 424, տողեր 4-5 արձանագրության ⁴Haldina ⁴KĀ bidini manini ulguše pišuše alsuiše eia ardiše arni ušmaše տեքստը, որի հիման վրա սակավ հավանական է համարում *eia* չաղկապի հիշատակությունը նախադասության երեք անդամների թվարկումից հետո, ըստ որում վերջինից շատ ավելի առաջ:

Սակայն այստեղ Ի.Մ. Դյակոնովը ամոռնում է, որ նույնը չի կարելի ասել, օրինակ, Արզիշտի II-ի Չելեքի-բաղիի KYKH, 406 արձանագրության երեսի կողմի 8-12 տողերի տեքստի մասին, որ սակա է *aruše ekuše(?)* *İspuiše ulguše pišuše alsuiše eia ardiše arni ušmaše*: Հետևաբար, ակնառու է, որ այստեղ *eia* չաղկապը արդեն հիշատակվում է նախադասության ոչ *pē* ելքեր, այլ վեց անդամների թվարկումից հետո: Այդ դեպքում, ըստ երևույթին, հավանական է, որ այստեղ *eia*-ն համղես է գալիս ոչ *pē* «և», այլ իղենտիկ «նաև», «ինչպես նաև» իմաստներով⁴: Մյուս կող-

Տիզ կարծում ենք, որ այս մեկնարկները նույնքան հավանական է թվում վերոհիշյալ KYKH, 424 արձանագրության իդեմտիկ տեքստի համար:

Դեռ ավելին, մեզան կարգի կասկածներ էյա շաղկապի հավաստիության վերաբերյալ այդև չեն ծագում Մեմուայի Շուշանցում հայտնաբերված KYKH, 141 երկվեզվյան արձանագրության ուրարտական տեքստում, որ Տեզ հետաքրքրող էյա շաղկապով շարահյուսված են ընդամենը երկու քառ՝ *alsaiši-š* և *aršiši-š*՝ *alsaiši* էյա *aršiši*՝: Ըստ դրան հաշվի առնելով էյա շաղկապի մեզ հայտնի մյուս տարրերակները, ինքնին հարց է ծագում, քն այդտե՞ք այն նույնական չէ *es-*ի հետ, երև տվյալ դեպքում ենթադրենք դրավտիության առկայություն էյա-*es*ի:

Եվ, վերջապես, սրանց հետ մենք հակված ենք ինչ-որ ընդհանրություն տեսնելու մակ սոսկ վերջեյա Ռուսա II-ի Այաճիսի նոր արձանագրության շնորհիվ գիտական շրջամտության մեջ դրված էյա շաղկապը, որը նույն ձևով հանդիպում է մակ խորրիներենում և մեկնարկված «երե», «կամ» խնատով՝: Ի դեպ ըստ ամենայնի ակնատու է, որ Ռուսա II-ի Ջվարքնոցի արձանագրության անեծքի քանաձևի *es* շաղկապին նույն բազավորի Այաճիսի իդեմտիկ արձանագրության անեծքի քանաձևում փոխարինում է *es-*ն: Ահա այդ տեքստերը.

... *alsiše uliše tiulie iēše zadubi ... es* ^{KUR} *biainiše es* ^{KUR} *lulviniše* ⁶ *Ḫaldiše* ⁶ *IM-še* ⁶ *UTU-ni-še* ⁶ *DINGIR* ^{MES} *-še mei tini mei armuzi mei zilbi qiuṛaidi kulietuni* (KYKH, 421, տողեր 37-47):

... *alsiše tiulie iēše zadubi es* ^{KUR} *biainiše es* ^{KUR} *lulviniše ...* ⁶ *Ḫaldiše* ⁶ *IM-še* ⁶ *UTU-ni-še* ⁶ *DINGIR* ^{MES} *-še mani tini armuzi ...* ⁶ *UTU-ni piēi ... suie ululie* (Ayanis I, էջ 258, սեկցիա VIII, տողեր 6-11):

Ի դեպ քոլորովին էլ սրատահական չէ, որ տվյալ դեպքում մեզ հետաքրքրող էյա-յի տարրերակները՝ *e'a-es*-ն, *es*-ն և *es*-ը որպես շաղկապ հիշատակվում են մակ ուրարտական մի շարք այլ արձանագրություններում: Ահա դրանք.

1. ... *ini É* ⁶ *Menuaše* ⁶ *Ḫpuiniḫiniše* ⁶ *šidištuni* *baḫusie e'a É.GAL* *šidištuni* (KYKH, 83, տողեր 2-5):

2. ⁶ *Menuaše* ⁶ *Ḫpuiniḫiniše* *ini pulusi kuguni e'a* ⁶ *Ḫaldinili* *KÁ* *šidištuali* (KYKH, 101, երեսի կողմ, տողեր 2-6):

3. ⁶ *Argištiše* *ali alsiše tinini tuli es* *ini DUB-te pitulie* (KYKH, 409, տողեր 13-15):

4. ⁶ *Ḫaldiše* *EN-še* *ḫuputuḫi gunuše eue ipšuše šuini...* (KYKH, 406, երեսի կողմ, տողեր 31-34):

5. ... ⁶ *Ḫaldiše* *eue* *DINGIR* ^{MES} *-aše* *parie esini telani* (KYKH, 478, տողեր 8-10):

6. ... ini susio ²Rusafe ²Argistihiniše šidištumi eue ⁶Haldinili KĀ badusio ²Rusahina ²šiduru-kai kušumi (Ayanis I, էջ 254, սեկցիա I, տողեր 1-2):

7. ¹⁵iani inukie É.GAL-a eue URU²šid aliili inukie É.GAL-a zadubi (Ayanis I, էջ 258, սեկցիա VIII, տողեր 1-2):

8. ²Rusafe ²Argistihiniše ali ⁶Haldiš-me ušhanumi šututuhi gunuše eue ipušše (Ayanis I, էջ 258, սեկցիա VII, տողեր 5-6):

Մյուս կողմից, eja ardiše (բայց ոչ ejarđiše) ընթերցման հավաստիությանը հստակ վկայում է ուրարտական արձանագրություններում հիշյալ ինքնուրույն բառերի անկերպ առկայության փաստը: Ըստ որում նրանցից eja-ն մեկնարանվում է «և», «եւ», «իմպպես մաս», իսկ ardiše-ն՝ «ուժ», «իշխանություն», «կարգադրություն» իմաստներով: Ինչ վերաբերում է ejarđiše վիճելի ընթերցմանը, ապա անհնար է նրա օգտին կոտակել որևէ փոքրիչատն համոզիչ իմաստավորում: Հետևաբար, պատահական չէ, որ eja ardiše ընթերցումը միահամուռ ընդունում են ուրարտական արձանագրությունների դիվանների հեղինակներ Գ.Ա. Մելլիքշվիլին⁷, Ֆ.Վ. Քյունիգը⁸, Ն.Վ. Հաբուսյունյանը⁹ և այլոք:

2. amanigidi, pē² amani igidi

Այանիսի նորահայտ արձանագրության մեջ Մ. Սալվինինն amanigidi-ի փոխարեն առաջարկում է amani igidi ընթերցումը¹⁰:

Նախ նշենք, որ amani բառ իբրև հայտնի է զետությանը, այնինչ կարծեցյալ igidi-ն, հասկանալի պատճառներով, չի հանդիպում ուրարտական սեպագիր աղբյուրներում: Ինչ վերաբերում է վաղուց առաջարկված amanigidi ընթերցմանը¹¹, ապա առկա նյութի հոգատար քննարկման դեպքում, կարծում ենք, հազիվ թե կարող է կասկած հայտնել, որ դա պարզապես amani բառն է՝ մատուցված ուղևորական -gi(e)di (տարբերակ՝ i(e)di) իտլովածով: Հմմտ. ^(IR/URU)dadi և ^(UR/URU)dudigiedi (KYKH, 520, երեսի կողմ, տող 11), ^{KUR}ebani և ^{KUR}ebanigidi (KYKH, 241A, տող 5), ^{KUR}šelikuni և ^{KUR}šelikunigidi (KYKH, 241F, տող 7), ^{KUR}šteluani և ^{KUR}šteluanigidi (KYKH, 241F, տող 14) և այլն:

Ի դեպ, կարծում ենք, որ սեպագիր աղբյուրների վաղուց հայտնի սույն a-ma-ni-i-gi-di գրության մեջ Մ. Սալվինինին, ըստ երևույթի, բյուրի-մացության մեջ է զգել սուկ գրաֆիկ նշանակություն ունեցող հավնյալ i-ի առկայությունը amani-ից ծնող՝ արձանագրության տվյալ տողի ազատ մնացած հատվածը զբաղեցնելու համար:

Մյուս կողմից հատկանշական է, որ tar-gi-i-ni-li բառի դեպքում և, այդ նույն միտումով, Այանիսի նորահայտ մի արձանագրության երատարակության ժամանակ¹² Մ. Սալվինինին ի սկզբանե չփոքեցրել է targi-

ից հետո անկա նախկյալ i-ն, որի պատճառով targinili բառը (amani igidi նման) նա արհեստականորեն տրոհել է targi և inili բաղադրիչների (նմա., սակայն, այդ բառի targini և targinili եզակի և հոգնակի գրությունները):

Ելնմբ մաս, որ հետագայում Այանիսի հիշյալ արձանագրության վերահրատարակության պահին իր նախկին targi inili-ն Մ. Մալվինին արդեն մատուցել է targinili ձևով: Ի դեպ որպես այդ «մոր» ընթերցման փաստարկ ժամոթագրության մեջ նա մատնացույց է արել, որ սեպագիր տեքստում targinili արուսինիլի բառակապակցության մեջ targinili որոշիչը հոգնակի թվով համաձայնեցված է արուսինիլի որոշյալին¹³: Այնուհետև, որոշ ուշացումով, Ռուսա III-ի Գյավելեքի նոր արձանագրության հրատարակության առիթով Մ. Մալվինին նաև հղում է արել այն մասին, որ Այանիսի նոր արձանագրության targinili-ն հանդիսանում է ուրարտական այլ արձանագրությունների DAN.NU¹⁴ շումերական գաղափարագրի համապատասխանությունը¹⁵:

Այստեղ մեզ մնում է սակավագնեղ, որ targinili նոր ընթերցումը և այն հաստատող վերոհիշյալ երկու փաստարկները Մ. Մալվինին, առանց որևէ հղում անելու, տասաջխարեն ընդօրինակել է տողերիս հերիմակի ուրարտական արձանագրությունների նոր դիվանի՝ KYKH, 412b տեքստից և նրան հղված 5-րդ ժամոթագրությունից: Ինչ վերաբերյալ է հիշյալ փաստերի, այսպես կոչված, սեփականաշնորհման մատուցմանը տարբեր ժամանակներում և տարանջատված եղանակով, ապա դժվար չէ կռահել, որ այն միտում ունի թյուրիմացության մեջ զգնելու սակավատեղյակ ընթերցողին: Ի դեպ կենելով հիշյալ, այդօրինակ մի շարք այլ ակնառու փաստերից, բացառված չէ, որ amaniցի մոր ընթերցումը ևս հետագայում ամենկատ ունեմա սեփականաշնորհման մույն ճակատագիրը:

Փաստական նյութը առավել տեսանելի և փաստարկները համոզիչ դարձնելու նպատակով այժմ ստորև հատվածաբաբ քերում ենք amani և amaniցի ընթերցումներից հիշատակող ուրարտական տեքստերը.

1. ... aluki amani žuga bari ... ali taše amani bidi ...¹⁶ urbekaše mašani tišni amani ... (KYKH, 193, տողեր 6-7,9-10):
2. ... aluki amani <žuga bari ... (KYKH, 194, տող 6):
3. aše ...¹⁷ Haldini amaniցի լիիե Haldini <badusini iu urzie> 'ahulini KI¹⁸-a quldinini mei ešimeši elmuše <manunie> (KYKH, 415, տողեր 8, 10-11):
4. aše ...¹⁹ Haldini amaniցի լիիե Haldini badusini iu urzie 'ahulini qiuza quldinini mei ešimeši elmuše manuni (Ayanis I, էջ 257, սեկցիա IV, տողեր 7-9):

Ի դեպ որաբարեքնն առնոսի քաղը մասնագիտական գրականության մեջ առաջարկվել է նույնացնել հայերեն «աման»-ի¹⁵ (ամիս) հետ: Այս քաղը սովորաբար հիշատակվում է որաբարեական պաշտամունքային տեքստերում կենդանիների զոհաբերությունների ժամանակ և KYKH, 193 արձանագրության մեջ հանդես է գալիս մերթ որպես «ընծայի աման» (tate amani), մերթ էլ զոհաբերված կենդանու «սրտի աման» (tšni amani), իսկ Արժևկի և Այանիսի արձանագրություններում որպես «ծաղ-դի ասոնո աման» (⁴Haldini amani):

3. egudi badi, քե՞ gudi GÚB(?)-di կամ gudinadi

Ինդրոտ առարկա սնպագիր տեքստերի ընթերցումներում և մեկնաբանություններում որաբարեական մեջ տեղ են գտել զգալի տարակարծություններ:

Գ.Ա. Մելիքիչվիլու մոտ, օլթնակ, այդ առթիվ հանդիպում է հետևյալ ընթերցումը.

... a-lu-še ha-lu-li-e gu-di GÚB-di a-tu-li-i-e (BDM, 1953, № 2, էջ 295, № 96, տող 3. նույնի YKH, 96, տող 3):

Ֆ.Վ. Զյոնիցը փաստորեն առաջարկում է նույն ընթերցումը, սակայն GÚB զանախարագրի հավաստիությանը վերաբերում է կասկածամտորեն.

... a-lu-še ha-lu-li-e gu-di GÚB(?)-di a-tu-li-i-e (HchI, հատոր II, 76, III):

Ի դեպ gu-di GÚB(?)-di ընթերցումը ընդունում է նաև Ի.Մ. Գյակոնովը՝ միաժամանակ առաջարկելով դրա բարգձանությունը. «դեպի աջ (և) դեպի ձախ», «աջից և ձախից», քառացի՝ «աջին (և) ձախին» (YPI, էջ 48):

Իսկ Ն.Վ. Հարությունյանի մոտ Գ.Ա. Մելիքիչվիլու, Ֆ.Վ. Զյոնիցի և Ի.Մ. Գյակոնովի հետևեցուցի փոխարեն առաջարկված է հետևի egudi ընթերցումը (KYKH, 122, տող 3):

Իսկ, վերջապես, իրենտիկ տեքստերի մեզ հետաքրքրող բառերի ընթերցումներում շատ ավելի մեծ տարակարծություններ ունի Մ. Սալվինին: Ի դեպ քացի մնացած կարևոր հանգամանքներից, որոնք կարծարձվեն ստորև, նրա մոտ վերոհիշյալ egudi (կամ՝ gudi) GÚB(?)-di երկու բառերի փոխարեն առաջարկված է ընդամենը մեկ քառ՝ gudinadi.

²) ... ²Ru-sa-a-še a-li me-i a-i-še-i ha-lu-li-e gu-di-na-di KÚ-ni ... (Ayaniš I, էջ 257, IV սեկցիա, տող 10):

μ) ... ⁴Hal-di-na-a KÁ i-še-er-ji-ni ha-lu-li ú-i-la-ti-ni a-lu-še-e gu-di-na-di a-tú-li-e... (Ayaniš I, էջ 258, V սեկցիա, տողեր 10-11):

Իսկ այժմ անդադարեցված վերոհիշյալ ընթերցումների հավաստիությանը, կարծում ենք, անհրաժեշտություն է ծագում պարզելու երկու

խնդիր, ա) իս-կս-նի e-ցո-ւի, թե՞ իս-կս-նի-ե ցո-ւի և բ) ցո-ւի (կամ՝ e-ցո-ւի), GÜB(?)-ւի, ցո-ւի-ռա-ւի, թե՞ բոլորովին այլ նշանակում:

Առաջարկված խնդիրներից առաջինում, համոզված ենք, որ միայնապատկերայինը պետք է առաջին իս-կս-նի e-ցո-ւի ընթերցմանը, քանի որ ոչ մի հիմք չկա eցո-ւի-ի սկզբի e-ն վերագրելու իսկու-նի և ձևա-նի՝ իր նրանց վերջավորություն: Այդ հարցի լուծման վրա հարկ եղած չափով լույս են ափսոս իսկու-նի (KYKH, 82, տող 27), ձևա-նի (KYKH, 122, տող 2) և իսկու-նի (Ayanis I, էջ 258, V սեկցիա, տող 11) տեքստերը: Էլ չենք ասում որպարտերեն Իսկու-նի և հայերեն «խաղող»-ի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առաջարկված համոզիչ առուզարկումները³⁶:

Ինչ վերաբերում է իս-կս-նի-ե միակ գլխային առկայությանը Այանիսի արձանագրության ... [kam]-ni-ni³⁷ GĒSTIN իս-կս-նի-ե kam-ni-ni Է-ի ռա-նի-նի հատվածում (Ayanis I, էջ 258, V սեկցիա, տող 9), ապա այնտեղ իս-կս-նի-ե բառի վերջին e-ն, Է-ի գաղափարագրի -ի հնչյունական լրացման նման, ակնհայտաբար հոլովական վերջավորություն է (սեռականի կամ տրականի): Իսկ ցիտված տեքստի Է-ի ռա-նի-նի փոխարեն Մ. Սալվինիի առաջարկված Է i-ռա-նի-նի ընթերցումն էլ հիմնովին հերքվում է KYKH, 122 արձանագրության 5-րդ տողում ռա-նի-նի բառի ամերկյա գրության առկայությամբ:

Անդրադառնալով կրկին GÜB(?)-ւի ընթերցմանը, ապա ինչպես սուկ վերջերս մեզ հաջողվեց բացահայտել, որպարտական գրագրի մեղքով ես վանկագիր նշանի խեղաթյուրման պատճառով առայժմ այն մնացել է որպարտական սեպագիր տեքստերի ընթերցման պարբերատիկ խնդիրների շարքում: Ի դեպ մեր անվստահությունը KYKH, 122 արձանագրության GÜB(?)-ւի ընթերցման նկատմամբ ծայր աստիճանի սրվեց եստկապես այն դեպքում, երբ նկատեցինք, որ Այանիսի նորահայտ ծավալում արձանագրության խնդիրն հատվածներում կարծեցյալ GÜB(?)-ւի-ի փոխարեն կրկնակի առկա է ե-ւի կամ ե-ա-ւի գրությունները (Ayanis I, էջ 258, սեկցիա IV, տող 10, սեկցիա V, տող 11): Ուստի այդ ակնառու փաստերն էլ, քննարկաբար, մեզ ստիպեցին կրկին, ամենայն հոգատարությամբ, զննելու KYKH, 122 արձանագրության առեղծվածը: Եվ ամենիցապես բացահայտվեց, որ այնտեղ ևս փաստորեն առկա է միևնույն ե-ւի քաղղ՝ պարզապես ես նշանի անզուշտրեն մասնակի խեղաթյուրմամբ որպարտական գրագրի անփութության հետևանքով:

Ընթերցողին համոզելու համար նշենք, որ, ինչպես հայտնի է, ես նշանը բաղկացած է մեկ հորիզոնական, երկու «ամկլումաձև» և մեկ ուղղահայաց հաջողական սեպերից (տես Berger, ABZ, № 5): Հենց այդպես էլ իրոք փորագրված է կարծեցյալ GÜB-ի տեղում KYKH, 122 արձանագրության 3-րդ տողում: Սակայն մի պահ կարծելով, թե ես նշանի փոխագ-

յությունը տեքստում դեռևս չի ավարտվել, ապա այդ նշանի վերջին «ամկլումածև» և ուղղահայաց սեպելը բյուրիմացաբար գրազիրը վերստին կրկնել է տեքստում: Հենց դրանից էլ ծագել է այդ բյուրիմացությունը:

Եվ, այնուամենայնիվ, այդ ամենով հանդերձ վերը նկարագրված կարծեցյալ GÜB(?) սեպախումբը ամենևին չի համընկնում իրական GÜB գաղափարագրին (ասորեստանյան ճամբար-ին, որ նշանակում է «ծախս կողմ») ոչ սեպագրերի դասավորությամբ, ոչ էլ «ամկլումածև» և ուղղահայաց սեպերի փոխադարձություններով, այսինքն՝ KYKH, 122 արձանագրության կարծեցյալ GÜB(?)–ը մեկ հորիզոնականի հետ միասին պարունակում է երեք «ամկլումածև» և երկու ուղղահայաց՝ իրական GÜB–ի մեկ հորիզոնական, երկու «ամկլումածև» և երեք ուղղահայաց սեպերի փոխարեն (տես Berger, ABZ, № 88): Դեռ ավելին, այդ լատ ամենայնի անսամոզիչ GÜB(?) գաղափարագրի «ծախս կողմը» բարդամտությունն էլ, քնականաբար, արդարացում չի գտնում մեզ հետաքրքրող սեպազիր տեքստում:

Ինչ վերաբերում է Մ. Սալվինիի կողմից ես նշանի ու ընթերցմանը Այանիսի նորահայտ արձանագրության մեջ ես–di քառում, ինչպես նաև ¹²⁰ Ba–ši–e–hi–na–a քաղաքանվան մեջ (նրա ընթերցմամբ՝ ¹²⁰ Na–ši–e–hi–na–a. Ayanis I, էջ 258, սեկցիա IV, տող 11), ապա դրանք երկուսն էլ հավասարապես կատարյալ բյուրիմացության արձագանք են:

Հետևաբար, ճշգրտելով առողջվածային GÜB(?)–ի երկու և gudi–նու տարրեր պատճառներով խեղաբյուրված ընթերցումները, KYKH, 122 վաղեմի և Այանիսի նորահայտ արձանագրությունների մեզ հետաքրքրող իդենտիկ հատվածները ստանում են այսպիսի տեսք.

1. ... a-lu-še hi-lu-li e-[g]u-di ba-di a-tu-li-i-e ... (KYKH, 122, տող 3):

2. ... *Ru-sa-a-še a-li me-i a-i-še-i hi-lu-li e-gu-di ba-di KÜ-ni ... (Ayanis I, էջ 257, սեկցիա IV, տող 10):

3. ... *Hal-di-na-a KÁ i-še-er-hi-ni hi-lu-li u-i-la-ti-ni a-lu-še e-gu-di ba-di a-tú-li-e ... (Ayanis I, էջ 258, սեկցիա V, տողեր 54-55):

Կարծում ենք, որ այս տեքստերը ընդհանուր առմամբ հասկանալի են: Խոսքը վերաբերում է ուրարտական տաճարներում (*Hal-dinli KÁ-li = šeštili) տեղի ունեցող պաշտամունքային արարողությունների ժամանակ զոհաբերված կենդանիների մարմնի զանազան մասերի (¹²¹ hišna «միս», ¹²² «նու «սիրտ», zieldi «շլարդ» և այլն) հետ միասին, մասնակիցներին մատուցվող մսև խաղողի (hišuli) ճաշակման (KÜ-ni = ateli) մասին:

Ինչ վերաբերում է խաղողին հղված egudi և badi մակերկրներին (իսկևի egudi badi), ապա նրանցից badi–ն, ըստ երևույթին, առնչվում է միևնույն ես–արձանատից կազմված badiš «նոյակապ», «սքանչելի» քառի հետ, ու

յի որարտական արձանագրություններում սովորաբար հիշատակվում է նորակառույց ամրոցների (E.GAL) և տաճարների (šešili) կապակցությամբ և մատնագույց է անում նրանց շինարարական կատարելության մասին: Հմմտ. baši-bašusi և ini-išusi, alae-alusi, urišhi-urīšhūsi իյեմտիկ քառակազմություններ:

Հետևաբար, կենելով վերոհիշյալ փաստական նյութից, մենք հակված ենք խորհելու, որ baši-ն, հավանաբար, վկայում է պաշտամունքային արարողությունների ժամանակ ճաշակվող խաղողի բարձր որակի, իսկ egudi-ն, գուցե, տեսակի մասին: Դրան պետք է ավելացնել տողերիս հեղինակի կողմից išešhūni քառի վերաբերյալ վերջերս առաջարկված «այն ժամանակ» տողագրանությունը, որը փաստորեն համընդհանուր է իյեմտիկ տեքստերի ikukani MU (šali)-ի («մույն տայում») հոմանիշը¹⁷:

NICOLAY HAROUTHIOUNYAN

NEW READINGS AND INTERPRETATIONS
IN THE URARTIAN CUNEIFORMS

New reading of *erj ardiše* is suggested instead of the former *erjardiše*.

It is denied the reading of *amasi igidi* and suggested *amanigidi*, which may be considered as Directive Case of the word *amasi*.

On the basis of detailed analyses of the cuneiform texts it is denied the deformed readings of *gudi GÜB(?)-di* and *gu-di-na-di* and suggested a new interpretation in the form of *e-gu-di ba-di*.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. M. Salvini, Una «bilingue» assiro-urartea, «Studia Mediterranea, Piero Meriggi dicata», Pavia, 1979, էջ 578:
2. И.М. Дьяконов, ДВ, 5, էջ 166. նույնի AMI, 22, էջ 97-98
3. M. Salvini, *Ayans I*, Roma 2001, էջ 254, սեկցիա I, տողեր 6-7:
4. Այն մասին տես մանրամասն Н.В. Арутюнян, КУКН, 141, ծավեր. 7:
5. Н.В. Арутюнян, КУКН, 141, արարտ. տեքստ, տող 3:
6. E. Laroche, *Glossaire de la langue hourrite*, RHA, XXXIV, Paris, 1976, էջ 39:
7. Г.А. Меликшвили, УКН, 393.
8. F.W. König, *Hchl*, II, էջ 181:
9. Н.В. Арутюнян, КУКН, էջ 442:
10. M. Salvini, *Ayans I*, Roma 2001, էջ 257, սեկցիա IV, տող 8, նույնի, SMEA, XLIII/2, Roma, 2001, էջ 286:
11. Ն.Վ. Հարությունյան, ԴԲՀ, 1962, թիվ 3, էջ 110: Н.В. Арутюнян, НУН, էջ 78, տող 10:
12. M. Salvini, SMEA, XXXV, Roma, 1995, էջ 111-124.

13. M. Salvini, *Ayazis*, I, Roma, 2001, էջ 251 և նախք. 2.
14. M. Salvini, *SMEA*, XLIV/1, Roma, 2002, էջ 139.
15. Н.В. Арутюнян, *КУКН*, էջ 434.
16. J. Sandaljian, *ICU*, Venise, 1900, էջ 370; Н.А. Мкртчян, *ДВ*, 4, էջ 27.
17. Ընդ մասին նախնական տես Ն.Վ. Հարությունյան, *Նոր շնորհքումներ և մեկնարարություններ Այանիսի նորահայտ արարածական սեպագրում*, «Արձագրք և Միջին Արևելյի երկրներ և Ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 223-227.

ՉԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՊԻՀ – Պատմա-բանասիրական հանդես (Երևան).
 ВДИ – Вестник древней истории (Москва).
 ДВ – Древний Восток (Ереван).
 КУКН – Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
 НУН – Н.В. Арутюнян, Новые урартские надписи Кармиро-блуга, Ереван, 1996.
 УКН – Г.А. Меликшвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.
 УПД – И.М. Дьяконов, Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963.
 ABZ – Rykle Borger, Assyrisch-babylonische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1978.
 AMI – *Archaeologische Mitteilungen aus Iran* (Berlin).
 Ayazis, I – A. Çilingiroğlu, M. Salvini, *Ayazis*, I, Roma, 2001.
 Heth – F.W. König, *Handbuch der chaldäischen Inschriften*, I-II, Graz, 1955-1957.
 ICU – J. Sandaljian, *Les inscriptions cunéiformes urartiques*, Venise, 1900.
 RHA – *Revue Hittite et Asiatique* (Paris).
 SMEA – *Studi Micenei ed Egeo-Anatolici* (Roma).

ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆ ⁶Ս.GUR-ը ԵՎ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԸ

Խեթական Նոր բազավորության արքա Մուրախիս II-ի (Ք.ա 1322-13217) և Հայաստանի արքա Աննիայի միջև¹ կնքված պայմանագրում վկայարկելով են խեթական և հայաստական աստվածները²: Սա միակ աղբյուրն է, որից մենք տեղեկանում ենք Հայաստանի դիցաբանի մասին: Հայաստական դիցարանին տարբեր տեսանկյուններից անդրադարձել են հայ և օտարազգի ուսումնասիրողներ (Գ.Ղափանցյան³, Գ.Ջաևուկյան⁴, Ս.Պետրոսյան⁵, Գ.Վարդուհյան⁶, Ա.Պետրոսյան⁷, Է.Ֆոտեթ⁸, Է.Լառոշ⁹ և այլն): Այն ներկայացված է 14 աստվածություններով, որոնցից ատաջին նրկուսը՝ 1⁰Ս.GUR (անդրաշխարհի տիրակալ արքայական Ներգալի գաղափարագիրն է) և ⁴STAR (սիրո և պտղաբերության աստվածուհի, շումերական ⁹INNANA-յի գաղափարագիրն է), առանձնացված են մյուսներից, որը ըստ ուսումնասիրողների, մատնանշել է նրանց գերակա դերը Հայաստանի դիցաբանում:

Սա ամստվոր միասնություն է, քանզի սիրո և պտղաբերության աստվածուհու կողքին տվորարար հանդես է գալիս կամ գերագույն հայր աստվածություն կամ ամպրոպի, օազմի աստվածը: Անդրշխարհյան ⁶Ս.GUR աստվածությունը դիցաբանում գլխավոր դերը չի զբաղեցնում:

Գ. Ղափանցյանի կարծիքով հայաստական պանթեոնը գլխավորել է կամ Արա Գեղեցիկ աստվածությունը (նիմնավորելով իր միտքը այն հանգամանքով, որ մեծնող-հարություն առնող աստվածները հաճախ դառնում են մահ անդաշխարհի տերեր), կամ մահ հնարավոր է համարում ⁶Ս.GUR-ի ենչյունական ջնքերցումը¹⁰: Այս երկրորդ վարկածի առումով նշենք, որ ⁶Ս.GUR-ը թե՛ տվյալ պայմանագրում, թե՛ խեթական այլ տեքստերում միշտ հանդես է գալիս գաղափարագիր գրությանը, ինչը ամենայն հավանականությանը բացառում է նրա ենչյունագիր յնքերցման հնարավորությունը: Հայաստանի ⁶Ս.GUR-ը խեթական տեքստերում նստակորեն տարբերակվել է մյուս ⁶Ս.GUR-ից¹¹: Այս տարբերակումը խոսում է Հայաստանի ⁶Ս.GUR-ի առանձնահատկությունների մասին:

Ինչ վերաբերում է երկրորդ տեսակետին (Արա Գեղեցիկի նույնացումը ⁶Ս.GUR-ի հետ), ապա նշենք, որ մեծնող-հարություն առնող աստվա-

ծախումները, ըստ ժ.Գյումեզլիի առասպելաբանական վերականգնումների, պատկանում են երրորդ ֆունկցիային, այսինքն նրանք դիցարաններում գլխավոր դերը չեն ստանձնում: Փաստորեն, կարելի էր վիճարկել դափանցմանական այս տեսակետը նույնպես, եթե Արա Գեղեցիկի անվանակերպարային բազմակողմանի վերլուծությունը ցույց չտար, որ նա բազմաշերտ և բազմարմույթ դիցարանական կերպար է և, ամենայն հավանականությամբ, օժտված է դիցարանի գլխավոր աստծուն քննող ուզմի, քերիտության և անդրշիրիմյան գործառույթներով:

Ստորև մենք առանձին կետերով կանդրադառնանք Արայի այդ բոլոր գործառույթներին:

1. Դիցարանի գլխավոր աստծու հատկություններ

ա) Ըստ Մովսես Խորենացու¹² առասպելի Արան օժտված է արտասովոր գեղեցկությամբ, հայրենասեր է, քաջ ռազմիկ, ընտանիքի հայր (ունի 12-ամյա 'որդի' Կարդոս (Արայան Արան) և նվիրված ամուսին (նրա կինը Լ՛վաշուն է, որի կերպարը Կափանցյանը համադրել է սիրո և պտղաբերության աստվածուհու հետ¹³, իսկ անունը Հ. Աճառյանը քիսեցնում է պարսկերեն *nuward*՝ նոր վարդ, կամ *neward*՝ նաճելի, սիրելի քանոթից): Այսինքն նա օժտված է հայր աստծու հատկանիշներով, որի կինն է սիրո աստվածուհին: Ավելացնենք նաև, որ Կարդոսը (Արայան Արան) զոհվում է ռազմի դաշտում Եամիրամի հետ պատերազմելիս, (ինչը նրան օժտում է ռազմի հատկանիշներով), իսկ նրա որդին Ստանվեր Անուշավանն էր, որին նվիրված էր առաջի ծառը՝ (փշատեղև և մշտադալար ծառերը սերտորեն առնչվում են քննության նովանավոր աստվածությունների պաշտամունքի հետ): Փաստորեն Արա Գեղեցիկը, Արայան Արան և Ստանվեր Անուշավանը ստեղծում են եռֆունկցիոնալ միասնություն, որը շատ մտահման է դյումեզիլյան հնդեվրոպական աստվածային եռյակների մոդելին¹⁴:

բ) Հայ հեթանոսական դիցարանի գեղագույն աստված Արամազդի (հանգում է կին իրանական Անուրա Մազդա «տեղ իմաստուն» ձևին) անվան Անուրա քաղաքիչը հնարավոր է, որ ենթարկվելով հայերենի այն ժամանակաշրջանում գործող ենյունական օրենքներին՝ փոփոխվել է և ինչ-որ առումով հարմարեցվել Արա աստծու անվանը և վերածվել Արամազդի¹⁵: Արամազդի ֆակտիկներն էին «Մեծն և արի Արամազդ», «առաքիչ երկրի և երկնի», նա պարզևում էր լիտրյուն և քերքատվություն: Արամազդի գլխավոր մեկնանը գտնվում էր Բարձր Հայքի Գարամաղի գավառի Անի ամրոցում, որտեղ գտնվում էին նաև Հայոց Արշակունի արքաների դամբարանները: Հետաքրքրական է, որ Մովսես Խորենացին գրում է. «Չկա ոչ մի Արամազդ, բայց միայն նրանց նամար, որոնք կամենում են լսել, որ Արամազդ կա. և այսպես կոչված չոքս Արամազդներից մեկն է միայն Բաղատ Արամազդը»¹⁶: Համատեքստում նա բոլոր Ա-

բամազդներից առանձնացնում է հաղատ Արամազդին, այնպես, ինչպես առանձնացնում է քազում Տիգրաններից միայն Ածղահակին սպանող Տիգրանին: Հայտնի է, որ հաղատությունը (մաս աչքի շարքումը, կալ լինելը և այլն) քնորոշում են անդրաշխարհի տերերին: Վերոհիշյալ համգամանքի հետ սա ևս ընդգծում է Արամազդի՝ անդրաշխարհի հետ ունեցած կապը:

զ) Արայի անվան համահնչումությունը և կերպարային առնչությունները արարտական ժամանակաշրջանից վկայված և էրեքունիում տաճար ունեցող Իվարչա, Իարչա աստծո հետ, որի պաշտամունքը իրենց հետ բերել էին Հայաստանի հարևան Ճոփք և Խաթթե երկրների վերաբնակիչները, նկատել է Ա.Հմայակյանը: Իվարչան համարվել է Խաղդին հավասարազոր աստվածություն. հեղինակը խոսում է նաև Արա-Իվարչա(սլավ.) Յարիդ նույնացման մասին¹⁷: Ի.Գյակունովը կարծում է, որ Խաղդին և Միրոյայի պաշտամունքները միաձուլվել են, որում մասնակցել է մի միջնորդ աստվածություն¹⁸. այն ըստ Ա.Հմայակյանի կարող էր Իվարչան լինել¹⁹: Վերոհիշյալ կարծիքները համադրելով ստանում ենք հետևյալ պատկերը՝ Խաղդի-Իվարչան-Յարիդ (սլավ.) -Արա-Միրոյա: Այսինքն՝ Խաղդին նույնացնում է նաև Արայի հետ: Ի մի բերելով ա), բ), գ) կետերում դիտարկված փաստերը կարելի է ենթադրել, որ Արամ աղերսներ է դրսևորել գլխավոր աստվածությունների հետ:

2. Ռազմի աստծո գործառույթներ

ա) Ըստ առասպելի, Արան քաջաբար զոհվում է ռազմի դաշտում, ինչպես Պլատոնի «Հանրապետություն»-ում նկատված պամֆիլիացի Արմենիասի որդի Էրթը (Արայի և Էրթի նույնությունը առաջին անգամ նկատել է Մ.Էմինը):

բ) Արայի անունը Ա.Մատիկյանը համադրել է հունական դիցաբանության պատերազմի աստծու՝ Արեսի հետ: Այս առումով հետաքրքիր է, որ Բյուրանիայում հուլիս ամիսը կոչվում էր Արեյոս, այսինքն՝ Արես աստծուն նվիրված, իսկ հայկական տոմարի վեցերորդ ամսանունը՝ Արաց, կապվում է Արայի անվան հետ²⁰:

Արեսի անունը հնդեվրոպական ծագում ունի՝ *er – շարժվել, հուզել, քարճրացնել, աճնույն նախանականությունը այս արմատն է ընկած նաև Արայի և Էրթի անվան ճիմքում:

Արայի և նրան կերպարաբանականակաճանաչումով համարժեք էրթի՝ ռազմադաշտում զոհվող, ինչպես նաև Արեսի հետ նրանց անունների ունեցած աղերսները հնարավոր են դարձնում ենթադրել, որ Արան ունեցել է նաև ռազմի աստծո գործառույթներ: Արեսին և Արային մեամեղնում են նաև նրանց պաշտամունքներում շան, շնակերպ ձագների առկայությունը²¹:

3. Այս Գեղեցիկը, որպես բերրության հովանավոր աստված և նրա անդշիրիմյան գործառույթները:

Այս երկու գործառույթները փոխկապակցված են միմյանց. ասվածի լավագույն վկայությունը կարող է հանդիսանալ Հ.Մարտիրոսյանի մկաբագրած չափսերով մեծ դամբարանների՝ առանց մարդկային քաղումների, որոնցում հայտնաբերվել են ֆալկոսների արձաններ²²: Այսինքն, քաղման ծխակարգում հնագույն ժամանակներից ի վեր համդես է եկել բերքատվության գաղափարը: Այս Գեղեցիկը որպես բերրության հովանավոր և մեռող-հարություն առնող աստվածության հանգամանակից կերպով ուսումնասիրել են Ա.Մատիկյանը²³ և Գ.Ղափանցյանը²⁴, ուստի մենք կկատարենք միայն որոշ դիտարկումներ:

Նման աստվածությունները կապված են բնության զարթոնքի և բերրության հետ: Նրանք ստեղծվել են մարդկության պատմության փառնալուստ ժամանակներում: Նրանց հետացումից կամ մահվանից հետո բնությանը մեռնում է, ցամաքում էին ցրտը, ժողգմում էին հիվանդություններ՝ մարդկանց և անասունների մեջ, մարդիկ և անասուններ անպտուղ էին դառնում. և այլն: Սա շատ պատկերավոր է մկաբագրվում Տելեպիմոսի մասին խեթական առասպելում²⁵:

Գ.Ղափանցյանը Արայի անունը համարել է *ara-f* – խեթական քուսկանության աստվածության²⁶, Ա.Մատիկյանը՝ իրն հնդկերեն *arya*՝ «օտարական, ընկեր» բառերի հետ²⁷: Ավելացնենք նաև, որ Ժ.Դյուն-Վիլլե մանրամասն վերլուծելով *ar* հիմքը և նրանից թաղ *arya* ձևը առաջինը մեկնում է որպես «խոր, օտարական», իսկ երկրորդը՝ «կյուրքնկալող» իմաստից նաև «տեղ»²⁸: Այս երկվությունը շատ հատկանշական է մեռող-հայություն առնող աստծու կերպարին՝ նա տեր է այս և կյուր անդրաշխարհում և՛ ընդհակառակը:

Ժամանակին Գ.Ղափանցյանը հորովելները կապել է Արայի անվան հետ՝ ենթադրելով, որ նրանք կազմված են *Ara+wei-*ից, որտեղ *wei-*ը կարող էր նշանակել «օգնիլ», «տրի»²⁹: Թ.Գամլեյիժենն և Վ.Լյվանովը **we* արմատի համար վերականգնում են հնդեվրոպական «մահվան դաշտեր» հասկացությունը, այսնիքն, «երկնային անդրաշխարհիկ դաշտեր»³⁰: Հ.Անտոյանը հորովելներ քաղը թխեցնում է առավելին հասնելու գաղափարից՝ *an*՝ բացականչության հավելումով³¹: Հնարավոր չէ՞ արդյոք, որ *հորովելները* ծագած լինեն Արա + **we* • Արայի դաշտեր՝ երկնային կամ երկրային դաշտեր հասկացությունից (հնարավոր է «հո» բացականչության հավելումով): Այս մտտեցման ծամար հիմք է հանդիսացել Ա.Պետրոսյանի կողմից Արա Գեղեցիկի անվան երկրորդ բարարիչի «գեղ» արմատի ծամար **we* նախնական ձևի վերականգնումը³²: Վերջինս, ինչպես տեսանք, ծամարվում է անդշիրիմյան դաշտեր: Հողագոր-

ծական երգերը՝ հորովիները, ամենայն հավանականությամբ վաղմջական ծագում պետք է ունենային և երե քերթության և բուսականության հովանավորող աստվածք եղել է Արամ, ասքս հորագործական դաշտերը ինչ-որ ձևով պետք է կապվեին Արայի անվան կամ գործառույթների հետ: Սակայն այստեղ առկա է մեկ բարդություն. հնդեվրոպական **u*-ն - բառակերպում ձայնավորից առաջ հայերենում, համեմայն դեպք, Ք.ա. IV դարից հետո դարձել է «զ», սակայն առկա են որոշ բացառություններ, որոնց մի մասը, ըստ Գ.Ջահուկյանի, կարող է գալ անատոլիական լեզուների ազդեցությունից³⁷: Մյուս կողմից էլ, եթե Արա + **u*el-ը հետագայում ընկալված լինի մեկ քառ, քառամիջում և քառավեջում **u* • *g* հնչյունավորության բացառություններն ավելի շատ են քան բառակերպում³⁸: Ավելացնենք նաև, որ երբեմն ժողովրդի մեջ արմատացած ծխական նշանակություն ձեռք բերած քառերը չեն ենթարկվում պատմական հնչյունափոխության և պահպանում են իրենց նախնական ձևը: Միգուցե այս պատճառներով էլ **u* • *g* անցումը հորովել քառում տեղի չի ունեցել:

Նշվածին ավելացնենք նաև, որ հորովիները պայտուհակել են աղոթքի և հեթանոսական հավատալիքների տարրեր: Այդ դաշտերը, որոնք ժողովրդի մեջ կոչվել են «առավել», «ըռավել» գտնվել են երկու արտերի սահմանագծին, հաճախ չեն հերկվել, քողնվել են աղքատների կամ հանձնվել են եկեղեցուն, այսինքն իրենց մեջ ինչ-որ ծիսական իմաստ են կրել:

Կրկին անդրադառնալով մեռնող-հարության առնուղ և քերթության աստվածություններին, նշենք, որ չմայած նրանց ունեցած ընդհանրություններին, որոնց Արա Գեղեցիկի պաշտամունքի ուսումնասիրության առնչությամբ անդրադարձել են Ա.Մատիկյանը, Գ.Ղափանցյանը, Ս. Հայտրյանյանը³⁹, այնուհանդերձ այդ աստվածությունները, նրանց քվում Արա Գեղեցիկը, ըստ մեր դիտարկումների դրսևորում են որոշակի տարբերություններ: Նրանց կարելի է քաժանել երկու խմբի. մի շարքում խմբավորվում են Դումուզին (չումեր.), Թամսուզը (արքայ.), Ատտիսը (փոյուգ.), Ադոնիսը (հուն.), իսկ մյուս շարքում՝ Օզիրիսը (եգիպտ.), Տեկպիմուսը (լեռք.), Արամ, (Արմենիոսի որդի) Էրբը (հայկ.), Յարիոն (սլավ.), Դիոնիսոսը (թրակա-փոյուգ., հուն.): Այստեղ նկատենք, որ ուրալտական դիցաբանի գլխավոր աստված Խալդին ևս, քացի ռազմի և քերթության հատկանիշներից, ունեցել է նաև մեռնող-հարության առնուղ աստծու գործառույթներ⁴⁰: Այս երկրորդ շարքի աստվածությունները, ի տարբերություն առաջինների, առանձնանում են, մի դեպքում՝ իրենց ռազմունակությամբ, մյուս դեպքում՝ փոքրկի աստծուն քնորոշ հատկանիշներով, ինչպես նաև առավել շեշտված անդրաշխարհի հետ առնչություններով, քան առաջինները: Նրանց միավորում է նաև մեկ այլ հանգամանք. քացի Օզիրիսից, Տեկպիմուսը⁴¹, Արամ, (Արմենիոսի որդի) Էրբը, Յարիոն, Դիոնիսոսը կերպարային առումով ուղղակի և միջնորդված

առնչությունը են դրսևորում Արայի, իսկ ծագմամբ՝ Հայկական լեռնաշխարհի և նրան հարող փոքրասիական տարածքների հետ: Ստորև կքննարկենք նրանց ռազմական և անդրաշխարհիկ հատկությունները՝ ըստ կերպարների:

Ռազմի կամ փոքրիկի աստծո հատկանիշներ

ա) Առաջին շարքի աստվածությունները, օրինակ Ադոնիսը զոհվում է որսի ժամանակ, որում առկա են պատանուց տղամարդ՝ ռազմիկ դասնադու հնազույն ծեսի արձագանքները (յնիցիտացիա): Ի տարբերություն նրան, Արամ և Էրրը զոհվում են ռազմի դաշտում, այսինքն, նրանք արդեն ռազմիկներ էին:

Տելեպիմուսը, որի կերպարը Գ.Ղափանցյանը համարել է Արայի, իսկ վերջինիս՝ Յարիլոյի հետ⁴⁰, և տարբերություններ է դրսևորում: Դա երևում է նրա անհետացման առասպելից, երբ աստծո քարկութային համեմատվում է փոքրիկի թնդյունի հետ և Խաննախաննայի (Զր ճոր) ուղարկած մեղուների խայթոցից զարթնելով՝ մահ ավել է ափում երկրում: Այս տեսարաններում մա հիշեցնում է փոքրիկի կամ ռազմի աստծո⁴¹:

Յարիլոն, որի կերպարը Գ.Ղափանցյանը վերլուծել և համարել է Արայի հետ, մույմպես, ըստ բելտոսական հավատալիքների, ունի ճերմակ ձիու վրա նստած հեծյալի նկարագիր, որի մի ձեռքում արյունոտված գլուխ է, իսկ ճյուսում՝ ձեռքում հասկեր⁴²:

Դիոնիսոսի մասին առասպելաչափքում պատմվում է, թե ինչպես խտորեն էր մա պատժում իր պաշտամունքը չընդունողներին. այս դրվագներում դրսևորվում է նրա ռազմատենչ էությունը⁴³:

Ավելացնենք մահ, որ խեթական Pirys-ն, (որը մահ Խսուվայի (Մուիքի) պանթեոնի գլխավոր աստվածն էր) վաղ շրջանի խեթական տեքստերում ներկայացել է որպես քերիության աստված (նրանից լիություն են խնդրել), իսկ հետագայում մա ստացել է ձիու վրա նստած աստծո նկարագիր⁴⁴:

բ) Անդաշխարհիկ երևույթների և աստվածների հետ ունեցած առնչություններ

Տելեպիմուս

Խեթական տեքստերից մեկում պահպանվել է Օվկիանոսի կողմից Արևի առևանգման մասին առասպելը⁴⁵: Կայծակի և անպրոպի աստվածը՝ Տելեպիմուսի հայրը նրան է ուղարկում Արևին վերադարձնելու, և Տելեպիմուսը ոչ միայն վերադարձնում է Արևը, այլև կնություն է առնում Օվկիանոսի դստերը: Օվկիանոսը և ջրային տարերքը այս և անդրաշխար-

ից բաժանող երևույթներ են (սա առկա է թե՛ հունական, թե՛ այլ դիցարանություններում): Այսինքն Տելեպիմոսը այս դեպքում որոշ առումներով կապ է հաստատում անդաշխարհի հետ: Նա եզիպտական անդրաշխարհիկ պատկերացումների հետ ևս շատ հետաքրքրական առնչություններ է դրսևորում: Թ. Գամկելեիծենն և Վ.Իվանովը նշում են, որ առասպելներից մեկում մեղաժամով Տելեպիմոսի աչքերի և ձեռքերի գնդաձուր իր գուգահեռներն ունի եզիպտական մոմիաների աչքերը մեղաժամով փակելու հետ⁴⁴: Տելեպիմոսի հետ է կապված նաև *haran* – «սարժի» թալմեր, որը անդրաշխարհին բնորոշ սուրբ կենդանիներից մեկն է:

Անդրադառնաճը անդրաշխարհիկ աստվածությունների և երևույթների հետ Արայի ունեցած առնչություններին՝ քաջատրեյու համար կայասական պանթեոնում նրա ⁴⁵U.GUR գաղափարով համդես գալու համաձայնը:

Արա և Էրբ

Նրանց անունը համահունչ է Ներգալի երկրոյտ անվանը կամ կերպարին՝ արքադական Էրբային (պատերազմի աստվածություն): Ներգալը անդրաշխարհ է մտնում Էրբա անունով, իսկ դուրս գալիս՝ Ներգալ անունով: Էրբայի մասին առասպելը հավանորեն վկայված է Ք.ա. XI դարից և կա կարծիք, որ այդ անունը փախտալայ է՝ հաշվի առնելով նմանառիպ խերական աղբյուրներից հայտնի պատերազմի և ժամտախտի Յարրի աստվածությունը⁴⁶: Յարրիի անունը քիտում է հնդեվրոպական **jar* –ից, որ առկա է նաև Յարլուդի անվան մեջ⁴⁷ (նիշենը Խաղդի-Իվարչա-Յարլուդ-Արա նույնացումը): Այսինքն կարելի է ենթադրել, որ Արայի անունը փոխառնվել է Հայկական լեռնաշխարհից՝ սլավոնական Յարլուդի դեպքում պահպանելով անունը և մեռնող-հարաբյուն ասնող աստծո գործառույթները, իսկ խեթ. Յարրիի և արքադական Էրբայի դեպքում՝ անունը և անդրշիրիական գործառույթները⁴⁸:

Պամֆիլիացի Էրբի դեպքում ի հայտ է գալիս դիակիզող կրակը: Կիզիլ արևը, տապը, ոչ քարի կրակը բնորոշում են Ներգալին: Կրակը որպես գայլալից մեղմուղ և մաքրագործող, չարը հեռացնող երևույթ համդես է գալիս նաև Տելեպիմոսի առասպելում՝ նրա քարկուրյունը մեղմելու համար վառված կրակների տեսքով⁴⁹:

Ուշագրավ է, որ ուրարտական դամբարաններում ճրագներ և քահներ են վառվել⁵⁰: Թե՛ հնդեվրոպական, թե՛ ուրարտական բաղձան ծեսերում տարածված էին դիակիզումները, որոնք հավանաբար ծիսական կրակով մաքրագործման իմաստ են կրել:

Հայտնի է, որ Ատոլամաշնյի հայերեն քազմանության մեջ Ներգալի փոխարեն համդես է գալիս Անգեղը: Նրա կերպարը, ասես, Արայի ուղիղ հակադրությունը լինի, որը կաշում է նաև վերջինիս հետ նրա միասնուր-

յան, փոխակապակցվածության մասին: Հնարավոր չէ՞ արդյոք, որ նա Արայի մի երկրորդ անդրջիլիմյան գործառույթը լինի, ինչպես Ներգալ և Էրբան, մասնավաճառ, երե Ներգալի փոխարեն մենք անհնր Անգեղ, իսկ Էրբան անվանապես մուսնահունչ է Էրիթն և Արային:

Արային անդրաշխարհի հետ կապում է նաև նրա մասը և շնակերպ էակների կողմից վերակենդանանալը: Ուշագրավ է, որ Սալիդամիչից (Կարսի շքբան) և Արծիվամբից (Չանգեզուր) գտնվել են քրեզնե արծաճիկներ՝ պրկված ֆալցոսներով, որոնք իրենց այ ծնոցում պահել են հետ ցցված ականջներով շան գլուխներ, իսկ ձախ ծնոցում կենաց ծառի ճյուղերից կազմված փնջեր⁵⁰:

Ինչպես տեսնում ենք այս արծանիկների մուտ ի հայտ են գալիս շան գլուխները, շնակերպ էակները, որոնք կապված են Արայի առասպելի հետ (արալեզների կերպարը): Չնայած Հ.Մարտիրոսյանը այսպիսի համադրում չի կատարել, սակայն ամենայն հավանականությամբ այս արծանիկները վկայում են պոդարերության աստծո և շնակերպ էակների կապի, նրանց մասին վաղնջական պատկերացումների և վերջիններիս տեղական ծագման մասին: Այս արծանիկների թվագրությունը հատակ չէ, այսուհանդերձ, նրանք վերագրվում են միջուրարտական ժամանակաշրջանին: Արալեզները վկայված են Մովսես Խորենացու քերած Արայի և Շամիրամի մասին առասպելում, որպես երկնքից իջնող էակներ, որոնք լիզելով մարտում ընկած քաջերին և դյուցազուններին՝ հարություն են տալիս⁵¹: Եզնիկ Կողբացին նշում է նրանց՝ շնից սերված լինելու մասին⁵²: Արալեզների ծագման մասին տարբեր կարծիքներ են արտահայտվել գիտության մեջ. Ա.Սեյդը արալեզներին կապում է շամիրամ-արքայական անդրաշխարհի՝ Արևի-ի անվան հետ, իսկ Արևի-ն տեղադրում է Հայաստանում⁵³: Ըստ Գ.Ղափանցյանի արալեզները ունեն տեղական ծագում և կազմված են արև արմատից՝ «քարծրանալ, հատնել» իմաստով և օշ գոյականակերտ մասնիկից⁵⁴: Ս.Հարությունյանը, որը հանգամանալից վերլուծել է Արա Գեղեցիկի կերպարը և արալեզներին, կողմնակից է ժողովրդական ստուգաբանությանը և արալեզների անունը կապում է Արային լիզելու նրանց գործառույթի հետ⁵⁵: Ի.Դյակոնովի կարծիքով արալեզները ծագում են Արևի անդրաշխարհի անվան արմատից և շն վերջավորությունից, մեկնաբանելով նրանց անունը որպես Արևի երկրին պատկանող էակներ⁵⁶: Իսկ հնարավոր չէ՞ արդյոք արալեզները ստուգաբանել հնդեվրոպական քառասուգարով՝ հնդեվ. **er* «շարժվել, քարծրանալ, հատնել», որ հայերենում դառնում է ար(ա), և հայերեն «լեզ» բառից, որը ծագում է հնդեվրոպական **leig*՝ հարմարից (նին սլավ. *lizati*, ռուս. *лизи*): Անառյանը նույնպես գտնում է, որ «լեզ» արմատը հավանորեն պահպանվել է առելզ, հարալեզ բառերում⁵⁷: Ուստի «արալեզ» կարող է նշանակել «լիզելով հարություն տվող»:

Նրանց տեղական ծագման մյուս փաստարկներից մեկն էլ վերոհիշյալ շնակերպ էակների և պտղաբերության կուրքերի կապն է: Բացի այդ, արալեզները, որպես շնակերպ էակներ վկայված են հայկական հնագույն առասպելաբանության մեջ, այնինչ նրանց մասին որևէ վկայություն չկա շումերա-աքքադական կամ խուրրիական առասպելներում: Ասվածին ավելացնենք նաև, որ Ա.Մովսիսյանը, հիմնվելով շումերա-աքքադական ազգյութների վրա, Առևևս երկիրը տեղադրում է Հայկական լեռնաշխարհում⁵⁸:

Դիոնիսոս

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ Դիոնիսոսը թարգմանված է Սպանդարամետ: Սպանդարամետը հայ էնթանոսական դիցաբանում անդրաշխարհի տերն էր (նրա անունը ծագում է պակապերեն Spandarmet «երկրի աստվածներ» ձևից, հանգում է ավեստերեն *spenta armaiti* «սուրբ իմաստություն» ձևին⁵⁹: Ամունների այս նույնացումը վկայում է, որ Սպանդարամետը հայերի մեջ նախապես ընկալվել է որպես պտղաբերության և գինեգործության աստվածություն⁶⁰: Այս նույնացումը հիշեցնում է Արա Գեղեցիկի՝ մի կողմից պտղաբերության և բուսականության հովանավոր լինելը, մյուս կողմից՝ անդրաշխարհի հետ նրա ունեցած առնչությունները: Դիոնիսոսը Ջևահ և Կաղմոսի աղջկա՝ Մեմելեի որդին էր: Կաղմոս անունը նույնահունչ է Խորենացու տոհմաձայն Հայկի բոսան՝ Կաղմոս անվան հետ: Իսկ Գ.Ջահուկյանը նկատում է այդ անվան նամահնչումությունը հայաստանի Չոթաթա քաղաքի հետ⁶¹: Դիոնիսոսին տալիս են ուսումնասիրողներ վերագրում են բրակա-փոյուզական ծագում: Նա համեմատվում է Օզիրիսի, Միսրայի, իսկ Ա.Մատիկյանը նրան համեմատում է Խալդիի հետ՝ ելնելով նրանց երկուսի պաշտամունքներում խաղողի և գինու առկայության փաստից⁶²: Հիշենք Արա-Իվարչա-Յարիդ-Խալդի-Միսրա և երե հաշվի առնենք Դիոնիսոս-Միսրա, Դիոնիսոս-Խալդի նույնացումը, ապա վերոհիշյալ շարքին կազմվածա նաև Դիոնիսոսը:

Ինչպես տեսանք, այս շարքում ընդգրկված պտղաբերության և մտնուդ-հայություն առնող աստվածությունները (Նեթ, Տելեպիևոս, հայկ. Արա և Էբբ, սլավ. Յարիդ, հուն. Դիոնիսոս) իսկապես շեշտված ռազմական և անդրաշխարհիկ հատկություններ են դրսևորում և ուղղակի կամ անուղղակի կապերով փոխկապակցված են միմյանց: Երե նրանք լին սերում մեկ միասնական կերպարից, ապա նրանց համար կարելի է ենթադրել ընդհանուր քնակելիմայական և տարածաշրջանային ծագում, որը ամենայն հավանականությամբ Հայկական լեռնաշխարհն է և նրան հարող փոքրասիական տարածքները, ինչով էլ պայմանավորված է վերջիններիս կերպարային ընդհանրությունները: Հատկանշական է, որ ըստ

Կ Քիտտելի Փոքր Ասիան և Արևելյան Եվրոպան պտղաբերության պաշտամունքի առաջացման ինքնուրույն օրախմբեր են կազմում Եռմնրից մինչև մայրցամաքային Հուսաստան ընկած ընդարձակ տարածաշրջանում⁶³: Եվ իրավամբ Հայաստանում մնան բնրջատվության կուրքերի առաջացումը կտում է տեղական և ինքնատիպ բնույթ, քանզի նրանք առանձնանում են յուրատեսակ տարրերով⁶⁴: Հայտնի է, որ պտղաբերության պաշտամունքը կապված է բնության նրկույթների մեծ ու փոքր գիլլիների հետ (օրինակ՝ գարուն-ձմեռ, ցերեկ-գիշեր) և ինչպես տեսանք սերտորեն առնչվում է մահվան և վերածնության, հետադարձության գաղափարի հետ: Այս պատկերացումների յուրօրինակ քանաստեղծական արտահայտությունը կարելի է գտնել ճգիպտական մահվան և վերածնության ընկալումներում. «ճրա մարմինը բաղված է հողում, ինչպես հատիկը, իսկ նրա հողին ձգտում է վեր, ինչպես բույսը»⁶⁵: Հայկական լեռնաշխարհում և հարակից փոքրասիական տարածքներում, որտեղ ծագել են վերոհիշյալ աստվածությունների պաշտամունքները, ձմռանը հատրող գարնամային ծիլը իր մեջ իրավամբ պայքարի տարրեր է պայտմակում (ի տարրերություն միջգաղտրյան բնալրիմայական պայմաններում ձևավորված բնության հովանավոր աստվածությունների, որոնք ռազմատենչ չեն (եղչենք Դամուղլին, Ցամմուղին ևն):

Եզրահակելով նշենք, որ Արայի պաշտամունքի քազմաշերտությունը խտում է նրա ծագման վաղեմության մասին: Նրա կերպարի նանգամալից վերլուծությունը ցույց տվեց, որ Արան օժտված է ռազմի, պտղաբերության, մեռող-հարություն առնող աստծու և շնչոված անդրշիլինյան գործառույթներով և իրավամբ կարող էր հայասական պանթեոնում գրավել գլխավոր դերը և հանդես գալ՝ Պ.GUR գաղափարազրով: Բացի այդ, ուսումնասլլելով Հայկական լեռնաշխարհում տարրեր ժամանակաշրջաններում և տարրեր էրնոսների կողմից (նկատի ունենք ուրարտականը) ձևավորված պանթեոնները, մենք տեսնում ենք, որ նրանք դրսևորում են մի յուրահատուկ նմանություն՝ գլխավոր աստվածությունների դեպքում. բն՝ Հայասայի, բն՝ Մոփրի, բն՝ ավելի ուշ ձևավորված ուրարտական և հայ ներսանուական պանթեոնների գլխավոր աստվածությունները օժտված են բնրջատվության, ռազմի և անդրաշխարհիկ ու մեռող-հարություն առնող աստծու հատկանիշներով (ինարկե որոշ դեպքերում այդ հատկանիշներից մեկը քացակայում է, սակայն ռազմի և պտղաբերության գործառույթները ընդհանուր են բոլորի համար), իսկ կայծակնային հատկանիշներ ունեն աստվածային գլխավոր գույզին հաջորդող աստվածները: Բերենք օրինակներ՝ հայասական պանթեոն՝ (գլխավոր աստվածությունը՝ Պ.GUR-Արա նույնացման դեպքում օժտված է վերոհիշյալ բոլոր հատկանիշներով, իսկ կայծակնային աստվածությունները՝ Պ գաղափարազրով հանդես են գալիս չորրորդ և ինգերորդ տեղում): Մոփրի պանթեոնի գլխավոր Բրչս (որն ինչպես տեսանք, օժտված էր

պաղարհերության և ռազմի հատկանիշներով) և ⁴STAR աստվածային գույզին է հաջորդում ⁵Ա կայծակնային աստվածությունը⁶⁶: Նույնը կարելի է ասել ուրարտական դիցարանի մասին, որտեղ գլխավոր իշարը (ռազմի, պաղարհերության, մեռնող-հարության առնող աստծու գործառույթներ) և Վարուրանի աստվածային գույզին է հաջորդում կայծակնային հատկանիշներով Թեշեբան: Հայ հեթանոսական դիցարանում ևս Արամազդ (ռազմի, բերրիության, անդաշխարհիկ գործառույթներ) և Անահիտ գույզին է հաջորդում Վահագմը՝ կայծակնային հատկանիշներով աստվածությունը: Մինչդեռ, օրինակ խեթական պանթեոնում, Նոր քագավորության շրջանում արդեն դիցարանը գլխավորում էր կայծակնային Թեշտըրը: Վերոհիշյալ նույնությունները, երև չեն կարող վկայել այդ պանթեոնների մեկ էթնոսի կողմից ստեղծման մասին, ապա, վկայում են միևնույն տարածաշրջանում ապրող այդ ժողովուրդների առասպելաբանական պատկերացումների և դիցարանների սերտ փոխազդեցությունների և ժառանգականության մասին, որոնցից պատմականորեն ամենավաղը Հայաստանի և Ծովքի դիցարաններն են:

HASMIK H MAYAKYAN

⁴U.GUR OF HAYAŠA AND ARA GEGHETSİK

⁴U.GUR is the supreme god of the pantheon of Hayaša. ⁴U.GUR is the ideogram of the Akkadian Nergal – the lord of the netherworld. The author of the article attempts justifying and developing the opinion of Grigor Ghapantsian that the ideogram ⁴U.GUR refers to the deity Ara Geghetsik (Ara the Beautiful). The detailed analysis of the character and etymology of Ara Geghetsik's name as well as his comparison with other gods and pantheon characters reveals that he is a multifaceted god in the pantheon and incorporates the features of the supreme god, god of war, fertility, dying and resurrecting deity as well as emphasized features of the netherworld. For this reason the author assigns the ideogram ⁴U.GUR to Ara Geghetsik.

The article also shows the connection between Ara Geghetsik, *aralēzes* and bronze statuettes excavated from the Armenian Plateau (holding in one hand the head of a dog and branches of life tree in another) which witnesses about the local origin of the deity itself and *aralēzes*. Also, an effort was made to link and trace back *aralēzes* –cultivating songs, to the name and function of Ara Geghetsik in the following form: Ara +*gel (netherworld celestial fields). The article compares the pagan deities ⁴U.GUR of Hayaša, ⁴Pirya of Sophene (Arm. Tsop'k'), ⁴Haldi of Urartu and relevant Armenian deities that had functions of war, fertility, netherworld as well as dying and reborn gods, (Ara and ⁴Halde), but not bestowed with features of god of storm. These similarities if not testify that they were created by the same ethnic group, nevertheless attest interaction and peculiarities of the mythological perceptions and pantheons of

these people living in the same region. Historically the pantheons of Hayaša and Sophene (Կոթ'կ') are the earliest among them.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. O.Carruba, Die Hajasa-Verträge Hattis, Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1998, S. 59-75.
2. E.Fortter, Hajasa-Azzi., *Suassasica* 9 (1931), S. 6.
3. Գ.Կալանձյան, Малоазийские (Азианические) боги у армян. Хайасские боги, Историко-лингвистические работы, т. 1, Ереван, 1956, с. 305-308.
4. Գ.Ջախովյան, Հայոց լեզվի պատմություն, Լեզվաբանական ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 327-330:
5. Ա.Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները երկու վաղ միջինադարյան Հայաստանում, Առեմնախոսություն, եր., 2001, էջ 91-127:
6. Գ.Վարդյան, Докристинские культы армян, Армянская этнография и фольклор, 1991, N 18, 1991; с. 65-70.
7. Ա.Պետրոսյան, Հայոց պաշտօնազման հարցեր, ՊԲՀ, 2003 (2), էջ. 190-224:
8. E.Fortter, Hajasa-Azzi....
9. É.Latouche, Recueil d'onomastique hittite, Paris, 1952.
10. Գ.Կալանձյան, Малоазийские (Азианические) боги у армян. Хайасские боги..., с. 306.
11. V.Haas, Geschichte der Hethitischen Religion, Leiden-New York-Köln, 1994, հայասերական ՊՍՍՐ-ի ծախիմ տե՛ս էջ 367:
12. Մ.Նորինյան, Հայոց Պատմություն, բարգձմանությունը, ներածությունը և ծանրագրությունները Սև, Ստ.Մալխասյանի, Երևան, 1968, գիրք առաջին, գլուխ ԺԵ:
13. Գ.Նախանջյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1946, էջ 107:
14. Ж.Дюмезиль, Верховные боги индоевропейцев, Москва, 1986, с. 158-172:
15. Նման այլ օրինակներ տե՛ս Ա.Մնացականյան, Մաշտոց անվան ստուգաբանությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, N8, էջ 86-92: Э.Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970, с. 302-305.
16. Մովսես Նորինյան, Հայոց Պատմություն... գիրք առաջին, գլուխ ԼԱ:
17. Ա.Հմայակյան, Իվարչա՝ հայկական աստվածություն, «Աստղային ստրիանդակ», 1993, N1:
18. И.Дьяконова, К вопросу о символе Халди, Древний Восток, N4, 1983, с. 193.
19. Ա.Հմայակյան, Վանի բազալիտության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 63, Շոտ Ն.Հարությունյանի Ի (ու)արչա, Իրոջյան Վազգս երկրի տեղաբնիկ աստվածություն էր, Н.В.Арутюнян, Новые урартские надписи, Ереван, 1966, с. 94-95.
20. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 313-314:
21. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ..., էջ 316-317:
22. А.Мартиросян, Идолы из Кармир-Блура, ИФЖ, 1958, N2, с. 130:
23. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930:

24. Գ.Մախանյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1946:
Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենը ևս, ինչպես հայտնի է, ծառայել է որպես թվանշանային համակարգ: Երեսուցեց տասները բաժանելով չորս սյունակների՝ Մեսրոպ Մաշտոցն առաջին սյունակի ինը տաներին տվեց միավորների, երկրորդին՝ տասնավորների, երրորդին՝ հարյուրավորների, չորրորդին՝ հազարավորների արժեք³:

Ա - 1	Ժ - 10	Ճ - 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Մ - 200	Ս - 2000
Գ - 3	Լ - 30	Յ - 300	Վ - 3000
Դ - 4	Խ - 40	Ն - 400	Տ - 4000
Ե - 5	Շ - 50	Ը - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - 60	Ո - 600	Ց - 6000
Է - 7	Հ - 70	Չ - 700	Ի - 7000
Ը - 8	Ձ - 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Ք - 9000

Այսբանով հնարավոր էր գրել մինչև 9999 (ներառյալ): Տասը հազարը գլխաբարում կոչվում է «բյուր»: «Բյուրի» նշանը (դեպի վեր ուղղված անկյունիկ) դրվելով այբուբենի տասերի վրա՝ ստացվում էր դրանց բազմապատիկը 10.000-ով (Ջ-ն «բյուրի» նշանով հավասար էր 90 միլիոնի): «Բյուրի» հագոյալով մյուս անվանակոչված միավորը «գունդ» է («բյուր» × «բյուր»), ապա «ավագ գունդը» («բյուր» × «գունդ»), «արքա գունդը» («բյուր» × «ավագ գունդ»), «կայսր գունդը» («բյուր» × «արքա գունդ»), որը ներկայումս գործածվող թվերով կատարվի մեկից հետո քսան գրո՞ւ: Նկատենք, որ տասերից ավելի բարձր («բյուրից» մինչև «կայսր գունդ») կատարվող հաշվարկի համակարգի հիմքում կրկին տասնորդական (10.000 բազմապատիկով ստեղծված) համակարգն է: Այնուհետ է՝ այդ համակարգի հիմքում ընկած է հաշվարկի տասնորդական սկզբունքը:

Նշենք, որ մաշտոցյան տասերով մեզ հասած թվերի նշումներում ընդունվածից բացի հանդիպում է մի սկզբունք ևս, որն ավելի անկատար է, քան վերը նշվածը: Օրինակ՝ 3900 թիվը փոխանակ այրտահայտելու երկու տառով (ՎՋ - 3000 + 900), նշվում է չորս տառով՝ ԳՌԹՐ (3 × 1000 + 9 × 100)⁴: Ավելի կատարյալ համակարգն ունենալու պարագայում անկատարն օգտագործելն առաջին հայացքից տարօրինակ է թվում. դրան կանոնադաշտմանք քիչ ավելի ուշ:

Մեսրոպ Մաշտոցի ապրած ժամանակաշրջանում Հայաստանում կիրառվել են հունական, ասորական և պարսկական այբուբենները: Դրանցից և ոչ մեկը չունի թվանշանների այրտահայտման այնպիսի

կատարելություն, ինչպիսին Մաչուոցի այբուբենինն է: Փյունիկյան, ասորական և 22 տասանոց այլ այբուբեններով նշվել է մինչև 499 թիվը ներառյալ (9 միավոր, 9 տասնավոր և 4 հարյուրավոր): Նույն սկզբունքով գործող հունական այբուբենը, դասական շրջանում ունենալով 27 նշան, բաժանվել է երեք 9-ական սյունակի՝ արտահայտելով մինչև 999-ը ներառյալ⁶: Մնաքոս Մաչուոցի ապրած ժամանակաշրջանում հունական այբուբենի թիվը կրճատվել և հասել էր 24-ի, սակայն հավելյալ նշանների միջոցով ապահովված էր նույն ծավալի հաշվարկը: Հին արաբական այբուբենի հիմքում ընկած էր նույն թվաբանական սկզբունքը, ընդ որում, այն բաղկացած էր 28 տառից (9 + 9 + 9 + 1). 28-րդ տառով նշվում էր 1000-ը⁷:



Կարելի էր միանգամից ենթադրել, որ Մաչուոցը վերցրել է իր ժամանակ Հայաստանում գործածվող հունական և ասորական այբուբենների թվանշան համակարգի սկզբունքը և, ելնելով այբուբենի տառերի քանակից, ստեղծել է մինչև «բյուր» հասնող քառաստիճան համակարգ, եթե մախաբրիտոնեական Հայաստանում չունենայինք հազարամյակների ճանապարհ անցած թվաբանական համակարգ, որի հիմքում ընկած է հաշվարկի տասնորդական սկզբունքը: Ընդ որում, այն այնքան խորն արճատևել ուներ, որ անգամ հաշվարկի վաթսուհական համակարգ ունեցող միջագետքյան սեպագրի քարեկոթիվամբ ստեղծված Վանի թագավորության սեպագրում ևս կիրառվում է տասնորդական համակարգը (տե՛ս տոթրև):

Հին Արևելքի թվանշան համակարգերի ուսումնասիրությունը գույց է տալիս, որ մեր մախնիները դեռևս մախնադարում ստեղծել են յուրօրինակ թվանշանային համակարգ, որի սկզբունքները ժառանգաբար հասել են մինչև միջնադար:

Թվից	Բնայնական	Եզրայնական	Սեպտյիք	Ինքս-ցածրական
1	•, *		▼	
3	••, ••, •••, •••, ••••, •••••, ••••••, •••••••		𐌵	
5	•••••, ••••••, •••••••, ••••••••, •••••••••, ••••••••••, •••••••••••, ••••••••••••, •••••••••••••	 	𐌶	
10	⊙, 7 ⁽⁷⁾	∩	<	—
100	×, ∨ ⁽⁷⁾	9	▶	⊗ ⁽⁷⁾

Ի տարբերություն եզրայնոսի, Փոքր Ասիայի, սեպտյիքը գործածող Միջագետքի և առաջավորասիական երկրների, Հայկական լեռնաշխարհում թվերի նշումները կատարել են ոչ թե գծիկներով, սեպեղով կամ այլ սիմվոլիկ նշաններով, այլ կետ-շրջամակներով (տե՛ս աղ. 1): Թվերի կետային նշումը, լինելով հայաստանյան երևույթ, գալիս է դեռևս ժայռապատկերներից, արտահայտվում է մինչքրոնզեդարյան (օրինակ, Թեղուտից գտնված Ք.ա. 5-4-րդ հազարամյակներով թվագրվող խեցեղենի քեկոթները, տե՛ս նկ. 1), բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների իրերի վրա⁸: Այն իր կատարելությամբ է հասնում Վանի քաղաքապետության մեծնազրոթյան մեծ, միաժամանակ դասնալով վերջինիս տեղական ծագման ապացույցներից մեկը⁹:

Վանի քաղաքապետության հիերոգլիֆակիր ատարկաների մեջ մեծ թիվ են կազմում տարողության նշումներով խեցեղեն ամանները, որոնց վրա բազմաթիվ տարբերակներով հանդիպում են մեկից մինչև ինը թվերի նշումները՝ կետերով (աղ. 1): Տարողության նշումներում կետերի կոթքին հանդիպում են որոշ ատարկաների գծապատկերներ (տիկ, սափոր, գավաթ, բառ և այլն), որոնք չափի միավորներ ցույց տվող հիերոգլիֆներ են: Կայասների վրա ատարկաների պատկեր-նշաններից բացի հանդիպում են ևս չորս հիերոգլիֆներ, որոնցից երկուսը, ամենայն հավանականությամբ, համապատասխանաբար, ցույց են տվել մաս 10 և 100 թվերը¹⁰ (տե՛ս նկ. 2 և աղ. 1):

Հատկանշական է, որ հաշվարկի տասնորդական համակարգ են ունեցել մախամաշտոցյան Հայաստանում կիրառված օտար ծագում ունեցող գրահամակարգերի մեծ մասը: Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Նիրատի հովտում, Ք.ա. 15-8-րդ դարերում կիրառվել է խեթա-լու-

վիական մեհենագրությունը (հիերոգլիֆիկան), որում 1-9 թվերը նշվում էին ուղղահայաց գծիկներով, իսկ 10-ը, 100-ը և 1000-ը՝ հաստուկ նշաններով¹¹: Այսինքն՝ այստեղ ևս գործ ունենք հաշվարկի տասնորդական համակարգի հետ:

Ասորա-բաբելոնական սեպագրությունը կիրառել է հաշվարկի վաթսուհակամ համակարգը¹², որը Հայաստանում լայն գործածություն չի ունեցել:

Բիսյանական սեպագրության մեջ թվերը նշվել են երկու կերպ՝ հաստուկ սեպագիր-քվանշաններով և վանկանշաններով դրանց անունները գրելով: Առավել տարածված է առաջին տարբերակը: Սեպագրով թվեր նշելու սկզբունքը ներկայացված է աղ. 2-ում: Ամենափոքր միջը մախատեված էր կեսի (0,5), իսկ ամենամեծը 1000-ի համար: Համակարգը հնարավորություն էր տալիս գրելու անասնամորեն մեծ թվեր. օրինակ՝ երկու «1000» նշանակող սեպանշանները իրար կողքի դնելով՝ ստացվում է մեկ միլիոն ($1000 \times 1000 = 1000000$)¹³ ...

0.5 𐎠	10 𐎡	100 𐎢 𐎣
1 𐎠	11 𐎡	200 𐎢 𐎢
2 𐎡	12 𐎡	300 𐎢 𐎣
3 𐎢	20 𐎡	1000 𐎣
4 𐎣	30 𐎡	2000 𐎢 𐎣
5 𐎣	50 𐎡 𐎡 𐎡	10000 𐎣 𐎣
6 𐎣	60 𐎡 𐎡 𐎡	14000 𐎣 𐎣 𐎣 𐎣
7 𐎣	70 𐎡 𐎡	22 000 𐎣 𐎣 𐎢 𐎣
8 𐎣	80 𐎡 𐎡	1000000 𐎣 𐎣 𐎣
9 𐎣	90 𐎡 𐎡	...

Աղ. 2

Հետաքրքիր է, որ անգամ հաշվարկի վաթսուհակամ համակարգ ունեցող միջագետքյան սեպագրի բարեփոխմամբ ստեղծված Վանի թագավորության սեպագրում ևս կիրառվում է տասնորդական համակարգը, ինչի հետքերը պահպանվել են «60»-ից մինչև «100» թվերի գրության մեջ¹⁴: Իսկ դա նշանակում է, որ Վանի թագավորությունից շատ առաջ հաշվարկի տասնորդական համակարգը խոր արմատներ ուներ Հայաստանում:

Հռոմեական այբուրենը Հայաստանում լայնորեն օգտագործվել է նաև քվանշման մպատակով: Մասնավորապես, տառերի թվային արժեքով գործածվելը հաճախ է հանդիպում Արտաշեսյանների դրամների վրա, տառերով նշվել է ժամանակի հաշվարկը սելևկյան¹⁵ և փյունիկյան¹⁶ տո-

մարմնով, երբեմն՝ բվագրման հիմք ընդունելով արքայի գանակալության սկիզբը¹⁷: Նույն երևույթն առկա է մաև վիճագիր արձանագրություններում¹⁸:

Մեր ձեռնպահ ենք մնում Հայաստանից հայտնաբերված արամեատառ արձանագրություններում թվանշանների կիրառումը ջնմարկելուց, քանի որ դրանց այսօր հրատարակված վերծանությունները խիստ կասկածելի են¹⁹:

Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո Հայաստանում լայն կիրառություն է ստանում մաև ասորերենը՝ իր այբուբենով (22 տառ, աքից ծախս գրությամբ), որով կարելի էր գրել մինչև 499-ը ներառյալ (9 միավոր, 9 տասնավոր, 4 հարյուրավոր)²⁰:

Պաղևազական (միջին պարսկական) այբուբենը, որը կիրառվել է Արևելյան Հայաստանում 387 թ. Հայաստանի բաժանումից հետո, թվային արժեքով չի կիրառվել:

Անփոփոխելով մալեանաշտոցյան Հայաստանում կիրառված թվանշան համակարգերի այս համառոտ տեսությունը՝ տեսնում ենք, որ Մեսրոպ Մաշտոցի այբուբենի թվահամակարգի հիմքում ընկած տասնորդական սկզբունքն արդեն հազարամյակների ուղի էր անցել Հայաստանի և՛ տեղական ծագում ունեցող, և՛ ներմուծված գրահամակարգերում:



Նկ. 2

Վերադառնալով մաշտոցյան տառերով թվերի նշման երկրորդ ընդունվածից շնորհիվ սկզբունքին, որն ավելի անկատար է, նկատենք, որ այդ սկզբունքը ոչ թե պատահական է, այլ ճշգրտորեն կրկնում է մինչալթրեմական ժամանակաշրջանի գրահամակարգերում (և՛ տեղական մեհենագրության մեջ, և՛ ներմուծված ու Հայաստանում բարեփոխված սեպագրում) ընդունված թվանշան սկզբունքը: Նույն 3900 թվը նշված համակարգերում արտահայտվել է «3 × 1000 + 9 × 100» (.ԳՌԹԸ.) բանաձևով, մինչդեռ մաշտոցյան այբուբենի սկզբունքով այն պետք է հարյուրվեր «3000 + 900» (.ՎՋ.): Ավելի կատարյալ համակարգ ունենալու պարագայում անկատարն օգտագործելը կարելի է բացատրել միայն ավանդույթի ուժով, այսինքն՝ այն իմացամանքով, որ պահպանվում է գրելու ինն ավանդական նդանակր: Իսկ սա նշանակում է, որ մալաքրիստոնեական ժամանակաշրջանի թվաբանական ավանդույթները շարունակվել են մաև քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո:

Քրիստոնեության պետական կրոն հռչակումով Հայաստանում արգելվեց մեհենագրությունը, քայք չէր կարող վերացվել թվաբանությունը (հաշվահամակարգը), որն ընկած էր կենսական քոլոր պահանջների կատարման հիմքում: Քրիստոնեական եկեղեցին չէր կարող այն վերացնել ատուվել ևս այն պատճառով, որ Հայաստանում կիրառված թվահաշվարկման համակարգը շատ ավելի կատարյալ էր, քան նկատմված գրաստանակարգերից շատերի հաշվարկման սկզբունքները:

Քննելով մաշտոցյան այբուբենի թվահամակարգի առավելությունները՝ հին և միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմության լավագույն մասնագետներից Գ. Բ. Պետրոսյանը գրում է. «Հավանական պետք է համարել, որ Հայաստանում մախամեարդայան ժամանակաշրջանում գոյություն է ունեցել հայերեն լեզվով գրականություն... Մեր կարծիքով, անկասկած պետք է համարել մահ այն, որ Հայաստանում մախամեարդայան ժամանակաշրջանում գոյություն է ունեցել թվարկության մի որոշ սխառն, հավանական է՝ դա եղել է այբբենական սխառն: Սակայն հարցը վերջնականապես ճշտելու համար պակասում են պատմական փաստերը»²¹: Յավոք, այսօր ևս այս հարցում հավանական ենթադրություն անելուց շատ եռու չենք կարող գնալ²²: Դժվար է այսօր պատասխանելը՝ Մեսրոպ Մաշտոցը վերցրել է հոմիական այբբենական սկզբունքը և կատարելագործել, թե՞ զարգացրել է մախաքրիստոնեական ժամանակներից եկող տեղական քվանչման ավանդույթները:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ V դարում Հայաստանում շարունակվում են մախաքրիստոնեական ժամանակաշրջանից եկող թվաբանական ավանդույթները: Ընդ որում, առկա են քվանչման երկու սկզբունքներ: Դրանցից մեկը գալիս է մինչայբբենական ժամանակներից և Հայաստանում անցել է հազարամյակների ճանապարհ: Երկրորդը նման է այսօր ենագույնը համարվող հոմիական այբբենական թվահամակարգին, հնարավոր է, որ մաշտոցյան այբուբենի թվահաշվարկման սկզբունքը վերցված լինի վերջինից, սակայն չի քսցառվում, որ այն լինի տեղական զարգացման արդյունք:

ARTAK MOVSISYAN

THE PRINCIPLES OF MARKING THE NUMERALS IN THE PRE-MASHTOTSIAN WRITING SYSTEMS OF ARMENIA AND THE NUMERATION SYSTEM OF MESROP MASHTOTS'S ALPHABET

The study of the alphabetic numeral system created by Mesrop Mashtots and its comparison with the principles of numeration of the pre-Mashhtotsian writing systems of Armenia shows that they are connected genetically.

In the V century AD the Armenians used two principles of numeration. One of them may be originated from the Greek system, and the second one – from the pre-Mashotsian native writing systems of Armenia.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ալբրեխտյան համակարգերի մասին կա քաղականին մեծածավալ գրականություն, տե՛ս, օրինակ, Выгодский М. Я., Арифметика и алгебра в древнем мире, М., 1967, էջ 245-259; Майстеров Л.Е., Роль алфавитных систем нумерации, "Историко-математические исследования", выпуск XIX, М., 1974, էջ 39-49 (ուսն հոդված գրականությունը):
2. Գագման հարցի քննարկումների մասին տե՛ս Выгодский М. Я., նշվ. աշխ., էջ 250-259:
3. Տարրերակելու համար, որ տվյալ ղեկարում տառն ասի թվային արժեք, վերևում գրվում էր հորիզոնական գծից կամ սկզբում ու վերջում դրվում էր կետ կամ երկու կետ (մնամ ախորվա վերբակետին): Կետը լուրջ հատուկ նշան՝ մնամ Ե տառին:
4. Արքաժամյան Ա.Գ., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973, էջ 89-96 (հոդված աղբյուրներով հանդերձ):
5. Պետրոսյան Գ.Բ., Մնարուկ Մաշտոցը և թվարկության հայկական համակարգը, Միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմությունից (Հողվածների ժողովածու), Ե., 1986, էջ 17 (նույն հոդվածը տե՛ս Մնարուկ Մաշտոց (Հողվածների ժողովածու), Երևան, 1963, էջ 261-282):
6. Դասական շրջանում հունական տառերի և թվերի համապատասխանության աղյուսակը տե՛ս, օրինակ, Jensen H., Die Schrift in Vergangenheit und Gegenwart, Berlin, 1958, էջ 424, նկ. 443; Friedrich J., Geschichte der Schrift, Heidelberg, 1966, էջ 275, նկ. 182; Фридрих И., История письма, М., 1979, էջ 333, նկ. 182 և այլն:
7. Выгодский М. Я., նշվ. աշխ., էջ 254-256: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հունական համակարգում տառերի ղեկքի և թվային արժեքների միջև կա անհամապատասխանություն, որը չկան հին արարականում (չլիթերի «արարական» անվամբ հայտնի ախոր լայնաբերկ կիրառվող թվանշանների հետ, որոնք հնդկական ծագում ունեն), հեղինակը ներառում է, որ հունականը կարող է ծագել հին արարականից:
8. Մենք առայժմ ստույգ պատկերացումներ չունենք Վանի թագավորությունից առաջ Հայաստանում գործածված թվանշանների համակարգ(եր)ի մասին: Սակայն տեսնելով թվերի կենտանշման հայաստանյան առանձնահատկությունը, որը գալիս է մախագային ժամանակներից (ժայռապատկերներ, զանազան հնագիտական իրերի վրա կատարված նշումներ) և ժառանգել է Վանի թագավորության մեհենագրությունը, կարելի է ենթադրել, որ վերջինս ժառանգություն է ստացել ոչ միայն թվանշանների պատասխան տեսքը, այլև հաշվահամակարգի սկզբունքները:
9. Տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Հայկական մեհենագրություն, Ե., 2003, էջ 23-24, 77-78:

10. Ի դեպ, բնց խաչի նմանիղ նշանը, որի համար մանր ենթադրարար արարարեում ենք «100» նշանակությունը, տեսել գրեթե նույնանոմ է խերս-րուիական «100» բվանշանին (Laroche E., Les Hieroglyphes Hittite, I, Paris, 1960, էջ 213, N 399; Дунаевская И.М., Язык хеттских иероглифов, М., 1989, էջ 105; Il Geroglifico Anatolico. Sviluppo della ricerca a venti anni dalla sua "ridecificazione" (a cura di M. Marazzi), Napoli, 1998, էջ 64, 115):
11. Թվանշանները խերս-րուիական մեհննապետրյան նշանացունկերում (Laroche E., նշվ. աշխ.; Il Geroglifico Anatolico..., էջ 15-124; հայերեն բարգմանված՝ Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան ..., էջ 282-321), սովորարար, գեոեղեում են 380-400 համարներում:
12. Այս բավականին բարդ համակարգի բացատրությունը կարելի է գտնել բարեիունյան բնարանությանը նվիրված բազմարիղ աշխատանքներում, տե՛ս, օրինակ, Вейман А.А., Шумеро-вавилонская математика, М., 1961; Выгодский М. Я., նշվ. աշխ., էջ 76-233, միայն համակարգի մասին՝ էջ 89-95; Нейгебауер О., Точные науки в древности, М., 1968, էջ 44-82 (նշված գրականությունը հաներծ):
13. Բնայնական բվանշանները և դրանց տատարարումը վիտանյան գրականության մեջ տե՛ս Մովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան Հայաստանի..., էջ 379-380:
14. Վանի բազավորության սնապարի բվանամակարգը տասնորդական է (տե՛ս Պետրոսյան Գ.Բ., Թվարանությունը Ուրարտում ըստ ուրարտական սնապարի արձանագրությունների, ՏՀԳ, 1945, թիվ 3-4, էջ 55-72; Պետրոսյան Գ.Բ., Սարեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Ե., 1959, էջ 10-29; Исраелян М.А., Уточнения к чтению урартских надписей. Об урартской системе счисления, ДВ, 2, Е., 1976, էջ. 115-117; Варданян Р.О., Асатрян Д.Г., Некоторые замечания по метрологии Урарту, ՊՐՀ, 1980, N 2, էջ 166-178): Համակարգում առկա է մեկ բացատրություն: Դա «60»-ից մինչև «100» բվերի գրությունն է: Տասնավորների շարքը յախարտված՝ «60» թիվն ունենում է նոր նշան, և «70»-ը ներկայացվում է «60 + 10», «80»-ը՝ «60 + 20», «90»-ը՝ «60 + 30» բանաձևով (փոխանակ «7 x 10», «8 x 10», «9 x 10»-ի), ինչը միջագետրյան միջավայրում տարածում ունեցած հաշվարկի 60-ական համակարգից պահպանված մնացուկ է: «100»-ը ունենում է նոր նշան, որից հետո ևս շարունակվում է տասնորդական սկզբունքը (տե՛ս աղ. 2):
15. Մուշեղյան Խ.Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.), Ե., 1983, էջ 50-51; Nercessian Y.T., Armenian Numismatic Studies, Los Angeles, 2000, էջ 24, 47; Nercessian Y.T., Silver Coins of Tigranes II of Armenia, "Armenian Numismatic Journal", 2000, vol. XXVI, Nos. 3 & 4, էջ 100 և այլն:
16. Մուշեղյան Խ.Ա., Դրամական ..., էջ 105-124; Nercessian Y.T., Silver ..., էջ 101-102; Nercessian Y.T., Armenian ..., էջ 25, 48-49 (և նշված գրականությունը):
17. Bedoukian P.Z., Coinage of the Artaxiads of Armenia. London, 1978, էջ 26; Մուշեղյան Խ.Ա., Դրամական ..., էջ 56:

18. Օրինակ՝ Տրդատ արքայի Գտնիից գտնված իտալեր արձանագրության մեջ նշվում է, որ անբոլջ կատուցվել է նրա բազալորության 11-րդ տարեմ. «11» թվանշանը արտահայտվում է ԱI տառերով (արձանագրության մասին եղած հրապարակումների ցանկը տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան ..., էջ 138-139):
19. Տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան ..., էջ 88-110, հատկապես՝ 108-110:
20. Ասորական այբուբենը՝ իր թվահամակարգով, տե՛ս Լոուկոսկա Չ., Գրի գարգալումը, Ե., 1955, էջ 155-157; Jensen H., նշվ աշխ., էջ 295-301; Brockelmann C., Syrische Grammatik, Leipzig, 1962, էջ 4-12; Дирингер Д., Алфавит, М., 1963, էջ 336-346; Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան ..., էջ 390-391:
21. Պետրոսյան Գ. Բ., Մաթեմատիկան ..., էջ 37-38:
22. Նախամաշտոցյան գրի ու դպրության մասին ժառանգորական տեղեկություններում և քննարկումներում, ելնելով Մովսես Խորենացու հաղորդումից (գիրք Գ, գլ. ԾԳ), որ տեսիլքի ժամանակ Սիւրապ Աշտոցին հրեաց յոր ձայնավորների զգվելը, բազմիցս հաշտնվել է այն կարծիքը, թե նախամաշտոցյան այբուբենը (պահպանված ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ) ունեցել է 29 տառ (Դանիելի մոտ պահպանված զբառամակարգի նշանների թվի մասին ատուկ նամրամասն տե՛ս Աճառյան Հ. Զ., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 441-460, 484-493): Մյնչ օրս որևէ նշտրական վկայություն չի հայտնաբերվել նախամաշտոցյան 29 տառանոց այբուբենի մասին (մեհենազարդումը ավելի քան 300 նշանից բաղկացած քառավանկային համակարգ էր): Սակայն եթե տեսականորեն ընդունենք, որ մեհենազարդության զարգացման ու պարզեցման ճանապարհով կարող էր ստեղծվել 29 տառանոց այբուբեն, կարելի է մաս ներառել, որ այն կարող էր ունենալ մինչև «բյուր» հասնող (9 + 9 + 9 + 1 + 1) թվահամակարգ, որի 27 տառերով գրվելու մինչև 999-ը ներառյալ, 28-րդը ունենար 1000-ի, 29-րդը՝ 10000-ի արժեք, այսինքն՝ մաշտոցյան այբբենական թվահամակարգի նիւրբըրը անկա լինեին նրանում:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

ԴԵՎՇԻՐՄԵ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՆԱՎՈՐԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Դեվշիբենն օրինականացված պարտադիր հարկ էր, որով պարբերականորեն 15-17-րդ դարերում Օսմանյան կայսրության քրիստոնյա հայատակներից տղաներ էին հավաքում, որոնք բռնի կերպով մահմեդականացվում էին և շարունակական ազդեցության արդյունքում ամբողջությամբ տալանջատվում էին իրենց ազգային միջավայրից՝ վերջնականորեն դառնալով մահմեդական և ժառանգելով օսմանյան իշխանության կարիքներին։

Այս երևույթը ցայժմ հայ գիտնականների կողմից չի արժանացել ժամբանասն ուսումնասիրության. առավել հայտնի է միայն ակադեմիկոս Մ. Ջուլալյանի հոդվածը սլավոնա-թանասիրական հանդեսում¹, որը կարելի է համարել սույն հարցի ուսումնասիրության առաջին ու իմաստաբար քայլը հայ ժամանակակից օսմանագիտության մեջ։ Հայ հեղինակների մոտ այս հարկատեսակը ավելի հաճախ հանդիպում է մանկահավաք, մանկատուղի կազմակերպչների ներքո²։ Որոշ արտասահմանյան գիտնականներ, դեվշիբեն համակարգը նկարագրելիս ու նրա զարգացման մասին խոսելիս, հիշատակում են միայն թաղկանյան ժողովուրդներին ու չեն նշում, որ դեվշիբենն կիրառվել է նաև հայերի հանդեպ³։ Դա թերևս հետևանք է այն բանի, որ նրանց հայտնի չեն հայոց մեջ կատարված այդ հարկումների վերաբերյալ փաստերը, ինչը խոսում է այն մասին, որ հայ հիշատակարանները, որոնք միջնադարյան Արևելքի ուսումնասիրության հարուստ սկրնաղբյուր են, պատշաճ կերպով ներկայացված չեն գիտական աշխարհի քննությանն ու ուսումնասիրությանը։

Ինչևէ, սույն հոդվածի շրջանակներում մեր առջև խնդիր չենք դրել անդրադառնալ հայոց մեջ դեվշիբենի անցկացման հարցին։ Ստորև փորձ ենք արել միայն ներկայացնել դեվշիբեն համակարգի սկզբնավորման պատմությունը։

Ըստմանակակից սլավոնագիտության մեջ փնտրում են տարբեր բացատրություններ դեվշիբեն համակարգի առաջ գալը քաղաքային կամային։ Որոշ պատմաբաններ կարծում են, որ այս հարկատեսակը ծագել է

օսմանյան հետևակր բազմամայր դարձնելու անհրաժեշտությունից, որ զգալիորեն պակասել էր Քայսզեղ I-ի որդիների երկապատակության պատճառով: Այդք դու ի հայտ գալը պայմանավորում են օսմանակապատակ քրիստոնյա ժողովուրդներին մահմեդականացնելու օսմանյան պետության նկատմամբ: 4

Օսմանյան որոշ պատմագիտներ փորձել են դեկլարենի սկզբնավորումը ներկայացնել որպես սուլթանի հանճարեղ հորինվածք⁵, ինչպես օրինակ Սաադեդդինը⁶ կամ «Ենիչերիսկան կոլլալուսի օրենքների ծագման պատմության» ձեռագրի ամանուն հեղինակը⁷ Լուս գեղմամացի հետապտող Բ. Պասուլյան դեկլարեն համակարգի սկզբնավորումը առաջ է քերում փենջիք համակարգից ու վերագրում Օրեան I-ի ժամանակներին⁸: Այս մտեցումը իրավացիորեն քննադատել է Ս.Վրյունիսը իր գրախոսակալում⁹:

Փենջիք համակարգը Օսմանյան պետությունում գործում էր մանկահավաքից առաջ: Հարկվում էին պատերազմի ժամանակ գերի վերցրած գորանդամանատարները և զինվորները. զանձվում էր ռազմագերու արժեքի 1/5-ը¹⁰: Փենջիքը կիրառվում էր նաև գերի ընկած քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ. գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թուրքերին հանձնել կամ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին՝ թուրքական բանակի շարքերը լրացնելու մպատակով, կամ համապատասխան փրկագին¹¹: Այն սկիզբ է առնում Վերամից ու շարիաթի հարկային համակարգում մահմեդականներին զանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր. «Եվ խմացեք, եթե դուք վերցրել եք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը... Այն, ինչ նախատեսված է Ալլահի ու իր մարգարեի համար, ուղղվում է հասարակական կարիքների բավարարմանը, դրանք սահմանել է մարգարեն իր կյանքի ընթացքում ու որոնք սահմանում է իմամը նրա մատվանից հետո¹²»: Այսպիսով, սուլթաններն օգտագործում էին այդ իրավունքը ու սրահանջում ավարի մեկ հինգերորդ մասը¹³:

Համաձայն օսմանյան պատմագիտ Ալըքփաշազադեի՝ փենջիքը Օսմանյան կայսրությունում գործածության մեջ է դրվել Մուրադ I-ի ժամանակ: Նա հիշատակում է մի փաստ, երբ Մուրադի ակնառու գորսհրամանատարներից Էլօննուզ քեյին հրահան էր տրվել ասպատակել «անհավատներին» երկիրն ու կենդանի ավարի մեկ հինգերորդ մասը հանձնել Մուրադին: Ինչպես հաղորդում է Ալըքփաշազադեն, ռազմագերիներն այնքան շատ էին, որ Չանդարը Խալլվն առաջարկեց հանձնել վերջիններիս ամատողական թուրքերին, որպեսզի նրանց ուսուցանվի թուրքերեն լեզուն: Գերիները մահմեդականացվում էին և աշխատեցվում, իսկ հետո ուղարկվում Մուրադի մոտ¹⁴: Այսպես էլ կազմվում է, ըստ Ալըքփաշազադեի, ենիչերիսկան զորաբանակը:

Փենջիքով սուլթանին հասած գերիները ոչ միայն համալրում էին ենի-չեքիական զորաբանակն, այլև դառնում էին սուլթանի անձնական ստրուկները, նրա քիվնագործի ամրամենքը և այլն:

Փենջիքը, սակայն, չէր բավարարում օսմանցիների մարդկային տեսակների պահանջը¹⁵։ Պատճառն անընդհատ ընդլայնվող զավթումների քաղաքականությունն էր, որը ռազմական ուժի անընդհատ աճ էր պահանջում: Այդ քաղաքականության մեջ կարճ դադար տեղի ունեցավ միայն 1402 թ. Անկարայի ճակատամարտից հետո¹⁶: Տասնամյա երկարատևության պատերազմներից հետո Մեհմեդ 1-ի օրոք (1413-1421թթ.) շարունակվեցին օսմանյան նվաճումները, սակայն այսին ներքին այլ պայմաններում: Վաղ ավատատիրական իշխանությունները փոփոխություններ էին կրել օսմանյան հասարակությունում. երաժեշտ էր տրվել զարգացման թե՛ ցեղային, թե՛ սելջուկյան մոդելներից:

Նոր պայմաններում, չնայած օսմանյան անվիճելի իշխանություններին, հնարավոր չէր անսահմանափակ գերել զբաղյալ տարածքների ազգաբնակչությանը: Նվաճումը սկսվում էր կիսաքոչվորների աստատակություններով, որոնց գլխավոր նպատակը կողոպուտն էր ու գերիվառությունը, և վերջ է վերջո վերափոխվում նոր տարածքների համար պատերազմի: Օսմանյան ազրեխյան, որը տարվում էր «աբդար կրոնի տարածման» նշանաբանով, նոր հողեր գրավելու նպատակ էր նետապնդում, որոնք այնուհետև բաժանվում էին որպես պայմանական կամ մշտական տիրույթներ՝ ձևավորելով ավատատիրական նոր դասակարգ: Նոր նվաճված շրջանում ընտրյալները առանում էին վիթխարի հողային տիրույթներ՝ խասեր՝ կամ մյուլքեր, իսկ սիպահիները, որոնք հիմնական ռազմական ուժն էին նամղիսանում, մասնակցում էին ռազմական գործողություններին համաձայն այն պայմաններին, որոնցով նրանց էին տրամադրվել իրենց հողակտորները՝ թիմարները կամ զեաներները¹⁷: Սա բերեց նրան, որ այլևս անհնարին դարձավ զանգվածաբար տրակցենել զբաղյալ տարածքի ժողովրդին այնպես, ինչպես դա անհրաժեշտ էր օսմանյան բանակին իր զավթողագործությունը շարունակելու համար: Դա կնշանակեր ավատատիրական տիրույթները գրելի աշխատավոր ձեռքից, առանց որի դրանք այլևս գոյություն չէին ունենա: Հողերի ամայացումը հակառու էր նաև կենտրոնական իշխանության շահերին: Այդ ժամանակաշրջանում հիմնվում էր վարչական ապարատը, ձևավորվում սուլթանի աջբունիքը, որն այսին մեծապես տարբերվում էր հին ժամանակների բյուրքի բարբառոտական ճամբարից: Այդքան ծախսերի համար չէր կարող բավարար լինել գերիների վաճառքից եկող ոչ մշտական, անկայուն եկամուտը: Ինչպես և բոլոր պետություն կազմող հասարակություններում, այստեղ ևս պետք էր ապահովել կայուն, մշտական եկամուտ հարկերի միջոցով, որոնք հավաքվելու էին նպատակ ժողովուրդներից: Այսպես, հակառակ ռազմական իշխանու-

յունենքի ու տարածքային ընդարձակմանը՝ ռազմագերիների ներհոսքը զգալիորեն պակասեց, ինչի հետևանքով աղքատացավ ոտնիկ ստացող օսմանյան հետևակի համալրումը:

Սրկլաթը զործոնը, որը նույնպես ունի մասնաժամանակապատկերային կարիք, օսմանյան պետությունում կրոնա-էթնիկական իրավիճակն էր: Այն իր սահմաններում ներառում էր մահմեդականների և քրիստոնյաների, ընդ որում վերջինների համամասնությունն ու զանգվածը նորանոր նվաճումների հետևանքով անընդհատ աճում էր, ինչը միջին դարերի համար յուրյ խնդիր էր: Օսմանցիների նախորդները, անկախ այն բանից, թե իրենց պետական կազմավորումը տեղի է ունեցել ըստ եվրոպական մոդելի, ինչպես օրինակ Ռյուզանդիան և Բուլղարիան էր, կամ ասիականի՝ ինչպես Իրանը և Սելջուկյան սուլթանատը, համախմբում էին իրենց տարակազմ քնակչությունը համաձայն մեկ կրոնի սկզբունքի: Օսմանյան կայսրությունը չէր կարող կիրառել նույն սկզբունքը: Ի հայտ գալով Փոքր Ասիայում՝ այն զարգացրել էր բունատիկություն մի տարրերակ, որի պետական կրոնը մահմեդականությունն էր: Սակայն դեպի Բալկաններ տարածվելով՝ այն ներառեց նաև քրիստոնյա ժողովուրդներ, որոնք քանակական առումով գերազանցում էին մահմեդականներին: Եվ նոր նվաճված տարածքներում խշխանությունը պահպանելու համար օսմանյան պետությունը ջանում էր արագ կերպով ավելացնել մահմեդական տարրը: Սակայն դեռ առաջին քայլերը ցույց տվեցին, որ մահմեդականացման դասական միջոցները, որոնք կիրառվում էին այն ժամանակվա մահմեդական հասարակություններում, այստեղ՝ Բալկաններում, ալյքան էլ արդյունավետ չեն: Դրա պատճառը մահմեդականության դեմ ներքին դիմադրությունն էր, որը հավանաբար թիւում է քաղկանյան ժողովուրդների պետականատեղծ երկար պատմությունից և գյուղատնտեսական հարաբերությունների զարգացված լինելուց¹⁸: Այնտեղ քրիստոնեությունը հնուց ի վեր հաստատված էր որպես գաղափարախոսություն, որի հետ համապատասխան ստեղծվել էր կենցաղային, իրավական, քաղաքական ու ավանդական նորմերի միջափայլը: Մահմեդականությունը, որն ի հայտ է եկել քաղվորական կենցաղի արմատներ ունեցող տնտեսություններից հասարակություններում, չէր կարող դուրսբերվել ներքնովից այստեղ: Փոքր Ասիայից եվրոպական տիրույթներ և կամ այդտեղից Փոքր Ասիա քնակչության տեղափոխումները արագորեն ցույց տվեցին իրենց ամարդյունավետությունը¹⁹: Մահմեդական վերաբնակիչ խմբերը դժվար էին համակերպվում նոր պայմաններին, համաձայն որոնց պետք է ընդմիջտ անցնեին նստակյաց կյանքի: Վերաբնակիչների մշակակալի մի մաս, ինչպես օրինակ յուրյուքները, շալա-մակեցիին իրենց քաղվորական կյանքը և 16-րդ դարից հետո²⁰: Իսկ քաղկանյան ազգաբնակչության բունագաղթը Փոքր Ասիա չէր կարող լինել անստանաճախակ, քանի որ քերթատու շրջանները կզրկվեին աշխա-

տանքային ձևերից: Հիմնական մեթոդները, որոնց օգնությամբ օսման-
ցիները ջանում էին ներակայության մեջ պահել իրենց թվապես գերակշ-
ռող գրավիլայ ժողովուրդներին, համաձայն թուրք պատմաբան
Մ.Թ. Գյոքքիզիհի, ենթերկաական զոլարստանական զինվորական ծառա-
յությունն էր ու մահմեդականացումը²¹:

Բալկանյան երկրների արիստոկրատիայի մի մասի մահմեդականաց-
ումը օգտակար կերպով անդրադարձավ օսմանյան դեկավար մոդելի
կայացման վրա: Մահմեդականացվածները ներմուծեցին դեկավարման
փորձ ու ավանդույթներ օսմանյան իսասրակություն. փորձ, որը ձևեր էր
բերվել սլավոնա-բյուզանդական քաղաքակրթության նրկայատև զար-
գացման արդյունքում²²: Սակայն նրանք չառ տակավաբիվ էին, որպես-
զի ազդեցություն բողոնին ընդհանուրի վրա: Բացի այդ օսմանցիները
վախենում էին բողոնե նրանց իրենց ազգային միջավայրում, որտեղ
նրանք կարող էին գլխավորել իսկաստանական դիմադրական կույր-
ներ նոր նվաճված տարածքներում: Սկանդերբեգն Ալքանիայում իսս-
տատեց այդ մտահոգությունները²³:

Օսմանյան իշխանությունը գործի էր դրել մահմեդականացման իր
բարդ մեխանիզմը Բալկաններում, սակայն իսկատակ դրա գոյությանը
քրիստոնյաների ու մահմեդականների միջև խարաբերակցությունը անհ-
մար էր կարճ ժամկետում վախել հոգուտ վերջինների: Բացի այդ 15-րդ -
դարի ստաջին կեսին օսմանյան պետությունում տղամարդկանց վեր-
խարի պահանջարկ կար: Օսմանցիները սկսեցին իրենց հեծյալ աշխար-
հագործում օգտագործել քրիստոնյա սխաբահիներին, ինչը լիավին հակա-
սում է չարիասին: Ղեկավար ապարատ, ինչպես և արքունիք, ոչ մահմե-
դականներ նշանակելը նույնպես չարիասի ռոմանիստություն էր²⁴: Սա-
կայն քանը դրանում չէ օսմանյան տիրակալները, ինչպես և այդ ժամա-
նակների ամեն տիրակալ, բազմիցս նեչտությամբ խախտել են կրոնա-
կան նորմերը, եթե դա բխում էր իրենց իշխանության շահերից: Սակայն
կար խնդիր, քանի որ քրիստոնյաների քանակական գերակշռության
դեպքում նրանց ուղղակի ու զանգվածային ներմուծումը վարչական ա-
պարատ ու արքունիք կարող էր խարցականի տակ դնել պետության
մահմեդական բնույթը և արգելակել նրա էքսպանսիոնիստական քաղա-
քակաճությունը:

(Այս իրավիճակում, ելնելով պետական ու ռազմական ապարատում
մայրկային ռետուրաների խիստ կարիքից, օսմանյան իշխանությունը
ճիշտ ժամանակին, արագ ու նպատակային կերպով քրիստոնյաների մի
մասի մահմեդականացմելու ձև գտավ: Այն սկսեց բոնությանը հավաքել
քրիստոնյա բնակչության երեխաներին, որպեսզի մահմեդականացնի և
դարձնի իր զինվորները: Սկզբնապես քրիստոնյա երիտասարդության
հազվադեպ և փոքրաքանակ հավաքները դարձան իսկահախակի և զանգ-
վածային ու ի վերջո օրինականացվեցին որպես պարտադիր հարկ:)

Եվ ամեն անգամ, ամեն նվաճման հետ մեկտեղ կրկնվում էր փենցի-
քից դեվչիքոնն անցման գործընթացը: Այսինքն, սկզբում նվաճված տա-
րածքի բնակիչները համարվում էին ուղղափառների, և նրանցից հավաքում
էին փենցիք: Ապա՝ այդ տարածքների ամրագրումից հետո, բնակիչները
դառնում էին Օսմանյան կայսրության հպատակներ, ու նրանց հանդես
այդին կիրառվում էր դեվչիքոնն համակարգը:

Որպես այս մեխանիզմի կիրառման օրինակ կարելի է մատնանշել
մահ Հայաստանի դեպքը: Այսպես, Անանուն Մերաստացու ժամանա-
կագրության մեջ կարդում ենք, քե. «...Ի քիւն ՋԿԸ (1519թ.) քարկութիւնն
աստուծոյ սաստկացաւ և սուղան Մէլիմն տղայ ժողից ի քրիստո-
նէից²⁵»: Մելիմ սուլթանին որպես մամուկաձայն սահմանող հիշատա-
կում է մահ 17 դարի հեղինակ Վայդան Բաղիչեցիին («...և Յստաւ ինքն
քազաւոր սուլթան Մէլիմ ամս տասներեք, որ սահմանեաց զտղայքն ժո-
ղովե²⁶»):

Երեք ընդունենք, որ «մանկահավար», «մանկաժողով» եզրերը օգտա-
գործում ենք ոչ թե որպես զուտ տղաների հավաքելու երևույթը նկարագ-
րելու, այլ որպես «դեվչիքոնն», «արյան հարկ», որը հպատակ քրիստոնյա
ազգաբնակչությունից պարբերաբար հարկման ինստիտուտ է, ասքս
մենք որպես դեվչիքոննի սկիզբ ընդունում ենք 1531 թվականը համաձայն
Անանուն Մերաստացու 16 դարի ժամանակագրության, քե. «...Ի քիւն
ՋԶ (1531) տղայ ժողիցին ի քրիստոնեից...²⁷», կամ էլ 1531 թվականի մի
ձեռագրի հիշատակարանի («Ծովին ՋԾ (=1531) Սուլթան Սուլեյմանն...
ենիչայա համար տղայ ժողովեց ի հայոց ազգէս...²⁸»):

Այսպես, օսմանցիները Հայաստանի տարածք մուտք են գործել
1514թ. Չաղդանի ճակատամարտից հետո ու դեռ երկար տարիներ Հա-
յաստանը եղել է պատերազմական դաշտ Իրանի ու Օսմանյան կայս-
րության միջև: Ի նկատի ունենալով այն, որ դեվչիքոնն համալրվում է
կայսրի հպատակ քրիստոնյաներից հավաքվող հարկ²⁹ մենք 1519 թվա-
կանով թվագրվող մամուկահավարի առաջին մախադեպը չենք կարող
համարել դեվչիքոնն: Սա փենցիք համակարգի կիրառություն է, քանի որ
1519 թվականին Արևմտյան Հայաստանը օսմանցիների համար ռազմա-
դաշտ էր և հետևաբար հայերը գերված ժողովուրդ էին, որոնց մեկ էինգե-
յորալը պատկանում էր սուլթանին:

Իսկ որ փենցիքը կիրառելով՝ օսմանցիներն այնուամենայնիվ գոր-
ծում էին ընտրողաբար ու հավաքում էին միայն տղաներ, այդին խոսում
է դեվչիքոննի նրանց հարուստ փորձի մասին, որը նրանք ձեռք էին բերել
Բաղկանյան թերակղզում: Այդպիսի քան լայնորեն կիրառվել է փենցիքից
դեվչիքոնն ինստիտուտի անցման փուլում և նախալոյ ժամանակներում և
վկայված է Լ. Հալոցոնոնիլի կողմից, համաձայն որի Նովո Բոդոնի գյուղ-
ման ժամանակ 1467թ. օսմանցիները ենիչեքի վերցրեցին 320 երեխա,
իսկ Պելոպոնեսից՝ 200³⁰:

Այն, որ դեվչիքմեն սկզբնական փուլում օգտագործվում էր փենջիքի պակասը լրացնելու համար երևում է նաև Յակով Պրաննետրիտ դե Կամպիտի օսմանյան պետության մասին գրվածքից, որը երասպարակվել է 1475թ. և նկարագրում էր 2-3 տասնամյակ առաջ եղած իրադրությունը: Նա գրում է, որ ենիչերիական գործը հավաքագրվում էր տարբեր տարածքներից գեղված երեխաներից, իսկ երբ գերի չկար, սուլթանը համայնում էր ենիչերիական զորամասերը իր սեփական քրիստոնյա նպատակների երեխաներով³¹: Դե Կամպիտի այս տեղեկություն, որը վերաբերվում է Մուրադ II-ի կառավարման (երբ հավանաբար օրենքի ուժ էր ստացել դեվչիքմեն) և Մեհմեդ II-ի կառավարման սկզբի տարիներին, ցույց է տալիս, որ հիմնական նորակազմակերպված փենջիքից էին, սակայն դեվչիքմեն քացատված չէր: Սրա օգտին է խոսում նաև այլ քննյթի մեկ սկզբնադրյուր՝ թիմարական տիրույթների 1455թ. ընդարձակ նկարագրությունը (աշխարհագրորդ): Թիմարատերերի հետ մեկտեղ գրացված են և մի քանի ենիչերի, սրունց գրանցել են անվանք և ծնված քաղաքով: Այնտեղ հանդիպում ենք ենիչերիներ Ալի Ֆիլիքեդի (այսինքն՝ Պլովդիվցի), Յուսուֆ Մուամիլագրու (այսօրվա Ասեմովգրադ), Մուստաֆա Նեգորիչյանցի, Յուսուֆ Ռազոմիրցի, Թիմուրթաշ Ստրամիցացի, ինչպես նաև Քարաբա Մաջար, Դոդան Մաջար և այլն³²:

Այն ժամանակ, երբ Մաջար անունը, որն անկասկած էրնիկական հատկանիշ է մատնանշում (մաջար-հունգարացի), ցույց է տալիս որ Միջին Եվրոպայում օսմանյան ազդեցության ընթացքում ենիչերի են հավաքել փենջիքի միջոցով, օսմանյան տիրույթների կենտրոնական քաղաքներից ծագումը եուշող անունները վկայում են դեվչիքմեով ենիչերիական զորամասակ մտցված երիտասարդության մասին:

Երկարատևության պատերազմները, որոնք տեղի ունեցան 15-րդ դարի առաջին տասնամյակում, էական նշանակություն ունեցան դեվչիքմեի զարգացման համար: Օսմանյան ժամանակագիրների տեղեկացմում են, որ Մուսային գործում ներառվել էին 7 000 ենիչերի՝ քվարանակ ինքնին չափազանց մեծ, որ դա հավաքագրված լինել փենջիքի միջոցով³³: Շատ հավանական է, որ հենց այդ ժամանակ է սկիզբ առել ոչ մահմեդական երիտասարդության բռնի զանգվածային հավաքագրումը: Չնայած այս դեպքում էլ այս բնակչությունը նույնպես հավաքագրվում էր թերևս որպես ոչ թե նպատակներ, այլ ռազմագերիներ, քանի որ իրենց հողերը դարձել էին պատերազմական գործողությունների քատերաքիմ և պատերազմող կողմերի զինվորները իրենց վերաբերվում էին որպես նոր նվաճված տարածքների բնակիչների:

Այս ամենը ցույց է տալիս, որ դեվչիքմեն համակարգը ամենևին էլ օսմանյան սուլթանների միանվագ երթնվածքը չէ:

Ենիչիքմեի երևան գալն ու զործադրության մեջ դրվելը պայմանավորված էին պատճառների բարդ համակարգով, որը ծագում էր օսման-

յան պետության հաստատվական, կրոնական ու ազգային պայմանների յուրահատկություններից: Այն հակասում էր շարխարին²⁴, քայց հաջող կերպով յուծում էր ազրեսիայի քնթացքում քանակում ու ղեկավար ապարատում ժարդկային ռեսուրսների տեսակետից անհետաձգելի խնդիրներ: Շարխարն այս անգամ էլ անտեսվեց օսմանյան պետության տղղակի շահերը քավարարելու համար: Որպես փենցիք համակարգի շայտնակություն ղեկչիւմննն քստ էտրյան մահմեդական աշխարհում ատրկական յնատիտուտի՝ մմանօրինակ շարունակություն էր. կենտրոնական իշխանության կարիքներն ապահովելու համար ստրուկների հավաքման ձև, որի տեղի էր ունեցել յորահատուկ պատմական պարագանելյում՝ սկիզբ առնելով Սվրուպայի հարավ-արևելքում 14 դարի վերջին և 15 դարի սկզբին օսմանյան իշխանության հաստատման արդյունքում և ապա տարածվելով քրիստոնյա յոլոր հպատակների վրա:

ARTAK SHAKARYAN

ABOUT THE ISSUES OF THE INCEPTION
OF THE DEVSHIRME SYSTEM

The article represents some basic questions regarding the inception of devshirme levy system, periodical boy-tribute, taken from Christians in the Ottoman Empire in 15th - 16th centuries. Based on facts collected from Armenian medieval manuscripts, Ottoman documents, published in Bulgaria, as well as narrative sources, author analyses some main factors, which influence was crucial for the inception of devshirme. Author concludes that the devshirme system was instituted in the newly occupied territories only after having practiced the pencik system, one-fifth tax, for a while, and that devshirme was not a brand new "invention" of some Ottoman sultans, rather, it was a further development of the pencik system.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ջուլալյան, Մ., «Ղեկչիւմնն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեք ըստ բուքրական և հայկական արդյունների, ՊԲՀ, 1959, #2-3, էք 247-256:
2. Տես Չամչյանց Մ., Հայոց պատմություն (սկրից մինչև 1784 թվականը), Գ հատոր, Նրևան, 1984; Օրմսնյան Մ, Ազգապատում, հատոք Բ; Լեռ, Նրկրերի ժողովածու, Նրրորղ հատոր, Գիրք առաջին, Նրևան, 1969; Մ.Ջուլալյան, նշվաշխ.:
3. Օրթնակ, Gibb H.A.R. & Bowen Harold, Islamic Society and the West, Volume I, Part I, London, New York, Toronto, 1951, որղ համարվում է ծիմնարար աշխատություն միջնադարյան Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրման տեսակետից:
4. Георгиева Ц., Еничарите в българските земи, София, 1988, стр 68.

5. Նրանք, ենիչերական զորաբանակի ստեղծման պարագաները նկարագրելիս, տեղեկացնում են, թե յայս գործը աչքի էր ընկնում իր վերին աստիճանի անկարգապահությամբ, ինչը տեղից Մուսուլ I-ին կազմավորել նոր բանակ (ենի չերի): Համաձայն հեղինակների բոլոր ըստիմանքին հրամաններ են ստացվելու ոչ մահմեդականների միջև պատանիների հավաքի վերաբերյալ: Այսպեսով հավաքվում է հազար եռյոթ, որոնք էլ կազմում են էոք զորքի կորիզը:
6. Петросян И.Е., К истории создания янычарского корпуса, Тюркологический сборник 1978, М., 1984, стр. 194.
7. Şhu. Mebde-i kanun-ı yenninleri odkağı тарихи (История происхождения закона янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели Петросян И.Е., Москва, 1987.
8. Paroulia B., Ursprung und Wesen der "Knabenlese" im osmanischen Reich, Munich, 1963, p.71.
9. Ավելի մանրամասն տես. Vryonis S., Review of Ursprung and Wesen by B.Paroulia, *Balkan Studies*, 5 (1964), p. 145-153.
10. Шамсутдинов А., Проблема становления османского государства по турецким источникам за., Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, (сборник статей), под ред. Орешковой С., Москва, 1986, стр. 35.
11. Չարխյան Մ., նշվ. աշխ., էջ 248.
12. Толкование священного корана на арабском и русском языках, Каир, 2000г., Аль Анфаль, 41-42.
13. Vryonis S., Seljuk Gulams and Ottoman Devshirmes, *Der Islam*, Band 41, 1964, p.227-228.
14. Петросян И., там же, стр. 193.
15. Ergun Y., Devşirme sorunu, *Belletten*, Aral* k, 1986, s.712.
16. 1402թ. օսմանյան սուլթան Մուսուլ I-ը ծանր պարտություն կրեց Անկլ Թեմուրի գործերից (Uzunçarşılı İ.H., *Osmanlı Tarih*, Ankara, 1947, c. I, 166):
- թիմար – մինչև 20 000 արշև նկամուտ քնքող ավատ;
 - զեամեր – 20 000-ից մինչև 100 000 արշև նկամուտ քնքող ավատ;
 - խաս – 100 000-ից ավել նկամուտ քնքող ավատ;
 - մյուր – ավատ, որի տերն այն կարող է վաճառել, բողմել որպես ծառանկություն կամ նվաճել մեկ այլի:
 - սիլահի – օսմանյան զինվորական համակարգում հեծյալ զինվոր, որը ստացած թիմարի դիմաց պարտավոր էր մասնակցել պատերազմների (աղբյուրը՝ Pakalın M.Z., *Osmanlı Tarih Deyimleri ve Terimleri Sözlüğü*, Milli Eğitim Basımevi, İstanbul, 1971, c. I, 2, 3):
17. Мутафчиева, В., Аграрные отношения в Османската империя през 15-16в., София, 1962., стр. 33-35.
18. Георгиева, Ц., там же, стр. 69-70.
19. Այս մասին ավելի մանրամասն տես. Тодоров Н., Балканский город 15-19 веков: социально-экономическое и демографическое развитие, Москва, 1976.
20. Երեմեն Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 181-186:

21. Радушев Е., Место вооруженных сил в структуре османской феодальной системы на Балканах, Османская империя: государственная власть и социально-политическая структура, под ред. Орешковой С. (сборник статей), Москва, 1990, стр. 112.
22. Георгиева, Ц., там же, стр. 70.
23. Ավանդորբնոց (Վերջի Կաստրիտոի, Անժնդիր Իվանովիչ)՝ ճոռ 1405-1468, այրանացի իշխան, ռուրը գաղթողների դեմ արանացի ժողովրդի պայքարի հայտնի դեկավար: Նա պատանի հասակից սուլթան Մուրադ I-ի ժամանակ ննիչերի էի վերջվել:
24. Георгиева, Ц., там же, стр. 70.
25. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951, էջ 169:
26. Արամյանց Գ., Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, էջ 71:
27. Հակոբյան Վ., նշվ. աշխ., էջ 169:
28. Ջուրաբյան, Մ., նշվ. աշխ., էջ 251:
29. Pakalin M.Z., *ibid.*, c. I, s.444-448.
30. Георгиева Ц., там же, стр. 74.
31. По следите на насилнето, Документи и материали за налагане на исляма, Съставител Петър Петров, Част първа, София, 1987, стр. 216-217.
32. Георгиева Ц., там же, стр. 73.
33. Георгиева, Ц., там же, стр. 71.
34. Wittek P., *Devshirme and sharia*, BSOAS, 1955, XVII/2, p.271-278; Inalcik H., *Studies in Ottoman Social and Economic History*, VII, *Sevile labor in the Ottoman Empire*, London, 1985, p. 25-52.
35. Ավելի փառ ժամանակներում ճահնեղական աշխարհում ստրկական ուժի օգտագործման մասին տես, Ն. Հովհաննիսյան, Արարական երկրների պատմություն, Երևան, 2003; Vryonis S., *Seizak Gulams and ...*, p.224-252.

ՊԱՎԵԼ ՉՈՐԱՆՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XVIII դարի երկրորդ կեսի հայոց ազատագրական ձգտումների համար միափորձան առանցք կարող էր ծառայել միայն նկեղեցին, որի հնարավորությունները լիակատար օգտագործելուն ձեռնամուխ եղավ 1763 թ. գահ բարձրացած Սյամոն Երևանցի Հայոց կաթողիկոսը: Նրա բոլոր ֆանքերը ուղղված էին առաջին հերթին Էջմիածնի հեղինակության բարձրացմանը, ժողովրդի կենսամակ ուժերի համախմբման ու պետականության վերականգնման երաշխավոր դարձնելու գործին: Այդ աղ-դաթյամբ Սիմեոն Երևանցու ֆանքերը ծրագրված են ու հետևողական: Էջմիածնի վերահսկողությունը պետք է տարածվեր հասարակության բոլոր շերտերի ողջ գործունեության նկատմամբ և ամենուրեք: Սիմեոն Երևանցին վերստին սահմանում է հայոց ազգային պատկանելության չափանիշը¹, որը պետք է առաջնորդող դատնար կենտրոնացված ուժեղ հավաքականություն ստեղծելու ճանապարհին:

Էջմիածնի Հայոց կաթողիկոսության և Ռուսաստանի փոխհարաբերությունները մինչև 1765 թ. կրում էին գերազանցապես դիպլոմատային բնույթ, թեև հայտնի է նաև, որ 1760 թ. Վրաց Թեյմուրազ քազավորի Ռուսաստան ճանապարհովելու առիթով Հակոբ Շամախեցի կաթողիկոսը հատուկ միջնորդական-համձմարարական մամակով Ռուսաց արքունիքին առաջարկում էր քնդառաջել Թեյմուրազ Երկրորդի առաքելությանը՝ նրա խնդրանքները ներկայացնելով նաև որպես Հայոց համայն և օրախախտիչը հարցնել: Ինչ-ինչ պատճառներով, սակայն, այդ մամակի քնազիլը մնացել է Էջմիածնում և չի հասել հասցեատիրոջը²: 1763 թ. հաջորդելով Հակոբ Շամախեցուն, Սյամոն Երևանցին կանգնեց մի շարք հրատապ խնդիրների լուծման առաջ: Մահմեդականության տիրապետության պայմաններում Էջմիածնից բազում դժվարությունների էր հանդիպում ոչ միայն մահմեդական իշխանությունների հետ հարաբերություններում, այլև հայ իրականության մեջ առկա բազում տարածայնությունների ու աննուգությունների պատճառով:

Գեորգ Լակոբ Եամախեցի կաթողիկոսը իր գահակալության ժամանակ, Պարսկաստանում կենտրոնական իշխանության վերացումից և տեղական խաների ինքնիշխան դասնալուց հետո, Էջմիածնի Արոտի պահանջները (14 կետով) մերկայացրել էր Երևանի խանին (1173-1759թ.) և հաստատել տվել այն: Իմենորդ կեսի պահանջն էր. «Տաճիկը բռնութեամբ զՀայս մի՛ տաճկացուցեմ»: Նույն փաստաթուղթը Սիմեոն Երևանցի կաթողիկոսը հաստատել է տալիս նաև Երևանի Հյուսիս-այլի խանին (1176- 1763թ.)³: Նույն թվականին այդ իրավունքները հաստատվում են Իրանի կառավարիչ Քեթիմ խանի կողմից:

Կաթողիկոսական Արոտի և Հայոց եկեղեցու իրավունքները հայրենի երկրում ամրապնդելն ու պաշտպանելը Սիմեոն Երևանցու համար դառնում են առաջնահերթ խնդիրներ: Նա կազմում է Ջամբու կալված ժողովածուն, որ իրավական վավերագրերի հավաքածու և Հայոց եկեղեցու համատեստ պատմությունն է: Սիմեոն Երևանցին գրում է, թե «յուսամբ, զի [Աստուած]... այց այսասցէ և վերանորոգեցէ զհնութիւն խղճարոյ ազգես մերոյ և վանօրէիցս: Եւ յայնժամ եթէ զլէս ոչ, զոմէ գաւեր տեղիսն միջից և զվիճակս յոյեանց ճանաչեցեմ իւրաքանչիւրքն»⁴:

Ռոշալիկ նարատակալարումով Սիմեոն Երևանցին 1766թ. Պետերբուրգ է ուղարկում մի դեսպանության՝ Դավիթ վարդապետի գլխավորությամբ⁵: Լուծելիք հարցերից գլխավորն էր Ռուսահայոց թեմը Գանձասարի կաթողիկոսության իրավասությունից Էջմիածնի իրավասությանը փոխանցելը և Ռուսաստանի հայ համայնքի կողմից միայն Էջմիածնի գերագահության լիցենզիան ապահովումը: Պատվիրակությունը պատվով կատարեց իր առաքելությունը⁶ և 1768թ. վերադարձավ Էջմիածին՝ իր հետ բերելով եկատներինա երկրորդ կայսրուհու կրամանագիրը այն մասին, որ Հայոց եկեղեցու ոչ մի հոգևորականի չի բույրատրվի ալևա մուտք գործել Ռուսաստանի տարածք առանց Էջմիածնի կրայխավորության՝: Այդ առիթով Սիմեոն Երևանցին գրեց Ռուսական կայսրուհուն ձոնված մի աղոթք, որը պետք է ճշտապես կատարվեր պատասխանով ժամանակ:

1773 թ. Սիմեոն Երևանցին, քնակամաքար ոչ առանց նարատակալիոր հատակ ցուցումների, Ռուսահայոց թեմի առաջնորդ նշանակեց երիտասարդ եպիսկոպոս Հովսեփ Արղությանին: 1774 թ. Իրանի Ռեշտ նավահանգստից նավով Հովսեփ Արղությանը ժամանեց Աստրախան: Նույն թվականին ավարտվում էր ռուս-թուրքական պատերազմը՝ Քյուլուկ Կայնաբքիում կնքված պայմանագրով /1774 թ. հուլիսի 10/, որի հաստատումն ու կրապարակումը տեղի ունեցավ մոտ մեկ տարի անց: Հովսեփ Արղությանը, ձեռք ձգելով հաշտության պայմանագրի տեքստը, այն քարզմանում է հայերենի և առաքում Էջմիածին: Պայմանագրի 7-րդ կետով Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանին իրավունք էր վերապահվում նաև դեռ զարու Օսմանյան տեղաբնակ մեծ քրիստոնյաների շահերի

պաշտպանությանը⁸։ Ստորև ներկայացվող մամուլը իսկապես բնագրով և ռուսերեն երկու քարգծանությունը պահպանվել է Մաչուտցի անվան մատենադարանում պահվող Լազարյանների արխիվում։ Այն անստորագիր է և անբնական։ Եղևելով դեպքերի զարգացման ընթացքից, մամուլի որոշ առանձնահատկություններից և իսմաղբերով այլ փակերագրերի հետ, ակնհայտ է դառնում, որ մամուլի հեղինակը Միմեոն Երևանցին է։ Պատասխան այդ մամուլը պետք է թվագրել 1778-1779թթ., Հեմվելով պայմանագրի վերոհիշյալ կետի վրա, Միմեոն Երևանցին Հ. Ալաությանին և Լազարյաններին առաջարկում է միջնորդել և հարց հարուցել Ռուսական կառավարության առաջ, որպեսզի Կ. Պոլսի Ռուսական դեսպանին ցուցում տրվի օժանդակելու և հովանավորելու նաև Հայոց եկեղեցու ներկայացուցիչներին։ Ստորև քերում ենք այդ շատ արժեքավոր մամուլի լրիվ տեքստը, որը մինչև այժմ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից։

«Չայս ևս գիտացիր, իսպառնան դաշնագիրն տեսաք և շատ հաւանեցաք։ Աստուած միշտ յաղթող և բարձրագլուխ պահեսցէ ի պարծանս ամենայն քրիստոնէից։ Բայց թպէտ այլ քրիստոնէից աման զայ ի մէջ նորին, Հայոց անունն բնա յկայ։ Մամաւանդ մեծ բարեկարարին Ռուսմելու երկրի քրիստոնէիցն է եղեալ։ Իսկ Անատոլու երկրի քրիստոնեայքն և մամաւանդ՝ Հայքն, խեղճ մնան, թպէտ զրեալ է, թէ քրիստոնեայքն զինչ ցասու ունիցին, մեր էլլուն արզ արասցեն, սակայն Անատոլու Հայքն, ի նոցանէ երկնչելով, ոչ կարեն արզ առնել։ Վասն որոյ ընդ օրինեալ իշխանին մերոյ աստուծով զօրացեալ Ալայ Յովհաննիսին խորհրդակցիցին, երէ կարնի իցէ, զրել տան մէջ հրաման ի վերայ Պոլսու մտուղ էլլան, թէ՛ Պատրիարքն Հայոց ի յԷջմիածնէ, երէ մէկ խնդիր ինչ արտայլ թեզ վասն հաւատոյ, օրինաց և եկեղեցեաց՝ յաղ և կատարող յինիցի։ Այս է մեծ օգնութիւն և բարեկարարին խոնալի ազգես Հայոց և Արտայս և յատկական յիշատակ իրեան օրինեալ յամուանն։ Երէ պատշաճ տեսցէ, ես արզայ զրեցից օրինեալ մօրն սորոմութեան և կամ մեծ իշխանին։ Չայսմանէ խօսեալ՝ մեզ ծանուցեա։ Բաւ էս՝»

Ուշագրայվ է այն փաստը, որ ինչպես նամակում է պահանջ դրվում, իբրք նույն քովանդակությամբ մեկ հրամանագիր ռուսական արքունիքը 1781 թ. հունվարի 11-ին¹⁰ ուղարկել է Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Մտախիևին, երբ այդեն մոտ կես տարի առաջ փախճանվել էր Միմեոն Երևանցին։ Հռովաբուսակի մեջ Մտախիևը տեղեկացվում է Էջմիածնի կաթողիկոսության և Ռուսական արքունիքի միջև ծավալված փոխհարաբերությունների մասին սկսած 1768 թ.։ Ապա հրամանագրում նշվում է, թե Հովսեփ Արղությանը կաթողիկոսի անունից նոր պահանջներ է առաջադրել մասնավորապես. «чтоб препоручено было вам, как нашему при Порте Оттоманской министру, оказывая со стороны вашей помощь и защищение присылаемым в столицу Турецкую от

патриарха Армянского начальникам духовенства при встречающихся для них надобностях»¹¹;

Առայժմ մեք չունենք որևէ վկայություն այդ բժականներին Հայաստանում որևէ խնդրի շուրջ Ռուսական դեսպանության կողմից օժանդակություն ստանալու մասին, սակայն այդ հնարավորության հիմքերը արդեն իսկ ստեղծվել էին Սիմեոն Երևանցու և Հովսեփ Արղությանի ջանքերով¹²։ Շուտով այդ հնարավորությունը օգտագործվեց, սակայն, միայն Հովսեփ Արղությանի կարողիկոսական թեկնածության առաջադրման, ապա և Դավիթ-Դանիելյան հայտնի եակամարտության բորբոքման նպատակով։

Քերին խանի մտեր Իրանը նորից կանգնեցրեց քաղաքական փլուզման և իշխանատենյ ուժերի երկարատև բախումների փաստի առաջ։ 1779 թվականը ծանր տարի էր բուն Հայաստանի և հատկապես Արարատյան դաշտի բնակչության ու Էջմիածնի կարողիկոսական Արոտի համար։ Հերակլ Երկրորդի արշավանքը մեծ վնասներ էր բերել ոչ միայն տնտեսությանը, ցանքատարածություններին, այլև բնակչության բռնազարթից եկող սրել հայաբնիկությունները մահմեդական իշխողների ու նայ բնակչության և, մասնավորապես, Էջմիածնի Արոտի հետ¹³։

1780 թվականի հունվարի 1-ին անակնկալ Հովհաննես Լազարյանին ու Հովսեփ Արղությանին այցելում է Ի. Պ. Գորիչը և նայտնում «զգնալն իրենանց ի վերայ Պարսից առ ի տիրել զժողովեղերեայ տեղիան»¹⁴։ Հովսեփ Արղությանը իր օրագրում պատմում է 1780 թ. հունվարի առաջին երկու շաբաթների անընդմեջ կանդիդատները Ա. Վ. Սուվորովի և Գ. Ա. Պուտյակինի հետ¹⁵, որը նոր փուլ էր մախանչում նայ-ռուսական հարաբերություններում։ Հայոց քաղաքական դիրքորոշման կարևորությունը Ռուսաստանի համար իր կնիքն է թողնում նաև կելեղեցական-դավանական նարքերի լուծման վրա։ Հայ գործիչներն ավելի հաստատակամորեն են պնդում դավանական պատկանելությունն անխաթար սլահելու իրենց վճռականությունը և մխաժամանակ Ռուսական եկեղեցու հետ հարաբերություններում ստանում հենց ռուսական քաղաքական չորանների աջակցությունը¹⁶։

1780-1790-ական թվականներին անընդմեջ սովորացող ռուսահայ զարթօջախում ձևավորվող դավանական փոխադարձությունները ևս ձեռք են բերում քաղաքական ուղղվածություն։ 1779 թ. փետրվար-մարտ ամիսներին Հ. Արղությանը այցելություններ է կատարում Մոսկվայի արքեպիսկոպոս Պատռոնին, որը «բազում խօսակցութիւնս արար վասն հասարակ մերոյ և աւանդութեանց կելեղեցոյ, և յաղագս զքաղաքութեանցն Յունաց առ մեզ, և վասն պէտպէս բաջաղմանց Յունաց յաղագս պահոցն սլքոյն Սարգսի, զորս ամենայն լուծար, և գտուեալ պատճառսն մեր ողջամիտ վարդապետութեանք ընկալաւ»¹⁷։ Նայն թվականի մարտի 31-ին «սրբազան Պատռոնն հրատիրեաց գմեղ գնալ ի սօրոն և անդ տեսանել

գտոյր պատարագն և զհանդէսն մեծ...զմացաք ընդ ազնուացն մերոց Ադայ Յովհաննէսին և Ադայ Մինասին, տարան զմեզ ի սեղանն սարք և անտի տեսաք զբոլոր հանդէսն. յոյժս յարգեցին զմեզ ի սեղանոցն անմայն դասքն հոգևորաց, և բազմաց խայթել լեալ անխմաստ և գոհնիկ ժողովրդեանն ժուտն մեր անդ. և զբազում բունալի նմոս էին արծակեալ առ սրբազան Պրատոն արքեպիսկոպոսն վասն տանելոյն զմեզ ի սեղանն, որպէս ինքն և այլք պատմեցին մեզ, զի միտք նոցա զհետ էր քնքացեալ ատասպել և անխիղճ գրեցելոց, զյալաշուտքեանցն Յունաց որ առ մեզ. անարժան վարկանէլն գտանել մեզ ի սեղանի անդ: Բայց վառեալն ատուածային հոգովն սրբազան արքեպիսկոպոսն քամահեալ զմտտի բաշտղմոսն անխմաստից յայր ի վերայ կտրութեան նոցա, բայց զկնի այսր մինչ յաճախեցին բազմութիւնք ի յեկեղեցիս մեր ի ժամ պատարագելոյն մերոյ նախարարք և իշխանք, վաճառականք և հասարակ ժողովուրդք, բուլացաւ աղատաղել նոցա և մանաւանդ թէ՛ յատջիցնն էր այս տեսութիւն նոցա Հայոց նախկտպոս իբրով ձեռով գտանիլ ի յեկեղեցիս յունեանց»¹⁸:

Արդեն իսկ 1780 թ. փետրվարի 18-ին մեծ հանդիսավորությամբ կատարվում է Պետերբուրգի սուրբ Կատարինէ եկեղեցու օծումը, որը շրջադարձային դեր պիտի ունենար Հայոց դավանաբայան նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի ձևավորման գործում: Օծման հանդիսաբանմանը, ըստ Հովսեփ Արղությանի Հիշատակարանի, մերկա են և դեռ «ամենայն մախարարքն և յոյժ հառանցեան ամենայն արարողութեանցն մերս սուրբ եկեղեցոյ և բազում գայրակողութիւնք բարձուն»¹⁹:

Հայոց համակրանքը շահելու ձեռնարկումներն էր նաև նույն թվականի մայիսի 9-ին Հովսեփ Արղությանի ու Հովհաննէս Լազարյանի կայսրուհու, իսկ հունիսի 4-ին՝ քազաժառանգ Պապի Պետրովիչի կողմից ընդունելության արժանացնելու փաստը: Մեկ տարի անց, 1781 թ. մայիսի 9-ն, Հովսեփ Արղությանի արձանագրմամբ, «ծառատեցաք ի Նախիջևան քաղաքոս զհոգևոր դատարանս և եղաք ի նմա զբազում կանոնս ի շաղաց նախնի հարցն մերոց ի կատարութիւն մեին և...կարգեցաք ի նմա հոգևոր դատարոս, զմի վարդապետ և զերկու քահանայս»²⁰: Նոր Նախիջևանի հոգևոր դատարանի կանոնադրությունը, որ սպազդովել էր 1795 թ. Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի տարարանում, բաղկացած էր վեց մասից և պարունակում էր 126 հոդված, որով առաջնորդվում էին Ռուսաստանի բոլոր հայկական եկեղեցիները մինչև 1836 թվականի նոր կանոնադրության ընդունումը²¹:

Ռուսաստանում ճանապարհորդության ժամանակ Հովսեփ Արղությանը առիթ է ունեցել համոզվելու բարձրաստիճան ուս հոգևորականության ներկայացուցիչների հետ և արժանանալու հատուկ ընդունելության: Իր Հիշատակարանում նա գրում է, թե 1781 թ. հունիսի 12-ին «համոզվեցաք ի Բօրբառ քաղաքն առ արքեպիսկոպոսն Նիկիփոս, որ էր

առաջնորդ Քերստնու և Նոր Ռուսաց. իբրաք ի վրանսն, պահեաց զճեզ երկու օր և եղոյց զրազմաղիմի ժարդասիրութիւնս: Եւ անտի զմացաք առ զուսի Պետր Ալէքսանդր Ռուսնեցով իրթմա/ք/չալն ի զխղն յօր Վիշինկայ, որում եղև յարսխաութիւն յոյժ, իբրոյց զճեզ ի վրանի զեղեցկագոմի, զոր ի յՕսմանցուցն էր զերեսայ. պահեաց զճեզ յորս օր և յամենայն ատուր՝ առառու և երեկոյի, առ մեզ զայր և զճեզ առեալ տանէր առ ինքն ի ճաշեզ: Եւ յետ քազում ժարդասխական պատուոյն կամեցաւ առաքել զճեզ ի Քիով քաղաքն, յորում են քազում վամօրայք և տեղիք սքրոց... Գրեաց զիր յանձնարարական առ սքրազան Գաբրիէլ մետրուպօլիտն ծերունի, առ արքիմանդրիտն Չոսիմէ, և առ կոմսնդանուն Իվան Ստեփանիչ Կուկիսովն՝ ընկալնուլ զճեզ և պատիո ցուցանել: Պեչերսկի վանքում արժանանալով սրատվալոք ընդունելոյթյան Չոսիմէ արքիմանդրիտի կողմից. Հ. Արդարայանը հրավիրել է Գաբրիէլ մետրուպօլիտի մոտ, որը ևս «քազմաղիմի պատիւս և սէրս եղոյց և մամաւանդ առ սուրբ հաւատս մեր, որ զԳամծ արամեանն ունկով ի ծնոխն, զօվէր ի մէջ հրապարակին, յորում էին նոզևարսկանքն և երեկի աշխարհականք՝ թէ՛ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է Հայոց հաւատն, և այլ այտալիսի քանս համարձակութն և սա ընկալեալ զճեզ ի սեղանն սուրբ, և յետ արձակման սքրոյ պատարագին, զնշխարս տային մեզ և զգինի: Եւ յեւանելն մեր ի յեկեղեցոյն խառն ի ճաղանն ամբոխն՝ անցեալ ի վերայ մեր, ամենքին աջ առեալ՝ զօրծնութիւն խնդրէին»²⁷:

Միմեռն Նրևանցուն հաջորդած Վռկաս Կարմեցու գահակալության տարիներին, օրինակ, կազմված Հայ-ռուսական դաշմագրի մախազծի առաջին իսկ կետը պահանջում էր դավանական խնդիրներում երկուստեք հանդուրժողական վերաբերմամբ: Երկրորդ կետով պահանջվում էր «Չինտտեղս յիտարանչիսի ազգացս ընկալնուլ ի հաղորդութիւն իբր զպրոտրիչս և խոովարարս սիրոյ և խաղաղութեան», իսկ երրորդ կետով՝ շարժել մահմեդականների և հեթանոսների կողմից Հայոց դավանանքի ընդունումը: Մրանք հարցեր էին, որանք իրավական կարգավորում էին պահանջում, հրատաւ խնդիրներ էին կենդանի իրականության մեջ, քանզի Հայոց եկեղեցին ստիպված էր մեծ նեղույթունների զնով դիմագրավել ռուս հեզուրականության ճնշմանը: Այդ մասին վկայում է 1782 թ. Հովսեփ Արդարայանի արձանագրած այն փաստը ևս, թե Մոզդուկի Հայոց եկեղեցին, որ «չարածնիկ Գօրգի ոմն կամեցեալ էր ռուսանալ և զեկեղեցին զայն ևս դարձուցանել, որոյ աղագաւ նախկնապոսն Ռուստաց և գործունարն վճիտ էին հաստատեալ՝ հրամանաւ Սյնօրին ընկալնուլ, իսկ Մոզդուկս ժողովալայքն ոչ էին տուեալ առանց մեզ, այլ և զզիրս իրենաց զքեալ էին մեզ: Մեք գրեցաք Հաշտարխանու գաբրեմաթին, մինչ ոչ ինչ օգտեցաք ի մնանէ, բողոք մեր արկաք առ սքրազմասուրբ Սինօրի գահակալ Պետրապօլցու արքեպիսկոպոս Գաբրիէլն, մա յուսադրեալ մեզ, խօսեալ ընդ գահակեցացն իրոց. և ընդ պայմատափայլ ընեազին, մխի-

բարեալ յուսարքեալ մեզ, և առաքեալ առ քննագն: Քննագն, որպէս
հարկն էր, գրեաց սաստ և յանդիմանութիւն Հայտարխանու գործունա-
բին և նպխակոսոսին՝ ի բաց բարոյ զեկեղեցին մեր և մի մեղել զմեզ, որ
ընդդէմ է կայսերական մեծութեան գրութեանմ...Յետ այսարիկ գրգռիչ
Գօրկին և ընկելոցն գրչացեալ ի յանկատար այսարմանց իրեանց, գիր
մեղայական գրեցին մեզ և մեք ընկալաք զմուսա ի հալոսյութիւն եկեղեց-
ոյ»²²:

Հայոց եկեղեցու համար դավանական հանդուրժողականության
մքնալորտ ձևավորելու գործում մեծ կարևորություն ունեւր Պապիկ Առա-
ջին կայսեր կրօնի շատցիչ Պրատոն միտրոպոլիտի դիրքորոշումը: Ըստ
Հ. Արղությանի վկայությամբ, Պրատոնը թագմիցս սամծիլ է ոռս և հույն
հոգևորականության հարձակումները Հայոց եկեղեցու և եկեղեցական-
ների դեմ: Որոշակի նպատակադրումով և, ամենայն հավանականությ-
յամբ Հ. Արղությանի նախածնունդով, Պետերբուրգում հայերենի են
թարգմանվում Պրատոն միտրոպոլիտի «Քրիստոնեական աստվածաբա-
նությունը», «Քարոզներ» և «Ուղղափառ կրթություն» գրքերը /թարգմա-
նիչ Ստեփանոս Ալամյան/²⁴: Ռուսերենի է թարգմանվում և Պետերբուր-
գում 1799թ. տպագրվում «Հայոց եկեղեցու դավանանքը»²⁵ գիրքը, որն
այնուհետև Պետերբուրգում Վրաց դեսպանության քարտուղար Գեորգի
Ավալիշվիլին ռուսերենից թարգմանում է նաև վրացերենի²⁶:

1793 թ. մայիսի 17-ին Աստրախանից Հ. Արղությանին գրած նամա-
կում հայտնվում է, քի տեղի ոռս հոգևոր առաջնորդը ոչ միայն մեծ օ-
ժանդակություն է ցուցաբերում հայ հոգևորականությանը, այլև պատ-
ժում է անգամ այն հայերին, որոնք դավանափոխության նպատակով
դիմում են իրեն. «Շովինարն մէկ տղայով և իր որդովն գնացեալ էր Ռուս
դատնայ, զանելով վարեալ էր և մեզ կոչուալ առ ինքն, թէ դու ես քերել տա-
ցես առ քեզ և զաննցես և հարցցես, թէ վասն ո՞ր բողոքն զհառատս իւ-
րեանց և այսպէս անարգեալ եղին Ռուստի նուստ կամեցողքն, և բո-
լորքն զխտացին, որ արքերէյն²⁷ գանիւք վարեալ է, վասն այսմ այսու-
նետև ո՞վ համարձակի գնալն»²⁸: Այդ իրաձիճակը, սակայն, ամենուր չէ,
որ ընթանում էր առանց հակամարտության ու քննադատման: Որքան
Ռուսական եկեղեցու թարծր ատիճանավորմները հանդուրժողական և
զուսպ վերաբերմանը էին դրսևորում հայոց նկատմամբ, նույնքան տեղե-
յան ռուս հոգևորականությունը գործում էր առաձիւլ քեղադրական գոր-
ծելաճով: Այդ առանձնապէս ակնհայտ դարձավ 1790-ական թվական-
ների կեսերին, երբ աշխատիկ իշխանությունները ես ակնհայտորեն
աբասողական քաղաքականություն էին որդեգրել Այսլովկասի նկատ-
մամբ: Հովսեփի Արղությանը արձանագրել է ստեղծված իրաձիճակը 1795
թ. մայիսի 20-ին Աստրախանից գրած իր նամակներից մեկում²⁹: Հ. Ար-
ղությանը ես հայ-ռուսական հոգևոր-դավանական վախճարաբերու-
յունները լծարձակում ու պայմանավորված է դիտարկում ու ներկայացնում

աշխատանքի իշխանության մեծ շահաքաղաքության հետ: «Ի՞նչ տառապանքն ինձ ոչ է բառական, տեսք այժմ զի՛նչ լսեք. ես զկեանս իմ տունեալ եմ ի զոհ վասն ծառայութեան քաղաքին՝ յաղագս դիպտութեան ազգին իծոյ, որպէս և նորին մայրական խնամօքն յուսադրեալ եմք ամենայն ազգաւ, և գնդոյն յամենայն ոտեր իշխանեց զրով, և ամենայն որ փափագի զալ յերկիրս այս և առանց նեղութեան քնակիլ. հայրն լինել հայր որբոց՝ առանց երկնոյի բռնաորաց, և տեսքն՝ տեսք ծառայից»⁵⁰: Հ. Արղութեանը յողորմ է Աստուխանում աւելովա՞ծ իրաւիճակի դեմ. «Որոշք անհնազանդ ծնողաց՝ թերակատարք, ի քարկանայն հարց, զման և մկտիւն, և եպիսկոպոսն տեղոյս՝ իսկոյն ընկալնու, որպէս ընկալաւ 11 տարեկան մէկ անճար աղքատի որսի, որոյ հոր արտաստայի զկրն անա տղւորեմ ձեզ, քեպէտ առաքեցի առ եպիսկոպոսն, քայց ոչ կամեցաւ յեղ: Մեր թուրոս Արիագոյի 14 տարեկան եղբայրն, քարկացեալ ի վերայ մօրն, զմաց ռոտացաւ և մա ընկալաւ. մայրն մնաց լաղով՝ զրկեալ ի յորդոյն, որսին այլոց ծառայէ, իսկ ծնօղն, որ սնուցեալ է, ի ծնութեան հասակին զրկեալ է յորդիական ծառայութենէ: Պարտատեսք և փախստականք զման և նոցա ընկալնու»⁵¹:

Հայերի դավանաւիտարկանքն թե՛ն ոչ լիովին կամխելու, ապա զեր տանձանափակելու նպատակով ռուս հոգևորականության հետ հայոց փոխհարաբերությունները Հովսեփ Արղութեանը փորձում է կարգավորել դիմելով ոչ միայն բարոյական ու քաղաքական միջոցների, այլև իրավական շտակների գործադրմանը: Նա գրում է, որ իր խնդիրն այն է ռուսական հոգևորականությունից և, մասնավորապէս, Աստուխանի հոգևոր առաջնորդ եպիսկոպոսից, թե «կատարեալ հասակի անձինք յորժամ գան առ քեզ, նախ սպրաւիկ արա յամենայն դատաստանսն, որպէս օրենքն է, և ապա ընկալ, իսկ անկատարքն յետ դարձո, զի նոցա հաւատ ոչ ճանաչեն: Մի զրկեք զմօղս նոցա ի վայելմանն որբոց»: Այդ սրահանջին Աստուխանի Ռոտաց հոգևոր առաջնորդը «ոչ եթէ կամեցաւ մեզ քառականութիւն տալ, այլ քարկացաւ ևս, թէ՛ որպէ՛ս համարձակի Հայոց արքեպիսկոպոսն նորմալիս ինձ զլըր գրել, և հանդերձեալ մեծ հալածանս յարուցանել, թէ՛ զխոր՛դ համարձակիք զանգակ այնքան քարկանել և կամ համարձակ կատարել զօրէնս ձեռ»⁵²: Հ. Արղութեանը իշխանութեան է քաղաքական իշխանության վերաբերումը հայոց նկատմամբ, որ հակադիր էր հոգևոր իշխանության այդ քայրերին. «Տես ոչ զխեմ, ո՞նչ հնազանդիւն. կայսերական ուղորմութեան ազատութեանն, եթէ բռնութեան սոթին»: Ավելին, Հ. Արղութեանը փորձում է գողգանեմեր նշելով մահմեդական տիրապետության և Աստուխանի առաջնորդի գործողությունների միջև, զգաստության կոչել այրունի գործիչներին. «Միթէ թուրքի երկրումն մեր գառակն խեմ և առանց սրտճառի ի հաւատոյն հանեն, ո՞չ ապարէն վասն այն գան և ժողովին ազգ մեր յերկիրս այս, որ յայսպիսի բռնութեանց փրկին»⁵³: Հայ իրականության մեջ ռուսադավանութեան

յան անցնելու առանձին փաստերը ևս կանխելու ծածար Հ. Արղուսյանը փորձում է առանալ ռուս հոգևորականության պաշտպանությամբ: Նման օրինակներից էր Հնդկաստանում զանվող տեր Ստեփանի «րեղօգյաք եղբայրն», որ «ուսասցեալ է, թէ յնորոքս փող է եկեալ, ինձ չեմ տալիս, նորա կինն և փարթիկ որչին դօզեալ կան յանկեան, որ բռնութեամբ շուտապեսնեմ»²⁴: Անհրաժեշտ էր հզոր կովաններով կասեցնել հայոց նկատմամբ գործադրվող դավանական խտրությունները: Հ. Արղուսյանը հարցադրումը կրկին փոխադրում է հայերի Ռուսաստան փոխադրվելը հարցակաճի տակ դնելու սպառնալիքի մակարդակ. «Ահա յուսադրութեան պատղմ երկրիս, ո՞ր երեսօք զոնմ ումք, թէ՛ եկէք և զհանգստութիւն վայելեցէք. ես ճանապարհողդ եմ և ծառայող թագաւորութեան կրամանին, և սորա յայտախի բռնութիւն կան, ոչ ոքազի յսնն և ոչ կրովարտակի, ոչ արդարութեան ունկն դնեն և ոչ ճշմարտութեան»: Միակ միջոցը հայ հասարակության անուսից հանդես գալու և իմնավորված պահանջի առաջադրումն էր բարձրագույն հոգևոր ատյանի առաջ: Իր փաստարկումները ներկայացնելով հայազգի գործիչներին, Հ. Արղուսյանը շնչտելով, թե «ոյուք ևս ազգ էք Հայոց, օգնեցեք մեր ազգին», պահանջում է նրանցից, գրավոր կերպով դիմել սիմոռի գեներալ-պրևկարտ Ա. Ի. Մուսին Պուշկինին, որ «քարեկամ է, ապա է մա աշր բանական և խելօք»: Պարզվում է, որ Հ. Արղուսյանը տեղյակ էր նաև, թե Աստղախտանի ռուսաց հոգևոր առաջնորդը դիմել էր Ա. Ի. Մուսին Պուշկինին՝ Հայոց եկեղեցու զանգերը հնչեցնելու դեմ լինելու պահանջով, սակայն և պատասխան ստացել, թե «զոնա, քոյ բանն չե»: Ռուսական եկեղեցու առանձին ներկայացուցիչների նկատումներին դիմադրավելու գործում հայոց համար կարևոր լծակ էր ռուսական աշխարհիկ յշխանությունների կողմից ցուցաբերված օժանդակությունը ստանալու հանգամանքը, մասնավորապես որ ետզինտե ավելի էր կարևորվում հայոց դիրքորոշումը Ռուսաստանի արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում: Այդ ակնհայտորեն դրսևորվեց 1795 թվականի ընթացքում, երբ Աղա Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո սկսեց քննարկվել ու ծրագրվել Ռուսական բանակը Այսրկովկաս ուղարկելու հարցը: Ինչպես նախանի է, այդ արշավանքին իր մասնակցությունը բերելուն կրավիրվեց անգամ անձամբ Հովսեփ Արղուսյանը:

Այլ էր իրավիճակը Ռուսաստանում կարույիկ դավանանքի հոգևորականության ներկայացուցիչների հետ հայ հոգևորականության ունեցած փոխհարաբերությունների պարագայում: Ռուսաստանի կարույիկ համայնքում մեծ թիվ էին կազմում *հայազգի կարույիկները*, որոնց առաջնորդն էր Օնոֆրիոս Օհանջանովը²⁵: Տեղի տալով Հ. Արղուսյանի համառ ցանկերին, Ռուսական կառավարության հանձնարարությամբ 1794 թ. հունիսի 18-ին Մոզլիլի կոնսիստորիան կրամայում է հայ կարույիկների առաջնորդ Օ. Օհանջանովին, թե օրենքով արգելվում է բունի կարույիկ

դավանանքի դարձնել որևէ մեկին /տվյալ դեպքում խոսքը առաջին հերթին հայադավան անձնավորության մասին է/, իսկ հոմեադավան ուսմանը՝ արգելվում է կրոնավիճակ անել ընդհանրապես: Հ. Արղուրյանը փորձում է ստանալ ավելին. նա, օգտագործելով պահի կարևորությունը, կառավարությունից պահանջում է քույրատրել կարողից հայերի վերադարձը հայադավանության և միաժամանակ արգելել նաև հայերի անցումը ուսադավանության: Ռուսահայոց համայնքը XVIII դարի վերջին ուսական իշխանությունների կողմից ստանում է կարևոր հավաստիացում իր կարգավիճակի ամրապնդման համար:

Պավել Առաջինի 1799 թ. նոյեմբերի 28-ի հրամանագրերում շեշտվում է, որ քույրատրվում է ազատորեն դավանել Հայոց դավանանքը, կառուցել եկեղեցիներ և կրոնական հարցերում ենթարկվել միայն էջմյածնի կաթողիկոսին ու Ռուսահայոց առաջնորդ Հովսեփ Արղուրյանին: Ավելին, Ղուկաս կաթողիկոսի մահից հետո, Ռուսական արքունիքը պաշտարանում է Հ. Արղուրյանի քեկնածության առաջադրումը Հայոց կաթողիկոսական գահի համայն և Ռուսական բանակի Վրաստանում լինելու հանգամանքով թեղադրված՝ Հովսեփ Արղուրյանի միջոցով է 1801 թ. փետրվարին հրապարակում Վրաստանը Ռուսաստանին միացնելու Պավել Առաջինի հրովարտակը:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, որ հայ-ուսական եկեղեցական հարաբերությունների ուղղվածությունը XVIII դարի վերջին հիմնականում պայմանավորվում էր քաղաքական հարաբերությունների պահանջով ու մակարդակով:

PAVEL CHOBANYAN

ARMENIAN-RUSSIAN CHURCH RELATIONS IN THE SECOND HALF OF XVIII CENTURY

In the second half of the XVIII century Armenian population in Russia was increasing. Under more active Russian policy in the East and along with improvement of Armenian-Russian political relations, the Armenian-Russian church relations became closer and more tolerant.

Owing to mediation of political authorities, the Armenian Church in Russia stayed free from religious restrictions, new churches were built and Church Charter of the Armenian Church of Russia was developed.

ՃԱՆՌՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Միսլե Զբիստոս, ըստ աննառեաակ քարերարութեանն, իշխանութիւն չնի ի վերայ հասարակ ճարդկայինս քնութեան, նոյնպէս և երկրորդապէս և յետ Զբիստոսի՝ Սուրբն Գրիգոր, ըստ բազմառեաակ քարերարութեանն,

իշխանութիւն ունի ի վերայ յառով ազգիս Հայոց, զորմէ բացասուցի պարտի նախապէս գլխակազմութեմնն և գործառնական հաստատյն իրո՛ւ բացասել: Զանձի որ Հայրաձիւն է և իստատացեալ Բրիտանի, սոքա և ի ձեռն սորա ունի վնասատն զայն...» /Միմեմ Երևանցի, Ջանք, Վաղարշապատ, 1873, էջ 51/:

2. Նամակը գրված է 1760 թ., իսկ Թեյմուրազ II-ը Վրաստանից ճանապարհվել էր արդեն 1759 թ. վերջերին և արդեն գտնվում էր Ռուսաստանում:
3. Ջանք, էջ 234:
4. Ջանք, էջ 271:
5. Դիանի հայոց պատմության, գիրք Գ, էջ ԳԻԱ-ԳԻԲ: Գ. Эзов. Начало сношений эмиадинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901.
6. Պատվիրակության հաջողությանը իր սծանդակությանը նարասել էր նաև Հովհաննես Լազարյանը և այդ առիթով մամուլ գրել Սիմոն Երևանցուն (տես Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 140-141):
7. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.76-77.
8. Stepanov and E. И. Дружинина. Кючук Кайнарджийский мир. Москва, 1955, с. 352.
9. ՄՄ, Լազարյանների արխիվ, քրթ. 109, գրք 22, վավ. 24, հայերեն քննարկ:
10. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171. Հրավարտակի հայերեն թարգմանությունը տես «Դիանի հայոց պատմության», IX, Թիֆլիս, 1911, էջ 49-52: Նժան ջովանդակությանը հրահանգ առաջվել է Արտարին գործերի կոլեգիայից նաև Գ. Ա. Պառլյուկիինն նույն օրը: Տես АВПР, ф. СРА, 100/3, 1764-1800, д. 482, л. 167. копия:
11. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171.
12. Հայտնի է միայն, որ 1798 թ. Պավել Առաջինը ևս մժան հրահանգ ուղարկել էր Կ.Պոլսում ռուսական դեսպան Վ. Տամարային՝ կարգադրելով հնարավոր օգնություն ցույց տալ և պաշտպանել Դուկաս կաթողիկոսի կողմից թողարկված հայ հոգևորականներին: ՄՄ, ԿԴ, քրթ. 8, վավ. 15 /պատճն: Տես նաև Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում /1780-1800/, Երևան, 1958, էջ 197:
13. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.156. Այս վավերագրում խոսվում է Հերակլի կողմից Արարատյան դաշտի 15 հազար հայերի Թիֆլիս փոխադրման, Երևանի խանի կողմից էլժիամնի վանքի վեց միաբանների սպանության մասին:
14. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152.
15. «Յունվարի 2. Ենաբալ պոսոժիկ Ալեքսանդր Վասիլի Սուխորովն ելն առ ճեղ ի տեսութան. և ճեք ազնի աղայ Յովհաննես ընդ ճժա ի վերայ նույն Յիւրոյն. և ի վերայ երկրացն ճեքոց բազում հացցմունս արար միմև ցերկու ժժանս»: Տես Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152-153:
16. Դիանի հայոց պատմության, IX, էջ 45-46:
17. Դիանի հայոց պատմության, IX, էջ 16:
18. Դիանի հայոց պատմության, IX, էջ 19-20:

19. Ընթերցված քարոզը նախապես բարձրամակել էր ոռսերեն և 500 օրինակ տպագիր ձևով բաժանվել իշխաններին, իսկ գեղեցիկ կազմված մեկ օրինակը Գ. Ա. Պուտլովիչին միջոցով ճատուցվել կայսրուհուն: Օրինակներ էին ուղարկվել գահաժառանգ Պավելին և Մարիա Չեղոքովնային, որ Հովհաննես Լազարյանի միջոցով փոխանցվել էին Նիկիտա Պանինին՝ հանձնելու ջատ պատկանելիլոյն: Տես Դիան հայոց պատմութեան, IX, էջ 4, 26-27:
20. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 6:
21. Հովհ. Տէր-Արրահամեան Հովսէփ Չորրորդ Երկայնաբազուկ-Արշուրեանց, ընդհանրական առաջնորդ ուսխարմակ հայոց /1773-1800/, իշխան կայսրութեան Ուսուց և կարողկոս ամհնայն Հայոց. ՄՊր, 1881, էջ 6-7:
22. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 8-9, 42-44:
23. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 46:
24. Ուշագրավ է որ Պլատոն արքեպիսկոպոսի քարոզների ոռսերենից հայերենի բարձրամուրյամբ գրադվել է նաև Հովակիմ Աղապարի Լազարյանը: Տես Վ. Դիլոյան, ճշվ. աշխ., էջ 190:
25. "Вероисповедание Армянской церкви", СПб, 1799.
26. ճոս յոյնմոջ յօրոյնցօ ճշոյնմոջոյն յեղեղոյն յոյնմոյնցոյն յոյնմոյնցոյն, 1993, ճջ. 121.
27. Իմա՝ արքեպիսկոպոսի.
28. ՄՄ, ԿԴ, թիւ. 6, վավ. 42, քնագիր:
29. Հ. Արղուրյանը, զնոնելով դիմագրավել ռուս Իոզկորականութեան կամայականութեաններին, Մոսկովայի ո Պետերբուրգի հայ գործիչներին նախապես նամակով տեղեկացնում և պահանջում էր նրանց միջամտութեանը՝ արքեպիսկոպոս և սինոդում Իննարան գտնելու համար:
30. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 178:
31. Դիան հայոց պատմութեան, IX, էջ 178-179:
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում:
35. O. Othmanianovich մասին տես Յ. Թամարա Միջոց. օնկորոս յօրոյնցօյն յօրոյնցօյն յօրոյնցօյն յօրոյնցօյն, 1901, ճջ. 488-490, 823, 833, 835. Ambrosius Eszer. Missionen im Halbrund der Länder zwischen Schwarzen Meer, Kaspisee und Persischem Golf: Krim, Kaukasien, Georgien und Persien.-Sacrae Congregationis de Propaganda Fide Memoria rerum, Vol. II, 1700-1815. Hender, Rom-Freiburg-Wien, 1973, S. 448. Պ. Չորամյան, Վրաց ուղեգրութեանները.... էջ 116: Ա. Էսգերը, Իննսելով Մ. Թամարայիլոյն, բյուրեղագրար նրան համարում է վրացի:

ԳԻՄՆԱՍԻԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՒԼԵՐԸ*

Ուրարտական պետության կազմավորումը տեղի է ունեցել երեք փուլերով, որոնցից վերջինը ունեցել է երեք ենթափուլեր:

Ուրարտական պետության կազմավորման առաջին փուլը, որը համընկնում է այդ պետության սրբաբերացման առաջին փուլին, վերաբերվել է ուրարտական և հայկական ցեղերի որոշ մասի միավորմանը մի ընդհանուր, կենտրոնական պետության կազմում (հայկական ցեղերը այդ ժամանակ տարածված էին Արամալի վարչական միավորի կազմում, ինչպես նաև նրա հիմքի վրա ձևավորված հետագա Արմարիլի-Արմարիլայի կամ Արմիրայի մարզում): Այդ փուլում ուրարտական պետության զրաված տարածքը սկսվել է Արածանի գետի միջին ավազանի հարավային սահմաններից, ձգվել Վանա լճի արևելյան երկարությամբ և տարածվել մինչև Ուրմիա լճի արևմտյան կողմերը¹: Այդ փուլում, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների, ուրարտական պետությունը կազմված էր 4 քաղաք-ամրոցներից և նրանց շրջակայքի բնակավայրերից: Սր քաղաք-ամրոցը իր շրջակայքի բնակավայրերի հետ կազմել էր երկրի մի վարչական միավորը: Այդ վարչական միավորներն էին Արզաշտուն, Արամալին, Չանգիտունան և Մուգունիան: Դրանցից Արզաշտուն տարածված էր երկրի հյուսիսային մասում, ժամանակորապես Վանա լճի և Արածանիի միջև ընկած տարածքում, Արամալին՝ Վանա լճի արևելյան մասում, Չանգիտունան՝ այդ լճի հարավ-արևելքում, իսկ նրանցից արևեք դեպի Ուրմիա լճի արևմտյան կողմը տարածված էր Մուգունիան²: Հյուսիսային կողմում Ուրարտուին սահմանակից են եղել Դայանի-Դիաուխի, Թումմե, Մուխու և Էնգիտե երկրները, հարավային և հարավ-արևելյան կողմում՝ Գիլգանի, Խուբուշքիա և Մուժամիր երկրները (նշված երկրներից Դայանի-Դիաուխին անմիջապես սահմանակից

* Հոդվածը նրատարակվում է առանց նրա տրայանը իմրազրոյքան կողմից միջանոտրյան:

է եղել Արգաշքաւի շրջանին, Մուծածիլը և Խորուշիան՝ Մուգունիայի շրջանին, իսկ Գիլգանին՝ Չանգիումայի շրջանին)՝ Առաջին փուլում Ուրարտուն շի տնեցել խաչոր զորք: Նրա զինվորների թիվը հասել է 3400-ի⁴: Այդ զորքը ենթարկվել է երկրի արքային: Այն կոչվել է արքայի զորք կամ արքայական զունդ, որը արքայի հետ գտնվել է երկրի արքայական քաղաքում, իսկ աներածնշտության դեպքում պաշտպանել է երկրի սահմանները: Մուգունյա վարչական միավորի օրինակը գույց է տալիս, որ զորք են տնեցել մաս վարչական միավորները, մասնավորապես նրանց քաղաք-ամրոցները⁵: Երկրի առաջին արքան է եղել Արածան (859-832), իսկ նրա արքայական քաղաքը՝ Արգաշքան⁶: Այդ փուլում աստիճանական պետությանը մի քանի անգամ կործանաբար արշավանքներ է կազմակերպել նորաստեղծ ուրարտական պետության վրա, բայց վերջինս կենաց ու մահու պայքարի գնով սրաշտպանել է իր գոյությունը: Աստիճանական արշավանքները աստիճանաբար դադարել են, երբ մ.թ.ա. 832 թ. ուրարտական թագավորներից Մարութի I-ը (832-822) Արածանի գետի ափին լուրջ դիմադրություն է ցույց տալիս աստիճանական զորքին, կանխում նրա ներթափանցումը Ուրարտու⁸, երկիրը փրկում աստիճանական զորքի նոր ասպատակույուններից ու ավերածություններից:

Ուրարտուն, երբ մոր է քաղաքական ասպարեզ եկել, քացի վերսկիչյալ երկրներին, շրջապատված է եղել մաս ցեղամիություններով: Նրա հյուսիս-արևմտյան կողմում գտնվել է Խաթն ցեղամիությունը⁹, իսկ հյուսիս-արևելյան կողմում՝ Էրիտնի ցեղամիությունը¹⁰: Այդ երկու ցեղամիությունները իրարից բաժանվել են Ղալանի-Ղախալի պետության ընդարձակ տարածքով¹¹:

Ուրարտական պետության կազմավորման երկրորդ փուլը, որը համընկնում է այդ պետության պարթերացման վերելքի փուլին, սկսվել է Իշյուլինի (822-810) ժամանակաշրջանից: Հզոր Ասորեստանի դեմ պայքարելու նպատակով ուրարտական պետությունը աշխատել է իր գերիշխանության տակ վերցնել շրջակայքում գտնվող երկրները, հարստացալ ու իզորանալ նրանց միջոցներով և վերջ տալ աստիճանական սպառնալիքներին: Բայց դա խաղաղ ճանապարհով տեղի չէր ունենալու: Դրա համար հարկավոր էին նվաճումներ: Եվ սկսվում են ուրարտական նվաճողական արշավանքները շրջակայքի անհատ-անհատ ցեղային երկրներին, ցեղամիությունների ու պետության աստիճանի հասած երկրներին վրա:

Իշյուլինին, հյուսիս-արևելքում նվաճելով Ուխտերուխի, Լուշա, Քաքարգա ցեղային երկրները, Ուրարտուի սահմանները հասցնում է մինչև Արածանի ու Արաքս գետերի ակունքները¹², նվաճելով Արաքսի ծախ ափին գտնվող Պուլուալի երկիրը (Մյունիք նահանգի Երմբակ գավառում, որը հետագայում մտել է Ղախիթևանի կազմի մեջ), ինչպես նաև Բարչուս կամ Պարսուաչ (իմփ. Պարսկաստան) երկիրը, Ուրարտուի սահ-

մաննելը հասցնում է մինչև Արաքսի միջին ավազանը և Ուրմիա լճի արևելյան կողմերը¹³։

Մեծուան (810-786) իր նվաճումներով Ուրարտուի հյուսիսային սահմանները հասցնում է մինչև Դայաննի-Դիաուխի քնդարձակածավալ պետության կենտրոնական որոշ տաքածքները¹⁴, հյուսիս-արևմտյան սահմանները՝ մինչև Շուսրանի (Շուխը) երկիրը և Խաթե ցեղամիության արևելյան սահմանները (Փոքր Հայքի Մելաս գետի ավազանում), հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էրփրուսիսի երկիրը (Արարատյան դաշտավայրի մատույցներում, Արարատ լեռան տարրում)¹⁵, արևմտյան սահմանները՝ մինչև անդրեփրատյան Մելիտեա կամ Մելիդո (Մալաթիա) երկիրը¹⁶, հարավային սահմանները՝ մինչև Շոքրիա և Ուրմե երկրները (Սասունի լեռնային զանգվածում)¹⁷, հարավ-արևելյան սահմանները՝ մինչև Մանա երկիրը (Ուրմիա լճի արևելքում)¹⁸։

Արգիշտի I-ը (786-764) իր նվաճումներով Ուրարտուի սահմանները հյուսիսում հասցնում է մինչև Դայաննի-Դիաուխի պետության ծայր հյուսիսային կողմերը (Սև ծովի հարավային ափերին)¹⁹, հյուսիս-արևմտյան սահմանը՝ միչև Խաթե ցեղամիությունը (Փոքր Հայքում), հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էրիտանի ցեղամիությունը, մասնավորապես նրա մեջ մտնող Կիեխունի երկիրը (Սևանի ավազանում, Խաթրկե, ճանապարհին նվաճելով Ագա(նմա) Ռազա, Վագա) երկիրը (Արարատյան դաշտավայրում) և Ուլուանի երկիրը (Կոտայքում)²⁰, հարավ-արևելյան սահմանները՝ մինչև Բարուարա, Բուշրու և Բարիլու երկրները (Ուրմիա լճից դեպի հարավ-արևելք²¹)։

Մարդուքի II-ը (764-735) իր նվաճումներով Ուրարտուի սահմանները հյուսիսում հասցնում է մինչև Կուլխա (Կուլսիդա) երկիրը (Սև ծովի հարավ-արևելքում)²², հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էրիտանի ցեղամիության մասը կազմող Ու(ն)դուրի-Էրիտանի մեջ մտնող Ադախունի, Վելիքունի (Գեղարունի), Լուերունի, Աքրաքինի երկրները (Սևանա լճի ավազանում) և Ուրտեխիսի (նմա) Աքցախ) երկիրը²³, արևմտյան սահմանները՝ մինչև անդրեփրատյան Կումախա (Կոմագենե) երկիրը²⁴, հարավային սահմանները՝ մինչև Ալան երկիրը (Սասունի լեռնային զանգվածում)²⁵, նվաճում է նաև Պալուաղի երկրի հարավային կողմերը (ժամանակակից Իրանի հյուսիսային շրջաններում, Արաքսից դեպի հարավ)։

Այդ նվաճումների հետևանքով ուրարտական պետությունը հզորանում է, որի շնորհիվ աճում է նրա հեղինակությունը ալուսաքին աշխարհում, և Առաջավոր Ասիայի ռազմաքաղաքական առաջնությունը Ասրեստանից անցնում է Ուրարտուին։

Մարդուքի II-ը կազմակերպում է նաև հակա-ասորեստանյան կուսիցիա, որի մեջ են մտնում ինչպես հյուսիսային Սիբիայի Բիթ-Ազուսի և Գուրգուն, այնպես էլ անդրեփրատյան Կումանուխ կամ Կումախա (Կո-

մագնն) և Մելիտեա-Մելիտո (Մալաթիա) երկրները²⁶։ Սարգսրի II-ի նպատակն էր՝ կռաւիցիոն բանակով հարձակվել անձիգապետ Ասորեստանի վրա, ծնկի բերել նրան, ընդմիջւտ վերացնել հարավից սարսուցող փտանգը։ Իբրև դրս ապացույց պետք է նկատի ունենալ այն փաստը, որ նա մ.թ.ա. 753 թվականին հարձակվում է Ասորեստանի թագավոր Աշշուրնիշարի III-ի (753-746) վրա և պարտության մատնում նրան²⁷։ 'Դրանից հետո, ինչպես կհամոզվենք հետագա շարադրանքում, Սարգսրի II-ն իր կռաւիցիոն բանակով ամրանում է Բիթ-Ագուսի և Կոմմախոս երկրներում՝ ամշուշտ Ասորեստանի վրա նոր հարձակումներ կազմակերպելու նպատակով։

Իր կազմավորման երկրորդ փուլում ուրարտական պետությունը միանել է շուրջ 130 խաչոր և մանր երկրներ։

Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլը, որը համընկնում է այդ պետության արտերթացման վայրէջքի փուլին, ինչպես ասվել է վերևում, տնեցել է իր երեք ենթափուլերը։ Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլի առաջին ենթափուլը սկսվում է Սարգսրի II-ի կառավարման երկրորդ շրջանից։ Ասորեսկան պետությանը, զգալով Ուրարտոսի նպատակները, նախապատրաստվում է դիմակայելու նրա հետագա գործողություններին։ Դրան հատկապես ծեռնամուխ է լինում ասսուրական գահին նոր անցած Թիգլաթսալաասար III-ը (745-722), որը իր թագավորության երրորդ տարում մ.թ.ա. 743 թ. կոսսիապին Միլիայում գտնվող Բիթ-Ագուսի երկրի Արսաղ քաղաքի մոտ, որտեղ այդեն թափանցել էր Ուրարտուն, մարտեր մղելով Սարգսրի II-ի դեմ, հաղթանակի է հասնում²⁸։ Հետագայում լարվածությունը ավելի է սրվում Ասորեստանի և Ուրարտոսի միջև, որը ավարտվում է մ.թ.ա. 735 թվականին Կոմմախոս (Կոմմագենն) երկրի Կիշրան և Խալպու մարզերի ախանքում, մասնավորապես Կիշրան քաղաքի մոտ տեղի ունեցող ճակատամարտով, որի ընթացքում հաղթանակը դարձյալ ուղեկցում է Թիգլաթսալաասար III-ին։ Դրանից հետո նա մտնում է Ուրարտոս, պաշարում նրա արքայական Տուշպա (Տուրուշպա) քաղաքը, ուր վակված էր Սարգսրի II-ը և ասպատակում երկիրը²⁹։ Դրա հետևանքով ցայրայվում է ուրարտական պետության կողմից ստեղծված հսկա-ասորեստանյան կռաւիցիան։ Թիգլաթսալաասար III-ը Ուրարտոսից խլում է նրա հարավում գտնվող Ուլլուրա երկիրը, Սասունի լեռնային գանգվածի հարավային մասում գտնվող Շարրիա երկրի Քուլլիմների (Քոլիմար) մարզը (Քալլամա կամ Քաղիթր գետի ավազանում) և նրա շրջակայքում գտնվող մի շարք քնակավայրերը, այդ թվում Բենգու, Անգանու և Սարգսրի քաղաքները, իրեն հարկատու է դարձնում մինչ այդ Ուրարտոսի գերիշխանության տակ գտնվող Բիթ-Ագուսի, Գորգուն(ու), Մելիտեա կամ Մելիտո (Մալաթիա), Կոմմախոս կամ Կոմախա (Կոմագենն) երկրները³⁰։ Արտաքին աշխարհում Ուրարտուն կորցնում է իր քաղաքական

հեղինակությունը, և Առաքավոր Ասիայում առաջնությունը կրկին անցնում է Ասորեստանին: Ուրարտական պետությունը բռնում է վայրէջքի ճանապարհ:

Ուրարտական պետության կազմավորման երկայն փուլի երկրորդ ենթափուլը համընկել է Ռուսա I-ի կառավարման ժամանակաշրջանի հետ: Մարդուրի II-ին հաջորդող Ռուսա I-ը փորձում է փրկել արտաքին աշխարհում իր երկրի կորցրած հեղինակությունը և Ասորեստանից ետ խել Առաքավոր Ասիայի առաջնությունը: Դրա համար անհրաժեշտ էին տնտեսական նոր աղբյուրներ: Մակայն Ասորեստանի ազդեցությունը հնարավորություն չէր տալիս նրան անմիջապես դիմել արչավանքների հարավում գտնվող հարուստ երկրների վրա, նրանցից ձեռք բերել ավար, ոսկոճագների, հարկ ու տուրք: Ռուսա I-ին միայն հաջողվում է Մանա երկրից խել նրա Ուլշղիչ մարզը և միացնել Ուրարտուին³¹: Ուրարտուի քրիստոսն ընտրում են հիմնականում հյուսիսի երկրները, որոնց այնքան էլ հարուստ չէին: Նա նվաճում է Մանա լճից այն կողմ, բարձր լեռների վրա (Փոքր Կովկասում) գտնվող 19 երկրներ³², բայց այդտեղից ոսկոճավար ձեռք չի բերում: Ռուսա I-ը ստիպված նյութական միջոցներ է փնտրում սեփական երկրի ներսում՝ զարգացնելով նրա տնտեսության ճյուղերը: Այդ ասպարեզում նա հասնում է որս խազողության³³: Դրանից զգուշացնում նա հարավ-արևելքում տեղծում է հակա-ասսորական երկրների կռալիցիա, որի մեջ են մտնում մերձկասպյան Անդիա և մերձուրծյան Ջիկիթթու, Արդինի-Մուծածիլը ու Նաիրի-Խուրուշքիա երկրները³⁴: Նա մարտեր է մղում Ասորեստանի դեմ նրա հյուսիսային լեռներում³⁵:

Ռուսա I-ի այս ռազմական սցեններից ուշիուշով հետևում է Ասորեստանի թագավոր Մարզոն II-ը (722-705): Նա, զգալով Ուրարտուից սպառնալի վտանգը, ինքն է նախահարձակ լինում, արչավում Ուրարտուի վրա նրա հարավ-արևելյան կողմից և Ուրմիա լճի հյուսիս-արևելքում գտնվող Ռաուշ լեռան ատրոստում տեղի ունեցող ճակատամարտում իտրականակ տանում Ռուսա I-ի կռալիցիան բաժնակի նկատմամբ, կողոսկրում ու ավերում երկրի կենտրոնական մարզերը³⁶: Ռուսա I-ի հույսերը չեն ալայաբանում: Ռուսա I-ից Մարզոն II-ը խլում է Մանա երկրից նվաճված ու ուրարտական կենտրոնական մարզերի շարքում մտցված Ուլշղիչ մարզը³⁷: Նա իրեն է ենթարկում ամբողջ Մանա երկիրը, որը մինչ այդ գտնվում էր Ուրարտուի ազդեցության տակ: Մարդուրիին հարկատու են դասնում Նաիրի-Խուրուշքիա, Արդինի-Մուծածիլը, Ջիկիթթու և Անդիա երկրները: Եսթրեմակում են Ասորեստանին հարկ վճարել Մելլուան, Կումմուխում, Գուրգումը, Բիթ-Ագուսին: Ուրարտուից անկախանում է Եսրբիա երկիրը³⁸:

Փաստորեն Ռուսա I-ի գործողությունները ոչնչով չնպաստեցին Ուրարտուի վերելքին: Ընդհակառակը, այդ գործողություններից հետո ուրարտական պետության վայրէջքը ավելի է խորանում: Բայց, այնուամեն-

նայնիվ, նա նվաճելով Փոքր Կովկասում գտնվող 19 երկրները՝ որոշ չափով նարաստ է բերել իր պետության կազմավորման գործին:

Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլի երրորդ ենթափուլը համընկնում է Արգիշթի II-ի և Ռուսա II-ի կառավարման ժամանակաշրջանի հետ: Այս ենթափուլում Ուրարտուի հիշյալ բազավորմանը իրենց գլուխավոր քաղաքականությամբ հնարավորություն չեն տալիս Ասորեստանին նոր աղյավանքներ գործել իրենց երկրի վրա, ավերածություններ կատարել այնտեղ և նոր երկրներ անջատել նրանից:

Ռուսա I-ին հաջորդող Արգիշթի II-ը (713-685) զբաղվում է Սարգոն II-ի կողմից ավերված երկրի վերակառուցման աշխատանքներով: Նրան միայն հաջողվում է նվաճումներ կատարել Ասորեստանից հեռու, Ուրմիա լճի հյուսիս-արևելքում (ժամանակակից Թավրիզի ու Արդեբիլի շրջաններում): Նա նվաճում է այնտեղ գտնվող 6 երկրները, դնում հարկի տակ³⁹, բայց նրանցից կողոսպուտ և ռազմագերիներ ձեռք բերել չի կարողանում: Նա նվաճում է նաև երկրի հյուսիս-արևելքում, մասնավորապես ժամանակակից Սյունիքում գտնվող Ծղուկու (Ծղուկ) երկիրը⁴⁰, բայց նրանից ևս կողոսպուտ ու ռազմագերիներ ձեռք բերել չի կարողանում, ինչպես նաև չի կարողանում այդ երկիրը դնել հարկի տակ:

Արգիշթի II-ին հաջորդող Ռուսա II-ը (685-645) նույնպես զբաղվում է երկրի ներսում շինարարական աշխատանքներով: Նրան հաջողվում է նաև աղյավանքներ կազմակերպել Ասորեստանից շատ հեռու, Փոքր Ասիայում գտնվող Մուշլիմի (Փոյուզլու), Խալխու (Խաղտիք) երկրների և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում, մասնառոտապես Փոքր Հայքում գտնվող Խաթե երկրի (ավելի ճիշտ Խաթե ցեղամիտրյան) վրա⁴¹, որը վաղուց էր նվաճվել Ուրարտուի կողմից: Նրան չի հաջողվում այդ երկրներից ռազմավար ձեռք բերել: Նա բավարարվում է նրանով, որ այդ երկրներից ձեռք է բերում որոշ քանակությամբ կին գերիներ: Ռուսա II-ը փորձում է գրավել երկրի հարավում, Ասորեստանի սահմանի մոտ գտնվող անկախ Ծուրրիա երկիրը՝ պատրվակ դարձնելով այդ երկրում ասուրական փախստականների հետ ապաստան գտած ուրարտական փախստականներին բռնելը: Սակայն Ասորեստանի բազավոր Ասարխատրունը (680-669), իմանալով Ռուսա II-ի այդ մտադրության մասին, ինքը նախահարձակ է լինում, գրավում Ծուրրիա երկիրը⁴² և մոտենում անմիջապես Ուրարտուի հարավային սահմանին: Ուրարտուն տեսնում է դա, բայց լուր է և չի համոզվում սրայքարի ելնել հզոր Ասորեստանի դեմ:

Այսպիսով, Արգիշթի II-ը և Ռուսա II-ը քնն 9 նոր երկրներ են նվաճում ու նպաստ բերում ուրարտական պետության կազմավորման գործին, բայց դրանով նրանք չեն կարողանում կանխել այդ պետության վայրէջքը և բացել նրա վերելքի ճանապարհը: Ուրարտական պետության վայրէջքը շարունակվում է մինչև մ.թ.ա 585թ., որից հետո սկսվում է այդ պե-

տության անկման փուլը: Ռուսա II-ից հետո վայրէջքի փառում բազավորել են Սարգսրի III-ը (645-635) և Սարգսրի IV-Պարույրը (635-585): Վերջիններս ընդհանրապես մվաճաղական արշավանքների չեն դիմում և, հետևաբար, նոր երկրներ չեն մվաճում ու ոչնչով չեն նպաստում իրենց պետության կազմավորման գործին:

Ակամ մրա 585 թվականից, երբ վայրէջքի փուլին հասցույտում է Ռուսարտու կամ Արմենիա պետության պարբերացման անկման փուլը, այդ պետությունը անցնում է, մասնա՝ Մեդիայի, ապա՝ Պարսկաստանի գերիշխանության տակ: Այդ գործընթացը ավարտվում է նրանով, որ Ռուսարտուն կամ Արմենիան մրա 522թ. զրկվում է իր պետականությունից և վերածվում պարսկական սատրապության: Այդ փուլում Ռուսարտու կամ Արմենիա պետության նոր կազմավորման մասին խոսեցն ավելույդ է:

Ուրարտական պետության կազմավորման մասին տեղեկություններ ենք քաղում այդ պետության քազավորմանի տխտղոսաշարերից, որոնք զրկվել են ինչպես ուրարտերեն, այնպես էլ ասատրերեն լեզուներով: Ուրարտերեն լեզվով զրամ տխտղոսաշարերում Ուրարտուի քազավորմանը իրենց անվանել են «քազավոր երկիր շուրեխի» (^{KUR}šureli), քազավոր երկիր Բիախմիլիի⁴³», իսկ ասատրերեն լեզվով զրամ տխտղոսաշարերում մրանք իրենց անվանել են «քազավոր քիշշաթիի (kiššati), քազավոր Նաիրի երկրի⁴⁴»: Մրանցից «Նաիրի երկիրը» փոխարեն Ռուսա I-ի երկլեզվյան արձանագրության ասատրերեն տարբերակում հիշատակվում է «Ուրարտու երկիրը»⁴⁵:

Ակներև է, որ Նաիրի և Ուրարտու անվանումները տրվել են քուն երկրին: Նրանց՝ երկուսին փոխարինել է Բիախմիլի տեղմինը, որն ունի հավաքական, հոգնակիտության խմաստ (այն զուրկ է էթնիկական իմաստից, քանի որ մրա անունով ցեղ կամ ցեղամիություն չի հիշատակվել, ավելի շուտ այն ունի տեղի իմաստ: Իսկ ինչ վերաբերում է տխտղոսաշարերի ասատրերեն տարբերակի «քիշշաթի» և ուրարտերեն տարբերակի «երկիր շուրեխի» հասկացություններին, ապա դրանցից առաջինը՝ «քիշշաթին», ասատրերեն քամ է, որը նշանակում է «տիեզերք», «աշխարհ», ինչպես նաև «քազում»⁴⁶: Ուրարտական քազավորների տխտղոսաշարերում այդ քառը օգտագործվել է իր վերջին իմաստով՝ «քազում» խմաստով⁴⁷: Հետևաբար Ուրարտուի քազավորների ասատրերեն տխտղոսաշարերի «քազավոր քիշշաթի» նշանակում է «քազավոր քազմաց» կամ «քազավոր քազում երկրները»: Այդ իմաստն է պարունակում նաև ուրարտական քազավորների տխտղոսաշարերի «քազավոր երկիր շուրեխի» տխտղոսի «երկիր շուրեխի» քաղաղոսամասը⁴⁸: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «երկիր շուրեխի» (^{KUR}šureli) տեղմինի KUR.KUR⁴⁹ և ^{L1}KUR.KUR⁵⁰ զաղափարագրերից առաջինը նշանակում է «քազում երկրներ», իսկ երկրորդը, որը L-Ց «մարդ» սահմանիչի շնորհիվ առացել է նաև «քնակիչներ» իմաստը, նշանակում է «քազում երկրների բնակիչ-

ներ³¹»: Այս փաստերը իրենց հերթին հաստատում են, որ «երկիր շուրն-ի» տիտղոսը իրաք նշանակում է «բազում երկրներ»: Տիտղոսաշարերում այդ «երկիր բազմացր» կամ «բազում երկրները» (³⁰šureli), որոնք ենթարկվել են ուրարտական բազավորմանին, տարբերվել են այդ բազավորմանի բուն երկրից (Նաիրիից, Ուրարտուից): Այդ «երկիր բազմացր» կամ «բազում երկրները», բնականաբար, վերաբերել են ուրարտական թագավորներին հարստակ, նրանց կողմից նվաճված երկրներին³²:

Փաստորեն տիտղոսաշարերը ցույց են տալիս, որ ուրարտական պետության կազմավորման հիմքում ընկած են եղել ինչպես բուն երկիրը, այնպես էլ հարստակ (այդ թվում նվաճված) երկրները:

Այսպիսով, ուրարտական պետությունը կազմավորման երկրորդ փուլում նվաճել է շուրջ 130 երկրներ, իսկ երրորդ փուլում՝ ևս 28 երկրներ: Այդ 158 երկրները տարածված են եղել Ուրարտուի շրջակայքում: Ասորեստանից կրած սբարտությունների հետևանքով Ուրարտուի հարավում, հարավ-արևելքում և հարավ-արևմուտքում նվաճված երկրների մեծ մասը անցատվել է նրանից: Մնացած երկրների շնորհիվ կազմավորվել է ուրարտական պետությունը: Այդ կազմավորումը տևելի է ունեցել 3 գլխավոր փուլերով:

DIMITRI SARKISYAN

THE MAIN STAGES OF FORMATION OF THE URARTIAN STATE

The formation of the state of Urartu has gone 3 main stages, the last of which has 3 understages. The first stage coincided with the political appearance Urartu, when those state was busy uniting its native territories and population. At that time the head of the country were the kings Arame (859-832) and Sarduri I (832-822). The second stage coincided with the progress of Urartu, when the state conquered about 130 countries nearly and took the hegemony of Progressive Asia. At that stages great changes had occurred in the territory and its population. At that time head of the state were the kings the Ishgini (822-810), Menua (810-786), Argishti I (786-764) and Sarduri II (764-735). The first understage of third stages coincided with the last period of the Sarduri II kingdom, when king of Assiria Tiglatpalasar III (745-727) invaded Urartu, defeated the country, as a result of which the stage in southern, south-eastern, south-western countries were separated. The second understage of third stages coincided with the period of Rusa I (735-713) kingdom, when Urartu occupy 19 countries in the Small Caucas, but with a last period of Rusa I kingdom king of Assiria Sargom II (722-705) invaded Urartu, defeated the country, as a result of which the second understage in southern countries were separated. The third understage of the third stage coincided with the time kingdom of Urartu kings Argishti II (713-685) and Rusa II (685-645), when the above mentioned kings conquered almost 9 countries in the northern, north-eastern, north-western parts

Urartu and make new changes in the formation of their country. The next kings don't conquer any territories, and any new countries are not separated from Urartu.

ՕՍԼՈՅՎԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. АВНИУ, №27.
2. АВНИУ, №27 (I-23; II-45, 54).
3. АВНИУ, №№27, 28 (35), 31, 32, 33.
4. АВНИУ, №27 (II-45).
5. АВНИУ, №27 (I-23).
6. АВНИУ, №№27 (II-45), 28 (35).
7. АВНИУ, №№27, 28 (35, 141).
8. АВНИУ, №27 (141).
9. УКН, №№28 (лиц. стор. стк. 5-7); 39 (стк. 7-9), 127 (стк. 5-24, 32-37), 128, А2 (стк. 15-22), 278 (стк.1-6).
10. УКН, №№20, 127, II (стк. 25-31), V (стк. II-13, 49), 128, А2 (стк. 1-23), 130, 131, 155, А (стк. 13-21), С (стк. 49-53), F (стк. 6, II-32).
11. УКН, №№36-37, 127, I (стк. 1-22), 128, А1, В1).
12. УКН, №№20-23.
13. Վ.Ա. Իսկանյան, Հ.Հ. Կարապետյան, Ա.Գ. Հմայակյան, Օճաաարի սեպագիր արձանագրությունը (ՊԲՀ, 1997, №1), էջ 193-202; Ն.Վ. Հարությունյան, Նոր քերթըրումներ և մեկնաբանություններ Նախիջևանի սեպագրում (ՊԲՀ, 2000, №2), էջ 196-212; УКН, №24.
14. УКН, №№36,37.
15. УКН, №№30-34.
16. УКН, №39.
17. Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 5.
18. УКН, №№28-29.
19. УКН, №№127, I (стк. 1-22), 128, А1, В1.
20. УКН, №№127. III (стк. 26-30), IV (стк. 70-74), 128, В2 (стк. 40-42), А2 (стк. 4-11), 134 (стк. 3), 142.
21. УКН, №№127 III (стк. 10-71), IV (стк. 44-53), V (стк. 25), 128, В2 (стк. 15-24), 155, А (стк.4-12). (Այս ներկրներից Բաքիում, ըստ Ի.Մ.Ղյակունով կարծիքի, համապատասխանում է ոչ թե անմիջապես Բաքիումին, այլ Դիլլա գետի ափազաննո՞վ գտնվող Նամուտ երկրին, որը այդ ժամանակ գտնվում էր Բաքիումի գերիշխանության տակ, խիստ բարեկեցիկացած էր, որի պատճառով էլ ուրարտացիները կոչում են նրա անունով) (АВНИУ, №49, прим.14):
22. УКН, №155, D, (стк. 1-15).
23. УКН, №161.
24. УКН, №155, E, (стк. 36-57).
25. УКН, №156, DI+DII (DI, стк. 11-16).
26. УКН, №156, DI+DII (DI, стк. 8-10).
27. АВНИУ, №№41 (59), 42 (20), 44 (43, об. стор. 7).
28. АВНИУ, №41 (59, 83).
29. АВНИУ, №42 (20).
30. АВНИУ, №40 (43, об. стор. 7), 42 (28).

31. АВИИУ, №49 (156).
32. АВИИУ, №266, (стк. 6-19).
33. АВИИУ, №49(156-297).
34. АВИИУ, №№49 (79-91, 125-156), 54 (28-112).
35. УКН, №264 урарт. текст, стк. 17-19, ассир. текст, стк. 16-18.
36. АВИИУ, №49
37. АВИИУ, №46 (109).
38. Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 42-57.
39. УКН, №№445-446.
40. Н.В. Арутюнян, Новая урартская надпись из Сисмана (Древний Восток, №4, 1983), стр. 195-220.
41. УКН, №278, стк. 1-6.
42. АВИИУ, №67; Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 42-57.
43. УКН, №№19, стк. 3; 364, стк. 29 (срва. 128, А4, стк. 4; 276, лиц. стор., стк. 30 и т.д.).
44. УКН, №№1-3, 319-325, стк. 1-2.
45. УКН, №264, ассир. текст, стк. 27 (срва. урарт. текст, стк. 4).
46. Л.А. Ливин, Аккадский (вавилонско-ассирийский язык), словарь, вып. II, Л., 1957, стр. 105.
47. Դ.Ն. Սարգսյան, Սոցիալ-տնտեսական կյանքը ուրարտական Ռուսախինիի քաղաքում (ՊԲՀ, 1998, հ. 3), էջ 167, նրա՝ ուրարտական համայնական և զինվորական խավերի փոխհարաբերությունները (ԼՀԳ, 1999, հ. 1), էջ 117-124:
48. Դ.Ն.Սարգսյան, Ուրարտական համայնական և զինվորական խավերի փոխհարաբերությունները (ԼՀԳ, 1999, հ. 1), էջ 117-124:
49. УКН, №№155, Е, стк. 7, 47; 164, стк. 10; 165, стк. 10; 172, стк. 8; 278, стк. 11; 280, стк. 14; 417, стк. 10; 418, стк. 11; 446, стк. 8.
50. УКН, №286, лиц. стор., стк. 15.
51. Դ.Ն. Սարգսյան, Սոցիալ-տնտեսական կյանքը ուրարտական Ռուսախինիի քաղաքում (ՊԲՀ, 1998, հ. 3), էջ 167:
52. Դ.Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 167:

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ԽԵԹԱԿԱՆ KUB XXVI 62 ՍԵՊԱԳԻՐ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՎԵՐԻՆ ԵՓՐԱՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի քաղաքական պատմության, անվանաբանության, տեղագրության և հարակից խնդիրների ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի մ.թ.ա.XV դարի վերջերով կամ XIV դարի սկզբներով քվագրված մի խեթական տեքստը՝, որն առ այսօր ինչպես հարկն է չի մեկնաբանվել հայագետների կողմից²⁶։ Պատճառը, թերևս, այն է, որ այստեղ անվանապես չեն հիշատակվում մ.թ.ա. II հազարամյակում Հայկական լեռնաշխարհի մեզ հայտնի երկրները կամ դրանց տարածքում գտնվող քնակավայրերը, ինչպես նաև այն համգամանքը, որ խեթագիտական հրատարակություններում, մինչև վերջին շրջանը, մեր տեքստում վկայված տեղանունների մի հատվածը, որը, ինչպես կտեսնենք ստորև, գտնվել է վերինեփրատյան գոտում, որևէ կերպ չէր տեղադրվում։

Զննարկվող տեքստը իրենից ներկայացնում է միջին խեթական դարաշրջանի արքա Թուղտալիյաս I(II)-ի կամ նրա հաջորդ Անուվանդաս I-ի օրոք Խեթական տեքստյան քաղաքական ազդեցության հյուսիսարևելյան գոտում գտնվող շրջանների քնակավայրերի նեո գիմնատայության մասին կնքված մի փաստաթուղթ։ Մատայության վերջվող զինվորներից թվարկվում են անվանապես և ըստ քնակավայրերի։ Դժբախտաբար, այս ընդարձակ տեքստից պահպանվել է միայն I և IV սյունակների առաջին կեսը։ Այնուամենայնիվ, այս պահպանվածն էլ քվագրար է մեզ հետաքրքրող խնդրի լուսաբանման համար։

Ստորև ներկայացնում ենք տեքստի IV սյունակի (Հակասակ կողմ) վերջին չորս պարբերությունները։

ՀԿ IV

26*) 50 ÉRIN^{MES URU} Mu-ut-ta-||i?...

27*) 50 ÉRIN^{MES URU} Ta-at-ta?...

- 28*) ŠU-ŠI ÉRIN^{MES LURU} Ki-i[-]....
 29*) 1 ME ÉRIN^{MES LURU} Ta-x[.....
 30*) 10 ÉRIN^{MES LURU} AŠ-du-je-e-r[(-)]....
 31*) ŠU.NIGIN 60 ME 35 ÉRIN^{MES} KUR^{LURU} [.....

- 32*) *Wa-al-ta-ji-iš LÚ^{LURU} Ha-x[.....
 33*) *Ku-u-wa-aš LÚ^{LURU} Ša-a-la n[u-za? li-in-ki-ya-
 34*) LÚ^{LURU} E-er-ji-ta nu-za li-in-ki[-ya(-)] ...
 35*) LÚ^{LURU} Li-it-ta nu-za li-in-ki[-ya(-)] ...
 36*) *H[i]-i-n[i]-iš LÚ^{LURU} Te-mi-ya U-U[L] ...
 37*) L^{LURU} D]UB.SAR /-NA^{LURU} Ha-at-ti

- 38*) *Ka-a-ši-ya-ra DUMU *Ta-ra-aš-ku-il DUMU *A?-[.....
 39*) *Pát-tal-li-ya DUMU *U-ra-wa-al-ku-i(-)]....
 40*) DUMU *Pa-a-ta *Kal-ma-ja-zi-ti DUM[U] ...
 41*) *Tar-ju-un-da-zi-ti DUMU *Ku-uk-ku(-)]...

- 42*) x[.....
 43*) Š[U.NIG]IN 6+[x]....

ՀԿ IV

- 26*) «50 զինվոր Մուտալալ[ի*(-)] քաղաքից, [.....
 27*) 20 զինվոր Տատտալ[ա*(-)] քաղաքից, [.....
 28*) 60 զինվոր Կիլ[ի*(-)] քաղաքից, [.....
 29*) 100 զինվոր Թա-x[.....] քաղաքից, [.....
 30*) 10 զինվոր Ապոլսերա(-)* քաղաքից, [.....
 31*) Անդամնը [..... երկրի] 635 զինվոր:

- 32*) Ha-x[.....] քաղաքից Վալտալսիսը, [..... X քաղաքից, X-ը],
 33*) Մալա քաղաքից Կուվադ: Եվ [նա երբո՞ւմ տվեց*: X-ը]
 34*) Էրիսիտա քաղաքից: Եվ [նա] երբ[ո՞ւմ տվեց*: X-ը]
 35*) Լխոտա քաղաքից: նա երբ[ո՞ւմ տվեց*:]
 36*) Խին[ի]սը Տեմլյա քաղաքից չ[ի երբ]վ[ի]չեղովեց:]
 37*) [Գ]րվըր ծաբբոտաամ:

- 38*) Կասիյաբան՝ Տալասկուիլի որդին, Ա-[.....]-ի որդին, [.....
 39*) Պատտալիյան՝ Ուրավալկուիլսի որդին, [.....
 40*) Պատալի որդին, Կավմախացիտիմ՝ [.....]-ի որդին,

42') ...

43') Ը[նդամե]նը 6[... զինվոր]»:

Չինվորների ցուցակը կազմված է երեք տարբեր սկզբունքներով.

1) 26'-31':

Տեքստի այս հատվածում զինվորները բվարկվում են ոչ անվանապես, այլ ըստ քնակավայրերի: Արշտարձանը նշված 635 բիվը, ակնհայտորեն, ընդգրկում է նաև տեքստի կորսված հատվածում և նախորդ տողերում հիշատակվող զինվորների ընդհանուր քանակը:

2) 32'-37':

Այստեղ այդեն ցուցակն ընթանում է անվանապես: Վերջին տողում նշվող «գրիչը» կարող էր լինել մայրաքաղաք Խարթուստում այս ցուցակն արձանագրողը (հնարավոր է նաև այլ բացատրություն):

3) 38'-41':

Այս հատվածում բվարկումը կատարվում է այլ սկզբունքով՝ զինվորն ըստ հայրամական:

Առաջին և երրորդ ցուցակները գրեթե հնարավորություն չեն ընձեռում որևէ պատկերացում կազմելու գորահավաքի աշխարհագրության վերաբերյալ: Առաջին ցուցակում հիշատակվող քնակավայրերը խնթական մյուս տեքստերում այլևս վկայված չեն: Ինչ վերաբերում է երրորդին, ապա ամձնամունների առկայությունը կարող է վկայել միայն տվյալ տարածքի էթնիկական բովանդակության մասին (այդ մասին ավելի ուշ):

Երկրորդ ցուցակի տեղամունները հինգն են, որոնցից ամբողջությամբ պահպանվել են չորսը, իսկ մեկից՝ առաջին նշանը և երկրորդ սեպախմբի ակիբը (երկու հորիզոնական սեպեր):

Ha-x[.....]

Šala

Eršita

Litta

Temiya

Մյանցից Litta-ն վկայված չէ այլ տեքստերում, իսկ վնասված տեղանվան մասին դժվար է որևէ հետևություն անել, քանի որ խնթական սեպագիրը նշանների ցանկում երկու հորիզոնականով սկսվող շատ վանկային նշաններ կան: Ինչ վերաբերում է մյուս երեքին, ապա սրանց խնդիրը այլ է:

Eršita.

Դեռ 1931թ. Է.Ֆոտերն իրավացիորեն առաջարկել էր Erhita-ն նույնացնել խեթական նրկու այլ տեքստերում վկայված ^{CRU}Arhita-ի հետ³։ այս համադրությունը այսօր ընդունվում է բոլոր մասնագետների կողմից։

Այսպես, Arhita-ն հայտնի է վերիննեփրատյան երկրների հետ կնքված պայմանագրից՝ որպես հակախեթական ապստամբության մասնակից շրջան⁴։ Խեթա-հայաստական ինչ-որ պայմանագրի բնկոր հանդիսացող KUB XXVI 39-ում (թերևս, Մուրսիլիս II-ի և Հայասայի արքա ԱՅԵԿլասի պայմանագիրը) Արխիտայի Ամալտաչի աստվածը (^Utakšannaš) հիշատակվում է որպես հայաստական կողմից պայմանագրի կնքմանը վկա աստվածություն. այսինքն, Արխիտան սովյալ պահին հանդիսացել է Հասասայի քաղաք։

Տala.

Է.Ֆոտերի և Գ.Բափանցյանի մոտ սխալմամբ գրված է Šalati...։ Այս քաղաքը, բացի մեր տեքստից, հանդես է գալիս ընդամենը մեկ անգամ՝ խեթական օրենքներում, որպես քաղաք, որը ի բիվս մի շաքր արևելյան, հյուսիս-արևելյան քաղաքների, ազատված էր պարսիկներից (šahhan և luzzi)⁵։ Առավելագույնը, որ նշում են մասնագետները, այն է, որ Սալան պետք է գտնվեր Խեթական տեքստի քաղաքական ազդեցության ոլորտի ժայռամասային գոտիներից մեկում, թերևս, հյուսիս-արևելքում⁶։

Temiya.

^{CRU}Timmiya քաղաքը հիշատակվում է աղբյուր վերջ նշված KUB XXIII 72-ում որպես հակախեթական ապստամբության մասնակիցների (Պախիտավա և Արխիտա) աստղատակություններից տուժած քաղաք։ Ապստամբների նորձակումների մյուս ուղղությունը Խսուվան էր։

Նմանախույզ մեկ այլ տեղանուն (^{CRU}Tim(տ)na կամ Timmīna) հիշատակվում է խեթական արքա Սուսալիլուլիտմաս I-ի և Միտաննիի կախյալ արքա Շատտիվազայի միջև կնքված պայմանագրի պատմական ներածականում։ Այս քաղաքը ներկայացված է որպես մեկը այն շրջաններից, որանց քնակչությունը Սուսալիլուլիտմաս I-ի արևելյան արշավներից ինչ-որ ժամանակ անց փախել և ապաստան էր գտել Խսուվանում⁷։

Կարելի է միայն ենթադրել, որ խոսքը կամ այս շրջաններից Նաքթի հարկադիր կեքսպով տալոված վերաբնակիչների կամ զինծառայողների մասին է (նրկյուրթ բացատրությունը ավելի քիչ է հավանական)։

Վերոհիշյալ տեքստերում հիշատակվող Տիմմիյա և Տիմմինա տեղանունները իրոք կարող են նույնացվել մեր տեքստի ^{CRU}Temiya-ի հետ, քանի որ երկուսն էլ բացի հնչյունական ակնհայտ նմանությունից, գտնվել են Խսուվայի մերձակցությամբ։ Այդպես է վարվել խոսակցի Մ.

Ֆուլգանին, որը Տեմիյա-Տիմիյան (քայց ոչ Սուպլիլուլումաս I-ի տեքստում հիշատակվող Տիմիյան) համադրում է Երզնկայից ոչ հեռու գտնվող, Վերին Եփրատի ակունքների շրջանում բյուզանդական արքայորենիում հիշատակվող Յիմնոնի հետ (Ժաման. Ձխմին)⁸:

Litta.

Մա խեբական տեքստերում այս տեղանվան թերևս միակ վկայությունն է, եթե առայժմ ձեռնագրի մնացը քեկոքային վիճակում պահպանված մի տեքստում այս նույն տեղանունը վերականգնելուց⁹: Էրփիտա-Արփիտայի և Տեմիյա-Տիմիյայի հետ միևնույն ենթատեքստում հիշատակվելու փաստը կարող է վկայել դրա՝ միևնույն աշխարհագրական գոտում գտնվելու օգտին:

Լխուտա քաղաքի մատավոր տեղադրության հարցում, թերևս, օգտակար կարելի է համարել ոչ ժամանակներում այս տարածաշրջանում վկայված տեղանվանաբանական նյութերի ուսումնասիրությունը:

Այսպես, հոմեական դարաշրջանից մեզ հասած արքայորենիում («Ամտոնինու կայսեր երթուղին»)՝ որպես Լիկապոլիս (Ժաման. Փյոռոք՝ Շասիմ-Կարահիսարի մոտ) – Սատալա (հայկ. Սատաղ) ճանապարհի երկրորդ կայան նշված է Olotoedariza-ն (տարածաբանը՝ 24 հոմ. մղոն = կմ): Այս քնակավայրի անվանումն ունի մի շարք տարրերիցումնեթ՝ Aladoleariza, Aladadeariza, Aladaleariza և Lytararizon¹¹, և Հ.Տաշյանի կողմից համադրվել է Շասիմ-Կարահիսարի մոտ հիշատակվող հայկ. Լքառիճի հետ¹²: Լքառիճը կազմված է հայկ. -առիճ տեղանվանակերտ վերջածամցով, որը, անկասկած է նշել, լայնորեն տարածված է նոյն հենց ուսումնասիրվող տարածաշրջանում և դրա հարևանությամբ¹³: Մեզ հետաքրքրող տեղանվան տարրերիցումնեթից վերջինը (Lytararizon), վերջածամցի առամծմացումից հետո կատարանք Lyta(r)-, որը միանգամայն համադրելի է հայկ. Լքառիճի հետ:

Ha-x-[...].

